ԲԱԲԿԵՆ ՉՈՒԳԱՍԶՅԱՆ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Հատոր Ա

Երևան 2022

Այս հատորը տպագրւում է «**Գուրգէն Մէլիքեանի՝ Քաշաթաղի բազմազաւակ ընտանիքների հիմնադրամի**» հոգածութեամբ

ՉՈՒԳԱՍԶԵԱՆ ԲԱԲԿԷՆ, Երկերի ժողովածու, հատոր Ա, Երկրորդ՝ լրացված հրատարակություն, Երեւան, 2023, 550 էջ + 24 էջ ներդիր:

Հատորի մէջ ներկայացուած է ականաւոր հայագէտ-արեւելագէտ Բաբկէն Լեւոնի Չուգասզեանի (1923-1997) յօդուածների մի մասը: Հրատարակութեան նպատակն է ի մի բերել գիտնականի գրաւոր ժառանգութիւնը եւ վեր հանել նրա աշխատութիւնների կարեւորութիւնը հայագիտութեան եւ արեւելագիտութեան զարգացման գործում: Հատորը նախատեսուած է հայագէտների, արեւելագէտների, համալսարանների ուսանողների, հայագիտութեամբ հետաքրքրուողների լայն շրջանակների համար:

ISBN

© Լեւոն եւ Գարեգին Չուգասզեաններ 2022

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԽՕՍՔ

Մեր հոր՝ հայագէտ-արեւելագէտ Բաբկէն Զուգասզեանի յօդւածների ժողովածուն հրատարակելու գաղափարը յղացել էինք վաղուց եւ որոշ քայլեր ձեռնարկել այդ ուղղութեամբ, սակայն ինչ-ինչ պատճառներով գործը կանգ էր առել:

Մենք մեծապէս երախտապարտ ենք «Գուրգէն Մկլիքեանի՝ Քաչաթաղի բազմազուակ ընտանիքների հիմնադրամի» գործադիր տնօրէն, արեւելագէտ Գուրգէն Մկլիքեանին, որն իր ցանկութիւնը յայտնեց, որ Բաբկէն Զուգասզեանի յօդւածների ժողովածուն հրատարակւի եւ իր պատրաստակամութիւնը յայտնեց անմիջապէս աջակցելու եւ հովանաւորելու այս հատորների հրատարակութեանը, այդպիսով խթանելով մեր ջանքերն այդ ուղղութեամբ:

Խորին շնորհակալութիւն ենք յայտնում Հայաստանի Ազգային Գրադարանի տնօրէն, բանասիրական գիտութիւնների թեկնածու Աննա Զուլեանին մեզ օգնելու պատրաստակամութեան համար եւ մանաւանդ նրա տեղակալ Հայկանուշ Ղազարեանին, ով համակարգեց գրադարանավարներ Ռուզան Թումասեանի, Մհեր Ղազինեանի, Արմինէ Մկրտչեանի, Լուսինէ Բալայեանի, Էմմա Խանոյեանի, Կորիւն Շեկոյեանի մատենագիտական որոնումները եւ Բաբկէն Զուգասզեանի յօդւածները հայ մամուլի էջերից ու ժողովածուներից հավաքելու, պատճենահանելու գործը: Անչափ շնորհակալ ենք վերջիններիս նրանց կատարած աշխատանքի համար:

Նրանց պատճենահանած յօդւածները, ինչպէս նաեւ զանազան ժողովածուներից Բաբկէն Զուգասզեանի աշխատութիւնները թւանշանայնացնելու՝ pdf դարձնելու հարցում գործուն մասնակցութիւն է ունեցել Երեւանի Պետական Համալսարանի Աստվածաբանութեան ֆակուլտետի ծրագրաւորող Տիգրան Ապիկեանը, ում նոյնպէս մեծապէս շնորհակալ ենք: Ամենայն պատրաստակամութեամբ այս հատորների առաջաբանը կարդալու, ուղղումների, լրացումների եւ խորհուրդների համար շատ շնորհակալ ենք Մաշտոցի անուան Մատենադարանի գլխաւոր աւանդապահ, պատմագիտութեան դոկտոր Գէորգ Տէր-Վարդանեանին, ով երկար տարիներ աշխատել է Բաբկէն Զուգասզեանի հետ:

Մեծապէս երախտապարտ ենք Նարինէ Ռաֆեանին այդ բոլոր յօդւածների մուտքագրման համար:

Ի վերջոյ, հատորների էջակալման եւ սրբագրման գործն իրականացնելու համար խորապէս գնահատում ենք Հայաստանի Ամերիկեան Համալսարանի Հայ Մատենագրութեան Թւանշային Գրադարանի գիտական ղեկավար, մատենագէտ Մերուժան Կարապետեանի եւ նրա գործընկեր Յովհաննէս Կիզողեանի ջանքերը եւ անչափ շնորհակալ ենք նրանց:

Այս հատորների պատրաստման ողջ ընթացքում մեզ մեծապէս աջակցել է Կալիֆորնիայում Միչն Հիլլսի (Լոս Անջելէս) Արարատ-Էսքիջեան Թանգարանի պատասխանատու Մագի Մանգասարեան-Գոչինը, որին մեծապէս երախտապարտ ենք:

Բաբկէն Զուգասզեանի յօդուածների հրատարակութեան պատրաստման տեխնիկական աշխատանքների նիւթական ծախսերին նաև օժանդակել են նրա ազգականները, բարեկամները, նրան ճանաչած եւ նրա գիտական վաստակը գնահատող անձինք ու նրանց յայտնում ենք մեր խորին երախտագիտութիւնը:

Լեւոն եւ Գարեգին Զուգասզեաններ

ՆԻՒՐԱՏՈՒՆԵՐ

Այս հատորների հրատարակութեան պատրաստման տեխնիկական աշխատանքներին իրէնց օժանդակութիւնն են բերել Կալիֆորնիայում Միշն Հիլլսի (Լոս Անջելէս) Արարատ-Էսքիջեան թանգարանը

եւ

Վաղարշակ Փիլոսեանը
Անի Փիլոսեանը
Անահիտ Սիմոնեանը
Ռազմիկ Գրիգորեանը
Յովսեփ եւ Ռիթա Թոքաթները
Բրայան եւ Ռոզի Բեդրոսեանները
Յովհաննէս Դաւիթեանը
Աննիկ Դաւիթեանը
Մելինէ Մարաշլեան Մելքոնեանը
Մարա Մարտինը
Խաչիկ Զ. եւ Արտեմիս Ս. Սարաջեանները
Լեւոն Սարեանը
Մարտին Մուգարը
Օսկար Թաթոսեան
Բարլո Տէր Մկրտչեան

DONORS

This project is supported by a grant from Ararat-Eskijian Museum, Mission Hills, California

and

Vagharshak Pilossian
Ani Pilossian
Anahit Simonian
Razmik Grigorian
Osep & Rita Tokat
Bryan & Rosie Bedrosian
Hovhannes Davitian
Annig Davitian
Meline Marashlian Melkonian
Mara Martin
Khachik Z.& Artemis S. Sarajian
Levon Sarian
Martin Mugar
Oscar Tatosian
Barlow Der Mugrdechian

ԲԱԲԿԷՆ ԶՈՒԳԱՍԶԵԱՆԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ

20-րդ դարի երկրորդ կէսի հայագիտութեան մէջ իր կարեւոր տեղն ունի անւանի հայագէտ-արեւելագէտ Բաբկէն Լեւոնի Զուգասզեանը: Նրա գիտական, գրաւոր ժառանգութիւնը բաղկացած է հայ միջնադարեան եւ աւելի նոր ժամանակների գրականութեանը, արեւելագիտութեանը, մանաւանդ իրանագիտութեանը նւիրւած յօդւածներից, գրքերից, բնագրերի հրատարակութիւններից, ձեռագրերի ցուցակներից: Բ. Զուգասզեանի ուսումնասիրութիւնները լոյս են տեսել ինչպէս առանձին գրքերով, այնպէս նաեւ հայաստանեան եւ արտասահմանեան գիտական ժողովածուներում ու պարբերականներում: Սոյն հատորների մէջ տեղ է գտել նրա յօդւածների մեծ մասը:

Բ. Զուգասզեանը ծնւել է Թաւրիզում 1923 թ. մարտի 18-ին: Իր տարրական կրթութիւնը ստացել է Թաւրիզի «Հայկազեան-Թամարեան» եւ «Արամեան», իսկ միջնակարգը՝ ամերիկեան «Իբն Սինա», պարսկական «Սաադի» եւ «Ֆերդովսի» դպրոցներում:

Բ. Զուգասզեանն իր աշխատանքային գործունէութիւնը սկսել է 1942 թ. եւ մինչեւ 1945-ը որպէս գրագիր-թարգմանիչ նախ աշխատել է Թաւրիզի անգլիական փոխադրական ընկերութիւնում, ապա Թեհրանում՝ Պարսից ծոցի ամերիկեան հրամանատարութեան երկաթուղային ծառայութեան մէջ: 1943 թ. Բ. Զուգասզեանը մի խումբ ընկերներով Թաւրիզում հիմնադրել եւ հրատարակել է «Հակաֆաշիստական թերթիկ» (1944 թւականից «Արեւելք» եռօրեայ) լրագիրը,որի խմբագրի տեղակալն է եղել մինչեւ 1946-ը: Այդ թւականին նա ծնողների հետ ներգաղթել է Հայաստան:

Նոյն տարին Բ. Զուգասզեանը ընդունւել է Երեւանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայկական բաժինը, որն աւարտել է 1951 թ.: Համալսարանական առաջին օրվանից նա ծանօթանում եւ մտերմանում է իր ապագա կնոջ՝ Վեներա Մանուկեանի (1928-2016թթ.)[1] հետ, որը սովորում էր բանասիրական ֆակուլտետի ռուսաց լեզւի եւ գրականութեան բաժնում:

Բ. Զուգասզեանը ուսմանը զուգահեռ 1946-47 թթ., որպէս մատենագէտ, աշխատել է հանրային գրադարանի Գրապալատում, իսկ 1950-54 թթ.՝ համալսարանի հրատարակչութիւնում՝ որպէս սրբագրիչ եւ ապա խմբագիր:

1954-57 թթ. Բ. Զուգասզեանը եղել է Հայաստանի գիտութիւնների ակադեմիայի Մ. Աբեղեանի անւան գրականութեան ինստիտուտի ասպիրանտ: Ասպիրանտուրան աւարտելուց յետոյ նա 1958 թ. նոյն ինստիտուտում աշխատանքի է անցել՝ սկզբում որպէս գիտական քարտուղար եւ այնուհետեւ՝ գիտական գծով փոխտնօրէն: 1962 թ. նա պաշտ-

---

1 Վեներա Մանուկեանը յուսալի ռեճարան է դառնում իր գիտնական ամուսնուն, ամենայն ուիրվածութեամբ սատարելով նրան:Համալսարանն աւարտելուց յետոյ, Վ. Մանուկեանը ռուսաց լեզու է դասաւանդել Երեւանի Ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտում եւ շուրջ երեք տասնամեակ՝ Խ.Աբովեանի անւան Հայկական Մանկավարժական ինստիտուտում (ներկայումս՝ Մանկավարժական համալսարան),այդ ծանրաբեռնուածութեանը զուգահեռ, լինելով ռոգատար կին իր ամուսնու եւ ռոգատար մայր զաւակների՝ Լեւոնի ու Գարեգինի համար:

պանել է «Հայ-իրանական գրական առնչութիւնները 5-18-րդ դարերում» խորագիրը կրող ատենախօսութիւնը, որի համար նրան շնորհւել է բանասիրական գիտութիւնների թեկնածուի աստիճանը: 1963 թ. այդ աշխատութիւնը Երեւանում լոյս է տեսել առանձին գրքով:

1965-ին Բ. Զուգասզեանը աշխատանքի է հրաւիրւել Մաշտոցի անւան հին ձեռագրերի ինստիտուտ՝ Մատենադարան, որտեղ մինչեւ 1994 թ. զբաղեցրել է փոխտնօրէնի պաշտօնը: Այստեղ նա ամենայն նւիրւածութեամբ կարողացել է իր նշանակալից աւանդը մուծել Մատենադարանի՝ որպէս գիտական կենտրոնի միջազգային մեծ հեղինակութիւնը ստեղծելու գործում: Կազմակերպչական պատասխանատու, վարչական աշխատանքներին զուգահեռ նա առաջ է տարել նաեւ իր գիտա-հետազոտական գործունէութիւնը: 1994թ. յետոյ նոյն հիմնարկում նա մինչեւ կեանքի վերջը շարունակել է աշխատել որպէս աւագ գիտաշխատող: Իր աշխատանքային բեղմնաւոր գործունէութեան համար նրան շնորհւել է Հայկական ԽՍՀ մշակոյթի վաստակաւոր գործչի կոչումը (1984թ.): Բ. Զուգասզեանը մահացել է 1997 թ. նոյեմբերի 5-ին, Երեւանում:

Տարբեր ժամանակներում Բ. Զուգասզեանը եղել է Հայաստանի մի շարք հաստատութիւնների (Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի Գրականութեան, Արեւելագիտութեան ինստիտուտների, Պետական Համալսարանի բանասիրական ֆակուլտետի, Եղ. Զարենցի անւան գրականութեան եւ արւեստի, Պատմութեան թանգարանների, Հայաստանի ազգային գրադարանի) գիտական խորհուրդների անդամ:

Ստալինեան բռնաճնշումների տարիներին եւ նաեւ դրանից յետոյ նրա առաջխաղացումը զգալի չափով խոչընդոտւել է հայրենադարձների նկատմամբ խորհրդային իշխանութիւնների ստեղծած սահմանափակումներով, ուստի Բ. Զուգասզեանի կեանքը չի ուղեկցւել սրընթաց վերելքով: Բարեբախտաբար նա կարողացել է խուսափել սիբիրեան աքսորներից, որոնց ենթարկւեցին բազմաթիւ հայրենադարձներ, բայց ճաշակել է հեռաւոր աքսորավայրերում յայտնւած ընկերներին ու հարեւաններին կորցնելու դառնութիւնը: Ճակատագիրը, այդուհանդերձ, բարեգութ է գտնւել նրա նկատմամբ, որովհետեւ իր կեանքի ճանապարհին նա հանդիպել է նաեւ մարդկանց, որոնք գնահատել են նրա ունակութիւնները եւ ձեռք մեկնել: Այդ անձանց շարքում հատկապէս հարկ է յիշատակել ականաւոր հայագէտ, լեզւաբան Հ. Աճառեանին:

Երեւանի պետական համալսարանի հրատարակչութիւնում աշխատելու բերումով, եւ այնտեղ Հ. Աճառեանի «Քննութիւն Վանի բարբառի» գրքի սրբագրութեան առիթով, 1952 թւականի գարնանը Բ. Զուգասզեանը ծանօթանում է Հ. Աճառեանի հետ, եւ այդ ծանօթութիւնը բախտորոշ է դառնում նրա համար, քանի որ ինքը՝ մեծ գիտնականը, տեսնելով երիտասարդի՝ զանազան լեզուների իմացութիւնը, լեզւաբանական իրողութիւնների նկատմամբ հետաքրքրութիւնն ու ուշադրութիւնը, նաեւ ջանասիրութիւնը, նրան առաջարկում է, գալ իր տուն եւ առանց վարձատրութեան աշակերտել իրեն: Այդպիսով, ապագա ակադեմիկոս էդ. Աղայանից եւ Հ. Աճառեանի ոչ պաշտօնական ասպիրանտ, ապագայում անվանի լեզւաբան դարձած Գ. Գարեգինեանից յետոյ, Զուգասզեանը դառնում է մեծ գիտնականի տան ուսանողը, նրա երկրորդ, ոչ պաշտօնական ասպիրանտը եւ նրան իր աշխատութիւնների պատրաստման գործում օգնող, երրորդ լեզւաբան աշակերտը: Նա սրբագրում է Հ. Աճառեանի «Քննութիւն Վանի բարբառի» երկի

մամուլները, նաեւ գրի առնում նրա թելադրած՝ կեանքի յուշերի մի հատուածը, որը վերաբերում էր Պոլսի Կեդրոնական վարժարանի շրջանին: Շուրջ մէկ տարի, մինչեւ մեծ գիտնականի մահը՝ 1953 թուականի ապրիլի 16-ը, տեւում է ուսուցչի եւ աշակերտի համագործակցութիւնը:

Հ. Աճառեանի վախճանից յետոյ, քաղաքական «ձնհալի» շրջանում, Էդ. Աղայեանի առաջարկով Բ. Զուգասզեանին յանձնարարուում է վերանայել ու հրատարակութեան պատրաստել՝ մեծ գիտնականի աւելի վաղ դրաքննութեան կողմից տպագրութեան չթոյլատրուած «Լիակատար քերականութեան» ընդարձակ «Ներածութիւնը»: Զուգասզեանը աշխատութեան մեքենագիր օրինակը համեմատում է Աճառեանի ձեռագիր բնագրի հետ եւ վերականգնում «տարիներ առաջ որոշ գաղտնի գրախօսների եւ հրատարակչական վայ խմբագիրների կատարած կրճատումներն ու աւելորդ միջամտութիւնները»: Այդ հատորը լոյս է տեսնում 1955 թուականին :

Հ. Աճառեանի նկատմամբ ողջ կեանքում պահած երախտագիտութեան դրսեւորումն են նրա մասին իր սանի գրած յուշերը, որոնք ընդգրկուած են այս ժողովածուի մէջ: Բ. Զուգասզեանը ուսուցչից ժառանգում է ոչ միայն նրա լեզուաբանական գիտելիքներն ու կողմնորոշումները, այլեւ առհասարակ պատմա-բանասիրական հետաքրքրութիւնները, ինչպէս նաեւ առաջին գիտական քայլերն անող խօստումնալից երիտասարդներին օգնելու եւ կողմնորոշելու մշտական պատրաստակամութիւնը, որոնք ուղեկիցներ են դառնում նրա ողջ գիտական գործունեութեան ընթացքում:

Բ. Զուգասզեանի ողջ գրական ժառանգութեանը ընդհանուր ակնարկ նետելիս հարկ է անդրադառնալ նրա մի քանի առաւել աչքի ընկնող գիտական աշխատութիւններին, որոնք բացառիկ նշանակութիւն ունեն ոչ միայն հայագիտութեան, այլև առհասարակ միջնադարագիտութեան համար:

Զուգասզեանը իր առաջին յօդուածներից մէկում քննութեան առարկա դարձրեց 11-րդ դարի առաջին կէսին ապրած հայ ականաւոր քաղաքական գործիչ եւ նշանաւոր մտաւորական Գրիգոր Մագիստրոսի «Թղթերում» պահպանուած՝ իրանական վիպական զրոյցների արձագանքները, որոնք չէին նկատուել հայագէտների կողմից: Ֆերդովսիի «Շահնամէի» բնագրի ամբողջացման առումով այդ հրապարակումը բացառիկ երեւոյթ հանդիսացաւ եւ լուրջ գնահատանքի արժանացաւ արեւելագիտական միջազգային շրջանակներում: Ձիչեալ հայերէն յօդուածը, թարգմանուեց ու հրատարակուեց թէ՛ ռուսերէն, եւ թէ՛ ֆրանսերէն լեզուներով:[2]

Բ. Զուգասզեանը կարողացաւ նկատել, որ, իբրեւ իր ժամանակի բազմակողմանի զարգացած անձնաւորութիւն, Գրիգոր Մագիստրոսը տեղեակ է եղել այնպիսի մանրամասնութիւնների, որոնք չեն հանդիպում «Շահնամէում» եւ յայտնի իրանական այլ էպիկական պոէմներում:

---

2 Տես **Բ. Զուգասզյան**, Իրանական վիպական զրույցների արձագանգները Գրիգոր Մագիստրոսի «Թղթերում»: *Հայկական ՍՍՌ Գիտ. ակադեմիայի «Տեղեկագիր» (հասարակական գիտութ.)*, 1958, թիվ 12, էջ 63-75: Այս յօդուածը լոյս է տեսել նաեւ ռուսերէն եւ ֆրանսերէն. տե՛ս Отзвуки иранских эпических сказаний в “Письмах“ Григора Магистроса.“Проблемы востоковедения“ (Москва),1960, Но. 3, с. 150 – 155; Echos des legendes epiques iraniennes dans les “Lettres“ de Grigor Magistros. *“ Revue des Etudes Armeniennes* “(Paris), N. S., Tome 1,1964, p . 321 - 329.

Այս յօդւածում Բ. Զուգասզեանի ուսումնասիրութեան առարկան դարձաւ Ֆերդովսու «Շահնամէի» «Ռոստամի եօթ արկածները» բաժնի «երրորդ արկածը», ուր պատմւում է Ռոստամի եւ վիշապի մենամարտի մասին: Մագիստրոսը իր պատմածում անդրադառնում է այդ դրւագին, նշելով, որ տւեալ իրադարձութիւնը տեղի է ունեցել Դաբաւանդ (Դամաւանդ) լեռան մօտ, ինչը չի յիշատակւած Ֆերդովսու երկում: Բացի այդ, հայ հեղինակի պատմածից պարզւում է, որ վիշապը ինքը Դիւզեղն է, այսինքն՝ Դժոխքը: Այսպիսով, Մագիստրոսի չնորհիւ լրացւում է «Շահնամէի» յիշյալ հատւածը:

Ըստ Զուգասզեանի, խնդրո առարկա առասպելը չկա Խորենացու երկում, եւ հայ գրականութեան մէջ պահպանել է միայն Գրիգոր Մագիստրոսը: Վերջինս, գիտնականի կարծիքով, այն քաղել է իր ձեռքի տակ եղած աղբիւրներից կամ լսել ու գրի առել ժողովրդից, դրա հետ մէկտեղ ծանօթ լինելով Խորենացու «Հայոց պատմութեան» մէջ պահպանած իրանական առասպելներին:

Մագիստրոսն յիշատակում է նաեւ Ռոստամի եւ վիշապի մենամարտի առասպելին յաջորդող միւս հատւածը, ուր պատմւում է Ռոստամի եւ Սպանդիարի (Ասֆանդիարի) պայքարի պահերից մեկը: Հայ հեղինակն այդտեղ արտայայտում է իր համակրանքը Ռոստամի նկատմամբ, համեմատելով նրան Հոմերոսի Կռոնոսի հետ, որի գլխի մազերի շարժումից անգամ ցնցւում էր Օլիմպոսը: Ըստ Զուգասզեանի, հերոս Ասֆանդիարի յիշատակութիւնը Մագիստրոսից եւ Ֆերդովսուց շատ առաջ հանդիպում է նաեւ 6-7-րդ դարերի հայ նշանաւոր պատմիչ Սեբեոսի պատմութեան մէջ:

Մագիստրոսի Լ.Զ. թղթում գիտնականը նկատում է Բիւրասպի Աժդահակի, Սպանդիարի եւ Հայոց արքա Արտաւազդի՝ լեռների վիհերում շղթայւած լինելու մասին գրառումը: Այդտեղ հայ հեղինակը, վերցնելով Խորենացու՝ պարսկական առասպելներին վերաբերող հատւածից Աժդահակի անւան համար գործածւած Կենտավրոս Պիւռիդա (որոշ ձեռագրերում Պռիւդեայ, Պռիդա) անունը (այս փաստը չի յիշւած ոչ մի այլ աղբիւրում եւ նաեւ «Շահնամէում»), հայտնում է, որ Աժդահակը Դաբաւանդ լեռան մէջ էր, Սպանդիարը՝ Սաբալան, իսկ Արտաւազդը՝ Մասիսում: Զուգասզեանը գտնում է, որ Սպանդիարի (Ասֆանդիարի) Սաբալան լեռան մէջ փակւած լինելու մասին փաստը նոյնպէս չի յիշւած ոչ մի այլ աղբիւրում: Այս կապակցութեամբ գիտնականը մէջբերում է Սաւալան (Սաբալան մարգարէի հետ առնչւող) նոյնանուն լեռան մասին իրանական զրոյցը եւ նշում, որ Սաբալան լեռը գտնւում է Հայաստանի սահմանների մօտ՝ իրանական Ադրբեջանի արեւելեան մասում:

Զուգասզեանի կարծիքով, մարգարէին վերաբերող զրոյցը միաձուլւել է իրանական էպոսի առանձին մի փաստի հետ եւ Մագիստրոսն օգտւել է դրանից:Հայաստանի մերձակա երկրներում տարածւած են եղել իրանական էպոսի առանձին զրոյցների տարբեր պատումները, եւ եղել է Սպանդիարի պաշտամունքը, որի մասին է վկայում Մագիստրոսի մօտ գիտնականի յայտնաբերած փաստը՝ այն է, որ պարթեւները Սաբալանի մայրի փայտից պատրաստում էին Սպանդիարի արձանը: Խնդրո առարկայ յօդւածը խիստ չահեկան է «Շահնամեի» իրանական բնագրի ամբողջացման առումով եւ հետեւաբար բացառիկ կարեւորութիւն ունի այն ուսումնասիրող զանազան ազգերի գիտնականների համար:

Զուգասզեանի տեսադաշտում յայտնուած՝ հայ գրականութեան կարեւոր դէմքերից է եղել նաեւ Սայեաթ-Նովան: Զուգասզեանի համար ասես ի վերուստ կանխորոշուած էր Սայեաթ-Նովայի գեղարուեստական ժառանգութեան եւ կենսագրութեան անյայտ դրւագների յայտնաբերումը, քանի որ 1963 թւականին նրա եւ հայագէտ Պ. Մ. Մուրադեանի համատեղ ջանքերով լոյս էր տեսել մեծ բանաստեղծի եւ երգահանի «Խաղերի» (յայտնի «Դաւթարի») նմանահանութեան (ֆաքսիմիլիէ) եղանակով պատրաստուած հրատարակութիւնը:

Ճակատագրի բերումով Զուգասզեանին էր վիճակուած Սայեաթ-Նովայի ձեռքով 1761թ. Պարսկաստանի Գիլանի նահանգի Էնզէլի (Անզալի) նաւահանգստում ընդօրինակած մատեանի յայտնաբերումը եւ ուսումնասիրութիւնը: Այդ մասին նրա յօդուածը, որն ընդգրկուած է սոյն ժողովածուի մէջ, լոյս տեսաւ 1981թւականին: Մինչ այդ եւ 19-րդ դարից սկսած՝ հայագիտութեան մէջ Սայեաթ-Նովայի գրչին պատկանող միայն երկու մատեան էր յայտնի: Զուգասզեանն իր այս յօդուածի մէջ, ըստ ամենայնի քննութեան առնելով Էնզէլիի ձեռագիրը, կարողանում է երեւան հանել մեծ բանաստեղծի եւ երգահանի կեանքի մինչ այդ անծանօթ փաստերը:

Միջանկեալ հարկ է նշել, որ տարիներ անց, Զուգասզեանը նմանահանութեան եղանակով իրականացրեց նաեւ այլ հատորների հրատարակութիւնը: Խօսքը հայերէն առաջին տպագիր գրքերից «Ուրբաթագրքի», «Տաղարանի» (Հրատ.1975) եւ «Պարզատումարի» (Հրատ.1996),ինչպես նաեւ Դաւիթ Անյաղթի «Սահմանք իմաստասիրութեան» երկի 13-րդ դարի ձեռագրի (Հրատ.1980) մասին է:

Արեւելագիտական եւ հայագիտական միջազգային շրջանակների համար իսկական յայտնութիւն եղաւ Զուգասզեանի «Բժշկարան ձիոյ եւ առհասարակ գրաստնոյ» գիրքը: Այդ հատորով Զուգասզեանին բախտ վիճակուեց փայլուն կերպով իրականացնելու իր ուսուցչի՝ Հ. Աճառեանի դեռեւս Թաւրիզում աշխատած ժամանակ սկսած կարեւորագոյն ձեռագրերից մէկի ուսումնասիրութիւնը: Այս երկին նւիրուած՝ Բ. Զուգասզեանի գիրքը նրա գիտական ժառանգութեան մէջ բացառիկ տեղ է գրաւում: Այն նւիրուած է միջին հայերէնի եզակի յուշարձաններից մէկին: Անաստնաբուժական այդ մատեանը մշակութային կարեւոր երեւոյթ է, քանի որ, ի տարբերութիւն մեզ հասած հազարաւոր ձեռագրերի, այն գրւած է ոչ թէ գրաբարով, այլ ժամանակի խօսակցական լեզւով: Իր բժշկարանային բովանդակութեամբ, մանաւանդ բառագանձով՝ հայերէն անծանօթ նոր բարդութիւններով, օտար, հիմնականում արաբերէն ու պարսկերէն, բառերի ու եզրերի փոխառութիւններով այս երկը իւրայատուկ գիւտ է գիտնականների համար: 1296-98թթ. Կիլիկիայի Սմբատ թագաւորի հրամանով հայազգի Թորոս քահանայի օժանդակութեամբ ասորի բժիշկ Ցարաջի կազմած «Բժշկարանի» բնագիրը Զուգասզեանի կողմից պատրաստել է ամենայն խնամքով: Այն օժտւած է հին Հայաստանում, անտիկ աշխարհում, միջնադարում ձիագիտութեանը վերաբերող համապատասխան տեղեկութիւններ պարունակող առաջաբանով, որտեղ համեմատութիւններ են կատարւած արաբերէն եւ պարսկերէն նմանօրինակ երկերի հետ, ու քննւած է խնդրո առարկայ երկի լեզուն:

Բ. Զուգասզեանի գրքի հրատարակումից յետոյ «Բժշկարան ձիոյ եւ առհասարակ գրաստնոյ» երկը թարգմանուեց գերմաներէն եւ հրատարակուեց առանձին գրքով:[3] Այն իրականացրած ավստրիացի Ժ. Դում-Թրագուէթը, դժբախտաբար, իր հրատարակութեան եւ գեկուցումների մէջ անարդարացիօրէն միշտ խուսափել է նշել եւ կարեւորել Զուգասզեանի ուսումնասիրութիւնը, անտեսելով այն փաստը, որ առանց հայ գիտնականի աշխատութեան, մանաւանդ ձեռագրի տեքստն ուղեկցող օտար բառերի ստուգաբանութիւնների, իրէն հազիւ թէ յաջողուեր հասկանալ «Բժշկարանի» բնագիրը, առաւել եւս՝ թարգմանել այն: Ժ. Դում-Թրագուէթը փորձում է նսեմացնել Զուգասզեանի աշխատութիւնը, ծիծաղելի միտք յայտնելով, որ վերջինս բնօրինակը չի տեսել, այլ օգտագործել է դրա միկրոժապավենը, որի պատճառով տառասխալներ եւ բացթողումներ կան գրքում (որոնք նա, ի դէպ, չի նշում): Ձեռագրագիտութիւնից հեռու մեկը լինելով, Ժ. Դում-Թրագուէթը չգիտի, որ ձեռագրից նկարուած միկրոժապավենը բոլոր դէպքերում համարժէք է բնագրին: Նա չափից աւելի վստահ լինելով իր անսխալ լինելու վրա, անգամ չի նկատում, որ ինքն է սխալներ թոյլ տալիս «Բժշկարանի» յիշատակարանները կարդալիս, որոնք շատ ճշգրիտ են բերուած Զուգասզեանի աշխատութեան մէջ:[4] Անտեղեակ ընթերցողին կարող է թւալ, որ Ժ. Դում-Թրագուէթը օգտւել է բուն ձեռագրից, բայց, ինչպէս պարզվում է, իրականում ինքն էլ բնօրինակը չի տեսել, այլ օգտագործել է դրա թւանշանային պատճէնը: Աւելորդ է ասել, որ ձեռագրից նկարուած միկրոժապավենը եւ թւանշանային պատճէնը երկուսն էլ համարժէք են բնագրին:

Ավստրիացի «գիտնականը» նշում է, որ Զուգասզեանի գիրքը ընդամենը օժանդակ միջոց (Hilfsmittel) է եղել իր համար (տես էջ 20): Ժ. Դում-Թրագուէթը օգտագործում է Զուգասզեանի բերած փաստերը, օգտագործած հունական, արաբական, պարսկական աղբիւրները եւ գրականութեան ցանկը ու չի նշում հայ գիտնականի անունը: Նա թարգմանել է տեքստի գլուխների անւանումները, ձեռագրի բովանդակութիւնը, անտեսելով, որ դա Զուգասզեանն է արել: Զուգասզեանի եւ Ժ. Դում-Թրագուէթի գրքերի համեմատութիւնից յայտնի են դառնում, ավստրիացի հեղինակի կողմից արւած գրագողութեան բազմաթիւ փաստեր:[5] «Բժշկարանի» օտար լեզուներից փոխառւած բառերի ստուգաբանութիւնները, որոնք կատարել է Զուգասզեանը եւ կազմել գրքի վերջում կցւած բառարանը ասես գոյութիւն չունեն նորաթուխ «Հայագէտի-լեզւաբանի» համար: Այդ բառարանը իւրացնելով, ավստրիացի «գիտնականը» ճոխացրել է այն հայագէտներին ծանօթ բառերով ու հորինել նոր բառարան իր հատորի համար (տես 215-282 էջերը), անչուչտ հարկ չհամարելով նշել, որ հիմնական դժւար աշխատանքը արդէն արւել է: Բերւած փաստերը վկայում եմ, որ այստեղ գործ ունենք արեւմտեան գիտնականների մի մասի մօտ արմատացած տիպիկ գաղութատիրական վերաբերմունքի հետ, երբ անբարեխիղճ

---

3 Տես J. Dum-Tragut, Kilikische Heilkunst für Pferde, Das Vermächtnis der Armenier, Kommentar. Überzetzung-Glossar, Georg Olms Verlag,Hildesheim-Zürich, New York, 2005

4 Օրինակ «Բժշկարանի» նախկին սեփականատիրոջ՝ Խաչիկ Աղա Սարաջեանի անունը բոլորովին չնշելով, նա «Խաչիկ աղա» յիշատակագրութիւնը ձեւափոխում է «Խաչիկ տղա» եւ այլն: Տես J. Dum-Tragut, Kilikische Heilkunst für Pferde, S.18.

5 Տես Բ.Զուգասզեան,Բժշկարան ձիոյ եւ առհասարակ գրաստնոյ (ԺԳ դար), Երեւան,1980,էջ 6, 19, 7, 8, 9, 10, 11, 12, 15, 16, 20, 21-22, 23, 26,77 եւ համեմատիր J. Dum-Tragut, Kilikische Heilkunst für Pferde, S. 31, 22, 43, 21, 44, 22, 23, 25, 26, 19-20, 26, 77-81.

ձեւով, անամօթաբար իւրացուում են ոչ եւրոպական լեզուներով հրատարակւած գիտական աշխատուէթիւնների արդիւնքները:

Բ. Զուգասզեանի իւրայատուկ նշանակուէթիւն ունեցող երկերից է «Գէորգ Դպիր Պալատեցու կեանքի եւ գործունէուէթեան տարեգրուէթիւն, 1737-1811» գիրքը: Իր բնոյթով այն յիշեցնում է Ա. Ինճիկեանի «Միքայէլ Նալբանդեանի կեանքի ու գրական գործունէուէթեան տարեգրուէթիւնը» (Երեւան, 1954), Խ. Սամուէլեանի «Կոմիտասի կեանքի եւ գործունէուէթեան տարեգրուէթիւն» («Սովետական արուեստ», 1969, թ. 10-ից մինչեւ 1975, թ. 9), Ա. Մ. Շարուրեանի «Դանիէլ Վարուժանի կեանքի եւ ստեղծագործուէթեան տարեգրուէթիւն» (Երեւան, 1984), Սուրէն Շ. Վանեցու «Վազգէն առաջին կաթողիկոս ամենայն հայոց: Համառօտ տարեգրուէթիւն» (1908-1955) (Էջմիածին, 1986) աշխատուէթիւնները եւ գալիս լրացնելու վերջիններիս չարքը:

Գէորգ Դպիր Պալատեցուն նուիրւած գիրքը լուսաբանում է մեծանուն գիտնականի՝ բանասէրի, հայ արեւելագիտուէթեան հիմնադրի կեանքի անծանօթ էջերը, որն իր անխոնջ գործունէուէթեամբ նպաստել է Մխիթարեան միաբանուէթեան անդամների ուսումնասիրուէթիւններին, մանաւանդ բազմաթիւ ձեռագրեր ուղարկել ու առաջ տարել իր աշխատանքները՝ վայելելով նրանց նիւթական օժանդակուէթիւնը: Վերջիններիս հետ Դպիրը երեսուն տարի սերտ յարաբերուէթիւններ է ունեցել, իրէն չվտանգելու համար ամենայն միջոց ձէռք առնելով, քանի որ 18-րդ դարի երկրորդ կէսին Պոլսում կաթոլիկների նկատմամբ գոյուէթիւն ունէր խիստ անհանդուրժողական, անգամ թշնամական վերաբերմունք: Փաստօրէն Դպիրը հայ լուսաւորչականների եւ Մխիթարեանների միջեւ այդ անջրպետի վերացնողն է, նպաստելով ժամանակի հայ հասարակուէթեան միաւորմանը:

Այս գրքի աւարտը եւ հրատարակուէթիւնը Բ. Զուգասզեանը իրականացրեց, երբ ծանր վիրահատուէթեան պատճառով նրա հասարակական ակտիւուէթիւնը զգալիօրէն կրճատւեց եւ ստիպւած եղաւ աւելի շատ աշխատել տանը:«Հայրենադարձ իրանահայ դէմքեր» գիրքը ծնուեց այդ պայմաններում: Բ. Զուգասզեանն այն իրականացրեց հանդիպումներ ունենալով եւ հարցախոյզ իրականացնելով բազմաթիւ իրանահայերի եւ նրանց հարազատների հետ, ովքեր այցելում էին նրան տանը: Առողջական բարդ պայմաններում նրան ամեն կերպ սատարում էր կինը, դիմանալով նոր ստեղծւած ֆիզիկական եւ հոգեբանական փորձուէթիւններին ու դժւարուէթիւններին:

Ինչպէս Բ. Զուգասզեանի նախորդ հրատարակուէթիւնները «Հայրենադարձ իրանահայ դէմքեր» գիրքը նոյնպէս իւրայատուկ երեւոյթ է: Այն նուիրւած է մեծ հայրենադարձուէթեան յիսնամեակին եւ իր բնոյթով եզակի աշխատուէթիւն է, քանի որ ապացուցում է այդ իրադարձուէթեան պատմական կարեւորուէթինը եւ արտացոլում նրա հակասական կողմերը: Այդպիսով, «Հայրենադարձ իրանահայ դէմքեր»ը միակ հրատարակուէթիւնն է, որն անդրադառնում է մեծ հայրենադարձուէթեան յիսնամեակին՝ կենտրոնանալով միայն մի երկրից եկած հայրենադարձների կեանքի եւ գործունէուէթեան վրա: Կենսագրական բառարանի բնոյթ ունեցող գիրքը գաղափար է տալիս այն մարդկանց մասին, ովքեր, ծնւած լինելով Իրանում, եկան Խորհրդային Հայաստան եւ իրէնց արժէքաւոր ներդրումն ունեցան հայրենիքի չենացման գործում, կրթական, մշակուէթային իրականուէթեան մէջ, յաղթահարելով յետպատերազմեան երկրի դժւարուէթիւնները, ոմանք անգամ յանիրաւի աքսորւելով Սիբիր կամ գնդակահարւելով ստալինեան գնդան-

Ներում:«Հայրենադարձ իրանահայ դէմքերը» փաստօրէն իւրահատուկ յուշարձան է, որը յաւէրժակոչում է այդ մարդկանց յիշատակը:

Բ. Զուգասզեանի հրատարակել է ներքոյիշեալ գրքերը.

1. «Հայ-իրանական գրական առնչութիւններ (V-XVIIIդդ.)», Երեւան, 1963
2. «Սայեաթ-Նովա, Խաղեր» (Նմանահաւանութիւն),
3. Պ. Մ. Մուրադեանի հետ համատեղ, Երեւան, 1963
4. «Խրատք Նուշիրւանի», Երեւան, 1966
5. «Յովաննես Սեբաստացի, Պատմութիւն Սեբաստիոյ», Երեւան,1974
6. «Ուրբաթագիրք եւ Տաղարան», Վենետիկ, 1975
7. «Դաւիթ Անյաղթ, Սահմանք իմաստասիրութեան (Նմանահաւանութիւն Մատենադարանի թիւ 1746 ձեռագրից)», Երեւան,1980
8. «Բժշկարան ձիոյ եւ առհասարակ գրաստնոյ» (ԺԳ դար) Երեւան, 1980
9. «Ձեռագրերի հետքերով» (Ակնարկներ), Երեւան, 1982
10. «Մատենադարան» (Ուղեցոյց գրքոյկ), Երեւան, 1983
11. «Ձեռագրերի աշխարհում» (Ակնարկներ), Երեւան, 1985
12. «Եղիա Մուշեղեան Կարնեցի, Թուրքերէն-հայերէն բառարան», Երեւան, 1985
13. «Գէորգ Դպիր Պալատեցու կեանքի եւ գործունէութեան տարեգրութիւն, 1737-1811», Երեւան, 1994
14. «ՊԱՐԶԱՑՏՈՒՄԱՐ» (1513), Նմանահաւանութիւն, Երեւան, 1996
15. «ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ ԻՐԱՆԱՀԱՅ ԴԷՄՔԵՐ», Երեւան, 1997

ԼԵՉՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԲԱՌԱՔՆՆԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ[1]

Պառակ, փառակ, պառակաձ, փառակաձ, փառայ

V դ. վկայված պառակ *և* պառակաձ *բառերը հայկական բառարաններում և գրականության մեջ այլևայլ ձևերով են բացատրված և մինչև այժմ էլ չարունակում են ուշադրության առարկա լինել:*

1. Նոր հայկազյան բառարանը պառակ *մեկնում է «բակ ոչխարաց, և հօտ խաշանց և մակաղատեղ»: Հր. Աճառյանը (ՀԱԲ, Ե, 851-854) բառիս հիմնական նշանակությունը տալիս է «կող» և սրանից բխեցնում՝* պառակիլ *«կողի վրա ընկնել, պառկիլ, որսի համար դարան մտնել»,* պառիկիլ *«պառկիլ»,* պառիկել, պառկիլ, պառկեցուցանել *«պառկեցնել»,* պառիկելիք *«անկողին»,* պառիկելեց *«անկողնի վերաբերյալ իրեր»: Հր. Աճառյանը «պառկելու» գաղափարից է ձևացած համարում* պառակ *«ոչխարների պառկած տեղը, մակաղատեղ, բակ» և լայնաբար՝* պառակ *«ոչխարի հոտ, անասունների խումբ կամ երամ»,* պառակ պառակ *«խումբ խումբ», իսկ սրանից էլ՝* պառակամայր *«հորթ ունեցող կով»,* պառակտել *«խմբից բաժանել, հոտի մեջ հակառակություն գցել»: Նա* պառակ *փոխառյալ է համարում չվկայված պահլավերեն *parak ձևից, հիմք ընդունելով ժամանակակից պարսկ. پارا (para) նույնիմաստ բառը: Սակայն վերջինս, որ ավելի հաճախ գրվում է նաև parra, ունի մի քանի ժամանակ հետևյալ առումները. 1. հեծյալ կամ հետիոտն զորք, որ որսը շրջապատելու համար դասավորվում է օղակաձև, 2. եզր, քղանցք, ծոպ, փեշ, 3. կող, կողք (այս բոլորը ըստ Դեհխոդայի Պարսկերեն բառարանի), 4. ստորոտ, լեռան լանջ, 5. հարդ, խոտի ցողուն (ըստ Շտեյնգասի Պարսկերեն-անգլերեն բառարանի), իսկ Գ. Կիրակոսյանի «Պարսկերեն-հայերեն բառարանում» բացատրված է՝ «ստորոտ, եզր, կողմ, զորաշարք»: Այս բոլոր առումները նույնպես, ինչպես կտեսնենք ստորև, իրենց զուգահեռները ունեն հայերենում:*

Հայտնի է, որ a (e)-ով վերջացող ժամանակակից պարսկերեն մի շարք բառեր պահլավերենում, ինչպես նաև նրանից փոխ առնված հայերեն բառերում ունեն ak վերջավորությունը. օրինակ, պարսկ. dība<պահլավ. depak=հյ. դիպակ, *պարսկ. nama<պահլավ. namak=հյ.* նամակ, *պարսկ. kurra<պահլավ. kurrak=հյ.* fուռակ, *պարսկ. fīreshta<պահլավ. freshtak=հյ.* ֆրեշտակ *և այլն: Այս օրինաչափությունից ելնելով, պարսկ. parra-ի պահլավական ձևը պետք է լինի *parrak, իսկ հայերենը՝* պառակ *(նաև* փառակ*): Ռ. Աբրահամյանի «Պահլավերեն-պարսկերեն-հայերեն-ռուսերեն-անգլերեն» բառարանում (Երևան, 1965, 222) արդեն որպես պահլավերեն վկայված բառ գտնում ենք parak (մեկ r-ով) ձևը՝ միայն «եզր, սահման, կողմ» նշանակությամբ (հմմտ. վերը պարսկ. parra-ի 2-րդ և 3-րդ առումները):*

*Պարսկ. parra-ի (նաև պահլավ. *parrak) առաջին առումով հայերեն բառ (արդեն որպես բայ՝* պառակիլ*) վկայված ենք գտնում Փավստոս Բուզանդի մոտ (Դ. ժգ). «Ասէ [Շաւասպ]. Արջ մի տեսի սպիտակ իբրև զձիւն: Եւ հրապուրեաց զՄարդպետն իջանել ի կառաց անտի, և հեծանել ի նժուգի. և մտեալ* պառակէին *մայրեացն»:*

---

[1] Տե՛ս «Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան 1981, № 2, էջ 32-37:

Նորայր Բյուզանդացին պառակիլ *բխեցնում է* պառական*-ից և մեկնում է «որսական չներով հետազոտել կամ որոնել զանասունն» («Կորիւն վարդապետ և Նորին Թարգմանութիւնք», Տփղիս, 1900, 228), իսկ Հր. Աճառյանը (ՀԱԲ, Ե, 851), որ* պառական *առանձին անստուգ բառ է համարում, չի ընդունում Ն. Բյուզանդացու բացատրությունը և* պառակիլ *բխեցնում է* պառակ*-ից՝ այն մեկնելով «կողի վրա ընկնել, պառկիլ..., որսի համար դարան մտնել», մինչդեռ Փավստոսի մոտ խոսքը սպիտակ արջին որսալու նպատակով անտառը չրջապատելու մասին է:*

2. «Որսը չրջապատելու համար օղակաձև դասավորվող հեծյալ կամ հետիոտն զորք» իմաստով (հմմտ. պարսկ. parra-ի առաջին առումը) պետք է հասկանալ նաև պառական*-ը. ան վերջամասնիկը այստեղ հոգնակիացուցիչ է, ինչպես նկատել է Նորայր Բյուզանդացին (անդ, 227): Հր. Աճառյանը, որ* պառական*-ի ծագումն ու նշանակությունը անհայտ է համարել (ՀԱԲ, Ե, 854-855), հայ հին մատենագրությունից երեք վկայություն է հիշատակում, որոնք համապատասխան աղբյուրներից ստորև բերում ենք ավելի ընդարձակ մեջբերումներով՝ բառիմաստը ճշգրիտ բացատրելու նպատակով:*

Ագաթանգեղոս *(§ 211). «Թագաւորն [Տրդատ]... ժամ տուեալ որսոյ՝ ամենայն զօրաց ածել կուտել (այլ ձեռ. ածեալ, կուտեալ)* զպառականն*, խուճապական սփռեալ, երագազ տուեալ, թակարդ ձգեալ, կամեցեալ որս առնել, երթեալ ի դաշտն Փառական Շեմականց»:*

Փավստոս Բուզանդ *(Գ, 20). «Եւ ոչ ոք էր, որ մնացեալ էր առ թագաւորին. և ոչ գունդ և այրուձի. բայց միայն սակաւ սպասաւորօք հանդերձ, և որսոցն* պառականսի*, և ռահւիրայ մարդկանն...»:*

«Յաղագս Պիտոյից» *(Մովսէս Խորենացի, Մատենագրութիւնք, Վենետիկ, 1865, էջ 543). «Եւ նախ յառաջնում նուագին ամենեքեան զլռութիւն սիրելով՝ ցայնքան ոչ հանէին խոչիւն, մինչև չուրջ պարպակելով (այլ ձեռ. պարփակելով) թակարդեօքն և* պառականն *(այլ ձեռ. պարառական) խմբիւք և այլով հնարավոր գործեօքն զբովանդակն արգելուին վայր»:*

Հր. Աճառյանը (ՀԱԲ, Ե, 854-855) պառական *բառի համար բերում է տարբեր բառարանների ու ուսումնասիրողների տված հետևյալ բացատրությունները. «ՆՀԲ մեկնում է «երագազ, ուռկան որսորդաց էրէոց՝ իբրև* փարախ *չրջափակ». նույնը նաև ՋԲ. իսկ ԱԲ «որսի չներ», որով բառը նույնանում է* բարակ *հոմանիշի հետ: Նոր քննիչները վարանում են այս երկուսի միջև. Ալիշան, Հայապատում Ա. 173 համարում է մի տեսակ որսորդական գործիք. – Հ. Ա. Բագրատունի, Քեր. Զարդ. Ե. 48. յ. 104, Նորայր, Կորյուն վրդ. էջ 227-228 և Թոռնյան, Հատընտ. Բ. 240 «որսի չներ» (հոգնակի կամ հավաքական): Նորայրը նկատում է հատկապես, որ եթե բառը նշանակեր «ցանց, Ագաթ. չպիտի կարողանար ասել* ածեալ կուտեալ*, այլ* բերեալ կուտեալ*»:*

Հետագայում Ստ. Մալխասյանցը (Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Թարգմ. Ստ. Մալխասյանցի, Երևան, 1947, 125) պառական *թարգմանել է «որսորդական չների պահապաններ», Գ. Աբգարյանը («Սեբեոսի պատմությունը» և Անանունի առեղծվածը», Երևան, 1965, 116) դիտել է, որ «Ագաթանգեղոսի նորահայտ մադրիդյան ձեռագրի բնագրում պառական թարգմանված է χυνηγια (=չներով որս) արտահայտությամբ»: Ա. Տեր-Ղևոնդյանը («Ագաթանգեղոս», Երևան, 1977, 89)* պառական *թարգմանում է «որսի զենքեր», իսկ Ռ. Թոմսոնը Ագաթանգեղոսի անգլերեն թարգմանության մեջ*

(Agathangelos, History of the Armenians, 1978, § 211)՝ նույնպես «որսի շներ» (pack of hounds): Գ. Աբգարյանը Սեբեոսի Պատմության նոր հրատարակության ծանոթագրություններում (Երևան, 1979, 201-202), հավանաբար, հրաժարվելով նախորդ բացատրությունից, բերում է «Բառք քերթողականք» միջնադարյան բառարանի տված մեկնությունը՝ «թակարդապատ»: Պառական-ի նշանակությանը նորերս անդրադարձել է նաև Վ. Առաքելյանը («Պատմա-բանասիրական հանդես», 1979, № 4, 36) և մեկնել է «խուճապ առաջացնող մարդկանց խումբ» իմաստով, որ ամենամոտն է բառի բուն նշանակությանը:

Որ պառական «որսի շներ», «որսորդական շների պահապաններ», «շներով որս», «որսի զենքեր» և կամ նմանօրինակ իմաստներ չի կարող ունենալ, պարզ է դառնում նաև մեր աղբյուրների համապատասխան վկայությունների ուշադիր ընթերցումից:

ա) Հայտնի է, որ անցյալում որսի ժամանակ շուրջկալողները, որոնք լինում էին զինվորներ, չինականներ կամ ճորտ գյուղացիներ, որսին չփոթեցնելու համար խուճապ ու աղմուկ էին բարձրացնում: Ագաթանգեղոսն այդ է հիշատակում՝ ասելով. «ածել կուտել զպառականն, խուճապական սփռեալ» (այսինքն՝ «բերել, դասավորել շուրջկալող զորքին, խուճապ բարձրացնել»):

Ըստ երևույթին, խուճապ առաջացնող շուրջկալողները որսի ժամանակ ավելի մեծ աղմուկ բարձրացնելու նպատակով օգտագործել են նաև նվագարաններ, ինչպես վկայում է «Յաղագս պիտոյից»-ը. որսավայրը թակարդներով ու շուրջկալող զորքով պարփակելու ժամանակ և «նախ յառաջնում նուագին» ոչ մի ձայն ու ծպտուն չէին հանում:

բ) «Յաղագս պիտոյից» գրքից վերը բերված վկայությանը նախորդող պարբերության մեջ առանձնակի խոսվում է «որսի շների» մասին, ուստի հաջորդ տողերում կարիք չկար այն կրկնելու և չի էլ կրկնված: Այստեղ նույնպես պառական «որսը շուրջկալող զորք» նշանակությունն ունի, ավելին՝ ասված է նաև, որ դրանք խմբերով էին լինում՝ «պառակական (=պառական) խմբիւ»:

գ) Փավստոսի մոտ վկայված Շավասպ Արծրունու պատմած սպիտակ արջի պատմության մեջ «մտեալ պառակէին մայրեացն» պետք է թարգմանել՝ «[նրանք՝ մարդպետի մարդիկ] մտան և չրջապատեցին անտառը» և ոչ թե՝ «եւ առեալ զնա (իմա՝ Մարդպետին) մտանեն ի մէջ մայրեացն» (Թովմա Արծրունի, «Պատմութիւն տանն Արծրունւոյ», Թիֆլիս, 1917, 111), «որսի համար դարան մտնել» (Աճառյան, ՀԱԲ, Ե, 851) կամ «սկսեցին անտառում (արջին) հետևել» (Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, թարգմ. Ստ. Մալխասյանցի, 175):

3) Բանասիրության մեջ վեճի առարկա է եղել նաև Ագաթանգեղոսի ու Սեբեոսի (=Անանունի) մոտ հիշատակված Փառական բառ-տեղանունը. Առաքեոն բառարանը մեկնում է «լերանց ստորոտն եղած», Հր. Աճառյանը (ՀԱԲ, Զ, 1160) գտնում է, որ սա «տեղական հատուկ անուն է» և որ Առաքեոնը «սխալմամբ է մեկնում «լերանց ստորոտն եղած», Մալխասյանցը («Սեբէոսի եպ. Պատմութիւն», Երևան, 1939, 168-169) «Փառական Շեմակաց» ուղղում է «Փառական Եմակաց»՝ հիմք ընդունելով Ագաթանգեղոսի հունարեն տարբերակում առկա p`araknes emakon ձևը, Գ. Աբգարյանը («Պատմութիւն Սեբէոսի», Երևան, 1979, 201) ևս այն կարծիքին է, որ Առաքեոնի բացատրությունը չի համապատասխանում «ո՛չ Ագաթանգեղոսի և ո՛չ էլ Անանունի տեղեկություններին», որովհետև «այս երկու պատմիչն էլ խոսում են որսադաշտի մասին»: Գ. Աբգարյանի այս բացատրությունը

միանգամայն համոզիչ է, հատկապես, եթե նկատի ենք ունենում, որ պահլավերեն p-ն հայերենում կարող է տառադարձվել և՛ պ, և՛ փ, որով և պառական, և փառական նույն բառի տարբեր տառադարձումներն են լինում: Հետևաբար, Փառական տեղանունը պետք է բացատրել որպես մի վայր, որտեղ որսը կատարվում էր չուրջկալող խմբերով. դա իսկ հաստատում է Անանունի վկայությունը. «Փառականն՝ դաշտ որսոց արշաւանաց նոցին»:

Ինչ վերաբերում է Առաքելի բացատրությանը, ապա տվյալ դեպքում այն վերաբերում է այլ բնագրի (որի համար տե՛ս հաջորդ՝ 4-րդ կետը):

4. Հր. Աճառյանը (ՀԱԲ, Ջ, 1160) ենթադրում է, որ Առաքելը Փառական-ի «լերանց ստորոտն եղած» իմաստը հավանաբար հանել է գավառական փառակ «լեռան լանջ» բառից, որը կապ չունի Ագաթանգեղոսի և Սեբեոսի (=Անանունի) հիշած Փառական հատուկ անվան հետ: Ուշադրության արժանի է, որ փառական-ը պառակ ձևով վկայված է Ստեփաննոս Օրբելյանի պատմության մեջ («Պատմութիւն տանն Սիսական», Թիֆլիս, 1910, 232)՝ «Հարսնավազին ձորակովն զառ ի կողմն յեկեղեցին, որ ի պառակոջ ճանապարհին», և ինքը Հր. Աճառյանը (ՀԱԲ, Ե, 851) մեկնում է «լեռան կող»՝ առանց անդրադառնալու, որ այդ երկուսը նույն բառի տարբեր տառադարձումներն են:

Պառակ բառը «սարալանջ» իմաստով 1724 թ. գրանցել է նաև Եղիա Աստվածատուրյանը (Կարնեցի) իր Թուրքերեն-հայերեն (անտիպ) բառարանում (Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվ, Ռուսաստանի հարաբերությունները Հայաստանի հետ, գործ 5, թղ. 19ա)՝ այն որպես բացատրություն դնելով թուրք. յամաճ նույնիմաստ բառին:

Ինչպես տեսնում ենք, պառակ-փառակ իրենց իմաստով համընկնում են պարսկ. parra-ի 4-րդ առումին: Նշանակում է Առաքելը չի սխալվել փառական «լերանց ստորոտն եղած» մեկնելով, բայց և ճիշտ է Հր. Աճառյանը, որ այն նաև տեղանուն է համարել:

5. Փառակ որպես հասարակ անուն մեկ անգամ ևս վկայված է Եղիա Կարնեցու վերոհիշյալ Թուրքերեն-հայերեն բառարանում (թղ. 47ա), բայց արդեն մի այլ առումով՝ «քղանցք, ծոպ, դրոշակ», որ համապատասխանում է պարսկ. parra-ի 2-րդ նշանակությանը: Կարնեցին բառս բերել է որպես թուրք. աթակ բառի բացատրություն:

6. Փառակ բառը պարսկական փառայ ձևով հայերենում հանդիպում ենք 13-րդ դարի հուշարձաններում, արդեն պարսկ. parra-ի 5-րդ առումով՝ «հարդ, խոտի ցողուն». տե՛ս «Գիրք վաստակոց», Վենետիկ, 1867, 52 («Եւ այլ ոմանք զփառային կոթեքն (այլ ձեռ. կոթերն) փետեն ի գետնէն և ի վերայ գտուննկն ծածկեն, նոյնպէս և ներքևն, նա լաւ պահէ. և թէ զնոյն փառայն դնես») և «Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ», Երևան, 1980 («Եւ յորժամ վերնայ փառայն յառաջ քանճ որ խիստ չողէ, նա չէ ազէկ ի չողն» – էջ 86, նաև՝ փ>ֆ անցումով՝ «թող լինի ֆառայն մատղայշ ու յերկայն» – էջ 83, «Տե՛ս, որ ի յայն ֆառայնէ չտաս, որ հասկնած լինի, զի խոչրցնէ զփողքն և այնէ հազ և չաւգտէ իր» – էջ 83-84):

ՆՀԲ բառս մեկնում է «կանեփուկի նման գետնաճապաղ և գրգռիչ բոյս»: Այս բացատրությունը «Գիրք վաստակոցի» հրատարակիչ Ղ. Ալիշանին, ըստ երևույթին, չի համոզել, ուստի նշել է, որ «փառայ բոյս անծանօթ մեզ» («Գիրք վաստակոց», էջ 52, տողատակ): «Հայբուսակում» նույնպես այն բացատրված չէ: Հր. Աճառյանը և Ստ. Մալխասյանցը (փառայ կամ փարայ) *կասկածով են ընդունում ՆՀԲ-ի բացատրությունը:*

Որ իսկապես փառայ *նուլն ինքը պարսկ. parra «հարդ, խոտի ցողուն» բառն է, հաստատվում է «Գիրք վաստակոցից» բերված վկայակոչումով: Հայտնի է, որ հարդը ջերմամեկուսիչ է և մինչև հիմա էլ ամենուրեք օգտագործվում է գյուղատնտեսության մեջ ու կենցաղում: Այս իսկ նպատակով «Գիրք վաստակոցը» առաջարկում է խաղողի տունկերը ապահով պահելու կամ տեղափոխելու համար դրանք վերից ու վարից ծածկել* փառայով*:*

Կարծում ենք, որ Գրիգոր Մագիստրոսի ԺԴ թղթում հանդիպող փարայ *բառը ևս այս նշանակությամբ է կիրառված՝ չնայած որ նախադասության իմաստը փոքր-ինչ մթագնված է. «ափրոդիտականն նուազեալ թառամի՝ կարօտացեալ* փարայի *ի ծարակածպտել այս օգնականութեան» («Գրիգոր Մագիստրոսի թղթերը», Ալեքսանդրապոլ, 1910, 48):*

Համադրելով վերը տրված բացատրությունները՝ գալիս ենք հետևյալ եզրակացության.

Ա. Պառակ *բառը բացի հայտնի «կողմ» նշանակությունից, հայերենում ունեցել է նաև հետևյալ իմաստները. 1. որսը չրջապատելու համար օղակաձև դասավորված հեծյալ կամ հետիոտն զորք, 2. ստորոտ, լեռան լանջ, 3. եզր, քղանցք, ծոպ, փեշ:*

Բառս իր այս իմաստներով համընկնում է պարսկ. parra-ի նշանակությանը, որի երկրորդ առումը վկայված է նաև պահլավերենում:

Բ. Փառական *հատուկ անունը նշանակում է այնպիսի որսավայր, որտեղ որսի ելած իշխանավորներին օգնել են նաև չուրջկալող խմբեր:*

Գ. Փառայ (փարայ, ֆարայ) *փոխառյալ է նոր պարսկերենից և նշանակում է «հարդ, խոտի ցողուն»:*

ЛЕКСИЧЕСКИЕ ЗАМЕЧАНИЯ

Р е з ю м е

Попытка лингвистов восстановить точный смысл и этимологию древнеармянских слов պառակ *(parak),* փառակ *(p‘arak),* պառական *(p‘arakan),* փառական *(p‘arakan),* փառայ *(p‘aray), сохранившихся в армянских источниках V в., в историях Агафангела, Павстоса Бузанда, в «Книге хрий» и некоторых памятниках последующих веков, до сих пор не увенчалась успехом.*

Сопоставление этих слов с персидским словом پارە *(parra) < пехлевийским *parrah дает возможность уточнить их значения и определить происхождение: а) слово* պառակ *(parak) (=*փառակ *– p‘arak) кроме известного значения «бок» в древнеармянском языке употреблялось также в следующих значениях: 1. конное или пешее войско, расположенное кругом, с целью окружить дичь; 2. подножие, склон горы; 3. край, висящий край юбки, бахрома, подол. Второе значение засвидетельствовано в среднеперсидском языке пехлеви; б) имя собственное* Փառական *(p‘arakan) (=*պառական*-parakan) означает место охоты, где окружающие группы помогали охотящимся; в)* փառայ *(p‘aray) (=*փարայ*,* ֆարայ *– p‘aray, faray) заимствовано из новоперсидского языка и означает «солома, стебелек травы».*

ԵՌԱԼԵԶՎՅԱՆ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՄԻ ՆՈՐ ԲԱՌԱՐԱՆ[!]

Հայ և արևելյան ժողովուրդների միջնադարյան փոխհարաբերությունները հասարակական կյանքի տարբեր բնագավառներում, հայ գիտնականների սերտ առնչությունները արևելյան ժողովուրդների գրականության ու գիտական մտքի հետ ինքնին թելադրում են այդ լեզուներից հայերեն և կամ հակառակը թարգմանական բառարանների առկայություն: Սակայն, դժբախտաբար, ամբողջական այդպիսի բառարաններ առ այսօր սակավ են հայտնաբերվել:

Այս բնագավառում հիշատակության արժանի է XV դարի բժշկական եռալեզվյան՝ հայերեն-արաբերեն-լատիներեն մի բառարան, որը լեզվաբանական մանրամասն ուսումնասիրությամբ 1903 թվականին հրապարակել է հայագետ Ժ. Կարստը: Այս հուշարձանը հայերեն և հայերենում օտար լեզուներից փոխառյալ բժշկական-դեղաբանական տերմինների ամբողջական բառարան է. ընդգրկում է Ա–Ֆ տառերը և ունի 201 բառ[1]:

«Միջնադարյան հայկական բառարանագրական հուշարձանները» արժեքավոր իր աշխատության մեջ հայատառ արաբերեն-պարսկերեն-հայերեն եռալեզվյան երբեմնի մի բառարանից մնացած ձեռագիր հատվածի վրա ուշադրություն է դարձրել լեզվաբան Հ. Ամալյանը[2]: Այս բառարանի ուշադիր քննությունը ցույց տվեց, որ այն իրականում ոչ թե արաբերեն-պարսկերեն-հայերեն թարգմանական բառարան է, այլ պարսկերենում արաբերենից փոխառյալ բառերի բացատրական բառարան է, որից պահպանվել են արաբական այբուբենի Ա, Բ, Թ տառերով սկսվող բառերը:

1966 թ. Երուսաղեմի հայկական ձեռագրերի ուսումնասիրման ժամանակ պրոֆ. Լ. Խաչիկյանը № 1428 ձեռագրից արտագրել է հայատառ եռալեզվյան՝ արաբերեն-հայերեն-թուրքերեն մի փոքրիկ բառարան, որը վերջերս նա սիրահոժար մեզ տրամադրեց հրապարակելու համար:

Մատյանը, որ ըստ երևույթին ուսումնական նպատակներով կազմված նյութերի ժողովածու է, համաձայն պրոֆ. Լ. Խաչիկյանի ենթադրության, XVII-XVIII դարերի գրչություն է. սրա առանձին հատվածներն ու հիշատակարանները իրենց նախագաղափար օրինակներն են ունեցել և շատ արժեքավոր են: Ժողովածուն բովանդակում է աշխարհագրական անունների մի բառարան, վերը հիշված բառարանը, Սուրբ Խաչի պատմությունը, մի ժամանակագրություն, թվաբանական խնդիրների մի դասագիրք և այլն:

Խնդրո առարկա բառարանը գտնվում է ձեռագրի 67-70 էջերում, ունի ընդամենը 118 բառ, որոնք բերված են 93 գլխաբառերում. մի գլխաբառի տակ առանձին դեպքերում տրվում է նաև տվյալ բառի հոմանիշը, ինչպես՝ բաթըն, ջօֆ *– «փոր, որովայն», իսկ որոշ դեպքերում մերձիմաստ անունները բերվում են մի գլխաբառում, ինչպես՝* բրհամ, խրնսըր *– «բութ, ճկույթ»: Բառերի հոգնակի ձևերը սովորաբար տրված են եզակիից հետո, բայց*

[!] Տե՛ս «Լրաբեր հասարակական գիտությունների», 1968, № 10, էջ 81-92:

1 **J. Karst**, Das trilingue Medizinalglossar aus Ms 310 der Wiener Mechitharisten- Bibliothek, “Zeitschrift für armenische Philologie”, 1903, Zweiter Band, Zweiter Heft, էջ 112-148:

2 **Հ. Ամալյան**, *Միջնադարյան հայկական բառարանագրական հուշարձանները*, Երևան, 1966, էջ 106-109:

և նկատելի են առանձին դեպքեր, երբ հոգնակին նախորդում է եզակիին, ինչպես ըզլուֆ, զըլֆ *– «գուլակներ, գուլակ», իսկ որոշ դեպքերում էլ հոգնակին վերցված է որպես առանձին բառ:*

Բառարանի հեղինակը, հավանաբար, նախապես ցանկացել է կազմել քառալեզվյան բառարան՝ արաբերեն-հայերեն-թուրքերեն-քրդերեն, ուստի և ձեռագրի համապատասխան էջերը բաժանել է չորս սյունակի, յուրաքանչյուրի վերևում նշելով լեզուն, սակայն ամբողջական են միայն արաբերենի և հայերենի սյունակները, բառերի թուրքերեն բացատրությունները սկսվում են 68-րդ էջից, իսկ քրդերենով տրված է միայն երեք բառ:

Դատելով այս բառարանի մեջ ընդգրկված բառանյութից, կարելի է եզրակացնել, որ այն կազմված է ինչ-որ մարդակազմական երկի բառացանկի հիման վրա. բերված են մարդու գլխի և իրանի մասերի և դրանց հետ առնչվող կենսաբանական մի չարք անվանումներ, իսկ բառարանի սկզբի տասնհինգ գլխաբառերը հավանաբար տվյալ երկի առաջաբանի «նվիրումի» հատվածից են քաղված:

Արաբական բառերի ճշգրիտ տառադարձությունը, մասնավորապես արաբական b, g, d ձայնեղների դիմաց համապատասխան հայկական բ, գ, դ հնչյունների օգտագործումը, մի քանի բառերի պարսկական ձևերի, ինչպես նաև արևելյան թուրքերենի (իմա՝ ադրբեջաներենի) մեջ գործածվող որոշ բառերի (օրինակ՝ սըմուխ, սմուխլար *– «ոսկոր, ոսկորներ») առկայությունը որոշակի ենթադրել է տալիս, որ կազմողը Արևելյան Հայաստանի միջավայրից է ծագում:*

Բառարանում ուշադրության արժանի է արաբերենի և թուրքերենի հայկական տառադարձությունը. արաբերեն տառադարձության դեպքում նկատելի է ավելի կուռ միասնություն և հետևողականություն, որը չատ աննշան դեպքերում է խախտվում: Այս նույնը չի կարելի ասել թուրքերենի հայկական տառադարձության համար, որտեղ միօրինակությունը հաճախ է խախտվում, նույն հնչյունը տառադարձվում է և՛ որպես ձայնեղ, և՛ որպես խուլ:

Հետաքրքիր երևույթ է այն, որ բառարանի կազմողը արաբական հնչյունական համակարգին հարազատ մնալու նպատակով առաջին անգամ հայերեն այբուբենի մեջ օգտագործել է արաբական ع (ʾa) և غ (q) կոկորդային հնչյունները. այսպես, օրինակ՝ եռիսուջ, ջջթր, աջյին, ջաթսայ, ըլխալըց, դաճըն, հալց, ճըտըրին:

Բառարանում արաբական հնչյունների հետևյալ հայկական տառադարձությունն է կիրառված.

1. ا(a) և آ(ā). *դեռևս Կարստը իր «Կիլիկյան հայերենի պատմական քերականության» մեջ նշել է, որ միջին հայերենում արաբերենից փոխառյալ բառերում a և ā հնչյունները տառադարձվում են* ա, *ինչպես* սամսար=*արաբ. samsār.* խաբար=*արաբ. xabar,* պազար=*արաբ. bāzār և այլն*[3]*:*

Քննության առարկա բառարանում այս օրինաչափությունը մասամբ գործում է բառամիջում. ինչպես, օրինակ՝ հանըր=كنح, դաճըն=ذقن, հալց=قلح, բալղամ=مغلب, ռաղ-

3 **J. Karst**, *Historische Grammatik des Kilikisch-Armenischen*, էջ 15:

բայ= ավգր, լսան=լսան, ըfթաֆ=վեցկ, ջընաբ=ծունջ: *Սակայն* a>ա *տառադարձությունը այստեղ հաճախ փոխարինվում է* a>ը *տառադարձմամբ, մի օրինաչափություն, որը դիտել ենք միջնադարյան հայկական բնագրերում պարսկերենից փոխառյալ բառերի հայկական տառադարձումների մեջ. օրինակ՝* մըխ=څم, մըխաթ=څخم, ջըբին=جبين, ջըֆըն=جفن, ըդըն=ذن, սըն=سن, ֆըմ= فم, զընդ=زند, fըթֆ=كتف *և այլն: a>ը տառադարձումը օրինաչափորեն գործում է մասնավորապես բառասկզբում՝* ըլբարի=الباري, ըլհաfըմ=الحاكم:

2. ب *(b) ամենուրեք տառադարձվում է* բ, *ինչպես* ըլբաղի=البالي, ըբըն ըլբաշար= ابن البشر, բար=بار, *բայց մի դեպքում՝* պ. ըլպըfայ=البقاء:

3. ت *(t) և* ط *(t) ամենուրեք տառադարձվում են* թ. fըթֆ–كتف, մըխաթ=څخم, բաթըն=بطن, թըհել=تحلل. *մի դեպքում՝* տ. ղըտըհն=قطن:

4. د *(d) հիմնականում տառադարձվում է* դ. եդ=يد, ջըղդ=جلد, սըդըր=صدر, *բայց և՝* թ. *օր.* զընթ=زند, fաբաթ=بكد *և մեկ դեպքում՝* տ. *ինչպես՝* խատ=خد:

5. ذ *(ẕ) և* ض *(z) ամենուրեք տառադարձվում են* դ. ըդըն=ذن, դաճըն=ضجن, ըդլաՀ=ظلم, դըրս=ضرس, *իսկ* ظ *(z) մեկ դեպքում տառադարձված է* դ՝ ճադամ=ظلم, *մեկ այլ դեպքում՝* զ. *ինչպես՝* զըֆըր=ظفر, *իսկ մի երրորդ դեպքում՝* տ, *ինչպես՝* տահըր=ظهر:

6. ع *(’a) կոկորդային հնչյունը, ինչպես վերը ասվեց, պահպանված է հայերեն տառադարձման ժամանակ, ինչպես՝* եիսու ع =عيسى, ջային=جعين, ջադամ=عظم, *բայց և կա* ع>ա *ձևը՝* սաալ=سعل, *և* ع>հ. *օրինակ՝* ըղլահ=ظلم, *որ նկատվում է նաև այլ բնագրերի մեջ:*

7. ق *(q) կոկորդային հնչյունը նույնպես պահպանված է նույնությամբ՝ արաբական ձևով.* ճըտըղին=قطن, դաճըն=قذن, *բայց և տառադարձված է* ղ, *օրինակ՝* ղադի=قضى, ռաղբայ=رقبة, ըրղ=قرع:

8. و *(v) բառասկզբում մի դեպքում հանդիպում է* ւ, ւաչ, ւտչուն= وجع وجد, *իսկ բառամիջում ամենուրեք* ու, *ինչպես* սուֆ=صوف, խատուտ=دوخد, դղուն=وقذ, ջլուղ=دلو, *և մեկ դեպքում էլ* օ, *ինչպես՝* ջօֆ=جوف:

Վերը նշեցինք, որ թուրքերենի հայկական տառադարձման մեջ այս բառարանում հաճախ խախտվում է միօրինակությունը: Սա հավանաբար բխում է այն հանգամանքից, որ բառարանի կազմողը հետևել է ժողովրդական արտասանությանը և ոչ գրավոր լեզվին: Այս իսկ տեսակետից էլ ուշադրության արժանի է այս փոքրիկ բառարանը, որովհետև արաբատառ թուրքերենը հնարավորություն չի տալիս ճշգրտորեն վերականգնելու բառերի արտասանությունը: Բառարանում թուրքերենի տառադարձման հետևյալ ձևերն են կիրառված.

1. ا *(a) և* آ *(ā). տառադարձվում են* ա, *ինչպես՝* ալ-ال, աթ تو, գուլմաղ-كولمق, սէլըննաք- كسونمق, ղամ-غم, աղլամաղ-آقلامق, ախսըրմաղ-قيرصمق, դուդախ-دوداق *և այլն:*

2. (b) տառադարձվում է և բ *և* պ. *օրինակ՝ բօյին*-يوين, ղաբուրղա-غربوق, պուռըն-بورن պիճ -بيق *և այլն:*

3 پ *(p) տառադարձվում է մեկ դեպքում* պ՝ պարմաղ-قبرص:

4. ت *(t’) տառադարձված է* թ. *ինչպես՝ ղըրթլաղ*-قرتلاغ, *թուքուր*-توكور, *իսկ* ط*(t) տառադարձվում է և՛ դ և՛ թ, և՛ տ. ղըռնաղ*-قارنق, *տամար*-طمر, *խաթըր*-طاخر, *տալաղ*-طالاق:

5. ճ *տառադարձվում է և՛* ջ *և՛* ճ. *աւուջ*-ճաւՀ, *ճիգար*-կճ, *իսկ* ճ *(c) տառադարձված է* չ. *չանկայ*-ակճ:

6. խ *(x) տառադարձվում է* խ. *խաթըր*-ըտխ: խ-*ով է տառադարձվում առանձին դեպքերում նաև* ղ *(q)-ն օր՝ տուղախ*ցադոդ, *ղուլախլար*-ըրղալոգ:

7. դ *(d) հիմնականում տառադարձվում է* դ. *օրինակ՝ դիչ*-ծիդ, *դիլ*-լդ, *դիրսաք*-կսրիդ, *իսկ երկու դեպքում՝* տ. *տուղախ*-ցադոդ, *օտ*-ոդո:

8. ր *(r) տառադարձվում է* r, *իսկ եթե նախորդում է* ն-*ին՝ տառադարձվում է* n. *այստեղ, իհարկե, հայերենի ուղղագրական օրենքի կիրառություն չպիտի փնտրել. թուրքերենում ևս առկա է* ն-*ից առաջ* r-*ի* n *արտասանություն. օրինակ՝ պուռըն*-ոսրոպ, *ղըռնաղ*-ցռոնրդ, *ղառըն*-ոսրղ: *Մեկ առանձին դեպքում հանդիպում ենք* խ-*ից առաջ* n-*ի գործածություն. ղառիչ*-ծիսրղ:

9. ս *(s) և* ս *(ş) ամենուրեք տառադարձվում է* u, *իսկ մեկ դեպքում ունենք՝* q. *գօքուզ*-սոկօգ:

10. ք *(q) կոկորդային հնչյունը հիմնականում տառադարձվում է* ղ, *ինչպես՝ պարմաղ*-ցռոպդ, *ղարա*-ոցդ: *Առանձին դեպքերում, ինչպես նշվեց արաբերեն բառերի տառադարձման ժամանակ, պահպանված է արաբերեն* ք *-ն այսպես՝* ցուլաղ-ցլոգդ, *պիք* - ցեպ ցան-ցոն: *Մերթ ընդ մերթ հանդիպում ենք նաև* ք>խ *տառադարձումներ. օրինակ՝ ղուլախլար*-ըրլոգդ, *ախսըրմաղ*-ցռսեըոAդ: *տուղախ*-ցադոդ, *արխա*-ոցրA:

11. կ *(k) հիմնականում տառադարձվում է* f. *ինչպես՝ սումուք*-կօսոս, *օքսուր*-ռսօսի, *քուչուք*-կճօկ: *Մեկ առանձին դեպքում ունենք* կ>կ *տառադարձում. գօբակ*-կօկ:

Հայտնի է թուրքերենում կ *(k) դիրը ունի նաև* նկ *ռնգային հնչում. նման դեպքերում հայերեն տառադարձումները այս բառարանում կատարված են* նկ *և* նգ. *օրինակ՝ չանկայ*-ակճ, *սինգիր*-ռիսես, *գօնգուլ*-լօկոգ:

12. ց *(o,v,u) համապատասխանաբար տառադարձվում է* o, ւ, ու, *ինչպես՝ պուռըն*-ոսրօգ, *ումուզ*-զօոպ, *ղուլթուղ*-ցօղղդ, *սէլընմաք*-կօոսս, *աւուջ*-ճաւՀ, *պօղազ*-զիցթ, *ղօլ*-լօգ, *գօն*-կօգ *և այլն:*

13. ◦ *(h). թուրքերենում այս հնչյունը բառի վերջում* ա *է արտասանվում. այդ նույն ձևով է տառադարձվում հայերենում. արխա*-ոցրA, *ղաբուրղա*-ագրղոթ: *ղարա*-ոցդ:

14. ʕաթհա, fաurա, զամմա (ʿ ՝) *հնչյունները, որոնք արաբատառ թուրքերենում չեն գրվում, համապատասխանաբար հայերենում տառադարձվում են՝* ա-ը, ե-ի *և* օ-ու. *օրինակ՝ սէվընմաք*-կօոսս, *ղըռնաղ*-ցիռրդ, *ղառիչ* - ծիսրղ, *ճիգար*-կճ, *օքսուր* -ռսօսի, *քուչուք*-կճօկ, *գօնգուլ*-լկոգ:

Ստորև հրապարակվում է բառարանի բնագիրը Երուսաղեմի ս. Հակոբյանց վանքի թ. 1428 ձեռագրից, ԺԷ-ԺԸ դար, էջ 67-70.

1	*2*	*3*	*4*	*5*	*6*
Արաբի	*արաբերեն**	*հայերեն*	*Թուրքի*	*Թուրքերեն**	*քուրդի որ է մարաց*
ըռըբըլ, իլահ, ալահ, իլահ, ըռըբ	رب الاله، الله اله، رب	*տեր աստուած*			
*ըլխա[լ]ը*ق	الخالق	*ստեղծող*			
Ըլբարի	البارى	*արարիչ, գոյացուցող ի կւռոյ*			
ըլջաբըր[4]	الجابر، الجبار	*ի հողոյ ստեղծօղ*			
ըլազալի, ըլաբադի	الازلى الابدى	*անսկիզբն, անվախճան*			
ըլհաքըմ, ղադի	الحكم قاضى	*իշխան, դատաւոր*			
ըռահման, ռահիմ	رحمان رحيم	*գթած, ողորմած*			
ըռաբ ըլալամին	رب العالمين	*տեր արարածոց*			
եիսուէ ըլմսեհ	يسوع المسيح	*Յիսուս Քրիստոս*			
րուջըլ, ինսան	رجل انسان	*այր, մարդ բանական*			
ըբըն ըլբաշար	ابن البشر	*որդի մարդոյ*			
Ըլարըֆ	العارف	*գիտուն, իմաստուն*			
Ըլալըմ	العالم	*իմաստուն, կարդացօղ*			
Ըլամըլ	العامل	*բարէգործ*			
բար, սալեհ	بار صالح	*արդար, բարի*			
Ըռաս	رأس	*գլուխ*			
Ջիմջըմայ	جمجمه	*գագաթ գլխոյ, կատար*			
Մըխ	مخ	*ըղեղ, ուղեղ*			

* Արաբերեն և թուրքերեն այունակներում տառադարձումները մեր հավելումներն են - Բ. Զ.

4 Ձեռ. ըլջաբըլ:

1	*2*	*3*	*4*	*5*	*6*
չաէ[ր], փարչամ[5]	شر، پرجم	*վարս, ծամ, վրջամ*[5]			
ըզլուֆ, զլֆ	زلوف، زولوف	*գուլակներ, գուլակ*			
չԷըր	شعر	*մազ*			
սուֆ մանդուֆ	صوف مندوف	*բուրդ գզած*			
ֆըտըին	قطن	*բամպակ*			
Ըբրիսամ	ابريسم	*ապրիշում, կերպաս*			
դամաղ[6]	دماغ	*քիմք, գլխոյ միջի երակներ*			
Ջըբին	جبين	*ճակատ*			
Հաւջաբայ	حجبه	*ընքներ*			
Հադաղայ	حدقه	*աչաց կոպեր*[7]			
ջըֆըն, ըջֆան	جفن، اجفان	*թարթ և թարթեր*			
աԷյին	عين	*աչք, ակն*			
էԷուն[8]	عيون	*աչքեր*			
ըդմօԷըլԷին	دموع الاعين	*արտասուք աչաց*	*եաչ գօզու*	ياش كوزو	
ըլպըքայ[9]	البكاء	*լաց*	*աղլամաղ*	آغلامق	
ըլ[հա]զը	الهزء	*ծաղր*	*գուլմաղ*	كولمك	
Ըլֆար	الفرح	*ուրախութիւն, ցնծութիւն*	*սէւընմաք*	سونمك	
Ըլղամ	الغم	*տրտմութիւն, սուգ*	*դամ, դասաֆաթ*	غم، قساوت	
ըդըն, ադան	اذن، آذان	*ականջ, ականջներ*	*ճուլաղ, դուլախլար*	قولاق، قولاقلر	
ւաչ, ւուջուհ	وجه، وجوه	*երես, երեսներ*	*իւզ, իւզլար*	يوز، يوزلر	
խատ, խատուդ	خد، خدود	*թուշ, թշեր*	–	–	

5 Ձեռ. շաէ ֆե. *փրչմ*: Վերջինս պարսկերեն է՝ ճակատին թափված մազափունջ իմաստով, որի դիմաց հայ թարգմանիչը դրել է *վերջամ* կամ *վարջամ* փոխառյալ ձևը: Այս բառը առաջին անգամ է հանդիպում հայերենում:

6 Բնագրում հայերեն *քիմք* իմաստը տրված է արաբերենի սյունակում՝ որպես մեկ բառ՝ *դամաղաքիմք*, ուղղում ենք՝ *քիմք*. իմաստը տեղափոխելով հայերեն սյունակը:

7 Ավելի ճիշտ է՝ *բիբ:*

8 Նախորդ աէյին բառի ոճագնակիճ է, բնագրում որպես առանձին բառ է ներկայացված:

9 Ձեռագրում՝ Ըլլպըքայս:

1	*2*	*3*	*4*	*5*	*6*
ընֆ, ընուֆ	انف، انوف	*քիթ, քըթեր*	*պուռըն, պուռընլար*	بورون، بورونلر	*սըմպէլ*
Շաւրաբէ	شارب	*բեղ*	*պիճ*	بيق	
չաւէրըբ[10]	شوارب	*բեղեր*	*պիճլար*	بيقلر	
Մըխաթ	مخاط	*խըլինք*	*սումուք*	سوموک	
Ըաթսայ	عطس	*փըսընքտալ*	*ախսըրմաղ*	آقصيرمک	
չօֆէ, չըֆաֆ	شفة، شفايف	*չուրթն, չրթունք, պռկներ*	*տուդախ, տուդ[ա]խլար*	دوداق دوداقلر	
դաճըն, դղուն	ذقن، ذقون	*մորուս, մօրուքներ*	*սաճալ, սաղալլար*	صقال صقاللر	
նաւուլ, նուսալ	نول	*կզակ, ծնօտ, ծնօտներ*	*չանկայ, չանկալար*	چکه چکه لر	
Հանըք	حنک	*դունչ*	–	–	
դըրս, ըդրաս	ضرس، اضراس	*ատամ, ատամներ*	*դիշ, դիշլար*	ديش، ديشلر	
սըն, սընան	سن، اسنان	*ակռայ, ակռաներ*	–	–	
Դըրադըր	درادير	*լընդեր, քիմք*	–	–	
ֆըմ, ըֆմուս	فم، افمام	*բերան, բերներ*	*աղըզ, աղըզլար*	آغز، آغزلر	
լսան, ըլսըն	لسان، السن	*լեզու, լեզուք*	*դիլ, դիլլար*	ديل، ديل لر	*ազման, ազմանան*
հալը	حلق	*խըրչակ, փողք, կոկորդ*[11]	*պօղազ*	بوغاز	
սամա ըլհալը	سماء الحلق	*բերնի առիք*	*աղըզ առաստաղի*	–	
ջաւգըթլհալը	جوزة الحلق	*կլափ, բօկ*	*դըրթլաղ, բօկ*	غرتلاق ؟	
Իթթաւոպ	يتثاءب	*հորանջ տալ*	*ասնամաք*[12]	اسنمک	
սասալ, սալէ	سعل ؟	*հազ, փըսխայ*	*օքսուր*	اکسور	
բասճայ, բզաղ	بصغه ؟	*թուք, թըքեր*	*թուքուր, թուքուրլար*	توکور توکورلر	
Բալղամ	بلغم	*բըլղամ*	*փաղազ (?)*	*?*	
Րաղբայ	ربقه	*վիզ, չըլինք*	*բօյին, անքսայ*	بويون اکسه	

10 Նախորդ *շաւրաբէ* բառի հոգնակին է, ձեռագրում որպես առանձին բառ է ներկայացված:

11 *Կոկորդ* բացատրությունը բնագրում տրված է թուրքերեն *պօղազ*-ից հետո:

12 Ձեռագրում *ասնըլսրմաք:*

1	2	3	4	5	6
քըթֆ, ըքթաֆ[13]	كتف، اكتاف	*թև, ուս, քէճ*	*ումուզ, ումուզլար*	اوموز اموزلر	
աքս, ɛօքուս	عكس، عكوس	*արմունկ, արմնկներ*	*դիրսաք, դիրսաքլար*	ديرسک ديرسکلر	
զընթ, զընուրթ	زند، زنود	*բազուկ, բազկներ*	*ղօլ, ղօլլար*	قول، قول لر	
եդ, եդային	يد، يدين	*ճեռք, ճեռներ*	*ալ, ալլար*	ال، ال لر	
քէֆ, գամչիհ	كف، خمش	*թաթ, ափ*	*աւուլ*	آوج، آووج	
Գամչէ	خمش	*ճանկել*	*աւուլլամաղ*	اوجلامق	
Հաֆնէ	حفن	*կուց, ափկից*	*իքի աւուլ*[14]	ايکی آووح	
սըբաճ, աասաքէ	اصبع، اصابع	*մատ, մատներ*	*պարմաղ, պարմաղլար*	پارمق، پارمقلر	
բըհամ, խընսըր	ابهام الخنصر	*բուռթ, ճկոյթ*	*պաչպարմաղ, քուչուկ, պարմաղ*	باش پارمق کوچک پارمق	
զըֆըր, ազաֆիր	ظفر اظفار	*եղունգ, եղնկներ*	*դըռնաղ*	طرناق	
չըպըռ, ֆընթ	?شبر	*թիզ, քիլ*	*ղառիչ, սունկուլ*	?قارش	
խօսայ, խուռս	?	*մատանի, մատնիք*	*իւզուք, իւզուքլար*	يوزوک يوزوکلر	
ɛօրօ, ըրք	عروق، عرق	*երակներ, երակ*	*տամարլար, տամար*	طمر، طمرلر	
աասաք[15]	اعصاب	*ջիլ, ջղեր*	*սինդիր, սինդրլար*	سيکير، سيکيرلر	
ջըլդ, ջլուդ	جلد، جلود	*կաշի, մորթ, մորթեր*	*գօն, դարի, դարլար*	کون، دری، دريلر	
լահըմ, լհուամ	لحم، لحوم	*միս, մըսեր*	*աթ, էթլար*	ات، اتلر	
ɛադամ, աղմէն	?عظم	*ոսկոր, ոսկորներ*	*սըմուք, սմուքլար*	سموک، سموکلر	
սաճիէ, սաղիաթ	ساقيه ?	*արիւն, արիւնք*	*ճան, ղանլար*	قان، قانلر	
տահտըլաբաղ	تحت الابط	*ընթիտակ*	*ղուլթուղ*	قولتوق	
տահըր, սալը	ظهر، صلب	*կըռնակ, ող, մէջք*	*արխա, բէլ*	آرقه، بل	

13 Բառիս ոճգնակին *ըքթաֆ* հայերեն պլունակում չի բացատրված, պետք է ավելացնել *թևեր, ուսեր*:

14 Ձեռագրում *աւուճ*. ուղղում ենք ըստ նախորդ բառերում կիրառված ձևի:

15 Բառիս եզակին *ասք* عصب հավանաբար ընկել է. թարգմանությունը կա և՛ հայերենում, և՛ թուրքերենում:

1	*2*	*3*	*4*	*5*	*6*
Ჩჴնիքթաֆ	بين اكتاف	*թիկնամէջ, ողնաշար, միջնաղան*	*բէլաբասի*	*?*	
ըղլահ, գամի	ضلع?	*կող, կարճ կող*	*այակլար, ղաբուրղա*	*?* قابورغه	
ջամ, ջընաբ	جناب، جمع	*քօվ, կուշտ*	*եան, եանլար*	يان، يانلر	
բաթըն, ջօֆ	بطن، جوف	*փոր, որովայն*	*ղառըն*	قارن	
Սըռայ	سرة	*պորտ*	*գօբակ*	كوبک	
Սըդըր	صدر	*կուրծք, լանջք*	*գօքուզ*	كوكس	
գայիա դիուս	*?*	*ծիծ, ծըծեր, ըստի*	*մամաք, մամաքլար*	ممه ک ممه کلر	
ղալը, ֆուաթ	قلب، فواد	*սիրտ, կամք*	*գօնդուլ, իւրակ*	كوكل يورک	
Բաւալ	*?*	*միտք, իմացումն*	*խաթըր, ֆիքիր*	خاطر، فكر	
ղասաբէց (?)	*?*	*ճիգար*	*ճիգար*	جكر	
Մարարա	مرارة	*լեղի*	*օտ*	اود	
թըհէլ, քաբաթ	طحال كبد	*փածեղ, լերդ*	*տալաղ, ղարայ ճիգար*	طالاق قره جكر	
ըիէ, չահըմ	ريه، شحم	*թոք, ճրագուս*	*ճրաեաղի*	*?*	
մսրան, մասարին[16]	مصران مصارين	*[աղի, աղիք]*[16]	–	–	

16 Այստեղ բառարանը ընդհատվում է:

ԲԱՌԱՐԱՆ[1]

(«Մկրտիչ Նաղաշ»)

Բառարանը կազմելու համար հիմնականում օգտագործվել են՝

1. Աճառեան Հր., Հայերէն արմատական բառարան, հ. Ա-Է, Երևան, 1927-1935:

2. Աճառեան Հր., Թուրքերենէ փոխառեալ բառեր հայերէնի մէջ, «Էմինեան ազգագրական ժողովածու», հ. Գ, Մոսկուա-Վաղարշապատ, 1902:

3. Գէորգ Դպիր, Բառարան պարսկերէն ըստ կարգի հայկական այբուբենից… Կոստանդնուպոլիս, 1826:

4. Կարապետեան Պ. Զ., Մեծ բառարան օսմաներէնէ հայերէն, Կ. Պոլիս, 1912:

5. Կիրակոսան Գ., Բառարան պարսկերէն-հայերէն, Թեհրան, 1933:

6. Մալխասեանց Ստ., Հայերէն բացատրական բառարան, հ. Ա-Դ, Երևան, 1944-1945:

7. Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Ա և Բ, Վենետիկ, 1836-1837:

8. Баранов Х. К., Арабско-русский словарь, Москва, 1957.

9. Миллер Б. В., Персидско-русский словарь, Москва, 1953.

10. دهخدا، لغت نامه، تهران، 1325. (Դեհխոդա, Բառարան, Թեհրան, 1325/1946):

11. فرنودسار یا فرهنگ نفیسی، جلد 1-5، (Հանրագիտարան կամ Նաֆիսու բառարան, հ. 1-5, Թեհրան, 1317-1334 (1938-1955):

Մեր բառացանկը կազմված է հետևյալ սկզբունքով. նախ տրվում է օտար բառի այն ձևը, որը պահպանված է հրատարակվող բնագրում: Այստեղ արաբերեն-պարսկերեն բառերի ձայնեղները մեծ մասամբ պահպանված են նույնությամբ: Ձայնավորների տառադարձման մեջ կուռ օրինաչափություններ չեն նկատվում: Անշուշտ այս տարատեսակությունները հետևանք են իրենց գրիչների լեզվական առանձնահատկությունների:

Բառահիմքին հաջորդող փակագծերում տրվում են բառի այլևայլ տառադարձությունները՝ ըստ տաղերի տարընթերցումների: Այնուհետև նշվում է փոխառյալ լեզուն: Բառերը ճնշող մեծամասնությամբ արաբերեն են, սակայն հայերենում փոխառված են պարսկերենի միջնորդությամբ, ուստի նշում ենք արաբ.-պարսկ.*:*

Պարսկերենի միջնորդ լինելու հանգամանքն են վկայում նախ այն բոլոր պարսկաբանությունները, որոնք կան Նաղաշի տաղերում, այնուհետև փոխառյալ բառերի պարսկական և ո՛չ արաբական ձևերի տառադարձումները, ի վերջո այդ բառերի գրական և ո՛չ ժողովրդական ձևերի օգտագործումը: Այս բոլորը միաժամանակ աներկբայելիորեն խոսում են այն մասին, որ Նաղաշը տիրապետել է պարսկերենին, ծանոթ է եղել պարսից գրականությանը:

---

[1] Տե՛ս *Մկրտիչ Նաղաշ*, աշխատասիր.՝ Էդ. Խոնդկարյան, Պատ. խմբ.՝ Բ. Չուգասզյան, ՀՍՍՌ ԳԱ ՀՍՍՌ ԳԱ Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտ, Երևան, 1965, էջ 244-256:

Բառի արաբատառ պատկերի հետ միաժամանակ տրվում է նրա լատիներեն տառադարձումը, որը չափազանց կդյուրացնի մասնագետների աշխատանքը համեմատությունների ժամանակ: Վերջում վկայակոչված են Նաղաշի տաղերի այն տողերը, որտեղ օգտագործված է տվյալ բառը, իսկ փակագծերում նշված է տաղի համարը և տողը՝ ըստ սույն հրատարակության:

Աստղանիշով (*) բերված բառերը բացակայում են Հր. Աճառյանի «Հայերէն արմատական բառարանում», իսկ եթե տվյալ բառը բերված է Մալխասյանցի «Հայերէն բացատրական բառարանում», ապա համապատասխանաբար նշվում է և դա:

* Ադաթ *(ատաթ)* – արաբ.-պարսկ. عادت *(ādat)* – «սովորություն, կարգ ու կանոն»:

Բացատր. բառ. ունի որպես բարբառային բառ:

Բլբուլն ի վարդն ասաց. թ' Ինչ ադաթ *կա քեզ (3, տող 57)*

* Ալամ *(ալեմ)* – արաբ.-պարսկ. عالم *(ālam)* – «աշխարհ, տիեզերք»:

Զպիտի չփոթել ալէմ *(ալամ, յալամ)* عالم *(ālem)* «գիտուն, գիտնական, ուսյալ» *բառի հետ:*

Զար ու ֆիղան կանչեմ յալամս *հաւասար (3, տող 26)*

Ինճ ալամս *բոլոր չէ քո տեսուդ դին (3, տող 46)*

Դու մանչուր յալամիս, *ես քեզ խնայեմ (3, տող 66)*

Որ ալամս *բոլոր դէմ քեզ հասրաթ է (3, տող 70)*

* Ահլ *(էհլ)* – արաբ.-պարսկ. اهل *(ahl)* – «մարդիկ»:

Պարսկերենում ահլ-*ը էզաֆեթի հավելումով որևէ անվան հետ նշանակում է տվյալ բնագավառի մարդ, օր.* ահլէ սանա՛թ *(*صنعت اهل*)* «արհեստավոր», ահլէ էլմ *(*علم اهل*)* «գիտության մարդ, գիտնական»:

Ահլի (է) նադար *(*نظر اهل*)* «ուշիմ, չրջահայաց, խոհեմ մարդ»: *Տե՛ս նաև* նադար:

Ապա քարամ արա, ահլի նադար *ես (3, տող 11)*

Քարամ արա, քարամ, է ահլի նադար *(3, տող 32)*

Ամանաթ – արաբ.-պարսկ. امانات *(amānat)* – «ավանդ, հավատարմություն»:

Հազար հետ ամանաթ *և երդում տամ քեզ (3, տող 59)*

* Ամբար *(ամպար, ամպէր)* – արաբ.-պարսկ. عنبر *(anbar)* – «մածուցիկ բուրումնավետ նյութ, մոխրագույն. ձեռք է բերվում կաշալոտի (կաթնասուն կենդանի կետերի ցեղից) արտաթորանքներից՝ արևադարձային օվկիանոսներում ու ծովերում»:

Արմատ. բառ. ունի յամբար *(յամպար, ամբար, ամպար) «անուշահոտ մի ծաղիկ. լտ. ambra» իմաստով: Բացատր. բառ.* յամպար՝ *թե՛ ծաղկի և թե՛ բուրմունավետ նյութի նշանակությամբ:*

Հաճախ գործածվում է մուշկ ու ամբար *կապակցության մեջ: Տե՛ս* մուշկ:

Որպէս մուշկ ու ամբար *անուշահոտ ես (3, տող 36)*

* Արմաղան – *պարսկ. ارمغان (armaqān, apmoqān) – «նվեր, պարգև, ընծա»:*

Բացատր. բառ. ունի որպես բարբառային բառ:

Քեզ եմ պահեր արմաղան *(1, տող 63)*

Երբեր զանգին արմաղան *(1, տող 70)*

* Աֆարին – *պարսկ. آفرین (āfarin) – «փառք, կեցցես, գովք, ներբող»:*

Բացատր. բառ ունի աֆարիմ, աֆարըմ, աֆէրիմ *ձևերով՝ որպես բարբառային բառ:*

Աֆարին *իր ծընօղին (1, տող 71)*

* Բահր *(պահ») – արաբ.-պարսկ. بهر (bahr) – «փայլ, լույս, հիասքանչ, ապշեցուցիչ»:*

Արաբ. بهر (bahara) «փայլել, չողալ» բայից:

Դու բահր *ես ու նիգար, լատիֆ ու նարին (3, տող 54)*

* Բէզար *(պէզար) – պարսկ. بیزار (bizār) – «ձանձրացած, ազատ, փրկված»:*

Աճառյանը (Թուրք. փոխ. բառեր, էջ 288) ունի պէզարիլ *(Վան, Ղարաբաղ) «ձանձրանալ».բառի ծագումը դնում է թուրքերենից بزمک (bezmek), որը ճիշտ չէ.* պ(բ)էզարիլ *կազմված է* պ(բ)էզար *պարսկ. բառից հյ. իլ ածորդության հավելումով:*

Դու մի լինիր չուտով ի յիսնէ բէզար *(3, տող 30)*

Բէկուման *(բեկուման, պէգուման, պէկուման, պէկումէն) – պարսկ. بی گمان (bi-gomān) – «անկասկած, աներկբա, հաստատ»:*

Կազմված է պարսկ. բի (բէ) *ժխտական մասնիկից և* գուման *«կարծիք, կասկած» բառից: Տե՛ս* կուման:

Հայերենում հաղորդված կա անգուման *«անկասկած»:*

Արմատ. բառ. ունի գուման:

Թէ հանց որ *բէկուման* դու Գաբրիէլն ես (3, տող 3)

Բլբուլ *(բուլբուլ, պլպուլ, պուլպուլ, պիւլպիւլ) – պարսկ. بلبل (bolbol) – «սոխակ, բլբուլ»:*

Գահ – *պարսկ. گاه (gāh) – «տեղ, վայր»:*

Այս նշանակությամբ բառը հայերենում առանձին չի գործածվել: Ըստ Աճառյանի (Արմատ. բառ., հ. Բ, էջ 21) հնում փոխ է առնվել հյուս. պահլավերենից gah «գահ, աթոռ, բազմոց» իմաստով:

Նաղաշը պարսկերեն شکارگاه *կամ* صیدگاه *(šekārgāh, seidgāh) բառի պատճենումով կազմել է* որսագահ *«որսավայր, որսատեղ»:*

Հանց որ յորսագահն *ելան (1, տող 59)*

* Գունահ *(կիւնահ, կուննահ) – պարսկ. گناه (gonāh) – «մեղք, հանցանք, սխալ»:*

Վարդն ի բլբուլն ասաց. Այս ինչ գուման *է (3, տող 21)*

Դարդ *(տարտ) – պարսկ.* درد *(dard) – «ցավ, վիշտ»:*

Ի դարիպուլթեան դարդէն *երեսիս գունըն կու քաղի (13, տող 10)*

* Ջահր *(զէհր) – պարսկ.* زهر *(zahr) – «թույն»:*

Արմատ. բառ. ունի ժահր *բառի տակ: Սա վաղ շրջանի փոխառություն է, իսկ* զահրը՝ *ուշ շրջանի:*

Որ թէ չաքար տան ինձ, զահր *է ու լեղի (3, տող 20)*

* Ջանգին *– թուրք.* زنگين *(zangin) – «թանկարժեք, հարուստ»:*

Եբեր զանգին *արմաղան (1, տող 70)*

* Ջար *– պարսկ.* زار *(zār) – «ողբ, կոծ»:*

Հաճախ օգտագործվում է զար ու ֆիղան *«ողբ ու կոծ» կապակցության մեջ: Գրիգորիս Աղթամարցին ունի՝ «կանչէր* զար ու ֆիղան *ի մէջ գիշերին» (25, տող 4): Տե՛ս և* զարի*:*

Ջար *ու ֆիղան կանչեմ յալամս հաւասար (3, տող 26)*

* Ջարի *– պարսկ.* زارى *(zāri) – «ողբ, հեծություն»:*

Կազմված է զար *արմատից և* ى *(i)՝ անորոշ դերբայի կրճատված լծորդից:* Ջարի ու զար *կապակցությունը իմաստի ուժեղացում է արտահայտում:*

Որ վարդն ի քո սիրոյդ զարի ու զար *է (3, տող 24)*

Ջեն *– պարսկ.* زيان *(ziān) – «վնաս»:*

Եղիշեի մոտ վկայված կա զեան*: Միջին հայերենում սրանից կազմվել են* զենարար զենակար *«վնասակար»,* զէնիլ (զենիլ) *«վնասվել»,* վզեան *«վնաս, տուգանք» (տե՛ս Արմատ. բառ., հ. Բ, էջ 927):*

Ի հոգս աշխարհիս դատիս, չահ չունիս քան զենն *աւելի (6, տող 28)*

Ջենիլ *– «վնասվել»: Տե՛ս* զեն*:*

Շատ մանուկ դուսայ կանէ, ի չահին տեղն կու զենի *(13, տող 14)*

Ջինահար *(զենահար, զենեհար, զենէհար, զէնէհար, զինայհար, զինեհար, զինէհար, զինիհար) – պարսկ.* زنهار -زينهار *(zenhār, zinhār) – «1. սկզբունք, հավատ, 2. պաշտպանություն, փրկություն, ապաստան» նաև 3. «գործածվում է իբր ողոքական բացագանչություն հետին դարերի տաղաչափության մեջ. «ողորմի՛ր, խնայի՛ր ինձ. քեզ եմ ապավինում» նշանակությամբ» (Արմատ. բառ., հ. Բ, էջ 947):*

1. Դու ոչ մուրվաթ ունիս և ոչ զինահար *(3, տող 28)*

2. Հազար զինահար*, եղբայրք, զինահար, անհոգ մի կենայք (7, տող 13)*

Հայր զինահար*, հասիր մատաթ, հոգիս քակտաւ (11, տող 47)*

Ջինաճար *դու օգնական լեր զարիպին (14, տող 86)*

3. Ջինաճար, զինաճար, *անդ ես գնալու (8, տող 12)*

Ջինաճար, զինաճար, *որ չես մնալու (8, տող 56)*

Ողորմելի եմ զինաճար, *զիս թափեցէք (11, տող 38)*

Ջինաճար, *զիս մի խոցէր հրեղէն սրով (11, տող 52)*

Ջինաճար *ինձ պատարագ դրէք պաշար (11, տող 60)*

Ջինաճար *մեր աննչեցեալքն ի քեզ յանձին (11, տող 82)*

Ջինաճար *հետ զարիպին զրուցէ անուշ (14, տող 83)*

Ջինաճար *տամ քեզ հրեշտակ վասն աստուծոյ (18, տող 10)*

Ջնտան *(գնդան) – պարսկ. زندان (zendān) – «բանտ, գնդան»:*

Արմատ. բառ. ունի զնդան*:*

Յետոյ դէմ անտէր թողին ու մտան ի հող 'ւ ի զնտան *(6, տող 4)*

Հոգիտ բաժանի ի քէն ու մնայ մարմինդ ի զնտան *(6, տող 8)*

Բայց յետոյ մտանես ի հող 'ւ ի զնտան *(9, տող 4)*

Այսօր մեռեալ և մտանեն ի նեղ զնտան *(11, տող 28)*

Ոչ նեղ զնտան *և գերեզման մտանելոյ (11, տող 42)*

Դառն ու լեղի, լի տրտմութեամբ ի նեղ զնտան *(14, տող 6)*

* է *– պարսկ. ای – «էյ, ով»:*

Քարամ արա, քարամ, է *ահլի նազար (3, տող 32)*

Վարդն ի բլբուլն ասաց. է *լութֆ ու քարամ (3, տող 61)*

է *շահ սարւի ըռաւան, նազուք ու չիրին (3, տող 55)*

Ըռայիս *– տե՛ս* ռայիս*:*

Ըռաւան *– տե՛ս* ռաւան*:*

Թաճ *(դաճ) – պարսկ.-արաբ.-պարսկ. تاج (tāj) – «թագ»:*

Արմատ. բառ. ունի թագ *բառի տակ. սա իրանական taγ ձևից է (Հ. Բ, էջ 1072): Թաճ միջին հայերենում փոխ է առնվել պարսկ.-արաբ. tāj ձևից:*

Թաճի սարվար *(դաճի սալվար, սէլվեր) – պարսկ. تاجی سروار (tāj-i sarvar) – «սիրելի, թանկագին, գլխավոր հրամանատար, արժանապատիվ». կազմված է* թաջ(ի) *և* սարվար *«գլխավոր, հրամանատար, վեհապետ» պարսկ. բառերից՝ էզաֆեթի հավելումով. փոխաբերական առումով՝ «գլխի տեր, տեր ու տնօրեն»:*

Այս արտահայտությունը մեր օգտագործած պարսկերեն բառարաններում չի հաղորդված. կա դրա համազորը՝ թաջի սար *تاج سر (tāj-i sar):*

Սար(լ)վար առանձին կա Գրիգորիս Աղթամարցու մոտ. «Որ ամէն ծաղկանց *սալվար* ու սուլթան (25, տող 7):

Ահա ես քեզ ֆիղա, իմ թանի սարվար *(3, տող 31)*

Թատպիր – *արաբ.-պարսկ.* تدبیر *(tadbir)* – *«միջոց, հնարք, խոհեմություն»:*

Մեր բառարաններում հաղորդված է այլևայլ տառադարձումներով՝ թեդպիր, թեդբիր, թըտպիր *ևն:*

Պարտ է քեզ թատպիր *առնել ու գնել գկամքդ ի գնալ (7, տող 18)*

Երթ արա քեզ չուտով թատպիր *գնալու (8, տող 10)*

Պարծենաս ու պահ մի թատպիր *դու չունիս (8, տող 51)*

Ռատ թատպիր *քեզ արա անտէն գնալու (8, տող 55)*

Զինչ թատպիր *ունէի, կիսկատար մնաց (12, տող 4)*

Իսկի աղօթք չարի, ոչ հոգոյս թատպիր *(12, տող 15)*

Թատպիր *կու անէին, որ դնէին նշան (12, տող 35)*

* Թարլալա *(թառլալա)* – *?*

Եւ հետ կանչեն *զթարլալան* (1, տող 79)

Թէզ – *պարսկ.-թուրք,* تیز *(tiz – tez)* – *«չուտ, արագ, սուր»:*

Որ գթեզ խիստ ուշ գտայ ու *թէզ* կոռուսի (3, տող 16)

* Լատիֆ *(լաթիւ)* – *արաբ.-պարսկ.* لطیف *(latif)* – *«քնքուշ, վայելուչ, փափուկ»:*

Լատիֆ շրթանց շարժիլդ հանցեղ շիրին է (3, տող 51)

Դու բահիր ես ու նիգար, *լատիֆ* ու նարին (3, տող 54)

* Լութֆ *(լութիվ)* – *արաբ.-պարսկ.* لطف *(lotf)* – *«բարեսիրտ, սիրալիր, ազնիվ»:*

Վարդն ի բլբուլն ասաց. է *լութֆ* ու բարամ (3, տող 61)

Թէպէտ տեսայ ամէն մարդոյ *լութֆ* ու բարամ (14, տող 79)

Խան – *թուրք.* خان *(xān)* – *«իշխան, տեր, մեծավոր»:*

Արմատ բառ ունի ղան, *Բացատր. բառ.՝* խան*:*

Ո՞ւր են թագատրէ, իշխանիմ, պարոնայք և սուլթան ու *խան* (6, տող 2)

* Խապար *(խաբար)* – *արաբ.-պարսկ.* خبر *(xabar)* – *«լուր, տեղեկություն»:*

Բացատր. բառ. ունի խաբար*՝ որպես բարբառային բառ:*

Ես այս աւուրս իսկի *խապար* չունէի (12, տող 12)

Այս յետին գիրս ու *խապարս*, որ չեմ գալու (15, տող 5)

Խաֆիլ – *տես* ղաֆիլ*:*

* Խընջեր *(խընճեր) – արաբ.-պարսկ.* خنجر *(xanjar) – «դաշույն».* Խընջեր էնել *(անել) «դաշունահարել»:*

Բացատր. բառ. ունի խանչալ, խանչար՝ *որպես բարբառային բառ: Գրիգորիս Աղթամարցու մոտ* խանչար (խանջար). *«Թարթափդ է* խանչար, *ինքըն պողպատ գուտ» (22, տող 41)*

Քանի սիասաթով իննի *խընջեր էնես* (3, տող 12)

Կուման *(գուման, կիւման, կիւմէն, կոման, կումէն) – պարսկ.* گمان *(gomān-gamān) – «կարծիք, կասկած, տարակույս»:*

Արմատ. բառ. ունի գուման*:*

Ինճ ումէտ կայր ու կուման *վանց քո գալուտ (15, տող 1)*

* Կուվանտա *(կուվադա) – հավանաբար պարսկ.* گوینده *(guyande) – «երգիչ, ասացող, խոսող»:*

Միջնադարյան մտրուպները Իրանում նույնպես գույանդե *են կոչվել:*

Գրիգորիս Աղթամարցին «Դու դրախտ եղեմայ» ստեղծագործության մեջ ունի հետևյալ պարսկերեն տողը. «Բըլբոլ գուանդա *ամադ բա բահար» («երգիչ սոխակը եկավ գարնան հետ»):* Գուանդա *Աղթամարցու այս տաղի տարընթերցվածներում ունի* կավանտայ, կուվանտա, գաւանդայ *ձևերը (տե՛ս Բ. Զուգասզյան, Հայ-իրանական գրական առնչություններ, էջ 164): Կարելի է ենթադրել, որ Նաղաշի բնագրում բառը* գու(յ)անդա=կուվ(յ)անտա *եղած լինի:*

Զայնեցէք զկուվանտան *(1, տող 77)*

* Հալ *– արաբ.-պարսկ.* حال *(hāl) – «վիճակ, դրություն, տրամադրություն»:*

Բացատր. բառ. ունի որպես բարբառային բառ:

Աւաղ գիտե՞ն իմ սիրելիքն ի՛նչ հալի *կամ (14, տող 50)*

Զղարիպին հալըն *գիտեմ, որ վայ կուտամ (14, տող 78)*

* Հալալ *– արաբ.-պարսկ.* حلال *(halāl) – «օրինավոր, անխարդախ, ընդունելի»:*

Բացատր. բառ. ունի որպես բարբառային բառ:

Զուգակից հալալ *եղան (1, տող 26)*

Որ զիմ արիւնս քեզ հալալ *կու դնես (3, տող 2)*

Այս իմ սիրուն եղբարք, հալալ *արէք ինճ (12, տող 23)*

Ինճի հալալ արէք, ով իմ սիրելիք (12, տող 29)

Եւ զաչխատանքն ճեր ինճ հալալ արէք (12, տող 51)

* Հասրաթ *(խասրաթ, հասրէթ) – արաբ.-պարսկ.* حسرت *(hasrat) – «կարոտ, տրտմություն, փափագ, տենչանք»:*

Բացատր. բառ. ունի որպես բարբառային բառ:

Հասրաթ *կայ իմ սրտիս, որ լինիմ առ քեզ (3, տող 7)*

Իմ սիրտս հասարաթով *հետ քեզ կու դողար (3, տող 27)*

Այլ հասարաթ *չի մնա, երբ տեսանէ զքեզ (3, ող 40)*

Վարդն ի բլբուլն ասաց. Հասարաթով *սրտին (3, տող 45)*

Որ ալամս բոլոր դէմ քեզ հասարաթ *է (3, տող 70)*

Մալի հասարաթ *մի լինիր, մեծուխիւն քեզ չի պիտի (6, տող 23)*

Զի չատ հասարաթ *ունիմ ու չատ բան հոգալոյ (11, տող 44)*

Հազար հասարաթ *կայր իմ սրտիս՝ մէկ մի չեղաւ (11, տող 48)*

Զինչ հասարաթ *ունէի, մնաց իմ սրտիս (12, տող 8)*

Զինչ սիրտն որ հասարաթ *ունի, ամենէն մահրում կու լինի (13, տող 16)*

* Հատր – *արաբ.-պարսկ.* حاضر *(hāzer) – «պատրաստ, ներկա»:*

Բացատր. բառ. որպես բարբառային բառ ունի հազըր*:*

Զաչքդ բաց ու հատր *պաչ (էջ 191)*

* Հարամ – *արաբ.-պարսկ.* حرام *(harām) – «պիղծ, անմաքուր, ապօրինի, ապականված, արգելված»: Փոխաբերական նաև՝ «դառն ու լեղի, տառապանք»:*

Հարամ *ճևիցդ ունենք* հարամի *«ավազակ» (Արմատ. բառ., հ. Դ, էջ 175):*

Բացատրական բառ. ունի որպես բարբառային բառ:

Որ առանց քո տեսուդ իմ կեանքն է հարամ *(3, տող 62)*

Նաղաչն ասաց, թե ղարիպին կեանքն է հարամ *(14, տող 77):*

* Հուքմ – *արաբ.-պարսկ.* حكم *(hokm) – «հրաման, վճիռ»:*

Հանցեղ հուքմ *ու հրաման քեզ ո՞վ տվեալ է (3, տող 23)*

* Ղատր – *արաբ.- պարսկ.* قدر *qadr – «արժեք, արժանիք, կարողութիւն, հարգ»:*

Բացատր, բառ, ունի ղադր՝ *որպես բարբառային բառ:*

Զայն ծաղիկն աստուածծ երետ, նա ոմանք զղատըրն *չիմացին (2, տող 14)*

* Ղարիպ – *արաբ.-պարսկ.* غريب *(qarib) – «պանդուխտ»:*

Ղաֆիլ *(խաֆիլ) – արաբ.-պարսկ.* غافل *(qāfel) – «անխոհեմ, անտեղյակ, անհոգ, անփութ»:*

Ղաֆիլ գալ *«հանկարծ, առանց լուր տալու գալ»:*

Գերի Ադամայ որդիք, յօթևանս ղաֆիլ *մի լինիք (7, տող 9)*

Նա լեզուս կապեցաւ ի բերանս ղաֆիլ *(12, տող 16)*

Մահն ղաֆիլ *կու գայ, դուք հանց իմացիք (12, տող 32)*

* Ղուսայ – *արաբ.-պարսկ.* غصه *(qosse) – «վիշտ, մտատանջութիւն, խեղդում, հեղձամաշուկ»:*

Ղարի՛պ, ղուսայ *մի՛ աներ,* ղուսայէն *մարդն չի շահի (13, տող 13)*

Շատ մանուկ ղուսայ *կանէ, ի շահին տեղըն կու գենի (13, տող 14)*

Ղուսան *չատոց ցաւ բերէ, ի ցաւէն մարդն մեռանի (13, տող 15)*

* Ճոհար – *տե՛ս* ջուհար:

* Մաթ – *արաբ.-պարսկ.* ماتե *(māt) – «զարմացած, չվարած, ապշած, չփոթված, մեռած, պարտված, նվաճված»:*

Արմատ. բառ. քաղում է Երեմիայի «Բառգրքից», որտեղ (էջ 287) «հրամայական կամ պատշաճ» իմաստով է: Աճառյանը այստեղ բառի ծագումը անստույգ է համարել:

Բացատր. բառ. տալիս է վերոհիշյալ բոլոր առումները:

Շատ իմաստուն, խելացի, որ կու մնան մաթ *(12, տող 44)*

Մալ – *արաբ.-պարսկ.* مالե *(māl) – «ապրանք, ինչք, հարստություն»:*

Մալի *հասրաթ մի լինիր, մեծութիւն քեզ չի պիտի (6, տող 23)*

Որչափ չատ մեծութիւն ու մալ *ժողովես (8, տող 75):*

* Մահրում – *արաբ.-պարսկ.* محرومե *(mahrum) – «զրկված, հուսախաբ, արգելված»:*

Զինչ սիրտն որ հասրաթ ունի, ամենէն մահրում *կու լինի (13, տող 16)*

Մանշուր *(մաշուր) – արաբ.-պարսկ.* منشورե *(manšur) – «հռչակված, տարածված»:*

Արմատ. բառ. ունի «հրովարտակ» նշանակությամբ, իսկ Բացատր. բառ.՝ «հռչակված»:

Դու մանշուր *յալամիս, ես քեզ խնայեմ (3, տող 66)*

* Մատաթ – *արաբ.-պարսկ.* مددե *(madad) – «օգնություն, օժանդակություն»:*

Հայր, զինահար, հասիր մատաթ, *հոգիս քակտաւ (11, տող 47)*

* Մէճլիս *(մաճլիս, մաջլիս, մեճլիս, մեջլիս, մըճլիս) – արաբ.-պարսկ.* مجلسե *(majles) – «հավաքություն, ուրախառիթ հավաք, ժողով»:*

Բացատր. բառ. ունի մէջլիս:

Յորժամ ի մէճլիս *նստի, անկասկած սրտիկն արուն (13, տող 19)*

Մոլֆ – *արաբ.-պարսկ.* ملکե *(molk) – «ունեցվածք, հարստություն, սեփականություն»:*

Ես գիտէի զաչխարհս ինձ մոլֆ *էր տըւած (12, տող 1)*

Մուշկ *(մուշք) – պարսկ.* مشکե *(mešk, mošk) – «այծյամի պորտից ստացվող բուրումնավետ նյութ»:*

Հաճախ գործածվում է մուշկ ու ամբար *կապակցության մեջ: Տե՛ս* ամբար:

Գրիգորիս Աղթամարցու տաղերի օտար բառերի բառարանում բառի առաջ թյուրիմացաբար աստղանիշ ենք դրել: Ուղղելի:

Որպէս մուկ *ու ամբար անուշահոտ ես (3, տող 36)*

* Մուրադ *(մուրատ) – արաբ.-պարսկ.* مراد *(morād) – «ցանկություն, փափագ, մուրազ»:*

Բացատր. բառ, ունի մուրատ*:*

Յայնժամ հասանէ վարդն իւր մուրադին *(3, տող 47)*

Ով հասաւ մուրատին*, որ դու տի հասնիս (8, տող 52)*

Քեզ այլ օգնական լինի, որ հասնիս սրտիդ մուրատի *(13, տող 8)*

Զամէն ղարիպ բարով հասո իւր մուրատին *(14, տող 87)*

Մուրատ *– տե՛ս* մուրադ*:*

* Մուրվաթ *(մըրւաթ, մուրֆաղ) – արաբ.-պարսկ.* مروت *(morovvat) – «բարեսրտություն, կարեկցություն, խղճմտանք»:*

Դու ոչ մուրվաթ *ունիս և ոչ զինահար (3, տող 28)*

Նադար *(նատար) – արաբ.-պարսկ.* نظر *(nazar) – «հայացք, ակնարկ, դիտում, տեսարան»:*

Աճի նադար *– «ուշիմ, խոհեմ, չրջահայաց». տե՛ս* աճի*:*

Արմատ. բառ. ունի նատար*:*

Լեզվաբան Պ. Բեդիրյանը Գրիգորիս Աղթամարցու բառարանի կապակցությամբ մեր ուշադրությունը հրավիրեց, որ նադար առնել *ունի նաև «աչքով տալ» նշանակությունը: Հիրավի Աղթամարցու հետևյալ տողում այդ իմաստով է օգտագործված. «Յով որ դու նայիս* առնես նատար*» (22, տող 27): Նաղաշի 3-րդ տաղում (տող 39) նույնպես այս վերջին առումով է:*

Նախիջևանի և Վանի բարբառներում նազար *«չար աչք» առումով է գործածվում. (տե՛ս Աճառյան, Թուրք. փոխ. բառեր, էջ 253):*

Ապա քարամ արա, աճի նադար *ես (3, տող 11)*

Քարամ արա, քարամ, է աճի նադար *(3, տող 32)*

Ում քաղցր նայես և նադար առնես *(3, տող 39)*

Նազուկ *(նազիք) – պարսկ.* نازک *(nāzok) – «նուրբ, բարակ, վայելուչ»:*

Արմատ. բառ. ունի նազ*, Բացատր. բառ.՝* նազուկ*:*

Է շահ սարի ըռաւան, նազուկ *ու չիրին (3, տող 55)*

Նաղաշ *– արաբ.-պարսկ.* نقاش *(naqāš) – «նկարիչ, ծաղկող, մանրանկարիչ»:*

Նարին *– պարսկ.* نارین *(nārin) – «վայելուչ, զարդարված, պայծառ, թարմ»:*

Նարին *մեկ անգամ գործածված կա Գրիգոր Մագիստրոսի «Թղթերում» էջ 135. «ներ-ճուն նպաստ նաջան նեռին* նարին *կիզողական»: Ճառայանը բառը անստուգ է համարում.* կիզողական *ածականը նրան ենթադրել է տվել, «որ նարին՝ արաբ.* نار *nār «կրակ» բառի սեռականն է (Արմատ. բառ., հ. ե, էջ 53): Արդյո՞ք սա Նաղաշի գործածած* նարին*-ն է:*

Դու բահր ես ու նիգար, լատիֆ ու նարին *(3, տող 54)*

* Նիգար *(նիեկար, նիկար) – պարսկ.* نگار *(negār) – «պատկեր, կուռք, սիրուհի, պաշտելի էակ»:*

*Հնում բառս մեկ անգամ փոխ է առնվել պահլավերենից * nikar ճևով (Արմատ. բառ., հ. ե, էջ 137-138): Միջին հայերենում նույնը փոխ է առնվել արդեն պարսկերենից՝* նիգար (նիկար) *տառադարձությամբ:*

Դու բահր ես ու նիգար*, լատիֆ ու նարին (3, տող 54)*

Շահ *– պարսկ.* شاه *(šah) – «արքա, թագավոր»:*

Շահ սարի ըռաւան *– պարսկ.* شاه سرو روان *(šah sarv-i ravan) – բառացի՝ «մեղմօրոր արքայանոճի». փոխաբերաբար ակնարկվում է գեղեցկուհու բարձր ու սլացիկ հասակը: Մեր օգտագործած պարսկ. բառարաններում վերոհիշյալ արտահայտությունը չկա: Գեորգ Դպիրը ունի* սէրվիրէվան *«նոճի գեղեցկատեսիլ և կչռակ... Որ և նմանութեամբ ինչ ասի զհասակէ գեղեցկաց» (էջ 489): Տե՛ս նաև* սարւ և ռաւան*:*

Էշահ սարւի ըռաւան*, նազուք ու չիրին (2, տող 55)*

* Շայլայ *(չալլա) – արաբ.* شاالله *(šaāllah) – «աստուծով, աստված կամենա»:*

Շայլայ *ի միջաց խնդան (1, տող 51)*

Շարպաթ *– արաբ.-պարսկ.* شربت *(šarbat) – «օշարակ»*

Արմատ. բառ. ունի շարբաթ*:*

Շարպաթ *լից ու տուր կըթղան (1, տող 17)*

* Շիրին *– պարսկ.* شیرین *(širin) – «քաղցր, անուշ, գեղեցկատես»:*

Բացատր. բառ. ունի որպես բարբառային բառ:

Քան զտապարզի չաքար, քաղցր ու շիրին *ես (3, տող 35)*

Լատիֆ չրթանց չարժիլդ հանցեղ շիրին *է (3, տող 51)*

Էշահ սարւի ըռաւան, նազուք ու շիրին *(3, տող 55)*

Ումէտ *(ումէկ) – պարսկ.* امید *(omid) – «հույս»:*

Արմատ բառ. ունի ումեկ*, Բացատր. բառ.* ումուտ՝ *որպես բարբառային բառ:*

Նայ իմ հոգոյս հոգին, ումէտն *դու ես (3, տող 10)*

Ինձ ումէտ *կայր ու կուման վանց քո գալուդ (15, տող 1)*

* Չաստա *(չեչտա) – պարսկ.* چشت *(çaste) – «երգ, մեղեդի»:*

Ջեշտա *տարբներերցումից կարելի է ենթադրել, որ բառս և չաշթայ կամ շաշտա «վեց-լարյա երաժշտական գործիք» լինի, ինչպես Կոստանդին Երզնկացին ունի. «Մըտրուպ դու սազէ զչաշթայն (Թ, տող 37):*

Լարեն զտասլակն ու զչաստաև (1, տող 78)

* Պաշ – *պարսկ. باش (baš) – «եղի՛ր, թող լինի, մնա»:*

Զաչքդ բաց ու հատր պաշ (ԷՂ 191)

* Պըլաշ – *արաբ.-թուրք. بلاش (ɨشلاب) (balāš) – «ձրի, անվարձ, առանց դրամի»:*

Քանի ուտես գաւըրըն պըլաշ (ԷՂ 191)

Ջուհար *(ճոհար, ճուհար, ճօհէր, ջօհար) – պարսկ.-արաբ.-պարսկ. جوهر (javhar, johar) – «գոհար»:*

Արաբերենը բառս փոխ է առել իրանականից g>j տառադարձումով. հետագայում արաբ. ձևը անցել է նաև պարսկերենին՝ առանց դուրս մղելու gohar ձևը:

Արմատ. բառ, ունի ջօհար, *Բացատր, բառ,՝* ջուհար*:*

Զկա քեզ օրինակ ջուհար *մեծագին (3, տող 42)*

Որ թէ խօսի մի քանի անգին ճոհար *(14, տող 23)*

Ռայիս – *արաբ.-պարսկ. رئيس (rais) – «առաջնորդ, հրամանատար, գլխավոր, պետ»:*

Զպզտիկ ըռայիսն *ամենայն ընդանեաւք գերի բերին (ԷՂ 190)*

* Ռաւան *(ըռօան, րեվան, րովան) – պարսկ. روان (ravān) – «սահուն, հոսուն, ընթացող, գնացող»: Տե՛ս* շահ և շահ սարփ ըռաւան*:*

Է շահ սարւի ըռաւան, *նազուք ու չիրին (3, տող 55)*

* Սատաղայ – *արաբ.-պարսկ. صادقه (sadāqe) – «բառացի՝ «անկեղծություն, բարեկամություն, հավատարմություն», փոխաբերաբար՝ «մատաղ»: Ինչպես վկայում է բանասեր Օ. Եգանյանը Ղարադաղի բարբառում մինչև այժմ էլ օգտագործում են* սատաղայ լինել՝ *«մատաղ լինել» նշանակությամբ: Այս իմաստով օգտագործված է Նաղաշի մոտ:*

Բացատր. բառ. ունի սաղաղայ *«ողորմություն, չնորհ»:*

Սատաղայ *ես քեզ երթամ*
Ուր կայիր դու այսչափ ժամ (1, տող 61-62)

Սարվար – *տե՛ս* Թաճի սարվար*:*

* Սաւ *(սալվ, սելվ) – պարսկ. سرو (sarv) – «նոճի, կիպարիս»: Տե՛ս* շահ և շահ սարփ ըռաւան*:*

Գրիգորիս Աղթամարցին ունի սալվ *ձևով (22, տող 50)*

Է շահ սարփ *ըռաւան, նագուք ու չիրին (3, տող 55)*

Սիասաթ *(սիյասաթ, սիասէթ, սիասիդ) – արաբ.-պարսկ.* سیاست *(siyāsat) – «իշխանություն, քաղաքականություն, դիվանագիտություն»:*

Գրիգորիս Աղթամարցու տաղերի օտար բառերի բառարանում այս բառի առաջ թյուրիմացաբար աստղանիշ ենք դրել: Ուղղելի:

Քանի սիասաթով ինձի խընջեր էնես (3, տող 12)

Վարդն ի բլբուլն ասաց. ի՞նչ սիասաթ *է (3, տող 69)*

Սուլթան *– արաբ.-պարսկ.-թուրք.* سلطان *(soltān) – «սուլթան, երկրի իշխան, թագավոր»:*

Արմատ. բառ. ունի սուլտան*:*

Ուր են թագաւորք, իշխանք, պարոնայք և սուլթան *ու խան (6, տող 2)*

* Վաֆայ *(բաֆայ, պաֆայ, պեֆայ, պէֆայ, պոֆայ, վէֆայ) – արաբ.-պարսկ.* وفا *(vafā) – «հավատարմություն, անկեղծություն, վստահություն»:*

Աչխարհս գէմ վաֆայ *չունի, ոչ արեր է մարդոյ բարի (6, տող 9)*

Տապարզա *(տըպազա) – պարսկ.* تبرزا *(tabarza) – «գլուխ չաքար, բյուրեղ չաքար՝ սպիտակ, շատ քաղցր»:*

Քան զտապարզի *չաքար քաղցր ու չիրին ես (3, տող 35)*

Տապլակ *– արաբ-պարսկ.* طبلخ *(tablak) – «փոքրիկ թմբուկ»:*

Կազմված է արաբ. طبل *(tabl) «թմբուկ» բառից՝ պարսկերենի ak փոքրացուցիչ մասնիկի հավելումով:*

Արմատ. բառ. ունի տապլ*, Բացատր. բառ.՝ բարբառային* տապլակ՝ *«տափակ և դիբուկ» իմաստով, օր.* տապլակ երես*:*

Լարեն զտապլակն *ու զչաստան (1, տող 78)*

Տաֆտար *(դաւդար, դաւթար, դէֆտար, դէթար, տաֆթար, տաֆտար) – արաբ. պարսկ.* دفتر *(daftar) – «տետրակ, տոմար»:*

Արմատ. բառ ունի տաւթար*, Բացատր.բառ.՝* դաւթար*:*

Հին տաֆտարն *մեղաց դու է՞ր կու նորես (8, տող 67)*

Փոշիման *(փոչեման, փոչոման) – պարսկ.* پشیمان *(paiman) – «փոշիման, զղջացած, ապաշաված, տխուր»:*

Եվ *լծորդության հավելումով՝* փոշիմանել *«զղջալ»:*

Նոքայ փոշիման *գնացին, և դուք այլ կերթայք, մի՛ խաբիք (7, տող 11)*

Երբ հետոյ փոշիման *տրտում տի լինիս (8, տող 14)*

Երբ հետոյ փոշիման *ի լաց տի լինիս (8, տող 22)*

Եղկելի՛, օր մահուն դու փոշիմանիս *(9, տող 10)*

* Քարամ *(քէրամ, քէրէմ) – արաբ.-պարսկ. كرم (karam) – «բարեսրտություն, առատաձեռնություն, բարերարություն, բարեսիրտ, առատաձեռն, բարի»:*

Ապա քարամ *արա, ահլի նադար ես (3, տող 11)*

Քարամ *արա,* քարամ, *է ահլի նադար (3, տող 32)*

Վարդն ի բլբուլն ասաց. Է լութֆ ու քարամ *(3, տող 61)*

Թէպէտ տեսայ ամէն մարդոյ լութֆ ու քարամ *(14, տող 79)*

* Ֆիդա *(ֆետէ, ֆիտա, ֆիտէ, ֆրդէ) – արաբ.-պարսկ. فدا (fedā) – «մատաղ, զոհ, նվիրում»:*

Ահա ես քեզ ֆիդա, *իմ թաճի սարվար (3, տող 31)*

Բլբուլն ի վարդն ասաց. Հոդիս քեզ ֆըդէ *(3, տող 49)*

Ֆըդէ – *տե՛ս* ֆիդա*:*

Ֆիղան *(ֆեղան, ֆղան, ֆրղան) – պարսկ. فغان (feqān – foqān) – «ողբ, կոծ, աղաղակ»: Տե՛ս և* զար*:*

Զար ու ֆիղան *կանչեմ յալամս հաւասար (3, տող 26)*

Պարսկախառն տողերի թարգմանություններ

Դու ոչ մուրվաթ ունիս և ոչ զինահար (3, տող 28)
(Դու ոչ խղճմտանք ունես և ոչ ճավատ)

Քարամ արա, քարամ, է ահլի նադար (3, տող 32)
(Բարություն արա, բարություն, ո՛վ խոհեմ մարդ)

Դու բահր ես ու նիգար, լաւիֆ ու նարին (3, տող 54)
(Դու լույս ես ու պատկեր, ճմոլչ և վայելուչ)

Է շահ սարւի ըռաւան, նազում ու շիրին (3, տող 55)
(Ով մեղմօրոր արհայանոճի, ճմոլչ ու գեղեցկատես)

Վարդն ի բլբուլն ասաց. Է՛ լութֆ ու քարամ (3, տող 61)
(Վարդն բլբուլին ասաց. Ո՛վ ազնիվ ու բարեսիրտ)

ԳՐԻԳՈՐԻՍ ԱՂԹԱՄԱՐՑՈՒ ՏԱՂԵՐԻ ՕՏԱՐ ԲԱՌԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ[1]

Բառարանը կազմելու համար հիմնականում օգտագործվել են՝

1. Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Ա և Բ, Վենետիկ, 1836-1837:

2. Գէորգ Դպիր, Բառարան պարսկերէն ըստ կարգի հայկական այբուբենից..., Կոստանդնուպոլիս, 1826:

3. Ղ. Ալիշան, Հայբուսակ կամ հայկական բուսաբառութիւն, Վենետիկ, 1895:

4. Գ. Կիրակոսեան, Բառարան պարսկերէն-հայերէն, Թեհրան, 1933:

5. Պ. Զ. Կարապետեան, Մեծ բառարան օսմաներէնէ հայերէն, Կ. Պոլիս, 1912:

6. Հր. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, հ. Ա-Է, Երևան, 1927-1935:

7. Ստ. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, հ. Ա-Դ, Երևան, 1944-1945:

8. Б. В. Миллер, Персидско-русский словарь, Москва, 1953.

9. Х. К. Баранов, Арабско-русский словарь, Москва 1957.

10. فرنودسار یا فرهنگ نفیسی *(Հանրագիտարան կամ Նաֆիսու բառարան, հ. 1-5, Թեհրան, 1317-1334 (1938-1955):*

11. Ն. Ակինյան, Գրիգորիս Ա կաթողիկոս Աղթամարի, Վիեննա, 1958:

Ն. Ակինյանը իր այս աշխատությանը կցել է Աղթամարցու ստեղծագործություններում օգտագործված օտար ու հայերեն հազվագյուտ բառերի մի ցանկ, որտեղ հիմնականում ճիշտ են նշված բառերի փոխառյալ լեզուն ու իմաստները. Ն. Ակինյանի առանձին վրիպումները հիշվում են ստորև՝ համապատասխան բառի տակ: Պետք է նշել, որ Ակինյանի մոտ Աղթամարցու բառապաշարի ոչ բոլոր օտար բառերն են հիշատակված:

Մեր բառացանկը կազմված է հետևյալ սկզբունքով. նախ տրվում է օտար բառի այն ձևը, որը պահպանված է բնագրի հիմքում. սա չնչին բացառությամբ համապատասխանում է Աղթամարցու տաղերի հնագույն օրինակի (a=ձեռ. № 8968, ժամանակ 1556 թ. վայր՝ Կ. Պոլիս) տառադարձությանը: Այստեղ հիմնականում արաբերեն-պարսկերեն բառերի ձայնեղները խլացված են, այլ կերպ՝ հարմարեցված են օսմանյան արտասանությանը: Ձայնավորների տառադարձման մեջ կուռ օրինաչափություններ չեն նկատվում: Փակագծերում տրվում են բառի ալևայլ տառադարձությունները՝ ըստ տաղերի տարբերթերցումների: Այնուհետև նշվում է փոխառյալ լեզուն: Բառերի մեծ մասը արաբերեն է, սակայն փոխառված է հայերենում պարսկերենի միջնորդությամբ, ուստի և նշվում է արաբ.-պարս.*: Հայերեն տառադարձությունը մեծ մասամբ համապատասխանում է բառի պարսկերեն արտասանությանը: Բառի արաբատառ պատկերի հետ միաժամանակ տրվում է լատիներեն տառադարձումը, որը չափազանց կդյուրացնի մասնագետի աշխատանքը համեմատությունների ժամանակ: Վերջում վկայակոչված են Աղթամարցու տաղերի այն տողերը, որտեղ օգտագործված է տվյալ բառը, իսկ փակագծերում նշված է տաղի համարը՝ ըստ սույն հրատարակության, և տողը:*

---

[1] Ըստ Մ. Ավդալբեգյանի հրատ., Երևան, 1963:

X նշանով բերված բառերը բացակայում են Հր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարան»-ում:

Աթլաս – *արաբ.-պարսկ.* اطلس *(atlas) – «սնդուս, կերպաս»:*

Արմատ. բառ ունի ատլաս*:*

Վարդի թըփի նման աթլաս *հագեր ես (10, տող 30)*

Ալէմ *(ալամ, ալէամ, յալամ) – հավանաբար արաբ.-պարսկ.* عالم *(alem) – «դիտուն, դիտնական, ուսյալ»:*

Հայբուսակ (էջ 348) բերում է ժողովրդական մի երգից՝ «Հարիւրալամն և հազրին ի միասին ցնծասցեն», որպես ծաղկի անուններ: Այս դեպքում պետք է ենթադրել, որ բառը հազարալամ *կամ* հազերալամ *է: Կապ ունի՞ արդյոք* հազրէվարդի *հետ:*

Հազերի ալէմ *բժիշկ ամենի (20ա, տող 9)*

Դու հազար ալէմ *բըժիշկ ամենի (26բ, տող 8)*

Դու հազրի ալէամ *բժիշկ ամենի (26գ, տող 18)*

Ամբէր – *տե՛ս* ամպար

Ամպար *(ամբէր, ամպէր, անբար) – արաբ.-պարսկ.* عنبر *(anbar) – «մածուցիկ բուրումնավետ նյութ, մոխրագույն, ձեռք է բերվում կաշալոտի (կաթնասուն կենդանի կետերի ցեղից) արտաթորանքներից՝ արևադարձային օվկիանոսներում ու ծովերում»:*

Զպիտի չփոթել ամպար *ծաղկի հետ:*

Շրթունքըդ է քո լար կլափըդ է ամպար *(22, տող 45)*

Դու մուշկ ու ամպար*, բուրումն ամենի (26ա, տող 25)*

ամբէր *(26բ, տող 49)*

ամպէր *(26գ, տող 29)*

Աշըղ *(աշըգ, աշըխ, աշուխ) – արաբ.-պարսկ.* عاشق *(ašeq) – «սիրահար».*

Որ վրայ վարդին աշըղ *եղէ (5, տող 28)*

Ապի հայաթ *(աբուհայաթ) պարսկ.* آب حیات *(ābe-hayat) «կենդանության ջուր, անմահական ջուր»:*

Կազմված է պարս. աբ (ապ) *«ջուր» և արաբ.* հայաթ *«կյանք» բառերից:*

Բերկրութեան բաժակ ու ապի հայաթ *(21, տող 41)*

Բաղչա – *տե՛ս* պաղչայ

Բասար *(պասար) – արաբ.-պարսկ.* بصر *(basar) «խելք, միտք, բանականություն, բառացի՝ աչք, տեսողություն»:*

Զունիմ խելք ու բասար *և ոչ իմաստութիւն (25, տող 102)*

Բըռֆայ – *տե՛ս* բրֆայ

Բրկայ – *տե՛ս* բրթայ

Բրթայ *(բրգայ, բրկայ, բռքայ, պուրքայ, պրքայ, պրքէ)* *արաբ.-պարսկ.* برکه *(berke)* *«լճակ, ավազան»:*

Արմատ. բառ. ունի պրթէ:

Պարիսպն նորոգի՛ ՚ւ ի մէջն բրթայ *(25, տող 76)*

Դու կանաչ բրոթայ *ի մէջ չուկային (26, տող 14, 26գ, տող 13)*

Դու կանաչ բրկայ *ի մէջ չուկային (26բ, տող 18)*

Պրթայ *եմ չիներ յայգոյս (27բ, տող 17-18, 27դ,տող 33-34)*

Յերկնից ցօղն՝ ի մէջ պրթոյս *(27բ, տող 17-18, 27դ,տող 33-34)*

Դրախտ – *պարսկ.* تخرد *(draxt)* – *«ծառ, պարտեզ»:*

Բառիս հնագույն փոխառությունը հին պարսկերենից կա Ս. Գր. «Ադամի պարտեզ, Եդեմ» նշանակությամբ (տե՛ս Արմատ. բառ., հ. Բ, էջ 621): Նոր փոխառությունը «ծառ» իմաստով կա միայն Աղթամարցու մոտ:

Նըռնենի դըրախտ *և սալվի չինար (22, տող 50)*

Եաղութ – *տե՛ս* յաղութ

Ջար *(զառ)* – *պարսկ.* زار *(zār)* – *«ողբ ու կոծ»:*

Հաճախ օգտագործվում է զար *ու* ֆիղան *«ողբ ու կոծ» կապակցության մեջ:*

Կանչէր զար *ու* ֆիղան *ի մէջ գիչերին (25, տող 4)*

Ջէնէհար *(զենահար, զենեհար, զենէհար, զինահար)* – *պարսկ* زینهار *(zinhār)* – *«պաշտպանություն, ապահովություն, փրկություն, ապաստան»:*

Ն. Ակինյանը թարգմանել է «ուխտ, դաչինք, անձնավորություն, որ ճիշտ չէ (էջ 132):

Գընամ ի վարդն ի զէնէհար *(24, տող 19)*

Ջրմպուլ – *տե՛ս* սիումպիլ

Ջրնճիլ *(զանջիլ, զանջիր, զէնճիլ, զէնջիլ, զընճիլ, զընջիլ)* – *պարսկ.-թուրք.* زنجیل *(zenjil)* – *«չղթա»:*

Թուրքերենը փոխառյալ է պարսկ. زنجیر *(zanjir-zenjir) բառից (տե՛ս Արմատ. բառ., հ. Բ, էջ 970):*

Արմատ բառ. ունի զնջիլ:

Դըրիր ըզգերիս զընճիլ *՚ւ ի զընտան (22, տող 60)*

Ջնտան *(զնդան)* – *պարսկ.* زندان *(zendān)* – *«բանտ, զնդան»:*

Արմատ. բառ. ունի զնդան:

Դըրիր զգերիս զընճիլ ՚ւ ի զնտան *(22, տող 60)*

Ջօհալ *(զոհալ, զուհալ) – արաբ.-պարսկ. زحل (zohal) – «Երևակ մոլորակը»:*

Արմատ. բառ. ունի զոհալ*:*

Ջօհալ *մուշթ(ա)արի(ն), աստղ առաւօտի(ն) (26, տող 33. 26ա, տող 43. 26բ, տող 33. 26գ, տող 53)*

Ջօհրայ *(զոհրայ, զօհրէ, զօրա) – արաբ.-պարսկ. زهره (zohre) – «Արուսյակ մոլորակը»:*

Արմատ. բառ. ունի զոհրայ*:*

Մուշթարի, զօհրայ *և շամս (17, տող 27)*

Ջօհրայ *մուշթարի ՚ւ արուսեակ պայծառ (22, տող 48)*

Ջօհրայ *լուսաբեր, ղամար ու լուսին (26, տող 29. 26ա, տող 44. 26բ, տող 34. 26գ, տող 54)*

Ղոահ – *տե՛ս* ոահ

Ղոանկ – *տե՛ս* ոանկ

Թաճ *(թաջ) – պարսկ.-արաբ.-պարսկ. تاج (tāj) – «թագ».* սար ու թաճ *կապակցության մեջ «տեր ու տնօրեն, գլխավոր» նշանակությամբ. տե՛ս* սար*:*

Ծաղկանցն ամէն եմ սար ու թաճ *(5, տող 71)*

Թառ *(թար, թէռ) – պարսկ. تر (tar) – «դալար, փափուկ, թարմ, թաց, խոնավ»:*

Դու պատուական աղուոր ու թառ *(5, տող 105)*

Գեղեցիկ բազայ, լատիֆ ու թառ *ես (21, տող 46)*

Թասալլու *(թասալայ, թասալի, թասալիայ, թէսալլու, թէսէլայ, թէսէլի, թէսէլլի, թէսէլեայ, թէսէլու) – արաբ.-պարսկ. تسلی (tasallā-tasalli) – «մխիթարանք».*

Մեզնէ քեզ թասալլու *է հազար տաստան (25, տող 35)*

Թիր *(դիր) – պարսկ. تیر (tir) – «նետ»:*

Ղազար Փարպեցու մոտ (էջ 117) գործածված է թիւրախ (թիրախ) *բառի մեջ «նետի նպատակ, նշանառության տեղ» իմաստով (Արմատ. բառ. հ. Բ, էջ 1236):*

Ունէրդ է քաման, թարթափդ է քո թիր *(21, տող 29)*

Թուրինճ – *տե՛ս* թուրինջ

Թուրինջ *(թուրինճ, թուրինչ, թուռինճ) – պարսկ. ترنج (toronj) – «նարնջի մի տեսակ»:*

Նարինջ ու թուրինջ*, տունկ պալասանի (21, տող 58)*

Նարինճ ու թուրինճ *և այլ գոյնս (27դ, տող 49)*

Լալ – *պարսկ. لال (lāl) – «թանկարժեք կարմիր քար, սուտակ, կարկեհան»:*

Արաբերենը բառս փոխ է առել հին պարսկերենից لعل *(la'l) տառադարձությամբ. արաբ. այս ձևը հետագայում անցել է նոր պարսկերենին:*

Ըռանկ վարդին որպէս զլալ *(5, տող 41)*

Զըմուռ և հալվէ ու լալ *և ճօհար (22, տող 47)*

լալ *ակն ու գոհար ես դու մեծագին (26, 26գ, տող 9)*

Յաղուէթ ու մարճան, լալ *Պատաչխանի (26ա, տող 37)*

լալ *ակն ու ջօհար ես դու մեծագին (26բ, տող 14)*

Եաղուէթ ու մարջան, լալ *Պատաչխանի (26գ, տող 42)*

Լատիֆ *(լաթիւ) – արաբ.-պարսկ.* لطيف *(latif) – «վայելուչ, քնքուշ, փափուկ»:*

Գեղեցիկ բազայ, լատիֆ *ու թառ ես (21, տող 46)*

Խամար – *տե՛ս* ղամար

Խան *(ղան) – թուրք.* خان *(xān) – «իշխան, տեր, մեծավոր»:*

Արմատ. բառ. ունի ղան*:*

Հանց սիասաթով իջնուս քան ըզխան *(22, տող 59)*

Խանչար *(խանջար) – արաբ.-պարսկ.* خنجر *(xanjar) – «դաշույն»:*

Թարթափդ է խանչար*, ինքըն՝ պողպատ գուտ (22, տող 41)*

Խարաբ *(խարապ, խէրապ, հարաբ) – արաբ.-պարսկ.* خراب *(xarāb) – «փչացած, կործանված, ավերված»:*

Իմ հալս առանց իւրն է խարաբ *(5, տող 8)*

Խուրտ *(խուրդ, խուրտ) – պարսկ.* خرد *(xord) – «մանր, փոքրիկ».* խուրտ ու մուրտ *կապակցության մեջ «ջարդ ու փշուր» իմաստով:*

Այտով զիս հարիր 'ւ արիր խուրտ ու մուրտ *(22, տող 42)*

Կահ ու պէկահ *(գահ ու բէգահ, կեահ ու պէկեահ, կեայ ու պէկայ) – պարսկ.* گاه و بیگاه *(gāh-o-bi-gāh) «ժամանակ ու անժամանակ, ժամ ու անժամ»:*

Կահ ու պէկահ *ձայնըդ կուգայ (5, տող 3)*

Կամկար – *պարսկ.* کامکار *(kamkār) – «կամակար, փափագին հասնող, երջանիկ, բախտավոր, անճնիչխան»:*

Երբ ի կան ածես զաչերըդ կամկար *(20, տող 39)*

Կուման *(դուման, կումէն) – պարսկ.* گمان *(gomān-gumān) – «կարծիք, կասկած»:*

Եթէ բնաւ չունիմք ի վարդէն կուման *(25, տող 34)*

Հազար – *տե՛ս* հազերի

Հազար տաստան *(հազար դաստան, հազար դաստան)* – պարսկ. هزاردستان *(hazār-dastān)* – *«սոխակ»:*

Մեզնէ քեզ թասալլու է հազար դաստան *(25, տող 35)*

Հազրէ վարդ *(հատրէ վարդ)* – *?*

Հազրե վարդին *դիմաց կարդացող բերին (25, տող 82)*

Հազերի – արաբ.-պարսկ. حاضری *(hazeri)* – *«պատրաստակամ. ներկայություն»: Տե՛ս* ալէմ*:*

Հայբուսակ (էջ 348) ունի հազրի *«ծաղիկ մի»:*

Հազերի ալէմ *բժիշկ ամենի (26ա, տող 9)*

Դու հազար *ալէմ բըժիշկ ամենի (26բ, տող 8)*

Դու հազրի *ալէամ բժիշկ ամենի (26գ, տող 18)*

Հազրի – *տե՛ս* հազերի

Հալ – արաբ.-պարսկ. حال *(hāl)* – *«վիճակ, դրություն, տրամադրություն»: Տե՛ս նաև* պէհալ*:*

Իմ հալս *առանց իւրն է խարաբ (5, տող 8)*

Հայիֆ – արաբ.-պարսկ. حیف *(hayf) «ափսոս, ավաղ, անարդարություն, բռնակալություն»:*

Հայիֆ *իմ կարճ արևուս (27գ, տող 64)*

X Հասրաթ *(հասրադ, հասրէթ, հէսրադ, հէսրաթ)* – արաբ.-պարսկ. حسرت *(hasrat)* – *«տրտմություն, կարոտ, փափագ, տենչանք»*

Նա փարատի զինչ կայ հասրաթ *(5, տող 14)*

Ղազալ – արաբ.-պարսկ. غزل *(qazal)* – *«սիրերգ, տաղ, գազել»:*

Ն. Ակինյանը բառս համարել է պարսկերեն, որ ճիշտ չէ (էջ 133):

Կանչեց պլպուլն ըզղազալին *(24, տող 11)*

Ղալատ – արաբ.-պարսկ. غلط *(qalat)* – *«սխալ, սխալանք»:*

Ն. Ակինյանը բառս համարել է պարսկերեն, որ ճիշտ չէ (էջ 133):

Արմատ. բառ. ունի խալատ*:*

Եթէ բան մի ղալատ *ի գիրըս գըտանես (10, 10ա, տող 7)*

Ղալմուղ – թուրք. قالماق *(qalmāq, qalmuq)* – *«կալմիկ»:*

Զոր ի լեզուն իւրեանց ղալմուղ *կոչէին (3, տող 28)*

Ղամար *(խամար) – արաբ.-պարսկ.* قمر *(qamar) «լուսին, լուսնյակ»:*

Զօհրայ լուսաբեր, ղամար *ու լուսին (26, տող 34. 26ա, տող 44. 26բ, տող 34. 26դ, տող 54)*

Է շամս ու ղամար, *աստղ առաւօտին (26, տող 7. 26բ, տող 12)*

Ղանտ *(ղանդ, ղէնտ) – արաբ.-պարսկ.* قند *(qand) – «շաքար, գլուխ շաքար, այլաբանորեն՝ քաղցր»:*

Շրթունքդ է շաքար, խօսանքըդ ղանտ *է (21, տող 25)*

Ղարղ *(խարխ) – արաբ.-պարսկ.* غرق *(qarq) – «ընկղմում, խեղդվում, ջրասուզում».* ղարղ լինել *«ջրասույզ լինել, խեղդվել»:*

Ղարղ *եղայ ի ներս ’ւ եղէ անճարակ (22, տող 40)*

Ղրrար *(խարար, ղարար) – արաբ.-պարսկ.* قرار *(qarār) – «հանգիստ, դադար, ապահով բնակարան, խաղաղ օթևան»:*

Դարձեր եմ մաղասկաթ և չունիմ ղրrար *(25, տող 20)*

Ղումրի *(խումրի) – արաբ.-պարսկ.* قمری *(qomri) – «տատրակ»:*

Ղումրին *քաղցրիկ եղանակեր (5, տող 123)*

Գընաց պըլպուլն եբեր զղումրին (24, տող 7)

Քաղցր եղանակեն պլպուլն ու ղումրին (26, 26բ, 26գ, 26դ, տող 2)

Ղումրին *է նստեր այգոյս (27բ. 27դ, տող 49)*

Ղումրին *երգէր այս այգոյս (27ը, տող 25)*

Ղուսայ *– արաբ.-պարսկ.* غصه *(qosse) – «վիշտ, մտատանջություն, խեղդում, հեղձամահություն»:*

Արաբ. غص *«խեղդվել» բայից:*

Զօրըն կու մաչիմ ի հոգս ’ւ ի ղուսայ *(21, տող 61)*

Ղօնճայ *(ղօնճէ, ղաւ(օ)նջայ, ղունջայ) – պարսկ.* غنچه *(qonçe) – «կոկոն».* ղօնճայ տրհան *«կոկոնաբերան»:*

Է ղօնճայ տրհան, *ծաղիկ նըռնենի (22, տող 5)*

Ճազայ *(ջազայ) – արաբ.-պարսկ.* جزا *(jazā) – «փոխարինություն, պատիժ»:*

Կամ զիս մոռանաս ու տաս ինձ ճազայ *(21, տող 63)*

Ճուտայ *(ջուդա) – պարսկ.* جود *(jodā) – «անջատ, զատ, ջոկ»:*

Վախեմ թէ լինիմ ի քեզնէ ճուտայ *(21, տող 62)*

ձoհար *(ջօհար) – պարսկ.-արաբ.-պարսկ. جوهر (javhar-johar) – «գոհար»:*

Արաբերենը բառս փոխ է առել հին պարսկերենից g>j տառադարձումով. հետագայում արաբ. ձևը անցել է նաև պարսկերենին՝ առանց դուրս մղելու gohar ձևը:

Արմատ. բառ. ունի ջոհար*:*

Լեզուդ ի բերանդ անգին ճoհար *է (21, տող 26)*

Ջրմուռ ու հալվէ ու լալ և ճoհար *(22, տող 47)*

Լալ ակն ու ջoհար *ես դու մեծագին (26բ, տող 14)*

Մարճան *(մարջան, մէրճան, մռճան) – պարս. مرجان (marjan) – «բուսատ (ծովային բույս, որ քարի պես է)»:*

Յաղուէթ ու մարճան*, լալ Պատաչխանի (26ա, տող 37)*

Եաղուէթ ու մարջան *(26դ. տող 42)*

Մէհրապ *(մէհրաբ) – պարսկ.-արաբ.-պարսկ. محراب - مهراب (mehrāb) – «Հեթանոսական տաճարի, հետագայում նաև մզկիթի ավագ սեղանը, կամարակապ որմնախորշը, որտեղ կանգնում և աղոթում են իմամը՝ մահմեդական կրոնի հոգևոր պետը, իշխանավորներն ու երկրի ավագանին»:*

Արմատ. բառ. ունի մեհրապ*:*

Մէհրապ *է քաշած, ղուներդ ի նըմա (21, տող 10)*

Մըրղի սահար *– պարսկ. مرغ سحر (morq-e-sahar) – «առավոտյան թռչուն՝ սոխակ, աքաղաղ, տատրակ»:*

Կազմված է պարսկ. մոռղ (մըրղ) *«թռչուն» և արաբ.* սահար *«առավոտ, արշալույս, այգ» բառերից՝ e իզաֆեթով:*

Քաղցրաձայն կաքաւ մըրղի սահար *ես (21, տող 48)*

Մըրղ *(մղր, մորղ, մրղ) – պարսկ. مرغ (morq) – «թռչուն, հավ». տե՛ս նաև* մըրղի սահար*:*

Դու նազուք տայուս և մըրղի *թուխթաք (22, տող 13)*

Մէստան *(մաստան) – պարսկ. مست (mast) «հարբած» բառի հոգնակին է՝ مستان (mastān) – «հարբած, գինով»:*

Նայեաց մէկ ընդ իս աչօքըդ մէստան *(22, տող 21)*

Մէտրասայ *(մադրասայ) – արաբ.-պարսկ. مدرسه (madrase) – «դպրոց, ուսումնարան»:*

Սախտեալ գեղեցիկ, ոսկի մէտրասայ *(21, տող 9)*

Մուշթարի *(մուշդարի, մուշտարի) – արաբ.-պարսկ. مشتری (moštari) – «Լուսնթագ մոլորակը»:*

Մուշթարի, *զօհրայ և չամս (17, տող 27)*

Զօհրայ, մուշթարի *՚ւ արուսեակ պայծառ (22, տող 48)*

Զօհալ մուշթարին, *աստղ առաւօտին (26, տող 33. 26բ, տող 33. 26գ, տող 53, 26դ, տող 61)*

մուշտարի *(26ա, տող 43)*

Մուշթուլուխ *(մշտլուխ, մուժդալուխ, մուշթըլլուխ, մուշտլուխ, մուշտուլուխ)* – *թուրք.* كل مژده *(mojdeluq)* – *«ուրախ լուր, ավետիս»:*

Թուրք. փոխառյալ է պարսկ. مژده *(mojde) «ավետիս» բառից՝* մուշթ *տառադարձությամբ և թուրք.* լըf *(լուխ) վերջամասնիկի հավելումով:*

Եւ մուշթուլուխ *տարան վարդին (24, տող 3)*

Մուշկ – *պարսկ.* مشک *(mešk, mošk)* – *«այծյամի պորտից ստացվող բուրումնավետ նյութ»:*

Հաճախ գործածվում է մուշկ ու ամպար *կապակցության մեջ. տե՛ս* ամպար*:*

Որ մուշկն *է պատուական երէոյ նաֆայ (3, տող 8)*

Մուշկ *ու մունուշակ, հովիտ ծաղկալի (20, տող 51)*

Դու մուշկ *ու ամպար, բուրումն ամենի (26ա, տող 25. 26բ, տող 49. 26գ, տող 29)*

Մուրտ – *տե՛ս* խուրտ ու մուրտ

Մուրտ – *պարսկ.* مرد *(mord)* – *«անթառամ և հոտավետ մի ծառ»:*

Համասփիւռ և մուրտ *ու չուշան (17, տող 36)*

Մուրտ *և պալասան, փափուկ չուշանին (26, տող 28. 26գ, տող 49)*

Նոճի, մրտենի, *սանտալի և սարդ (20, տող 27)*

Յաղութ *(աղութ, եաղութ, յէաքութ)* – *պարսկ.-արաբ.-պարսկ.* ياقوت *(yāqut)* – *«հակինթ քարը»:*

Արմատ. բառ. ունի աղութ*:*

Եաղութ *ու զըմրութ, գոհար մեծագին (20, տող 24)*

Յաղութ *ու մարճան, լալ Պատաչխանի (26ա, տող 37. 26գ, տող 42)*

X Յատապ *(աղաբ, աղապ, աթէպ, ատապ, ատէպ, էտէպ, յատաբ)* – *արաբ.-պարսկ.* عذاب *(azāb)* – *«տանջանք, չարչարանք, պատիժ»:*

Զպիտի չփոթել արաբ. աղաբ عذاب *«դաստիարակություն, քաղաքավարություն, պատշաճություն» բառի հետ:*

Քանի՞ առնէք դուք ինձ յատապ *(5, տող 5)*

Նազ – *պարսկ.* ناز *(nāz)* – *«փառաբանություն, գգվանք, պչրանք, նազ, նազանք»:*

Ով նենգութեամբ առնէ քեզ նազ *(5, տող 21)*

Նատար *(նադար, նազար)* – *արաբ.-պարսկ.* نظر *(nazar)* – *«հայացք, ակնարկ, դիտում, տեսարան»:*

Յով որ դու նայիս առնես նատար *(22, տող 27)*

X Նաֆայ – *պարսկ.* نافه *(nāfe)* – *«մշկայծյամի հոտավետ պորտը, մուշկը, մշկի պատիճը»:*

Որ մուշկն է պատուական երէոյ նաֆայ *(3, տող 8)*

X Նաֆայի թաթար – *պարսկ.* نافه تاتار *(nāfe-e-tātār)* – *«թաթարական նաֆե, մշկայծյամի հոտավետ պորտը». տե՛ս* նաֆայ*:*

Տաշխ և կինամոն նաֆայի թաթար *(22, տող 46)*

Նէրկիզ – *պարսկ.* نرگس *(narges)* – *«նարգիզ, նարկիս»:*

Արմատ. բառ. ունի նարզէս*:*

Նէրկիզ, *զըմպուլ ’ւ այլ գունս (27գ, տող 28)*

X Նուման – *պարսկ.* نومان *(navmān, nomān)* – *«ծաղկի անուն, պույտ, պտուկկոտրուկ, ծափկոտրուկ, կակաչ, հարսնուկ»:*

Նումանի *ծաղիկ և փըթըթեալ վարդ (20, տող 28)*

Շահ պլպուլ – *պարս.* شاه بلبل *(šah-bolbol)* – *?*

Նա շահ պլպուլն *ճայն էած (5, տող 50)*

Շամս *(չէմս)* – *արաբ.-պարսկ.* شمس *(šams)* – *«արև, արեգակ»:*

Մուշթարի, զօրայ և շամս (17, տող 27)

Է շամս *ու զամար, աստղ առաւօտին (26, տող 7. 26բ, տող 12)*

Է շեյմս *ու խամար (26գ, տող 7)*

Շամս *և արեգակ(ն) երկնային գընդին (26, տող 37. 26բ, տող 36. 26գ, տող 56)*

Շատլըխ *(չադլուխ, չադլուղ, չաթլախ, չատլիխ)* – *թուրք.* شادلوق *(šadluq)* – *«ուրախություն»:*

Կազմված է պարսկ. շադ شاد *(šad) «ուրախ» և թուրք* լըք (լըխ, լուխ) *վերջամասնիկից:*

Արմատ. բառ. ունի շատ *«ուրախ», որ մի անգամ օգտագործել է Կոստանդին Երզնկացին՝ «Զի է խնդման օր և* շատի*» (Կոստ. Երզնկացի, Տաղեր, Երևան, 1962, էջ 133):*

Ծաղկունքն ամէն շատլըխ *արին (24, տող 2)*

Շարապ *(չարաբ)* – *արաբ.-պարսկ.* شراب *(šarab)* – *«խմիչք, գինի»:*

Արմատ. բառ. ունի շարաբ*:*

Լափած սրտիս ես դու շարապ *(5, տող 99)*

Շէմս *-ա՛ս* շամս

Շէֆէր – *պարսկ.-թուրք. شکر (šeker) – «շաքար, շաքարավազ»:*

Տապարզի շէֆէր, ծառ արմաւենի (26գ, տող 22)

Շիրին – *պարսկ. شیرین (širin) – «քաղցր, անուշ»:*

Յայդ շիրին լեզուէդ տուր երկու գըրոյց (22, տող 36)
Լեզուդ է շիրին քան զՄըսրի չաքար (22, տող 51)

Շմշատ *(չումչատ) – պարսկ. شمشاد (šamšād) – «տոսախի ծառ կամ թուփ»:*

Տօսախ, սինուբար, շմշատ *ու տուբի (21, տող 59)*

Ոռաղ-ոռաղ – *արաբ.-պարսկ. ورق ورق (varaq-varaq) – «թերթ առ թերթ»:*

Ես եմ կարմիր ոռաղ-ոռաղ *(5, տող 66)*

Չարտըխ – *պարսկ. چارتاق (çartāq) – «քառասյուն չինվածք, չարդախ»:*

Կազմված է պարսկ. چهار (çahār) «չորս» և արաբ. طاق (tāq) «կամար» բառերից՝ վերոհիշյալ նշանակութեամբ:

Ոսկով նաչխած չարտըխնուս *(27, տող 26)*

Չինար – *պարսկ. چنار (çanār) – «սոսի»:*

Նըռնենի դըրախտ և սալվի չինար *(22, տող 50)*
Դու սէլվի չինար, *տունկ պալասանի(ն) (26ա, տող 30. 26բ, տող 52, 26գ, տող 37)*

Չինի – *պարսկ. چینی (çini) – «հախճապակի, չինական, չինացի»:*

Ն. Ակինյանի բառացանկում բառս չկա:
Խաթայ՝ մերձ սահմանաց Չինումաչինայ
Եւ անդ լինի ռաւանդն, չըքնաղ չինին *գայ (3, տող 9 -10)*

Պաղչայ *(բաղչայ, բաղչէ, պահճայ, պագճայ, պաղչէ, պաղջայ) – պարսկ. باغچه (bāq-çe) – «փոքր պարտեզ, բախչա»:*

Ի մեր պաղչիցս *ելի՛ր գընա (5, տող 4)*
Ի մէջ պաղչին *վըրան զարկին (24, տող 9)*
Գարուն(ն) է բացվ(ւ,ու)եր վարդն ի պաղչաճին *(26, 26ա, 26գ, 26դ, տող 1)*
Գարուն է բացվեր վարդն ի բաղչային *(26բ, տող 1)*

Պէկահ – *տե՛ս* կահ ու պէկահ*:*

Պէհալ *(բէհալ) – պարսկ. بی حال (bi-hāl) – «անուժ, ուժակորուսյս, թուլլ, անտրամադիր»:*

Կազմված է պարսկ. բի (պէ) *ժխտական մասնիկից և արաբ.* հալ حال *«վիճակ» բառից:*

Ն. Ակինյանը թարգմանել է «ուշաթափ», որ ճիշտ չէ (ՀՀ 131):

Տեսաւ պլպուլն եղաւ պէհալ *(5, տող 42)*

Պէուշ *(բէյուշ, բէուշ, պէուժ, պէյուշ) – պարսկ.* بیهوش *(bihovš) – «ուշաթափ, անմիտ, անխելք»:*

Կազմված է պարսկ. բի (պէ) *ժխտական մասնիկից և* հուշ (ուշ) هوش *«ուշ, խելք, միտք» բառից:*

Թըմրաւ պլպուլն, եղև պէուշ *(5, տող 87)*

Պրfայ – *տե՛ս* բրfայ

Պօստան *(բոստան, բօստան, պոստան) – պարսկ.* بوستان *(bovstān – bostan) – «պարտեզ, ծաղկանոց, բուրաստան»:*

Որտեղ դադարիս այն տեղն է պօստան *(22, տող 58)*

Ջօհար –*տե՛ս* ճօհար

Ռահ *(ռախ) – պարսկ.* راه *(rāh) – «ճանապարհ, ուղի»:*

Եւ միշտ դիտեմ զվարդին ըռահ *(5, տող 58)*
Ջահ լուսոյ վառէ տիրամայր,
Ռահ, *որ երկինս է (12, տող 28-29)*
Ռահին *լուսեղէն բացող (13, տող 109)*
Ռահ *գործեաց զարդարութիւն (15, տող 28)*

Ռահան – *տե՛ս* ռեհան

Ռանկ *(ըռանգ, ռանգ, բանգ) – պարսկ.* رنگ *(rang) – «գույն, ներկ, երանգ»:*

Հնագույն հայերեն փոխառություններից է՝ երանգ ձևով (տե՛ս Արմատ. բառ, Հ. Բ., ՀՀ 763):

Ըռանկ *վարդին որպէս ըզլալ (5, տող 41)*

Ռաւան *(ռավան, ռովան, ռօվան) – պարսկ.* روان *(ravān) – «սահուն, հասուն, ընթացող, գնացող»:*

Երբ որ կու չարժիս ոտօքդ ըռաւան *(22, տող 57)*

Ռաւանդ *(ռավանդ, ռէվանդ, ռովանդ) – արաբ.-պարսկ.* روند *(revand) – «գարի, ռևանդ, խավրծիլ, գաբծիլ»:*

Ն. Ակինյանի բառացանկում բառս չկա:

Եւ անդ լինի ռաւանդն, *չըքնաղ չինին գայ (3, տող 10)*

Ռէհան – *արաբ.-պարսկ.* ریحان *(rayhān) – «չահասպրամ»:*

Նօնօֆար ծաղիկ գոյն ըռէհանիին *(26բ, տող 28)*

Նուենուֆար ծաղիկ, գոյն ըռահանիին *(26, տող 27, 26գ, տող 48)*

Ռեհան, *մանուշակ, գոյնս-գոյնս (27գ, տող 57)*

Սադաֆ *(սատափ, սատաֆ, սէտէֆ) – արաբ.-պարսկ.* صدف *(sadaf) – «գաղտակարա, մարգարտի խեցի, սադաֆ»:*

Արմատ. բառ. ունի սատափ*:*

Փայլուն մարգարիտ ի մէջ սադաֆիին *(20, տող 21)*

Սուրաթդ է սադաֆ *մարգարտաքրտունք (21, տող 49)*

Սալամ *(սէլամ) – արաբ.-պարսկ.* سلام *(salām) – «ողջույն, բարև, խաղաղություն, փրկություն, ապահովություն, հրաժեշտ, ողջերթ»:*

Պլպուլն ի վարդն ի սալամ *գար (5, տող 122)*

Սալվի *(սալուի, սալուի, սէլվի) – պարսկ.* سرو *(sarv) – «նոճի, կիպարիս»:*

Նըռնենի դըրախտ և սալվի *չինար (22, տող 50)*

Դու սէլվի *չինար, տունկ պալասանի(ն) (26ա, տող 30. 26բ, տող 52. 26գ, տող 37)*

Սախտեալ *(սախթեալ, սաղթեալ) – «պատրաստված, կառուցված»:*

Բառս կազմված է պարսկ. ساخت *(sāxt) «կառուցում, գործ, կազմություն, հանդերձանք» բառից հայերեն* եալ *լծորդության հավելումով:*

Ավելի վաղ հաղորդված կա սախտել *«ձին հանդերձել, պատրաստել, թամբել, ասիական ձևով» լմբ. առ Լևոն (1865) էջ 239, որից* անսախտ *«չկազմած՝ անթամբ ձի», անդ էջ 240 (Հր. Աճառյան, Արմատ. բառ., հ. Զ, էջ 27)*

Սախտեալ *գեղեցիկ, ոսկի մատրասայ (21, տող 9)*

X Սահրայ *– արաբ.-պարսկ.* صحرا *(sahrā) – «դաշտ, անապատ»:*

Երբ որ ելանես սահրայ *ի սէյրան (21, տող 56)*

Որ զարդարեն լերինք, դաշտք, գամէն սահրայ *(25, տող 111)*

Սանտալի *(սանդալի) – արաբ.-պարսկ.* صندل *(sandal) – «ճանդան, սանդալ ծառ, որ հոտավետ փայտ ունի»:*

Այլ է սանդալ *բուժախոտը:*

Բառս արաբ. է և ոչ տաճկ., ինչպես նշել է Ն. Ակինյանը (էջ 134):

Արաբերենը փոխառեալ է հին պարսկ. չանդան چندان *կամ* չանդալ چندال *ձևից (տե՛ս Նաֆիսու բառարան, հ. 3, էջ 2171)*

Հետագայում արաբ. ձևը անցել է նոր պարսկերենին: Հայերենում փոխառությունը կատարվել է հին պարսկերենից՝ ճանդան*, իսկ հետագայում արաբերենից՝* սանդալ *(տե՛ս Աճառյան, Արմատ, բառ., հ. Դ, էջ 593)*

Նոճի, մրտենի, սանտալի *և սարդ (20, տող 27)*

Սապաո *(սաբախ, սաբահ, սէլահ) – արաբ.-պարսկ.* صباح *(sabāh) – «առավոտ, արշալոյս»:*

Յամէն սապաո *որ լուսանար (5, տող 121)*

Սապապ *(սաբաբ, սաբապ, սապաբ, սէպապ, սէպէպ) – արաբ.-պարսկ.* ببس *(sabab) – «պատճառ, առիթ»:*

Ես կու մաչիմ վարդին սապապ *(5, տող 7)*

Սար *– պարսկ.* سر *(sar) – «գլուխ, ծայր, գագաթ»:* Սար ու թաո *(«թագ») (սար ու թաջ, սէրթաճ, սէր ու թաճ, սիրուքթաճ) կապակցության մեջ «տեր ու տնօրեն, գլխավոր» նշանակությամբ: Տե՛ս նաև* թաո*:*

Արմատ. բառ. տալիս է սարապետ, աղանդասար, կախարդասար *բառաբարդությունների մեջ:*

Ծաղկանցն ամէն եմ սար ու թաո *(5, տող 71)*

Սարդ *– արաբ.-պարսկ.* سدر *(sedr, sadr) – «ծառի անուն»:*

Հայերենում դր եռևառջնություն է տեղի ունեցել:

Նոճի, մրտենի, սանտալի և սարդ *(20, տող 27)*

Սալվար *(սալվէր, սարուար, սէլվար, սէլվէր) – պարսկ.* روسر *(sarvar) – «գլխավոր, հրամանատար, վեհապետ»:*

Որ ամէն ծաղկանց սալվար *ու սուլթան (25, տող 7)*

Սէնի *(սէյնի, սինի) – պարսկ.* سینی *(sini) – «մատոցարան, ափսե»:*

Արմատ. բառ. ունի սինի*:*

Ակամբ զարդարեալ ի(է) ոսկի(է) սէնիո *(26, տող 26. 26գ, տող 47)*

Սէլվի *– տե՛ս* սալվի

Սէյրաո *(սայրան, սէհրան, սէրան) – արաբ.-պարսկ.* سیران *(sayrān) – «պտույտ, զբոսանք, շրջագայություն»:*

Երբ որ ելանես սահրալ ի սէյրաո *(21, տող 56)*

Սիասաթ *(սիասէթ) – արաբ.-պարսկ.* سیاست *(siyāsat) – «իշխանություն, քաղաքականություն, դիվանագիտություն»:*

Հանց սիասաթով *իջնուս քան ըզխան (22, տող 59)*

Սինուբար *(սինոբար, սինոպար, սինուպար) – արաբ.-պարսկ.* صنوبر *(sanavbar – sanobar) – «բարդիի մի տեսակը, պինիա, իտալական սոճի»:*

Սինոպար *բառի համար Հր. Աճառյանը գրում է.* «Սինոպար «*գինձ, coriandrum*» *մէկ անգամ ունի Ոսկիփ. առնելով Իչոխ ասորուց. «Եդաւ ի սիրտն բնական ջերմութիւն ըստ կերպի սնոպարի, գոյնն թուխ և կարմիր և խիտ և պինդ անյաղթելի»:*

=արաբ. սընբար, անէուբար «գինձ»:

Հբուս. § 2786 նոյն է կարծում սոնոպարի *«փիճի» բառի հետ: Նորայր ՀԱ, 1923, 160, մեկնում է վերի ճևով, բայց դժբախտաբար արաբ. բառը բնիկ այբուբենով կամ գիտական տառադարձութեամբ չէ նշանակած, որպէսզի կարելի լինէր ստուգել» (Աբմատ. բառ., հ. Զ, էջ 312):*

Այստեղ դնելով բառի արաբական և գիտական տառադարձությունը, վերջնակա-նապես ճշտվում է նրա իմաստն ու ծագումը:

Տօսախ, սինուբար, *չմշատ ու տուբի (21, տող 59)*

Վեր ես գընացեր քան ըզսինուբար *(22, տող 49)*

Սիմպիլ *(զըմպուլ, սամբուլ, սանպուլ, սունբուլ, սունպուլ) – արաբ.-պարսկ.* سنبل *(sonbol) – «հակինթ, նարդոս, ցորենի հասկ»:*

Արմատ. բառ. ունի սմբոլ*:*

Սիմպիլ *և այլ գուն ծաղկոյս (27գ, տող 61)*

Նէրկիզ, զըմպուլ *'ւ այլ գունս (27զ, առ 26)*

Սուլթան *– արաբ.-պարսկ.- թուրք.* سلطان *(soltan) – «սուլթան, երկրի իշխան, թագավոր»:*

Որ է ամէն ծաղկանց սալվար ու սուլթան *(25, տող 7)*

Սուչ *– թուրք.* چوصم *(suç) – «հանցանք, մեղք»:*

Յէ՞ր կու խոցես զիս առանց սուչ *(5, տող 96)*

Սուրաթ *(սուրատ) – արաբ.-պարսկ.* تروصم *(surat) – «դեմք, երես»:*

Սուրաթդ *է սադաֆ, մարգարտաքրտունք (21, տող 49)*

Տայուս *(թայուզ, թայուս, թավուզ, թավուս, թաւուզ, տայուզ, տաուզ, տաւուս) –արաբ.-պարսկ.* سواط *(tāvus) – «սիրամարգ»:*

Դու նազուք տայուս *և մըրգի թուխաք (22, տող 13)*

Տապարզի *(տըպարզի) – պարսկ.* هزبت *(tabarza) – «գլուխ չաքար, բյուրեղ չաքար՝ սպիտակ, շատ քաղցր»:*

Լեզուդ տապարզի *չաքար, քո չրթունքըդ վարդի թերթ է (18, տող 4)*

Տապարզի *չաքար, ծառ արմաւենի (26ա, տող 16. 26բ, տող 42)*

Տապարզի *չէքեր, ծառ արմաւենի (26գ, տող 22)*

Տհան *(դահան, դըհան, թըհան, տահան, տիհան) – պարսկ. دهان (dehān – dahān) – «բերան»: Տե՛ս նաև* պուտա *և* ղօնճայ*:*

Է փուստայ տրհան *ու բարակ չրթունք (21, տող 50)*

Է ղօնճայ դրհան*, ծաղիկ նռնենի (22, տող 5)*

Տուբի *(դուպի, տույբի, տուպի) – արաբ.-պարսկ. طوبی (tubā) – «իբր արքայութեան կամ դրախտի ծառերից մեկի անունը»:*

Տօսախ, սինուբար, չմշատ ու տուբի *(21, տող 59)*

Տուշ *(թուշ) – պարսկ. دوش (duš) – «քունն ու երազ»:*

Ասաց՝ ինչ ժամ եղէ քեզ տուշ *(5, տող 88)*

Փարտա *(փարդէ, փարտէ, փէրտա, փէրտէ) – պարսկ. پرده (parde) – «վարագոյր, քող, ծածկոց, չղարչ»:*

Զկանաչէ փարտաս *յետ կու բանամ (5, տող 74)*

Փեղամպար *(պեղամպեր, փեղամբեր, փեղամպէր) – պարսկ. پیغمبر (peyqambar) – «պատգամաբեր, մարգարե»:*

Արմատ. բառ. ունի փեղամբար*:*

Եւ կամ հընազանդել ձեր փեղամպարին *(3, տող 68)*

Փիատայ *(փիեատայ, փիադայ, ֆիատէ) – պարսկ. پیاده (piade) – «հետևակ, հետիոտն»:*

Եկեալ է մանուշակ վարդին փիատայ *(25, տող 11)*

Փոշիման *– պարսկ. پشیمان (pašimān) – «փոշիման, զղջացած, ապաշաված, տխուր»:*

Ապա աւաղես դառնաս փոշիման *(22, տող 69)*

Փուստա *(փըստա) – պարսկ. پسته (peste) – «պիստակ»:* Փուստա տրհան *– «պիստակաբերան»:*

Արմատ. բառ. ունի փստուղ *ձևով:*

Է փուստայ տրհան *ու բարակ չրթունք (21, տող 50)*

Քալամուլլահ *– արաբ.-պարսկ. کلام الله (kalāmallah) – «Աստծու խոսքը, Ղուրանը»:*

Կարդան անդադար անդ քալամուլլահ *(21, տող 12)*

Քաման *– պարսկ. کمان (kamān) – «աղեղ»: Տե՛ս* թիր*:*

Ուներդ է քաման*, թարթափդ է քո թիր (21, տող 29)*

Քապապ *(քաբաբ, քաբապ, քապաբ, քէպապ) – արաբ.-պարսկ. کباب (kabāb) – «խորովածծ»:*

Սիրաս սիրու եղեր fապապ *(5, տող 6)*

Քաֆուր *(քաֆար, քեաֆուր, քավուր)* – *արաբ.-պարսկ.* كافر *(kāfer – kāfar)* – *«աստծուն ուրացող, անհավատ»:*

Որպէս fաֆուր *վարդ պայծառ և գունով (22, տող 54)*
Յորժամ զfաֆուր *վարդըն տեսայ (24, տող 22)*

Օտարիտ *(օտարիդ)* – *արաբ.-պարսկ.* عطارد *(otāred)* – *«Փայլածու մոլորակը»:*

Մուշթարի, *զօհրայ և չամս,*
Օտարիտ *դէմ արեգական (17, տող 27- 28)*

Ֆըղան *(ֆեղան, ֆիղան, ֆըըղան, ֆիրղան)* – *պարսկ.* فغان *(feqān – foqān)* – *«ողբ, կոծ աղաղակ»: Տե՛ս և* qար*:*

Քանի ֆըղան *կանչեմ անչափ (5, տող 135)*
Կանչէր qար ու ֆիղան *ի մէջ գիշերին (25, տող 4)*
Ֆիղան *կանէ մէջ այգոյս (27դ, տող 67)*

Ֆըրեաթ *(ֆերեադ, ֆէրեաթ, ֆըրաթ, ֆիրեաթ, ֆրիադ, ֆրիաթ, ֆրիատ)* – *պարսկ.* فریاد *(faryād – feryād)* – *«օգնության աղաղակ, աղմուկ, ողբ, վայնասուն»:*

Ֆըրեաթ *կառնէ ինքն յամէն ժամ (5, տող 73)*
Անդուր ՚ւ անդադար կու առնէ ֆըրեաթ *(20, տող 36)*

Ֆիղան – *տե՛ս* Ֆըղան*:*

ՊԱՐՍԿԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳԻՐ ԲԱՌԱՐԱՆԸ[1]

(Գեորգ Դպիր Պալատացու ծննդյան 225-ամյակի և մահվան 150-ամյակի առթիվ)

Հայ բառարանագրության պատմության մեջ եզակի տեղ ունի Գեորգ Դպիր Պալատացու պարսկերեն-հայերեն բառարանը, մի ծավալուն ու օգտաշատ հուշարձան, որ իր կատարումով կանգնած է եղել ժամանակի եվրոպական բառարանագիտության ամենաբարձր մակարդակի վրա: Այս բառարանը մի այնպիսի աշխատանք է, որտեղ համակողմանիորեն դրսևորված են հեղինակի ոչ միայն լեզվաբանական լայն պատրաստությունն ու հմտությունը, այլև ընդհանրապես նրա բազմահարուստ գիտելիքները արևելյան ժողովուրդների, մանավանդ պարսից մշակույթի բնագավառում:

18-րդ դարի երկրորդ կեսը հայ մտքի նոր վերածննդի սկզբնավորման ժամանակաշրջանն էր: Եվրոպայի հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցող մեծ տեղաշարժերը իրենց հեռավոր արձագանքներն էին գտնում նաև Արևելքի ժողովուրդների մոտ: Այդ հեղաբեկումների անմիջական հետևանքը հայ իրականության մեջ հանդիսանում էր լուսավորական գործի ծավալումը նախ հայաշատ կենտրոններում, ապա ավելի ուշ ժամանակներում՝ նաև բուն Հայաստանում: Կապիտալիզմի զարգացումը Եվրոպայում աչխուժացնում էր Արևմուտքի և Արևելքի միջև տեղի ունեցող առևտուրը, իսկ այս բնագավառում հանրահայտ է հայերի կարևոր դերը: Առևտրական հարաբերությունների հետևանքով հայ և տարբեր ժողովուրդների միջև ստեղծված սերտ չփումը նպաստում էր միաժամանակ նրանց մշակութային փոխհարաբերությունների զարգացմանը: Հենց սրանով էլ պիտի բացատրել այն հանգամանքը, որ հայկական մշակութային խոշորագույն կենտրոններում դպրոցական գործը, այդ թվում և օտար լեզուների դասավանդումը, նոր ու կայուն հիմքերի վրա է դրվում:

Լուսավորական գործը լայն ծավալ է ընդունում նաև Կոստանդնուպոլսում. բացվում են դպրոցներ, տպագրվում են ինքնուրույն ու թարգմանական աշխատություններ, գեղարվեստական երկեր:

Ժամանակի պոլսահայ մտավոր կյանքի լավագույն ներկայացուցիչներից է Գևորգ Դպիր Տեր-Հովհաննեսյանը (1737-1812), հայտնի Պալատացի մականունով, որը 18-րդ դարի երկրորդ կեսին մանկավարժական ու գիտա-թարգմանչական բուռն գործունեություն է ծավալում:

Տիրապետելով բազմաթիվ լեզուների (եբրայերեն, հունարեն, լատիներեն, արաբերեն, պարսկերեն և թուրքերեն), Գեորգ դպիրը ոչ միայն թարգմանություններ է կատարել այդ լեզուներից, դրանց համար կազմել քերականական ձեռնարկներ, գրել պատմական ուսումնասիրություններ՝ մեծ չափով օգտվելով օտար սկզբնաղբյուրներից, այլև զբաղվել է գրչությամբ՝ ճշգրտելով ու սրբագրելով միջնադարյան հայկական առանձին հուշարձաններ:

---

[1] Տե՛ս «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1962, № 9, էջ 73-92:

Հատկապես բեղմնավոր է եղել նրա թարգմանչական գործունեությունը իր գիտական գործունեության առաջին տասնամյակներում: Այդ տարիներին պարսկերենից նա թարգմանել է 15-րդ դարի հեղինակ Աբդուլ ազիզ Աբդուլռահման Թաբրիզիի «Բանալի աստեղաբաշխութեան...» (1768 թ.), «Գիրք մեծագին և պատուական ականց...», որը տպագրված է 1807 թ. Կոստանդնուպոլսում, իսկ հունարենից թարգմանել է «Բան՝ յաղագս նաւապետաց՝ գափուտան կոչեցելոյ...» (1769 թ.) և այլն: Նրա կատարած թարգմանություններից կարելի է հիշել «Հայելի գրոցն Հոմերոսի, որ է արճակ պատմութիւն Իլիականին, թարգմանեալ ի յոյն բնագրէ, յամին 1783 թ.»:

Գեորգ Դպրի պատմագրական կարևոր ուսումնասիրություններից է «Գիրք պատմութեան արքայից Օսմանեան զարմին...», որը ժամանակին օգտագործել է Գ. Այվազովսկին իր «Օսմանյան պատմության» համար:

Ինչպես հիշատակել է նրա կենսագիր Ա. Այվազյանը, Դպիրը կազմած է եղել նաև արաբերեն ու պարսկերեն լեզուների դասագրքեր, որոնք դժբախտաբար մեզ չեն հասել[1]:

Գեորգ Դպիրը հայ այն մտավորականներից է եղել, որ խոր գիտակցել է հնագույն գրչագրերի արժեքն ու նշանակությունը մեր ժողովրդի պատմության ու մշակույթի համար և մասնակցել է դրանց փրկության աշխատանքին՝ թե անձամբ արտագրելով և թե հավաքելով: Բաբկեն Կյուլեսերյանը Ղալաթիայի մատենադարանի ձեռագրերի մեջ նկարագրել է Խորենացու և Եղիշեի պատմությունների դպիրյան այնպիսի արտագրություններ, որոնց հիմք-օրինակները եղել են ընտիր, Եղիշեինը՝ 1167 թվականից: Անհրաժեշտ է հիշել, որ Դպրի ջանքերով է, որ վերջնական կորստից փրկվել ու համաշխարհային գիտական հասարակայնության սեփականությունն է դարձել Եվսեբիոս Կեսարացու պատմության աշխարհում միակ հայերեն թարգմանության օրինակը: Նրա արտագրությամբ է նաև պահպանվել, իսկ Ղևոնդ Ալիշանի ջանքերով հրատարակվել հռչակավոր «Գիրք վաստակոցը»:

Սակայն Գեորգ Դպրի գլուխ գործոցը նրա պարսկերեն-հայերեն բառարանն է, որը «Բառարան պարսկերէն ըստ կարգի հայկական այբուբենից» խորագրով լույս է տեսել հեղինակի մահվանից հետո՝ 1826 թվականին, Կոստանդնուպոլսում, Հակոբ Տյուզյանի հմուտ առաջաբանով ու անմիջական հսկողությամբ[2]: Այս բառարանը ոչ թե սոսկ «բառագիրք» է, ինչպես անվանել է ինքը Դպիրը, այլ իրանական մշակույթի մի հանրագիտարան, որտեղ կարելի է ամփոփ տեղեկություններ գտնել իրանական դիցաբանության, առասպելաբանության, ժողովրդական ասացվածքների ու առածների, սովորությունների ու բարքերի, վիպական հերոսների ու ականավոր գրողների մասին և այլ շատ հե-

---

1 Գեորգ Դպրի մասին տես **Ա. Այվազյան**, *Շար հայ կենսագրությանց*, Ա. հատոր, Կ. Պոլիս, 1893, էջ 11-73, **Հր. Աճառյան**, *Պատմություն հայոց նոր գրականության*, պրակ Ա., Նոր-Նախիջևան, 1910, էջ 105-109: **Ա. Մանուկյան**, *Գեորգ Դպիր Տեր-Հովհաննեսյանի ձեռագիրները Ս. Ղազարու մատենադարանին մեջ*, «Բազմավեպ», 1957, էջ 168: **Էդ. Բ. Աղայան**, *Հայ լեզվաբանության պատմություն (սկզբից մինչև մեր օրերը)*, հ. 1, Երևան, 1958, էջ 135-139:

2 Բառարան պարսկերէն ըստ կարգի հայկական այբուբենից, յորում ճոխաբար աւանդին իմաստք բառից հայերէն և տաճկերէն բացատրութեամբ և ուրեք արաբական ձշանակութեամբք: Ցաւելեալ և զյատուկ անուանս ձշանաւոր թագաւորաց և զերևելի տեղեաց, և ճոխացուցեալ օրինակօք ի բանաստեղծից պարսից: Ի Գէորգեայ Դպրէ Տէր-Յովհաննեսեան Պալատացոյ: Աշխատութեամբ և ուղղագրելով և համառօտ քերականութեամբ ի Յակոբայ Տիւզեան..., Ի Կոստանդնուպօլիս, 1826, 715 էջ:

տաքրքիր նյութեր: Բառարանում յուրաքանչյուր բառահոդվածի համար տրված են ոչ միայն մի քանի իմաստներ, այլև հայատառ պարսկերենով բերված են բազմաթիվ վկայություններ իրանական դասական գրողներ Ռուդաքիից, Ֆիրդուսուց, Խայամից, Սաադիից, Հաֆիզից և շատ ուրիշներից. անգամ առանձին դեպքերում այդ վկայությունները թարգմանված են հայերեն, որով բառարանը էլ ավելի է հարստանում և արժեքավորվում որպես պարսից բանաստեղծների ստեղծագործությունների առանձին նմուշների, հաճախ առաջին, հայերեն թարգմանությունների հավաքածու. մի բան, որ իր նմանը և նախատիպը չի ունեցել մեր գրականության մեջ[3]*:*

Իհարկե պարսկերեն-հայերեն բառարաններ ձեռագիր վիճակում եղել են և Դպրից շատ առաջ: Մատենագրական փաստերը ցույց են տալիս, որ դեռևս 10-11-րդ դարերում Հայաստանի դպրոցներում հունարենի և արաբերենի հետ մեկտեղ դասավանդվել է նաև պարսկերենը: Պետք է ենթադրել, որ այս նույն ժամանակներում ուսուցման նպատակներով կազմվել են դասավանդման ձեռնարկներ ու բառարաններ:

Պարսկերեն-հայերեն մեզ ծանոթ հնագույն բառարանը «Թարգմանութիւն Պարսից բառի ի Վարդան գրոց» խորագրով փոքրիկ բառամատյանն է, որտեղ ի մի են բերված Եղիշեի պատմության մեջ հանդիպող պարսկերեն բառերը: Ենթադրություններ կան, որ այս բառարանը կազմվել է 13-րդ դարում. հնագույն ընդօրինակությունը 15-րդ դարի վերջերից է:

Երևանի Մատենադարանի 14-15-րդ դարերի մի ձեռագրում՝ № 7151, պահպանված է եռլեզվյան՝ արաբերեն-պարսկերեն-հայերեն մի բառարանի առաջին՝ ա, բ, թ, տառերը: Բառարանը հայատառ է: Զգացվում է, որ հայ հեղինակը ձեռքի տակ ունեցել է ինչ-որ արաբերեն-պարսկերեն այբբենական կարգով կազմված մի բառգիրք, որը և ինքը հայացրել է: Բառերի հայերեն նշանակությունների արտակարգ ճշգրտությունը, հետևողական ու միօրինակ տառադարձությունը իրավունք է տալիս ենթադրելու, որ բառարանի հեղինակը ունեցել է լեզվաբանական կուռ դիտելիքներ և քաջ տիրապետել է այդ

---

3 Բառարանի վերջում գրված է հայերենի և պարսկերենի նույնանիշ և նմանաձայն բառերի մի ցանկ, որը ակադեմիկոս Հր. Աճառյանը, պրոֆ. Էդ. Աղայանն ու պրոֆ. Գ. Ջահուկյանը առանց որևէ տարակուսանքի Գեորգ Դպիրի ճեղինակությունն են համարել և բարձր են գնահատել որպես գիտության արդի խոսքին համապատասխանող, մեծագույն մասամբ ստույգ և ճնագույն հայ ստուգաբանություններ (**Հր. Աճառյան**, *Պատմություն հայոց նոր գրականության*, պր. Ա., էջ 107), ինչպես և «Մխիթարի բառարանից ճետո առաջին լուրջ ստուգաբանական փորձ» (**Էդ. Աղայան**, *Հայ լեզվաբանության պատմություն*, ճ. 1, էջ 137-140) և որպես Պետերմանից ու Վինդիշմանից առաջ հայերենի ու պարսկերենի համեմատության փորձ (տե՛ս **Գ. Джаукян**, *О первых попытках применения сравнительного метода в истории армянского языкознаания*, Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հասարակ. գիտութ.), 1957, № 6, էջ 60-61): Բառացանկին տրված այս իրավացի գնահատականները, սակայն, պետք է հասցեագրել ոչ թե Գեորգ Դպիրին, այլ նրա բառարանի հրատարակիչ Հակոբ Տյուզյանին, որը ո՛չ միայն կազմել է այս բառացանկը, այլև գրել է բառարանին կցված պարսկերենի քերականությունը. այդ մասին պարզորեն ասված է հրատարակչի առաջաբանում. «Ժողովեցաք ևս ի բառարանէս զամենայն նմանաձայն բառս որ ընդ հայս և ընդ պարս, և դասակարգեցաք ի վերջոյ հանդէպ միմեանց: Ի զուգադրութենէ աստի զայն միայն է մեզ հաւաստել՝ թէ վասն մերձաւորութեան և սահմանակցութեան երկուց ազգացս՝ բազում նմանութիւն է բառից, ևս և ոճոյ խօսից ընդ մէջ հայոց և պարսից. այլ ոչ թէ և լեզու մերոյ, և ազգի նոյն գոլ ընդ նոսա: Զի և յօրինուած իսկ կազմութիւն երկաքանչիւր լեզուացն յայտնի ցուցանեն թէ բովանդակութեամբ զանազանին երկուքս այսոքիկ ի միմեանց» (**Գեորգ Դպիր**, *Բառարան պարսկերէն*, էջ [Ը. – Թ.]):

լեզուներին[4]: Մեզ ծանոթ միջնադարյան բառարաններից և ոչ մեկը Դպրի բառարանի ո՛չ ծավալը, ո՛չ որակը և ո՛չ հարստությունը չունի:

Հետաքրքիր ու կարևոր է Գեորգ Դպրի պարսկերեն-հայերեն բառարանի ստեղծման պատմությունը:

Դպրից միացած ձեռագիր ժառանգության մեջ պահպանվել են մի քանի բառարաններ, որոնք նոր լույս են սփռում անխոնջ գիտնականի բառարանագրական գործունեության վրա:

Բառարանագրությամբ Դպիրը սկսել է զբաղվել երիտասարդ տարիներից՝ 1764 թվականից: Այս է վկայում Ղալաթիայի հայոց ազգային մատենադարանում պահպանված պարսկերեն-հայերեն մի ձեռագիր բառարան, որը նկարագրել է Բաբկեն Կաթողիկոս Կյուլեսերյանը: Բառարանը վերնագրված է «Բառգիրք պարսկական համառօտ մեկնութեամբ», որ «Արտահանեալ ի գրոց թուրքաց և շարադասեալ ի միում ափի կարգաւ հայկական այբուբենից... յամի փրկութեան մերոյ 1764 և ի Հայոց ՌՄԺԳ ի նոյեմբերի 10-ին սկսեալ (երես 1) ... Յամի տեառն 1777 դեկտեմբերի 29 աւարտեալ (եր. 476)»:

Բ. Կյուլեսերյանը ձեռագիրը նկարագրելիս վստահաբար գրում է. «Գեորգ դպրի այս կարևոր և իր տեսակին մեջ միակ գործը տպագրված է արդեն «Բառարան պարսկերէն», ինչպես նաև «Բառգիրք պարսկական լեզուի» անունով...»[5]: Սակայն մի քիչ հետո նա, ըստ երևույթին ձեռագրի և տպագրի միջև անհամապատասխանող տեղեր գտնելով՝ կասկածում է նրանց նույնությանը և գրում «Ձեռագի՞րս թե ոչ ձեռագրիս օրինակը գործածած է Հակոբ Տյուզյան Գեորգ Դպրի բառգիրքը կատարելագործելու առեն»[6]: Այնուհետև Կյուլեսերյանը դիտել է տալիս, որ տպագրի առաջաբանում Դպիրը հիշում է, որ ինքը 1795 թ. (=ՌՄԽԴ) հայերենի վերածելով՝ օգտագործել է Շահիդիի և Հալիմիի բառարանները: Հետևաբար 1777 թ. ավարտված բառարանը չէր կարող հիմք լինել տպագրի համար, որտեղ օգտագործված են ուշ շրջանում կատարված թարգմանություններ:

Տյուզյանի հրատարակած Դպրի բառարանի հիմք համարվել է նաև մի այլ ձեռագիր, որը Գեորգ Դպրի գրավոր ժառանգության հետ միասին գտնվում է ս. Ղազարի մատենադարանում: Ձեռագիրը (թ. 23) խորագրված է «Բառգիրք պարսկական լեզուի», «Թարգմանեալ յայլազգական լեզուի ի հայկական տառ և ի յարամեան բարբառ...», որ գրված է «յամի տեառն 1771 ի սեպտեմբերի 28: Ի միջոցի երկուց ամաց»[7]:

Ս. Ղազարի մատենադարանում պահվող Գեորգ Դպրի ձեռագրերի մասին տեղեկություններ հաղորդող Հ. Ա. Մանուկյանը այս ձեռագիրն է հիմք համարել 1826 թ. տպագրված պարսկերեն-հայերեն բառարանի համար: Նա գրում է, որ այդ ձեռագիրը

---

4 Այս ձեռագիրը Մատենադարանում գտնվելու փաստը սիրով մեզ հայտնեց ընկ. Հայկ Ամալյանը, որը ներկայումս պատրաստում է «Մատենադարանի XII-XVI դարերի բառարաններ» հետաքրքիր աշխատությունը:

Առաջիկայում ըստ ամենայնի մենք կանդրադառնանք միջնադարի պարսկերեն-հայերեն բառարաններին:

5 **Բաբկեն Աթոռակից Կաթողիկոս**, Ցուցակ *ձեռագրաց Ղալաթիոյ ազգային մատենադարանի հայոց*, Անթիլիաս, 1961, էջ 497-498:

6 Անդ, էջ 499:

7 **Մանուկյան Ա.**, *Գեորգ Դպիր Տեր-Հովհաննեսյանի ձեռագիրները ս. Ղազարու* մատենադարանին *մեջ*, «Բազմավեպ», 1957, էջ 168:

«Արդեն հրատարակված է «աշխատութեամբ և ուղղագրելով և համառօտ քերականութեամբ ի Յակոբայ Տիւզեան»[8]:

Հարգելի բանասերը նույնպես թյուրիմացության մեջ է. 1771 թ. ավարտված բառարանը չէր կարող բնագիր լինել տպագրի համար, թեկուզ միայն հենց այն պատճառով, որ Դպիրը օգտագործել է ուշ շրջանում իր թարգմանած Շահիդիի, Հալիմիի և այլ բառարաններ[9]:

Գեորգ Դպրի պարսկերեն-հայերեն հայտնի բառարանի ստեղծման մասին շատ արժեքավոր տեղեկություններ են հաղորդված իր իսկ հեղինակի առաջաբանում[10]: Այնտեղ ասված է. «Դուն գործեալ աչալուրջ հայեցողութեամբ գրեցի զմեկնութիւն ոտանաւոր գրոցն Շահիտի բանաստեղծին բառական, ի բարբառ և ի լեզու հայկական, ի թուականին ՌՄԽԴ [1795]: Ապա իսկ և իսկ գտեալ և այլ մատեան՝ այն ինչ նորոգ յօրինեալ ըստ օրինակի գրոցն Շահիտի հեղինակին, զայն ևս ի նոյն յարեցի:

Եւ յետոյ տեսեալ միւս ևս գիրք ինչ հարուստ բառիւք, զոր ոտանաւորելով չինեալ, և թարգմանաբար թուրքական բարբառով յօրինեալ էր Հալիմի անուն ոմն ի թուականին հիճրէթին 850 [1446/47], զայն մատեան ևս ի հայ լեզու յեղեալ, կազմեցի եռամասնեայ մատեան բառից»[11]:

Շահիդիի և Հալիմիի, ինչպես և պարսից դասական գրողների բառապաշարի հիման վրա պատրաստված այս եռամասնյա մատյանը, ինչպես վկայում է Գեորգ Դպրի կենսագիր Ա. Այվազյանը, դեռևս մինչև անցյալ դարի 90-ական թվականները գտնվել է Պոլսում Հովհաննես Արծրունու մոտ: Ա. Այվազյանը տեսել է այդ 600 էջանոց աշխատությունը և անգամ նկարագրել է նրա տարբեր մասերի տիտղոսաթերթերը[12]:

Գեորգ Դպրի թարգմանած բառարանների նյութի և նրանց վրա գիտնականի կատարած աշխատանքների մասին հստակ պատկերացում է տալիս Երևանի Մատենադարանի № 9699 ձեռագիրը, որը նույնպես եռամասնյա մի մատյան է: Այստեղ ամփոփված են Դպրի թարգմանած Շահիդիի, Վեհպիի բառարանները և պարսից ոճերի մի փոքրիկ հավաքածու: Այս մատյանը 1823 թ. բնագրից ընդօրինակել է ոմն տիրացու Դանիել[13]:

Ինչպես պարզ երևում է թե՛ Այվազյանի նկարագրած ձեռագրում և թե՛ Մատենադարանի № 9699 ձեռագրում միայն համընկնում է Շահիդիի բառարանի առկայությունը: Երկու ձեռագրերի՝ այս հատվածների տիտղոսաթերթերը ամբողջությամբ նույնն են.

«Թարգմանօրէն մեկնութիւն
տաղաչափական բառարանին
այնորիկ՝ որ կոչի

8 Անդ:

9 Տե՛ս **Գեորգ Դպիր**, *Բառարան պարսկերէն*, Յառաջաբան հեղինակին, էջ 48:

10 Անդ:

11 Անդ:

12 Տե՛ս **Ա. Այվազյան**, *Շար հալ կենսագրությանց*, Ա. հատոր, էջ 24:

13 Այս ձեռագիրը Երևան է հասել Թորոս Ազատյանի դիվանի հետ: Ձեռագրի էջ 119բ գտնվող մի հիշատակությունից տեղեկանում ենք, որ այդ մատյանը Թ. Ազատյանը գտել է Ստ. Կուրտիկյանի գրքերի մեջ: Ձեռագիրս Երևանի Մատենադարանում գտնվելու մասին սիրով մեզ հայտնեց բանասեր ընկ. Ա. Մնացականյանը:

Շահիտի:

Ի լոյս ածեալ աչխատուԹեամբ Գէորգայ ուրումն

մշականուն դպրի

Ի մայրաքաղաքն Կոստանդինու-

Պոլիս

Ընդ հովանեաւ տաճարի սրբոյ Հրեչտակապետի

Միքայէլի՝ որ ի Պալատ:

Յամի տեառն 1795 մայիսի 8»[14]*:*

Արդ, իրենցից ի՞նչ են ներկայացնում այս բառգրքերը և ինչպե՞ս է Դպիրը դրանք օգտագործել:

1. Շահիդիի բազիրը: *Ինչպես վերը հիշվեց, Գեորգ Դպրի պարսկերեն-հայերեն բառարանում օգտագործված աղբյուրներից հեղինակային առաջաբանում առաջինը նշված է Շահիդիի բառգիրքը:*

15-րդ դարի թուրք բառարանագիր Շահիդին (875/1470 թ.–957/1550) իսկական անունով Իբրահիմ, Անատոլիայի Մենթեշե գավառի Մուղլայի գյուղաքաղաքից էր: Նա ապրել է Բուրսայում որպես մեվլեվի (կամ՝ մաուլավի) աղանդի շեյխ. ունի մի քանի մեսնևիներ և մի դիվան[15]*: Նրա կազմած բառարանը, որ հայտնի է* تحفه شاهدی *«Թեոհֆեի Շահիդի» («Շահիդու պարգևը») վերնագրով, մի փոքրիկ մատյան է, որ մինչև 19-րդ դարի կեսերը մեծ տարածում է ունեցել թրքախոս ժողովուրդների, հատկապես օսմանցիների մոտ և որպես դասագիրք օգտագործվել է դպրոցներում:*

Գեորգ Դպիրը այս հեղինակի անձնավորության, ինչպես և նրա բառարանի ստեղծման հանգամանքների ու բնույթի մասին համառոտակի խոսում է Շահիդու բառարանի թարգմանությանը կցած իր «Յառաջաբանութիւն ինչ» բաժնում:

Շահիդին «որ ի մանկութենէ դեգերեալ ի վարժս ուսման, և եղեալ հմուտ ի գիտութեան լեզուին պարսկական, – գրում է Դպիրը, – չարադրեաց զգիրս զայս բառական. մեկնելով զայն որչափ մարթ էր բառիւք թուրքական լեզուին. և ուրէք ուրէք առ ի չգոյէ համապատասխան բառի ի թուրքական բարբառի, վարեցաւ արաբիական ձայնիւ. և սակս դիւրընկալ լինելոյ բառիցն ի միտս ընթերցողաց, յօրինեաց զսոյն գիրս ոտանաւոր տաղաչափութեամբ. լինել նմանակ ոտանաւոր գրոցն Թէօհֆէ Հիւսամի կոչեցելոյ, որով ինքն վարժեալ էր ի մանկութեան իւրում, բաժանելով զսա ի պրակս կամ ի գլուխս 27. ընդ պէսպէս յանկաւորութեամբ և վանկաչափութեամբ... Եւ աչխատասիրեալ աւարտեաց զսոյն գիրս ի թուականին հիճրէթի 921 [1515–1516 թ.]»[16]*: այնուհետև Դպիրը, նշելով բառարանիս նշանակությունն ու կարևորությունը, խոսում է իր կատարած աշխատանքի մասին. «Արդ՝ և ես Գէորգ անուն չնչին Կոստանդնուպոլսեցի պալատական հայեցեալ ի չահ օգտութեան մատենիս այսորիկ, յանձն առի աչխատութեամբ, և գրեցի*

14 **Ա. Այվազյան**, *Շար հայ կենսագրությանց*, Ա. հատոր, էջ 24: Երևանի Մատենադարանի ձեռ. № 9699, էջ 3ա:

15 Տե՛ս Մատենադարանի ձեռ. № 9699, էջ 4ա: Նաև՝ **Hammer**, *Geschichte der Osmanischen Dichtkunst*, vol. II, S. 258.

16 Մատենադարանի ձեռ. № 9699, էջ 4ա:

զմեկնութիւն սորա դրոշմեալ ի քարտի հայկական տառագծութեամբ, ուր նախ զպարսիցն եղեալ՝ ապա զՀայոցն, յետոյ զթուրքացն. և հուսկ յետոյ զարապոցն. որով եղև սա գիրք բառից լեզուաց և բարբառոց քառից. և այս ամենայն ի վայելս ուսումնասէր անձանց Հայկազունեաց. ի թուականին հայոց ՌՄԽԴ (1795): Ի թագաւորեալ քաղաքն Կոստանդնուպոլիս, ի տեղւոջ անդ՝ որ կոչի Պալատ...»[17]:

Ինչպես ասվեց, Շահիդու բառարանը մեծ տարածում է ունեցել, ուստի և մի քանի դարյան բազմաթիվ ընդօրինակություններ կան ցրված աշխարհի չատ ձեռագրատներում (Լոնդոնում, Փարիզում, Բեռլինում, Լենինգրադում և այլուր[18]): Շահիդու բառարանի մի ընդօրինակությունը կա նաև Երևանի Մատենադարանի արաբատառ ֆոնդում՝ № 325, որը և օգտագործում ենք մեր սույն աշխատանքում:

Այս բառարանը կազմված է ոչ թէ այբբենական կարգով բառահոդվածների մեկնության սկզբունքով, այլ արևելյան բանաստեղծության տաղաչափական կարգի կիրառումով, ինչպես Դպիրն է ասում, «յանկաւորութեամբ և վանկաչափութեամբ», որի հետևանքով և մատյանը բաղկացած է 27 հատվածից, որոնք համապատասխանում են պարսից բանաստեղծության տաղաչափության 27 ձևերին, իսկ բառերը ցրված են ողջ բառարանում՝ նայած նրանց վանկակազմիչ տարրերը որ ձևի տակ են ընկնում: Այսպես օրինակ՝ پیغمبر *(=մարգարե),* توانکر *(=հարուստ),* کدا *(=մուրացկան) բառերը օգտագործված են հետևյալ երկտողում*

هم دخی پیغمبر اول کیم ویره حقدن خبر بای توانکر درر یوخسله دیرلر کدای

որ գրված է بحر بسیط مثمن مقبوض *(պահր բասիթ մոսաման մակբուղ)*

չափով և որի ֆորմուլան է

مفتعلن فاعلن مفتعلن فاعلن [19]

Այս սկզբունքը կիրառված է հատուկ ուսուցողական նպատակներով, կամ, ինչպես Դպիրն է գրում, «սակս դիւրընկալ լինելոյ բառիցն ի միտս ընթերցողաց»[20]: Բառարանագրական այս ձևը, որ երկար դարեր օգտագործվել է արևելյան չատ գրականությունների մեջ, սխոլաստիկ բնույթ էր կրում և միանգամայն մերժելի էր Գեորգ Դպրի պես լուսավոր ու զարգացած գիտնականի համար: Ուստի և տարօրինակ չէ, որ նա՝ չնայած ձեռքի տակ եղած պարսկերեն բառգրքերից չատերի տաղաչափյալ բնույթին, ընտրում է բառերը այբբենական կարգով տալու սկզբունքը:

Պետք է նշել, որ Շահիդիի բառգրքի թարգմանությունը սոսկ թարգմանություն չէ, այլ, ավելի ճիշտ, նրա բառացանկից օգտվելու միջոց: Խնդիրը այն է, որ Շահիդին

17 Անդ էջ, 4բ:

18 Catalogue des manuscrits et xylographes orientaux de la Bibliotèque Impériale publique de St. Petersbourg. 1852, p. 428-430; Die Arabischen, Persischen und Türkischen Handschriften der Kaiserlich-Königlichen Hofbibliothek zu Wien… Wien, 1865; Catalogue of the Persian manuscripts in the British Museum. By Charles Rieu, Ph. D. Keeper of the oriental Mss. V. II, 1881, p. 513; Die Handschriften-Verzeichnisse der Königlichcn Bibliothek zu Berlin. Berlin, 1888, S. 208; Catalogue of the Persian, Turkish, Hindustani, and Pushtu manuscripts In Bodleian Library… part I, The Persian manuscripts, Oxford, MDCCCLXXXIX, p. 999-1000; Catalogue des Manuscrits Persans, par E. Blochet, Paris, MDCCCCXII, p. 235.

19 Տե՛ս Երևանի Մատենադարանի արաբատառ ֆոնդի ձեռ. № 325, էջ 4ա-4բ:

20 Երևանի Մատենադարանի ձեռ. № 9699, էջ 4ա:

մերթ պարսկերեն բառի դիմաց լոկ մեկ բառով տալիս է թուրքերեն թարգմանությունը, ինչպես օրինակ՝

اسب ات و مادیان قصر غ وهم کره طای [21]

և մերթ թուրքերեն բառն է տալիս, ապա՝ նրա պարսկերեն թարգմանությունը, ինչպես օրինակ՝

کت برو سویله بکو کل بیا [22]

Մինչդեռ Գեորգ Դպիրը նախ արաբերեն տառերով տալիս է պարսկերեն բառը, ապա դրա հայերեն տառադարձությունը, այնուհետև բառի հայերեն, թուրքերեն և արաբերեն բացատրությունները (վերջիններս հայատառ, իսկ լուսանցքներում մերթ ընդ մերթ նաև արաբատառ): Այս բոլորից հետո նա տալիս է բառի ստուգաբանությունը, երբեմն նաև նշում է, թե քերականական ո՛ր կատեգորիային է պատկանում: Բերենք մի երկու օրինակ, նույնությամբ պահպանելով ձեռագրի պատկերը.

باران	*Պարան. անձրև. եաղմուր. մադառ. և են այն կաթիլքն ջուրց՝ որ տեղան ի յերկնից. բառ այս է ընդունելութիւն ծագեալ ի բայէն Պարիյտեն, որ է տեղալ և նշանակէ տեղացող, բայց յատկացեալ է ի նշանակել զանձրևն[23]:*	یغمور
ششتا	*Շէչթա. վեցտղի նուագարան. դանպուր. արապերէն ևս Դանպուր: Այս բառ բարդեալ է յանուանցս՝ չէչ և թար. և նշանակէ վեցլաբեան. որոյ՝ վասն թեթևութեան ի բաց ընկեցեալ տառն՝ թէ ասացաւ չէչթա[24]:*	—
—	*Հէմռահ. ուղեկից. եօլտաչ. րեֆիդ. բառս այս բաղադրեալ է ի մասնկանէս Հէմ. և ի բառէս ռահ. և գիտելի է զի բաղադրական մասնիկս Հէմ. որ պատասխանէ հայերէն կից բառիւ. և թուրքականիս տաշ. նախադրեալ յանուանս պարսից, ցուցանէ գկցորդութիւն. վասն զի հէմռահ նշանակէ զայն ոք, որ ի միասին է ընդ ումեք ի ճանապարհի և ուղեկից է նմա զորպիսին կոչեմք թուրքերէն եօլտաչ[25]:*	—

2. Վեհպիի պարսկերենից-թուրերեն բառարանը: *Իր բառարանի համար աղբյուր ծառայած Շահիդիի բառարանը հիշատակելուց հետո Գեորգ Դպիրը, առանց հեղինակի անունը տալու, խոսում է նաև մի այլ աղբյուրի մասին. նա գրում է. «Ապա իսկ և իսկ գտեալ և այլ մատեան՝ այն ինչ նորոգ յօրինեալ ըստ օրինակի գրոցն Շահիտի հեղինակին, զայն ևս ի նոյն յարեցի»[26]:*

Թե այս նշումով Դպիրը ի՛նչ բառարան է ակնարկել, տեղեկանում ենք Մատենադարանի № 9699 ձեռագրից: Այստեղ Շահիդիի բառարանին հաջորդում է մի ուրիշ բառարան հետևյալ երկտող տիտղոսաթերթ-ծանոթագրությամբ՝ «Այլ բառարան իմն նորոգ

21 Երևանի Մատենադարանի արաբատառ ֆոնդի ձեռ. № 325, էջ 4ա:
22 Անդ:
23 Երևանի Մատենադարանի ձեռ. № 9699, էջ 7ա:
24 Անդ, էջ 8ա:
25 Անդ, էջ 10 ա:
26 **Գեորգ Դպիր**, *Բառարան պարսկերէն*: Յառաջաբան հեղինակին, էջ 48:

յօրիմեալ»[27]: *Սրան հաջորդող «Յառաջաբանութիւն ինչ»-ում Դպիրը հետևյալն է պատմում իր այս աղբյուրի հեղինակի մասին:*

«Գործս այս, – գրում է Գեորգ Դպիրը, – է աշխատութիւն այլոյ ուրուք հեղինակի Վէհպի անուն… Ի թուականին հիճրէթին 1197 [1197/1783] արարեալ է նորոգապէս գՀաւաքումն մեկնութեան պարսկական բառից այսոցիք ի թուրքաց բարբառ՝ ոտանաւոր չափմամբ, նմանակ իմն գրոցն Շահիտի բանաստեղծին»[28]:

Այս ձեռագրի տվյալների համադրումը տպագիր բառարանի վերը բերված առաջաբանի տվյալների հետ կասկած չի թողնում, որ Դպրի երկրորդ աղբյուրը Վեհպիի բառարանն է եղել:

Վեհպի Սուլթան-Զադեն բուն անունով Մուհամմադ իբն Ռաշիդ, բնիկ Մարաշցի էր: Նա հաստատված է եղել Կոստանդնուպոլսում և 18-րդ դարի երկրորդ կեսին ժամանակի Սուլթան Աբդուլ Համիդի կողմից դեսպանությամբ ուղարկվել է Պարսկաստան: Նա շրջել է երկրի բազմաթիվ քաղաքներում, երկար ժամանակ ապրել է Շիրազում և հիմնավորապես ուսումնասիրել պարսկերենը: Վեհպին իր բառարանում բացի այն, որ օգտագործել է Շահիդիի բառարանի նյութը, ավելացրել է նաև «զբազմութիւն այլևս պիտանի և հարկաւոր բառից, որք ո՛չ գտանին ի գիրս նորա (իմա՝ Շահիդիի)»[29]:

Դպիրը այս բառարանը ևս թարգմանում է հայերենի: Այս կապակցությամբ ինքը թարգմանիչը գրում է, որ տեսնելով Վեհպիի բառարանը, «ընդ գեղեցիկ չարակարգութիւն բառից նորին յոյժ ախորժացեալ՝ կամեցայ յաւելլով ի նոյն բառս հայերէն ի մեկնութիւն նորուն, յեղուլ ի հայկական տառ և առնել զնոյն գիրք իմն պատւական և պայծառ: Վասն յորոյ յեղաշրջեալ ի զարդ վայելչութեան Արամեան լեզուի. վայելուչ իմն յօրինեցի զնա ի վայելս ուսումնասէր անցանց մերազնէից, որ է առաջիկայ գիրքս այս. ես Գէորգ չնչին Դպիր Կոստանդնուպոլսեցի, որդի տեառն Յօհաննու քահանայի ի տէր հանգուցելոյ: Եւ այս պատահեաց ի թուականին հայոց ՌՄԽԳ (1794) յամսեանն յունիսի…»[30]:

Թվում է, թէ այստեղ գրիչ Դանիելը արտագրության ժամանակ չփոթել է Դ-ն Գ-ի, որովհետև Շահիդիի բառարանը, որը Դպիրը ավելի շուտ է թարգմանել, կրում է 1795 (ՌՄԽԴ) թվականը: Հավանաբար Վեհպիի բառարանը, որը ծավալով մի փոքրիկ գրքույկ է, թարգմանվել է նույն 1795 թվականին:

Վեհպիի բառարանի մի քանի ընդօրինակությունները պահպանվում են Լոնդոնում ու Վիեննայում[31]: *Ասիայի ժողովուրդների ինստիտուտի Լենինգրադյան բաժանմունքի ձեռագրատունը A 1565 թվահամարի տակ պահպանված է* تحفه وهبی *«Թեոհֆեի Վեհպի» («Վեհպիի պարգևը») խորագրով մի ձեռագիր, որը դժբախտաբար պակասավոր մատյան է, ավելի ճիշտ տարբեր թերթերից բաղկացած թուրքերեն մի քասիդե է: Էջ 1-ը բառարանի սկիզբն է, որը խառնվել է քասիդեի թերթերին և կազմվել է այս մատյանում:*

---

27 Մատենադարանի ձեռ. № 9699, էջ 64ա:
28 Անդ, էջ 64բ:
29 Անդ:
30 Անդ:
31 Die arabischen, p*ersischen und türkischen Handschriften der Kaiserlich-Königlichen Hofbibliothek zu Wien…* Wien, 1865, S. 143; Catalogue of the Persian manuscripts in the British Museum. By Charles Rieu, V. II, 1881, p. 515.

Վեհպիի բառարանը նույնպես չափածո է: Հեղինակը այն կազմել է Շահիդիի նմանողությամբ, բայց հարմարեցնելով «ըստ կարգի վերջավորութեան արաբիական տառից»[31ա]:

Գեորգ Դպիրը Վեհպիի բառարանը նույնպես բառացի չի թարգմանել, այլ միայն օգտվել է նրա բառապաշարից ու թուրքերեն բացատրություններից: այս թարգմանությունը, որ ընդգրկում է № 9699 ձեռագրի 64բ–111բ էջերը, մատուցված է հետևյալ ձևով. նախ հայատառ տրվում է պարսկերեն բառը, ապա նրա թուրքերեն (հայատառ) և այնուհետև հայերեն նշանակությունները: Անհրաժեշտության դեպքում բառերը ստուգաբանվում են, հատկապես նշվում են դերբայների կազմության ձևերը, բայերի տարբեր եղանակները.

Այսպես օրինակ.

Տանա. պիլիճի. գիտակ. գիտօղ և է սա ներգործական ընդունելութիւն Տանիսթէն բային. որ է գիտել. պիլմէք. (էջ 65ա):

Փէրրէնտէ. ուչըճի. թռչօղ. և է սա չէզոքական ընդունելութիւն փէրրիյտէն բային, որ է թռչել. ուչմագ. որոյ հրամայականն լինի փէրր. և ապառնին փէրրէտ. և գիտելի է, զի ձայնս էնտէ, որ է վերջամասնիկ ընդունելութեան յարեալ առ իւրաքանչիւր հրամայական բայ, ծագի ընդունելութիւն ներգործական կամ չէզոքական. որպէս ակներև տեսանի. (էջ 66ա):

Կիւզէրանիյտէն. կիւչիւրմէք. անցուցանել. հրմ. կիւզերան և ապառնի կիւզէրանէտ և է սա անցողական կիւզէչթէն բային. (էջ 78ա):

3. Հալիմիի պարսկերեն-թուրքերեն բառարանը: *Երրորդ հեղինակը, որի բառարանը աղբյուր է եղել Գեորգ Դպիրի համար, Հալիմին է:*

Լութֆուլլահ իբն Աբի Յուսուֆ ալ-Հալիմին 15-րդ դարի թուրք ականավոր բառարանագիրներից է: Սրա բառարանը «զոր ոտանաւորելով չինեալ, և թարգմանաբար թուրքական բարբառով յօրինեալ» գրված է հիճրեթի 850 (1446/47) թվականներին և մեծ տարածում է ունեցել: Ներկայումս նրա բազմաթիվ ընդօրինակություններն ու տարբերակները կան Լոնդոնում, Բեռլինում, Փարիզում, Լենինգրադում և այլուր[32]:

Ասիայի ժողովուրդների ինստիտուտի Լենինգրադյան բաժանմունքի ձեռագրատանը պահվում է Հալիմիի բառարանի ձեռագիր մի օրինակը: (№ B 554), որը ոչ թե չափածո է, այլ արձակ: Այստեղ բառերը դասավորված են արաբական այբուբենի կարգով: Բառարանը ստվար մի գիրք է՝ բաղկացած 148 մեծադիր թերթերից: Այս բառարանի կարևոր առանձնահատկություններից և միաժամանակ առավելություններից են բառերի քերականական կատեգորիաների նշումները և հատկապես միջնադարյան պարսիկ

31ա Մատենադարանի ձեռ. № 9699, էջ 64բ:

32 Catalogue des manuscrits et xylographes orientaux de la Bibliotèque impériale publique de St. Petersbourg, 1852, p. 431-433; Die Handschriften-verzeichnisse der Königlichen Bibliothek zu Berlin. Berlin, 1888, S. 206; Catalogue of the Persian, Turkish, Hindustani, and Pushtu manuscripts in Bodleian Library… part I, The Persian manuscripts, Oxford, MDCCCLXXXIX, p. 999; Catalogue des manuscrits Persans, par E. Biochet, Paris, MDCCCCXII, p. 224.

գրողներից կատարված վկայությունները: Բերենք մի քանի օրինակ մեզ ծանոթ Լենինգրադյան արձակ տարբերակից.

آباد شین معمور معناسنه
ذکر اخاد بدین بادشاه باد آباد
که کرد ملک جهانرا بعدل داد آباد[33]
آمیز آمیختن لفظندن مشتقدر اسم مصدر استعمال النور قارشق
معناسنه و صیغه امر و بعضی ترکیبلرده صفت استعمال
النور شکر آمیز کیبی[34]
برزکر اکنجی حارث معناسنه ... انوری
کار خالد جز بجعفر کی شود هرکز تمام
کان یکی جلاهکی داند دکر برزکری[35]

Հալիմիի այս բառարանի դպիրյան թարգմանության բնույթի ու կառուցվածքի մասին տեղեկանում ենք իր՝ Գեորգ Դպրի հիշատակագրությունից, որ կցված է եղել թարգմանությանը որպես առաջաբան և որը 1893 թ. հրատարակել է Ա. Այվազյանը՝ քաղելով Հովհաննես Արծրունու մոտ պահպանված մի ձեռագրից. «...Հեղինակն գործոյս Հալիմի անուն, – գրում է Դպիրը, – յօրինեալ չարադրեաց զայս գիրս մեկնութեան բառից ոտանաւոր չափմամբ ըստ պէս պէս վերջաւորութեան զանազան վանկից և տառից. բովանդակեալ զնոսին ի գլուխս 24. և զետեղեալ ի սմին մատենի գյոլովութիւն պարսկական բառից, մեկնեաց զնոսին թուրքական լեզուաւ յորում մինչև ի գլուխն իննևտասաներորդ՝ չարակարգեաց մի միայն զյոգնախուռն գումարութիւնս անուանց, և այլոց մասանց բանի, բաց ի բայէ: Եւ անտի մինչև ի գլուխն 23, զխմբաւորութիւնս բայից: Եւ ապա ի 24 երրորդում գլխի կարգեաց բանս ինչ ուսանելիս ըստ ոճոյ քերականութեան խրատու: Խօսելով ի նմա զձևակերպութենէ դիմաց անցելոյ ամանակին բայից, և զկազմութենէ հրամայական եղանակին, նաև ապառնի և ներկա և անկատար ամանակաց: Եւ զընդունելութեանց կրաւորականաց և կրաւորակերպ չէզոքականաց, այլև ներգործականաց և ներգործակերպ չէզոքականաց և զանուանց բայածականաց, և զբայից անցողականաց: Նաև զհոլովակերտ նախադրութեանց և զվերջաւորութեանց ածանցականաց, և զյոգնականակերտ մասնկանց, անուանց. և ևս՝ զբաղադրական մասնկանց, որք դնեն յառաջս բայց և զյօդորդութեանց բայից, թէ էականաց և թէ արտակայականաց, և աւարտեաց զսոյն ի թուականի հիճրէթին 850...

Արդ՝ ընթերցեալ զմատեանս զայս, կարի իմն ախորժելի թուեցաւ ինձ վայելուչ կարգաւորութիւն բազմահոյլ բառից սորին, և կամեցեալ յեղուլ զսոյն ի հայ բան, սկիզբն արարի գրել, և յաւարտ հասուցեալ կատարեցի օգնականութեամբն Աստուծոյ մի միայն զբառս մատենին ըստ կարգի քաղեալ և ո՛չ զոտանաւորացն փոյթ ինչ արարեալ... և այս պատահեաց ի թուականին հայոց ՌՄԽԴ (1795), յօգոստոսի 24»[36]:

33 Ասիայի ժողովուրդների Լենինգրադյան բաժանմունքի ձեռագրատան № B 554 ձեռ., էջ 26:
34 Անդ, էջ 9:
35 Անդ, էջ 29ճ:
36 **Ա. Այվազյան**, *Շար հայ կենսագրությանց*, պրակ Ա., էջ 27-29:

4. Այլ աղբյուրներ: *Վերոհիշյալ բառարաններով չեն սպառվում այն աղբյուրները, որոնցից օգտվել է Դպիրը: Այս կապակցությամբ իր բառարանի առաջաբանում նա հետևյալ ուշագրավ նշումն է արել. «արարի զսոյն չարակարգութիւն իմն ըստ կարգի հայկական այբուբենից, յորում գրեցի և զայլ բառս ինչ յայլոց բառարանաց հաւեալ, որք ոչ գոն յերեսին ի նոսին. իւրաքանչիւրոցն առաջի դնելով զմեկնութիւնս իւրեանց»[37]:*

Այս բառարանների հեղինակների անուննները (Շիւուրի, Քէմալ Փաշազատէ, Ճիհանկիյր և այլն) նա բարեխղճորեն հիշատակում է այն բոլոր դեպքերում, երբ այս կամ այն բառի նշանակությունը տալու համար օգտվում է նրանցից. ըստ որում նա քննադատաբար է մոտենում իր աղբյուրներին և անհրաժեշտության դեպքում մեկի ստուգաբանությունը ճշտում է մյուսով: Այսպես օրինակ.

«ԱՖՐՈՒՇԷ آفروشه *է սա տեսակ իմն պատուական հրուշակի. Պիր ձէվ լադիյֆ ճէվա տիւր: Ասէ և ս Ճիհանկիյր ի բառարանի իւրում թէ լուեալ է մեր ի բնակչացն Կիլանու եթէ* ԱՖՐՈՒՇԷ *է տեսակ իմն կերակրոյ, որ յատուկ է բնակչացն Կիլանու. որ և ասի* ԷՖՐՈՒՇԷ. *նաև* ՖԻՐՈՒՇԷ»[38]:

«ԺԷՄԱՎԷՐՏԷ ەدرآورم ژ *Նշանակէ տանտիկին, որում ամնայն կանայք տանն՝ պատիւ մատուցանեն. թուրքերէն* Մամի, եա՛նի էվինկ պիւյիւք խաթունի: *Զայս բառ մէկնէ Շահիտին լինել ծնուցիչ կամ որ նոյն է մանկաբարձ, ասելով* Ավէրտէ ժէմ. *յորում իմացեալ լինի ժէմն գոլ բառ պարսկական, իսկ* Ավէրտէն *թուրքական. բայց Շիւուրին գրէ որպէս ի վերոյ. իսկ այլք իբր նոյնանշան որոշակի գրէն. և զերկոսին ասեն լինել պարսկական, և նշանակել մանկաբարձ. էպէ»*[39]:

Ի վերջո իբրև աղբյուր պետք է հիշատակել նաև այն բառարանները, որոնք նա թարգմանել է 1764–1777 թվականներին և պարսկական ոճերի ցանկերը, որոնց մասին հիշատակվեց մեր հոդվածի սկզբում:

* * *

Մոտ երեսուն տարվա գիտա-մանկավարժական ու թարգմանչական գործունեությունից, ինչպես և բազմաթիվ բառարանների ու ձեռնարկների համակողմանի ուսումնասիրությունից հետո է միայն Գեորգ Դպիրը լծվում իր բառարանի ստեղծման աշխատանքին: Նախաձեռնելով այս դժվարին գործը, Դպիրը առաջին հերթին մանկավարժական նպատակներ է հետապնդել:

Ըստ արժանվույն գնահատելով միջնադարյան պարսկերեն բառարանները և բազմաթիվ լրացումներով հայերենի փոխադրելով նրանցից մի քանիսը, Գեորգ Դպիրը քաջ գիտակցում էր լեզվի յուրացման գործում դրանց հարուցած բազում դժվարությունները, մասնավորապես նյութի չափածո մատուցման սխոլաստիկ բնույթը:

Ահա և այս սկզբունքի դպիրյան գնահատականը. «Եւ թէպէտ կարի իմն դիւրել զճանապարհ ուսման ո՛չ է բարիոք, զի զհամբակ ուսումնասէրն պղերգ առնէ այն դիւրութիւն. և ի նոյն ապաստանեալ և անփոյթ եղեալ, ո՛չ յարանայ ի դեգերանս կրթանաց: Բայց և յոյժ դժուարին առնել, և առապար կացուցանել զուսմանն չաւիղ, դարձեալ ոչ է

37 **Գեորգ Դպիր**, *Բառարան պարսկերէն*, Յառաջաբան հեղինակին, էջ 48:
38 Անդ, էջ 37:
39 Անդ, էջ 141:

բարւոք, զի այն դժուարութիւն՝ կորուստ գործէ ժամու և ժամանակի յորմէ ձանձրութիւն հետևեալ ուսանողին՝ տաղտապի և լքանի»[40]:

Այս իսկ պատճառով էլ նա հետևում է բառապաշարը ըստ այբբենական կարգի դասավորելու վաղուց անտի հայ բառարանագրության մեջ ընդունված սկզբունքին:

Յուրաքանչյուր բառահոդված հետևյալ պատկերն է ներկայացնում. նախ տրվում է պարսկերեն գլխաբառը հայերեն նշանագրերով, ապա նույնը արաբերեն տառերով, այնուհետև բառի հայերեն ու թուրքերեն (հայատառ), երբեմն նաև արաբերեն ու չաղաթայերեն (հայատառ) նշանակությունները: Բառարանի մեջ պարսկերենը տրված է թուրքական արտասանությամբ, մի հանգամանք, որ այս ինքնատիպ ու արժեքավոր աշխատության պակասություններից է:

Պրոֆ. Հր. Աճառյանը, բարձր գնահատելով Գեորգ Դպրի բառարանը որպես առաջին պարսկերեն-հայերեն տպագիր բառարան և որպես համեմատաբար զուտ պարսկերեն բառերի հավաքածո, գրում է.

«Որքան որ Գեորգ Դպրի բառարանը գովելի է, այնուամենայնիվ ունի մի քանի հիմնական թերություններ: Ամենից գլխավորն այն է՝ որ բառարանը հայերեն տառերով է. մի որևէ պարսկերեն բառի նշանակությունը իմանալու համար՝ նախ պիտի իմանանք նրա ընթերցումը, և հետո հայերեն տառերով նույնը փնտրելով բառարանի մեջ, գտնենք նշանակությունը... Երկրորդ՝ որ Գեորգ Դպիրը պարսկերեն բառերը կարդում է օսմանյան արտասանությամբ... և բառերը չարելով այս արտասանության հայերեն տառադարձության համեմատ, չափազանց դժվարացնում է բառարանի գործածությունը նրանց համար, որոնք տարբեր արտասանության են վարժված: Ահա այս տեսակետով Գեորգ Դպրի պատվական աշխատությունը պետք է համարել արդեն անբավարար...»[41]:

Հաճախ բառահոդվածները վերջում ունեն պարսից ականավոր գրողներից վկայություններ, որոնք ցույց են տալիս տվյալ բառի գործածությունը գրականության մեջ: Սա մի նորություն էր մեր բառարանագրության մեջ և որպես այդպիսին կանխում էր Հայկազյան բառարանին (1836 թ.), որտեղ վկայությունների ձևը կիրառված է ավելի կատարելագործված[42]: Բառարանում այս վկայությունները մերթ ընդ մերթ թարգմանված են հայերենի[43]: Բերենք մի օրինակ, որը թեև ընդարձակ, բայց բառարանում կիրառված սկզբունքների բնորոշ ու գեղեցիկ մի նմուշ է.

---

40 **Գեորգ Դպիր**, *Բառարան պարսկերէն*, Յառաջաբան ձեղինակին, էջ 48:

41 *Բառարան պարսկերեն-հայերեն*, Կազմեց Գարեգին քահ. Հ. Կիրակոսյան, Ջուղա-Սօլահան, 1933: Հ. Աճառյանի «Հառաջաբանը», էջ VIII-IX:

42 Մխիթար Աբբայի բառարանում («Բառգիրք Հայկազեան լեզուի», Վենետիկ, 1749) առանձին բառերի տարբեր առումների համար ձղում է արվում միջնադարյան մեր ձեղինակներին ու աղբյուրիներին՝ առանց խոսքի մեջ բառի օգտագործման օրինակներ բերելու:

43 Մենք ձակամետ ենք կարծելու, որ Դպիրը թարգմանաբար տվել է բոլոր վկայությունները, սակայն բառարանի ձրատարակիչ Հակոբ Տյուզյանը ձավանաբար ձրատարակությունը արագացնելու և կամ տպագրության ծախսերը կրճատելու նպատակով ձանել է այդ թարգմանությունները, դրանք համարելով թերևս «կրկնաբանութիւն»: Այս ենթադրության համար մեզ կովան են ձանդիսանում բառարանի առաջաբանում ձրատարակչի արած վերապաձումները. նա գրում է, որ ինքը ձոգացել է «յապաւել զաւելորդս, զորս ուրեք կրկնաբանութեամբ և ուրեք անխտրութեամբ մէջ բերէր» (տե՛ս «Բառարան պարսկերէն», էջ [Ը]): Նկատելի է, որ բառարանի սկզբնական էջերում վկայությունները ավելի շատ են

«ԱԶԱՏ آزاد *Անկապ.* պիզայտ: *Եւ այս ևս ի գործ ածի ըստ քանի մի նշանակութեամբ. զի ասեն* Ֆէլան պէնտէի ազատ. *և ցուցանէ զերծեալ ի ծառայութենէ կապանաց:* ԱԶԱՏ *կոչի նաև* Սէրվն, *այսինքն նոճին: Եւ* Սուսէնն *այսինքն չուշանն, և ցուցանէ զնոսա զերծ ի կապից և ի գոլոյ պատատեալ յոստ ինչ. ըստ այնմ* Քի՞սթ մէվլայ աճի օշատէթ ֆիւնէտ: Հէմչու սերվիւ սուսեն ազատէթ ֆիւնէտ: *Հեղինակ ոմն վասն* Սուսենին, *որ է չուշանն.* ԱԶԱՏ *կոչէ, սակս լինելոյ նորա սոսկ և թափուր ի գունոյ և յերանգոյ: Ամենայն ծառ՝ որ ոչ ունի պտուղ, որպէս* Սէրվ և Սուսէն, ԱԶԱՏ *անուանեալ է: Գրեալ են և վասն* ԱԶԱՏ *անուանելոյ* Սէրվին *այսինքն Նոճւոյն. զի մինչ յաւուր իմում Սիրահարն Մէճնուն վառեալ գոլով ի սէր Լէյլիին, վարանեալ չրջէր. տէսանէ զի պարտիզպան ոմն տապար հարեալ կամի հատանել զծառ Նոճի բարձրահասակ, և նմանեցուցանելով հասակի Լեյլի կոչեցեալ տարփածուին իւրոյ, աղաչեալ զպարտիզպանն և գնոյ զՆոճին զայն առեալ, զերծոյց ի հատմանէ, յոյր սակս անուանեցին զՆոճին զայն* ԱԶԱՏ, *և յետոյ անցմամբ ժամանակաց և բազում գործածութեամբ, անուն եղեալ է ամենեան Նոճեաց: Գրէ և չարագրօղ գրոց Կիւլխսթանին թէ* Հաֆիյմիրա փիւսիյտէնտ ֆի չէնտիյն տիրախթի նամվէր ֆի խիւտա աֆէրիյտէ էսթ իւպէրիմէնտ կետտանիյտէ. ֆիյչ եէֆրա ազատ նէ՛ խանտէ, մէկէր սէրվբա ֆի ֆիյչ սէմէր նէ՛ տարէտ. կիւֆթ տիյկէր տիրախթան կեահի սէմէր տարէնտ, իւ կեահի պի պէրկ իւ փէժմիւրտէ. իւ սէրվրա ֆէմէ վագթ խուպ եսթ իւ թազէ իւ թէր. իւ իյն՝ սըֆթաթի ազատէկեան էսթ: *Որ այսպէս Թարգմանի ի հայկական բարբառ: Զիմաստուն ոմն հարցին թէ այսքան ծառք են անուանիք, զորս աստուած ստեղծեալ է և արգասաւոր արարեալ, բնաւ միումն ազատ անուն չէ կարդացեալ, եթէ ոչ՝ նոճւոյն, որ ամենևին պտուղ ո՛չ ունի. պատասխանեալ ասաց թէ Այլք ի ծառոց մերթ պտուղ ունին և մերթ, անտերև և թառամեալ են. և նոճւոյն բոլոր ժամանակն գեղեցիկ է և դալար և զուարճ. և այս որակութիւն ազատականացն է: Սոյն հեղինակ այլուր ասէ և զայս ինչ թէ.* Պէ սէրվ կիւֆթ եէկի միյվէ՛ն ֆէ մի առի, ֆէվապ տատ ֆի ազատէկեան թէֆիտէսթ էնտ: *Այսինքն ցնոճին ասաց ոմն՝ պտուղ ոչ բերես. ետ պատասխան թէ ազատականք դատարկաճեռն են: Դարձեալ ԱԶԱՏ է անուն ծառոյ իրիք որ լինեի ի գաւառին Կիյլանու, և է սա ծառ իմն բարձրահասակ և բարեձև որ բարձրանայ յերկրէ մինչև ի կանգունս վաթսուն կամ եօթանասուն. և ունի ուղէչս որպէս զծառն* Սաֆէվաէրի. *և է մինչև ի ծայր իւր միաչափ հաւասարութեամբ: Եւ ևս է անուն տեսակի միոջ ճկան, որ չատ լինի ի մէջ ծովուն Կիյլանու: Նշանակէ զարձեալ և զտեսակ իմ ծառոյ յորոյ տերևոյն կամ ի զալար ոստոցն՝ եթէ ուտիցեն կենդանիք, առժամայն սատակին»*[44]:

Պարսից գրողներից Գեորգ Դպրի բերած օրինակները մեծ մասամբ բարոյա-խրատական բնույթ են կրում: Սա հետաքրքիր մանրամասն է և ցույց է տալիս Դպրի ուսուցողական նպատակները:

Գեորգ Դպրի բառարանը հարուստ է նաև քերականական դիտելիքներով: Որպես կանոն տրվում են պարսկերենի անկանոն բայերի հրամայականն ու ապառնին. օրինակ.

Արասթէն آراستن *Զարդարել… Հրամայական* Արայ. *և ապառնի* Արայէտ *(էջ 33):*

և ընդարձակ, քան միջին և վերջին մասերում: Թերևս սրանց որոշ մասն էլ կրճատված, բեռնաթափված լինի վերոհիշյալ նպատակով:

44 **Գեորգ Դպիր**, *Բառարան պարսկերէն*, էջ 2:

էֆրուխթէն آفروختن *Լուցանել զկրակ և զճրագ… Հրամայական* էֆրուզ. *և ապառնի* էֆրուզետ *(էջ 106):*

Թաֆթէն تافتن *Ջերմանալ և ջերմացնել… նաև ոլորել… Եւ դարձուցանել… Հրամայական* Թապ. *և ապառնի* Թապէտ. *և ի հրամայականէ աստի բղխի այլ աներևոյթ, որ է* Թապիյտէն. *և գնոյն նշանակէ (էջ 112):*

Սախթէն ساختن *Կազմել, այսինքն չինել… (Հրամայական* սազ. *և ապառնի* սազէտ*) (էջ 465):*

Ֆիւրուխթէն فروختن *Վաճառեալ… (Եւ ըստ այսմ լինի հր.* Ֆիւրուշ *և ապ.* Ֆիւրուշէտ*): 2. Լուցանել… (Եւ ըստ այսմ հրամայականն լինի* Ֆիւրուզ, *և ապառնի* Ֆիւրուզէտ, *և ներգործական ընդունելութիւն* Ֆիւրուզէնտէ*)… (էջ 708):*

Երբեմն որպես բառագլուխ բերվում է բայի հրամայական ձևը: Այս դեպքում անպայման նշվում է անորոշ դերբայը. օրինակ.

Միյր میر *Է հր.* Միւռտէն *[մեռնել] բային. 2. Իշխան, գլխաւոր ժողովրդեան. (և ըստ այսմ է համառօտեալ յարաբացւոց* էմիյր *բառէն)… (էջ 307):*

Միտիհ مدی *(Հրամայականն* Տատէն *բային) Տուր… ասի և* Պիտիհ *(էջ 308):*

Պարսկերենում կան բայեր, որոնց անցյալ ժամանակի երրորդ դեմքը օգտագործվում է որպես անորոշ դերբայ: Նման դեպքերում Դպիրը անպայման ծանոթագրություն է տալիս այդ մասին. օրինակ, նշելով զատ *(زاد) բառի տարբեր իմաստները, նա գրում է. «Է անցեալ ժամանակի երրորդ դեմն* Զատէն *բային,և նշանակէ ծնաւ… որ և մերթ ի գործ ածի ի տեղի աներևոյթ բայի. զի ասի* Մի թիւաձէտ զատ. *այսինքն կարէ ծնանիլ» (էջ 54-55):*

Առանձին դեպքերում բառարանում նշված է նաև բայերի սեռը. օր.

Ահախիյտէն آخیدن *Նոյն է ընդ* Ահամիյտէն. *դադարիլ կամ հանգչիլ… որոյ անցողականն* Ահախանիյտէն. *լինի… (էջ 32):*

Միյրանիյտէն میرانیدن *(անցող. Միւռտէն բային) Մեռուցանել… (Հրամայական* Միյրան *ապառնի* Միյրանէտ*) (էջ 307):*

Դերանունների ուղղական, տրական ու հայցական հոլովները բերվում են որպես առանձին բառեր, իհարկե համապատասխան նշումով. օր.

Մէն من *(Դերանուն էական առաջնոյ դիմի). Ես… (էջ 299):*

Մէրա مرا *Է տրականն, և մերթ հայցականն դերանուանս* Մէն *(էջ 302):*

Մա ما *Է յոգնականն* Մէն *բառին (էջ 289):*

Մարա مرا *Է տրականն ու հայցականն՝* Մա *բառին (էջ 295):*

Որոշ դեպքերում որպես առանձին բառեր են բերվում որակական ածականների բաղադրական ու դերադրական աստիճանները. օր.

Պիհ به *բարիոք, բարւոք… (էջ 440):*

Պիհթէր بهتر *(բաղդատականն բառին* Պիհ*)… (էջ 440):*

Պիհթերին بهترین *(դերադրականն բառին* Պիհ*)… (էջ 440):*

Սախթ سخت *խիստ, կարծր կամ պինտ… (էջ 465):*

Սախթեէր سختتر *(բաղդատականն* Սախթ *բառին) խստագոյն... որոյ գերադրականն լինի* Սախթեէրիյն, *որ է ևս խստագոյն (էջ 465):*

Բառարանում հանդիպում ենք նաև բազմաթիվ ստուգաբանությունների, որոնք հիմնականում ճիշտ են. օրինակ.

Խուրշիյտ خشورت *կամ* Խօրշիյտ. *Արեգակն.* Կիւմէչ. *արապերէն* Շեմս: *Ի բարդեալ ի բառիցս* Խուր, *որ է կրճատեալ ի* Խուրէ *բառէս, որ նշ. լոյս՝ ըստ վէհլէվեան բարբառոյ և* Շիյտ՝ *արև (էջ 208):*

Զիյն زين *Նշանակէ թամբ... Եւ ընդ այսմ է սա պարզ բառ: Դարձեալ բառս* Զիյն. *գոլով բաղադրեալ՝ է ասել, Յայսմանէ զի է բաղկացեալ ի սկզբնականի նախդրէս* Զի, *և ի ցուցական անուանէս* Իյն *(էջ 69):*

Էժտէրհա ادرجا *Բառս այս նախագոյն* Էժտէր *է. ընդ որում յարակցեալ գյոգնականացուցիչ վանկս* ها Հա, *այնպէս ի գործ ածեն. բայց ո՛չ է յոգնական, այլ եզական և նախ նշանակէ մեծ օճ. վիշապ. ասի թէ բնականաբար կեանք օձին ժամանէ մինչ ի հազար ամ, որում եթէ վնաս ինչ ոչ հասանիցէ՝ չատ ապրեալ վիշապանայ. և ոտք երևին ի նմա: 2. Այր կորովի սրտեղ, և բարկացոտ... 3. Թագաւոր անիրաւ հասարակօրէն. և յատկաբար նշանակէ զՋէհաք. և ըստ այսմ* Էժտէհաք *է, զորոյ զԲէ տառն բարձեալ,* Էժտէհա *ասացին: 4. Մահիկն դրօշակին... և այս յայն սակս, զի այն որ է ի գլուխ դրօշակին, լինի յաճախ վիշապատեսիլ (էջ 79):*

Եթէ բառի ստուգաբանությունը հստակ չէ, կամ Դպիրը կասկածում է իր աղբյուրների ճշգրտությանը, ապա բերում է այդ ստուգաբանությունը՝ նշելով աղբյուրը. օրինակ.

Աֆիթապ آفتاب *Արեգակն. [Թուրքերէն]* Կիւմէչ. *արապերէն* Շեմս: *Քէմալփաշազատէն ստուգաբանեալ զբառս զայս ասէ թէ* Աֆիթապ *է բառ բարդեալ. բայց բարդութիւն նորա ոչ է յայտնի որպէս* Խօրշիյտ. *այլ անյայտ. որոյ մի մասն է* Աֆ. *որ բուն է Ա.Պ. Պէ ի Ֆէ փոխարկեալ. և մի մասն է* Թապ. *որ և հր.* Թաֆթէն *բային. և ի բարդիլն նշ. իբր ընդունելութիւն ջերմացուցիչ... և ի զօրութենէ բարդութեան նշ. ջերմացուցիչ ջրոյ և քանզի ջուրն ըստ բնութեան իւրում ցուրտ է, և ջերմանալն նորա է պատահական. և յայն սակս զջերմութիւն նորա վերաբերեալ են առ արեգակն և կոչեալ զնա* Աֆիթապ *(էջ 36):*

Բառը փոխառեալ լինելու դեպքում անպայմանորեն նշվում է փոխատու լեզուն. օրինակ.

Ա՛դդար. عطر *Բառ արապերէն. վաճառօղ մշկոյ բուրկենի, և նման նոցին անուշահոտ իրաց. զի է բառս այս ընդունելութիւն [իմա՝ դերբայ] ծագեալ ի բառէն* عطر ը՛դր, *որ նշանակէ անուշահոտ բուրումն, զոր առհասարակ վրիպական գործածութեամբ՝ ասեն զվաճառօղ է դեղոց, խոտոց, և արմատոց, և այլոց մանրամասնեայ իրաց: Եւ բառս* Ա՛դդար *բուն պարսկերէն ասի* Պույֆիւրուշ... *(էջ 1):*

Եամճի جمي *Է բառ խարէզմի, և նշանակէ ձիարած, այսինքն հովիւ երիվարաց... զի* Եամ *նշանակէ ձի (էջ 45):*

Արդ Գեորգ Դպիրը իր բառարանը կազմելիս ինչպե՞ս և որքանո՞վ է օգտվել աղբյուրներից:

Մի խումբ բառերի համեմատությունը մեր ձեռքի տակ առկա Դպրի աղբյուր-բառարանների հետ, բերում է այն եզրակացության, որ Գեորգ Դպիրը՝ հիմնականում օգտ-

վելով այդ բառարանների բառացանկից, մեծ ու քրտնաջան աշխատանք է կատարել ճշտելու յուրաքանչյուր բառի տարբեր առումները, նշելու քերականական անհրաժեշտ տեղեկությունները, բերելու խոսքի մեջ տվյալ բառի օգտագործման օրինակ-վկայությունները:

Դպրի աղբյուրներից Շահիդին ու Վեհպին պարսկերեն բառի դիմաց տալիս են նրա թուրքերեն մեկ իմաստը, նշանակությունը, մինչդեռ Հալիմիի բառարանը այս առումով ավելի հարուստ է. այստեղ բառի համար մի քանի նշանակություններ են տրվում, բացի դրանից բերվում են վկայություններ ու քերականական տեղեկություններ: Հավանաբար Դպիրը այս վերջին աղբյուրից ավելի օգտված լինի: Բայց, այնուամենայնիվ, Դպրի բառահոդվածները ավելի հարուստ են. մի բան, որ ինքնին պերճ ապացույց է պարսկերեն-հայերեն տպագիր այս առաջին բառարանի ակնբախ ճոխության ու առավելության: Մի քանի բառերի զուգահեռ համեմատությունը ակնառու կերպով հաստատում է այս փաստը:

تحفه شاهی («Շահիդիի պարգևը»)[45]	*Շահիդիի դպրության թարգմանությունը*[46]	*Վեհպիի դպրության թարգմ.*[47]	لغت حليمى *(«Հալիմիի բառարան»)*[48]	*Գեորգ Դպրի «Բառարան պարսկերէն»*[49]
صوآب *[Սու. ապ.]*	*Ապ. ջուր. սու. մա*	*Ապ. սու. ջուր. արապ. մա*	آب سو و روم تاریخندن بر آیک آدیدر که اغستوس دیمکله معروف و مشهور در *[Ապ. սու. հռոմեական պատմությունից մի ամսի անուն է, որ Օգոստոս անունով է հայտնի]:*	*Ապ* آب *Ջուր. Սու. արապերէն* Մա. *2. Պայծառութիւն.* Րէվնազ. *3. Շնորհ և վայելչութիւն.* Լէղաֆէթ: *4. Արժանաւորութիւն և համարումն.* Գատր վէ իթիպար: *5. Տարազ և սարաս.* Դարզ վէ րէվիշ: *6. Կամք սրտի.* Միւրատ: *7. Շուիղ, այսինքն կերպ.* Դարիգ. *դի ասեն* Պէր ապի ֆէլան. *այսինքն բան չաւ-*

45 Մատենադարանի արաբատառ ֆոնդի ձեռ. № 325, էջ 5a:

46 Մատենադարանի ձեռ. № 9699, էջ 10ա:

47 Անդ, էջ 66բ:

48 Ասիայի ժողովուրդների ինստիտուտի Լենինգրադյան բաժանմունքի ձեռագրատան ձեռ. № B 554, էջ 26:

49 **Գեորգ Դպիր**, *Բառարան պարսկերէն*, էջ *22*:

				ղի այս ինչ մարդոյ. ՖէլաՆբն դարիգինէ: *8. Ամիան օգոստոս, որ է վերջին ամիան ամառան,* Աղօսթօս:

Նկատելի է, որ առանձին դեպքերում Գեորգ Դպիրը ընդարձակ հավելումներ է կատարել Շահիդիի այս կամ այն բառերի թարգմանության ժամանակ, բայց իր բառարանը կազմելիս հրաժարվել է իր իսկ ավելացրած չատ մանրամասներից. սա թերևս բացատրվի բառարանը չատ չծանրաբեռնելու միտումով. այսպես օրինակ.

تحفه شاهی («Շահիդիի պարգևը»)[50]	*Շահիդիի դպիրյան թարգմանությունը*[51]	*Վեհպիի դպիրյան թարգմ.*[52]	*لغت حليمى («Հալիմիի բառարան»)*[53]	*Գեորգ Դպրի «Բառարան պարսկերէն»*[54]
كزكز اكنجى [էքինճի. պերզիկեր]	*Պէրզիկէր. սերմնացան կամ մշակ. էքինճի, չիֆթճի. արապերէն հարրաս. էքքեար. զէրրա, և ֆէլլահ: Եւ գիտելի է զի վերոգրեալ բառն՝ պէրզիկէր է բաղադրեալի բառէս՝ պէրզ, որ նշանակէ սերմ. թուխում. և ի մասնըկանես կէր, որ թեթևացուցեալ է ի բառէն քեար որ է գործ, և ի յարիլն իւրում յանուն ինչ ցուցանէ զգործողն*	*Պէրզիկէր, էքինճի. սերմնացան*	*چارك اكنجى كزكز [Պէրզիկէր, էքինճի հարաս]*	*Պէրզիկէր* كزكز *սերմնացան. էֆիճճի. արապերէն* زراع *Զէրրա՛. և* چارك *Հարաս. ասի նաև* چارك *Հարիս ասի և Ապլիյէ, Ապլիյթէ, Ապլիյսէ, Եադի, Էպլիյէ, Էպլիյթէ, Էպլիյսէ, Նէսուտի, Պէզքեար, Պէրզէկէր, Պէրզկէր, Պէրզի, և Քիշավէրդ:*

50 Մատենադարանի արաբատառ ֆոնդի ձեռ. № 325, էջ 5ա:

51 Մատենադարանի ձեռ. № 9699, էջ 10բ:

52 Անդ, էջ 74ա:

53 Ասիական ժողովուրդների ինստիտուտի Լենինգրադյան բաժանմունքի ձեռագրատան ձեռ. № B 554, էջ 296:

54 **Գեորգ Դպիր**, *Բառարան պարսկերէն*, էջ 430:

	նորին. որպէս Ահէնկէր՝ երկաթագործ. Զէրկէր՝ ոսկեգործ. քէֆչկէր՝ կոշկագործ. ըստ այսմ է և բառն պէրզիկէր որ է սերմնագործ, սերմնացան:			

Գեորգ Դպրի բառարանը արժեքավոր է նաև իր հանրագիտակ բնույթով. այստեղ բացի սոսկ պարսկերեն բառերի նշանակություններից հարուստ նյութ է մեջբերված արևելյան ժողովուրդների բանահյուսությունից, տեղեկություններ ու ծանոթագրություններ են տրված պարսից գրականության մեջ հիշված վիպական ականավոր հերոսների մասին, կենսագրական ամփոփ տվյալներ են բերված միջնադարյան այնպիսի խոշոր բանաստեղծների և գիտնականների վերաբերյալ, ինչպիսիք են Ֆիրդուսին, Աբու Ալի Իբն Սինան, Օմար Խայամը, Շերեֆեդդին Շիրազին, Սաադին, Հաֆիզը և ուրիշներ: Բանահյուսական նյութերից բերենք թեկուզ մի երկու օրինակ, որից առաջինը հիշեցնում է «Ախթամարի» գողտրիկ զրույցը, և հավանաբար սրա պարսկերեն տարբերակներից մեկն է:

«Էնտէրուս... *Է անուն առն միոջ որ սիրահարեալ ի գեղ կնոջ ուրուք Հարունէ կոչեցեալոյ. (որ էր կին առն միոջ Հարու անուն և բնակէր ի կղզւոջ իմիք Հար անուանեալ) անկղիտանայր. ուր ի բազում գիշերս հուր լուցեալ Հարունէ, և Էնտէրուս ի լոյս հրոյն ի լեղ անկեալ երթայր ի կղզի անդր և տեսաւորէր ընդ Հարունէի. բայց ըստ դիպաց ի գիշերի միում հողմ և անձրևն գոլով սաստիկ զհուրն չիջուցեալ, և Էնտերուս ի խաւարի մնացեալ՝ ընկղմեցաւ»*[55]:

Ուշագրավ օրինակ է նաև Ֆարհադ ու Շիրինի մասին հետևյալ զրույցը.

«Էնարի Ֆեռհատ... *Է սա նռնենի իմն. այսինքն ծառ նռան. որ կայ ի լերինն Պիւսիւթունի. և առասպելեալ պատմեն թէ յորժամ առ Ջէրհատ պառաւ մի եկեալ պատմեաց եթէ մեռաւ Շիյրին, ի սէր որոյ հարեալ էր Ջէրհատ. յայնժամ և նա տապարաւն զոր ի ձեռին ունէր հարեալ զգլուխ իւր՝ անկաւ և մեռաւ. և անկեալ ապա արիւնաշաղախ տապարն այն, և մեղեխ նորա վարսեալ ի գետին. և բուսեալ և աճեցեալ և տերևս արձակեալ, պտղաբերեաց. և վասն գոլոյ փայտի նորա ի ծառոյ նռան, պտուղ աննման նռան յառաջացաւ ի նմանէ. զորոց զմին կորզեալ և ճեղքեալ, տեսին զի մէջ նորին այրեցեալ և աճիւնացեալ էր ըստ նմանութեան սրտի սիրահարեցելոյ»*[56]:

Բառարանի գրական արժեքը էլ ավելի է մեծանում, եթե նկատի ենք առնում նաև միջնադարյան պարսից դասական գրողների ստեղծագործություններից, բարոյա-խրատական երկերից՝ այս կամ այն բառի կիրառումը գրավոր խոսքի մեջ ցուցադրելու նպատակով, կատարված բազմաթիվ մեջբերումները, որոնք բացի այն, որ բառարանից օգտ-

55 **Գեորգ Դպիր**, *Բառարան պարսկերէն*, էջ 90:

56 Անդ, էջ 83:

վողին սովորեցնում են բառի ճշգրիտ օգտագործումը, այլև հաղորդակից են դարձնում իրանական հարուստ բանահյուսությանն ու գրականությանը: Անհրաժեշտ է հիշել, որ բառարանում բերված մի շարք վկայություններ, հատկապես Սաադիի «Գոլեսթանից», թարգմանված են հայերենի:

Միջնադարյան մեր ձեռագրերում պահպանված մի քանի սուղ տվյալներ դեռևս 15-րդ դարից հայ իրականության ծանոթությունն են ապացուցում Սաադիի ստեղծագործություններին, սակայն Դպրի այս բառարանում մեջբերված հատվածները Սաադիի առայժմ մեզ հայտնի, հայերեն ամենավաղ տպագիր թարգմանություններն են[57]:

Գեորգ Դպրի պարսկերեն-հայերեն այս հոյակապ բառարանի առանձնահատկությունների ու առավելությունների, նրա ընդգրկած բազմաբնույթ նյութերի մասին կարելի է շատ ավելի երկար խոսել, բայց ասվածն էլ բավական է ցույց տալու պոլսահայ անխոնջ մտավորականի տարիների վաստակի արդյունքը հանդիսացող այս հուշարձանի գիտական արժեքն ու նշանակությունը:

Դպրի բառարանը իր հրապարակվելու օրվանից մինչև այսօր ամենուրեք չարունակվում է օգտագործվել: Դա գրական այնպիսի մի կոթող է, որից դեռևս շատ երկար ժամանակ կարող է օգտվել և՛ պարսկերենը ուսումնասիրող հայ սկսնակը, և՛ ազգագրագետն ու բանագետը, և՛ լեզվաբանն ու գրականագետը:

Գեորգ Դպրի պարսկերեն-հայերեն բառարանը, փաստորեն փակելով հին ու միջին դարերի հայ և իրանական ժողովուրդների գրական կապերի պատմությունը, միաժամանակ նոր փոխհարաբերությունների սկիզբը դարձավ, իսկ ինքը Գեորգ Դպիր Պալատացին հանդիսացավ բառի իսկական առումով հայ արևելագիտության հիմնադիրը:

57 «Պատմա-բանասիրական հանդեսի» 1962 թ. № 3-ում և «Էջմիածին» հանդեսի 1962 թ. № 8-ում հրապարակված Արփիկ Մինասյանի «Սաադիի «Գոլեսթանի» հայերեն թարգմանությունները» վերնագրով հոդվածներում Սաադիի ստեղծագործությունների հայերեն ամենավաղ թարգմանություններ են համարված 1846-1847 թթ. «Ազգասերում» հրապարակված մի քաղվածք ու «Բուսթանի» մի հատվածը, մինչդեռ Գեորգ Դպրի բառարանը հրապարակվել է 1826 թվականին, իսկ թարգմանությունները կատարված են դրանից էլ վաղ՝ 1812 թվականից (Դպրի մահը) առաջ:

ՊԱՐՍԿԵՐԵՆՈՒՄ ԱՐԱԲԵՐԵՆԻՑ ՓՈԽԱՌՅԱԼ ԲԱՌԵՐԻ ՀԱՅԱՏԱՌ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՄԻ ԲԱՌԱՐԱՆ[!]

Բանասեր Հայկ Ամալյանը մի քանի տարի առաջ Մատենադարանի № 7151 ձեռագրում հայտնաբերել էր արաբերեն-պարսկերեն-հայերեն հայատառ բառարանի մի հատված, որի մանրամասն նկարագրությունը նա տվեց իր «Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ» աշխատության մեջ[1], իսկ բնագիրը, երկու ձեռագրերի համեմատությամբ, 1969 թ. հրապարակեց Մատենադարանի «Բանբերի» 9-րդ հատորում (էջ 391-399):

Պրոֆ. Հ. Աճառյանը Հ. Ն. Ակինյանից ստացած մի տեղեկության հիման վրա «Արմատական բառարանում»[2] նոճ բառի կապակցությամբ վկայակոչում է XIII-XIV դարերի եռալեզվյան մի բառարան, որ պատկանել է Գ. եպս. Հովսեփյանին[3]: Բերված տվյալները նույնությամբ համընկնում են քննվող բառարանի 136-րդ բառահոդվածին: Այս փաստը ուշագրավ է և ինքնըստինքյան թելադրում է մի երրորդ օրինակի առկայությունն:

Հ. Ամալյանը ժամանակին մեր ուշադրությունը հրավիրել էր եռալեզվյան այդ բառարանի վրա, որը առաջին պահ մեզ հետաքրքրել էր հայ-պարսկական առնչությունների, մասնավորապես պարսկերեն բառերը հայերեն այբուբենով տառադարձելու օրինաչափությունների բացահայտման տեսանկյունից:

Թռուցիկ ծանոթությունը բառարանին, բառերի հայերեն իմաստների ճշգրտությունը, հետևողական ու օրինաչափ տառադարձումները մեզ բերել էին այն եզրակացության, որ գործ ունենք եռալեզվյան թարգմանական մի բառարանի հետ, որի անանուն հայ թարգմանիչը, ավելի ճիշտ բառարանագիրը, ունեցել է լեզվաբանական կուռ գիտելիքներ և քաջ տիրապետել է այդ լեզուներին[4]:

Բառարանի հետագա ավելի մանրակրկիտ ուսումնասիրության հետևանքով մեզ ակնհայտ դարձավ, որ դա պարսկերենում արաբերենից փոխառյալ բառերի բառարան է, որով ավելի արժեքավորվում և կարևորություն է ձեռք բերում ամբողջական բառարանագրական մի հուշարձանից մնացած այս բեկորը, մանավանդ եթե նկատի ունենանք, որ միջնադարյան պարսկական մատենագրությունը այնքան էլ հարուստ չէ արաբերենից փոխառյալ բառերի բառարաններով: Բավական է ասել, որ ՍՍՀՄ արևելագիտության ինստիտուտի լենինգրադյան բաժանմունքի արևելյան ձեռագրերի հավաքածուի մեջ, որը հայտնի է արաբերեն-պարսկերեն երկլեզվյան բառարանների հարստությամբ, Ս. Ի. Բաևսկին նկարագրել է նման մեկ բառարան միայն՝ կազմված 1510 թ. ոչ ուշ[5], իսկ

! Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1970, № 3, էջ 149-184:

1 **Հ. Ամալյան**, *Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ*, Երևան, 1966, էջ 106-109:

2 Տե՛ս **Հ. Աճառյան**, *Արմատական բառարան*, հատ. Ե, էջ 160:

3 Մաշտոցյան մատենադարանում պահվող Գ. Հովսեփյանին պատկանած ձեռագրերի մեջ հիշյալ բառարանը չկարողացանք գտնել:

4 **Բ. Զուգասզյան**, *Հայ-իրանական գրական առնչություններ (V-XVIII դդ.)*, Երևան, 1963, էջ 173-174:

5 Տե՛ս **С. И. Баевский**, *Описание персидских и таджикских рукописей Института народов Азии*, вып. 5, М., 1968.

Ուզբեկստանի գիտությունների ակադեմիայի արևելյան ձեռագրերի հավաքածուում փոխառյալ բառերի բառարաններ կան XIX դարի սկզբից[6]: Պարսկերենում արաբերենից փոխառյալ բառերի բառարաններ կան նաև Բրիտանական թանգարանում, որոնցից հնագույնը, ըստ Ռիոյի կազմած ձեռագրացուցակի, թվագրված է 1664-1672 թթ.[7]: Այս մի քանի փաստերն իսկ բավական են ընդգծելու մեր Մատենադարանի խնդրո առարկա բառարանի կարևորությունը:

Բառարանի առաջին օրինակի (ձեռ. № 7151=a) գրչության ժամանակը, ելնելով հնագրական տվյալներից, Հ. Ամալյանը համարում է եթե ոչ XIV, ապա ամենայն հավանականությամբ XV դարը, իսկ երկրորդ օրինակը, որը տարբեր նյութերի ժողովածու է (ձեռ. № 1770=b)՝ թվագրված է. Աստվածատուր դպիրը այն արտագրել է 1589 թ. Հայրապետ Ջուղայեցու պատվերով: Այս վերջին օրինակը առաջինի նկատմամբ ունի այն առավելությունը, որ ավելի լավ վիճակում է, և դրա օգնությամբ ընթերցվում են առաջին ձեռագրի սկզբի մաշված էջերի անընթեռնելի բառերը:

Բառարանի երրորդ օրինակը, որը, ինչպես ասվեց սկզբում, հիշատակում է Հ. Աճառյանը, ըստ նրա XIII-XIV դարերի է եղել:

Առկա երկու ձեռագրերի բաղդատությունը ցույց է տալիս, որ գոյություն է ունեցել մի նախօրինակ բառարան, որից կատարվել են ընդօրինակությունները: Բառարանի համակողմանի քննությունը վկայում է, որ նախօրինակը եղել է չափազանց գրագետ, կուռ տառադարձությամբ պատրաստված աշխատանք, իսկ հետագայում, արտագրությունների ժամանակ գրիչները կատարել են խմբագրական ուղղումներ, մուծելով իրենց բարբառային տարրը, երբեմն էլ թույլ են տվել վրիպումներ, որոնք վկայում են ընդօրինակողների արաբերեն ու պարսկերեն լավ չիմանալու մասին. այսպես, օրինակ, պարսկերեն դրուղ բավթըն *դարձել է* դրասլ բավթըն. *սխալը հետևանք է հայատառ* ուղ *վերջավորությունը* ասլ *կարդալու. կամ* ռանդըն *դարձել է* բռանդըն *և այլն: Տառադարձման օրինաչափությունների նկատելի որոշ խախտումները ևս պետք է վերագրել հետագա գրիչների միջամտությանը:*

Անանուն հայ բառարանագիրը իր առաջաբանում հայտնում է, որ ինքը ձեռքի տակ ունեցել է արաբ-պարսկերեն մի բառարան «յալիֆէ սկսեալ մինչև ցիէ», որը ինքը թարգմանել է «յաղագս ուսումնասէր հասակաց»: Այս իսկ արտահայտությունը արդեն վկայում է, որ բառարանը ունեցել է ուսուցողական նպատակներ: Իսկ բառարանի նյութը, ինչպես ասված է հայ բառարանագրի առաջաբանում, հիմնականում «անուանք և բայք» են:

Ողջ բառարանից պահպանված է միայն առաջին պրակը՝ 10 թերթ, և կցված է № 7151 ձեռագրին: Բառարանը ունի ընդամենը 204 գլխաբառ և ընդգրկում է արաբերեն այբուբենի ա, բ, թ *(ا ،ب ،ت)* *տառերը, ըստ որում յուրաքանչյուր տառի մեջ բառերը դասավորված են բառավերջի տառերի այբբենական կարգով, որը սակավ դեպքերում է խախտված:*

Իրանագիտության համար բառարանը կրկնակի հետաքրքրություն է ձեռք բերում իր հնչյունաբանական կողմով: Հայտնի է, որ արաբական այբուբենով հնարավոր չէ

6 Տե՛ս *«Собрание восточных рукописей АН Уз. ССР»*, тт. V и VI, Ташкент, 1960 и 1963.

7 Տե՛ս *Catalogue of the Persian Manuscripts in the British Museum*, by Ch. Rieu, II, Oxford, 1966.

հստակ որոշել ֆաթհէ, քասրե, զամմե (զաբար, զիր, փիշ) ձայնավորների և մի քանի բաղաձայնների հնչումները: Մինչդեռ հայերեն և հատկապես տվյալ բառարանում կիրառված հետևողական տառադարձությունը նպաստում է պարզելու պարսկերեն բառերի միջնադարյան որոշ հնչումներ: Դժբախտաբար մեզ հայտնի չէ հայ բառարանագրի ինքնությունը, այլապես կարելի էր պարզել, թե լեզվական ի՛նչ միջավայրում է թարգմանվել բառարանը և պարսկերենի ու հայերենի բարբառային ինչպիսի՛ նրբերանգներ են արտացոլվել այստեղ: Ամեն պարագայում մի բան ակնառու է, որ բառարանում բերված բառերի գերակշռող մասի տառադարձությունը համընկնում է տվյալ բառերի ավանդական այն արտասանությանը, որը հարատևել է մինչև այսօր և բնորոշ է ժամանակակից գրական պարսկերենին:

Մյուս կողմից բառարանը հետաքրքրություն է ներկայացնում հայագիտության համար նախ այն առումով, որ վկայում է հայկական դպրոցներում պարսկերենի դասավանդման մասին, այնուհետև ցույց է տալիս տվյալ ժամանակաշրջանում հայ լեզվաբանական մտքի զարգացման աստիճանը (այս բառարանում առաջին անգամ մեր մատենագրության մեջ հանդիպում ենք տառադարձման պայմանական նշանների, ինչպես, օրինակ, ů արաբ. ض-ի համար, և կամ արաբ. ت և ط որոնք թ հնչումը ունեն, այս բառարանում տարբերակված են համապատասխանորեն թ և տ հնչումներով), և ի վերջո արաբերեն ու պարսկերեն բառերի հայերեն տառադարձությունը օգնում է հայկական հնչյունական համակարգի ուսումնասիրմանը. լեզվաբան Հ. Դ. Մուրադյանը, որ վերջերս հանդես է եկել միջին հայերենի բաղաձայնական համակարգի քննությամբ, միջին հայերենի մեջ առանձնացնում է եռաստիճան անտեղաշարժ բաղաձայնական համակարգ, «որի մեջ հին ձայնեղների, խուլերի և չնչեղ խուլերի շարքերը պահպանվել էին անփոփոխ» և որպես բնորոշ օրինակ բերում է այս բառարանի պարսկերեն բառերի հայերեն տառադարձման օրինաչափությունները[8]: Հայտնի է, որ Արևելյան Հայաստանի մի քանի նահանգներում է, որ հայերենի բաղաձայնական համակարգը տեղաշարժեր չի ունենում, հետևաբար պետք է եզրակացնել, որ անանուն հայ բառարանագիրը այդ վայրերից է եղել: Հավանաբար սա ի նկատի ունենալով է Հ. Ամալյանը ձեռագրի գրչության վայրը Սյունիքը համարել. ենթադրությունը հավանական է, սակայն կարոտ է ավելի համոզիչ կռվանների:

Բառարանում առկա արաբերեն բոլոր բառերը, բնականաբար, բերված են փոխառյալ լեզվի՝ պարսկերենի արտասանությամբ:

Բառարանի տառադարձման համակարգը ուսումնասիրելու նպատակով մենք կազմեցինք նրա բառերի նույնականությունների աղյուսակը (Identifikationstabelle), հայատառ արաբերեն ու պարսկերեն բառերի դիմաց տալով նրանց արաբատառ գրությունը, իսկ յուրաքանչյուր բառի տակ՝ նրա լատինատառ տառադարձումը:

* * *

Հայատառ արաբերենի ու պարսկերենի համար օգտագործել ենք հայերենի գիտական հետևյալ տառադարձությունը.

8 **Հ. Դ. Մուրադյան**, *Միջին հայերենի բաղաձայնական համակարգի հարցի շուրջը*, «Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 2, էջ 95:

ա – a	ժ – z	ճ – č	ռ – ṙ	օ – aw
բ – b	ի – i	մ – m	ս – s	ֆ – f
գ – g	լ – l	յ – y	վ – v	ու – u
դ – d	խ – x	ն – n	տ – t	
ե – e	ծ – c	շ – š	ր – r	
զ – z	կ – k	ո – o	ց – c‘	
է – ē	հ – h	չ – č‘	ւ – w	
ը – ə	ձ – j	պ – p	փ – p‘	
թ – t‘	ղ – ł	ջ – ǰ	ք – k‘	

Արաբատառ պարսկերենի համար օգտագործել ենք Շտեյնգասի պարսկերեն-անգլերեն բառարանում[9] կիրառված տառադարձությունը.

ا – a	ج – j	غ – gh
ا – i	چ – ch	ف – f
ا – u	ح – h	ق – q
آ – ā	خ – kh	ک – k
او – ū, o, au	د – d	گ – g
ای – ī, e, ai	ذ، ز، ض، ظ – z	ل – l
ب – b	ر – r	م – m
پ – p	ژ – zh	ن – n
ت، ط – t	ش – sh	و – v
ث، س، ص – s	բառամիջի ع և անշարժ համզե – ‘	واو معدول – w
		ی – y

Բառարանում արաբա-պարսկական հնչյունների հետևյալ հայկական տառադարձությունն է կիրառված (տրվում են հիմնական օրինաչափությունները).

1. Համզեն սույն բառարանում դիտված է որպես արաբական այբուբենի առաջին տառ. բառերի ներքին այբբենական դասավորությունը սկսվում է համզեով:

Վ. Ռաստորգուևայի «Պարսից լեզվի քերականության համառոտ ակնարկի» մեջ համզեի կիրառման նշված դեպքերից մի քանիսը հանդիպում են այս բառարանում[10].

9 *A Comprehensive Persian-English Dictionary,* by F. Steingass, London.

10 Տե՛ս **В. С. Расторгуева**, *Краткий очерк грамматики персидского языка* (տե՛ս Персидско-русский словарь, сост. Б. В. Миллер, М., 1953, стр. 613-668):

ա) Արաբերենից պարսկերենում փոխառյալ բառերի վերջում համզեն դրվում է, բայց չի արտասանվում, հետևաբար հայ բառարանագիրը այն ուղղակի կրճատում է. օրինակ՝

1. իբթիդա (ibt‘ida) – ابتداء (ibtidā)*

7. ահսա (ahsa) – احصاء (ihsā’)

բ) Գրական պարսկերենում, երբ համզեն դրվում է ձայնավորի և բաղաձայնի միջև, վանկաբաժան դեր է կատարում և հնչում չի ունենում. ինչպես՝

146. բսաթ (bsat) – بذاءت (baza’t)

182. թաքիդ (t‘ak‘id) – تأكيد (ta’kīd)

Համզեն այս նույն դիրքում խոսակցական պարսկերենում ունի հայերենի յ-ին մոտ հնչում, որը մերթընդմերթ արտացոլված է սույն բառարանում յ տառադարձումով. օրինակ՝

25պ. ֆայիդը (fayidə) – فائده (fā’ida)

113պ. հր այինըյ (hr ayinə) – هرآئنه (har-ā’ina)

դ) Համզեն երկու կից ձայնավորների միջև ոչ մի հնչում չի ունենում. օրինակ՝پائين-փաին. այս օրինաչափությունը իր անդրադարձը ունի և քննվող բառարանում. օրինակ՝

97պ. նեքաւի (nek‘aw(o)i) – نيكوئی (niku’ī)

132պ. բէնաի (bēnai) – بينائی (binā’ī)

Խոսակցական պարսկերենում այս նույն դիրքում համզեն ունի հայերենի յ հնչումը, որը և տառադարձված է յ-ով.

119պ. զէբայի (zēbayi) – زيبائی (zībā’ī)

183. թայյիդ (t‘ayyid) – تائيد (t‘ayīd)

2. ا (a)-ալիֆը ֆաթհեի հետ բառասկզբում տառադարձվում է ը (ə): Միջնադարյան հայկական բնագրերում դիտել ենք, որ պարսկերենից փոխառյալ բառերում բառամիջում ֆաթհեն, երբեմն նաև քասրեն, տառադարձվում են հաճախ ը. իսկ այս բառարանում թե՛ բառասկզբում, և թե՛ բառամիջում հետևողականորեն միայն ֆաթհեն է տառադարձվում ը (ə). օրինակ՝

58. ըխբար (əxbar) – اخبار (axbār)

93. ըքսըր (ək‘sər) – اكثر (aksar)

94. ըսխըր (əsxər) – اصغر (asghar)

111. ըրքան (ərk‘an) – اركان (arkān)

2պ. ըրսիդըն (rəsidən) – رسيدن (rasīdan)

10պ. ըրվթըն (rəvt‘ən) – رفتن (raftan)

15պ. ըզ (əz) – از (az)

40պ. մադըր (madər) – مادر (mādar)

---

* Բառերի առաջ տրված թվահամարները ցույց են տալիս բառերի կարգը մեր կազմած ձուլնականության աղյուսակում, իսկ եթե թվահամարը ունի *պ* պայմանական հավելումը, ապա տվյալ բառը պետք է փնտրել տվյալ բառահոդվածի շարքում՝ պարսկերեն ալուձակում:

Այս օրինաչափությունը չի գործում հետևյալ դեպքերում.

ա) երբ ֆաթհեով ալիֆին հաջորդում է ع օրինակ՝

9. ա՛դա (a՛da) – اعداء (a‘dā’)

66. արազ (araz) – اعراض (i‘rāz)

109. այան (ayan) – اعيان (a‘yān)

բ) երբ ֆաթհեով ալիֆին հաջորդում է ه կամ ح օրինակ՝

36. ահլիըթ (ahliət‘) – اهليات (ahlīat)

37. ահդաս (ahdas) – احداث (ahdās)

գ) երբ ֆաթհեով ալիֆին հաջորդում է ى օրինակ՝

106. այամ (ayam) – ايام (aiyām)

114. այադի (ayadi) – ايادى (ayādī)

Կան և մի քանի բացառություններ.

61. ասաս (asas) – اساس (asās)

68. իթաս (itas) – اثاث (asās)

84պ. աբլահ (ablah) – ابله (ablah)

3. Ֆաթհեն առաջին վանկում հայերեն տառադարձման ժամանակ հիմնականում
ազված է, որից և կարելի է ենթադրել, որ այս հնչումը ավյալ դիրքում հայ բառարանա-
դրի համար լրիվ դիտակցված չի եղել. օրինակ՝

124. բրըքըթ (brək‘ət‘) – بركت (barakat)

128. բշարըթ (bšarət‘) – بشارت (bashārat)

165. թրբիըթ (t‘rbīət‘) – تربيت (tarbiyat)

167. թհնիըթ (t‘hniət‘) – تهنيت (tahniyat)

10պ. քսէ (k‘cē) – كسى (kasī)

121պ. գնդում (gndum) – گندم (gandum)

130պ. մրդի (mrdi) – مردى (mardī)

135պ. դրիահ (driah) – دريا (daryā)

4. Ֆաթհեն բառավերջի փակ վանկում տառադարձվում է նույնպես ը *(ə). օրինակ՝*

13. իջաբըթ (ijabət‘) – اجابت (ijābat)

30. իշարըթ (išarət‘) – اشارت (ishārat)

33. իսթիրահըթ (ist‘irahət‘) – استراحت (istirāhat)

84. ահմըղ (ahmət) – احمق (ahmaq)

1պ. քրդըն (k‘rdən) – كردن (kardan)

7պ. շմուրդըն (smurden) – شمردن (shumurdan)

23պ. դադըն (dadən) – دادن (dādan)

115պ. մադըր (madər) – مادر (madar)

Այս օրինաչափությունը խախտված է մի երկու դեպքում.

24. ամանաթ (amanat‘) – امانت (amanat)

153. բլաթ (blat‘) – بلد (balad)

5. ا (ī) ալիֆը քասրեով բառասկզբում տառադարձվում է ի (i) և ը (ə):

Առաջին ձևը համապատասխանում է արաբ-պարսկական դասական արտասանությանը, իսկ երկրորդը օրինաչափություն խախտում է: Պետք է ենթադրել, որ այս բառերը ժամանակին արտասանվել են ֆաթհեով՝ ը (ə). օրինակ՝

1. իբթիդա (ibt‘ida) – ابتداء (ibtidā’)

23. իջաբըթ (ijābət‘) – اجابة (ijābat)

25. իֆադըթ (ifadət‘) – افادة (ifādat)

30. իշարըթ (išarət‘) – اشارة (ishārat)

5. ընհա (ənha) – انهاء (inhā’)

45. ըմսաք (əmsak‘) – امساک (imsāk)

105. ըլզամ (əlzam) – الزام (ilzām)

112. ըքրահ (ək‘rah) – اكراه (ikrāh)

Եթե քասրեով ալիֆին հաջորդում են ջ կամ շ ապա տառադարձվում է ա.

7. ահսա (ahsa) – احصاء (ihs’ā)

60. ազազ (azaz) – اعزاز (i‘zāz)

6. Քասրեն առաջին և երկրորդ վանկերում հիմնականում սղվում է.

119. բհա (bha) – بها (biha)

136. բսաթ (bsat) – بساط (bisāt)

103. ըզդհամ (əzdham) – ازدحام (izdihām)

Քասրեն մասդարի استعمال տիպի բառերում տառադարձվում է ի (i).

14. իսթիաֆա (ist‘iafa) – استعفاء (isti‘fa’)

15. իսթիադա (ist‘iada) – استعاذة (isti‘āzat)

7. Ջամմեն ամենուրեք՝ բառասկզբում, բառամիջում և բառավերջում տառադարձվում է ու. օրինակ՝

40. ումըլխբաս (uməlxbas) – ام الحبايث (ummu ’Ikhaba’is)

141. բուխթան (buxt‘an) – بهتان (buhtān)

203. թդարուք (t‘daruk) – تدارک (tdāruk)

169. թըվըզու (t‘əvəzu) – تواضع (tawāzu‘)

17պ. ջումբիդըն (ǰumbidən) – جنبيدن (jumbīdan)

23պ. փասուխ (p‘asux) – پاسخ (pāsukh)

8. ī (ā) բառասկզբում և ا (a) բառամիջում ամենուրեք տառադարձվում են ա (a):

Ինչպես մի այլ առիթով գրել ենք[11], Կարստը իր «Կիլիկյան հայերենի պատմական քերականություն» աշխատության մեջ դիտել է, որ մի քանի հայերենում արաբերենից փոխառյալ բառերում ֆաթհեով ալիֆը (a) և ազատ ալիֆը՝ ا (ā) տառադարձվում են ա,

11 Տե՛ս **Բ. Լ. Զուգասզյան**, *Եռալեզվյան միջնադարյան մի ձոր բառարան*, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1968, № 10, էջ 82:

ինչպես՝ խաբար – خبر (xabar), պազար – بازار (bāzār)[12]*, մինչդեռ այս հնչումները սույն բառարանում տարբերակված են համապատասխանորեն* ը *(ə) և* ա *(a) տառերով: Օրինակ՝*

28. ավըթ (avət‘) – آفات (āfat)

83պ. արզումընդի (arzuməndi) – آرزومندی (ārzūmandī)

16. ըրբաբ (ərbab) – ارباب (arbāb)

63. ըջնաս (əǰnas) – اجناس (ajnās)

56պ. նազիդըն (nazidən) – نازیدن (nazīdan)

59պ. նիգահ (nigah) – نگاه (nigāh)

9. ب (b) ամենուրեք տառադարձվում է բ *(b). օրինակ՝*

1. իբթիդա (ibt‘ida) – ابتداء (ibtidā)

152. բէզարի (bēzari) – بیزاری (bīzārī)

երեք դեպքում (121, 122, 123) բ*-ի վրա կետ է դրված* (բ .)*, որը մեզ հասկանալի չէ:*

10. پ (p) ամենուրեք տառադարձվում է փ *(p). օրինակ՝*

2պ. փայան (p‘ayan) – پایان (pāyān)

23պ. փասուխ (p‘asux) – پاسخ (pāsukh)

Բայց մի դեպքում ունենք բ*, որը հավանաբար արաբատառ բնագրի կետերի բացակայության հետևանքով պ-ն ե-ով չփոթելու արդյունք կարող է լինել.*

142պ. բյդիդ (bydid) – پدید (padīd)

11. ت (t) ամենուրեք տառադարձվում է թ *(t‘). օրինակ՝*

23. իջաբըթ (iǰabət‘) – اجابت (ijābat)

105պ. գրֆթըն (grift‘ən) – گرفتن (griftan)

203. թդարուք (t‘daruk) – تدارک (tadāruk)

204. թքըլուֆ (t‘kəluf) – تکلف (takalluf)

Մեկ դեպքում միայն ունենք դ *(d).*

26. իսթիֆադըդ (ist‘ifadəd) – استفادة (istifādat)

12. ث (s) հիմնականում տառադարձվում է ս *(s). օրինակ՝*

37. ահդաս (ahdas) – احداث (ahdās)

93. ըքսըր (ak‘sər) – اکثر (aksar)

Մեկ դեպքում ունենք դ *(d).*

133. բահդ (bahd) – بعث (ba‘s)

Իսկ մի դեպքում էլ թ *(t‘)*

68. իթաս (it‘as) – اثاث (asās)

12 **J. Karst**, *Historische Grammatik des Kilikisch-Armenischen*, Strassburg, 1901, էջ 15:

Այս վերջին ձևը հանդիպում ենք նաև միջնադարյան այլ փոխառություններում, օրինակ, Ֆրիկի մոտ՝ «Ոչ ի հօրէ առեր միրաթ»[13]:

13. د (d) հիմնականում տառադարձվում է դ *(d). օրինակ՝*

25. իֆադըթ (ifadət‘) — افادا (ifādat)

42պ. չադի (šadi) — شادی (shādī)

Մի քանի դեպքում նաև թ *(t‘).*

74. իբայըթ (ibayət‘) — ابعد (ab‘ad)

153. բլաթ (blat‘) — بلد (balad)

Նման երկվուլթյունը կարող է գրչի միջամտության արդյունք լինել. ճայնեղ դ*-ն խլացման հետևանքով տառադարձվել է* թ*: Սրանով իսկ պիտի բացատրել* բդայեթ *բառի նաև* դ*-ով տառադարձումը.*

123. բթայըթ (bt‘ayet‘)
147. բդայըդ (bdayət‘) *بدایا (badāyat)*

14. ز *(z) հանդիպում է չորս բառում, որից երկուսում տառադարձված է* դ *(d), մեկում՝* ս *(s), իսկ մյուսում՝* թ *(t).*

6պ. գուդըշթըն (gudəšt‘ən) — گنشتن (guzashtan)

15. իսթիադա (ist‘iada) — استعاذة(isti‘āzat)

146. բսաս (bsat) — بساط (bazā’t)

184. թլմիըթ (t‘lmiət‘) — تلميذ (talmiz)

Արաբերեն ز *(z)-ի* դ *հնչում հանդիպում ենք միջին հայերենում արաբ-պարս-կերենից կատարված և այլ փոխառություններում, օրինակ՝* ադաբ *(adab) —* عذاب *(azāb)*[14] *կամ* գուդըշթ *(gudəšt‘) —* گشت *(guzasht)*[15]*.*

ژ-ի դ *հնչում հանդիպում է նաև պարսկերենի որոշ բարբառներում, ինչպես մեզ հայտնեց իրանագետ Օրանսկին:*

15. ض *(z)-ն տառադարձելու համար հայ բառարանագիրը օգտագործել է հայերեն* ս *տառը՝ վրան կետ դնելով՝* ṡ*, ինչպես արաբերենում է: Սա, ինչպես ասվեց վերը, եզակի երևույթ է միջնադարում և գիտական տառադարձման առաջին պայմանական նշանը՝ կիրառված հայերեն այբուբենի մեջ.*

17. իṡտիրաբ (išt‘iab) — استضا *(iztirāb)*

49. իդթիṡա (ilt‘iša) — اقتضا *(iqtizā’)*

75. ըṡիաֆ (əšiaf) — اضعاف *(az‘āf)*

156. թդաṡա (tłaša) — تقاضا *(taqāzā)*

---

13 Սա արաբերեն ميراث «ժառանգություն» բառն է, որը «Արարատում» Տիրայր արքեպիսկոպոսը թյուրիմացաբար թարգմանել է «կրթություն» (1918, էջ 79), իսկ Ֆրիկի «Դիվանում»՝ նաև «ուսումն, դաստիարակություն» (տե՛ս **Ֆրիկ**, *Դիվան*, Նյու Յորք, 1952, էջ 664):

14 Տե՛ս «Գրիգորիս Աղթամարցի», աշխատասիրությամբ Մ. Ավդալբեգյանի, Երևան, 1963, էջ 350, *յատապ* բառի տարընթերցումներում:

15 Մաշտոցի անվ. մատենադարան, ձեռ. № 184, էջ 296 ա:

Երեք բառի մեջ ض-ի դիմաց ունենք սոսկ ա.

6. ըմսա (əmsa) – امضاء (imzā')

65. ընղբաս (ənłbas) – انقباض (inqibāz)

126. բսայըթ (bsayət') – بضعة (baz'at)

Հավանաբար սա հետևանք է ընդօրինակության ժամանակ գրչի անուշադրության, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ 1586 թ. օրինակում դուրս են նետված բոլոր պայմանական նշանները. գրիչ Աստվածատուր դպիրը չի գիտակցել բառարանագրի միտումը:

Երեք բառում ض-ն տառադարձված է ուղղակի զ *(z).*

66. արազ (aṛaz) – اعراض (i'rāz)

169. թըվըզու (t'əvəzu) – تعويض (tawāzu')

192. թայրուզ (t'ayruz) – تعرض (ta'arruz)

16. ط (t) հետևողականորեն ամենուրեք տառադարձված է տ: *Չնայած արաբական այբուբենի ت և ط տառերը միևնույն* թ *հնչումը ունեն, հայ բառարանագիրը հավանաբար ուղղագրական տարբերությունը ընդգծելու համար ت տառադարձել է* թ, *իսկ ط-ն՝* տ. *օրինակ՝*

78. էտրաֆ (ētraf) – اطراف (atrāf)

110. ըվտան (əvtan) – اوطان (autān)

136. բսատ (bsat) – بساط (bisāt)

140. բատիլ (batil) – باطل (bātil)

17. ع (ʿ) կոկորդային հնչյունը տարբեր դիրքերում տարբեր տառադարձումներ ունի.

ա) երբ բառասկզբի ալիֆին հաջորդում է ع, տառադարձվում է ա *(a).*

9. ա՛դա (a՛da) – اعداء (a'dā')

60. ազազ (azaz) – اعزاز (i'zāz)

66. արազ (araz) – اعراض (i'rāz)

109. այան (ayan) – اعيان (a'yān)

Երկու բառում խախտված է այս օրինաչափությունը.

34. իայդըթ (iaydət') – اعادت (i'ādat)

99. իալամ (ialam) – اعلام (a'lām)

բ) բառամիջում մասդարի استعمال տիպի բառերում ع տառադարձվում է ա *(a).*

14. իսթիաֆա (ist'iafa) – استعفاء (isti'fā')

15. իսթիադա (ist'iada) – استعادة (isti'āzat)

91. իսթիամալ (ist'iamal) – استعمال (isti'māl)

100. իսթիալամ (ist'ialam) – استعلام (isti'lām)

գ) բառամիջում մասդարի تفعل տիպի բառերում տառադարձվում է այ.

162. թայջուբ (t'ayǰub) – تعجب (ta'ajjub)

168. թայզիըթ (t‘ayziət‘) – تعزیت (ta‘aziyat)

դ) բառավերջում տառադարձվում է ɦ (h).

69. ըղտահ (əłtah) – عاقطا (aqtā‘)

71. իջթիմահ (ijt‘imah) – اجتماع (ijt‘imā‘)

Բառավերջում, եթե նախորդում են ը և ե, տառադարձվում է ի (i).

137. բըյի (bəyi) – بیع (bai‘)

138. բայի (bayi) – بائع (bāi‘)

ե) վերոհիշյալ օրինաչափությունները խախտված են հետևյալ բառերում.

12. իսթիըդա (ist‘iəda) – استعادة (iste‘ādat)

193. թաըրուֆ (t‘aəruf) – تعرف (ta‘arruf)

144. բուդ (bud) – بعد (bu‘d)

150. բուղի (bułi) – بقع (buq‘a)

48. իյթիմադ (iyt‘imad) – اعتماد (i‘timād)

46. իթիրաֆ (it‘iraf) – اعتراف (i‘tirāf)

52. իթիղադ (it‘iład) – اعتقاد (i‘tiqād)

18. غ (gh) տառադարձվում է ղ (ł) և խ (x)

123պ. աղազ (ałaz) – آغاز (āghāz)

141պ. դրաւղ (draw(o)ł) – دروغ (durogh)

94. ըսխըր (əsxər) – اصغر (asghar)

130. բալիխ (balix) – بالغ (baligh)

19. ف (f) հիմնականում տառադարձվում է ֆ (f), բայց և մի քանի դեպքում բառամիջում դառնում է վ (v).

39. իֆթիրա (ift‘ira) – افتراء (iftirā’)

64. ընֆաս (ənfas) – انفاس (anfās)

10պ. րըվթըն (rəvt‘ən) – رفتن (raftan)

39պ. բավթըն (bavt‘ən) – بافتن (bāftan)

124 պ. ըվզունի (əvzuni) – افزونی (afzunī)

20. ق (q) ամենուրեք տառադարձվում է ղ (ł).

19. ինղիլաբ (inłilab) – انقلاب (inqilāb)

92. ըղըլ (əłəl) – اقل (aqall)

21. ک (k) ամենուրեք տառադարձվում է f (k).

45. ըմսաք (əmsak‘) – امساک (imsak)

57. ինքար (inka‘r) – انکار (inkar)

Բայց մի բառում ունենք գ (g).

202. թըրգ (t‘ərg) – ترک (tark)

Այս բառը գուտ պարսկերեն օգտագործելիս գրվում է گ (g)-ով, մինչդեռ հայ բառարանագիրը կամ հետագա գրիչը գ տառադարձությունը օգտագործել է արաբական բառի համար և արաբական այունակում, որը ճիշտ չէ:

22. گ (g) հիմնականում տառադարձվում է գ (g).

127պ. նագահ (nagah) – ناگاہ (nā-gāh)

152պ. գունահ (gunah) – گناہ (gunāh)

Երկու բառում տառադարձվում է f (k‘).

133պ. բր ընքէխդն (br ənk‘ēxdn) – برانگیختن (bar-angekhtan)

162պ. շգուֆդ դաշթըն (šk‘ufd daštən) – شگفت داشتن (shiguft dāshtan)

23. و (o, u, ū, w) տառադարձվում է աւ, վ, ու, ւ (aw, v, u, w) և մեկ դեպքում էլ՝ ֆ (f).

8պ. դաւսթան (daw(o)st‘an) – دوستان (dostān)

35. ըվղաթ (əvłat‘) – اوقات (auqāt)

108պ. ազմուդըն (azmudən) – آزمودن (āzmūdan)

196. թջաուզ (t‘jawuz) – تجاوز (tajāwuz)

171. թըֆջու (t‘əffju) – تو جه (tawajju’)

24. ه և ح (h) ամենուրեք տառադարձվում են հ (h): Միայն մի դեպքում տառադարձվել է խ (x).

141. Բուխթան (buxt‘an) – بهتان (buhtān)

Բուխթան բառը «չարախոսություն, զրպարտություն» իմաստով գործածված է մեր միջնադարյան գրականության մեջ և բարբառներում[16] և հավանաբար բարբառային տառադարձումը անցել է քննարկվող բառարանին:

25. ای (ai). յայի հնչումն է փաթհեից առաջ, որը այս բառարանում ը (ə)-ից և ա (a)-ից հետո տառադարձված է յ (y).

114. այադի (ayedi) – ایادی (ayādī)

28պ. այբ (ayb) – عیب (‘aib)

90պ. փըյուըսթըն (p‘əyuəst‘ən) – پیوستن (paiwastan)

118պ. փայինդըգի (p‘ayindəgi) – پایندگی (pāyandagi)

26. ی պարսկերենում տարբեր դիրքերում տարբեր հնչումներ ունի, հետևաբար հայերեն տառադարձվելիս տարբեր հնչյուններ է ստանում.

ա) երբ բառասկզբում պարսկերենում նախորդում է ā-ին (երկար ա), արտասանվում է ինչպես հայերեն յ-ն. այս բառարանում տառադարձվում է ի (i).

18պ. իարան[17] (iaran) – یاران (yāran)

22պ. իարի (iari) – یاری (yārī)

---

16 Տե՛ս **Հ. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան*, հատ. Ա., էջ 1193:

17 Կոստանդին Երզնկացու տաղերից մեկում այս բառի եզակին օգտագործված է *ի* տառադարձությամբ՝ *իար: Հ. Մ. Պոտուրյանը տաղը հրատարակելիս ուղղել է այն ե-ի՝ եար*, որը սխալ է: Նոր հրատարակության մեջ վերականգնված է միջնադարյան ձևը (տե՛ս **Կոստանդին Երզնկացի**, *Տաղեր*, աշխատասիրությամբ Ա. Սրապյանի, Երևան, 1962, էջ 192, տող 7):

բ) ս-ն բառի առաջին վանկում ունի ի (ī) հնչումը, որը քննարկվող բառարանում տառադարձված է է (ē).

41պ. բէրուն (bērun) – بیرون (bīrūn)

93պ. բէշթըր (bēšt'ər) – بشتر (bīshtar)

Բառի վերջում եղած ս-ին, եթե եզակիություն (وحدت یای) է արտահայտում, տառադարձվում է նույնպես է (ē).

1պ. քարէ (k'arē) – کاری (karī)

2պ. չիզէ (č'izē) – چیزی (chīzī)

Իսկ եթե ս-ն հանդես է գալիս որպես գոյականակերտ վերջնածանց, ապա տառադարձվում է ի (i).

36պ. սիզավարի (sizavari) – سزاوری (sazawārī)

42պ. չադի (šadi) – شادی (shādī)

գ) ս-ն բառամիջում, երբ նախորդում է ā-ին և a-ին, տառադարձվում է ի (i).

8. ըվլիա (əvlia) – اولیا (auliyā)

43. իհթիաջ (ihtiaǰ) – احتیاج (ihtiyāj)

165. թրբիըթ (t'rbiət') – تربیت (tarbiyat)

166. թզքիըթ (t'zkiət') – تزکیت (tazkiyat)

27. Իզաֆեաը, որ ժամանակակից պարսկերենում հայկական է-ին մոտ հնչում ունի, իսկ տաջիկերենում՝ պարզ ի, սույն բառարանում տառադարձված է ի:

77պ. փիդըրանի գուդըշթը (p'idərani gudəštə) – پدران گذشته (pidarāni guzashta)

115պ. մադըրի ֆրզընդան (madəri frzəndan) – مادر فرزندان (madri farzandan)

Ստորև ներկայացվում է բառարանի բնագիրը ըստ Հ. Ամալյանի հրատարակության. նախ տրվում է առաջաբանը նույնությամբ, իսկ բառարանը՝ նույնականությունների մեր կազմած աղյուսակով:

Բ. Լ. ԶՈՒԳԱՍԶՅԱՆ

[ԱՐԱԲԵՐԵՆ-ՊԱՐՍԿԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ]

Այս բառք են որ չարամանեալ են եռակի ոճիւք և եղանակաւք զընթացս լեզուաց երրակի ազանց՝ զարաբացոց, զպարսից և զհայկազեանց, զոր բացերևապէս ենթադրեալ եղև անուանք և բայք ըստ կարգի և աստիճանի և պարունակեալ հոմանունապես ի տար-բական տառի յալիֆէ սկսեալ մինչև ցիէ. իբր թե յայբէ մինչև ցքէ: Եվ այս յարաբացոց իմաստնոցն, զոր թարգմանեալ եղև ի բանասիրացն պարսից և սակս կարճառուտ և բազմահայեաց երագասահ հոլովմանցն պատուեալ եղև ի նոցունց ի մատեանս տառից և ի մարգարանս խաւսից, որով և յեղափոխեալ ի նոցունց ի հայկականս բարբառ յաղագս ուսումնասէր հասակաց, քանզի կարաւտ գոլով անաւսրաթևից մեղուացն, յոքնագանից հիւթից ներհակաց առ ի լրումն արուեստաստեղծն հնարից որ զճաշակս ճաշակողաց քաղցրացուցանէ:

Քիթաբ ալֆաս: Բաբ ուլ ալիֆ: Գիրք ալֆասին և համաչարումն ալիֆին: Զի իբր հայկազեան լեզուոյ յորջորջումն զառ ի հմտասիրացն զգտեալն բառք գիրք մակագրէ: Սոյն գունակ արաբացոց կորովիքն զչաղաչարեալ ալփաբետքս ալֆաս առճայնեն:

№	Արաբերեն		Պարսկերեն		Հայերեն
	[Բաբ ուլ ալիֆ] *bab ul alif*	[باب الالف]	–	–	*[համաչարումն ալիֆին]*
1	*իբթիդա վը իֆթիթա վը ինիչայ*	ابتدا و افتتاح و انشاء	*աղազի քարէ քըդըն*	آغاز کاری کردن	*սկիզբն գործոյ առնել*
	ibt‘ida və ift‘it‘a və iniša	*ibtidā’ av iftitah va inšā’*	*alazi ka‘rē k‘rdən*	*aghāzi kāri kardan*	
2	*ինթիհա*	انتهاء	*բըփայան չիզէ ըըսիդըն*	بپایان چیزی رسیدن	*գկնի իրի հասանել*
	int‘iha	*intihā’*	*bəp‘ayan č‘izē rəsidən*	*bapāyān chīzī rasīdan*	
3	*իլթիջա վը մլջա*	التجاء و ملجاء	*փընահ գրիֆթըն*	پناه گرفتن	*նպաստ կալեալ*
	ilt‘iǰa və mlǰa	*iltijā’ va maljā’*	*p‘ənah grift‘en*	*panāh gīriftan*	
4	*իլթիղա*	التقاء	*դիդար*	دیدار	*տեսումն*
	ilt‘iła	*iltiqā’*	*didar*	*dīdār*	
5	*ընհա*	انهاء	*ագահ քըդըն*	آگاه کردن	*յուշ առնել*

	ənha	*inhā’*	*agah k‘rdən*	*āgah kardan*	
6	*ըմսա*	امضاء	*գուդըշթըն*	گذشتن	*անցանել*
	əmsa	*imzā’*	*gudəšt‘ən*	*guzashtan*	
7	*ահսա*	احصاء	*շմուրդըն*	شمردن	*հայհոյել*
	ahsa	*ihsā’*	*šmurdən*	*shumurdan*	
8	*ըվլիա*	اولیاء	*դաւսթան*	دوستان	*սիրելիք*
	evlia	*aulyā’*	*daw(o)st‘an*	*dostān*	
9	*աՙդա*	اعداء	*դուշմանան*	دشمنان	*թշնամիք*
	aʹda	*a‘dā’*	*dušmanan*	*dushmanān*	
10	*իղթիդա*	اقتداء	*դր փը ի քսէ ըըվթըն*	درپی کسی رفتن	*ընդ հետս ումեք ընթանալ*
	ilt‘da	*iqtida’*	*dr p‘əī k‘sē rəvt‘ən*	*dar payi kasī raftan*	
11	*ընՙնա*	اثناء	*միանը ի սխուն*	میان سخن	*միջակ խօսից (իմա՝ խոսքի մեջ -Բ. Ջ.)*
	əšna	*asnā’*	*mianəi sxun*	*miyāni sukhun*	
12	*իսթիը դա*	استعادة	*տըլը քրդըն*	طلب مردن	*որոնել*
	ist‘íəda	*isti‘ādat*	*təlb k‘rdən*	*talab kardan*	
13	*իսթիղսա*	استقصاء	*ջահդ քրդըն*	جهد کردن	*ջանս դնել*
	ist‘iłsa	*istiqsā’*	*ǰahd k‘rdən*	*jahd kardan*	
14	*իսթիաֆա*	استعفاء	*թմամ սթըդընի մալ*	تمام ستادن مال	*բովանդակ առումն ընչից*
	ist‘iafa	*isti‘fā’*	*t‘mam st‘ədəni mal*	*tamām satādani mal*	
15	*իսթիադա*	استعاذة	*ըզ սթըմ նալիդըն*	از ستم نالیدن	*ի տուժանաց հեծալ*
	ist‘iada	*isti‘āzat*	*əz st‘əm nalidən*	*az sitam nālīdan*	
16	*ըրբաբ*	ارباب	*խուդավընդան*	خداوندان	*տեարք*
	ərbab	*arbab*	*xudavəndan*	*khudāwandān*	
17	*իՙտիրաբ*	اضطراب	*ջումբիդըն*	جنبیدن	*շարժել*
	iṡtirab	*iztirāb*	*ǰumbidən*	*jumbīdan*	
18	*ըսհաբ*	اصحاب	*իարան*	یاران	*աւգնականք*
	əshab	*ashab*	*iaran*	*yāran*	
19	*ինղիլաբ*	انقلاب	*բըր դչթըն*	برگشتن	*վեր շրջել*

	inɬilab	*Inqilāb*	*bər gšt‘ən*	*bar-gasht‘an*	
20	***ինթղալ***	انتقال	***ըզ ջայէ բըջայէ ըըվթըն***	از جائی بجائی رفتن	***ի տեղոջէ ի տեղի երթալ***
	int‘iɬal	*intiqāl*	*əz ǰayē bəjayē rəvt‘ən*	*az ja’ī bajā’i raftan*	
21	***իսթիղամըթ***	استقامت	***բասթ իսթադըն***	راست ایستادن	***ուղորդ կանգնել***
	ist‘iɬamət‘	*istiqāmat*	*rast ist‘adən*	*rāst īstādan*	
22	***իսթիանըթ***	استعانت	***իարի խուասթըն***	یاری خواستن	***աւգնուԹիւն խնդրել***
	ist‘ianət‘	*isti’ānat*	*iari xuast‘ən*	*yarī khwāstan*	
23	***իջաբըթ***	اجابت	***փասուխ դադըն***	پاسخ دادن	***պատասխանել***
	iǰabet‘	*ijābat*	*p‘asux dadən*	*pāsukh dadan*	
24	***ամանաթ***	امانت	***բաստի***	راستی	***ուղղուԹիւն***
	amanat	*amānat*	*rasti*	*rāstī*	
25	***իֆադըթ***	افادت	***ֆայիդը դադըն***	فائده دادن	***աւգտուԹիւն չնորհել***
	ifadət‘	*ifādat*	*fayidə dadən*	*fa’ida dādan*	
26	***իսթիֆադըդ***	استفادت	***ֆայիդը խուասթըն***	فائده خواستن	***աւգտուԹիւն հայցել***
	īst‘īfadəd	*istifādat*	*fayidə xuastən*	*fā’ida khwāstan*	
27	***իղալըթ***	اقالت	***բը՛յի բազ ըֆքնդըն***	بیع باز افکندن	–
	iɬalət‘	*iqālat*	*bə՛yī baz əfk‘ndən*	*bai‘ baz afkandan*	
28	***ավըթ***	آفت	***ա՛յբ***	عیب	***արատ***
	avət‘	*āfat*	*a՛yb*	¯aib	
29	***ալըթ***	آلت	***սա՛զի քար***	سازکار	***նիւԹ գործոյ***
	alət‘	*ālat*	*sazi kar*	*saz-kar*	
30	***իշարըթ***	اشارت	***ֆրմուդըն***	فرمودن	***հրամայել***
	išarət‘	*ishārat*	*frmudən*	*farmūdan*	
31	***իջազըթ***	اجازت	***ըըվա դաշթըն***	روا داشتن	***իրաւ պահել***
	iǰazət‘	*ijazat*	*rəva daštən*	*rawā dāshtan*	
32	***ըբրամ***[1]	ابرام	***քրանի նմուդըն***	?	–

1 a ըմբրամ:

	əbram	*ibram*	*k'rani nmudən*		
33	***իսթիրահրլթ***	استراحت	***բ՛ր ասուդրն***	برآسودن	***ի վեր հանդչել***
	ist'irahət'	*istirāhat*	*b'r asudən*	*bar āsūdan*	
34	***իայդրլթ***	اعادت	***բազ դրդանիդրն***	باز گردانیدن	***դարձեալ չրջեցուցանել***
	iaydət'	*i'ādat*	*baz grdanidən*	*bāz gardānīdan*	
35	***ըվղալթ***	اوقات	***վխթահա***	وقتها	***ժամանակք***
	əvłat'	*auqāt*	*vxt'aha*	*Waqthā*	
36	***ահլիըլթ***	*اهلیت*	***սիզավարի***	سزاواری	***փոխարէն***
	ahliət'	*alhīyat*	*sizavari*	*sazāwārī*	
37	***ահդաս***	احداث	***ն՛վ ավըրդըն***	نو آوردن	***նոր բերել***
	ahdas	*ahdās*	*n'v avərdən*	*nav āwardan*	
38	***ըսաբըլթ***	اصابت	***բըսըվաբ ըրսիդըն***	بصواب رسیدن	***ի վարճս հասանել***
	əsabət'	*isabat*	*bəsəvab rəsidən*	*ba sawāb rasīdan*	
39	***իֆթիրա***	افتراء	***դրաւղ[2] բավթըն***	دروغ بافتن	***ուննայն գործել***
	ift'ira	*iftirā'*	*druł baft'ən*	*durogh bāftan*	
40	***ումըլխբաս***	ام الخبایث	***մադըրի հըմը փլիդհայ***	مادر همه پلیدها	***մայր ամենայն գարչութեանց***
	uməlxbas	*ummu 'l-khabā'is*	*madəri həmə p̄lidha*	*mādari hama palidha*	
41	***իսթիխրաջ***	استخراج	***բէրուն ավըրդըն***	بیرون آوردن	***արտաքս բերել***
	ist'ixraǰ	*istikhrāj*	*bērun avərdən*	*bīrūn āwardan*	
42	***իբթիհաջ***	ابتحاج	***չադի***	شادی	***ուրախութիւն***
	ibt'ihaǰ	*ibtihāj*	*šadi*	*Shādī*	
43	***իհթիաջ***	احتیاج	***հաջըթմընդի***	حاجتمندی	–
	iht'iaǰ	*Ihtiāj*	*hajətməndi*	*Hājatmandī*	
44	***ըմսաղ[3]***	امثال	***մանընդան***	مانندان	***նմանիք***
	əmsał(l)	*amsāl*	*manəndan*	*manandān*	
45	***Ըմսաք***	امساک	***բազ դրիֆթըն***	باز گرفتن	***դարձեալ ըմբռնել***

2 a և b *դրաւլ:* Հավանաբար նախօրինակ ձեռագրում բառիս վերջին երեք գրերը հստակ չեն եղել և գրիչը *դրաւղ* բառը ընդօրինակել է *դրասլ*. ձեռագրում *աւղ* գրերը ճնարավոր է շփոթել *ասլ*-ի հետ: Ուղղում ենք ըստ իմաստի:

3 b *ըմսալ:*

	əmsāk	*imsāk*	*baz grift‘ən*	*bāz gīriftan*	
46	*Իթիրաֆ*	اعتراف	*մունդիր ամըդըն*	*?*	–
	it‘iraf	*it‘irāf*	*munlir amədən*		
47	*Իղթիրահ*	اقتراح	*ըզ քսէ չիզէ խասթըն*	از کسی چیزی خواستن	*յումեքէ ինչ հայցել*
	ilt‘irah	*iqtirāh*	*əz k‘sē č‘izē xast‘ən*	*az kasī chīze khwāstan*	
48	*Իյթիմադ*	اعتماد	*նէքի քրդըն*	نیکی کردن	*բարի առնել*
	iyt‘imad	*it‘imād*	*nēk‘i k‘rdən*	*nekī kardan*	
49	*Իղթիսա*	اقتضاء	*թաղաշա քրդըն*	تقاضا کردن	–
	ilt‘iša	*iqtizā’*	*tałaša k‘rdən*	*tāqāzā’ kardan*	
50	*Իթիհադ*	اتحاد	*ըգանըգի*	یگانگی	*միություն*
	it‘ihad	*ittihād*	*əganəgi*	*yagānagī*	
51	*Իջթիհադ*	اجتهاد	*ջահդ քրդըն*	جهد کردن	*ջանս առնել*
	ijt‘ihad	*ijtihād*	*ǰahd k‘rdən*	*jahd kardan*	
52	*Իթիղադ*	اعتقاد	*փաքի դիլ*	پاکی دل	*սրբություն սրտի*
	it‘iład	*it‘iqād*	*p‘ak‘i dil*	*pākī dil*	
53	*Ըրշադ*	ارشاد	*րահի րաստ նմուդըն*	راه راست نمودن	*ճանապարհ ուղիղ* ցուցանել*
	əršad	*Irshād*	*rahi rast nmudən*	*rāhi rāst numudan*	
54	*Իմտիրար*	اضطرار	*բէչարըգի*	بیچارگی	*անճարակություն*
	ištirar	*iztirār*	*beč‘arəgi*	*bī-chāragī*	
55	*իխթիար*	اختیار	*գուզիդըն*	گزیدن	*ընդրել*
	ixt‘iar	*ikhtiyar*	*guzidən*	*guzīdan*	
56	*իֆթիխար*	افتخار	*նազիդըն*	نازیدن	*մաղթել*
	ift‘ixar	*ift‘ikhār*	*nazidən*	*nazīdan*	
57	*ինքար*	انکار	*նաչնախթեայ*	ناشناخته	*անծան*
	ink‘ar	*inkār*	*našnaxt‘ea*	*nā-shināKhta*	
58	*ըխբար*	اخبار	*խբըրհա*	خبرها	*հաՒբաւք*
	əxbar	*akhbar*	*xbərha*	*khabarhā*	

* a *ուղեղ:*

59	*իհթիրազ***	احتراز	*խաւշթն րա նիգահ դաշթըն*	خویشتن را نگاه داشتن	*ինքեան պահ ածել*
	iht‘iraz	*ihtirāz*	*xaw(o)štn ra nigah daštən*	*khweshtan ra nigāh dāshtan*	
60	*ազազ****	اعزاز	*ազիզի քրդըն*	عزیزی کردن	–
	azaz	*i‘zāz*	*azizi k‘rdən*	*‘azīzī kardan*	
61	*ասաս*	اساس	*բունիաթ*	بنیاد	*հիմն*
	asas	*asās*	*buniat‘*	*bunyād*	
62	*իլթիմաս*	التماس	*ընդըր խուաստըն*	اندر خواستن	*ի ներս հայցել*
	ilt‘imas	*iltimās*	*əndər xuast‘ən*	*andar khwāstan*	
63	*ըջնաս վը ընվահ*	اجناس و انواع	*գաւնահա*	گوناها	*գոյնք*
	əǰnas və ənvah	*ajnās va anwa‘*	*gaw(o)naha*	*gūnāhā*	
64	*ընֆաս*	انفاس	*նֆըսհայ*	نفسها	*չունչք*
	ənfas	*anfās*	*nfəsha*	*nafasha*	
65	*ընղբաս*	انقباض	*խաւշթըն[4] բըհըմ գրիֆթըն*	خویشتن بهم گرفتن	*զինքն ընդ մի ընկըղնել*
	ənłbas	*inqibāz*	*xaw(o)št‘ən bəhəm grift‘ən*	*khweshtan ba-ham giriftan*	
66	*արազ*	اعراض	*րու գրդանիդըն*	رو گردانیدن	*երես դարձուցանել*
	araz	*i‘rāz*	*ru grdanidən*	*rū gardānīdan*	
67	*ըմբասաստ[5]*	انبساط	*գուսթախի քրթըն*	گستاخی کردن	*համարձակել*
	əmbasat	*imbisāt*	*gust‘axi k‘rt‘ən*	*gustākhī kardan*	
68	*իթաս[6]*	اثاث	*խադիման*	خادمان	*ներքինիք*
	it‘as	*asās*	*xadiman*	*khādimān*	

** ab *հիթիրար*: Միջնադարյան պարսկական գրչագրերում հաճախ կետավոր տառերի կետերը չէին դրվում, որը և տեղիք էր տալիս սխալ ընթերցումների. այստեղ ز (*q*)-ն շփոթված է ر (*r*)-ի հետ:

*** ab *արազ*. այստեղ ևս *q*-ն շփոթված է *r*-ի հետ (տե՛ս նախորդ ծանոթագր.):

4 a *խուրշթըն*, b *խուրշթթն*. հետագա ընդօրինակողների սխալն է. ուղղում ենք ըստ 59-րդ գլխաբառի պարսկերեն թարգմանության:

5 a ձեռագրում նախ գրված է *ըմբասատ*, որը արաբ.-պարսկ. بسط انبسط բառի հարազատ տառադարձումն է, բայց քանի որ պարսկերենում *բ*-ին նախորդող *ն*-ն արտասանվում է *մ*, ուստի գրիչը *ն*-ն դարձրել է *մ*:

6 b բառիս փոխարեն ունի *իթբայ*, որը արաբ.-պարսկ. عتبا (ātbā’) բառն է, նույն՝ հետևորդներ, ծառաներ իմաստով:

69	*ըղտահ*	اقطاع	*վըլայըթ*	ولایت	*գաւառ*
	əltah	*aqtā‘*	*vəlayət‘*	*walāyat*	
70	*ըվհդ*	اوحد	*իըգանըյ*	یگانه	*միաւոր*
	əvhd	*auhad*	*Iəganə*	*yagāna*	
71	*իյթիմահ*	اجتماع	*գիրդ ամըդըն*	گرد آمدن	*ի չուրջ գալ*
	ǰt‘imah	*ijtimā‘*	*gird amədən*	*gird āmadan*	
72	*իմթինահ*	امتناع	*բազ դաշթըն*	باز داشتن	*դարձեալ պահել*
	imt‘inah	*imtinā‘*	*baz dašt‘ən*	*bāz dāshtan*	
73	*ըղարիբ*	اقارب	*խուէշան*	خویشان	*ազինք*
	əłarib	*aqārib*	*xuēšan*	*khweshān*	
74	*իբայըթ վը իյանըբ*	ابعد و اجانب	*բէգանըգան*	بیگانگان	*աւտարք*
	ibayət və iǰanəb	*ab‘ad va ijānab*	*bēganəgan*	*Begānagān*	
75	*ըսֆաֆ*[7]	اضعاف	*դուի չնդան*	دو چندان	*կրկին այն չափ*
	əšiaf	*az‘āf*	*dui č‘ndan*	*du chandān*	
76	*էմինի*	امینی	*սթուար*	استوار	*պինդ*
	ēmini	*amīnī*	*st‘uar*	*ustuār*	
77	*էսլաֆ*	اسلاف	*փիդըրանի գուդըշըթյ*	پدران گذشته	*հայրք անցեալք*
	ēslaf	*aslāf*	*p̄idərani gudəštə*	*pidarāni guzashta*	
78	*էտրաֆ*	اطراف	*քնարահայ*	کناره ها	*եզերք*
	ētraf	*atrāf*	*k‘naraha*	*knāraha*	
79	*ինսէֆ*	انصاف	*հըղ դադըն*	حق دادن	*իրաւունս տալ*
	insēf	*insāf*	*həł dadən*	*haq dādan*	
80	*արաջիֆ*	اراجیف	*խբըրհաի նադրուսթ*	خبرهای نادرست	*համբաւք անհաստատ*
	arajif	*arājīf*	*xbərhai nadrust*	*khabarhāye nā-durust*	
81	*իսթիհղաղ*	استحقاق	*սիզավարի*	سزاواری	*փոխարէն*

7 ab *ըսֆաֆ*. բառիս արաբատառ պատկերում կետ չի եղել ض(q)-ի վրա, ուստի հայ բառարանագիրը այն կարդացել է *u* և ոչ *ů* (q), և կամ ընդօրինակողը ս-ի վրա կետ չի դրել, իսկ բառամիջի ֆ-ն շփոթել է ֆ -ի հետ: Քանի որ այս բառարանում բառամիջի ֆ--ն տառադարձվում է *h*, ուստի բառի տառադարձումը ուղղում ենք *ըսհաֆ:*

	ist‘ihłał	*istihqāq*	*Sizavari*	*Sazāwārī*	
82	*իսթիխֆաֆ*	استخفاف	*սբուք դաշթըն*	سبک داشتن	*թեթև պահել*
	ist‘ixfaf	*istikhfāf*	*sbuk daštən*	*sabuk dāshtan*	
83	*իշթիախ*	اشتیاق	*արզումընդի*	آرزومندی	*կարաւտութիւն*
	ištiax	*Ishtiyāq*	*arzuməndi*	*ārzūmandī*	
84	*ահմըղ*	احمق	*Աբլահ*	ابله	*յիմար*
	ahməł	*Ahmaq*	*Ablah*	*ablah*	
85	*ամլաք*	املاک	*մուլքըհա*	ملک ها	*հայրենիք*
	amlak‘	*Amlāk*	*mulk‘əha*	*mulkha*	
86	*իսթիղբալ*	استقبال	*փէշ ամըդըն*	پیش آمدن	*յառաջ գալ*
	ist‘iłbal	*Istiqbāl*	*p‘ēš amədən*	*pesh āmadan*	
87	*ըղրան*	اقران	*հմսրան*	همسران	*համանմանք*
	əlran	*Aqrān*	*hmsran*	*ham-sarān*	
88	*աջըլ*	اجل	*բզուրգթըր*	بزرگتر	*մեծագոյն*
	aǰəl	*Ajall*	*bzurgt‘ər*	*buzurgtar*	
89	*իհթիմալ*	احتمال	*բուրդուբարի քըրդըն*	بردباری کردن	*առ ու աւար առնել*
	īht‘imal	*Ihtimāl*	*burdubari k‘ərdən*	*burd-barī kardan*	
90	*ըթսալ*	اتصال	*փըյուըսթըն*	پیوستن	*պատուաստել*
	ə̄tsal	*Ittisāl*		*paiwastan*	
91	*իսթիամալ*	استعمال	*բըքար դաշթըն*	بکار داشتن	–
	ist‘iamal	*isti‘māl*	*bək‘ar dašt‘ən*	*ba-kār dāshtan*	
92	*ըղըլ*	اقل	*քմթըր*	کمتر	*պակասագոյն*
	əłəl	*Aqall*	*k‘mt‘ər*	*kamtar*	
93	*ըքսըր*	اکثر	*բէշթըր*	بیشتر	*առաւելագոյն*
	ək‘sər	*Aksar*	*bēšt‘ər*	*beshtar*	
94	*ըսխըր*	اصغر	*քաւչըքթր*	کوچکتر	*կրտսերագոյն*
	əsxər	*Asghar*	*k‘aw(o)č‘ək‘t‘r*	*kūchaktar*	
95	*ահսըն*	احسن	*նէքաւհթր*	نکوتر	*լաւագոյն*
	ahsən	*ahsan*	*nēk‘aw(o)ht‘r*	*nikūtar*	
96	*ալա՛հի ալըմ*	الله اعلم	*խուդա՛հի դանաթըր*	خدای داناتر	*աստուած գիտնագոյն*

	alahi alәm	*allah a'lam*	*xudahi danat'әr*	*khudā'i dānātar*	
97	*իլթիդամ*	*?*	*նաքա՛ւի քրդըն*	نکوئی کردن	*լաւութիւն առնել*
	itiłam		*nek'aw(o)i k'rdәn*	*niku'ī kardan*	
98	*իհթիմամ*	اهتمام	*թիմար դաշթըն*	تیمار داشتن	*խնամ ածել*
	iht'imam	*Ihtimam*	*t'imar dašt'әn*	*timār dāshtan*	
99	*իալամ*	اعلام	*ագա՛հ քրդըն*	آگاه کردن	*յուշ առնել*
	ialam	*a'lam*	*agah k'rdәn*	*āgāh kardan*	
100	*իսթիալամ*	استعلام	*ագահի խուասթըն*	آگاهی خواستن	*ուշմութիւն խնդրել*
	ist'ialam	*isti'lām*	*agahi xuast'әn*	*āgāhī khwastan*	
101	*ինթիղամ*	انتقام	*քինի քշիդըն*	کین کشیدن	*քէն քարշել*
	int'iłam	*intiqām*	*k'ini k'šidәn*	*kīn kashīdān*	
102	*ըքրամ*	اکرام	*քուրամի քրդըն*	کرامی کردن	–
	әk'ram	*akrām*	*k'urami k'rdәn*	*kirāmī kardan*	
103	*ըզդհամ*	ازدهام	*ընբաւհի*	انبوهی	–
	әzdham	*izdihām*	*ənbaw(o)hi*	*ambūhī*	
104	*իհթիրամ*	احترام	*հուրմըթ դաշթըն*	حرمت داشتن	*հարկիս առնել*
	iht'iram	*ihtirām*	*hurmәt' daš'tәn*	*hurmat dāshtan*	
105	*ըլզամ*	الزام	*ըըգրդըն գրիֆթըն*	بگردن گرفتن	*յանձն առնուլ*
	әlzam	*ilzam*	*bәgrdәn grift'әn*	*ba-gardan griftan*	
106	*այամ*	ایام	*բաւզահայ*	روزها	*աւուրք*
	ayam	*aiyām*	*raw(o)zaha*	*rozhā*	
107	*ահսան*	احسان	*նէքաւի քրդըն*	نکوئی کردن	*բարութիւն առնել*
	ahsan	*ihsān*	*nēk'aw(o)i k'rdәn*	*nikū'i kardan*	
108	*իմթիհան*[8]	امتحان	*ազմուդըն*	آزمودن	*փորձել*
	imtihan	*imtihān*	*azmudәn*	*āzmūdan*	
109	*այան*	اعیان	*քթխուդայան*	کدخدایان	*տանուտեարք*

8 ab *իմթիհա* ուղղում ենք ըստ իմաստի, ինչպես նաև նկատի ունենալով 107-111 բառերի վերջավորությունը, որ է *ան*:

	ayan	*a‘yān*	*k‘t‘xudayan*	*kad-khudāyan*	
110	*բվտան*	اوطان	*խանումանհայ*	خانمانها	*տունք*
	əvtan	*autān*	*xanumanha*	*khānmānhā, khānumānhā*	
111	*բրքան*	ارکان	*րուքնըհայ*	رکنها	*անգիւնք*
	ərk‘an	*arkān*	*ruk‘nəha*	*ruknhā*	
112	*բքրահ*	اکراه	*բըսթըմ ֆրմուդըն*	بستم فرمودن	*տուժանաւք հրամայել*
	ək‘rah	*ikrāh*	*bəst‘əm frmudən*	*ba-sitam farmūdan*	
113	*բլբըթէ*	البته	*հր ա՛յինը՛յ*	هر آئنه	*արդարև*
	əlbəte	*al-batta*	*hr ayinə*	*har-ā’ina*	
114	*այադի*	ایادی	*քիրդարհայի նէքաւ*	کردارهای نکو	*գործք բարի*
	ayadi	*ayādī*	*k‘irdarhai nēk‘aw(o)*	*kirdārhāye nikū*	
115	*ումլբլվլբթ*	ام الاولاد	*մադը՛րի ֆրզընդան*	مادر فرزندان	*մայր որդոց*
	umləlvlət	*ummu ‘l-aulād*	*madəri frzəndan*	*mādari farzandān*	
116	*ի՛ն*	ان	*բըդրուսթի*	بدرستی	*առողջութեամբ*
	i՛n	*anna, inna*	*bədrust‘i*	*ba-durustī*	
117	*ադըմ ալա՛հ իըզու*	ادام الله یعزه	*փըյուըսթըյ դարըդ խուդաի ը՛յզ վը ըՂըլ*	پیوسته دارد خدای عزوجل	*հօր աստուծոյ*
	adəm alah iəzu		*p’əyuəst‘ə darəd xudai əyz və əǰəl*	*paiwasta dārad khudā’i ’azza wa jall*	
	Բաբ ուլ բայ	باب البا	–	–	*չարայեուումն բէին, որ է բեն*
	Bab ul ba				
118	*բղա*	بقاء	*փայինդըգի*	پایندگی	*պաշտպանութիւն*
	bła	*baqā’*	*p‘ayindəgi*	*pāyandagi*	
119	*բհա*	بها	*զէբայի*	زیبائی	*ազնուութիւն*
	bha	*bihā*	*zēbayi*	*zibā’ī*	
120	*բը՛ր*	بر	*նէքաւի*	نکوئی	*բարութիւն*

	bə'r	*barr*	*nēk'aw(o)i*	*niku'ī*	
121	*բուր*	بر	*գնդում*	گندم	*ցորեան*
	bur	*burr*	*gndum*	*gandum*	
122	*բար*	بر	*սահրա*	صحراء	*դաշտ*
	bar	*bar*	*sahra*	*sahrā'*	
123	*բթայըթ*	بدایت	*աղազի քար*	آغاز کار	*սկիզբն գործոյ*
	bt'ayət'	*badāyat*	*ałazi k'ar*	*āghāzi kār*	
124	*բրըքըթ*	برکت	*ըվգունի*	افزونی	*յաւելումն*
	brək'ət'	*barakat*	*əvzuni*	*afzūni*	
125	*բրքաթ*	برکات	*ըվգունհայ*	افزونها	*յաւելուածք*
	brk'at'	*barakāt*	*əvzunha*	*afzūnhā*	
126	*բսայըթ*	بضعة	*փարչի չիզ քի բըջա՛յէ ֆրիստընդ*	پارۀ چیز که بجائی فرستند	*սակաւիկ ինչ որ ի տեղի մի յուղարկեն*
	bsayət'	*baz'at*	*p'arēi č'iz k'i bəǰayē fristənd*	*pāra'i chīz ki bajā'i firistand*	
127	*բթիէհ*	بديهه	*նագահ գուֆթըն*	ناگاه گفتن	*յանկարծակի ասել*
	bt'iēh	*badīha*	*nagah guft'ən*	*nā-gāh guftan*	
128	*բշարըթ*	بشارت	*մուժդհ դադըն*	مژده دادن	*աւետիս տալ*
	bšarət'	*bashārat*	*muždh dadən*	*mizhda (muzhda) dadan*	
129	*բալըղըթ*	بلاغة	*նամըի դպիրի*	نامۀ دبیری	*նամակ դպրի*
	balələt'	*balāghat*	*naməi dpiri*	*nāma'i dabiri (dibirī)*	
130	*բալիխ*	بالغ	*բըհըդի մրդի րսիդըն*	بحد مردی رسیدن	*ի տիս մարդկութեան հասանել*
	balix	*bāligh*	*bəhədi mrdi rsidən*	*ba-hadi mardī rasīdan*	
131	*բղայըթ*	بقية	*բաղիմանդըհ*	باقیمانده	*այլևս մնացեալ*
	błayət'	*baqiyat*	*balimandəh*	*bāqī-mānda*	
132	*բսարըթ*	بصارت	*բէնաի*	بینائی	*տեսութիւն*
	bsarət'	*basārat, bisārat*	*bēnai*	*bīnā'i*	

133	*բահդ*	بعث	*բ՛ր ընքէխդն*	برانگیختن	*ի վեր ընդեցումն, որ է պայքար*
	bahd	*ba’s*	*b՛r ənk‘ēxdn*	*bar-angekhtan*	
134	*բխս*	بخس	*քմի*	کمی	*պակասութիւն*
	bxs	*bakhs*	*k‘mi*	*kamī*	
135	*բահր*	بحر	*դրիահ*	دریا	*ծով*
	bahr	*bahr*	*driah*	*daryā*	
136	*բսատ*	بساط	*չատըրուան*	شادروان	*նոհ [իմա՝ սփռոց - Բ. Ջ.]*
	bsat	*bisāt*	*šatəruan*	*shādurwan*	
137	*բըյի*	بیع	*ֆրաւխթըն*	فروختن	*վաճառել*
	bəyi	*bai‘*	*fraw(o)xt‘ən*	*firūkhtan*	
138	*բայի*	بایع	*ֆրաւշընդըհ*	فروشنده	*վաճառող*
	bayi	*bāi‘*	*fraw(o)šəndəh*	*firoshanda*	
139	*բախիլ*	بخیل	*զուֆթ*	زفت	*նախանձ*[9]
	baxil		*zuft*	*Zuft*	
140	*բատիլ*	باطل	*նահըղ*	ناحق	*անիրաւ*
	batil	*bātil*	*nahəł*	*nā-hag*	
141	*բուխթան*	بهتان	*դրաւղ*	دروغ	*զուր*
	buxt‘an	*buhtān*	*draw(o)ł*	*durogh*	
142	*բաին*	باین	*բյդիդ քրդըն*	پدید کردن	–
	bain	*bāin*	*bydid k‘rdən*	*padīd kardān*	
143	*բնին*	بنان	*սըր ընգուշթան*	سرانگشتان	*ծայրք մատանց*
	bnin	*banan*	*sər əngušt‘an*	*sar-angushtān*	
144	*բուդ*	بعد	*դուրի*	دوری	*հեռաւորութիւն*
	bud	*bu‘d*	*duri*	*dūrī*	
145	*բիքըր*	بکر	*դաւշիզըհ*	دوشیزه	*կոյս*
	bik‘r	*bikr*	*daw(o)šizəh*	*doshīza*	
146	*բսատ*	بذاءت	*ֆրիբընդը*	فریبنده	*խաբող*
	bsat	*bazā‘t*	*fribəndə*	*frībanda*	
147	*բդայըթ*[10]	بدایت	*քա՛րի նըվ*	کار نو	*գործ նորոգ*

9 ab *կարագ. զուֆթ* «նախանձ» այստեղ շփոթված է *զուբդ* «կարագ» բառի հետ: Ուղղում ենք ըստ արաբերեն *բախիլ-զուֆթ* բառերի իմաստի, որ է «նախանձ»:

10 Տե՛ս 123 գլխաբաղը:

	bdayət‘	*badāyat*	*k‘ari nəv*	*kāri nav*	
148	***բչիր***	بشیر	***մուժդըհ դահընդը***	مژده دهنده	***աւետեաց տուող***
	bšir	*bashīr*	*muždəh dahəndə*	*muzhda dihanda*	
149	***բդի***	*?*	***փարսայ***	*?*	***հովանոց***
	bdi		*p‘arsa*		
150	***բուղի***	بقعه	***ջայիգահ***	جایگاه	***տեղի***
	buli	*buq‘a*	*ǰayigah*	*jāy-gāh*	
151	***բաղի***	باقی	***բազմանդըհ***	بازمانده	***այլ մնացեալ***
	bali	*bāqī*	*bazmandəh*	*bāz-mānda*	
152	***բրի ըլսահաթ***	*?*	***բէզարի ըզ գունահ***	بیزاری از گناه	***հրաժարումն ի մեղաց***
	bri əlsahat‘		*bēzari əz gunah*	*bīzārī az gunāh*	
153	***բլաթ***	بلد	***չահր***	شهر	***քաղաք***
	blat‘	*balad*	*šahr*	*shahr*	
154	***բլաթի***	بلدی	***չահրի***	شهری	***քաղաքացի***
	blat‘i	*baladī*	*šahri*	*shahrī*	
155	***բայ ըլրաս վը ըլիան***	بالرأس و العین	***սըր վը էչմ***	سر و چشم	***գլուխ և աչք***
	bay əlras və əlian	*bi ’l-ra’s və ’l-‘ain*	*cər və č‘šm*	*sar va chashm*	
	Բաբ ուլ թայ	باب التا	–	–	***յեռահիւսումն թէին որ է թաւ***
	bab ul t‘a				
156	***թղասա***	تقاضا	***տլըբ քրդընն***	طلب کردن	***հետախոյզ լինել***
	t‘ləša	*taqāzā*	*tləb k‘rdən*	*talab kardan*	
157	***թբրա***	تبر	***բէրանի***	بیرانه	***աւերակ***
	t‘bra	*tabr*	*bērani*	*berāna*	
158	***թհընդիբ***	*?*	***գուզիդընն***	گزیدن	***ընդրել***
	t‘həndib		*guzidən*	*guzīdan*	
159	***թրթիբ***	ترتیب	***դմադըմ նիհադընն***	دمادم نهادن	***յարմարել, հուպ ընդ հուպ դնել***

	t‘rt‘ib	*tartīb*	*dmadəm nihadən*	*dam-ā-dam nihādan*	
160	*թղալուբ*	تغالب	*ղլբբը քրդըն*	غلبه كردن	*աղաղակ առնել*
	tłalub	*taghālub*	*łləbə k‘rdən*	*ghalaba kardan*	
161	*թայասուբ*	*?*	*գուքրուի քրդըն*	*?*	*երկդիմությիւն առնել*
	t‘ayasub		*gukrui k‘rdən*	*?*	
162	*թայջուբ*	تعجب	*չքուֆդ դաշթըն*	شگفت داشتن	–
	t‘ayǰub	*ta‘ajjub*	*šk‘ufd daštən*	*shigift (shiguft) dāshtān*	
163	*թաղրուբ*	تقرب	*նիզդիքի ջուսթըն*	نزديكى جستن	*մատաակայությիւն յուզել*
	tałrub	*taqarrub*	*nizdik‘i ǰustən*	*nazdīkī jūstan*	
164	*թմշիըթ*	تمشيت	*բանդըն*[11]	راندن	*վարել*
	t‘mšiət‘	*tamshiyat*	*randən*	*rāndan*	
165	*թրբիըթ*	تربيت	*փրուբրդըն*	پروردن	*մարզել*
	t‘rbiət‘	*tarbijat*	*p‘ruərdən*	*parwardan*	
166	*թզքիըթ*	تزكية	*ադըլըթ քրդըն*	عدالت كردن	*իրաւունս առնել*
	t‘zk‘iət‘	*tazkiyat*	*adələt‘ k‘rdən*	*’adālat kardan*	
167	*թհնիըթ*	تهنيت	*բըշադի փուրսիդըն*	بشادى پرسيدن	*յուրախությենէ հարցանել, որ է գոհությիւն*
	t‘hniət‘	*tahniyat*	*bəšadi p‘ursidən*	*ba-shādi pursīdan*	
168	*թայգիըթ*	تعزيت	*բըղըմ փուրսիդըն*	بغم پرسيدن	*ի տրտմությեան հարցանել, որ է մխիթարությիւն*
	t‘ayziət‘	*ta’aziyat*	*bəłəm p‘ursidən*	*ba-gham pursīdan*	
169	*թըվըզու*	تواضع	*չըշմ դաշթըն*	چشم داشتن	*ակն ունել*
	t‘əvəzu	*tawāzu‘*	*č‘əšm daštən*	*chashm dāshtan*	
170	*թջրիբըթ*	تجربت	*ազմաիչ*	آزمايش	*փորձանք*

11 ab *բրաանդըն:*

	t‘ǰribət‘	*tajribat*	*azmaiš*	*āzmāyish*	
171	**թըֆչու**[12]	توجه	**նիգահ քրդըն**	نگاه کردن	**հայել**
	t‘əfǰu	*tawajju’*	*nigah k‘rdən*	*nigāh kardan*	
172	**թըբհիչ**	تبهیج	**չադի**	شادی	**ուրախություն**
	t‘əbhij	*Tabhīj*	*šadi*	*shādī*	
173	**թրչիհ վը թըւսիլ**	ترجیح و تفصیل	**ֆասլ նիհադըն**	فصل نهادن	–
	t‘rǰih və t‘əvsil	*tarjīh va tafsīl*	*fasl nihadən*	*fasl nihādan*	
174	**թսրիհ**	تصریح	**քուսիլ քրդըն**	کسیل کردن	**խորհուրդ առնել**
	t‘srih	*tasrīh*	*k‘usil krdən*	*kusel kardan*	
175	**թմրադ**	تمرد	**գրդըն քչիդըն**	گردن کشیدن	**ապստամբել**
	t‘mrad	*tamarrud*	*grdən k‘šidən*	*gardan kashīdan*	
176	**թյամլութ**	?	**թիմար դաշտըն**	تیمار داشتن	**խնամ ածել**
	t‘yamlut		*t‘imar dašten*	*tîmār dāshtan*	
177	**թըվլութ**	?	**նաւբըթի քրդըն**	نوبتی کردن	–
	təvlut‘		*naw(o)bət‘i k‘rdən*	*naubatī kardan*	
178	**թչդիդ**	تشدید	**սխթ քրդըն**	سخت کردن	**խիստ առնել**
	t‘šdid	*tashdīd*	*sxt‘ k‘rdən*	*sakht kardan*	
179	**թահմիըթ**	تحمید	**սթուդըն**	ستودن	*[գովութիւն]* **առնել**[13]
	t‘ahmiət‘	*tahmid*	*st‘udən*	*situdan, sutūdan*	
180	**թահդիդ**	تحدید	**բըհըմ քրդըն**	بهم کردن	**ի մի առնել**
	tahdid	*tahdid*	*bəhəm k‘rdən*	*ba-ham kardan*	
181	**թղլիդ**	تقلید	**դր գրդն քրդըն**	در گردن کردن	–
	t‘łlid	*taqlīd*	*dr grdn k‘rdən*	*dar gardan kardan*	
182	**թաքիդ**	تأکید	**ըսթուար քրդըն**	استوار کردن	**պնդել**
	t‘ak‘id	*ta’kīd*	*əst‘uar k‘rdən*	*ustuwār karden*	
183	**թայյիդ**	تائید	**նրումընդ**	نیرومند	**չնորհաց**

12 ab թըֆուչ:

13 ab *առնուլ:* Այստեղ *սթուղըն* շփոթված է *սթաղըն* (վերցնել, ստանալ, առնուլ) բայի հետ:

	t‘ayyid	*ta’yīd*	*nruməndd*	*nīrūmand*	
184	*թլմիըթ*	تلميذ	*չագիրդ*	شاگرد	*աշակերտ*
	t‘lmiət‘	*talmīz, tilmīz*	*šagird*	*shāgird*	
185	*թաւֆիր*	توفير	*զիադըթ*	زيادت	*աւելիք*
	t‘aw(o)fir	*taufīr*	*ziadət‘*	*ziyādat*	
186	*թզուիր*	تزوير	*բըդրաւզ սախթըն*	بدروغ شاختن	*ստայաւզ բանս ստեղծանել*
	t‘zu(v)ir	*tazwīr*	*bədraw(o)ł saxt‘ən*	*ba-durogh sākhtan*	
187	*թղդիր*	تقدير	*անդազըյ քրդըն*	اندازه كردن	*քանոն առնել*
	t‘ł̇dir	*taqdīr*	*andazə k‘rdən*	*andāza kardan*	
188	*թղդիմ*	تقديم	*փէչ դաշթըն*	پيش داشتن	*յառաջ պահել*
	t‘ł̇dim	*taqdīm*	*p‘ēš dašt‘ən*	*pesh dāshtan*	
189	*թախիր*	تأخير	*փըս դաշթըն*	پس داشتن	*յետս պահել*
	t‘axir	*ta’khīr*	*p‘əs dašt‘ən*	*pas dāshtan*	
190	*թվղիհ*	توقيع	*նշանի փաթշահ*	نشان پادشاه	*նշան արքայի*
	t‘vł̇ih	*tauqī‘*	*nšani p‘at‘šah*	*nishānī pādshāh*	
191	*թըըթու*	?	*փայրըվի քրդըն*	پيروی كردن	*հետագնացութիւն առնել*
	t‘bət‘u		*p‘ayrəvi k‘rdən*	*pai-rawī kardan*	
192	*թայրուզ*	تعرض	*ըընջ ըըսանիդըն*	رنج رسانيدن	*ցաւ հասուցանել*
	t‘ayruz	*ta‘arruz*	*rənǰ rəsanidən*	*ranj rsānīdan*	
193	*թաըրուֆ*	تعرف	*փուրսիդըն*	پرسيدن	*հարցանել*
	t‘aəruf	*ta‘arruf*	*p‘ursidən*	*pursīden*	
194	*թըմիզ*	تمييز	*ջուդա քրդըն*	جدا كردن	*ընդրել*
	t‘əmiz	*Tamyīz*	*ǰuda k‘rdən*	*judā kardan*	
195	*թղղուզ*	?	*նախաւչ դաշթըն*	ناخوش داشتن	*անհանգիստ պահել*
	t‘ł̇uz	*tājawuz*	*naxaw(o)š daštən*	*nā-khwush dāshtan*	
196	*թջաւուզ*	تجاوز	*դր գուդըշթըն*	درگذشتن	*գանց անել*
	t‘ǰaw(v)uz	*tajāwuz*	*dr gudəštən*	*dar-guzashtan*	

197	*թՋասուս*	تجسس	*ջուստ վը ջաւ քրդըն*	جست و جو کردن	*խոյզ և յոյզ առնել*
	t‘ǰasus	*tajassus*	*ǰust və ǰaw(o) k‘rdən*	*just-u-jū kardan*	
198	*թլբիս*	تلبیس	*փըյվըստը քրդըն*	پیوست کردن	*պատուաստ առնել*
	t‘lbis	*talbīs*	*p‘əyvəstə k‘rdən*	*paiwast kardan*	
199	*թշուիշ*	تشویش	*աշաւբ քրդըն*	آشوب کردن	*կռիւ առնել*
	t‘šuiš	*tashwīsh*	*ašaw(o)b k‘rdən*	*āshob kardan*	
200	*թխսիս*	تخصیص	*խաս քրդըն*	خاص کردن	*իւրացուցանել*
	t‘xsis	*takhsīs*	*xas k‘rdən*	*khās kardan*	
201	*թֆհուզ*	تفحص	*քաւիդըն*	کاویدن	–
	t‘fhuz	*tafahhus*	*k‘awidən*	*kāwīdan*	
202	*թըրգ*	ترک	*բըջայէ մանդըն*	بجائی ماندن	*ի տեղի մի մնացեալ*
	t‘ərg	*tark*	*bəǰayē mandən*	*ba-jā’ī māndan*	
203	*թդարուք*	تدارک	*ընդըր իաֆթըն*	اندر یافتن	*խոր իմանալ*
	t‘daruk‘	*tadāruk*	*əndər iaftən*	*andar yāftan*	
204	*թքըլուֆ*	تکلف	*զիադըթի*	زیادتی	*առաւելութիւն*
	t‘k‘əluf	*takalluf*	*ziadət‘i*	*ziyādati*	

СРЕДНЕВЕКОВЫЙ СЛОВАРЬ ЗАИМСТВОВАННЫХ АРАБСКИХ СЛОВ В ПЕРСИДСКОМ ЯЗЫКЕ, НАПИСАННЫЙ АРМЯНСКИМИ БУКВАМИ

(Р е з ю м е)

В девятом томе «Вестника Матенадарана» опубликован фрагмент одного арабо-персидско-армянского средневекового словаря, написанного армянскими буквами. В словаре 204 арабских слова с персидскими переводами. Рукопись относится к XV в. и представляет собой словарь арабских заимствований персидского языка.

В предисловии рассматриваются правила армянской транскрипции арабских и персидских слов, применяющиеся в этом словаре, который полностью публикуется с арабской, персидской и латинской транскрипциями.

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՇՆՈՐՀԱԼԻ, ՀԱՅՐԵՆԱՍԵՐ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ[1]

«Գուցե դժվար լինի ձեզ համար հասկանալ այն խոր թախիծը, որ զգում են սփյուռքի մտավորականները, իրենց մեկուսացած զգալով հայրենիքի վերածնության աշխատանքից: Մեզ տրված է հեռվից հիացողի և ծափահարողի կրավորական և անօգնական դերը, մինչդեռ մեր բուռն ցանկությունն է լինել ասպարեզի վրա, մասնակցել ստեղծագործ վերելքին և գտնվել երջանիկ հաղթանակների չքերթի մեջ»:

Հոգու խորքում սուր ցավ ես զգում, երբ ստիպված ես լինում համակերպվելու այն դաժան իրողությանը, որ այս տողերի հեղինակը բազմաչնորհ Զորայր Միրզայանը (1916-1964), պարսկահայ մտավորականության լավագույն ներկայացուցիչներից մեկը՝ այլևս չկա, որ նրա կյանքի թելը կտրվել է անժամանակ:

Թեհրանում է իր ողջ կյանքն ապրել նա: Ծնվելով հայտնի թարգմանիչ, հայ գրականության երախտավորներից մեկի՝ Հովսեփ Միրզայանի ընտանիքում, նա հասակ է նետում գրականությամբ հագեցված միջավայրում, սնվում հայրենի և օտար դասականների ստեղծագործություններով և ինքն էլ դառնում գրող ու թարգմանիչ:

Արևելքի ու արևմուտքի բախման կիզակետերից է Թեհրանը, հինավուրց Իրանի մայրաքաղաքը. փչրվում են դարերով սրբագործված բարքերն ու սովորությունները, կյանքի հակասությունների ծայրահեղ բևեռացում է տեղի ունենում: Պայքարի ալիքն այստեղ մերթ դեպի վեր է խոյանում, մերթ սուզվում խորխորատները:

Ահա այս պայմաններում է ապրում կյանքի սիրով արբած, լույսի և արևի կարոտ գրողը, մարդը՝ մտահոգված մարդու և աշխարհի ճակատագրով, հոգում անթեղած իր աստանդական ժողովրդի ծանր բախտը, նրա հույսերն ու իղձերը, անսահման կարոտը՝ նորոգ հայրենիքի նկատմամբ: Դեռևս պատանի՝ Զորայրը հրապուրվում է Թագորով, թարգմանում նրանից և 1932 թվականին, երբ մեծ գրողն այցելում է Իրան, հանդիպում ունենում հետը: Երբ հասունանում է, տարվում է Արևելքի մեծ բանաստեղծներով, թարգմանում Օմար Խայամ ու Բաբա Թահեր, սիրահարվում Տերյանին ու Զարենցին և գրում բանաստեղծություններ: Հայրենի ու համաշխարհային գրականության դասականները թևավորում են նրան, և նա փնտրում է, որոնում:

Զորայրի սիրտը բաբախում էր հայրենասիրությամբ: «Նամակ Հայաստան գտնվող բարեկամիս՝ բանաստեղծ Դևին» բանաստեղծության մեջ նա գրում է.

Ես չգիտեմ ո՛րն ասեմ, ես չեմ եղել մեր երկրում,
Ջի ճաճանչել աչիս մեջ նրա լույսը անհատնում,

---

[1] Հրապարակվել է «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթում, 1965, № 4, օգոստոսի 22, էջ 7:

Բայց երանի աչ֊երիդ, fո բիբերիս երանի,
Ուր Մասիսն է ժայռացել փարթամությամբ ծիրանի:

Բեղուն է եղել Զորայր Միրզայանի գրիչը, նա գրել է բազմաթիվ խոհական ու սիրային բանաստեղծություններ, փորձել է արձակի միջոցով թափանցել կյանքի հատակը և ցույց տալ տնտեսական կարիքի ճիրաններում խարխափող երիտասարդներին («Եվ կխսել պատառը»), հեղձուցիչ իրականության մեջ տապալվող մարդուն («Մի մկան մասին»):

Քաջ տիրապետելով պարսկերեն, ռուսերեն, անգլերեն ու ֆրանսերեն լեզուներին, նա մեծ վարպետությամբ թարգմանել է Ֆիրդուսի ու Սաադի, Ջալալ Էդդին Ռումի ու Հաֆեզ, Խաքանի ու Նիզամի, ինչպես նաեւ արեւմտաեվրոպական ու ռուսական հանրահռչակ գրողներին: Նա քաջատեղյակ էր ժամանակակից համաշխարհային գրականությանը, որի լավագույն ներկայացուցիչներից կատարած վարպետ թարգմանությունները հաճույքով են կարդացվում «Նոր էջի» հատորներում:

Նա երկար տարիների ընթացքում գրել է պարսից գրականության պատմությունը՝ հին ժամանակներից մինչև մեր օրերը, որի առանձին հատվածներն են միայն հրատարակվել սփյուռքահայ մամուլում:

Զորայր Միրզայանի ստեղծագործություններից ու թարգմանություններից առանձին գրքերով լույս են տեսել «Թաց մայթը» բանաստեղծությունների ժողովածուն, «Աբու Ալի Սինայի կյանքը» ուսումնասիրությունը, Բաբա Թահերի «Քառյակները», Դոստոևսկու «Հնդիկը», Մարկ Տվենի «Պատմվածքները» եւ այլն. իսկ որքա՛ն է անտիպ մնացել...

Վերջերս Զորայրի գրչակիցները սիրով ու խնամքով ի մի են հավաքել ու հրատարակել նրա բանաստեղծությունների ու պատմվածքների մի մասը՝ առանձին գրքով: Դա հարգանքի պսակ է նրա թարմ հոգեթմբին:

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՐՍԿԵՐԵՆ ՆՈՐ ՀԱՆԴԵՍ[1]

Թեհրանից խորին շնորհակալությամբ ստացել եմ «Պայման» հայագիտական պարսկերեն եռամսյա նոր հանդեսի առաջին համարը:

Ջերմորեն շնորհավորելով «Պայմանի» ծնունդը, ցանկանում եմ հաջողություններ և հարատևում, իսկ հարգո խմբագրին՝ ուժ, կորով ու ծով համբերություն՝ առ ի կատարումն ստանձնած դժվարին պարտականության:

Հիրավի պետք է ասել, որ նման հրատարակության պակասը շատ վաղուց էր զգացվում Իրանի գրական անդաստանում, պարսիկ մտավորականությունը ի վերջո մայրենի լեզվով կարող է հաղորդակից դառնալ իր անմիջական հարևան, բարեկամ հայ ժողովրդի մշակույթին, նրա հինավուրց գիր ու գրականությանը, ժամանակակից գիտությանն ու մշակույթին:

Հանդեսի խորագիրը դիպուկ է ընտրված. ժամանակակից պարսկերենում, ինչպես և հնում «Փէյման» (հայերենում նույնպես «Պայման») նշանակում է «դաշինք», իսկ դաշինքը դրական հասկացություն է, որ պահանջում է բարի ու բարեկամական հարաբերությունների առկայություն երկու պայմանավորվող կողմերի միջև: Համոզված ենք, որ նոր հանդեսը կարդարացնի իր անվանումը և կնպաստի հարևան երկու երկրների բարեկամական կապերի ամրապնդմանը:

Ուշադրությամբ ծանոթացա հրապարակված նյութերին. խմբագրությունը ճիշտ է վարվել՝ հանդեսը բացելով Մաշտոցյան Մատենադարանին նվիրված երեք հոդվածներով. առաջինում ընդհանուր տեղեկություններ են տրվում Մատենադարանի մասին, երկրորդում ներկայացվում են Մատենադարանում պահվող պարսկերեն փաստաթղթերը, իսկ երրորդում արժևորվում են Մատենադարանի արևելյան մանրանկարչության նմուշները: Իրանագետները պետք է տեղյակ լինեն, թե ինչպիսի հարստություն է ամբարված այս գանձարանում. դեռ քանի-քանի՛ սերունդներ պիտի ուսումնասիրեն այդ բոլորը: Իրենք՝ պարսիկները կարող են շատ նոր ու հազվագյուտ տեղեկություններ ստանալ իրենց պատմության ու մշակույթի, հայ-իրանական դարավոր հարաբերությունների վերաբերյալ: Փաստերն ու տեղեկությունները անսպառ են, միայն անհրաժեշտ է հայերենին ու պարսկերենին քաջագիտակ լինել՝ այդ բոլորը ի սպաս դնելու երկու բարեկամ ժողովուրդների կապերի ամրապնդմանը:

Իրանահայ ճարտարապետ Վարուժան Առաքելյանը պարբերականում հանդես է եկել պարսկական ճարտարապետության ոճով 18-րդ դարում Երևանում կառուցված «Կապույտ մզկիթին» վերաբերող հետաքրքիր ու արժեքավոր հոդվածով, որտեղ նախ տրվում է մզկիթի կառուցման պատմությունը, ապա նրա ներկա վիճակը՝ հին ու նոր լուսանկարներով և անհրաժեշտ վերանորոգումների առաջարկներով:

Հայ պատմագրությունը հանդեսում ներկայացված է Ագաթանգեղոսին նվիրված հանգուցյալ պատմաբան Արամ Տեր-Ղևոնդյանի հոդվածով: Այս նյութի առկայությունը հանդեսում ենթադրել է տալիս, որ առաջիկայում պարբերաբար հոդվածներ կտպագր-

---

[1] Հրապարակվել է «Գրական թերթում», 1996, № 13, օգոստոսի 2, էջ 4:

վեն նաև մեր մյուս պատմիչների վերաբերյալ: Եվ դա լավ կլինի, քանզի պարսիկ մտավորականներից քչերն են ծանոթ հայկական աղբյուրներին: Նման նյութերը պարսիկ ընթերցողին ավելի հետաքրքիր դարձնելու միտումով նպատակահարմար կլիներ, եթե հիշատակվեին նաև, թե տվյալ աղբյուրը կամ աղբյուրները ինչ նոր փաստեր են մատուցում իրանագիտությանը:

Հայտնի է հայերի կարևոր ու նշանակալի դերը Իրանի գիտության ու մշակույթի զարգացման մեջ: Հանդեսի խմբագրությունը միանգամայն իրավացի հպարտությամբ իր ընթերցողներին է ներկայացրել դրանցից մի քանիսի՝ հոգեբույժ ակադեմիկոս Հարություն Դավթյանի, Իրանի Քաղաքաչինության բնագավառում կարևոր ավանդ ունեցող հանգուցյալ ճարտարապետներ Վարդան Հովհաննիսյանի, Պոլ Աբգարի և Գաբրիել Գևորգյանի համառոտ կենսագրությունները: Այս անունները և նման շատ արժանավոր իրանահայեր մեզ՝ հայաստանցիներիս անծանոթ են, բացակայում են մեր հանրագիտարաններում և պետք է ուշադրության արժանանան:

Հայ գրականության վաստակավոր թարգմանիչ Ահմադ Նուրիզադեն այս անգամ հանդես է եկել արդեն հայ հին ու նոր գրականությանը նվիրված ընդարձակ հոդվածով, որ կարելի է արժեքավորել որպես պարսիկ բանաստեղծ-գրականագետի կողմից հայ բանաստեղծությանը տրված գնահատական: Կարծում ենք, հայ գրականությանը անծանոթ ընթերցողներին ավելի կհետաքրքրի հայ բանաստեղծների որոշակի դիմանկարների մատուցումը՝ նրանց ստեղծագործություններից կատարված թարգմանություններով: Պրն. Նուրիզադեն, որ հայտնի է հայերենից պարսկերեն կատարած վարպետ թարգմանություններով, ի վիճակի է այդ գործը ի կատար ածելու:

«Փէյմանում» պարսիկ ընթերցողին են ներկայացված վերջերս հանգուցյալ արձակագիր Վալտեր Արամյանի մի քանի գողտրիկ պատմվածքներ՝ «Գրիր թող Տանյան Երևան գա», «Ընկած ծառը» և «Անկրկնելի համերգը»:

Հանդեսի տեղեկատվական բաժնում ներկայացված են իրանագետ Գառնիկ Ասատրյանի խմբագրությամբ 1993-ից Երևանում լույս տեսնող «Իրան-Նամե» պարբերականի տեսությունը, ինչպես նաև՝ «Մի հայացք ԱՊՀ երկրների և կովկասյան իրանագիտության ու իրանագետների վրա», 1995-ին Դանիայի գիտությունների ու գրականության ակադեմիայի կողմից Կոպենհագենում հրապարակված Գառնիկ Ասատրյանի և Ֆրեյդում Վահմանի համատեղ հեղինակած «Բախտիարական բանաստեղծություն» և Մարիա Այվազյանի (Թերզյանի) «Հայերենում արևմտյան միջին իրաներենից փոխառյալ բառերը» հրատարակությունները: Հանդեսը վերջում ունի հայ-իրանական ժամանակակից հարաբերությունների վերաբերյալ տեղեկատվական փոքրիկ բաժին:

Կրկին չնորհավորելով հայագիտական այս հանդեսի հրատարակումը, հուսով ենք, որ խմբագրության շուրջ հավաքված հայագետները իրենց որոշակի լուման կմուծեն հայ-իրանական բարեկամության ամրապնդման գործում:

ԲՅՈՒՐԱՍՊԻ ԱԺԴԱՀԱԿԻ ԱՌԱՍՊԵԼԸ ԸՍՏ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ[!]

Հին Արևելքի քաղաքական ու հասարակական կյանքի առաջընթացի մեջ գործոն մասնակցություն են ունեցել իրանական ժողովուրդները, որոնք իրենց քաղաքական հզորության հետ մեկտեղ ունեցել են նաև ճոխ ու զարգացած մշակույթ: Համաշխարհային խոշոր արժեք ներկայացնող «Ավեստան» և հետագա դարերի, այսպես կոչված, պահլավական գրական մի շարք հուշարձանները, ինչպես նաև ողջ պարսկալեզու գրականությունը հարուստ նյութ են մատակարարում Հին Արևելքի ժողովուրդների դիցաբանության ու դյուցազներգության, նրանց պատմական հարուստ անցյալի մասին: Սակայն սակավ արժեքավոր չեն նաև Արևելքի մյուս ժողովուրդների գրական հուշարձաններում, հավասարապես և ժողովրդական բանահյուսության մեջ պահպանված փաստերն ու հաղորդումները իրանական ժողովուրդների պատմության, մշակույթի, նրանց հավատալիքների ու առասպելների մասին:

Հարևան ժողովուրդների գրական կոթողներում պահպանված փաստերի մանրամասն համեմատությունը, նրանց ուշադիր ու մանրակրկիտ ուսումնասիրումը հնարավորություն են տալիս նոր ու հետաքրքիր եզրակացությունների:

Իրանական ժողովուրդների թե՛ պատմության և թե՛ մշակույթի մասին հարուստ և արժեքավոր փաստեր են պահպանված նաև հայ մատենագիրների մոտ և բանահյուսության մեջ: Արևելքի ամենասիրված ու փառաբանված հերոսներից մեկի՝ Ռոստամի անվան ամենավաղ հիշատակության պատիվը մինչ այժմ հայտնի գրավոր հուշարձաններում պատկանում է Մովսես Խորենացուն: «Ռոստամի անունը, — գրում է արևելյան գրականությունների լավագույն մասնագետներից Է. Բրաունը, — գտնվել է միայն ուշ շրջանի պահլավական գրություններ մեջ մեկ կամ երկու տեղ, մինչդեռ նրա հուժկու գործերը հայտնի են եղել հայազգի Մովսես Խորենացուն»[1]:

Նոր հայտնաբերված սոգդիական ֆրագմենտները Ռոստամի և նրա նժույգ Ռախշի մասին նույնպես ավելի վաղ չեն, քան Խորենացու «Պատմությունը»: Նրան հայտնի են եղել Ռոստամի որտեղացի լինելն ու նրա առասպելական ուժը. «...Պարսիկք վասն Ռոստոմայ Սագճկի հարիւր և քսան փղոց ոյժ ասեն ունել»[2]:

Խորենացին, ինչպես հայտնի է, հայ ժողովրդական առասպելական զրույցների գրառումներին զուգահեռ՝ իր մեկենաս Սահակ Բագրատունու խնդիրքով ու հանձնարարությամբ, պատմել է նաև պարսից առասպելների մասին որոնք նույնպես իրանական զրույցների ամենավաղ գրառումներից են համարվում:

[!] Տե՛ս «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1958, № 1, էջ 67-84:

1 Edward G. Brown, A literary History of Persia from the earliest times until Firdawsi, London, 1902, էջ 117:

Այս հաղորդումը ավելի է արժեքավորվում, երբ նկատի ենք ունենում, որ Բրաունը Խորենացուն որպես 7-րդ դարի հեղինակ էր ճանաչում:

2 **Մ. Խորենացի**, *Պատմութիւն հայոց*, աշխատութեամբ Մ. Աբեղեան և Ս. Հարությունեան, Տփխիս, 1913, էջ 114-115 (հետագայում՝ **Մ. Խորենացի**):

Խորենացու մոտ պահպանված այս փաստերը ապացուցում են, որ դեռևս 5-րդ դարում Հայաստանում իրանական առասպելները ժողովրդականություն են վայելել. այլ կերպ և հնարավոր չէր, որովհետև, ինչպես գրում է Ն. Ադոնցը, «Հայաստանը ամբողջությամբ, որ հին ժամանակներից ի վեր ներգրավված էր պարսկական պետությունների համաշխարհային քաղաքական ոլորտի մեջ, հարյուրամյակներ շփվում էր պարսիկների հետ միևնույն կուլտուրական աշխարհում: Այն ժամանակվանից, երբ Արշակունիները գրավեցին Պարսկաստանը և նրանց կրտսեր շառավիղը հաստատվեց Հայաստանում, երկու երկրների հասարակական-կենցաղային կապը ավելի սերտ դարձավ»[3]: Սակայն անհրաժեշտ է նշել, որ Խորենացին, դժբախտաբար, իրանական առասպելներից ու զրույցներից չատ քիչ բան է գրի առել, չնայած իր իսկ փաստերը ապացուցում են, որ նա այդ բնագավառում ևս չատ ընդարձակ տեղեկություններ է ունեցել, մանավանդ որ նրա ձեռքի տակ եղել են նաև պարսկական մատյաններ[4]: Խորենացի գիտնական ու մտածողի սկզբունքները, ինչպես և քաղաքական կողմնորոշումը դեպի Հունաստան, նրան կաշկանդել են, թույլ չեն տվել ծավալվել, այլապես մենք այսօր ընդարձակ տեղեկություններ կունենայինք հայ-իրանական գրական ֆոլկլորային կապերի մասին: Խորենացու «Հայոց պատմության» մեջ իրանական զրույցներից Բյուրասպի Աժդահակի ու Ֆերիդունի առասպելը, որը իրապես ոչ մի առնչություն չունի հայ ժողովրդի պատմության հետ և դուրս է թողնված պատմության ընդհանուր չարադրանքից, կցված է Առաջին գրքի վերջին՝ որպես հավելված: Խորենացին այստեղ չափազանց համառոտ է, սակավախոս, բազմաթիվ իրադարձություններով հարուստ առասպելը պատմում է մի քանի տողում, բայց չի խոտորում բուն զրույցից, պահպանում է նրա հիմնական հենքը, ժողովրդական վառ հիպերբոլան:

Խորենացու պատմության «Ի պարսից առասպելաց» բաժինը առաջին անգամ քննության է առել խոշոր հայագետ Մկրտիչ Էմինը, որը դեռևս անցյալ դարի կեսերին իր «Վէպք հնոյն Հայաստանի»[5] համալից ուսումնասիրության մեջ լեզվա-համեմատական վերլուծության է ենթարկել Խորենացու այս և Ֆիրդուսու «Շահնամեի» համապատասխան՝ «Զոհհակ» բաժինները:

Ֆիրդուսու ծննդյան հազարամյակի տոնակատարության կապակցությամբ հայ պարբերական մամուլում, ինչպես և առանձին մենագրություններում մեջ լայն քննարկման առարկա դարձավ հայ-իրանական գրական կապերի հարցը, հատկապես ուշադրության կենտրոնում էին Խորենացու հաղորդումները իրանական առասպելների մասին:

Թեհրանի համալսարանի պրոֆեսոր, իրանագետ Ռ. Աբրահամյանը 1934 թ. «Ֆերդովսին և իր Շահնամեն» աշխատության Ա. հատորում չափազանց համառոտակի, ինչպես հեղինակը ինքն է ասում, «առանց մի լրիվ գործի հավակնություն ունենալու», բայց դեպի վեպի համեմատական ուսումնասիրությունը հետաքրքրություն առաջացնելու նպատակով, նշում է Խորենացու պատմության, հայկական էպոսի՝ «Սասնա Ծռերի» և «Շահնամեի» առանձին ընդհանրությունները[6]:

---

3 **Н. Адонц**, *Армения в эпоху Юстиниана*, СПб, 1908, էջ 211:

4 Տե՛ս **Մ. Խորենացի**, էջք 7, 176, 206:

5 Տե՛ս **Մ. Էմին,** *Վէպք հնոյն Հայաստանի*, Մոսկվա, 1850, էջք 50-75:

6 Տե՛ս **Ռ. Աբրահամյան,** *Ֆերդովսին և իր Շահնամեն*, Ա. հատոր, Թեհրան, 1934, էջք 141-144:

Նույն թվականին Երևանում լույս է տեսնում պրոֆ. Կ. Մելիք-Օհանջանյանի արժեքավոր ուսումնասիրությունը՝ «Ֆիրդուսին և Իրանի վիպական մոտիվները «Շահ-Նամե»-ում ու հայ մատենագրության մեջ» խորագրով: Այստեղ, ի թիվս այլ հարցերի, հեղինակը թռուցիկ կերպով անդրադառնում է նաև Աժդահակ-Արտավազդ-Շիդար ավանդավեպին, «հիմնական ու մանրակրկիտ աշխատությունը թողնելով առաջիկային»[7]:

Իրանական ժողովրդական զրույցների առկայությունը Խորենացու պատմության մեջ գայթակղության քար է հանդիսացել Սարուխանի[8] և բազմավաստակ հայագետ Ն. Ակինյանի համար, որոնք Խորենացու ապրած ժամանակաշրջանի վերաբերյալ իրենց ոչ ընդունելի տեսակետները աշխատել են հիմնավորել նաև այդ զրույցներով:

Ն. Ակինյանը Խորենացու պատմության «Ի պարսից առասպելաց» բաժնով հանգամանորեն զբաղվել է իր «Բյուրասպի Աժդահակ և համայնավարն Մազդակ հայ ավանդավեպի մեջ ըստ Մովսես Խորենացու» և «Դարձյալ Մազդակ և Մովսես Խորենացի»[9] հետազոտությունների մեջ, որտեղ հեղինակը Մ. Էմինի պես լեզվա-համեմատական քննության է ենթարկել Բյուրասպի Աժդահակի առասպելը՝ համեմատելով այն Ֆիրդուսու հաղորդած «Զոհհակի» զրույցի հետ, և եզրակացրել է, որ Խորենացին՝ Աժդահակի անունը չփոթելով Մազդակ-Մաժդակի հետ, վերջինիս ուսմունքը վերագրել է Աժդահակին:

* * *

Ըստ Խորենացու պարսկական առասպելները ճշմարտությունը այլաբանաբար իրենց մեջ չեն թաքցնում, ինչպես հունական «պերճ ու ողորկ» առասպելները, բայց Սահակ Բագրատունու խնդիրքը չմերժելու համար նա հետևյալն է պատմում Բյուրասպի Աժդահակի մասին:

«Բայց զի՞նչ արդեօք տարփանք քեզ՝ և Բիւրասպեայ Աժդահակայ փծուն և անճոռնի առասպելքն իցեն, – գրում է Խորենացին, – և կամ է՞ր սակս զմեզ Պարսից անյարմար և անոճ բանից, մանաւանդ թէ առաւել վասն անբանութեան, առնես աշխատ, և անբարի առաջնոյ նորա բարերարութեան, և դիւաց նմա սպասաւորութեան, և ոչ վրիպեցուցանել կարելոյ զվրիպեալն և զսուտն. և ուսոցն համբուրումն, և անդուստ վիշապացն ծնունդ, և յայնմ հետէ չարութեան յաճախութիւն, ծախել զմարդիկ ի պէտս որովայնի: Իսկ ապա և Հրուդենայ ումեմն գնա կապել սարեօք պղնձեօք, և իր լեառնն տանել, որ կոչի Դըմբաւընդ: Այլ և ի ճանապարհի աննջելն Հրուդենայ, և Բիւրասպեայ քարշելն ի բլուրն, ի զարթչելն Հրուդենայ, և տանել գնա յայրս ինչ լերինն և կապել, և զինքն անդրի ընդդէմ նորա հաստատել. յորմէ պակուցեալ՝ հնազանդեալ կայ չղթայիցն, և ոչ զօրէ ելանել և ապականել զերկիր»[10]:

Ֆիրդուսին իր «Շահնամեում» մի ընդարձակ գլուխ է նվիրել այս զրույցին, որը կրում է «Զոհհակ» վերնագիրը:

---

7 Տե՛ս **Ֆիրդուսի,** *Բանաստեղծի ծննդյան հազարամյակին նվիրված ժողովածու*, Պետհրատ, Երևան, 1934, էջք 97-100 (հետագայում՝ Ֆիրդուսի, Ժողովածու):

8 Տե՛ս «Հանդես ամսօրյա» 1935, էջք 1-24 և 175-185:

9 Տե՛ս «Հանդես ամսօրյա» 1936, էջք 1-21 և 349-351:

10 **Մ. Խորենացի**, էջ 89:

Ըստ Ֆիրդուսու Զոհհակը Արաբստանի կողմերում իշխող, իր բարի գործերով հռչակված Մարդասի կամ Մերդասի որդին էր: Իբլիսի դրդումով Զոհհակը սպանում է իր հորը և գրավում նրա իշխանությունը, այնուհետև երիտասարդի արտաքինով երևան եկած նույն իբլիսի գայթակղումով ուտում է կրոնով արգելված միսը: Սատանան իր ծառայությունների փոխարեն Զոհհակից պարգև է խնդրում նրա ուսերը համբուրել[11]: Զոհհակը համաձայնվում է, բայց իբլիսի համբուրած տեղերից երկու վիշապ են ծնվում. սատանան անմիջապես անհետանում է և ապա հանդես գալիս բժշկի կերպարանքով. նա Զոհհակին խորհուրդ է տալիս վիշապներից չվնասվելու համար նրանց մարդկային ուղեղով սնել: Եվ այսպես ամեն օր երկու հոգու զոհում են՝ վիշապներին հագուրդ տալու համար: Ահա այս ժամանակ իրանցիները ապստամբվում են Փիշդադյան չորրորդ արքա Ջամշիդի դեմ և Զոհհակին հրավիրում են թագավորելու Իրանի գահի վրա: Զոհհակի բռնությունները Իրանում տևում են 1000 տարի, մինչև որ դարբին Քավեի ղեկավարությամբ ժողովուրդը ապստամբվում և արքա է կարգում Ջամշիդի ցեղից տասնվեցամյա Ֆերիդունին: Սա հետապնդում ու ձերբակալում է փախուստի դիմած բռնակալին և այն է՝ ցանկանում էր նրա կյանքին վերջ տալ, վրա է հասնում բարեգուշակ հրեշտակը և Ֆերիդունին խորհուրդ է տալիս նրան տանել ու կապել Դեմավանդ լեռան այրերից մեկում: Այդպես էլ անում է հաղթական նոր արքան[12]:

Խորենացու և Ֆիրդուսու մոտ պահպանված այս զրույցի համեմատությունը ապացուցում է.

1. Առասպելի գլխավոր հերոսները նույն անձնավորություններն են և նրանց անունները համընկնում են.

ա) Խորենացու Բիւրասպի *(ավելի վաղ ուղղագրությամբ՝* Բեւրասպի*)* Աժդահակը *Ֆիրդուսու Բեվրասպ կոչվող Զոհհակն է, որը Դահակի արաբական հորջորջումն է. Ֆիրդուսին մի քանի անգամ նույնիսկ ուղղակիորեն գործածում է* Աժդահա *(*اژدا*), երբեմն էլ* Աժդահակեւպ *(*اژدهافش*) կամ* Աժդահաուս *(*اژدوش*):*

2) Խորենացու Հրուդեանը *Ֆիրդուսու* Աֆրիդուն-Ֆերիդունն *է[13]:*

Ֆիրդուսին Աժդահակի հորը Մարդաս *կամ* Մերդաս *(*مرداس*) է անվանում: Այս անունը մինչև այժմ և ոչ մի աղբյուրում չի հիշատակված: «Շահնամեի» ռուսերեն թարգմանության ձեռագրություններում Մերդաս անվան դիմաց նշված է՝ «ստուգաբանու-*

---

11 Հին աշխարհում և հետագա ժամանակներում ստրուկների կողմից իրենց տիրոջ ուսերի համբուրումը՝ որպես հավատարմության ու նվիրվածության երաշխիք, ընդունված կարգ է եղել. Ոդիսականում պատմվում է, որ երբ Ոդիսևսը քսանամյա թափառումներից հետո վերադառնում է հայրենիք, նրան հավատարիմ մնացած ստրուկներից նախարապանն ու խոզարածը՝ ճանաչելով իրենց տիրոջը, ջերմորեն համբուրում են «նրա ուսերն ու գլուխը» (**Հոմերոս,** *Ոդիսական*, հունարեն բնագրից թարգմանեց Սիմոն Գրքաշարյան, Հայպետհրատ, Երևան, 1957, էջ 295-296):

12 فردوسی، شاهنامه، بتصحیح و مقابله و همت محمد رمضانی، تهران، 1312 (**Ֆիրդուսի**, *Շահնամե*, հ. 1, Թեհրան, 1934, էջք 25-52): Տե՛ս նաև **Ֆիրդուսի**, *Ջոհակ-Բյուրասպի Աժդահակ*, ամբողջ վեպ Շահնամայից, թարգմ. բնագիր պարսկերենից Սամուել Գյուլզադյանց, Շուշի, 1894:

13 Վաղուց ի վեր հաստատված է լեզվական այն իրողությունը, որ պարսկերենի fr հնչյունակապակցությունով սկսվող բառերը հայերենում փոխառվելու դեպքում հաղորդվել են *հր*-ով. օրինակ՝ պիղ. frahāng > պրս. farhang > հյ. *հրահանգ*, պիղ. framān> պրս. farmān > հյ. *հրաման*, պիղ. fraš > հյ. *հրաշք*, պիղ. *frēštak > պրս. firēšta > հյ. *հրեշտակ* և այլն. տե՛ս **Հ. Աճառյան,** *Հայոց լեզվի պատմություն*, հ. 1, Երևան, 1940, էջք 238 և 268-269:

թյունը պարզ չէ»[14]: Խորենացին իր պատմության առաջին գրքի մեջ Հայկյան Արամի վարած պատերազմների մասին արձանագրելիս հիշատակում է Նիւմար Մադէս *անունով զորավարին, որը առաջնորդում էր մարերին (մեդացիներին)[15]:*

Մ. Էմինը ենթադրում է, որ Մադէս *անունը «նշանակում է «մեդացի», որովհետև մեդացիք «Մադա» էին անվանում իրենց»[16]: Մի այլ տեղ Էմինը այդ անունը նորից մեկնում է «մեդացի», կազմված* մադ *և հունարեն* էս *վերջավորությամբ[17]: Այս անունը նույնպես է մեկնում և ակադ. Ստ. Մալխասյանցը՝ հավանաբար հենվելով Էմինի ստուգաբանության վրա[18]: Մեդիայի պատմության սովետական մասնագետ Ի. Մ. Դյակոնովին նույնպես հայտնի չէ Նյուքար Մադեսի ինքնությունը: Նա մեծ կասկածով է Մադեսը հունական mēdos «մեդացի» բառի հետ համեմատում[19]:*

Գր. Խալաթյանցը հակված է կարծելու, որ Խորենացին մեդական թագավոր Փառնոսին (Դիոդորոսի մոտ Φάρνος) դիտավորյալ փոխարինել է Մադեսով, որը ժողովրդի արհեստականորեն հարմարեցված էպոնիմն է՝ թերևս Աստվածաշնչի ազդեցությամբ, որտեղ իսկապես հիշատակվում է նման մի անուն (Ա. Մնացորդաց, Դ. 21, Ղադաա հայր Մադեսայ)[20]: Ըստ Ք. Պատկանյանի (Ванские надписи, էջ 122) Madec-ը մատնացույց է անում կիաքսարի օրոք Madyes-ի (Herod. I, 103) կամ Madys (Strab. I, 61) ղեկավարությամբ սկյութացիների Հայաստան ու Մարաստան կատարած ներխուժմանը[21]:

Հ. Մարկվարտը ընդունում է Խալաթյանի տեսակետը և իր հերթին ավելացնում, որ Նիւմարը *Շիրակացու Կոհի Նիհորական սահմանային լեռների էպոնիմն է (Nivk ar = միջ. պարսկ. meb-xvar = միջ. մար. neb-xvar = հին պարսկ. naiba-xuvara «հիանալի կեր ունեցող». «արոտավայրերի երկիր Ատրպատականին չատ համապատասխանող մի անուն»)[22]: «Նիհորական լեռա ն անվան մեջ, – գրում է Մարկվարտը, – պետք է ենթադրել մի միջին իրանական Nexvaraakan, Nebxvarakan: Մովսես Խորենացու* Նիւմարը *այս անվան հետ նույնպիսի փոխհարաբերության մեջ է, ինչպես որ պահլավ. atūr pātakān-ը հին պարսկ. Atropata-ն, հայ* Ատրպատական, *արաբ., նոր պարսկ. Adarbādgān. պարզ աասած՝ հետագայում այդ անունն ընդունել է* -ական *վերջավորությունը, որը հաճախ գործածվում է պատրոնոմիա կազմելու համար և ընդհանրապես պատկանելիություն արտահայտող վերջավորություն է»[23]:*

---

14 **Фирдоуси**, *Шахнаме*, Изд. АН СССР, Москва, 1957, էջ 611:

15 **Մ. Խորենացի…** Գիրք Ա, գլխ. ԺԳ, էջ 43:

16 **Մկրտիչ Էմին,** *Մովսես Խորենացիի և հայոց հին վեպերը*, Թիֆլիս, 1886, էջ 47-48:

17 *История Армении* **Моисея Хоренского**, новый перевод Н. О. Эмина. Москва, 1893, էջ 226:

18 **Մովսես Խորենացի,** *Հայոց պատմություն*, Թարգմ. դոկտ. Ստ. Մալխասյանցի, Հայպետհրատ, 1940, էջ 267:

19 **И. М. Дьяконов**, *История Мидии*, Изд. АН СССР, М.-Л., 1956, էջ 352:

20 **Г. Халатянц**, *Армянский эпос в истории Армении Моисея Хоренского*, էջ 131:

21 Անդ. ծանոթագր.:

22 **Հ. Մարկվարտ**, *Պարսկահայք* (անտիպ ուսումնասիրություն), գերմ. թարգմ. Գ. Աբգարյան: Այս աշխատության գերմաներեն բնագրի պատճենը և հայերեն թարգմանությունը գտնվում են Հայկական ՍՍՌ Մատենադարանում, էջ 66:

23 Անդ, էջ 69:

Մեզ թվում է, որ Խորենացու Մադեսը Ֆիրդուսու Մարդասը պիտի լինի՝ r-ի անկումով, բայց չի բացառվում նաև, որ անվան ճիշտ ձևը Մադես լինի, որը իրանցիների մոտ, ըստ Ֆիրդուսու, հայտնի է եղել որպես ազնիվ ու բարի մարդ, և նրա անունը ժողովրդական ստուգաբանության ենթարկվելով՝ պարսկերեն մարդ (مرد – հյ. «մարդ») բառի r-ի հավելումով ձեռք է բերել Մարդես>Մերդաս ձևը: Արդ եթե նկատի առնենք նաև այն հանգամանքը, որ հայոց մոտ Աժդահակը մարասատացի է, ապա կարելի է ինչ-որ կապ տեսնել վերջինիս և Մարդեսի-Մերդասի միջև, որոնց Ֆիրդուսին հայր ու որդի է ճանաչում:

Հավանական համարելով Գր. Խալաթյանցի ենթադրությունը, որ Մադեսը մեդական թագավոր Փառնոսն է, մենք կարծում ենք, որ Խորենացին (ավելի ճիշտ նրա աղբյուրը) ոչ թե Աստվածաշնչից, այլ ժողովրդական վեպից է այդ անունը մուծել պատմության մեջ, մանավանդ որ Աստվածաշնչի մի շարք ձեռագրերում ու հրատարակություններում, ինչպես և հունական բնագրում Մարդէսի փոխարեն Մարես ունենք[24]: Ինչպես առասպելական Աժդահակը Տիգրանի վեպում փոխարինել է մեդական Աստիագեսին, նույնպես և Արամի վեպում Մադեսը փոխարինել է Փառնոսին:

2. Առասպելի միջադեպերը սակավ տարբերությամբ նույնպես համընկնում են:

Պրոֆ. Էմինը Խորենացու և Ֆիրդուսու պատմած առասպելների միջև եղած տարբերությունը չի քննում, միայն հարկ է համարում նշել, որ եթե «Շահնամեում» պատմվում է, թե Զոհհակին Ֆերիդունը սպանում է, ապա հայ մատենագիրը, ընդհակառակը, հիշատակում է, որ Ֆերիդունը նրան տանում կապում է Դեմավանդ լեռան այրերից մեկում և իր արձանն էլ կանգնեցնում նրա առջև, որից սարսափելով՝ Աժդահակը հավատարիմ է մնում իր չղթաներին: Այստեղ Մ. Էմինը ակնհայտ թյուրիմացության մեջ է. ուշադիր համեմատությունը ապացուցում է, որ Խորենացու պատմածը այս կետում ևս համընկնում է «Շահնամեին»: Ըստ երևույթին Էմինը օգտվել է «Շահնամեի» համառոտ տեքստից և կամ, ամենայն հավանականությամբ, մոռացել է Ֆիրդուսու պատմած զրույցի այս վերջին մասը, որովհետև իր ուսումնասիրությունը չարադրելիս ձեռքի տակ «Շահնամե» չի ունեցել և հիշողությամբ է համեմատությունը կատարել[25]:

Խորենացու մոտ պահպանված զրույցի միայն հետևյալ երեք տեղիքն են պակասում Ֆիրդուսու մոտ. նախ՝ անբարի բարերարության ակնարկը, երկրորդ՝ Ֆերիդունի ննջելու պատմությունը և, երրորդ՝ Աժդահակի առջև Ֆերիդունի արձանի կանգնեցման փաստը:

«Անբարի բարերարության» ակնարկին մենք կանդրադառնանք քիչ հետո, իսկ երկրորդ փաստի մասին պետք է ասել, որ այլ աղբյուրներում այդ մասին ոչ մի տեղեկություն դեռևս չի հայտնաբերվել, այն դեպքում, երբ Աժդահակի առջև Ֆերիդունի արձանի կամ պատկերի կանգնեցման մասին հիշատակություններ կան և այլուր: Պահլավական գրական հուշարձաններից «Բահման յաշտում» պատմվում է, որ Ահրիմանը Ֆերիդունի մահից 9000 տարի հետո գալիս է Դեմավանդ լեռը և կանչում չղթայված

---

24 Տե՛ս Մատենադարանի ձեռ. № 353, ժամանակ՝ 1317 թ. թերթ 192բ: Կոստանդնուպոլսի 1895 թ. հրատ. էջ 438. վերջինս համեմատված է եբրայական և հունական բնագրերի հետ: Մինչդեռ թե՛ Համաբարբառում և թե՛ 1616 թ. Ամստերդամի հրատարակության մեջ **Մադէս** է:

25 Այդ է ապացուցում նրա հետևյալ ծանոթագրությունը. «Ոչ նշանակեցաք ճշդիւ զերես բանաստեղծութեանն պարսից, քանզի երկու ամօք նախ քան զայս ընթերցեալ էր մեր զլիշեալ մատեանդ, որ չգտաւ առ մեզ ի գրելս զայս քննութիւն» (*Վէպք հնոյն Հայաստանի*, էջ 65):

Աժդահակին, բայց նա, կանգնելով նրա առջև, Ֆերիդունի (Frēdūn) նմանության – պատկերի սարսափից չի համարձակվում իր ոտքերի չղթաները չարժել[26]: 9-րդ դարի արաբ աշխարհագիր Իբն ալ-Ֆակիհ ալ-Համադանիի մոտ Բ. Շտաքելբերգը գտել է Խորենացու հաղորդածին համանման մի փաստ. Իբն ալ-Ֆակիհը պատմում է, որ Աֆերիդունը Բյուրասպին լեռան վրա բանտարկելուց հետո, վերջինիս առջև, մի քարանձավի մեջ, իր նմանությունն է կանգնեցնել տալիս, որով և կապում է նրան[27]:

Այս բոլոր փաստերը ապացուցում են, թե որքան հարազատությամբ ու ճշգրտությամբ է Մովսես Խորենացին հաղորդում հարևան ժողովուրդների այս հինավուրց առասպելը:

Ինչպես ասացինք Խորենացու պատմության «Ի պարսից առասպելաց» բաժնով զբաղվել է նաև Ն. Ակինյանը[28]: Իր առաջին ուսումնասիրության երկրորդ՝ հիմնական բաժնում Ակինյանը քննում է առասպելի մեկնությունները և գալիս այն եզրակացության, թե իբր Խորենացին այստեղ այնպիսի գծեր է առաջ բերում, «որոնք չեն հայիր Աժդահակի առասպելին. անոնք համայնավար Մազդակի անձին և վարդապետության մասին են»[29]: Երկրորդ հոդվածում իր այս տեսակետը ավելի հաստատելու համար նա մազդակյան աղանդի մասին մեջբերումներ է կատարում «Սիասաթնամեից» և դրանք, համեմատելով Խորենացու մեկնությունների հետ, ենթադրում է, որ Խորենացին ևս օգտվել է «Մազդակնամեից»: Իսկ քանի որ այս վերջին հուշարձանը պետք է գրի առնված լինի 6-րդ դարի առաջին կեսից հետո, թերևս 7-րդ դարում, ուստի Խորենացին չէր կարող 7-րդ դարից շուտ օգտված լինել այս գրքից:

Խորենացու պատմության «Ի պարսից առասպելաց» բաժնի մեկնությունների հատվածը, որը վերնագրված է «Ստորոգութիւն, որ ինչ սակս Բիւրասպեայ հաւաստին» մեր կարծիքով ավելի արժեքավոր է, քան բուն առասպելի առկայությունը մեր մատենագրի մոտ, որովհետև՝ եթե վերջինս հաղորդված է նաև մի քանի այլ աղբյուրներում, ապա մեկնություններից մի քանիսին հանդիպում ենք միայն Խորենացու մոտ: Այս հատվածում պահպանված են պատմական դեպքերի որոշ արձագանքներ, որոնց ուսումնասիրումը նոր լույս է սփռում թե՛ Աժդահակ-Զոհհակի, որպես «պատմական անձնավորության» և թե՛ իր Խորենացու աշխարհայացքի առանձին կողմերի վրա:

Խորենացին Աժդահակի առասպելը հետևյալ կերպ է մեկնում: «Ասացեալն ի նոցանէ Բիւրասպի Աժդահակ՝ առ Նեբրովթաւ նախնի նոցա: Քանզի ի բաժանել լեզուացն ընդ ամենայն երկիր, ոչ խառն ի խուռն և ոչ անառաջնորդ այս լինէր. այլ աստուածայնով իմն ակնարկութեամբ գլխաւորք և ցեղապետք որոշեալք զիւրաքանչիւր սահմանս ժառանգեցին կարգաւ և զօրութեամբ: Եւ զայս Բիւրասպեայ հաւաստի անուն ճանաչեմ ես կենտաւրոս Պիւռիդայ, ի քաղդէականի գտեալ մատենի: Սա ոչ քաջութեամբ քան թէ հարստութեամբ և ճարտարութեամբ զցեղապետութիւն ազգին իւրոյ ունէր, հնազանդեալ Նեբրովթայ. և հասարակաց զկենցաղս կամէր ցուցանել ամենեցուն և ասէր՝ ոչ ինչ

26 Bahman yašt. Տե՛ս *The Sacred Books of the East*, vol. V, chap. III, § 56.

27 **B. Stackelberg,** *Bemerkungen zur Perschen Sagengeschichte*, WZKM, 12, 1898, էջ 248: (Հետագայում՝ B. Stackelberg…): Տե՛ս նաև «Հանդես ամսօրյա», 1936, էջ 6:

28 Տե՛ս «Հանդես ամսօրյա», 1936, էջք 1-21 և էջք 349-351:

29 Անդ, էջ 14:

իւր առանձին ումեք ունել պարտ է, այլ հասարակաց: Եւ ամենայն ինչ նորա յայտնի էր բան և գործ. և ի ծածուկ ինչ ոչ խորհէր, այլ զամենայն յանդիման արտաքս բերէր լեզուաւ զծածուկս սրտին: Եւ զել և զմուտ բարեկամացն որպէս տուընջեան, նոյնպես և ի գիշերի սահմանէր: Եւ այս է առաջին նորա ասացեալ անբարի բարերարութիւնն:

Այլ քանզի աստեղաբանութեամբ հզօր եղեալ՝ յօժարեցաւ ուսանել և զկատարեալ չարութիւնն. և այսոքիկ անկարելիք նմա. քանզի որպէս վերագոյնն ասացաք՝ սովորութիւն ունէր պատրանաց աղագաւ առ բազումս՝ ոչ ինչ ի ծածուկ գործել, և զայնպիսի վերջին և կատարեալ չարութիւն յայտնի ուսանել կարողութիւն ոչ էր: Հնարի այսպիսում ուսման դառնութեան հնարս, – ցաւս ինչ յորովայնի ունել բաղբաղէր չարաչարս, որ ոչ այլով իւիք, քան թէ բանիւ իմն և անուամբ սոսկալեաւ բժշկիցի, զոր վայրապար լսել ումեք ոչ է կարողութիւն: Եւ այս սովորեալ, ոչ զչարութիւնն նիւթէր, ուսուցանէր նմայ ի տան և ի հրապարակս. անկասկած զգլուխն ի վերայ ուսոցն Բիւրասպեայ դնելով և խօսելով յականջն՝ ուսուցանէր զանբարի արուեստն. զոր յառասպելին՝ մանուկ սատանայի, ասեն, սպասաւորելով լինէր կամակատար. և ապա վասն որոյ պարգև ի նմանէ խնդրեալ՝ համբուրէր զուսսն:

Իսկ վիշապացն բուսումն, կամ կատարելապէս վիշապանալն Բիւրասպեայ, որ ասի, է այս: Քանզի անբաւ մարդիկ սկսաւ զոհել դիւաց. մինչև տաղտկանալ ի նմանէ բազմութեանն և միաբանեալ ամենեցուն և հալածել և փախչել նմա ի նախասացեալ լերինն կողմանս. և ի սաստիկ վարելոյն զնա՝ թօթափեցաւ ամբոխ նորա ի նմանէ: Յայս վստահացեալ վարողացն զնա՝ հանգեան աւուրս ինչ զտեղեօքն: Իսկ Բիւրասպեայ ժողովեալ զցրուեալսն՝ յանկարծօրէն հասանէ ի վերայ, վնաս սաստիկ առնելով. այլ յաղթէ բազմութիւնն, և փախստական լինի Բիւրասպի. և հասեալ սպանանեն զնա մերձ ի լեառնն, և ընկենուն ի վիհ մեծ ծծմբոյ»[30]:

Մկրտիչ Էմինը քանի որ ընդհանրապես ժխտում էր Մար-Աբասի և նրա Քաղդեական մատյանի գոյութեյան փաստը և կարծում էր, որ Խորենացին իր պատմութեյան հնագոյն շրջանը չարադրելիս օգտվել է միայն հայկական վեպից ու ժողովրդական զրույցներից, այս մեկնութեյունների մի մասը համարում է Խորենացու իրեն կամ նոր-պլատոնականների հորինածը: Այլ աղբյուրներում չգտնելով այն տեղեկութեյունները, թե Բյուրասպի Աժդահակը ապրել է Նեբրովթի ժամանակ և նրա հավաստի անունը Կենտավրոս Պյուռիդա է, և ելնելով այս անվան հունական ձևից, Էմինը կարծում է, որ այս բոլորը թերևս հնարվել է Ալեքսանդրիայում նոր-պլատոնականների դպրոցում. «Եւ հաստատի այս բանիւք նորին իսկ Խորենացւոյ, որոյ ոչ չատացեալ պատմութեամբ ևեթ պարսկական առասպելին՝ միջամուխ լինի ի մեկնութիւն առասպելական նշանակութեան նորին՝ որպէս սովոր էին առնել ի դպրոցս Աղեքսանդրիոյ իմաստասէրք տեղւոյս»[31]:

Սակայն ներկայումս, երբ արդեն պարզվել է, որ Մար-Աբասը մտացածին հեղինակ չէ, մենք հակամետ ենք կարծելու, որ Խորենացին այս բաժնում էլ հարազատ է մնացել իր աղբյուրներին:

---

30 **Մ. Խորենացի…,** էջք 91-92:

31 **Մ. Էմին,** *Վէպք հնոյն Հայաստանի*, էջք 68-69:

Աժդահակի կերպարը՝ որպես չարի, բռնության ու անբարոյականության մարմնացում, հոլովվում է արևելյան մի քանի ժողովուրդների պատմության առասպելական չրջանում: Աժդահակը հիմնական դեմք է հատկապես իրանական ժողովուրդների և դիցաբանության, և՛ դյուցազներգության մեջ: Կասկած լինել չի կարող, որ Աժդահակի անվան տակ այդ ժողովուրդները անպայման մարմնավորել են իրենց համար անհաղթահարժելի այս կամ այն պատմական անձնավորությունը: Ըստ Ավեստայի Աժդահակի իշխանության կենտրոնը Բաբելոնն է եղել: Դոկտ. Զաբիոլլահ Սաֆան իրավացի է, երբ ենթադրում է, որ Աժդահակի-Զոհհակի պատմությունը վաղ արձագանքն է Արևմտյան Իրանի վրա ասուրա-բաբելական հարձակումների, որոնք հետագայում, արաբական արշավանքներից հետո, մոռացվել են, իսկ Աժդահակին ժողովուրդը արաբացրել է, այդպիսով իր ատելությունը արտահայտելով արաբ ստրկացնողների նկատմամբ[32]:

Համաձայն Բունդեհիշի 32-րդ գլխում եղած ծննդաբանության Աժդահակը Ահրոմազդայի ստեղծած առաջին մարդու՝ Գեյոմարթի ցեղից է[33]: Այս նույն ծննդաբանությունը անունների տարբեր աղավաղումներով հաղորդված է նաև արաբագիր պատմաբանների մոտ: Թաբարին Զոհհակին համարում է Նոյի ժամանակակից. իսկ Աբու-Հանիֆե Դինվարին պատմում է, որ Զոհհակին վերջնականապես հաղթում է Նեմրուդը, որ և նրան տանում կապում է Դեբավանդ լեռան այրերից մեկում[34]: Ինչպես տեսնում ենք Դինվարու մոտ Ֆերիդունը նույնացված է Նեմրուդի հետ: Քարթլիս Ցխովրեբայի հին հայերեն թարգմանության մեջ Ֆերիդունը (Աբրիտոն) ներկայացված է որպես Նեբրովթի մարդկանցից մեկը. «Յետ այսորիկ, – կարդում ենք այնտեղ, – աճեաց ազգն Նեբրովթայ ի կողմն արևելից, և յայտնեցաւ այր մի ի նոցանէ Աբրիտոն անուն, զորմէ ասեն, թէ կապեաց աղանդովք զիշխանն աւձից յերկաթս, զկոչեցեալն Բի[ւ]րասպի, յանբնակ լերինն Րայիսայ, որպէս և գրեալ է ի մատեանս Պարսից»[35]: Մ. Էմինը նշում է, որ շատ աղբյուրներ Նեբրովթին իրեն են Զոհհակ համարում[36]:

Այս բոլոր փաստերը ապացուցում են, որ Զոհհակ-Աժդահակը այս կամ այն ձևով կապվում է Նեբրովթի անվան հետ, իսկ Խորենացու հաղորդածը չի հեռանում այս փաստերից, ուստի և չի կարելի մտացածին համարել:

Խորենացին միաժամանակ հաղորդում է, որ Քաղդեական մատյանում Բյուրասպիի հավաստի անունը կենտավրոս Պյուռիդա է: Ըստ Մ. Էմինի այս կենտավրոսը «որպէս հայտնի է բանասիրաց նոյն իսկ Պիւռիդն է, զոր ըստ յունական առասպելաց՝ եսպան Պերիփաս ի հարսանիս Պիրիթոսայ»[37]: Իսկ ակադեմիկոս Ստ. Մալխասյանցը կարծում է,

---

32 Տե՛ս دکتر ذبیح الله صفا حماسه سرایی در ایران، تهران، 1333، ص 456 **Դոք. Զաբիոլլահ Սաֆա,** *Դյուցազներգությունը Իրանում*, 2-րդ հրատ. Թեհրան, 1954, էջ 456, Հետագայում՝ Սաֆա…):

33 **Սաֆա…**, էջ 457: Տես նաև SBE, Bundahiš, chap. 31. (Այս թարգմանության 31-րդ գլուխը համընկնում է նախորդ թարգմանությունների 32-րդ գլխին):

34 **Սաֆա…**, էջ 459:

35 ქართლის ცოვრების…, 1953, էջ 17: (Քարթլիս Ցխովրեբայի կամ Վրաց պատմության հին հայերեն թարգմանությունը: Վրացերեն բնագիրը և հին հայերեն թարգմանությունը ուսումնասիրությամբ և բառգրքով լույս ընծայեց Իլլա Աբուլաձեն, Թբիլիսի, 1953):

36 **Մ. Էմին,** *Վէպք հնոյն Հայաստանի*, էջ 67:

37 **Մ. Էմին,** *Վէպք հնոյն Հայաստանի*, էջ 68:

որ կենտավրոս Պյուռիդան Հոմերոսի հիշած «կենտավրոս Պեյրիթոոն[38] է, որ Իկսիոնի կամ Զևսի որդին է եղել, լապիթներից մեկը, որի հարսանիքի ժամանակ կռիվ ու կոտորած է եղել»: Խորենացին այս վերջինին գիտե «հուշկապարիկ Պերիթես»[39] անունով, բայց չի նույնացնում կենտավրոս Պյուռիդայի հետ: Ստ. Մալխասյանցը, ելնելով այս հանգամանքից, եզրակացնում է, որ Խորենացին «առանց գիտենալու, թե դրանք երկուսն էլ միևնույն անձն են... այս երկու դեպքում երկու տարբեր աղբյուրից է օգտվում»[40]:

Բյուրասպի Աժդահակին կենտավրոս Պյուռիդայով փոխարինելը Քաղդեական մատյանում ենթադրել է տալիս, որ մատյանը հունարենի թարգմանելիս Աժդահակին (որպես հրեչ) համազոր ընդունել են չարագործ կենտավրոսներից (սրանք ևս դիվական բնույթ են ունեցել) մեկն ու մեկին[41]: Հնում անունների նման թարգմանությունը կամ փոփոխությունը ընդունված կարգ է եղել. օրինակ՝ Խորենացին հունական Կռոնոսին փոխարինում է Զրվանով, իսկ Հերոդոտը սկյութական առասպելի Թարգիտային փոխարինում է արդոսական հերոս Հերակլով[42]: Նման երևույթի մասին է խոսում նաև Ի. Մ. Դյակոնովը, երբ անդրադառնում է Քսենոֆոնի «Կիրոպեդիայի» մեջ օգտագործված հատուկ անուններին: Նա գրում է, որ «Երբ նրան (Քսենոֆոնին – Բ. Զ.) պարսկական անունները պակասում էին, Քսենոֆոնը առանց քաշվելու մեդական ու պարսկական կերպարներին տալիս էր փոքրասիական, կամ չատ հազվագյուտ հունական, և կամ բացարձակ մտացածին, բայց էկզոտիկ հնչող անուններ»[43]:

«Ի պարսից առասպելաց» բաժնի ամենահետաքրքրական տեղիքը այն է, ուր փաստեր են հաղորդվում Բյուրասպի Աժդահակի իբր թե չար արարքներից մեկի մասին. «Եւ (Աժդահակ), – գրում է Խորենացին, – հասարակաց զկենցաղս կամէր ցուցանել ամենեցուն, և ասէր՝ ոչ ինչ իւր առանձին ումեք ունել պարտ է, այլ հասարակաց»[44]:

Բ. Շտաքելբերգը իր «Դիտողություններ պարսից գրույցների պատմության վերաբերյալ» վերնագիրը կրող ուսումնասիրության մեջ կարծում է, որ այս տողերը թերևս ակնարկներ են մազդակյան աղանդի վերաբերյալ. «Մենք կարծում ենք, – գրում է Շտաքելբերգը, – որ Մովսես Խորենացու հաղորդումը արտացոլում է հիշողություններ մազդակյան կոմունիստական աղանդի վերաբերյալ»[45]:

Ն. Ակինյանը՝ ելնելով Խորենացու ապրած ժամանակաշրջանի վերաբերյալ իր սխալ դիրքորոշումից (ըստ նրա Խորենացին 9-րդ դարի հեղինակ է) և ոգևորվելով Շտաքելբերգի ենթադրությունով, աշխատում է նոր փաստերով ո՛չ միայն հաստատել այս

---

38 Տե՛ս **Հոմերոս,** *Ողիսական*, Երևան, 1957, էջ 298:

39 **Մ. Խորենացի...** էջ 195:

40 **Մ. Խորենացի,** *Հայոց պատմություն*, թարգմ. Ստ. Մալխասյանցի, էջ 278:

41 Վերը հիշեցինք, որ Աժդահակը մարդ-հրեշ է, իսկ կենտավրոսները, ինչպես հայկական հուշկապարիկները, համարյա նույնպիսի բնույթ են ունեցել: Հայկազյան բառարանը *յուշկապարիկ* թարգմանում է «Ճիվաղ ցամաքային, կամ ջրային, և կամ երկկենցաղ. առավել մտացածին՝ խառնակ կենդանի, որպես պարիկ իշուկ, այսինքն իշացուլ, ին. ὀνοχέντανρος որ և Համրարու, և Ձիացուլ. ին. ιπποχέντανρος..., χέντανρος... (որ և դև). (տե՛ս *Նոր բառգիրք Հայկազեան լեզուի*, հ. Բ., էջ 375):

42 **С. П. Толстов**, *Древний Хорезм*, Изд. МГУ, Москва, 1948, էջ 295:

43 **И. М. Дьяконов**..., էջ 31:

44 **Մ. Խորենացի...,** էջ 91:

45 **B. Stackelberg...,** էջ 237: Տե՛ս նաև «Հանդես ամսօրյա», 1936, էջ 15:

կարծիքը, այլև մի քայլ առաջ դնելով, հայտարարում է, որ Խորենացին Աժդահակ անունը չփոթել է Մազդակ-Մաժդակի հետ և վերջինիս ուսմունքը վերագրել Աժդահակին:

Ինչպես հայտնի է Մազդակը երևան է եկել պարսից Կավատ Ա-ի թագավորության օրոք (490-527): Մազդակյան շարժումը, որ մանիքեական աղանդավորական շարժման ամենաստուր արտահայտություններից էր և իր հիմնական ծայրով ուղղված էր Իրանի իշխող ֆեոդալական-կալվածատիրական ու հոգևորական հիերարխիայի դեմ, դաժանորեն ճնշվեց: Պետք է նշել, որ շարժմանը հիմնականում հարում էին գյուղացիությունն ու քաղաքի պլեբեյական մասսաները և մասամբ իշխող խավի առանձին ներկայացուցիչներ: Կավատ Ա-ն, որ որոշ ժամանակ հովանավորում էր մազդակյաններին, իր թագավորության վերջին տարիներին երկրի իշխող խավերի ուժեղ ճնշման տակ միանգամայն բացասական դիրք գրավեց այդ աղանդավորների նկատմամբ և դաժան դատաստան տեսավ նրանց հետ՝ սրով ու հրով արյան մեջ խեղդելով շարժումը[46]:

Առաջ բերելով Խորենացու այն հաղորդումը, թե Աժդահակը բոլորին ուսուցանում էր, որ ոչ ոք առանձին (սեփական) բան չպիտի ունենա, Ակինյանը դրա տակ հասկանում էր նաև կանանց համայնացում, որը՝ ըստ նրա մազդակյան աղանդի արտացոլումն է Խորենացու մոտ, մինչդեռ այստեղ պարզորեն գույքային սեփականության մասին է ակնարկվում, որը ուղղակիորեն դրսևորում է դասակարգային պայքարում չհագործվող, ընչազուրկ մասսաների առաջ քաշած ամենաարմատական պահանջներից մեկը:

Եթե իր առաջին հոդվածում Աժդահակին Մազդակի հետ մերձեցնելու համար Ակինյանի հիմնական կռվանը Խորենացու վերը հիշված տեղեկությունն էր, ապա երկրորդ հոդվածում՝ ձեռքի տակ ունենալով սուլթան Ալպ-Արսլանի և Մելիք-շահի հայտնի վեզիր Նիզամ ալ-Մոլքի «Սիասաթնամեն», նա փորձում է լուսաբանել նաև «Ստորոգութիւն» հատվածի մյուս մութ արտահայտությունները:

Արդ որո՞նք են Խորենացու «Պատմության» և «Սիասաթնամեի» այն ընդհանրությունները, որոնք նշում է հեղինակը:

1. Խորենացին գրում է. «Սա ոչ քաջութեամբ քան թէ հարստութեամբ և ճարտարութեամբ զցեղապետութիւն ազգին իւրոյ ունէր, ճնազանդեալ Նեբրովթայ... Այլ քանզի աստեղաբանութեամբ *ճզօր եղեալ՝ յօժարեցաւ ուս<ուց>անել և զկատարեալ չարութիւնն»[47]:*

«Սիասաթնամեհ»-ի համաձայն, — գրում է Ն. Ակինյանը, — Մազդակ Բամդատի որդին մովպետական մովպետ էր Կավատ թագավորի օրով և «ճմուտ էր աստղերին»[48]. նա կը տեսնէ աստղերու մեջ թե իր ժամանակին երևան պիտի գա մարդ մը, որ նոր կրոնի մը հիմնադիր պիտի ըլլա: Մազդակ յուր «ճարտարութեամբ», այսինքն հնարագիտությամբ կը շահի Կավատ թագավորը: Կավատը «ճրամայում է ընդունելության ժամանակ ճրա համար թանկարժեք բաներով զարդարված ոսկե նստարան դնել: Կուբադը *(Կավատը — Բ.Ջ.)*

46 Տե՛ս **Ստ. Մելիք-Բախշյան,** *Պավլիկյան շարժումը Հայաստանում*, Երևան, 1953, էջ 35-55:

47 Ընդգծումը և <> միջի ուղղումը Ն. Ակինյանինն է:

48 Ն. Ակինյանը «Սիասաթնամեից» կատարած այս ընդգծված վկայակոչումները բերել է ֆրանսերեն թարգմանությունից և ֆրանսերեն լեզվով, մենք դրանք թարգմանում ենք ռուսերեն հրատարակության համապատասխան տեղերից:

նստում էր գահի վրա, իսկ Մազդակին նստեցնում էր այն նստարանին, որը շատ ավելի բարձր էր, քան Կուբադի գահը»[49]:

Ինչպես տեսնում ենք այս երկու հատվածներում ոչ մի ընդհանրություն չկա, բացի «աստեղաբանությամբ հզօր եղեալ» և «հմուտ էր աստղերին» արտահայտություններից, հետևաբար և առագրումը միանգամայն բռնազբոսիկ է: Իհարկե դրանք որոշ չափով կիմաստավորվեին, եթե այլ կետերում ևս ընդհանրություններ լինեին, բայց քանի որ, ինչպես կտեսնենք ստորև, այդպիսիք բացակայում են, ապա այս ընդհանրություններն էլ պատահական են:

Իսկ այն, որ Խորենացին Աժդահակին աստեղաբանության մեջ հզոր է համարում՝ պատահական չէ: Մարկվարտը վկայում է, որ «Համաձայն Յազդկերտ (Հազկերտ) իբն Մահլինդադի՝ պարսիկները Բաբելոնի հիմնադրումը վերագրում են Աժի Դահակին: Բաբելոնը համարվում է աստղաբաշխության հայրենիքն ու աթոռանիստը»[50]: Արդ միանգամայն տրամաբանական է, որ աստղաբաշխության կենտրոնի հիմնադիրը և համարվեր հզոր աստղագետ. մի հանգամանք, որ հաստատվում է Խորենացու այս հաղորդումով:

2. Խորենացին գրում է.

«Եւ հասարակաց զկենցաղս կամէր ցուցանել ամենեցուն և ասէր «ոչինչ իւր առանձին ումեք ունել պարտ է, այլ հասարակաց»:

Սիասաթնամեում ասված է. «Մազդակը քարոզում էր, թե ունեցվածքը բաշխված է մարդկանց միջև, իսկ մարդիկ ամենաբարձրյալի ստրուկներն են ու Ադամի որդիք: Ովքեր որ կարիքավորներ են, թող ծախսեն իրար ունեցվածքը, որպեսզի ոչ ոք զրկանք ու աղքատություն չզգա, որպեսզի բոլորը հավասար լինեն ըստ իրենց դրության: Երբ կուբադը ավելի առաջ գնաց, համաձայնվեց ունեցվածքի հանրայնացմանը, Մազդակը սկսեց հայտարարել. «Ձեր կանայք – ձեր ունեցվածքն են... Շատ մարդիկ, հատկապես հասարակ ժողովուրդը, գույքի ու կանանց ընդհանրության պատճառով, հրապուրվեցին նրա ուսմունքով»[51]:

Այստեղ իսկապես գույքի ընդհանրացման փաստում ընդհանրություն գոյություն ունի, իսկ կանանց ընդհանրացման մասին Խորենացու մոտ ոչ մի արտահայտություն չկա: Բայց դա չի խանգարում, որպեսզի Ն. Ակինյանը «Ստորագրութիւն» հատվածի՝ «Եւ զել զմուտ և բարեկամացն որպէս ի տուընջեան նոյնպէս և ի գիչերի սահմանէր» տեղիքը համարի կանանց մոտ ազատ ելք ու մուտք անելու քողարկված ակնարկ, որովհետև իբր թե Խորենացին դրանից ավելի ազատ խոսել չէր կարող[52]: Այս փաստարկը անհամոզիչ է, որովհետև նույն Խորենացին չի խորշում, օրինակ, խոսելու Պապ թագավորին վերագրվող ախտի մասին՝ գրելով «զի (Պապ) ամօթալի ախտիւ զազրագործ էր»[53],

---

49 «Հանդես ամսօրյա» 1936, էջ 350: Տե՛ս նաև Сиасет-намэ, Книга о правлении вазира XI столетия Низам ал-Мулька, перевод и примечания проф. Б. Н. Заходера, Изд. АН СССР, М.-Л., 1949, էջք 190-192: (Հետագայում՝ Սիասաթնամե...):

50 **J. Markwart**, *A catalogue of the Provincial Capitals of Eranshahr* (Pahlavi text, version and commentary), Edited by G. Messina S. I., Roma, 1931, էջ 66:

51 Սիասաթնամե..., էջ 192, տես նաև «Հանդես ամսօրյա», էջ 350:

52 «Հանդես ամսօրյա», էջ 351:

53 **Խորենացի**..., էջ 306:

կամ չի տատանվում հայոց Արտաչիր թագավորի մասին արձանագրելու, որ նա «անառակ, պոռնիկ է... գիճացեալ է մարմնով... տկար է ի կանայս...»[54], հետևաբար Խորենացին չէր խուսափի բացասական նման խոսքեր ասելու նաև Աժդահակի հասցեին:

Արդ ինչո՞վ բացատրել, որ Խորենացին նման հայացքներ է վերագրում Աժդահակին, արդյո՞ք նա Աժդահակի ու Մազդակի գրույցները ի մի է ճուլել իր սեփական և «բռնազբոսիկ ըմբռնումներով», ինչպես կարծում է Ն. Ակինյանը:

Անկախ բոլոր փաստերից, հատկապես Խորենացու և Մազդակի ապրած տարբեր ժամանակներից, գույքի հանրայնացման փաստի առկայությունը մեր մատենագրի մոտ կարելի էր դիտել որպես մազդակյան ուսմունքի արձագանք: Բայց մի՞թե գույքային սեփականության վերացման խնդիրը Մազդակի ու նրա հետևորդների մտահղացումն էր: Ճիշտ է 5-րդ դարի վերջերին և 6-րդ դարի սկզբներին Իրանում սրված դասակարգային պայքարը առաջ բերեց մազդակյան աղանդավորական-սոցիալական շարժումը, որը միաժամանակ վերոհիշյալ պահանջն էր դնում, բայց ինչպես յուրաքանչյուր դասակարգային հասարակության մեջ, այդ թվում և հին աշխարհում, դեռևս 5-րդ դարից էլ առաջ, գոյություն ունեցող դասակարգային պայքարի ընթացքում չահագործվող խավերը միշտ ձգտել են, թեկուզ և շատ նաիվ պատկերացմամբ, ունեցվածքի հանրայնացման[55], և մեր կարծիքով Խորենացու մոտ պահպանված փաստն էլ Մերձավոր Արևելքում դեռ շատ վաղուց գոյություն ունեցող դասակարգային պայքարի արձագանքներից է:

Որ Խորենացին ճշմարտացի հեղինակ է և հարազատ է մնում իր աղբյուրներին ու տեղեկություններին, արդեն շատ վաղուց համոզիչ կերպով ապացուցել են (Կոնիբեր, Մալխասյան և այլք) և մի ավելորդ անգամ ապացուցվում է Բյուրասպի Աժդահակի բուն առասպելը քննելիս: Խորենացին երբեք չի թաքցրել իր անտեղյակությունը այս կամ այն հարցի վերաբերյալ կամ կասկածը իր իսկ հաղորդած առանձին փաստի ստուգության մասին: Նման ինքնաքննադատության նրա պատմության մեջ մենք շատ հաճախ ենք հանդիպում[56]: Իսկ ինչ վերաբերում է Խորենացու «բռնազբոսիկ ըմբռնումներին» պետք է ասել, որ դա ոչ արդարացի որակում է. Խորենացու աշխարհայացքը պարզ է ու մեկին, իսկ նպատակը հստակ ու բացահայտ: Ինչպես նա ոչ մի խոսքով չի չեղվել բուն առասպելից, մեզ թվում է, որ «Ստորագրութիւն» բաժնում էլ չի խոտորում աղբյուրներից: Ճիշտ է այս հատվածում կան առանձին մութ ու ոչ հատուկ ակնարկներ, բայց մեր անտեղյակությունը իրավունք չի տալիս նրան «բռնազբոսիկ ըմբռնումներ» անելու մեջ մեղադրել, ինչպես անում է Ն. Ակինյանը:

Հայտնի է, որ հայ իրականության մեջ ևս 5-րդ դարում գոյություն են ունեցել բորբորիտների ու մծղնեականների աղանդավորական շարժումները, որոնց դեմ մղված պայքարում գործոն մասնակցություն է ունեցել հայ հոգևորականությունը[57]: Կարելի է ենթադրել, որ այս աղանդները նույնպես գույքային հավասարության հարցն են առաջ

54 Անդ, էջ 347:

55 Տե՛ս **Լ. Խաչիկյան,** *Փոքր Հայքի սոցիալական շարժումների պատմությունից (IV դար)*, ԳԱ հրատ., Երևան, 1951:

56 Մանրամասն տե՛ս **Ստ. Մալխասյանց,** *Խորենացու առեղծվածի շուրջը*, Արմֆանի հրատ., Երևան, 1940, էջ 100 և հտն.:

57 Տե՛ս **Կորյուն,** *Վարք Մաշտոցի*, 1941, Երևան, էջ 66 և **Մ. Խորենացի,** էջք 336-337:

քաշել, ուստի և ուժեղ դիմադրության են հանդիպել իշխող խավերի ու հոգևորականության կողմից: Ըստ երևույթին Խորենացին Աժդահակի առասպելի բաժնում այս փաստը օգտագործում է իր մեկենաս Սահակ Բագրատունուն ցույց տալու, թե իբր գույքային հավասարության գաղափարը բխում է այնպիսի բացասական անձնավորությունից, ինչպիսին Աժդահակն է, հետևաբար և իրավացի է ինքը պարսից առասպելների նկատմամբ արհամարհական վերաբերմունք ունենալով:

Հին ժողովուրդների հավատալիքների ու պատմության ուսումնասիրումը ցույց է տալիս, որ հաճախ տեղի է ունեցել բարի աստծու կամ դյուցազնի դիվացում: «Դիվացումը կատարվում է երկու ուղղությամբ. – գրում է Թ. Ավդալբեգյանը իր «Միհրը հայոց մեջ» հետաքրքիր աշխատության մեջ, – առաջին դեպքում չար են հռչակվում օտար *ժողովուրդների բարի աստվածները կամ դյուցազները, երկրորդ դեպքում* սեփական *բարի աստվածներն են զրկվում իրենց լուսապսակից և դասվում չարագործների շարքում»[58]: Թ. Ավդալբեգյանը՝ հենվելով Մ. Էմինի և Հյուբշմանի տվյալների վրա, մի շարք օրինակներով ցույց է տալիս բարի աստվածների դիվացման ակնառու դեպքեր. այսպես օրինակ՝ հնագույն դարերում հնդիկների և պարսիկների դիցաբանությունը շատ ընդհանուր կողմեր է ունեցել: Ժամանակի ընթացքում պարսիկները դիվացնում են իրենց որոշ աստվածների, որոնց չարունակում էին պաշտել հնդիկները. Վեդայի բարի աստվածները, այդ թվում և լույսի աստված Ինդրան, ապրում են դիվացման պրոցես. «Մինչև անգամ սանսկրիտերեն deva բառը, –գրում է Թ. Ավդալբեգյանը, – որ նշանակում էր լույս ու աստված՝ զենդերենում daeva և պահլավերենում ու պարսկերենում dev փոփոխակների վերածվելով սկսում է նշանակել չար ոգի կամ դև»[59]:*

Դիվացման նման օրինակներ կան նաև մեզ մոտ. ինչպես ԹաՋ *կամ* ԹաՋի *մակդիրը, Արուսյակ անունը, որ նախաքրիստոնեական շրջանում բարի աստված պետք է եղած լինի, իսկ հետագայում «դասից թափած» հրեշտակին, սատանային, երկնավեժ սադայելին են Արուսյակ անվանել: Ի վերջո դիվացման են ենթարկվել նաև Արտավազդն ու Միհրը[60]:*

Աժդահակի առասպելի բազմակողմանի ուսումնասիրությունը ենթադրել է տալիս, որ Աժդահակը ևս դիվացման է ենթարկված: Հանրահայտ է, որ հայ ժողովրդական բանահյուսության մեջ Արտավազդի-Շիդարի առասպելը մի շարք գծերով համընկնում է իրանական Բյուրասպ Աժդահակի զրույցի հետ. այդ ընդհանրությունները հետևյալներն են.

1. Թե՛ Աժդահակը և թե՛ Արտավազդը ներկայցված են որպես չարի մարմնացում:

2. Թե՛ Աժդահակը և թե՛ Արտավազդը չղթայվում են լեռների վրա[61]:

3. Երկուսի չղթաներն էլ ամրացնելու համար դարբինները հարվածում են իրանց սալերին. «Ի ձայնէ կռանահարութեան դարբնաց, – գրում է Խորենացին, – զորանան,

58 **Թ. Ավդալբեգյան,** *Միհրը հայոց մեջ*, Վիեննա, 1929, էջ 94:

59 Անդ, էջ 95:

60 Մանրամասն տե՛ս անդ, էջ 96 և հտն.:

61 Նյութը չընդարձակելու նպատակով դիտավորյալ կերպով չենք անդրադառնում ուրիշ ժողովուրդների լեռներում գամված հերոսներին՝ Պրոմեթևս, Ամիրան, Մատրիշվանի, Լոկ ևն:

ասեն կապանքն… Արտաւազդայ»[62]: Իբն ալ-Ֆակիհը նույնպիսի տեղեկութիւն է հայտնում Դեմաւանդ լեռան չուրջը գտնվող դարբինների մասին[63]:

Սակայն Արտավազդը միայն որպես չար չի ներկայացված մեր մատենագրության մեջ. նա հայտնի է այլև որպես դրական՝ բարի հերոս. եզնիկ Կողբացու տեղեկութիւնները Արտավազդի մասին այդ են ապացուցում: «Նոյնպէս և մոլորութիւնն դիւաց խաբեաց զդիւցապաշտս հայոց, եթէ զոմն Արտաւազդ անուն արգելեալ իցէ դիւաց, որ ցայժմ կենդանի կայ և նա ելանելոց է և ունելոց զաշխարհս, և ի սնոտի յոյս կապեալ կան անհաւատք. որպէս և հրեայք՝ որ ի զուր ակնկալութիւն կապեալ կան, եթէ Դաւիթ գալոց է չինել զերուսաղէմ և ժողովել զհրեայս, և անդ թագաւորել նմա նոցա»[64]:

Արտավազդի բնավորության երկվությունը մեզ ենթադրել է տալիս, որ Աժդահակը նույնպիսի երկվություն պիտի ունեցած լինի: Նրա չար բնույթը հայտնի է, իսկ բարի լինելու մասին, բացի Արտավազդի և Աժդահակի առասպելների ընդհանրություններից, մեզ համար կռվան են հանդիսանում՝

ա) Խորենացու վերը բերված հաղորդումը Աժդահակի քարոզած գույքային հավասարության մասին.

բ) Ֆիրդուսու հաղորդումը Աժդահակ-Զոհհակին Իրանի գահի վրա բարձրանալու, իրանցիների խնդիրքի մասին: «Շահնամեում» պատմվում է, որ իրանցիները իրենց վրա 700 տարի իշխող Ջամշիդից ազատվելու համար ապստամբվում և Զոհհակին, որ արդեն հռչակվել էր որպես դաժան բռնակալ, հրավիրում են թագավորելու Իրանի վրա:

«Շահնամեի» այս բաժնում, կամ թերևս նրա աղբյուրի մեջ, ակնհայտ չփոթություն կա: Ժողովուրդը, որ միշտ ձգտում է իրեն ազատարար ընտրել ազնիվ ու բարի հերոսների, հազիվ թե իր առասպելի մեջ համակրանք ցուցաբերեր Զոհհակ-Դահակի պես չարագործ բռնակալի նկատմամբ և նրան հրավիրեր փոխարինելու մի այլ չարագործի:

Այս փաստերը խորհել են տալիս այն մասին, որ հավանաբար Միջագետքում կամ Արևմտյան Իրանում ապրող էթնիկական որևէ հասարակության հավատալիքների մեջ եղել է մի աստված կամ դյուցազն, չի բացառվում և պատմական որևէ անձնավորության գոյությունը (թեկուզ և ինքը Դահակը), որի անվան հետ կապվել են չահագործվող աշխատավոր ժողովրդի ակնկալությունները ապագա կյանքի, անդասակարգ հասարակության նկատմամբ, բայց և որը դատապարտվել ու վարկաբեկվել է իշխող խավերի կողմից, որի հետևանքով էլ Արևելքի կրոնական գրքերում ու պաշտոնական մատյաններում Դահակը ներկայացված է ամենահոռի գծերով, որպես Ահրիմանի ամենամոտ գործակից: Այստեղից էլ կարելի է եզրակացնել, որ աժի=օձ*-վիշապ հետագայում է կցվել Դահակ անվան որպես մականուն, և սրա իսկական վաղեմի ձևը հենց այս է եղել, որը և օգտագործել է Ֆիրդուսին՝ Զոհհակ արաբական հորջորջումով:*

---

62 **Մ. Խորենացի**…, էջ 192:

63 **B. Stackelberg.**

64 **Եզնիկ Կողբացի,** *Եղծ աղանդոց*, 1912, Տփխիս, էջ 74: Արտավազդի բնավորության երկվության մասին մանրամասն տե՛ս **Մ. Աբեղյան,** *Հայ ժողովրդական առասպելները Մովսես Խորենացու Հայոց պատմության մեջ*, Վաղարշապատ, 1899, էջ 354 և հետ.:

Վարկաբեկման հետևանքով Դահակի դիվացման հանգամանքը ավելի համոզիչ է դառնում, երբ զուգահեռներ ենք անցկացնում հայոց Պապ թագավորի մասին Փ. Բյուզանդի հաղորդումների և Դահակի մասին եղած փաստերի միջև:

Ըստ մեր սկզբնաղբյուրների Պապ թագավորը իր իշխանության օրոք խիստ սահմանափակում է հոգևորականության իրավունքները և ըմբոստանում ինչպես Հռոմի քաղաքական, այնպես և Կեսարիայի հոգևոր գերիշխանության դեմ, վարելով անկախ քաղաքականություն, որի հետևանքով էլ դատապարտվում է հունասեր հայ կղերի ու իշխող խավերի առանձին կուսակցություններից կողմից: Դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ Պապին մեր պատմագիրները ներկայացնում են հոռի բարքերով: Հայ կղերը Պապի հասցեին արած իր որակումները համոզիչ և ժողովրդին ընդունելի դարձնելու համար դիմում է հեթանոսական հավատալիքներին, որոնցից հայերը քրիստոնեություն ընդունելուց հետո էլ դեռևս երկար ժամանակ չէին ազատված:

Պապ թագավորի մասին Փ. Բյուզանդը հետևյալն է հաղորդում:

«Պապ որդին Արշակայ ծնաւ ի մօրէն Փառանձեմայ Սիւնոյ, որ էր լեալ կին Գնելոյն, զոր եսպան արքայն Արշակ, և առ զկին նորա Փառանձեմ իւր կին, և ծնաւ ի նմանէ որդին՝ որ կոչեցաւն Պապ: Եւ եղև իբրև ծնաւ զնա մայրն իւր, քանզի անօրէն մարդ էր և ամենևին յաստուածոյ ոչ երկնչէր, նուիրեաց զնա դիւաց, և բնակեցին դևք բազումք ի մանուկն, և վարէին զնա ըստ կամաց իւրեանց: Մնաւ և աճեաց և գործեր գմեղս, զպոռնկութիւն…

…Իսկ մայրն նայեցեալ տեսանէր աչօք իւրովք օձք սպիտակք, զի պատեալք էին զգահոյիցն ոտամբք, և ճապատէին ի վերայ պատանեկին Պապայ…»[65]:

«Այլ թագաւորն Պապ, զի մինչ դեռ տղայիկ այն ինչ ծնեալ էր ի մօրէ իւրմէ՝ յայնժամ ճօնեաց զնա դիւաց անօրէն մայրն Փառանձեմ, և վասն այնորիկ լի էր դիւօք ի տղայութենէ իւրմէ: Վասն զի հանապազ զկամս դիւաց առնէր, վասն այսորիկ և զբժշկութիւն իսկ ոչ կամէր գտանել, զի հանապազ վարժէր զանձն իւր դիւօք, և կախարդանօք երևէին դևքն ի նմա. և ամենայն մարդ զդևսն ի նմա աչօք բացօք տեսանէին: Զի յորժամ մարդիկ հանապազօր յայդորել ելեալ մտանէին, տեսանէին՝ զի յօձից կերպարանս ելանէին ի ծոցոյն Պապայ թագաւորին, և պատէին զուսօք նորա (ընդգծումը մերն է – Բ. Ջ.) և ամենեքեան ոյք տեսանէին զնա, երկնչէին ի նմանէ…»[66]:

Ինչպես տեսնում ենք Պապը Աժդահակի պես չրջապատված է օձերով: Բ. Շտաքելբերգը վերոհիշյալ իր հոդվածում ընդգծում է այս նմանությունը և դա համարում թերևս իրանական հավատալիքների ազդեցության արդյունք[67]:

Պրոֆ. Կ. Մելիք-Օհանջանյանը հայտնում է, որ ինքը ևս անդրադարձել է Պապ թագավորի և Աժդահակի առասպելի սերտ առնչությանը և պրոֆ. Մարկվարտի ուշադրությունն է հրավիրել դրա վրա. վերջինս երկար սպասեցնել չի տվել և մի ընդարձակ միջանկյալ հավելում է մտցրել «Հանդես ամսօրյայում» լույս տեսնող իր մեծածավալ

65 **Փաւստոսի Բուզանդացւոյ** *Պատմութիւն հայոց*, ի լոյս ած Ք.Պ., Ս. Պետերբուրգ, 1883, էջ 131-132 (հետագայում՝ Փաւստոս Բուզանդ…):

66 Անդ, էջ 180:

67 **B. Stackelberg**…, էջ 238:

ուսումնասիրության մեջ[68]: Մարկվարտի «Աժդահակին նվիրված հատվածը ,— գրում է Կ. Մելիք-Օհանջանյանը, — պարզ ցույց է տալիս, որ Աժդահակյան առասպելը գոյություն է ունեցել հայկական միջավայրում և ուրույն մշակության է ենթարկվել»[69]:

Բայց այստեղ ազդեցության հարց չկա, այլ կա հարևան ժողովուրդների հեթանոսական հավատալիքների միջև եղած առանձին ընդհանրությունների արտահայտություն. օձ-վիշապները ըստ Արևելքի հեթանոսական հավատալիքների հանդերձյալ կյանքում գիշեր ու ցերեկ տանջում են այն մարդկանց, որոնք երկրի վրա անբարոյական վարքի տեր են եղել՝ զբաղվել են սոդոմականությամբ, մի ախտ որով տառապել է, իբր թե, նաև Պապը:

Պահլավական գրականության կիսակրոնական հուշարձաններից «Արտավիրապ նամակում» պատմվում է, թե ինչպես Արտավիրապը քուրմերի հրահանգով գնում է հանդերձյալ աշխարհը՝ մանրամասն ծանոթանալու դժոխքին ու արքայությանը, իմանալու, թե երկրի վրա մարդկանց արարքները ինչպես են գնահատվում այնտեղ: Եվ ահա իր վերադարձից հետո Արտավիրապը դժոխքում տեսած տեսարաններից մեկի մասին հետևյալն է պատմում.

«Գլխ. 19. 1) Եկա մի տեղ և տեսա մի մարդու հոգի, 2) որի երասանից կարծես օձը գերանի նման ներս էր մտել և բերնից դուրս եկել, 3) և այլ բազմաթիվ օձեր բռնել էին նրա ամբողջ մարմնի անդամները: 4) Եվ ես հարցրի Սրոշ առաքինուն և Ատր յազատին, 5) թե այս մարմինն ի՞նչ հանցանք է գործել, որ հոգին այդքան ծանր պատիժ է կրում: 6) Սրոշ առաքինին և Ատր յազատը պատասխանեցին. 7) այդ հոգին այն չարագործ մարդու հոգին է, որ երկրի վրա սոդոմականությունն էր անում 8) և թույլ էր տալիս մարդկանց գալ իր մարմնի վրա. 9 [դրա համար] այժմ հոգին այդքան ծանր պատիժ է կրում»:

Արտավիրապը նման մի այլ տեսարան նկարագրում է նաև 71-րդ գլխում[70]:

Ահա այդ փաստերից ելնելով՝ կարծում ենք, որ Խորենացին, երբ Աժդահակի մասին գրում է, թե «զել և զմուտ բարեկամացն որպէս տուընջեան նոյնպէս և ի գիշերի սահմանէր: Եւ այս է առաջին նորա ասացեալ անբարի բարերարութիւն», ակնարկում է Աժդահակի անբարոյական վարքին: Այստեղից կարծեք հստակ է դառնում Խորենացու այն պարբերությունը, որտեղ ասված է, թե Աժդահակը «ցաւս ինչ յորովայնի ունել բաղբաղէր չարաչարս, որ ոչ այլով իւիք, քան թէ բանիւ իմն և անուամբ սոսկալեաւ բժշկիցի, զոր վայրապար լսել ումեք ոչ է կարողութիւն»: Պապը նույնպես գանգատվում է ահավոր ցավերից, երբ նրա տրփանքին հագուրդ չի տրվում. Փավստոսը պատմում է, որ երբ Պապի մայրը՝ Փառանձեմը, ցանկացավ որդուն հետ կասեցնել սիրած արարքներից, Պապը սկսեց ճչալ ու վայել «և ասէ ցմայր իւր. Յարիցես գնասցես ի բաց զի մեռանիմ խորովիմ կսկծիմ պայթիմ, թէ ոչ յարիցես գնասցես ի տանէս»[71]:

---

68 **Jos. Markwart**, Sütdarmenien und die Tigrisquellen nach griechischen und arabischen Geoqraphen, Wien, 1930, էջ 135-138:

69 **Ֆիրդուսի**, *Ժողովածու*, էջ 98:

70 Արտավիրապ Նամակ, պահլավերեն բնագրից թարգմ. Ռ. Աբրահամյան (անտիպ):

71 **Փաւստոս Բուզանդ…**, էջ 132:

Արդ այս բոլոր փաստերն ու կատարված համեմատությունները մեզ իրավունք են տալիս եզրակացնելու.

1. Խորենացին հարազատորեն է հաղորդել Բյուրասպի Աժդահակի զրույցը:

2. Խորենացին ճշմարտապատում է նաև «Ստորագրութիւն» հատվածում և հավատարիմ է իր ձեռքի տակ եղած աղբյուրներին:

3. Ընդունելի չէ Ն. Ակինյանի այն պնդումը, թե Խորենացին Աժդահակին չփոթել է Մազդակ-Մաժդակի հետ և ծանոթ է եղել վերջինիս վարդապետությանը:

4. Աժդահակը, որ մինչև այժմ հայտնի է որպես չարության ներկայացուցիչ, շատ վաղ ժամանակներում եղել է բարի աստվածություն կամ դյուցազն, որը հետագայում դիվացման է ենթարկվել:

5. Ֆիրդուսու մոտ պահպանված Զոհհակ-Դահակ անունը շատ ավելի հին ձև է, որը հետագայում, դիվացման ժամանակ, ազի–«օձ, վիշապ» անվան կցումով դարձել է Աժի Դահակ=Աժդահակ:

ԻՐԱՆԱԿԱՆ ՎԻՊԱԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» ՄԷՋ[1]

1. Հայ եւ իրանական ժողովուրդների մշակութային կապերի պատմութեան մէջ Մովսէս Խորենացին է, որ առաւել հարուստ տեղեկութիւններ է հաղորդել իրանական վիպական զրոյցների վերաբերեալ:

2. Իրանական ժողովուրդների փառաբանուած հերոս Ռոստոմի մասին հնագոյն գրաւոր վկայութիւնը պահպանուած է Խորենացու «Հայոց պատմութեան» մէջ:

3. Խորենացին մանրամասնաբար եւ հարազատօրէն պատմել է նաեւ Բիւրասպի Աժդահակի առասպելը: Խորենացու հաղորդումը, հիմնականում համընկնելով իրանական աղբիւրների տուեալներին, միաժամանակ տալիս է այնպիսի վկայութիւն, որով ապացուցում է, որ հին ժամանակներում Աժդահակը նաեւ բարի դիւցազն է եղել եւ բարի էութիւն է ունեցել:

4. Խորենացու պատմութեան մէջ, «Եթէ զի՛նչ առասպելք պահլաւկաց» խորագրով հատուածում (երկրորդ գիրք, 70-րդ գլուխ) պատմուած է նաեւ Իրանում Սասանեանների իշխանութեան գլուխ բարձրանալու առասպելական պատմութիւնը, որ իր չարադրանքի հակիրճութեան ու սեղմութեան պատճառով չափազանց դժուարհասկանալի է: Խորենացու հատուածի համեմատութիւնը իրանական աղբիւրների, մասնաւորաբար «Արտաշիրի Կարնամակի» եւ Ֆիրդուսու «Շահ-Նամէի» համապատասխան բաժինների հետ հնարաւոր է դարձնում՝ ա) ճիշդ մեկնաբանել Խորենացու վերոյիշեալ, ցարդ մինչեւ վերջ անյստակ հատուածը, բ) մէկ անգամ եւս համոզուել, որ Խորենացին հարազատօրէն է վերարտադրում իր օգտագործած աղբիւրները, հետեւաբար եւ վստահօրէն ասել, որ գոյութիւն է ունեցել Խորենացու օգտագործած Բարսումա՝ Ռաստսոհուն կոչուած աղբիւրը:

---

[1] Ամերիկայի Հայոց Առաջնորդարանի Գրիգոր և Կլարա Զոհրապ տեղեկատվության կենտրոն, 1992:

ԻՐԱՆԱԿԱՆ ՎԻՊԱԿԱՆ ՀԵՐՈՍ ԶԱԼԻ ԱՌԱՍՊԵԼԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» ՄԷՋ[!]

Դարաւոր հարևաններ Հայաստանի ու Իրանի քաղաքական վաղ կապերի մասին հարուստ տեղեկութիւններ են պահպանուել թէ՛ հայկական և թէ՛ օտար աղբիւրներում, մինչդեռ չատ սուղ են տուեալները նրանց մշակութային յարաբերութիւնների վերաբերեալ, որոնք սկիզբ են առել դեռևս հայ և իրանական ժողովուրդների կազմաւորման ժամանակներից և հիմնականում իրենց հետքերն են պահպանել նրանց վաղ շրջանի հաւատալիքներում:

Քրիստոնէութիւնը Հայաստանում պաշտօնական կրօն հռչակուելուց (301 թ.) և հայ իշխանաւորների կողմնորոշումը դէպի Բիւզանդիա փոխուելուց յետոյ գաղափարական մեծ անջրպետ է ստեղծուում երկու հարևան երկրների միջև, սակայն ինչպէս վկայում է Մովսէս Խորենացին, մի ամբողջ հարիւրամեակ՝ մինչև հայկական գրերի ստեղծումը (405 թ.), Հայաստանի պետական ու հասարակական կեանքում որպէս գրաւոր հաղորդակցման միջոց, հունարէնին զուգահեռ, շարունակւում է նաև պարսից գրի ու լեզուի օգտագործումը: Իսկ այդ ժամանակներում պարսից մատենագրութեան մէջ եղել են այնպիսի երկեր, որոնք հարուստ տեղեկութիւններ են պարունակել հայ ժողովրդի պատմութեան ու մշակոյթի վերաբերեալ: Այդ կապակցութեամբ Խորենացին գրում է. «Եւ ընդ այս մի՛ ոք զարմասցի, եթէ բազում ազգաց լեալ մատենագիրք, որպէս ամենեցուն է յայտնի, մանաւանդ Պարսից և Քաղդէացւոց յորս առաւել ազգիս մերոյ գտանին բազում ինչ իրաց յիշատակք...», կամ «Եւ զայս ստուգապէս պատմէ Ողիմպ քուրմ Հանուոյ, գրող մեհենական պատմութեանց, և զայլ բազում գործս՝ զոր ասել կայ մեզ առաջի, որում Պարսից մատեանքն վկայեն և Հայոց երգք վիպասանաց»:[1]

Հայ-իրանական վաղ շրջանի գաղափարական տարաճայնութիւնները արտացոլուած են հայ մատենագիրների (Եզնիկ, Եղիշէ, Խորենացի և այլք) երկերում, որոնք քրիստոնէութեան ջատագովութեան դիրքերից խիստ քննադատութեան են ենթարկել զրադաշտականութեան այլատեսակութիւններից մէկի՝ զրուանիզմի, սկզբունքները: Այդ հաւատքի ուսումնասիրութեան առումով հայկական աղբիւրները իրենց հաղորդած տեղեկութիւններով եզակի արժէք են ներկայացնում: Իրանում մահմեդականութեան յաղթանակը (7-րդ դար) աւելի է խորացրել հայերի ու պարսիկների գաղափարական անջատուածութիւնը, որով և պէտք է բացատրել հայ մատենագրութեան մէջ իրանական մշակոյթին վերաբերող սուղ փաստերի առկայութիւնը: Սակայն այս բոլորը չի խանգարել, որպէսզի ժողովրդի մէջ բանաւոր կերպով շարունակեն ապրել հնօրեայ հարևանութեան սերտ յարաբերութիւնների հետևանքով Հայաստան ներթափանցած իրանական վիպական երգերն ու զրոյցները, որոնք դարեր են հարատևել: Սա են վկայում հայ մատենագիրների երկերում, ինչպէս նաև միջնադարեան տաղերգուների ստեղծագործու-

---

[!] Տե՛ս «Իրաւ նամէ», 1993, հ. 2, էջ 114-117:

1 **Մովսիսի Խորենացւոյ** *Պատմութիւն Հայոց*: Աշխատութեամբ Մ. Աբեղեան և Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913, էջ 7, 176:

թիւններում առկայ իրանական վիպական զրոյցների արձագանքները և մինչև վերջին տասնամեակներս պատմուող հայ-իրանական «Ռոստամ-Զալ» վէպը: Այսպէս, Պարսկաստանում Արշակունեան հարստութեան անկման և Սասանեանների յաղթանակի վիպական զրոյցի մի արժեքաւոր պատումը պահպանուել է Ագաթանգեղոսի (4-րդ դար) յունարէն թարգմանութեան Լավրենտեան տարբերակում և Մովսէս Խորենացու Պատմութեան մէջ (5-րդ դար): Այս զրոյցի առկայութեամբ իսկ պիտի բացատրել Շապուհ Բ. Որմզդեանի (309-379 թթ.) հրամանով Ագաթանգեղոսի Պատմութեան թարգմանութիւնը պարսկերէնի, որի մասին վկայել է Պետրոս Սիւնեցին (6-րդ դար):

Արևելքի փառաբանուած հերոսներից Ռոստամի անուան ամենավաղ յիշատակութիւններից մէկի պատիւը պատկանում է Մովսէս Խորենացուն: Նրա Պատմութեան մէջ շատ համառօտ չարադրուած է նաև Պարսկաստանում Սասանեան հարստութեան իշխանութեան գալու վիպական զրոյցների, իսկ փոքր-ինչ աւելի մանրամասն՝ նաև Բիւրասպի Աժդահակի առասպելը, որը կարևոր սկզբնաղբիւր է զրոյցի պատմա-դիցաբանական առանձնահատկութիւնների ճշգրտման առումով:

Հայ մատենագիրներից Սեբէոսը (7-րդ դ.) իր պատմութեան մէջ յիշատակել է իրանական էպոսի կարկառուն հերոսներից Սպանդիատին (Սպանդիարին) և Խոսրով ու Շիրին զրոյցը. արևելեան գրականութիւնների մէջ Սեբէոսը առաջիններից է, որ արձանագրում է այս պատմութիւնը: Հետագա դարերում է, որ զրոյցը մեծ տարածում է ստանում Մերձավոր Արևելքում, Միջին Ասիայում ու Հնդկաստանում և բազմաթիւ գրական մշակումներ ունենում:

Իրանական վիպական հերոսներ Ռոստամի, Սպանդիարի, Աժդահակի վերաբերեալ զրոյցների սուղ արձագանքներ են պահպանուած նաև Գրիգոր Մագիստրոսի (11-րդ դ.) «Թղթերում»: Իսկ աւելի ուշ Հայաստանում տարածւում է «Շահ-նամէի» հռչակը, այնպէս որ Կոստանդին Երզնկացին (13-14-րդ դդ.) անգամ նրա չափով յատուկ ոտանաւոր է գրում:

Իրանական վիպական զրոյցների արձագանքները իւրովի հասել են մինչև Սայեաթ-Նովա ու մեր օրերը: Այս բոլորը պերճ ապացոյց են, որ չարի պարտութիւնը և բարու յաղթանակը իրանական վիպական զրոյցներում ոգեշնչել է նաև հայ ժողովրդին, որը իրանցի հերոսներին հետագայում փոխադրելով Հայաստան, ամբողջապէս հարազատացրել է, հարմարացրել իր աշխարհընկալմանը, իր էպոսի ոգուն և ստեղծել «Ռոստամ-Զալ» հայ-իրանական վէպը՝ «Սասնա ծռեր» ժողովրդական վէպի կողմնակի ճիւղերից մէկը:[2]

Հայ և եւրոպական բանասիրութեան մէջ աւելի քան մէկ դար է, որ տարբեր առիթներով անդրադառնում են Մովսէս Խորենացու Պատմութեան մէջ առկայ իրանական վիպական զրոյցների անդրադարձներին, սակայն դեռևս Խորենացու մօտ կան այնպիսի տեղեկութիւններ, որոնք կարիք ունեն աւելի յստակման ու մեկնաբանութեան:

Պարսկաստանում Սասանեան հարստութեան իշխանութեան բարձրանալու վերաբերեալ իր տեղեկութիւնները Խորենացին քաղել է Բարսումա, պարսիկների կողմից Ռաստսոհուն կոչուող հեղինակի երկից, որ յունարէնի է թարգմանել Խոռոհբուտ պատմիչը: Ըստ պատմիչի հաղորդման, վերջինս եղել է պարսից Շապուհ թագաւորի քարտու-

2 Մանրամասն տե՛ս **Զուգասզեան Բ.**, *Հայ-իրանական գրական առնչութիւններ (5-18-րդ դդ.)*, Երևան, 1963:

զարը և, յունա-պարսկական պատերազմի ժամանակ գերի ընկնելով յոյներին, սովորել է նրանց լեզուն, ընդունել քրիստոնէութիւն և ստացել է եղիազար անուն: Ահա Խորենացու վկայութիւնը.

«Այս Խոռոհբուտ դպիր եղեալ Շապհոյ թագաւորին Պարսից, և ի ձեռս Յունաց անկեալ, յորժամ Յուլիանոս, որ և Պառաբատոսն, զօրու հանդերձ ի Տիզբոն չոգաւ, և ի մեռանելն նորա անդ, ընդ Յոբիանու ի Յոյնս ընդ արքունական սպասաւորսն եկն. և մերոյ հաւատոյս դաւանեալ՝ անուանեցաւ Եղիազար. և յոյն լեզու ուսեալ՝ պատմագրեաց զգործս Շապհոյ և Յուլիանու: Ընդ նմին թարգմանեաց և զառաջնոցն պատմութիւնս, մատեան մի, որ գերեկից իւր լեալ Բարսումայի ուրումն անուամբ, զոր Պարսք Ռաստսոհուն կոչեն. յորմէ մեր ուսեալ՝ երկրորդեմք այժմ ի գիրս յայսմիկ, թողլով զառասպելաց նոցա զբարբաջմունս: Քանզի անտեղի է մեզ այժմ երկրորդել զառասպելսն յաղագս երազոյն Փափագոյ, և արտադատութեան հրոյն մանուածոյ՝ որ ի Սասանայ, և պատումն զՀօտիւն, և լուսնակն, և ախտարմողացն յառաջասացումն՝ որ են քաւղեայք, և որ ինչ զկնի այսորիկ. և պոռնկական խորհուրդն Արտաշրի հանդերձ սպանութեամբք, և անմիտ հանճարաբանութիւն մոգին դստեր վասն նոխազին, և որ ինչ այլ ամենայն: Նա և այծին դիեցումն մանկանն ընդ հովանեաւ արծուոյն, և գուշակումն ագռաւուն, և գերապանծին պահպանութիւն առիւծուն հանդերձ արբենականութեամբ գայլուն. և մի միայնամարտութեանն առաքինութիւն, և որ ինչ այլաբանութեանն բերէ կարգ: Այլ մեք ասասցուք միայն զստոյգն, որ ինչ ճշմարտութեանն վայել է պատմութիւն»:[3]

Գրիգոր Խալաթեանցը «Հայկական Արշակունիներ» իր աշխատութեան մէջ մերթ մերժում է Բարսումայի աղբիւրի գոյութիւնը՝ պնդելով, որ Խորենացին թաքցնում է իր աղբիւրը այս անգոյ անուան տակ և մերթ էլ հաւանական համարում[4]*: Աւելի ուշ, 1934 թ., Կարօ Մելիք-Օհանջանեանը «Փիրդուսին և Իրանի վիպական մոտիւները «Շահնամէ»-ում ու հայ մատենագրութեան մէջ» իր արժեքաւոր ուսումնասիրութեան մէջ, չնայած ըստ ամենայնի համեմատում է Խորենացու այդ հատուածը (Բ գիրք, գլ. Հ), Արտաշիր Պապականի կարնամակի հետ և չատ ընդհանուր տեղիներ, միաժամանակ նաև որոշակի անհամաձայնութիւններ մատնանշում, բայց ըստ երևոյթին չկարողանալով ձերբազատուել Խորենացուն քննադատողների ու մերժողների բացասական ազդեցութիւնից, եզրակացնում է, որ «Խորենացու տեղեկութիւնները Իրանի այդ դարաշրջանի իրադարձութիւնների մասին այնքան վայրիվերոյ են, մակերեսային, այնքան նուազ պատմական-իրական, ժամանակագրութիւնն այնքան խանգար, որ դժուար է ընդունել միայն գրաւոր, այն էլ համարեայ ժամանակակից, ինչպէս կարելի է եզրակացնել իր «պատմութիւնից» (Բ գիրք, գլ. Հ) որևէ աղբիւր: Խորենացին կամ նրա Ռաստսոհուն աղբիւրն Իրանի 224-379 թթ. ժամանակաշրջանի պատմութիւնը բոլորովին աղճատ է նկարագրում: Այդտեղ խանգարուած են և դէպքերն ու դէմքերը, և փաստերն ու իրադարձու-*

3 **Մովսէս Խորենացի**, Անդ 206-7:

4 **Халатянц Г.**, *Армянские Аршакиды в Истории Армении Моисея Хоренского*, ч. 1, М., 1903, стр. 117-8.

թիւննե՛րը: Դժուար է երևակայել, որ «ճշմարտախօս» (Ռաստսոհուն) կոչուող պատմութեան մի մատեան այդքան անծանօթ լինէը դարաշրջանի Իրանի պատմութեան[5]:

Բանասիրութեան մէջ առանձին փորձեր են եղել Խորենացու վերոյիշեալ հատուածը համեմատելու Ֆիրդուսու «Շահ-նամէի» հետ (Գուդշմիդ, Նոլդեկէ) և եկել են այն եզրակացութեան, որ «ինչ որ նա (Խորենացին) յայտնապէս Բարսումայի գրքից է հաղորդում Արտաշրի երիտասարդութեան ժամանակի մասին, բոլորովին համաձայն է Ֆիրդուսիին, թէպէտ չատ աւելի իսկական և վաղեմի գոյնով» (Գուդշմիդ)[6]:

Յավօք, պրոֆեսոր Մելիք-Օհանջանեանի եզրակացութիւնը Խորենացու ձեռքի տակ եղած աղբիւրի մասին, որ չատ թանձր գոյներով է ներկայացուում, կտրուկ է ու վճռական, և ընդունելի չէ: Նման աղբիւր գոյութիւն ունեցել է, բայց Բարսումա-Ռաստսոհուն, թէ մի այլ անունով տուեալ դէպքում այնքան էլ կարևոր չէ: Ասենք, որ Ֆիրդուսին, որ «Շահ-նամէում» ընդարձակ տեղ է տուել Սասանեանների սկզբնաւորման պատմութեանը, նոյնպէս յիշատակում է հնօրեայ մի մատեան, որ հնարաւորութիւն է տուել իրեն մանրամասն պատմելու Արտաշիրի վիպասքը:

Խորենացին Պատմութեան Բ գրքի «Եթէ զինչ առասպելք Պահլաւկաց» խորագրով 70-րդ գլխում, կարելի է ասել հանելուկային լեզուով է խօսում այդ առասպելների մասին, որոնք չատ մանուածապատ են և մեկնութեան կարօտ: Պրոֆ. Մելիք-Օհանջանեանը վերոյիշեալ իր աշխատութեան մէջ Խորենացու այս գլխի մասին գրում է, որ այն «իր աղճատ տեսքով առհասարակ մի կատարեալ փորձաքար է դարձել թարգմանիչների համար»[7] և վերծանելու նպատակով մանրակրկիտ համեմատում է Արտաշիր Բաբականի «Կարնամակի»[8] հայերէն թարգմանութեան հետ և լուսաբանում է չատ հարցեր, սակայն, այդուհանդերձ, մնացել են որոշ անհասկանալի տեղիներ: Փորձենք Ֆիրդուսու օգնութեամբ վերծանել դրանցից մի քանիսը:

Խորենացին գրում է. «անտեղի է մեզ այժմ երկրորդել զառասպելն յաղագս երազոյն Փափագոյ»:

Իսկ ի՞նչ երազ է եղել դա:

Ըստ Ֆիրդուսու՝ Դարեհի որդիներից Սասանի տոհմի ժառանգորդներից հովվապետ Բաբաքը (նոյն ինքը Փափագը), երազում տեսնում է իր նախապապ Սասանին՝ թուրը ձեռքին փղի վրայ նստած, յայորդ գիշեր երազը չարունակւում է. Սասանի առջև է ելնում մի հրպետ ձեռքին երեք վառուող ջահ[9] (ըստ Խորենացու՝ «հրոյն մանուածոյ՝ որ ի Սասանայ»):

---

5 **Մելիք-Օհանջանեան Կ.**, *Ֆիրդուսին և Իրանի վիպական մօտիւները «Շահ-նամէում» ու հայ մատենագրութեան մէջ*, տե՛ս «Ֆիրդուսի»: Բանաստեղծի ծննդեան հազարամեակին նուիրուած ժողովածու, Երևան, 1934, էջ 53:

6 Տե՛ս **Մովսէս Խորենացի**, *Հայոց պատմութիւն*: Թարգմանութիւն, ներածութիւն և ծանօթութիւններ դոկտ. Ս. Մալխասեանի, Երևան, 1940, էջ 305:

7 Անդ, էջ 31:

8 *Արտաշիր Բաբական Կարնամակ*: Պահլաւ բնագրէն թարգմանեց հանդերձ ծանօթագրութեամբք դոքտ. Հ. Թիրեաքեան, Փարիզ, 1907:

9 **Ֆիրդուսի**, *Շահ-նամէ*, Մոհամէդ Ռամազանիի համեմատութեամբ ու ուղղումներով, հ.1, Թեհրան, 1311-12/1932-33 (պարսկերէն):

Ֆիրդուսին պատմում է, որ Բաբաքը դիմում է աստղագուշակներին (ըստ Խորենացու՝ «ախտարմողացն յառաջասացումն»), որոնք կանխատեսում են, թէ մի նոր թագաւոր երևան պիտի գայ ու կործանի Արշակունի Արտաւանին, դա հովիւ Արտաչիրն է, որ նոյնպէս Սասանի ցեղից է: Սա Արտաւանի արքունիքում մեծ անուն էր վաստակել իր խիզախ ու համարձակ արարքներով: Արտաչիրը հրապուրւում է Արտաւանի հարճով՝ Գոլնարով, փախցնում է նրան և այնուհետև սպանում է Արտաւանին (Խորենացու «պոռնկական խորհուրդն Արտաչրի՝ հանդերձ սպանութեամբք» մթագնուած ձևակերպումը առնչւում է իսկ և իսկ այս զրոյցին): Ֆիրդուսին այնուհետև պատմում է, որ Գոլնարին փախցնելիս մարդիկ տեսնում են, թէ ինչպէս նրա ձիան ետևից սլանում էր լուսանման փարրը (հայերէն՝ փառքը). սա հին պարսկական հաւատալիքներում աստուածային ընտրութեան խորհրդանիշն է, որ երբեմն հանդէս է գալիս այծի կամ խոյի (Խորենացու մօտ՝ նոխազի) տեսքով:

Խորենացու պատմութեան այս գլխի իմաստային առումով մութ հատուածներից է և հետևեալը. «...այծին դիեցումն մանկան ընդ հովանեաւ արծուոյն», որ Խորէն Ստեփաննէն (1889 թ.) թարգմանել է. «...այծի կաթ տալը մանուկին արծուի հովանուն տակ, և ագռաւի գուշակութիւնը, և գերապանծ առիւծի պահպանութիւնը գայլի օգնութեամբ, և մենամարտութեան քաջութիւնը և բոլորն, ինչ որ այլաբանութիւնը պատմում է կարգով»[10], իսկ Ստեփանոս Մալխասեանը (1940 թ.)՝ «...այծի ծիծ տալը երեխային արծուի հովանու ներքև, ագռաւի գուշակութիւնը, գերապանծ առիւծի պահպանութիւնը գայլի սպասաւորութեամբ, և քաջ մենամարտութիւնը, և ինչ որ այլաբանութեան կարգին է պատկանում»[11], Ռոբերտ Թոմսոնը անգլերէն նոր թարգմանութեան մէջ՝ «...the goats suckling of her kid under the shade of an eagle the prediction of the crow, the guarding of the illustrious lion with the service rendered by wolf, the valor of the single combat, and whatever has the character of allegory»[12], իսկ Գագիկ Սարգսեանը ռուսերէն նոր թարգմանութեան մէջ՝ «как коза вскармливала младенца под сенью крыльев орла и прорицании ворона, об охране великолепного льва при прислужничестве волка и доблести в единоборстве и обо всем...»[13].

Ի՞նչ այծի և ի՞նչ արծւի մասին է խօսքը:

Այս բեկորը ամենայն հաւանականութեամբ, իրանական առասպելաբանութեան մի գողտրիկ զրոյցի սկզբնամասի արձագանքն է, որ վերաբերում է Ռոստամի հօր Զալին, Իրանի պատմութեան դիւցազնական ժամանակաշրջանին և ոչ մի կապ չունի Սասանեանների իշխանութեան հիմնադիր Արտաչիրի իշխանութեան բարձրանալու հետ, որին և հիմնականում նուիրուած է Խորենացու Պատմութեան խնդրոյ առարկայ Հ. գլուխը:

---

10 **Մովսէս Խորենացու** *Հայկական Պատմութիւն:* Աշխարհաբար թարգմանեց և լուսաբանեց Խորէն ծայրագոյն վարդապետ Ստեփանէ, Ս. Պետերբուրգ, 1889, էջ 190:

11 **Մովսէս Խորենացի**, *Հայոց պատմութիւն:* Թարգմանութիւն, ներածութիւն և ծանօթութիւններ դոկտ. Ստ. Մալխասեանի, Երևան, 1940, էջ 139:

12 **Moses Khorenatsi**, p. 217-8.

13 **Мовсес Хоренаци**, *История Армении*, перевод с древнеармянского языка, введение и примечания Гагика Саркисяна, Ереван, 1990, стр. 118.

Այս առասպելը Խորենացուց հինգ դար յետոյ գեղարուեստական մեծ վարպետութեամբ մշակել է Ֆիրդուսին «Շահ-Նամէի» դիւցազնական արքայ Մանուչէհրի թագաւորութեան բաժնում: Ըստ Ֆիրդուսու, Զալը ծնուել էր ճիւնի պէս սպիտակ մազերով և կարմիր դէմքով: Հայրը՝ Սամը, որդու կերպարանքից ահաբեկուած ու նուաստացած, հասարակութեան աչքում խայտառակ չլինելու համար, կարգադրում է իր ծառաներին «ահրիմանածին» որդուն կորցնել Ալբորզ լեռան ամայի բարձունքներում: Աստուած խնայում է նորածնին. երեխան սկզբում սնւում է այդ կողմերում թափառող էգ առիւծի կաթով (Խորենացու մօտ՝ «գերապանծին պահպանութիւն առիւծուն»), այնուհետև նրան նկատում է Ալբորզ լեռան վրայ իր բունը դրած հեքիաթային Սիմորղ թռչունը, որ պարսկական աւանդոյթում միշտ արծուատեսք է: Գիշատիչ Սիմորղը նրան իր հովանաւորութեան տակ է վերցնում և սնում է իր ճագերի հետ միասին (ուշադրութիւն դարձնել Խորենացու «ընդ հովանեաւ արծուոյն»): Անցնում են տարիներ, Սամը երազ է տեսնում, որ որդին կենդանի է, ուստի հրամայում է գտնել նրան: Երբ Զալը բերւում է հօր առաջ, անմիջապէս այլակերպւում է, դառնում սև աչք ու ունքով վայելչագեղ, առնական պատանի:

Ֆիրդուսու այս տարբերակը իրաւունք է տալիս մեզ Խորենացու վերոյիշեալ հատուածում ա) իմանալ, որ մանուկը որոշակի անձ է՝ իրանական դիւցազներգութեան յայտնի Զալը, բ) նախադասութեան մէջ հովանին ոչ թէ չուք կամ թևերի տակ վերցնել իմաստներով պիտի ընկալել (ինչպէս ռուսերէն ու անգլերէն թարգմանութիւնների մէջ), այլ հասկանալ հովանաւորութիւն, խնամակալութիւն առումով, գ) սխալ համարել անգլերէն թարգմանութեան մէջ այծի դիեցումն մանկան արտայայտութիւնը այծի կաթ տալը սնումը իր ճագին (her kid) թարգմանելը, դ) նախադասութեան չարունակութեան մէջ գերապանծ յարգալից ածականը պէտք է վերագրել ոչ թէ առիւծին այլ մանկանը, իմա՝ Զալին, որ իրանական աւանդութիւնում գեր (չափազանց) պանծացուած ու գովերգուած հերոս է. անգամ բառի քերականական ձեւը տրական հոլովով լինելը՝ գերապանծին, յուշում է, որ այն ոչ թէ առիւծին է վերաբերում, այլ նախորդ նախադասութեան գործող անձին, այսինքն՝ մանկանը (Զալին): Այստեղ առայժմ չեն մեկնաբանւում «ագռաւի գուշակութիւնը», «գայլի օժանդակութիւնը առիւծին» և «միայնամարտութեան առաքինութիւնը»: Կարելի է ենթադրել, որ Խորենացու ժամանակներում Արևելքում պահպանուած է եղել հնդեւրոպական աւանդներում «կորսուած երեխաների ատնտու կենդանիների» մասին գոյութիւն ունեցող զանազան առասպելներ, որոնք տուեալ դէպքում արտացոլուել են Խորենացու վկայակոչած մանկան (Զալի) առասպելում: Մանկան պահպանութեան գործում Առիւծին օժանդակող գայլի համար կարելի է զուգահեռ անցկացնել Հռոմի հիմնադիր Ռոմուլուսի և նրա եղբօր Ռէմի ատնտու գայլի առասպելը:

Այս բոլորից յետոյ առաջարկում ենք քննութեան առարկայ հատուածի թարգմանութեան մեր տարբերակը «...արծուի հովանաւորութեան ներքոյ այծի սնուցումը մանկան, և ագռաւի գուշակութիւնը, և գեր պանծացուած [մանկան] պահպանութիւնը առիւծի կողմից գայլի օժանդակութեամբ, և միամարտութեան առաքինութիւնը, և ինչ որ այլաբանութեան կարգին է պատկանում...»: Միաժամանակ արծուի հովանաւորութեան ներքոյ սնուող մանկան համար պէտք է ծանօթագրել, որ երեխան պարսկական դիւցազներգութեան հերոսներից Զալն է:

Կատարուած համեմատութիւնները մեզ իրաւունք են տալիս եզրակացնելու, որ եթէ Խորենացու վերոյիշեալ տեղիները իրենց զուգահեռները ունեն իրանական գրականութեան մէջ, ապա մէկ անգամ ևս հաստատւում է նրա ճշմարտապատում պատմիչ լինելը, բայց որովհետև իրանական առասպելները նա «բարբաջանքներ» է համարել և հրաժարուել է հաւաստի պատմութեան չարադրման ժամանակ մանրամասն վերապատմել, հետևաբար այս հատուածի չարադրանքը հանելուկային է ստացուել, որ մեզ համար ներկայումս անհասկանալի, բայց, ամենայն հաւանականութեամբ, ընկալելի ու ծանօթ են եղել Պատմութեան պատուիրատու Սահակ Բագրատունուն ու ժամանակակիցներին:

Տարիներ առաջ Խորենացու պատմութեան «Ի պարսից առասպելաց» բաժնի մեր քննութիւնը, նրա համեմատութիւնը առկայ իրանական աղբիւրների հետ մեզ բերել էր այն եզրակացութեան, որ Խորենացին հարազատօրէն է հաղորդել Բիւրասպի Աժդահակի զրոյցը և հաւատարիմ է մնացել իր ճեռքի տակ եղած աղբիւրներին[14]: Ներկայումս քննելով նաև Սասանեանների հարստութեան իշխանութեան գալու վիպական զրոյցները, աւելի քան համոզւում ենք մեր պատմիչի ազնուութեանն ու ճշմարտացիութեանը, որով կարող ենք ասել, որ Խորենացու վկայութիւնը ցարդ չյայտնաբերուած Բարսումա՝ Ռաստոհուն կոչվող աղբիւրի գոյութեան մասին պէտք է միանգամայն հաւաստի համարել:

14 Տե՛ս **Զուգասզեան Բ.**, *Հայ-իրանական գրական առնչութիւններ*, էջ 62-90:

ԻՐԱՆԱԿԱՆ ՎԻՊԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ «ԹՂԹԵՐՈՒՄ»[!]

11-րդ դարի առաջին կեսում, երբ արդեն հնչել էին մեր գրականության աչխարհականացման առաջին ղողանջները, երբ արդեն հրապարակի վրա էին անմահ Նարեկացու «ի խորոց սրտից» բխած հոգեզմայլ երգերը, իսկ Մերձավոր Արևելքում հուժկու թափով զարգանում էր աչխարհիկ կուլտուրան, Հայաստանում ապրում և ստեղծագործում էր Գրիգոր Մագիստրոսը՝ հայ քաղաքական ականավոր գործիչներից և ժամանակի բազմակողմանի զարգացած անձնավորություններից մեկը: Ճիչտ է, Մագիստրոսի չափածո երկերը չհասան Նարեկացու սրտահուչտ երգերի ո՛չ ոգուն և ո՛չ արվեստի աստիճանին, բայց նրա լուսավորչական եռանդուն գործունեությունը և «Թղթերը» նպաստեցին մեր մատենագրության հետագա զարգացմանը:

Մագիստրոսը հայ աչխարհիկ մտավորականության այն առաջին ներկայացուցիչներից էր, որ հավատարիմ մնալով քրիստոնեական եկեղեցուն և անողոք կերպով պայքարելով աղանդավորական գաղափարների ու չարժումների դեմ, միաժամանակ առանձին խնդիրների նկատմամբ չէր բաժանում հայ կղերականության տեսակետները, նրանց վարքագիծը: Հայտնի է նրա բարձր գնահատականը հայ գուսանական երգերի ու նրանց արվեստի վերաբերյալ, այն դեպքում, երբ հայ եկեղեցին և՛ Մագիստրոսի օրոք, և՛ նրանից չատ հետո պայքարում էր դրա դեմ և ժխտում այն. «...ամենայն մրմունջք և երգք գուսանութեան..., – գրում է Գրիգոր Մագիստրոսը, – ի հայումս առաւել քան ի յունականին գտանեմք: Քանզի չափ և կչիռ բանի արուեստաւորեալ ներգործեն զայսոսիկ յոյժ չքնաղ և դժուարագիւտ և հրաչալի առասպելիւնս: Քանզի աւարտեն միով գծիւ բազում բանս, եթե գովասանութիւն և եթե պարսաւ, երբեմն երիս գիրս յաւարտին ունելով զմիմեանս բախելով և երբեմն երկուս. եւ այսպէս ոտանաւորս ստեղծանին վեցոտանիս և քառոտանիս»[1]:

Լավ տիրապետելով հունարեն ու ասորերեն լեզուներին, որոնցից նա մի չարք թարգմանություններ է կատարել[2], քաջատեղյակ լինելով քրիստոնեական կուլտուրային, Մագիստրոսը չի խորչել մոտիկից հաղորդակից լինելու նաև իսլամական աչխարհում զարգացող գիտությանը և, ինչպես ինքն է ասում «բազում ջանիւ» սովորել է արաբերենը, ծանոթացել է արաբական բանաստեղծությանն ու նրա պոետիկական առանձնահատկություններին և անկողմնակալ կերպով բարձր է գնահատել այն[3]:

Գրիգոր Մագիստրոսը մեծ չփում և ընդարձակ նամակագրություն է ունեցել հայ և օտարազգի նչանավոր քաղաքական ու հասարակական գործիչների հետ: Մեզ հասած

[!] Տե՛ս «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1958, № 12, էջ 63-75:

1 **Գրիգոր Մագիստրոս**, *«Մեկնութիւն քերականին»*. տե՛ս **Н. Адонц**, *Дионисий Фракийский и армянские толкователи*, Петроград, 1915, էջ 232:

2 Տե՛ս **Գրիգոր Մագիստրոսի** *«Թղթերը»*: Բնագիրն հատաջաբաձով և ծանոթագրություններով առաջին անգամ լույս ընծայեց Կ. Կոստանյանց, Աղեքսանդրապոլ, 1910, էջ 66:

3 Տե՛ս **Н. Адонц**, հիշ. աշխ., էջ 232: **Գ. Ջահուկյան**, *Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում*, Երևան, 1954, էջ 208:

նրա նամակները պատմական ու գրական հարուստ տեղեկություններ են պարունակում և ցույց են տալիս Պահլավունի իշխանի խոր գիտելիքները ինչպես գիտության առանձին ճյուղերի վերաբերյալ, այնպես էլ հայ ու հարևան ժողովուրդների պատմության, գրականության, բանահյուսության, դիցաբանության բնագավառներում:

Մագիստրոսը քաջ իմացել է նաև պարսկերեն լեզուն ու իրանական էպոսը. Ռոստամի, Սպանդիարի, Աժդահակի վերաբերյալ նրա «Թղթերում» պահպանված մի շարք սուղ հաղորդումները, Դիոնիսիոս Թրակացու նրա մեկնության մեջ իր իսկ վկայությունները[4], մի շարք բառերի նրա կատարած ստուգաբանությունները դա են ապացուցում:

Մագիստրոսի մոտ պահպանված իրանական վիպական զրույցների արձագանքներին տեղյակ են եղել դեռևս նրա կյանքի ու ստեղծագործության առաջին ուսումնասիրողները. Վ. Լանգլուան „Journal Asiatique"-ում հրատարակած իր հոդվածում[5] համառոտակի նկարագրել է նրա «Թղթերը», ընդգծել նրանց մեջ հանդիպող հատուկ անունները, իսկ Գ. Խալաթյանը 1896 թ. այդ հատվածները գերմաներեն թարգմանությամբ հանդերձ հրապարակել է „Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes" հանդեսում[6]:

Միջնադարյան հայ գրականության մեջ իրանական էպոսի վերաբերյալ եղած հիշատակումները պերճ ապացույց են, որ Թուրանի դեմ Իրանի ժողովուրդների մղած հազարամյա պայքարը հարազատորեն է ընկալել հայ ժողովուրդը: Զարի պարտությունը և բարու հաղթանակը իրանական վիպական երգերում ոգեշնչել է նաև հայ ժողովրդին, որը, իրանցի հերոսներին հետագայում փոխադրելով Հայաստան, ամբողջապես հարազատացրել, «ազգայնացրել է», հարմարեցրել իր աշխարհընկալմանը, իր էպոսի ոգուն և ստեղծել «Ռոստամ-Զալ» հայ-իրանական վեպը՝ «Սասնա ծռեր» ժողովրդական վեպի կողմնակի ճյուղերից մեկը[7]:

Իրանական էպոսից «Թղթերում» կատարված չատ սեղմ մեջբերումները հետաքրքիր են այն առումով, որ ցույց են տալիս, թե ինչպես դեռևս 5-րդ դարից (Մովսես Խորենացի) հայ իրականությանը ծանոթ այդ վեպը ժողովրդի մեջ շարունակել է ապրել նաև հետագայում և 11-րդ դարի հայ հեղինակին հայտնի են եղել այնպիսի մանրամասնություններ, որոնք չեն հանդիպում «Շահնամեում» և մեզ հայտնի իրանական այլ էպիկական պոեմներում: Այս իսկ փաստերը հիմնովին ժխտում են Սարուխանի այն պնդումը, թե «Ռոստամի սխրագործությունները մեծ եռանդով երգվել են զանազան փոփոխություններով *հայ ժողովրդի մեջ, բայց* Շահնամեի երևումից հետո»[8]:

---

4 «Ի չորից ցայնց (իմա՝ աստղաբաշխություն, երկրաչափություն, բժշկականություն և երաժշտություն. - Ր. Զ.) միոյն մնացեալ ամբողջ, զոր առ եթիոպացիսն, գիւտի քերականութեան վասն գրչութեան և ճարտասանութեանն. վասն դատողութեան, զոր մեր բազում փոյթ յանձին կալեալ ի *պարսկականէն* և յիսմայելականացն ժողովեալ զսա և մերոցն ծերոց արծարծեցաք վերստին» կամ «Այսպէս բազում պէտս է-ն ի մերս լեզու ունել, այսպէս և պարսկականին, յորմէ զայս ուսեալ ասեմք» (տե՛ս **Н. Адонц**, *Дионисий Фракийский*…, էջ 233 և 235):

5 Journal Asiatique, Paris, 1869, ser. VI, t. 14, էջ 5-64:

6 **Chalathianz Gregor**, *Fragmente iranischer Sagen bei Grigor Magistros*. Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes (WZKM), X band, էջ 217-224:

7 Տե՛ս **Բ. Խալաթյանց**, *Իրանի հերոսները հայ ժողովրդի մեջ*, Պարիս, 1901, էջ 9-13: **Կ. Մելիք-Օհանջանյան**, տե՛ս *Ֆիրդուսի: Բանաստեղծի ծննդյան 1000-ամյակին ձվիրված ժողվածու*, Պետհրատ, Երևան, 1934, էջ 166:

8 «Հանդես ամսօրյա», 1935, էջ 19:

Ֆիրդուսին «Շահնամեի» «Ռոստամի յոթ արկածները» (هفت خوان رستم) բաժնի «Երրորդ արկածում» պատմում է, թե ինչպես Ռոստամը Մազանդարան գնալու ճանապարհին բախվում է մի ժժդահայի՝ վիշապի հետ: Սա Ռոստամին մոտենում է գիշեր ժամանակ, երբ նա քնած է լինում, և ցանկանում է գաղտագողի ոչնչացնել դյուցազնին, սակայն Ռոստամի նժույգը՝ Ռախշը արթուն հսկում էր: Նա յուրաքանչյուր անգամ, որ վիշապը մոտենում է, ոտքերը դոփելով ու խրխնջոցով արթնացնում է իր տիրոջը, բայց վիշապը անմիջապես անհետանում է: Ռոստամը սաստիկ ջղայնանում է Ռախշի վրա՝ իր քունը անտեղի խանգարելու համար: Երրորդ անգամ է վիշապը մոտենում, բայց այս անգամ նա դեմ հանդիման է գալիս Ռոստամին, որի հարցին, թե նա ո՞վ է, վիշապը հոխորտալով պատասխանում է (բերենք Ֆիրդուսու խոսքերը).

چنین گفت دژخیم نر اژدها — که از چنگ من کس نیابد رها
صد اندر صد این دشت جای منست — بلند آسمانش هوای منست
نیارد پریدن بسر بر عقاب — ستاره نبیند زمینش بخواب

Դժխեմ նեռը, վիշապն այն ներգ այսպես տվեց պատասխան.
«Եվ ոչ մի մարդ չի ազատվի մագիլներից իմ դաժան.
Հարյուր այսպես դաշտ, անապատ, հարյուր այսպես անդաստան,
Օդն անհատնում, երկինքն անեզր՝ իմն է հար ու հավիտյան.
Սրծիվն անգամ չի հանդգնի թռչել-անցնել իմ երկրով,
Աստղը երկնում փորձ չի անի գեթ վար նայել՝ երազով[9]:

Նրանք բախվում են: Ռոստամը Ռախշի օգնությամբ ոչնչացնում է վիշապին և արյունը հոսում է գետի պես.

بزد تیغ و انداخت از تن سرش — فروریخت چون رود خون از برش

Ջարկեց թուրը և դեն նետեց գլուխը նեռ վիշապի,
Ինչպես գարնան վարար գետը արյունն հոսեց գազանի[10]:

Այս պատմությունը Մագիստրոսի մոտ շարադրված է շատ սեղմ, ընդամենը մի քանի տողում. դա իր հեղինակի սիրած ոճն է, որից հազվադեպ է շեղվում: Մեզ հետաքրքրող հատվածը հետևյալն է.

«Իսկ ոմն մերձ առ Դաբաւանդն կոչեցեալ լեառն, Ռոստոմն կոչեցեալ Սաճիկ, երիվար նմա ունել ասի Ռաշ այսինքն աշխէն. և զի քնոյ էր Ռոստոմն այն, սպասէր նմա մահու Դիւզեղն. և զի ոչ երբէք ննջէր Դիւզեղն այն, զգուշութիւն եղեալ Ռոստոմեայ, զոր նայն խոկալը. իսկ Ռոստոմն բողոքեալ երիվարին Ռաշին զգուշանալ. և նա միշտ ոչ ննջէր. և ի միում գիշերի հասանէ ի վերայ նորայ Դիւզեղն. գտանէ զնա արբեալ. և իմացեալ զայս Ռաշին, դաբր հատեալ վրնջէր, մինչ զարթուցանէր զՌոստոմ, և այսպէս ապրեցուցանէր»[11]:

---

9 .272 ص ،1312 ،تهران ،چاپ اول ،بتصحیح و مقابله و همت محمد رمضانی ،شاهنامه ،فردوسی (**Ֆիրդուսի**, *Շահնամե*, հ. 1, Թեհրան, 1934, էջ 272):

10 Անդ: (Այս հատվածների թարգմանությունը մերն է. – Բ. Զ.):

11 **Գրիգոր Մագիստրոսի** «Թղթերը», էջ 126-127: Տե՛ս նաև Հայկական ՍՍՌ Պետ. Ձեռագրատան (Մատենադարանի) ձեռ. № 98, թղթ. 219բ, ձեռ. № 1741, թղթ. 392բ-393ա:

Մագիստրոսի այս պատմածում կան մի քանի մանրամասնություններ, որոնք բացակայում են Ֆիրդուսու վերոհիշյալ դրվագում. նախ՝ «Շահնամեում» որոշակի չի ասված, թե Ռոստամի ու վիշապի այս մենամարտը որտեղ է կատարվել, մինչդեռ մեր հեղինակը այդ վայրը նշում է «Դարաւանդ» (Դամավանդ) լեռան մոտ: Երկրորդ՝ Մագիստրոսի հաղորդածից պարզվում է, որ Ռոստամի հետ մենամարտի ելած վիշապը ոչ այլ ոք էր, քան ինքը Դժոխքը=Դյուզեղը: «Թղթերում» այս անունը երկու ընթերցումով է տրված՝ Դիւղեղ և Դիւզեղ. ըստ որում ճիշտը վերջինն է, որը պարսկերեն دوزخ *(duzax) «դժոխք» բառն է* ու-ի *և արտասանությամբ:*

Իրանական էպոսի հերոսները բոլորն էլ համարյա մարտնչում են վիշապ-դևերի հետ, որոնք այլևայլ անուններ ունեն, բայց Դյուզեղ անվան չենք հանդիպում. «Շաբրանգի պատմության» (داستان شبرنگ) *մեջ Ռոստամը կռվում է Սպիտակ դևի* (دیو سپید) *որդու Շաբրանգի և Մազենդարանի բոլոր դևերի հետ[12]. «Շահրիարնամեում»* (شهریارنامه) *Ռոստամի որդին՝ Ֆարամարզը* (فرامرز) *իր առաջին մարտը մղում է Ռեյհան* (ریحان) *անունով դևի, ապա Արժանգ դևի* (دیو ارژنگ) *դեմ: Այս նույն էպիկական երկում հիշատակված են նաև Արհանգ* (ارهنگ) *և Ահրիման անուններով այլ դևեր[13]:*

Մագիստրոսի վերը բերված հատվածը ավելի հստակ է դարձնում Ֆիրդուսու հաղորդած պատմության իմաստը: Եթե «Շահնամեում» Ռոստամի հետ բախվողը ինչ-որ պատահական վհուկ-վիշապ է (جادو اژدها)*, ապա այժմ պարզ է դառնում, որ դա ինքը Դժոխքն է, չարության մարմնացումը, որը վերջնականապես պարտվում է բարու հետ մղած մարտում:*

«Թղթերի» հրատարակիչ վաստակավոր բանասեր-հայագետ Կ. Կոստանյանը իր ծանոթագրություններից մեջ գրում է. «Ռոստոմ Սաճիկի, Ռաչի և Դյուզեղի առասպելը ... մասամբ ծանոթ է Խորենացուց»[14]: Սակայն իրականում Խորենացու մոտ մենք հանդիպում ենք միայն «Ռոստոմ Սադճիկ» անվանը և այն էլ միանգամայն այլ առնչությամբ: Վերը հիշված առասպելը ընդհանրապես ծանոթ չէ Խորենացուն և մեր գրականության մեջ այն պահպանված է միայն Մագիստրոսի «Թղթերում»: Այստեղից էլ պետք է եզրակացնել, որ Գրիգոր Մագիստրոսը այս առասպելը քաղել է կամ իր ձեռքի տակ եղած ուրիշ աղբյուրներից և կամ հավանաբար լսել ու գրի է առել ժողովրդից:

Սակայն այս դեռ չի նշանակում, թե Մագիստրոսը ընդհանրապես ծանոթ չի եղել Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ զետնվող պարսկական առասպելներին: Ընդհակառակը, մի քանի փաստեր ապացուցում են, որ նա ոչ միայն ծանոթ է եղել, այլև օգտվել է դրանցից: Այստեղ պետք է միայն ընդգծել այդ առասպելների նկատմամբ մեր երկու հեղինակների վերաբերմունքների տարբերությունը. եթե Խորենացին 5-րդ դարում, երբ Սասանյան տիրակալները ճգտում էին վերջ տալ հայ պետականության վերջին կրողներին՝ նախարարական տներին, և, հայերին զրադաշտական կրոնը պարտադրելով՝ ասիմիլյացիայի ենթարկել, մի շարք քաղաքական, ինչպես և գեղարվեստական նկատառումներով չէր համակրում պարսիկներին ու նրանց հերոսներին, նրանց մասին եղած

12 دکتر ذبیح الله صفا، حماسه سرائی در ایران، 1333، ص 323. (Դոկտ. **Զաբիհոլլահ Սաֆա**, *Դյուցազներգությունը Իրանում*, 2-րդ հրատ., Թեհրան, 1954, էջ 323):

13 Անդ, էջ 312-313:

14 **Գրիգոր Մագիստրոսի** *«Թղթերը»*, էջ 307:

առասպելները համարելով «անյարմար և անոճ» և «անյայլ ու փցուն»[15] և դրանցից ո-րոշները գրի էր առնում միայն իր մեկենաս Սահակ Բագրատունու ցանկությունը ի կա-տար ածելու համար, ապա Մագիստրոսի մոտ այդպիսի վերաբերմունք չենք տեսնում. այլ էր նրա ժամանակը և այլ նրա մոտեցումը. վերացված էր Իրանի և Հայաստանի քա-ղաքական հակամարտությունը, երկու երկրներն էլ տեսել էին արաբական լուծը, իսկ սելջուկյան հորդաները արդեն սկսել էին իրենց ավերիչ արշավանքները: Նման հանգա-մանքներում Մագիստրոսը անգամ ակնածանքով է խոսում Ռոստամի մասին և նրան նմանեցնում է Հոմերոսի Կռոնոսին, որի գլխի մազերի չարժումից անգամ ցնցվում է Օլիմպիոսը[16]: Մագիստրոսի այդ համակրական վերաբերմունքը արտահայտված է Ռոս-տամի և Դյուզեղի մենամարտի վերը բերված առասպելին հաջորդող հատվածում, որտեղ պատմվում է Ռոստամի և Սպանդիարի (Իսֆանդիարի) պայքարի մոմենտներից մեկը.

«Եւ երբեմն ննջեալ քնուն Ռոստոմ, — կարդում ենք այնտեղ, — ի վերայ հասեալ պատահմամբ Սպանդիարն անուանեալ, սպառնայր զ Դաբաւանդ ի վերայ նորա հոլովել: Զոր զարթուցեալ ռոտագէսն այն սոթահերն այսինքն չարժեալ զվարսն իբրու երբեմն Կռօնոս յակնարկելն զՈղոմպիոս և ի ծայրս կօշկին արտակիտեալ ի վերջ նահանջէր»[17]:

Ռոստամը և Սպանդիարը իրանական վեպի սիրված ու հռչակված հերոսներն են: Սպանդիարը (նոր պարսկ. Իսֆանդիար կամ Էսֆանդիար = اسفندیار) Գոշտասպ արքայի որդին է. երիտասարդ դյուցազնը, որը բազում մարտերում հաղթանակներ է տարել և հռչակվել որպես անխոցելի, ամբաստանվում է հոր գահը խլելու մտադրության մեջ. հայրը խարդավանում և որդուն ուղարկում է Ռոստամի դեմ մարտի: Իսֆանդիարը ազ-նիվ է ու հավատարիմ: Նա հոր մտադրությունը չգիտե և նրան դիտում է որպես երկ-նային աստվածության մարմնացումը երկրի վրա, իսկ նրա յուրաքանչյուր խոսքը՝ աստ-վածային անառարկելի կարգադրություն: Իսֆանդիարը ոչ մի թշնամություն չի տա-ծում Ռոստամի նկատմամբ, ընդհակառակը՝ նա խոր ակնածանք ունի դեպի Իրանի այդ անպարտելի հերոսը, ուստի, երբ նրանք հանդիպում են՝ Իսֆանդիարը Ռոստամին բա-րեկամաբար առաջարկում է առանց կռվի, լոկ ճևականորեն, հանձնվել իրեն, որպեսզի ինքը հոր առաջ հրամանազանց չլինի, որից հետո էլ խոստանում է Ռոստամին ազատ արձակել, հակառակ դեպքում ինքը ստիպված կլինի Ռոստամի նկատմամբ բռնություն գործադրել: Ռոստամը, որ իր հերթին նույնպես հարգում է Իսֆանդիարին, չի ընդունում նրա առաջարկությունը՝ դյուցազնի համար նվաստացուցիչ համարելով առանց մենա-մարտի հանձնվելը: Ռոստամը Իսֆանդիարի հետ ունեցած բարեկամական զրույցների ժամանակ հորդորում, աշխատում է համոզել, որ նա հետ կանգնի իր սին մտադրությու-նից, բայց նա անդրդվելի է:

---

15 **Մովսիսի Խորենացւոյ** *Պատմութիւն հայոց*, աշխատութեամբ Մ. Աբեղեան և Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913, էջ 89 և 114 (հետագայում **Մովսես Խորենացի**…):

16 Տե՛ս **Հոմեր**, *Իլիական*, թարգմ. **Ա. Բագրատունի**, Վենետիկ, 1893, էջ 16:

17 **Գրիգոր Մագիստրոսի** *«Թղթերը»*, էջ 127: Այս և վերը բերված հատվածը Կոստանդնի հրատարա-կության մեջ անմիջականորեն հաջորդում են իրար և տպավորություն է ստացվում, որ դրանք միևնույն զրույցի տարբեր մասերն են, մինչդեռ դրանք տարբեր զրույցների առանձին բեկորներն են, և յուրաքանչյուրը պետք է ներկայացվի առանձին, այլ կերպ ասած՝ «Եւ երբեմն ննջեալ քնուն Ռոստոմ…» հատվածը պետք է սկսվի նոր պարբերությամբ:

Մենամարտից խուսափելու երկուստեք ջանքերը զուր են անցնում: Նրանք բախվում են: Երկարատև մենամարտում Ռոստամի ուժերը չլսավում են, բայց Սիմորդ թռչունը օգնության է հասնում. Ռոստամը նրանից իմանալով, որ Իսֆանդիարի մարմնի միակ խոցելի տեղը աչքերն են, նրա իսկ խորհրդով մորմենու փայտից պատրաստված երկսայրի նետով սպանում է երիտասարդ Իսֆանդիարին և երկար ժամանակ ողբում նրա մահը:

Ռոստամի և Իսֆանդիարի կռիվը «Շահնամեից» ավելի համառոտ, պատմված է նաև հայ-քրդական «Ռոստամ և Ատամբժի ու Դյուրո» վեպում[18], որտեղ նկարագրված դեպքերը չատ գծերով համընկնում են «Շահնամեի» փաստերին: Անհավանական չէ, որ այս վեպը Ֆիրդուսուց անցած լինի ժողովրդին:

Դեռևս Ֆիրդուսուց առաջ այս վեպի մշակմանը ձեռնարկել էր 10-րդ դարի բանաստեղծ Դաղիղին (վխճ. 975 թ.): Ֆիրդուսին իր «Շահնամեի» համապատասխան բաժնում ամբողջությամբ բերում է այդ հատվածը և ավարտում այն, որը կիսատ էր մնացել Դաղիղու սպանության պատճառով[19]:

*Սպանդիար անունը Սպանդարատ, Սպանդիատ ձևով, որպես հայկական անձնանուն, օգտագործված կա մեր մատենագրության մեջ (տե՛ս Մովսես Խորենացի, Գ, լա, լգ, լէ, լը, խգ, խզ, Փավստոս Բուզանդ, Դ, ժթ և այլն): Այս անվան հին պարսկերեն ձևն է՝ *Spantaδata = գնդ. Spəntōdato «սրբատուր» նշանակությամբ, իսկ միջին պարսկականը՝ Spandyat[20], նոր պարսկ. Իսֆանդիար կամ Էսֆանդիար* اسفندیار*, հայ-քրդական «Ռոստամ և Ատամբժի ու Դյուրո» վեպում գործածված է Ասֆանտիյար ձևով[21]:*

Սովետական արևելագետ Ի. Մ. Բրագինսկին այն կարծիքին է, որ իրանական էպոսում «Ի դեմս տարբեր դյուցազունների՝ կարելի է տեսնել արևելա-իրանական տարբեր ցեղերի ու ժողովուրդների (народностей) ավանդը, ըստ որում Ռոստամը՝ առավելապես սակո-սոգդիական չրջանների, Իսֆանդիարը, Զաբերը, Գոչտասպը, կավախդները (քայանիդները) և դրանց նախորդները՝ հավանորեն բակտրիական և մասամբ սոգդիական»[22]:

Այս ենթադրության համար հավաստի վկայություն է նաև Սեբեոսի հաղորդումը Սպանդիարի (Սպանդիատ հորջորջումով) մասին: Սեբեոսի մոտ Սպանդիարը նույնպես դիտված է որպես միջինասիական «քաջ» դյուցազն: Այս հաղորդումը մեր մատենագրության մեջ Սպանդիարի մասին եղած առաջին հիշատակությունն է: Սեբեոսը, խոսելով Վահրամ Մեհրևանդակի միջինասիական նվաճումների մասին, գրում է, որ նա՝ հասնելով Վեհռոտ (իմա՝ Ամու Դարյա) գետին, «զանց արար յայնկոյս նիզակի քաջին Սպանդիատայ զորմէ ասեն բարբարոսքն, եթէ հասեալ նա պատերազմաւ մինչև ցայս վայր,

---

18 Տե՛ս «Էմինյան ազգագրական ժողովածու», հատոր Ե, «Հայ-քրդական վեպ», հավաքեց Ս. Հայկունի, Մոսկվա-Վաղարշապատ, 1904, էջ 14-17:

19 فردوسی، شاهنامه، جلد 3، تهران، 1311، ص 190-375 **Ֆիրդուսի**, *Շահնամե*, հատ. 3, Թեհրան, 1933, էջ 190-375:

20 Տե՛ս **Հ. Աճառյան**, *Հայոց անձնանունների բառարան*, հատ. Դ, 1948, էջ 596: **Ն. Ադոնց**, *Բագրատունիների փառքը* (տե՛ս նրա «Պատմական ուսումնասիրությունները», Պարիս, 1948, էջ 111): **Mary Boyce**, *Zariadres and Zarer*, BSOAS, 1955, vol. XVIII, p. 3, էջ 473:

21 Տե՛ս «Էմինյան ազգագրական ժողովածու», հատ. Ե, 1904, էջ 14-17:

22 **И. С. Брагинский**, *Из истории таджикской народной поэзии*, М., 1956, стр. 124.

ցցեալ գնիզակ իւր ի գետնի»[23]: Նշանակում է Մագիստրոսից ու Ֆիրդուսուց դեռ շատ առաջ, 7-րդ դարում, Իսֆանդիարը հայ իրականության մեջ հայտնի էր որպես միջինասիական-իրանական հերոս:

«Շահնամեում» տասնյակ էջեր են նվիրված Ռոստամի ու Իսֆանդիարի բանավեճին ու մենամարտին, բայց Մագիստրոսից վերը բերված էպիզոդը բացակայում է այնտեղ, և ընդհանրապես Իսֆանդիարը «Շահնամեում» գործում է Արևելքում, և ոչ մի խոսք չկա Դեմավանդ լեռան մասին:

Ըստ երևույթին էպոսի տարբեր պատումները. Արևելքից՝ Միջին Ասիայից և Խորասանից չարժվելով դեպի Արևմուտք, աստիճանաբար տեղայնացել են և Սպանդիարի գործունեության վայրերը Արևելքից փոխադրվել են Արևմուտք: Սա են ապացուցում նաև ԼՋ թղթում պահպանված փաստերը, որտեղ հեղինակը հիշում է հասարակությունից վտարված և լեռների վիհերում չղթայված երեք կերպարներ՝ Բյուրասպի Աժդահակ, Սպանդիար և Արտավազ:

«Գիտեմ, – գրում է Գրիգոր Մագիստրոսը, – և զԲիւրասպի ի լեառն Դաբաւանդ, որ է Կենտոռոսն Պռիւդեայ: Ոչ մոռացայց զՍպանդիարն ի Սաբալանին կալով լերին, կամ զմեր Արտավազ ի ծայրս Այրարատեայ ի Մասիքոհն»[24]:

Բյուրասպի առասպելը այստեղ ամենայն հավանականությամբ վերցված է Խորենացուց, որի պատմության «Ի պարսից առասպելաց» բաժնում Բյուրասպի Աժդահակի հավաստի անունը «Կենտաւրոս Պիւռիդայ» (այլ ձեռագրում՝ Պռիւդեայ, Պռիդայ) է հաղորդված[25]: Այս փաստը մեզ հայտնի և ոչ մի այլ աղբյուրում չկա, այդպիսի նույնացման չենք հանդիպում նաև Շահնամեում[26]: Ելնելով սրանից, և այն, որ Մագիստրոսը լավատեղյակ էր Խորենացու պատմությանը[27], կարող ենք ասել, որ նա այս տեղեկությունը քաղել է Խորենացուց: Ինչ վերաբերում է Սպանդիարի Սաբալան լեռան մեջ փակված լինելուն, ապա այդ մասին ևս այլ աղբյուրներում տեղեկությունների չենք հանդիպել:

Սաբալան լեռան մասին «فرهنگ انجمن آرای ناصری»-ում հետևյալ հետաքրքիր ժողովրդական զրույցն է հաղորդված. «Սավալանը հին մարգարեներից մեկի և Արդաբիլից երեք ֆարսախ հեռավորության վրա գտնվող այն լեռան անունն է, որը իշխանավորների բնակավայրն է: Իսլամից առաջ և հետո այնտեղ ճգնավոր և աստվածավախ մարդիկ են ապրել: Մոգերը այդ վայրը այնպես սուրբ ու մաքուր են համարել, որ երդվել են նրա անունով: Ասում են այդ լեռան վրա մի խոր լճակ կա, որը ճմեռը լիքն է լինում ճյունով

---

23 **Սեբէոսի եպիսկոպոսի** *պատմութիւն*: Բաղդատութեամբ ձեռագրաց, հանդերձ առաջաբանիւ և ծանոթութեամբք ի ձեռն Ստ. Մալխասեանց, Երևան, 1939, էջ 34:

24 **Գրիգոր Մագիստրոսի** *«Թղթերը»*, էջք 90-91: Թերևս Մագիստրոսը նույն պարբերության մեջ երեք անգամ լեռ բառը չկրկնելու համար այստեղ օգտագործել է պարսկերեն քոհ = ﮐﻮﻩ (լեռ) բառը, իսկ հետագայում որևէ գրչի անուշադրության հետևանքով Մասիս անունից *ս*-ն ընկել է և ստացվել է Մասիքոհ: Հնարավոր է նաև, որ Մագիստրոսը այստեղ կիրառած լինի իր խրթնաբան ոճը՝ Մասիս լեռը Կապկոհի (Եղիշէ, 1957, էջ 78) և այլ նման բարդությունների համանմանության դարձնելով Մասիքոհ:

25 **Մովսես Խորենացի**, էջ 91:

26 Այս կապակցությամբ մանրամասն տե՛ս մեր հոդվածը՝ «Բյուրասպի Աժդահակի առասպելը ըստ Մովսես Խորենացու», Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հասարակական գիտ.), 1958, № 1, էջ 76:

27 Տե՛ս **Գրիգոր Մագիստրոսի** *«Թղթերը»*, էջ 9, 24, 63, 84:

ու սառույցով, իսկ լճակի մեջ քնած մարդու մարմնի նմանող մի հսկա արձան կա: Են-թադրել են, որ դա վերոհիշյալ մարգարեն է»[28]:

L'analyse des noms propres cités dans la légende permet de lui attribuer comme origine l'Asie Centrale iranienne et de la relier au nom du roi Sassanide Khosrov II Parviz (Apruez). On sait que Magistros, qui suivait visiblement les normes de son époque, écrivait dans un style si enchevêtré que, parfois, il était obligé de traduire ses propres poésies en grabar, plus clair et plus compréhensible. La lettre en question est aussi écrite dans un langage compliqué [22]*.*

Dans quelques manuscrits arméniens, nous trouvons l'identification du Fison avec les fleuves Indus et Vehrot (Amou-Darya). Ainsi, dans un ***ճառընտիր*** *Čarəntir, («Recueil») copie d'un manuscrit daté de 1280-1286, on dit à propos du Fison: «Il sort de quatre sources, c.à.d. des fournaises de feu, début de l'agitation, Gange, Vehrot»*[23]*. Dans un exemplaire manuscrit du Recueil de Vardan «****Հաւաքումն մեկնութեանց Հին***

---

19 **Մ. Աբեղյան**, *Վիշապներ կոչված կոթողներն իբրեւ Աստղիկ-Դերկետո դիցուհու արձաններ.* M. Abełian. Višapner Kočvac Kotołnern ibrew Astłik-Derketo dic'uhu arjanner. (Les stèles appelées «Višaps», statues de la déesse Astłik-Derketo). Erevan, 1941, p. 45.

20 Ibid., p. 54.

21 Ibid., p. 59. Voir aussi le commentaire des *Lettres* de Magistros par K. Kostanean. G. Magistros. ibid., p. 312. Sur les višap, voir aussi: **Գր. Ղափանցյան,** *Հնության մի քանի հիշատակարաններ.* Gr. Łap'anc'yan. Hnut'yan mi k'ani hišatakaranner. (Quelques monuments de l'antiquité]. Արարատ (Ararat), 1914, p. 91-96; J.J. Mečaninov. «Kamennye statui ryb-višapy na Kavkaze i v Severnoi Mongolii». (Statues de pierre des poissons višap au Caucase et dans la Mongolie du Nord). Zapiski Kollegii vostokovedov». 1925, t. I, p. 402; **Ն. Ադոնց**, *Պատմական ուսումնասիրություններ.* N. Adonc'. Patmakan usumnasirut'yunner. [Etudes historiques]. Paris, 1948, p. 298; **B. B. Piotrovskiĭ,** *Višapy, kamennye statui v gorah Armenii*. [Les Višap, statues de pierre dans les montagnes d'Arménie]. Erevan, 1939; **Գր. Ղափանցյան,** *Արա Գեղեցկի պաշտամունքը.* Gr. Łap'anc'ian. Ara Gełec'ki paštamunkə [Le Culte d'Ara le Bel). Erevan, 1944, p. 111-154; **L. M. Melikset-Bekov,** *«Višapy» visapoidy Gruzii*. «[Les Višap et les višapoides de Géorgie] Kratkie soobčeniia Instituta istorii material'noi kul'tury». XV, 1947, p. 27-37; Gr. Kapaneian. O Kamennyh stelah na gorah Armenii. [A propos de stèles en pierre sur les montagnes d'Arménie]. Erevan, 1952; **Ա. Մնացականյան,** *«Վիշապ» քարակոթողների եւ վիշապամարտի դիցաբանության մասին.* **A. Mnac'akanian**. *«Višap» k'arakot'olneri ew višapamarti dic'abanut'yan masin*. [A propos des stèles «višap» et des mythes de višapamart. «Izvestiia AN ArmSSR (Seriia obcestvennuh nauk)»]. Erevan, 1952, n° 5; **Ա. Մնացականյան,** *Հայկական զարդարվեստ.* **A. Mnac'akanyan**. *Haykakan zardarvest*. [L'Art ornemental arménien]. Erevan. 1955, p. 65, 122 et 547-557.

22 **Գ. Մեներիշեան,** *Գրիգոր Մագիստրոսի «Գամակտականի» ամբողջական լուծումը.* **G. Menevišian**. *Grigor Magistrosi «Gamaktakani» amboljakan lucumə* [Déchiffrement complet du «Gamaktakan» de Grigor Magistros). Vienne, 1912; **Հ. Աճառեան,** *Մրգուզ փանաքի լուծումը.* **H. Adjarian.** *Mrguz p'anak'i lucumə.* [Déchiffrement de Mrguz p'anak'i]. Հանդէս Ամսօրեայ «Handes amsorya», 1923, p. 241-256.

23 **Հ. Տաշեան,** *Մայր ցուցակ ձեռագրաց*. **J. Daschian**. *Mayr c'uc'ak jeřagrac'*. [Catalogue général des manuscrits]. Vienne, 1895, p. 553.

կտակարանի» Hawak'umn meknut'eanc' Hin Ktakarani (Collection de Commentaires de l'Ancien Testament», copié en 1756), on dit du Fison, que les Indiens l'appellent Gange, les Persans Vehrot et les Grecs Indus»[24] .

Dans le passage consacré à la guerre de Smbat Bagratuni (Khosrov Šum) avec les Kušans, Sebēos raconte qu'après la défaite et la fuite de ces derniers «les rois Kušans demandèrent secours au Grand Khan, roi des Pays du Nord, et alors une horde de 300.000 hommes vint à leur aide, traversa le fleuve Vehrot qui sort en Turkestan, venant du pays d'Évilat»[25]*. Ici, Évilat est identique à la contrée biblique de Havila, baignée par le Fison (Genèse, II, 11-12).*

Également, dans le chapitre VIII de l'Histoire de Sebēos, le Fison est noté comme un fleuve d'Asie Centrale: «A la même époque (c.à.d. au temps d'Ormizd), un certain (Vahrum) Merhevandak, gouverneur des régions orientales de la Perse, battait courageusement les troupes du roi de T'etał et, d'une main ferme, gardait Bahl et tout le pays de Kušan au-delà du grand fleuve appelé Vehrot, jusqu'à l'endroit nommé Kazbion»[26]*. Ce passage, avec de légères variations de lecture, est reproduit aussi chez Step'anos Asołik (X*[e] *s.) et chez T'ovma Arcruni (X*[e] *s.)*[27]*.*

Ces écrivains anciens rattachent la mention du fleuve Vehrot à l'époque des règnes d'Ormizd IV et de son fils Apruez (Parviz).

Partant de tout ce qui précède, nous pouvons considérer comme probable que Magistros remplaça le nom centro-asiatique de Vehrot, tiré des sources arméniennes et d'autres, par le nom biblique de Fison, universellement connu. G. Magistros, au début de sa lettre, remarque même que les faits cités sont extraits par lui des «livres sacrés et des apocryphes» [28]*. Quant au nom de Khosrov, c'est un rappel direct de Khosrov II dont les légendes étaient largement répandues dans le Proche-Orient.*

Ce récit donne le droit de supposer que le culte du poisson existait aussi en Asie Centrale et n'a aucun rapport avec les stèles découverte en Arménie. Que ce culte n'était pas confiné à la Transcaucasie, c'est ce que prouve la trouvaille d'une stèle analogue dans la Mongolie du Nord [29]*. Enfin, le caractère iranien du récit est indiqué par l'usage des mots persans aždahak, sater et ezdadoven (ezdadovan dans un autre manuscrit).*

Traduction de O. TOUTZEVITCH.

Traduit de l'article publié en russe dans *Problemy vostokovedeniya*, 1960, N° 3, p. 150-155.

---

24 Ibidem, p. 593.

25 Sebeos. Istorija imperatora Irakla. St. Pétersbourg, 1862, p. 73.

26 Ibidem, p. 31.

27 **Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան** *Պատմութիւն տիեզերական.* Stop'anosi Tarawnec'woy Asołkan Patmut'iwn tiezerakan. [Step'anos Taronac'i Asołik. Histoire universelle]. St. Pétersbourg, 1885, p. 112; **Թովմայի վարդապետի Արծրունւոյ** *Պատմութիւն տանն Արծրունեաց.* T'ovmayi vardapeti Arcrunwoy Patmut'iwn tann Arcrunyac'. [Thomas Arc'runi. Histoire du royaume des Arc'runis]. Tiflis, 1917, p. 147.

28 **G. Magistros**. Ibid., p. 125.

29 **B. B. Piotrovskii**. Ibid., p. 17.

ՆՈՐՈՒՅԹՆԵՐ ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ «ԹՂԹԵՐՈՒՄ»[!]

1. Գրիգոր Մագիստրոսի ֆերթության նորահայտ բեկորներ: *1046 թ. Դվինի ամիրա Աբուլ-Ասվարի դեմ մղած մարտերում հերոսական մահով, իր որդու հետ մեկտեղ, զոհվում է Բագրատունյաց թագավորության հռչակված սպարապետ Վահրամ Պահլավունին:*

Ավելի քան մի հիսնամյակ հարավից ու արևմուտքից Հայաստանի վրա արշավող թշնամիների դեմ անձնազոհաբար մարտնչող, երկրի միասնության ու բարգավաճման նախանձախնդիր սպարապետի մահը մեծ աղետ էր միայն վերջերս պետականությունը կորցրած ժողովրդի համար:

Հայ պատմիչները Պահլավունի տոհմի այս կարկառուն ներկայացուցչին հիացական խոսքերով և բարձր տիտղոսներով են հիշատակում. «Այր հզօր և անուանի և բարեպաշտութեամբ յոյժ վեհ, որպէս թէ ոչ ոք հաւասար նմա Պահլաւ»,— գրում է ժամանակակից պատմիչ Արիստակես Լաստիվերտցին[1], «իշխանաց իշխան», ավելացնում է Ստեփանոս Ասողիկը[2], իսկ Մատթեոս Ուռհայեցին նրան «մեծ սպարապետ»[3] է անվանում:

Պահլավունի իշխանական գերդաստանը Բագրատունյաց թագավորության օրոք ոչ միայն աչքի է ընկնում ռազմական գործերով, անձնազոհաբար մարտնչելով հայրենիքի թշնամիների դեմ, այլև մեծ աշխատանքներ է ծավալում երկրում շինարարության ու ժողովրդի լուսավորության բնագավառներում: Պահլավունիները չատ լավ են գիտակցել իրենց ավանդը երկրի պաշտպանության ու նրա խաղաղության ապահովման գործում և ամենայն հպարտությամբ ու իրավունքով Վահրամ Պահլավունու կառուցած լավագույն վանական համալիրներից մեկի՝ Մարմաշենի վանքի վրա արձանագրել են. «Էաք ամենայն տամբ ու տոհմիւք հաւատարիմք տէրանց մերոց եւ նահատակեալ ի վերայ տանս Հայոց աշխատութեամբ եւ արեամբ մերով եւ որդոց մերոց, եւ գանձուց առատութեամբ եւ ամենայն հնարիւք խնդրէցաք զխաղաղութիւն աշխարհիս»[4]:

Վահրամ սպարապետի մահվան լուրը չատ ծանր ու խորն է ընկալում նրա եղբորորդին, անվանի պետական ու զինվորական գործիչ, գիտնական, փիլիսոփա ու բանաստեղծ Գրիգոր Մագիստրոսը (990–1058), որը դեռևս մանկության տարիներից սերտ կապված է եղել նրա հետ և նրա հովանավորությամբ էր կրթվել ու դաստիարակվել:

Գրիգոր Մագիստրոսի ստեղծագործությունները միջին դարերում հաճախ են ընդօրինակվել և մեզ են հասել գրչագիր մատյաններում: Նրա բանաստեղծությունները առաջին անգամ «Տաղասութիւնք» խորագրով 1868 թ. հրատարակել են Վենետիկի Մխիթարյանները, նամականին՝ «Թղթերը», 1910 թ. Ալեքսանդրապոլում լույս է ընծայել Կա-

---

[!] Տե՛ս Լրաբեր հասարակական գիտությունների, 1987, № 10, էջ 46-53:

1 **Արիստակես Լաստիվերտցի**, *Պատմութիւն*, աշխատասիրությամբ Կ. Յուզբաշյանի, Երևան, 1963, էջ 57–58:

2 **Ստեփաննոս Տարոնացի (Ասողիկ)**, *Պատմութիւն տիեզերական*, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 270:

3 **Մատթեոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, Վաղարշապատ, 1898, էջ 85:

4 **Գրիգոր Մագիստրոս**, *Թղթեր*, բնագիրն հառաջաբանով և ծանոթություններով առաջին անգամ ի լույս ընծայեց Կ. Կոստանյանց, Աղեքսանդրապոլ, 1910, էջ Ի:

բապետ Կոստանյանցը, իսկ «Մեկնութիւն քերականին» երկը 1915 թ. հրապարակել է Նիկողայոս Ադոնցը իր «Դիոնիսիոս Թրակացին և նրա հայ մեկնիչները» հայտնի ուսումնասիրության մեջ:

Մագիստրոսի «Թղթերի» վերընթերցման ժամանակ մեր ուշադրությունը գրավեցին նրա՝ ԺԱ թղթին[5] ընդելուզված մի քանի չափածո հատվածներ, որոնք հայ միջնադարյան աչխարհիկ բանաստեղծության թանկագին մասունքներից են: Այս թուղթը, որ Վահրամ Պահլավունու մահվան առթիվ Սյունյաց արքեպիսկոպոս Հովհաննեսի ցավակցականի պատասխանն է, իրականում մեծ սպարապետի հիշատակին նվիրված բանաստեղծական մի չքնաղ խոսք՝ գրված հարազատի և հայրենյաց զավակի կորստի մեծ ցավով, նրա արժանիքների ամենայն գիտակցությամբ: Ճիշտ է, Մագիստրոսը համեստորեն ասում է, որ Վահրամ Պահլավունու երախտիքը, նրա բարի արարքները պատմելու համար «կապեալ լեզու ի բան, եւ մանրեալ ձեռաց եւ խափանեալ մտաց», որ և ընդհանրապես ո՛վ ցանկանա «պուետիկոսների» նման նրան ներբողել, նա կպարտվի, բայց երբ ինքը գրիչ է վերցնում նրա մասին գրելու, խոսքը դառնում է հոգուց բխած մի գեղեցիկ ներբող, մի գողտրիկ դյուցազներգություն, որտեղ սպարապետի կերպարը վեր է հառնում որպես արտաքին ու ներքին բազում բարեմասնություններով օժտված մի անզուգական հերոսի: Մագիստրոսը համոզված է, որ եթե Պահլավունի իշխանը ավելի վաղ ժամանակներում ապրած լիներ, նրա սխրանքները առասպել կհամարվեին, ինչպիսիք են հելլեն դյուցազուններին նվիրված երգերը[6]:

Հայտնի է, որ Գրիգոր Մագիստրոսը ժամանակի արտակարգ կրթված ու զարգացած աչխարհիկ գործիչներից է եղել: Նա տիրապետել է հունարենին, ասորերենին, պարսկերենին ու արաբերենին, քաջահմուտ է եղել անտիկ փիլիսոփայությանը, քերականությանը, առասպելաբանությանը, բանաստեղծության տեսության խնդիրներին, հաղորդակից է եղել հարևան ժողովուրդների վիպական ստեղծագործություններին և, իհարկե, առաջին հերթին իր հայրենի մատենագրությանն ու ժողովրդական բանահյուսությանը: Այս լայն իմացության հենքի վրա, անկասկած, չատ հեղինակավոր ու վստահելի է դառնում հայ գուսանական արվեստին տված նրա գնահատականը. «ամենայն մրմունջք և երգք գուսանութեան ի հայումս առաւել քան ի յունականին գտանեմք: Քանզի չափ եւ կչիռ բանի արուեստաւորեալ ներգործեն զայսոսիկ չքնաղ եւ դժուարագիւտ եւ հրաչալի առասպելին»[7]: Սրանով իսկ պիտի բացատրել այն հանգամանքը, որ Մագիստրոսը իր նամակներում անկաչկանդ դիմում է ժողովրդական բանահյուսության ակունքներին և իր խոսքը համեմում է գողտրիկ առակներով, ասացվածքներով, հունական ու իրանական վիպական զրույցներից քաղված մեջբերումներով, հայոց հեթանոսական ժամանակների երգերի պատառիկներով, որոնց ժողովրդական ծագումը նա չի մոռանում ընդգծել՝ «ի գռեհիկս աւանդեալ»[8] վերապահությամբ:

---

5 Նույն տեղում, էջ 36–44:

6 Նույն տեղում, էջ 6:

7 **Գրիգոր Մագիստրոս**, *Մեկնութիւն քերականին* (տե՛ս **Н. Адонц**, *Дионисий Фракийский и армянские толкователи*, Петроград, 1915, с. 232):

8 **Գրիգոր Մագիստրոս**, *Թղթեր*, էջ 87:

Մագիստրոսի այս նամակը ոչ միայն մի ձոն է Վահրամ Պահլավունի իշխանի հիշատակին, այլև թանկարժեք մի աղբյուր՝ մինչ XI դարը գոյություն ունեցող հայկական ժողովրդական ծեսերի ու սովորությունների: Ըստ Գրիգոր Մագիստրոսի այս նամակի, հայոց թաղման ծիսակատարությունների ժամանակ մի քանի տեսակ երգեր են կատարվել՝ դամբանական, ողբերգական, ներբողական, և անգամ բանաստեղծություններ են արտասանվել, որ կոչվել են գերեզմանական: Վերջիններս, իհարկե, հայտնի լալյաց երգերը չեն, որը Մագիստրոսը «հիքից (այսինքն՝ թշվառների – Ռ. Ջ) և կանանց ողբերգականս» է անվանում. ողբերգականը «իմաստասիրական երգ» է, գերեզմանական ողբի մի տեսակ, որի ժամանակ տղամարդիկ ցնցոտիներ են հագնում, պարում են և հող լցնում գլխներին՝ իրենց որբությունը և թշվառ վիճակը ցուցադրելու, իրենց հարազատին դեպի «երանաւետ ուղեւորութիւն»[9] *հանդերձյալ կյանք ճանապարհելու համար:*

Եվ ահա, երբ Գրիգոր Մագիստրոսը գրիչ է վերցնում Սյունյաց արքեպիսկոպոս Հովհաննեսին չնորհակալություն հայտնելու հորեղբոր մահվան առթիվ նրա գրած մխիթարականի համար, ակամայից սկսում է ողբալ սգավորի իր վիճակը, որ փոքր-ինչ հետո իրականում դառնում է մի ներբող՝ ձոնված նահատակ հորեղբոր հիշատակին, սակայն Մագիստրոսը չի համարձակվում իր խոսքը ներբող համարել, «քանզի որք զներբողականս արժանապէս մատենագրեն», պետք է գովերգվողի պես ազնիվ ու վեհ վարք ունենան, իսկ ինքը իր այդ վիճակում «անկենդան»[10] *է և միայն ողբ կարող է ասել:*

Մագիստրոսի այս ինքնատիպ նամակում արձակ խոսքը ագուցված է բազմաթիվ չափածո տողերով, որոնք, թվում է, Վահրամ Պահլավունուն նվիրված դյուցազներգության բեկորներ են, աչխարհիկ մեր դպրության թանկարժեք մասունքներ: Ներբողի առաջին տողերը ողբասացության բնույթ ունեն.

Աւա՛ղ որդւոյս սիրեցեալ և կարօտեալ
ի սուրբ ի բաղցր ճօրէն,
Աւա՛ղ տարագիր ու արտակացեալ,
յաստուածային fո խրատուէ,
Աւա՛ղ կենդանութեանս,
որ երանեմ վախճանելոյդ…[11]

Այնուհետև բանաստեղծը, անդրադառնալով իր խոսքերի ողբերգական ելևէջին, ինքն իրեն է դիմում, թե ինչո՞ւ պետք է նրա՝ սպարապետի մասին, ողբ ասել «զի՞նչ զքոյդ ասացից ողբերգական», չէ՞ որ նա իր պապերի նման արժանի է դյուցազներգության: Այս պահից էլ Գրիգոր Մագիստրոսը փոխում է նամակի ոճը և սկսում է գովերգել իր դյուցազուն հորեղբորը՝ համեմատելով նրան մեր պատմության առասպելականացած հերոսներ Արտաշեսի ու Արշակի, գեղեցկապարանոց ու չքնաղադեմ Արայի ու Սոսանվեր Անուշավանի, մաքրակենցաղ ու ողջախոհ Գրիգոր Լուսավորչի և հայրենասեր ու աչխարհաչեն Արամի հետ: Սպարապետի բարեմասնությունները բազում են, որոնք բանաստեղծի գրչի տակ չափ ու կշիռ են ստանում.

9 Նույն տեղում, էջ 41:

10 Նույն տեղում, էջ 38:

11 Նույն տեղում:

Քաջահանճար և ուշեղ (իմա՝ ուշիմ),
Իմաստուն եւ խոհեմ,
Հեզ եւ հանդարտ,
Արդարադատ և անաչառու,
Առատ և զուարթ,
Մարդասէր և օտարասէր,
Անոխակալ եւ անյիշաչար,
Անապատասէր եւ կրօնաւորասէր,
եւ ամենայն բարեաց օթեւան…[12]

Ածականների նման կուտակումով, խոսքի զարմանալի հստակությամբ, տողերի կազմակերպումով, կարծեք, Մագիստրոսը նարեկացիական ակունքներից է սնվել, միայն թե Նարեկացին նման է բազում այլ խորախորհուրդ խոսքերով ներբողում է «անքնին բարձրյալին», իսկ Մագիստրոսը փառաբանում է մեծ սպարապետի հերոսական ու մարդկային կերպարը, մի մարդու, որ նրա համար ուսուցիչ է եղել և հայր, իշխան ու տեր, ուստի երբ նա արդեն հեռացել է կյանքից, երախտապարտ աշակերտը իրեն ու իր նմաններին որբ ու թշվառ է համարում և տարակուսանքների մեջ գրում է.

Ո՞ զմեզ այժմ խրատէ,
եւ ո՞ մատակարարէ զտկարութիւն մեր,
Ո՞ եւ զանժուժութիւն համբերութեամբ իւրոյ մխիթարէ,
Ո՞ զաղխատս կերակրէ՝ առատատուր և զուարթ լրջմտութեամբ,
եւ ո՞ արդար դատողութեամբ զորբս և զայրիս տածէ,
Կամ զգերեալսն գնէ,
Կամ զբանտարկեալսն առնակէ,
Կամ զցրուեալսն ժողովէ…[13]

Կարդում ես այս տողերը և ոճից ու տաղաչափությունից ակամայից հիշում մեր հեթանոսական քերթության այն փոքրիկ ու դողտրիկ բեկորը, որ իբր Արտաշես արքան ասել է իր մահվանից առաջ, և որ, ի դեպ, մեզ է հաղորդվել իր իսկ Գրիգոր Մագիստրոսի միջոցով.

Ո՞ տայր ինձ զծուխ ծխանի,
եւ զառաւօտն Նաւասարդի,
Զվազելն եզանց
եւ զվազելն եղջերուաց.
Մեհ փող հարուաք
եւ թմբկի հարկանէաք,
Որպէս օրէնն է թագաւորաց…[14]

12 Նույն տեղում:
13 Նույն տեղում, էջ 39:
14 Նույն տեղում, էջ 87:

Այնուհետև Մագիստրոսը իր նամակում նորից անցնում է արձակի և պատմում, թե ինչպես Վահրամ Պահլավունու բարեգործությունների համբավը սփռված է եղել հարևան ժողովուրդների մեջ. «Եւ այս յաչխարհին Քաղդէացւոց եւ Մարաց, եւ Պարթևաց, եւ պատարագօք պատուէին զքեզ. որ եւ Յունաց իսկ ինքնակալացն պատուեալ մեծագոյն իշխանութեամբ»[15], իսկ վրացիները, որոնք հաճախ նրա դաշնակիցներն են եղել թշնամիների դեմ մղած մարտերում, նրան, որպես դյուցազնի, երգեր էին ձոնում և, ինչպես ընդունված էր ժամանակին, տներում ու քաղաքների հրապարակներում գովերգում, փառաբանում էին նրան: Եվ այստեղ էլ ինքը՝ բանաստեղծ Մագիստրոսը, ոգևորվում, խանդավառվում և իր որդիական պարտականությունն է համարում նրա գովքը հյուսել, որը նորից վերածվում է չափածո խոսքի գովասանության.

Քեզ այդպէս վայելէր թագաւոր,
եւ յայսպիսի պաղատանն եեմել,
Այսպիսի խոնարհութեամբ խոնարհանալ,
Այսպիսի հայրենիս ստանալ,
Այսպիսեօք գանձօք փարթամանալ,
Այսպիսի կարասեօք [...],
Այսպիսի կառօք կառամարտել,
Յայսպիսի ձիրնթացս արշաւել,
Յայսպիսի ստադինս բազմել,
Զայսպիսի մրցումն տեսանել,
Այսպիսի փողհարօք և թմբկօք ճոխանալ,
Այսպիսի ոռւօք զբօսնով,
Այսպիսի բաղանեօք մարիլ:
Քոյովդ չերմագոյն արեամբ ի fումդ սպառազինեալ
եւ հանդիսացեալ անձին.
Այսպիսի ճօր ըղձացեալ լինել ոդի,
Այսպիսումն ծնողաց ժառանգորդ,
Յայսպիսեաց արմատոց շառափիղ:
Դու՝ մեռելոցն fոց փոխելոցն յաստեացս՝
Փրկութեան պատճառ,
եւ կենդանեացս՝ յուսոյ
եւ ողորմութեամբ յաստուածուստ[16]:

Գրիգոր Մագիստրոսն ընդհանրապես հայտնի է որպես բացառիկ խրթնաբան հեղինակ, սակայն բերված հատվածները, որոնցով արժանին է հատուցվում նահատակ սպարապետին, արտակարգ պարզ են ու հստակ: Այստեղ միաժամանակ գծագրվում է միջնադարյան Հայաստանում, Բագրատունյաց իշխանության տարիներին տեղի ունեցող հանդիսությունների նկարագիրը, որ չատ բանով հիշեցնում է հեթանոսական ժամանակներից ավանդված սովորությունները, տոնախմբություններն ու որսորդությու-

15 Նույն տեղում, էջ 40:
16 Նույն տեղում, էջ 41:

նը, որ մեզ նորից հղում է դեպի արտաչիսյան երգը, որտեղ նավասարդյան տոներն են հիշվում՝ որսորդության փողերի հնչյուններով և թմբուկների զարկերով:

Գրիգոր Մագիստրոսի նամակի մեջ պահպանված այս մասունքները ենթադրել են տալիս, որ դրանք Վահրամ Պահլավունի իշխանաց իշխանին նվիրված, Մագիստրոսին պատկանող ավելի ընդարձակ դյուցազներգության բեկորներն են, որ նա վարպետորեն ագուցել է իր նամակին, մեզ ավանդելով XI դ. հայոց աշխարհիկ բանաստեղծության եզակի նմուշներ:

2. Գրիգոր Մագիստրոսին վերագրված մի բանաստեղծության մասին: *Գրիգոր Մագիստրոսի «Թղթերի» 1910 թ. կարապետ Կոստանյանցի հրատարակության մեջ որպես ՁԸ (88) թուղթ տեղադրված է «Անցք ստուերի է փառք մարդոյ» սկսվածքով 26 տնից բաղկացած մի բանաստեղծություն[17], որը վաստակաչատ բանասերը քաղել է Էջմիածնի մատենադարանի № 58 ձեռագրից (ներկայումս՝ Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. № 3062): Տվյալ հրատարակության մեջ օգտագործված չորս ձեռագրերից միայն այս մեկում է առկա այդ բանաստեղծությունը՝ էջ 135–136 (ներկայումս՝ 288 ա–բ), թուղթ ՁԳ (83):*

«Թղթերի» ծանոթագրություններում Կոստանյանցը գրում է. «Մեր ընագրի մեջ վերջին ՁԸ (88) թիվը կրող ոտանավորը «Անցք ստուերի է փառք մարդոյ» զետեղել ենք ոչ իբրև թուղթ, այլ իբրև մինչ ցայս անծանոթ մնացած մի գործ, որը սակայն մեզ կասկածելի է երևում *(ընդգծումը – Ռ. Ջ.), նայելով ոճի տարբերությանը: Մեզ գրավեց իսկապես այն, որ թ. 58 ձեռագիրը պահել է այդ ոտանավորը «Մագիստրոսի անունով»[18]: Կոստանյանցի կասկածները ճիշտ են եղել. 1981 թ. բանասեր Գևորգ Բամպուքճյանի՝ Ստամբուլում լույս տեսած «Հակոբ պատրիարք Նալյան (1706–1764), կյանքը, գործերը և աշակերտները» ուշադրության արժանի հատորում որպես Հ. Նալյանի ստեղծագործություն բերված է Գրիգոր Մագիստրոսին վերագրված վերոհիշյալ բանաստեղծությունը, որ ունի հետևյալ վերնագիրը՝ «Ոտանաւոր ի վերայ ունայնութեան կենցաղոյս, զոր չարադրեալ է գերամեծար պատրիարքն Կոստանդնուպօլսոյ Յակոբ աստուածաբան վարդապետն»:*

Այս ոտանավորը Գ. Բամպուքճյանը 1968 թ. գտել է Օրթագյուղի եկեղեցու անթվակիր ձեռագիր մի հավաքածոյի մեջ[19]: Այնուհետև Գ. Զարբհանալյանի ու Ա. Ղազիկյանի մատենագրություններից տեղեկացել է, որ այն Հակոբ Նալյանի գրչին է պատկանում և որ 1805 թ. Պոլսում հրատարակվել է «Տետրակ գունայնութենէ կենցաղոյս, ոտանաւորեալ ի հոգելոյս Յակոբ աստուածաբան պատրիարքէ Կոստանդնուպօլսոյ» 48 էջանոց, ներկայումս հազվագյուտ, գրքույկում[20]: Այս ոտանավորի մի այլ ընդօրինակություն նորից Նալյանի անունով պահպանված է եղել նաև Արմաշի № 168 ձեռագիր

17 Նույն տեղում, էջ 240–244:

18 Նույն տեղում, էջ 250–251:

19 **Գ. Բամպուքճյան**, *Հակոբ պատրիարք Նալյան (1706–1764), կյանքը, գործերը և աշակերտները*, Ստամբուլ, 1981, էջ 72:

20 Այս հրատարակությունից երկու օրինակ պահվում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում Թորոս Ազատյանի գրքերի շարքում, որի լուսապատճենը տե՛ս Մաշտոցյան Մատենադարանի հայագիտական գրադարանի 37033 թվահամարի ներքո:

ժողովածուի մեջ, որ նկարագրել է Թոփճյանը[21]: Այստեղ պետք է ավելացնել, որ Մագիստրոսի «Թղթերը» պարունակող № 58 ձեռագիրը ուշ չրջանի, հավանաբար XVIII դ. ընդօրինակություն է, որի գրիչն իր ժողովածուի մեջ է մտցրել նաև այդ ոտանավորը, անտեղյակ, որ այն պատկանում է Նալյանին: Ի հավելումն սրա, պետք է ասել, որ բանաստեղծության լեզուն և ոճը, ինչպես նկատել է Կ. Կոստանյանցը, բնորոշ են ուշ միջնադարի լեզվամտածողությանը, իսկ դրա մեջ արծարծված մտքերն ու գաղափարները՝ աշխարհի ունայնության ու կյանքի անամեջության վերաբերյալ, միանգամայն անհարիր են Մագիստրոսի աշխարհայացքին:

Այսպիսով, Մագիստրոսի «Թղթերի» լույս ընծայումից շուրջ 75 տարի հետո ճշգրտվում է «Անցք ստուերի է փառք մարդոյ» սկսվածքով բանաստեղծության հեղինակային պատկանելության հարցը. այն Կոստանդնուպոլսի պատրիարքի Հակոբ Նալյանի գրչին է պատկանում, հետևաբար առաջիկայում, երբ իրականացվի «Թղթերի» նոր քննական բնագրերի հրատարակությունը, պետք է այն դուրս թողնել Մագիստրոսի «Թղթերի» շարքից:

Այս բանաստեղծության առկայությունը Մագիստրոսի «Թղթերի» 1910 թ. հրատարակության մեջ թյուրիմացության մեջ է դրել նաև մեծանուն լեզվաբան Հր. Աճառյանին, որ այդ ոտանավորից քաղել է արաբերենից փոխառյալ տնազ *«այպն, կատակ, ծաղր» բառը և տեղադրել իր «Հայերեն արմատական բառարանում»[22] որպես մագիստրոսյան (XI դարի) վկայություն: Արդ, երբ ճշգրտվում է բանաստեղծության հեղինակի հարցը, պետք է սրբագրվի նաև* տնազ *բառի վերագրումը Մագիստրոսին:*

3. Նոր բառեր Գրիգոր Մագիստրոսի «Թղթերում»: *Գրիգոր Մագիստրոսի «Թղթերում» պահպանված օտար փոխառությունների մեծ մասը ստուգաբանված է մեր հիմնական բառարաններում, սակայն, կան մի քանի փոխառյալ բառեր, որոնք, մեր բառարանագիրներին ծանոթ լինելով հանդերձ, թերևս մեկնաբանող, բացատրող բնույթ ունենալու պատճառով, չեն գրանցվել: Մեզ թվում է, որ եթե Մագիստրոսը այդ օտար բառերով բացատրում է հայերեն բառերը, նշանակում է դրանք ժամանակի խոսակցական լեզվում, գուցե և որոշ բարբառներում, օգտագործվել ու հասկանալի են եղել, հետևաբար որպես հոմանիշ բառեր պետք է արտացոլվեն մեր ստուգաբանական ու բացատրական բառարաններում: Ստորև բերվում են այդ բառերը.*

ԱՆԱՐ – *նուռ:*

– հին պարսկ. anär, նոր պարսկ. նույնպես anār, նաև när – նույն նշանակությամբ:

Մագիստրոսը ԾԸ թղթում (էջ 131) նուռ *բառը ստուգաբանելիս հիշատակում է պարսկ.* անար. *«Պարսկական է անունն* անար, *ի հրապաշտութեանն պատուեալ յատրուշանին յորջորջեալ, յորմէ* անարն *կոչեցեալ սակս որակութեանն հրակերտ, կարմրահատ և հրահատ: Իսկ ստուգաբանեալ նուռնդ, ներմակագրեալն նուռն, կուռն, յոգնախումբ և միահամուռն ի միասին բաղկացութեան բազմահատեայ հարստութեամբ իբրու կուռն փոխադրեալ նոյն ներառասութեան»: Հր. Աճառյանը («Հայերեն արմատական բառա-*

21 **Գ. Բամպուքճյան**, նշվ. աշխ., էջ 46:

22 **Հր. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան*, հ. Դ, Երևան, 1979, էջ 415:

բան», հ. ե, էջ 191) այս վկայակոչումը բերում է հայկական նուռն *բառը ստուգաբանելիս, բայց* անար *որպես առանձին բառ չի արձանագրում:*

ԲԱԶՄ *– փառք, հանդես, խրախճանք:*

– պարսկ. بزم *(bazm) – նույն նշ.:*

Մագիստրոսը իր ԺԹ թղթում (էջ 60), երբ ոգեկոչում է հայոց իշխանավորներին և, ըստ Մովսես Խորենացու ցուցակների, յուրաքանչյուրին բնութագրում է ըստ իր անվան. Բաւոս (Խորենացու թվարկած չարքում՝ Փառոս, տարընթերցում՝ Փաւոս) անվան համար գրում է. «Բաւոս՝ փառացի, և ըստ պարսկականին բազմ *անի»: «Թղթերի» 1910 թ. Կոստանյանի հրատարակության մեջ (էջ 60) բառս միացել է հաջորդ՝* անի *բառի հետ, որով ստացվել է* բազմանի, *որ անիմաստ է, մինչդեռ* բազմ *«փառք, հանդես, խրախճանք» ձևով նախադասության իմաստը հստակվում ու ճշգրտվում է և համընկնում Մագիստրոսի բացատրության հետ: Նույն թղթում Մագիստրոսը* Փառնակ *անունը նույնպես մեկնում է «փառացի»՝ «Փառնակ՝ փառացի, գեղաչուք»:*

Պարսից դյուցազներգությունների մեջ հերոսների փառաբանության հատվածը կոչվում է բազմ *«փառք, հանդես, խրախճանք» իմաստով, իսկ նրանց հերոսությունների նկարագրության հատվածը՝* ռազմ *«մարտ»:*

ԲԱԽՏԻԱՐ *– բախտավոր, բարեբախտ, երջանիկ:*

– պարսկ. بختیار *(bakhtīār) – նույն նշ.:*

Մագիստրոսի ԽԱ թղթում (էջ 99) կարդում ենք. «զի եթե բախտի բախտիար *անբա[ղ]խոհական (ընագրում՝ բախտիարան բախոհական) բաղբանութեան, թուի թէ ոչ ումեք լուիցէ արճակել ի գերելոցն» (խոսքը Եգիպտոսում գերի հրեա ժողովրդի մասին է): Նոր հայկազյան բառարանը (Վենետիկ, 1836)* բաղբանութիւն *բառի տակ Մագիստրոսից վկայակոչում է «անբախոհական բաղբանութիւն», նշանակում է բառարանի կազմողները* բախտիար *ձևն են ճիշտ համարել և ոչ* բախտիարան, *բայց* բախտիար *որպես առանձին բառ չեն վերցրել:* Բախտիար *որպես արական անձնանուն հայերիս մոտ վկայված է ԺԵ դարից (Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, էջ 367):*

ՇԱՏԲԱՇ *– կեցցե, բառացի՝ ուրախ եղիր:*

– պարսկ. شاد باش *(shād bāsh) – նույն նշ.:*

Մագիստրոսի ԺԹ թղթում (էջ 60) Շավարշ անունը ստուգաբանվում է հետևյալ կերպ. «Շաւարշ ըստ պարսկականին շարի բաշ, *միշտ ուրախ թարգմանեալ»: Ինչպես Աճառյանը նկատել է («Հայոց անձնանունների բառարան», հ. Դ, էջ 155), այստեղ բացահայտ գրչական սխալ կա, պետք է լինի* շատ բաշ, *որ և իմաստով համընկնում է Մագիստրոսի «միշտ ուրախ» թարգմանությանը:*

Ժամանակակից հայերենում ունենք շաբաշ «խնջույքներում նվագողներին տրվող դրամական պարգևը», որ հավանաբար առաջացել է շատ բաշից՝ տ(դ)-ի *անկումով:*

ՔԱՅԻՈՒ *– հազար բույսը (Lactuca Scariola):*

– պարսկ. کاهو *(kāhū) – նույն նշ.:*

Մագիստրոսը իր ԼԹ թղթում (էջ 96) հազար և խաւարտ *հետևյալ կերպ է բացատրում. «Հազարդ և խաւարտ յունարէն ասի մառուլն, որ նշանակէ եթէ ի մայիս յուլիս*

պարտ է ճաշակել և այլ ոչ բնաւ: Իսկ ըստ Պարթևին fայիու, *այսինքն փքացուցիչ և ուռուցիչ փորոտեալ»:*

Բառս ներկայումս գործածական է պարսկահայոց բարբառներում:

НОВОЕ В «ПИСЬМАХ» ГРИГОРА МАГИСТРОСА

Р е з ю м е

1. В 1046 г. в битве против Двинского амира Абу-ль-Асвара погиб дядя (брат отца) Григора Магистроса (XI в.) Ваграм Пахлавуни, прославленный полководец Багратидского царства. Внимательное исследование письма, посланного в этой связи Григором Магистросом Сюнийскому архиепископу Ованесу, выявляет, что некоторые фрагменты этого письма написаны в стихотворной форме, в ритме и стиле древнеармянской языческой поэзии.

Опубликовав эти стихотворные отрывки в статье, автор заключает, что они являются фрагментами посвященной Ваграму Пахлавуни эпической поэмы, принадлежавшей перу Магистроса.

2. В «Письмах» Магистроса, изданных К. Костаняном в 1910 г., под номером 88 помещено стихотворение, состоящее из 26 строф. Издатель в свое время выразил сомнение по поводу его авторской принадлежности. И действительно, новые факты неопровержимо доказывают, что оно принадлежит автору XVIII в. Акопу Наляну (1706–1764 г.).

3. Этимология заимствованных слов в «Письмах» Григора Магистроса в основном установлена, однако некоторые слова остались вне поля зрения лингвистов. Автор статьи рассматривает следующие пять слов и дает их этимологию: ***անար****=персид. anār «гранат»;* ***բազմ****=персид. bazm «ликование, празднество»;* ***բախտիար****=персид. bakhtīār «счастливый»;* ***չատբաշ****=персид. shād bāsh «слава, да здравствуй, дословно–будь радостен»;* ***քալու****=персид. kāhū «салат», Lactuca Scariola.*

՝ԱՐԴՅՈՔ ԽԱԿԱՆԻ՞Ն Է ՖՐԻԿՅԱՆ ՔԱՌՅԱԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ*

Ֆրիկի «Դիվանի» հայատառ պարսկերեն քառյակը վերջին տարիների ընթացքում իր վրա հրավիրեց բանասերների ուշադրությունը. հրապարակվեցին մի քանի հոդվածներ, որոնք հետաքրքիր տեղեկություններ են հաղորդում քառյակի հեղինակային պատկանելիության վերաբերյալ, նպաստում գծելու քառյակի անցած ուղին գրականության մեջ, այլ կերպ՝ ստեղծելու նրա պատմությունը: «Պատմություն» ենք ասում, որովհետև հրապարակի վրա եղած նյութերը արդեն տվել են յոթ տարբերակ, իսկ քառյակի հեղինակ են համարվել չորս տարբեր բանաստեղծներ:

Լույս տեսած վերջին հոդվածներից երկուսը պատկանում են ամերիկահայ իրանագետ Միհրդատ Թիրյաքյանի գրչին, իսկ մեկը՝ բանասիրական գիտությունների թեկնածու Ավետիս Շահսուվարյանին:

Մ. Թիրյաքյանը Նյու Յորքի «Լրաբերի» 1963 թ. հուլիսի 30-ի և օգոստոսի 1-ի համարներում տպագրած իր հոդվածում նախ հաղորդում է, որ դեռևս 1953 թ. ինքը ամբողջությամբ վերծանել է Ֆրիկի «Դիվանի» պարսկերեն քառյակը, ապա՝ Ռևզա Կուլի խան Հեդայաթի «Մաջմա ուլ-ֆոսահա» ժողովածուի հիման վրա դրա հեղինակ է համարում 17-րդ դարի բանաստեղծ Սարմադ Քաչանուն և ժխտում քառյակը Ֆրիկի կողմից թարգմանված լինելու հանգամանքը:

Ֆրիկի «Դիվանը» հրատարակվելիս (1952) Տիրայր արքեպիսկոպոսի խնդրանքով Մ. Թիրյաքյանը վարպետորեն վերծանել էր ողջ քառյակը, բացի սկզբի երեք աղավաղված բառերից: Քառյակը հարգելի բանասերը ամբողջապես վերծանում է միայն 1953 թ., որը և հրապարակում է «Դիվանի» մասին իր գրած հանգամանալի ու արժեքավոր գրախոսականում[1]: Թիրյաքյանի այս վերջին աշխատանքին տեղյակ չեն եղել ո՛չ Վ. Ավթանդիլյանն ու Հ. Փափազյանը, որոնք 1956 թ. կարողացել էին կարդալ քառյակի չվերծանված առաջին բառերը[2], և ո՛չ մենք, որ 1957 թ. առաջին անգամ պարսկական աղբյուրներում հանդիպել էինք քառյակի պարսկերեն տարբերակին: Այդ աղբյուրներում քառյակի հեղինակ էին համարվում Ցազլոլլահ Նաիմիի աղջիկը (15-րդ դար) և Նասիմին (վախճ. 1417 թ.): Այս կապակցությամբ լույս ընծայած մեր հոդվածում (1959) Ֆրիկի ստեղծագործությունների և քառյակի հայերեն միջնադարյան թարգմանության լեզվաոճական ընդհանրությունների հիման վրա եղրակացրել էինք, որ քառյակի թարգմանիչը

! Տե՛ս «Տեղեկագիր հասարակական գիտությունների, Երևան 1965, № 10, էջ 79-86:

* Օտար հատուկ անունների տառադարձման ժամանակ նպատակահարմար ենք գտնում առաջնորդվել հայ գրականության մեջ այդ անունների ավանդական ուղղագրության պահպանման սկզբունքով. այսպես՝ ց տառադարձում ենք *կ* և ոչ *գ*, *ղ* կամ *ք*, ինչպես Խակհանի և ոչ Խագանի, Խաղանի Խաքանի, Ռեզա Կուլի խան և ոչ Ռեզա Ղուլի խան, չնայած վերջին ձևերի օգտագործումը ևս ճիշտ է:

1 Տե՛ս «Հայաստանի կոչնակ», 1953, փետրվարի 28:

2 **Վ. Ավթանդիլյան, Հ. Փափազյան**, *Ֆրիկի «Դիվանի» պարսկերեն քառյակը*, Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1956, № 3, էջ 87-92:

Ծրիկն է, և նրա հեղինակ կարող էր լինել մինչև Ծրիկը (13-րդ դար) կամ նրա ժամանակ ապրած մի որևէ բանաստեղծ[3]:

1962 թ. «Տեղեկագրի» № 11-ում Ֆրիկյան պարսկերեն քառյակի մի նոր հեղինակի մասին հետաքրքիր հաղորդումով հանդես եկավ Ա. Շահսուվարյանը: Նա՝ ելնելով Խականու երկերի Նուլքիչվարի 1907 թ. հրատարակության մեջ այս քառյակի առկայության փաստից, վճռականորեն հայտարարում է, որ Խականին է դրա հեղինակը: Հաղորդման խորագիրը՝ «Ծրիկը Խաքանու քառյակի թարգմանիչ», ինքնին այդ վճռականության ու որոշակիության վկայությունն է, չնայած հաղորդման եզրակացության մեջ ինչ-որ վերապահության երանգ է նկատվում «եթե հաստատ է» արտահայտությամբ:

1963 թ. լույս տեսած մեր «Հայ-իրանական գրական առնչություններ» ուսումնասիրության մեջ, անդրադառնալով Ա. Շահսուվարյանի հրապարակած ուշագրավ փաստին, նշել էինք, որ Խականուն վերջնականապես քառյակի հեղինակ համարելու համար անհրաժեշտ է լրացուցիչ և ավելի ամուր կռվաններ ունենալ, որովհետև լոկ մի փաստով որևէ ստեղծագործության, այն էլ տարբեր բանաստեղծների անունով հասած քառյակի հեղինակի հարց դժվար է լուծել[4]: «Ա. Շահսուվարյանը, – գրել էինք մենք, – հրապարակելով այս փաստը, պետք է բանասերի կասկածամտություն հանդես բերեր և ցույց տար, թէ Խականու մյուս դիվաններում այս քառյակը հրապարակվա՞ծ է արդյոք և, ի վերջո, քառյակը բովանդակության ու լեզվա-ոճական ինչպիսի աղերսներ ունի Խականու մյուս ստեղծագործությունների հետ»[5]:

Իրանագետ Մ. Թիրյաքյանը՝ ծանոթանալով Շահսուվարյանի հաղորդմանը, ինչպես ինքն է ասում, տարակուսանքի մեջ է ընկնում, չէ՞ որ նրա ձեռքում եղած աղբյուրը Սարմադ Քաշանուն էր համարում քառյակի հեղինակ: Հարգելի բանասերը ծանոթ չի եղել Մատենադարանի «Բանբերում» հրատարակված մեր հոդվածին, որտեղ վկայակոչված աղբյուրներում քառյակի հեղինակ են հիշվում Ծազլոլլահ Նաիմի աղջիկը և Նասիմին, այլապես նրա տարակուսանքները ավելի մեծ կլինեին: Հարցի պարզաբանման համար Մ. Թիրյաքյանը դիմում է պարսիկ անվանի գրականագետ պրոֆ. Սաիդ Նաֆիսուն, որը և մի նամակով հայտնում է, թե քառյակը կա «Էմիրը Քեբիր գրավաճառատան տպագրած Խաղանիի Դիվանում 681-րդ էջի վրա... և տարակույս չկա, որ Խաղանիեն է[6]»:

Սաիդ Նաֆիսու հեղինակությամբ վկայված գրական որևէ իրողություն ինքնին չափազանց գայթակղիչ է, բայց «թերահավատ» բանասերը նորից հարցեր է առաջադրում. Ամիր Քաբիրի հրատարակությունը ձեռագրական ինչպիսի՞ աղբյուրներ է օգտագործել և որքանո՞վ է գիտական. ինչպիսի՞ ընդհանրություններ կան այս և Նուլքիչվա-

---

3 Այս փաստը, ի թիվս այլ նյութերի, հրապարակեցինք 1957 թ. Տաշքենտում կայացած Արևելագետների համամիութենական առաջին կոնֆերանսում կարդացած մեր զեկուցման մեջ, իսկ այնուհետև առանձին հոդվածով՝ Մատենադարանի «Բանբերում», 1959, № 4, էջ 111-119:

4 Ջգուշավորության մեր այդ պահանջը «Տեղեկագրի» խմբագրությունը որակել է «թերահավատություն» («Տեղեկագիր», 1964, № 6) որ մեր կարծիքով տեղին չէ:

5 **Բ. Լ. Զուգասզյան**, *Հայ-իրանական գրական առնչություններ (5-18-րդ դդ.)*, Հետախուզումներ, Երևան, 1963, էջ 127:

6 «Տեղեկագիր», 1964, № 6, էջ 92:

րի հրատարակության միջև. արդյոք երկուսն էլ չե՞ն օգտվել միևնույն աղբյուրից. հարցեր, որոնց պատասխանը չի տալիս պրոֆ. Նաֆիսու նամակը:

1964 թ. աշնանը Իրանագետների համամիութենական 4-րդ կոնֆերանսի աշխատանքներին մասնակցելու համար մենք եղանք Տաշքենտում: Միջին Ասիայում գտնվելը մեզ պատեհ առիթ տվեց լինելու Տաշքենտի ու Դուշանբեի, մեր երկրի արևելագիտական այդ կարևորագույն կենտրոնների հարուստ ձեռագրատներում ու գրադարաններում և ուշադրությամբ ստուգելու Խականու ստեղծագործությունների գրչագիր ու տպագիր մատյանները՝ հուսալով վերջնականապես պարզել քառյակը Խականուն պատկանելու հարցը: Մեր պրպտումների արդյունքը եղավ հետևյալը.

Ա. Խականու երկերը, այդ թվում և քառյակը Նուլքիշվարի հրատարակությամբ լույս են տեսել 1878, 1892 և 1907 թվականներին: Նույն հրատարակությամբ ավելի վաղ՝ 1876 թ. հրապարակված Խականու երկերում քառյակները չկան: 1878, 1892 և 1907 թվականների հրատարակությունների մեջ ֆրիկյան քառյակը տպագրված է էջ 1297-ում (Ա. Շահսուվարյանը ծանոթ է միայն 1907 թ. հրատարակությանը, բայց էջը թյուրիմացաբար նշել է 1292): Քառյակի այս օրինակը բավականին տարբերություններ է տալիս մեզ ծանոթ տարբերակներից. այսպես՝

در مسلک عشق هر نکو را بکشید
لاغر صفتان زشتی خو را بکشید
گر عاشق صادقی زکشتن مگریز
مردار بود هر آنکه او را بکشید[7]

Դար մասլաֆ-ե էշղ ևար ևիու ռա բեմոշիդ.
Լաղաւսեֆաթան զեշթիխու ռա բեմոշիդ.
Դար աշեղե սադեղի զեմոշթան մագոռիզ,
Մոռդար բովադ ևար անիե ու ռա բեմոշիդ:

Թարգմանությունը՝

Սիռո ևանապաւհիհ ամեն մի լավ մարդու սպանեմ.
Անհկաւագիր վատաբաւո մարդկանց սպանեմ.
եթե անկեղծ սիռահար ես, զոհվելուց մի խուսափիր,
Պիղծ կլինի այն, ոռին սպանեմ:

Համեմատության համար բերենք քառյակի ֆրիկյան տարբերակը և նրա բառացի թարգմանությունը.

Դար մուտպախի էշղ ջուզ նէիու ռա նաֆուշանդ.
Լաղաւսիֆաթան ու զիշտխու ռա նաֆուշանդ.

7 .1297 ص ،1907 ،لكنهور ،طبع دوم ،جلد ،ديوان خاقانى (**Խականի**, *Դիվան*, հ. բ. Նուլքիշվարի հրատ., Լակնհոր, 1907, էջ 1297):

Գար աշիղի սաղեղի զիմուշտան մագրէզ,
Մուդար պուաթ հար անչի վաի րա նամուշանդ:

Սիրո խոհանոցում լավից բացի ոչ մեկին չեն զոհում.
Աննկարագիր ու վատաբարո մարդկանց չեն զոհում.
Եթե անկեղծ սիրահար ես, զոհվելուց մի խուսափիր,
Պիղծ կլինի այն, որին չեն մորթում:

Շահսուվարյանը քառյակի նուլքիշվարյան տարբերակում սխալմամբ մասլաք *(مسلک – «ճանապարհ»)* ***կարդացել է*** մուլք *(ملک – «իշխանություն, երկիր, կալվածք»): Նրա մոտ քառյակի մեջ երեք անգամ կրկնված*** բեմոշիդ *(بکشید – «սպանեք»)* ***դարձել է*** նամուշանդ *(نکشند – «չեն զոհում, չեն զենում»),* հար անմե *(هر آنکه)՝* հար անչի *(هرآنچه),* ***լաղարսեֆաթան*** *(لاغرصفتان – «աննկարագիր») բառից հետո ավելացված է* ու *(و – և), իսկ* ուրա *– «նրան, որին» բառից առաջ ավելացված է* ֆե *(*ֆե ուրա *– «որ նրան»)*[8]: ***Նուլքիշվարյան բնագրից կատարված այս խոտորումները աղճատում են բնագիրը և ուսումնասիրողներին ապակողմնորոշում, որովհետև խախտված բնագիրը բռնազբոսիկ կերպով մոտեցվում է ֆրիկյան տարբերակին, որը միանգամայն հստակ ու ճշգրիտ ընթերցումներ ունի և բնագիրը անաղարտ է մեզ հասցրել***[9]: ***Նուլքիշվարի օրինակի խաթարված լինելու հանգամանքն է, հավանաբար, թելադրել հրատարակիչներին կամ հիմք-ձեռագրի գրչին նույն էջի լուսանցքում իրենց համար իմաստազուրկ քառյակին կցելու հետևյալ անհստակ մեկնաբանությունը.***

میگوید که در راه رهزنان مالداران را میکشند و مفلسان و صاحبان امتاع و مال از هر را هی که خواهند بگذرند مگر مسلک عشق یعنی سالک طریق محبت را خواه خصلت نیک خواه زشت باشد فربه باشد خواه لاغر هر گونه قطاع الطریقان این راه از کشتن وتیغ زدن دست را باز ندارند پس اگر عاشق صادق هستی از کشتن نگریزی چندانکه صید مردار را درین راه هم از کشته شدن زیانی و رهائی نیست.[10]

«Ասում է, որ ճանապարհին ավազակները ապրանքատերերին սպանում են: Զքավորներն ու ունևորները ո՛ր ճանապարհից որ ցանկանան՝ կանցնեն, բացի սիրո ճանապարհից, այսինքն՝ սիրո ճամփի ուղևորին՝ լինի նա լավ թե վատ բնավորության տեր մարդ, գեր կամ նիհար, այս ճանապարհի ուղևորները սպանելուց չեն հրաժարվի: Եթե անկեղծ սիրահար ես չես խուսափի սպանվելուց, որովհետև այս ճանապարհին անգամ պիղծ որսի սպանվելը վնաս կամ փրկություն չունի»:

Բ. Խականու դիվանի Թեհրանի 1336/1957 թ. Սեադաթ տպարանի հրատարակությունը քառյակը ունի հետևյալ խմբագրությամբ.

---

8 **Ա. Հ. Շահսուվարյան**, *Ֆրիկը Խաքանու քառյակի թարգմանիչ*, «Տեղեկագիր», 1962, № 11, էջ 87:

9 Մ. Թիրյաքյանը «Տեղեկագրի» իր հոդվածի վերջում առաջարկում է «Խաղանիի զանազան տպագրությունները իրարու հետ բաղդատել և լավագույն բնագիրը ընտրել ֆրիկյան քառյակին»:

Քառյակի մեզ հայտնի պարսկերեն տարբերակների համեմատությունը համոզիչ ցույց է տալիս, որ ֆրիկյան տարբերակը ամենաճշգրիտն է և անթերին, նամանաւանդ որ պարսկերեն աղբյուրներում կա միանգամայն նույն տարբերակը՝ Ֆազլոլլահ Նաիմիի աղջկան վերագրվածը: Կարծում ենք՝ նման հանգամանքներում խոսք անգամ չի կարող լինել ֆրիկյան օրինակը խմբագրելու մասին:

10 **Խականի**, *Դիվան*, ձ. Բ., Նուլքիշվարի հրատ., 1907, էջ 1297:

در مسلخ عشق هر نکو را نکشید
لاغر صفتان زشت خو را نکشید
گر عاشق صادقی زکشتن مگریز
مردار بود هر آنکه اورا نکشید[11]

Դար մասլախե էշղ ճար նեֆու ռա նաֆոշիդ.
Լաղարսեֆաթան զեշթխու ռա նաֆոշիգ.
Դար աշեղե սագեղի զեֆոշթան մագոռիզ,
Մոռդար ռովաղ ճար ամֆե ու ռա նաֆոշիդ:

Այստեղ արդեն ֆրիկյան մուտքախ – «խոհանոց» (– նուլքիչվարյան տարբերակի մասլաֆ – «ճանապարհ») բառի դիմաց ունենք մասլախ – «սպանդանոց», ինչպես Սարմադ Քաշանու տարբերակում է[12], իսկ ֆրիկյան նաֆուշանդ «չեն զոհում, չեն զեննում» (=նուլքիչվարյան բեֆոշիդ – «սպանեք») դիմաց՝ նաֆոշիդ – «մի սպանեք, մի զոհեք, մի զեննեք»:

Գ. Ինչպես վերը հիշվեց քառյակը կա նաև Խականու «Դիվանի» Սաիդ Նաֆիսու վկայակոչած Ամիր Քաբիրի հրատարակության մեջ: «Դիվանի» քննությունը ցույց է տալիս, որ՝

1. Այս հրատարակության մեջ և ոչ մի տեղ չի նշված, թե բնագրի համար ի՛նչ ձեռագրեր են հիմք ընդունվել, կամ ո՛ր հրատարակություններից են օգտվել. մի հանգամանք, որ չափազանց նվազեցնում է նրա գիտական արժեքը, հատկապես այն դեպքում, երբ նկատի ենք առնում, որ Ամիր Քաբիրի հրատարակությունից երկու տարի հետո՝ 1338/1959 թ. Զիա ադ-Դին Սայջադիի աշխատասիրությամբ Թեհրանում լույս է տեսել Խականու «Դիվանի» գիտա-քննական բնագիրը չորս հնագույն ձեռագրերի համեմատությամբ:

2. Քառյակի այս հրատարակությունը ավելի մոտ է Սարմադ Քաշանուն վերագրվածին:

3. Տողատակում քառյակի համար որպես տարբերակ բերված է մի խմբագրություն, որը համընկնում է Սաեդաթի տպարանի օրինակին, չնայած վերջինս որպես աղբյուր չի հիշատակվում:

4. Տողատակում քառյակի 2-րդ տողի զեշթխու – «վատաբարո» բառի դիմաց բերված է գոռգխու – «գայլաբարո» տարընթերցումը, որը ինքնին ինչ-որ մի նոր տարբերակի առկայություն է վկայում:

5. Նուլքիչվարի հրատարակությունը այս գրքում հաշվի չի առնված, այլապես նրա տարընթերցումներն էլ կնշվեին տողատակում:

---

11 دیوان حسان العجم افضل الدین ابراهیم بن علی خاقانی شروانی، بتصحیح و تحشیه وتعلیقات علی عبدالرسولی استاد ادبیات فارسی، چاپخانه سعادت، تهران، 1316، ص 904. (Հոսաան ոլ-Աջամ Աֆզալ ադ-Դին Իբրահիմ իբն Ալի Խականի Շիրվանի, Դիվան, պարսից գրականության պրոֆ. Ալի Աբդուլոասուլիի ճշգրտումներով, ծանոթագրություններով ու լրացումներով, Թեհրան, Սեադաթ տպարանի հրատ. 1316/1937, էջ 904):

12 رضا قلی خان هدایت، مجمع الفصحا، جلد 2، 1295، ص. 20. (Ռզա Կուլի խան Հեդայաթ, Մաջմա ոլ-ֆոսեհա, հ. 2, 1295/1878, էջ 20):

Դ. Քառյակը չկա Թեհրանում 1338/1959 թվականին Զիա ադ-Դին Սաջջադիի աշխատասիրությամբ հրապարակված Խականու «Դիվանի» գիտա-քննական հրատարակության մեջ, որի համար հիմք են հանդիսացել Լոնդոնի, Փարիզի և Թեհրանի ձեռագրատներում ներկայումս պահվող Խականու հնագույն հետևյալ չորս ձեռագրերը[13]:

1. Բրիտանական թանգարանի հեջրի 664 թ. (1265-1266) հնագույն ընդօրինակությունը:

2. Թեհրանում Սադեղ Անսարուն պատկանող ձեռագրի դիվանը:

3. Իրանի պառլամենտի գրադարանի № 976 գրչագիր դիվանը, որը հեջրի 6-րդ դարի վերջերի (13-րդ դարի սկզբների) գրչություն ունի:

4. Փարիզի ազգային մատենադարանի № 1816 ձեռագիր դիվանը, որը մոտ հեջրի 800 թ. (1397-1398) գրչություն է:

Աչխատասիրողը ձեռքի տակ ունեցել է նաև Սաեդաթ տպարանի վերը Բ. կետում հիշված հրատարակությունը, որի մասին նա հետևյալ ուշագրավ դիտողությունն է անում. «Այլ ընդօրինակությունների համեմատությամբ հավելումներ էլ ունի, այդ թվում 5 կասիդե, 17 կաթե, 20 գազել և մի fաճի fաղյակներ»[14] (ընդգծումը մերն է – Բ. Զ.): Նշանակում է ֆրիկյան քառյակի առկայությունը Սեադաթ տպարանի հրատարակության մեջ, որը վկայակոչում է պրոֆ. Սաիդ Նաֆիսին, Սաջջադին համարում է հավելում և ոչ-բնագրային:

Ե. Ֆրիկյան քառյակը չկա նաև Խականու քառյակների պետերբուրգյան 1875 թ. հրատարակության մեջ[15]:

Զ. Ի վերջո ֆրիկյան քառյակը չունեն մեր ստուգած հետևյալ 7 գրչագիր դիվանները.

1. Տաջիկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի արևելագիտական բաժնի ձեռագրատան №№ 491, 775, 1337 և 1892 դիվանները:

2. Դուշանբեի Ֆիրդուսու անվան պետական գրադարանի ձեռագրատան բաժնի №№ 198 և 797 դիվանները:

3. Ուզբեկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի արևելագիտական ինստիտուտի ձեռագրատան № 354 դիվանը:

Մինչ այժմ եղած հրապարակումների տվյալների հիման վրա ֆրիկյան քառյակի հեղինակ են համարվում.

1. Խականին (1120-1199)՝ըստ նրա մի քանի տպագրված դիվանների:

---

13 .1338 دیوان خاقانی شروانی، بکوشش دکتر ضیاء الدین سجادی، تهران، (Խականի Շիրվանի, Դիվան, դոկտոր Զիա-ադ-Դին Սաջջադիի աշխատասիրությամբ, 1338/1959):

14 Անդ, ներածություն, էջ 70:

15 .ربا عیات خاقانی بانتخاباتی که از بعضی تذکره بسعی و اهتمام کارل زالمان سنه 1875/1292، پطرسبورغ (Խականու քաղյակները, Կառլ Զալեմանի աշխատասիրությամբ, Պետերբուրգ, 1292/1675):

2. Ցագլոլլահ Նախմիի աղջիկը (15-րդ դարի սկիզբ)՝ ըստ Անկարայի համալսարանի պատմության ու լեզվի ֆակուլտետի գրադարանի № 1297 ձեռագրի[16] և Մոհամադ Ալի Թարբիաթի «Ազերբայջանի գիտունները» գրքի[17]:

3. Իմադ էդ-Դին Նասիմին (վախճ. 1417 թ.)՝ ըստ Նասիմիի «Դիվանի»[18]:

4. Սարմադ Քաշանին (17-րդ դար)՝ ըստ Ռզա Կուլի խան Հեդայաթի «Մաջմա ալ-ֆոսահա» գրքի:

Համաձայն վերը բերված բոլոր փաստերի, ստացվում է, որ Խականու դիվանների 3 տպագիր հրատարակություններ (Նուլքիչվարի, Ամիր Քաբիրի և Սեադաթի) ունեն ֆրիկյան քառյակը, իսկ Զիա ադ-Դինի կազմած գիտա-քննական բնագիրը, պետերբուրգյան հրատարակությունը, ինչպես նաև 11 գրչագիր դիվաններ (7 միջինասիական ու 4 արտասահմանյան) չունեն քառյակը:

Այս բոլոր փաստերը մեզ իրավունք են տալիս եզրակացնելու, որ վճռականորեն չի կարելի հայտարարել, թե Խականին է ֆրիկյան քառյակի հեղինակը, ինչպես և չի կարելի պնդել հակառակը:

Ձեռագրական այս վերապահելի տվյալներով Խականուն վերջնականապես քառյակի հեղինակ հայտարարելով՝ մենք փակում ենք հետագա պրպտումների դուռը. մինչդեռ անհրաժեշտ է հարցը այնպես դնել, որ չարունակվեն փնտրտուքները, հետախուզումները: Այդ ուղղությամբ ծավալված աշխատանքը նոր նյութեր կարող է ընձեռել հետազոտողներին, նոր անակնկալների առջև կանգնեցնել նրանց:

* * *

Ստորև բերում ենք քառյակի քննական բնագիրը՝ հիմք ընդունելով Անկարայի պատմության ու լեզվի ֆակուլտետի գրադարանի № 1297 ձեռագիրը, որը միայն մի տարընթերցումով (و>ی) է տարբերվում ֆրիկյան օրինակից:

1 در مطبخ عشق جز نکو را نکشند
2 لاغر صفتان زشتخو را نکشند
3 گر عاشق صادقی زکشتن مگریز
4 مردار بود هر آنچه او را نکشند

Աղբյուրներ՝

A – Ամիր Քաբիրի հրատ. տարբերակ – خاقانی شروانی، دیوان، مو.سسه مطبوعاتی امیرکبیر، تهران، 1336، ص. 671

A′ – Նույնի տողատակի տարբերակ:

F – Ֆրիկյան տարբերակ – Ֆրիկ, Դիվան, *Նյու Յորք, 1952, էջ 353:*

N – Նուլքիչվարյան տարբերակ – دیوان خاقانی، جلد دوم، طبع نول کشور، 1907، ص 1297

16 **Դոկտ. Սադիկ Քիա**، دکتر صادق کیا، آگاهیهای تازه حروفیان، مجله دانشکده ادبیات دانشگاه تهران، شماره 2 سال دوم، 1333، ص. 40. *Նոր տեղեկություններ հորուֆյանների մասին*، «Թեհրանի համալսարանի գրականության ֆակուլտետի հանդես», հ. 2, № 2, 1954, էջ 40:

17 **Մոհամադ Ալի Թարբիաթ**، محمد علی تربیت، دانشمندان آذربایجان، تهران، 1314، ص. 387-388. *Ազերբայջանի գիտունները*، Թեհրան، 1935, էջ 387-388):

18 **Դոկտ. Սադիկ Քիա**، նշվ. աշխ., էջ 63:

M – Սարմադ Քաշանու տարբերակ – رضا قلی خان هدایت، مجمع الفصحا، جلد 2، 1295، ص 20

S – Սեադաթ տպարանի հրատ. տարբերակ – خاقانی شروانی، دیوان، شرکت چاپخانه سعادت، تهران، 1316، ص 904.

1 – AMS مسلخ – N مسلک – NS هر نکو – N بکشید – S نکشید

2 F لاغرصفتان و N زشتی خو- ´A گرگخو – N بکشید – S نکشید

3 – M شود – ANS هرآنکه – F ویرا – N بکشید – S نکشید

ОБ АВТОРЕ ЧЕТВЕРОСТИШИЯ ИЗ «ДИВАНА» ФРИКА

Р е з ю м е

В «Диване» армянского поэта XIII века Фрика сохранилось одно персидское рубаи – четверостишие, написанное армянскими буквами. После расшифровки этого четверостишия М. Тирякяном (США, 1953), а затем полностью А. Папазяном и В. Автандиляном (Ереван, 1956) в разных источниках нами был обнаружен и его персидский вариант (см. «Банбер Матенадарани», 1959, № 4, стр. 111-119, на арм. яз.).

В 1962 г. А. Шахсуварян в «Диване» Хакани (изд. Нулкишвара, 1907 г.) встретил это рубаи и, основываясь лишь на данное издание, автором четверостишия обявил Хакани.

В целях решения вопроса об авторе четверостишия мы тщательно исследовали все рукописи Хакани в Ташкенте и Душамбе, а также изданные «Диваны» Хакани (изд. Нулкишвара 1878, 1892 и 1907 гг., изд. типографии Саадат 1316/1937 г., изд. Амир Кабира 1336/1957 г., изд. Зиа эд-Дина Саджади 1338/1959).

В вышеупомянутых рукописях и в научном издании Саджади, который использовал четыре древнейшие рукописи Хакани, данное четверостишие не встречается, поэтому и мы считаем, что нельзя окончательно решить вопрос об авторстве в пользу Хакани. Для такого вывода нужны дополнительные и более убедительные факты.

В конце статьи приводится научно-критический текст четверостишия.

ԳՐԻԳՈՐԻՍ ԱՂԹԱՄԱՐՑՈՒ ՏԱՂԵՐԻ ՊԱՐՍԿԵՐԵՆ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԾԱՆՈՒՄԸ[1]

Որևէ ժողովրդի հոգեկան մշակույթի զարգացման ընթացքը առավել կամ նվազ չափով առնչվում է հարևան ժողովուրդների մշակույթի ընդհանուր զարգացմանը: Պատմական տարբեր ժամանակաշրջաններում, հասարակական ու քաղաքական տարբեր պայմաններում այդ առնչությունները ուրույն դրսևորում ու բնույթ են ունենում. դրանք մերթ հանդես են գալիս որպես միևնույն ժամանակաշրջանին բնորոշ ընդհանուր երևույթներ և ուղղություններ, մերթ որպես մի մշակույթի անմիջական ազդեցություն մյուսի վրա, մերթ սոսկ փոխառություններ և այլն:

Հանրահայտ է, որ X–XI դարերից հետո Իրանում իշխող սելջուկ-թրքական ու մոնղոլական հարստությունները կուլտուրական շատ ավելի ցածր մակարդակի վրա էին գտնվում, քան իրենց ենթակա իրանական ժողովուրդները, ուստի և պատմական շատ կարճ ժամանակամիջոցում իշխողների մշակույթը տեղի է տալիս և ենթարկվում իրանականին: Մի հանգամանք, որ հետագայում՝ թուրք-մոնղոլական գերիշխանության ծավալման հետ միասին, մեծ չափով նպաստում է X դարից զարգացման նոր ուղի ելած իրանական կուլտուրայի ազդեցության շրջանակների ընդարձակմանը: Հատկապես նորանոր նվաճումներ է ունենում իրանական պոեզիան, որը իր ոլորտի մեջ է առնում ողջ Մերձավոր Արևելքը՝ սկսած Միջին Ասիայից մինչև Հնդկաստան, մինչև հեռու Միջերկրականի ափերը:

Հայ ժողովուրդը, որ մինչև արաբական արշավանքները քաղաքական ու տնտեսական, ինչպես և մշակութային սերտ հարաբերություններ մեջ էր իրանական ժողովուրդների հետ, XI դարից հետո՝ ընկնելով թուրք-մոնղոլական տիրապետության ներքո, նոր հարաբերությունների մեջ է մտնում իր դարավոր հարևան Իրանի հետ և ավելի մոտից հաղորդակից դառնում պարսից նոր մշակույթին: Փաստերը ապացուցում են, որ միջնադարյան հայ կուլտուրայի խոշորագույն ներկայացուցիչները հունարեն և արաբերեն լեզուների հետ միաժամանակ տիրապետել են նաև պարսկերենին, ծանոթ են եղել գոյություն ունեցող պարսից գիտական ու գեղարվեստական գրականությանը, օգտվել են դրանից (Գրիգոր Մագիստրոս, Մխիթար Հերացի, Ֆրիկ, Կոստանդին Երզնկացի, Թովմա Մեծոփեցի և այլք):

XV–XVI դարերում Մերձավոր ու Միջին Արևելքի շատ ժողովուրդների գրականությունը ընթանում էր պարսկագիր դասական գրականության հարթած ուղիներով:

Ապրելով նման մի ժամանակաշրջանում, լինելով ժամանակի զարգացած ու կրթված անձնավորություններից մեկը, Գրիգորիս Աղթամարցին անկասկած հաղորդակից է եղել հարևան ժողովուրդների գրական կյանքին, ծանոթ է եղել պարսից և հարևան մյուս ժողովուրդների գրականությունների լավագույն ներկայացուցիչների երկերին, նրանց վարպետությանը և առանձին դեպքերում իր ստեղծագործության մեջ կիրառել նրանց գեղարվեստական մի քանի հնարանքները: Բայց անհրաժեշտ է սկզբից ևեթ նշել,

---

[1] Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1960, թիվ 1, էջ 201-222:

որ այդ բոլորը նրան չի չեղել հայ բանաստեղծության ավանդական ուղուց, չի դարձրել օտարների թարգմանը մեր գրականության մեջ:

Վարպետությամբ յուրացնելով իր մեծ նախորդների՝ Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու, Կոստանդին Երզնկացու և այլ հայ բանաստեղծների լավագույն ավանդները, առանձին ստեղծագործությունների մեջ օգտագործելով պարսից բանաստեղծության բնորոշ բառ ու բանը, նրա մի քանի արտահայտություններն ու պատկերները, Գրիգորիս Աղթամարցին վեր է բարձրացել որպես ինքնուրույն, միանգամայն ինքնատիպ բանաստեղծ:

Աղթամարցու ստեղծագործությամբ զբաղվող գրականագետները տարբեր առիթներով, ի թիվս այլ խնդիրների, անդրադարձել են նաև նրա «պարսկաբանությանը» և այդ հարցի առթիվ այլևայլ կարծիքներ հայտնել:

Հայ միջնադարյան տաղերգության լավագույն գիտակներից Կարապետ Կոստանյանը, որը Աղթամարցու տաղերի առաջին ժողովածուի հրատարակիչն է եղել, բարձր գնահատելով մեր տաղերգուի բանաստեղծական վարպետությունը, նրա պատկերների ու նմանությունների ինքնատիպությունն ու բազմապիսիությունը, գրում է, որ չնայած այս բոլորին, Աղթամարցու լեզուն «միշտ անզոր և միշտ տկարանում է... այն ասելու ինչ նորա սիրտը խոսել է կամենում: Այսպիսի տկարության արտահայտությունն է, անշուշտ, որ երգիչն յուր չքնաղ պատկերի լիակատար նկարագրության համար դիմում է թե ժողովրդական ձևերին, թե օտարազգի պարսիկ և արաբ բառերի օժանդակության, թե սուրբ գրքին և թե այլ շատ հնարքների»[1] (ընդգծումները մերն են – Բ. Ջ.):

Եթե Կ. Կոստանյանը այստեղ Աղթամարցու աղերսները պարսից գրականության հետ լոկ ձևական հողի վրա է դնում, ապա Ն. Ակինյանը 1915 թ. իր ուսումնասիրության մեջ ավելի հեռուն է գնում, և Աղթամարցու բանաստեղծական մեծության հիմնական ազդակը պարսից գրականության ազդեցությունը համարում. «Այն հանկարծական ոստումը,– գրում է Ն. Ակինյանը,– որ կնկատվի իր և նախորդ բանաստեղծներու մեջ, արդյունքն է առանց տարակուսի պարսկական նոր գրականության այս ծանոթության: Գրիգորիս պարսկական նոր գրականության ծանոթությամբ կրթեց յուր ճաշակը, ընդարձակեց մտքին ասպարեզը, հղկեց գրիչը: Եվ այսպես պարսկական ազդեցության տակ, կրնա ասվիլ, բացավ նոր դպրոց մը հայրենի հողի վրա:

Պարսկական ազդեցության արդյունք է մանավանդ անոր բանաստեղծության այլաբանական նկարագիրը, խորհրդական լեզուն, անով կառուցած է նա յուր երևակայության հրաշակերտը, ուր պատկերավոր նկարագրության հանկուցիչ հմայքով կը ճգվին հոգիները, ուր ոչ միայն գերզգայական գաղափարները ըստ իրեն էության և բնության հոմանիշ առարկաներով կը ներկայացվին, այլև աստվածաբանական վարդապետություն իսկ կհանդերձվին գողտրիկ մտահարուստ պատկերներով»[2]:

Երևույթի կոստանյանական մեկնաբանումը (բանաստեղծի լեզվի անզորություն ու տկարություն) մեզ իրավունք կտար նույնպիսի գնահատական տալ նաև Աղթամարցուն նախորդող մեր մյուս խոշոր տաղերգուների ստեղծագործությանը. մի բան, որ արդարացի և ճիշտ չէր լինի: Մյուս կողմից՝ հիմնավորված չէ նաև Ն. Ակինյանի տեսակետը:

---

1 **Կ. Կոստանյանց**, *Գրիգորիս Աղթամարցին և յուր տաղերը*, Թիֆլիս, 1898, էջ 15:

2 **Ն. Ակինյան**, *Գրիգորիս Աղթամարցի*, «Հանդես ամսօրյա», 1915, էջ 39:

Անհրաժեշտ է նշել, որ հայ տաղերգության աշխարհականացման սկզբնական շրջանում օտար բառերի ու ոճերի օգտագործում նկատվում է բացառապես աշխարհիկ բովանդակություն ունեցող գործերում: Զափածո աշխարհիկ խոսքը, որ ավելի մեծ չափում ուներ ժողովրդական զանգվածների հետ, արդեն XII–XIII դարերից սկսում է հեռանալ գրաբարից և մեր տաղերգուների լեզվի մեջ մուտք են գործում ժողովրդական խոսակցական լեզվի տարրերն ու ոճերը: Օտարամուտ տարրի առկայությունը վաղ միջնադարյան տաղերգության մեջ, մի կողմից՝ խորհել է տալիս, որ հավանաբար մեր ժողովրդի խոսակցական լեզվում այդ բառերի ու ոճերի մի մասը արդեն քաղաքացիություն էր ստացել և բանաստեղծների երկերում այն արտացոլվել է որպես հայերենին հարազատ տարր, իսկ մյուս կողմից՝ չեն բացառվում և օտար ազդեցությունները գրական ճանապարհով: Այսպես օրինակ՝ հայ բանաստեղծության մեջ X–XII դարերում քաղաքացիություն վայելող մի շարք բառեր ու արտահայտություններ՝ ինչպես մատռվակ, գուսան, սիրահար, նետ ու աղեղ, դեմ ու պատկեր *և այլն, հետագա դարերում՝ գրական լեզվից դուրս չգալով հանդերձ, հաճախ փոխարինվում են* սաղի, մոթրեբ, աշըղ, թիր ու fաման, սուրաթ *և այլ օտար բառերով:*

Միջնադարյան հայ տաղերգուների օգտագործած օտարամուտ բանաստեղծական արտահայտություններն ու պատկերները հիմնականում պարսից, և ոչ միայն պարսից, պոեզիայի մեջ տրաֆարետային բնույթ էին կրում և համատարած կերպով սփռված են նրանց բանաստեղծների ստեղծագործության մեջ, այնպես որ հազիվ հնարավոր լինի գտնել մի պարսիկ, արաբ, թուրք կամ ադրբեջանցի բանաստեղծ, որ այս ոճերն ու պատկերները օգտագործած չլինի: Բայց դա երբեք չէր խանգարում տաղանդավոր բանաստեղծներին իրենց ուրույն դեմքն ունենալու, չէր նվազեցնում նրանց ստեղծագործության արժեքը: Պարսից գրականության պատմության մասնագետներից դոկտ. Ռզազադե Շաֆաղը, օրինակ, իր «Իրանական գրականության պատմության» մեջ Հաֆեզի գեղարվեստական վարպետության մասին հետևյալն է գրում. «Հաֆեզը նույնպես օգտվել է այլ բանաստեղծների մոտ սովորական դարձած որոշ համեմատություններից, նա, օրինակ, սիրուհու ծամերը համեմատում է չղթայի, սմբուլի, թակարդի, օղապարանի և օձի հետ, հոնքը՝ աղեղի, հասակը՝ սալբի ծառի, դեմքը՝ ճրագի, ծաղկի և լուսնի, բերանը՝ կոկոնի ու պիստակի: Բայց նման գեղարվեստական հնարանքները չեն նվազեցրել նրա խոսքի ներգործությունը»[3]*:*

Գալով Գրիգորիս Աղթամարցու ստեղծագործությանը, կարելի է ասել, որ «ժողովրդական ձևերի», «պարսիկ և արաբ բառերի» օժանդակության դիմելը նրա մոտ ոչ թե զգացմունքների հորդության և դրան հակադիր՝ լեզվի «անզորության» ու «տկարության» հետևանք էր, այլ ժողովրդական բառ ու բանի ակունքներից բանաստեղծի անկաշկանդ օգտվելու արդյունք, որը է՛լ ավելի դիպուկ, է՛լ ավելի ներգործուն է դարձրել նրա խոսքը:

Անդրադառնալով Ն. Ակինյանի տեսակետին, պետք է ասել, որ չբացառելով պարսից բանաստեղծության ազդեցությունը Աղթամարցու ստեղծագործության վրա, մենք

3 دکتر رضا زاده شفق، تاریخ ادبیات ایران، تهران، 1321، ص 336 (**Դոկտ. Ռզազադե Շաֆաղ**, *Իրանական գրականության պատմություն*), Թեհրան, 1321/1943, էջ 336:

չենք կարող դա չափազանցնել, նրա վարպետության ամենամեծ գրավականը համարել, այն դեպքում, երբ բանաստեղծը իր ողջ ստեղծագործության մեջ կիրառում է հայկական պոեզիայի ավանդները, նրա ձևն ու բովանդակությունը: Մի քանի տաղերում եղած պարսկական բառերի ու արտահայտությունների, ինչպես և ամբողջապես պարսկերեն տողերի առկայությունը ճևական բնույթ է կրում և չի փոխում մեր տաղերգուի ազգային դեմքը: Աղթամարցին «իր ճաշակը կրթել», «գրիչը հղկել է» ոչ թե պարսից, այլ հիմնականում հայ միջնադարյան բանաստեղծության դպրոցում: Իսկ ինչ վերաբերում է նրա բանաստեղծության «այլաբանական նկարագրին», «խորհրդական լեզվին», ապա դրանք ևս այնպիսի երևույթներ էին, որ բնորոշ չէին միայն պարսից գրականությանը. դրանք ողջ Արևելքի համար համընդհանուր գեղարվեստական հնարանքներ էին՝ պայմանավորված դարաշրջանի իշխող սոցիալ-քաղաքական կարգերով, աշխարհիկ ու հոգևոր բռնակալությունների առկայությամբ:

Ըստ երևույթին Ն. Ակինյանը հետագայում անդրադաձել է այս հարցին, վերանայել 1915 թ. «առանց տարակուսի» Աղթամարցուն տված իր գնահատականը և 1958 թ. Վիեննայում հրապարակած իր «Գրիգորիս Ա կաթողիկոս Աղթամարի» լուրջ ու չահեկան աշխատության մեջ չի կրկնել այդ տեսակետը:

Իսկ եթե խոսվում է Աղթամարցու ստեղծագործության «այլաբանության» ու «լեզվի խորհրդավորության» մասին, ապա պետք է ասել, որ ի հակադրություն ժամանակի պարսից բանաստեղծության, Աղթամարցու մոտ այդ հնարանքները երբեք էլ չեն ծանրաբեռնում ստեղծագործությունը, մթագնում նրա իմաստը, ընդհակառակը՝ Աղթամարցու «այլաբանությունը» չատ պարզ է ու հստակ, խոսքը դիպուկ է ու վճիտ, պատկերներն ու նմանությունները՝ իրական ու չոչափելի:

Միջնադարյան հայկական բանաստեղծության մեջ կիրառվող գեղարվեստական հնարանքներից է նաև երկլեզվյան, հազվագյուտ դեպքում նաև երեքլեզվյան խառը բանաստեղծություններ հորինելը: Ճիշտ է, XIV–XV դարերում այդ հնարանքը հազվադեպ էր օգտագործվում, բայց հետագայում, հատկապես Աղթամարցուց սկսած, և մանավանդ աշուղական գրականության մեջ, հաճախակի է դառնում այդ:

Արդ, ինչո՞վ բացատրել այս երևույթը:

Երկլեզվյան կամ երեքլեզվյան բանաստեղծություններ հորինելը նույնպես բնորոշ չէր միայն հայ տաղերգուներին: Դա ևս արևելյան գրականության գեղարվեստական հնարանքներից էր: Եթե Ռուդաքին, Ֆիրդուսին արաբական ասիմիլյատորական քաղաքականության դեմ պայքարելու նպատակով, մայրենի լեզվի ու գրականության անաղարտության առաջամարտիկներ լինելով, արաբական բառ ու բանի օգտագործումը գիտակցաբար նվազագույնի էին հասցրել, ապա հետագա դարերում, երբ արաբական տիրապետությունը վաղուց արդեն պատմություն էր դարձել և արաբաբանությունը դադարել էր քաղաքական վտանգ լինելուց, պարսիկ գրողները անկաշկանդ կերպով օգտագործում են արաբական ոճեր ու արտահայտություններ, հաճախ իրենց միտքը խճողում արաբական խրթին ու դժվարիմաստ բառերով, անգամ գրում արաբախառն բեյթեր ու քառյակներ: Գեղարվեստական այս հնարանքը հետագայում մեծ կիրառություն է գտնում և ստեղծագործական վարպետություն դիտվում, ուստի և հայ ու աղրբեջանցի, թուրք և վրացի բանաստեղծները՝ մայրենի լեզվով ստեղծագործելով հանդերձ, դեպքից

դեպք իրենց ստեղծագործություններին էին ագուցում պարսկերեն ու թուրքերեն և կամ արաբերեն տողեր: Արևելքում գեղարվեստական այս հնարանքը իր հատուկ անունն էր ստացել և կոչվում էր մոլամմա (արաբ. ملمّع), այսինքն «խառն»:

* * *

Աղթամարցու պարսկերեն ու թուրքերեն խառը տողերով տաղերը հինգն են. «Յետ գնալոյ վարդին...» (Ն. Ակինյանի 1958 թ. հրատարակությամբ ԺԸ տաղ), «Ծաղկունքն ասեն...» (ԺԹ տաղ), «Մաքուր պատկերով...» (Ի տաղ), «Դու ես արեգակն...» (ԻԱ տաղ), «Դու դրախտ եդեմայ...» (ԻԲ տաղ):

Աղթամարցու այս ստեղծագործությունները իրենց աչխարհիկ բովանդակությամբ ու բանաստեղծական բարձր արվեստով մեծ ժողովրդականություն են վայելել, անցել են բերնից բերան, մեծ սիրով ու գուրգուրանքով արտագրվել ու պահպանվել են աչխարհի չորս բոլորը ցրված մեր գրչագիր մատյաններում, տեղ են գտել մեր առաջին տպագիր տաղարաններում և բազմիցս հրապարակվել հայ պարբերականների էջերում: Բավական է հիչել, որ միայն Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր հին ձեռագրերի գիտա-հետազոտական ինստիտուտ – Մատենադարանում պահվող ձեռագրերում հանդիպում ենք այս տաղերի 20–25 ընդօրինակությունների: Մեր ձեռագրերում այս տաղերի պարսկերեն ու թուրքերեն հատվածները գրիչների կողմից չափազանց չատ են աղավաղված, իսկ ուչ չրջանի մի չարք ձեռագրերում դրանք կամ բաց են թողնված (ձեռ. №№ 2485, 7193 և այլն) և կամ հազվագյուտ դեպքում փոխարինված են հայերեն տողերով (ձեռ. №№ 7715, 2485, 8540 և այլն): Օտար հատվածները աղավաղված են նաև տպագիր հրատարակություններում:

Կ. Կոստանյանը իր աչխատության մեջ՝ ելնելով Գրիգորիս Աղթամարցու այս տաղերի լեզվական առաղձից ու պարսկերեն տողերի առկայությունից ենթադրել է, որ դրանք «կարելի է համարել մի արևելյան երգի փոխադրություն»[4], մինչդեռ Ն. Ակինյանը՝ խոսելով «Յետ գնալոյ վարդին...» տաղի մասին, ճիչտ կերպով եզրակացնում է, որ «երգս կը կրե ինքնուրույնություն մը և ամբողջություն մը, առանց ցույց տալու օտար ազդեցության հետք (պարսկերեն տողերն, որոնք հոս ու հոն երևան կելլեն, ագուցված են հոն միայն ամբողջ կառուցվածքին զարդ տալու համար)»[5]: Ն. Ակինյանը տարակուսում է որոչակի նման կարծիք հայտնել «Մաքուր պատկերով» տաղի պարսկերեն ու թուրքերեն տողերի մասին, և ինչպես ինքն է գրում, «դժվարին է կռահել» այդ տողերի գոյության պատճառը, ուստի և բերում է Կ. Կոստանյանի հետևյալ կարծիքը. «Հավանական է, որ այդ օտարազգի նախադասությունները կամ ոճերը պարզ փոխառություններ են ժամանակի հանրածանոթ օտար երգերից, այսպես մտածելու տեղիք է տալիս սույն մի դարձվածը, որ է «դէհէ հիւսնու սուրաթ և այլն» կամ «դէ հուսնու սուրաթ». այս տեսնում ենք պարսից Ջամի երգչի Յուսուֆ և Զուլիխա երգի մեջ»[6]:

---

4 **Կ. Կոստանյանց**, *Գրիգորիս Աղթամարցի*, էջ 71:

5 «Հանդես ամսօրյա», 1915, էջ 47:

6 **Կ. Կոստանյանց**, *Գրիգորիս Աղթամարցի*, էջ 61: Տե՛ս նաև **Ն. Ակինյան**, *Գրիգորիս Ա կաթողիկոս Աղթամարի*, Վիեննա, 1958, էջ ՂԳ:

Գրիգորիս Աղթամարցու ստեղծագործության ըստ ամենայնի քննությունը արևելյան, այդ թվում և հայ գրականության ընդհանուր զարգացման պաստառի վրա, օտար բառապաշարի ու տողերի ճշգրիտ վերծանումն ու դրանց թարգմանությունը, զուգահեռ համեմատությունները, մեզ բերում են հետևյալ եզրակացությունների.

1. Գրիգորիս Աղթամարցու վերոհիշյալ տաղերը ինքնուրույնության կնիք են կրում և միանգամայն համահունչ են նրա ողջ ստեղծագործությանը, դրանք համակված են բնության այնպիսի անկաշկանդ պաշտամունքով, բուռն կենսասիրությամբ, ինչպես մյուս տաղերը, իսկ լեզուն ու ոճը, համեմատություններն ու պատկերները ամբողջովին գրիգորիսյան ինքնատիպություն ունեն: Եթե մի քանի տաղերի քնարական հերոսը ինքը սիրով տոչորված, գիշեր ու զօր անքուն տառապող ու գարնան գալստյանն սպասող բանաստեղծն է, ապա «Գարուն երեկ», «Ձեւ գնալոյ վարդին», «Ծաղկունքն ասեն» տաղերում արդեն բլբուլն է հանդես գալիս որպես բանաստեղծի խոռվահույզ հոգու թարգման: Ինչպես մյուս գործերում, այս տաղերում նույնպես գարունն է չնչում իր բազում գույներով ու ծաղիկներով, ամենուրեք դալարանում են «արմատք ու ճիւղք» և մանուշակի ու չուշանի, նարդոսի ու քրքումի արբեցուցիչ բույրն է տարածվում, իսկ դաշտերում ու լեռներում այծյամներն ու եղնիկներն են խայտում:

Ն. Ակինյանը իր աշխատության մեջ աշխատել է բացահայտել Աղթամարցու աշխարհիկ բնույթի այս տաղերի էությունը, դրանց բովանդակությունը: Ճիշտ է, նա դրանք անվանում է «սիրերգություններ»[7] և անգամ Վարդի և Սոխակի կերպարների մեջ փորձում է տեսնել սիրող զույգեր (իր խոսքերով՝ «փեսա և հարս»[8]), բայց սա մի պահ է. նա անմիջապես նահանջում է իր իսկ մտքից և հիշեցնում, որ միջնադարում Վարդն ու Սոխակը դիմառնաբար ներկայացրել են «Քրիստոս և Աստուածածին, Գաբրիել և Մարիամ, Հոգին և Մարմինը»[9], և ապա եզրակացնում է. «Այսպես նաև Աղթամարցին իր տաղերուն մեջ Բլբուլի և Վարդի դիմառնության տակ երգած է, ինչպես կերևա, Հոգին և Մարմինը, ինքը և եղբայրը, ինքն և Աղթամար»[10]:

Հիրավի, միջնադարյան հայ երգիչներից ոմանք (Կոստանդին Երզնկացի, Առաքել Բաղիշեցի) իրենց աշխարհիկ բանաստեղծություններին կրոնական խորագրեր են տվել և առանձին դեպքերում ընթերցողին նախազգուշացրել, որպեսզի իրենց գրվածքները «ի մարմին» չհասկանան, բայց դա միջնադարյան կրոնական հալածանքից խուսափելու համար շատ հասկանալի քողարկում էր: Իսկ տվյալ դեպքում Աղթամարցու այս բանաստեղծությունները անգամ այդպիսի վերնագիր չունեն. հետևաբար և բոնազբոսիկ է հնչում Ակինյանի եզրակացությունը:

Ն. Ակինյանը Աղթամարցու «Ձեւ գնալոյ վարդին...» ստեղծագործությունը ինչ-որ այլաբանություն է համարում, որտեղ բանաստեղծը ողբում է ծովամույն եղած եղբորը: Իհարկե այս պոեմում կա այլաբանություն, բայց ոչ նեղ, անձնական առումով՝ այլ հասարակական. այստեղ արտացոլված է, ինչպես տարիներ առաջ իրավացիորեն նկատել է Կ. Կոստանյանը, հայ ժողովրդի քաղաքական ծանր վիճակը օտար նվաճողների

7 **Ն. Ակինեան**, *Գրիգորիս Ա կաթողիկոս Աղթամարի*, էջ ՃԼՋ:

8 Անդ:

9 Անդ, էջ ՃԼԷ:

10 Անդ:

լծի տակ[11]: Անգամ ինքը բանաստեղծը այս չարքի գործերից մեկում («Ծաղկունքն ասեն…») ակնարկում է դրան, դրելով՝

Հագարացիք օրինօք թիւր
Ջազգս խանձեն որպէս զհուր[12]:

Բայց Ն. Ակինյանը կարծեք չի ուզում համակերպվել այն մտքին, որ կաթողիկոս բանաստեղծը կարող էր և՛ սեր երգել, և՛ իր ժողովրդի տառապանքը, որ նա կարող էր ստեղծագործական տարերքի մեջ ի հայտ բերել կյանք տենչացող իր հոգին, երկրային երջանկությունը գերադասել երկնայինից: Այս դեպքում միջնադարյան բանաստեղծը ավելի համարձակ է, քան Ն. Ակինյանը. Աղթամարցին անգամ իր հերոսուհուն համեմատում է աստծո դրախտի, գորավոր խաչի հետ.

«Դու դրախտ եղեմայ, անկեալ յԱնեղեն…».

«Դու սաճչելագործ ճան զօրաւոր խաչ»[13]:

Զբավարարվելով միայն քրիստոնեական սրբություններով, Աղթամարցին չարունակում է իր գովերգը և համարձակորեն համեմատության առարկա դարձնում մուսուլմանների սրբազան վայրերը.

«Թու բէթըլմամուր և մաֆաթուլլայ»[14]
(Դու բեյթոլմամուր և Մեքքե աստուածո)

գրում է Աղթամարցին իր «Դու ես արեգակն» տաղում, իսկ բեյթոլմամուրը ըստ մուսուլմանական հասկացողության երկնային այն տունն է, որ գտնվում է Մեքքեի սրբավայրի դիմաց:

Բանաստեղծ հոգևորականը չատ լավ է զգում իր անելանելի վիճակը: Նրա հոգում խռովք կա. մարմնականն ու հոգեկանը պայքարի մեջ են և ինչպես «Գանգատ հոգւոյն» տաղի մեջ է ասում, դրանք «հակառակ են, չեն միաբան»[15]: Ուստի և ամեն անգամ սեր երգելուց հետո, հիշում է կրոնականի իր վիճակը, կյանքի անցողիկության գաղափարը և, իր արարքը անօրինություն համարելով, հորդորում թողնել աշխարհի սերը.

Խև Աղթամարցի դու բարեաց անջան,
Ունայն թգենի փշաբեր անդաստան,
Թող զսէր աշխարհիս այս անցուդարձան,
Ջի դառն ու լեղի և յոյժ անպիտան[16]:

2. Աղթամարցու այդ տաղերի ինքնուրույնության կռվաններից է նաև «Ծաղկունքն ասեն…» տաղի մեջ կիրառված հնարանքը՝ հայկական այբուբենի ամբողջ տա-

11 Տե՛ս **К. И. Костанянц**, *Роза и соловей*. К положению армян в XVI веке. Из «Древностей восточных», т. IV, 1913.

12 **Ն. Ակինյան**, Անդ, էջ 83:

13 Անդ, էջ 96, 98:

14 **Ն. Ակինյան**, Անդ, էջ 91:

15 Անդ, էջ 35:

16 Անդ, էջ 88:

ռերի օգտագործումը տնածայրերում: Տաղը փոխադրությունն կամ թարգմանությունն լինելու դեպքում հնարավոր չէր այդքան ճշգրտությամբ կառչած մնալ մեր այբուբենի տառերի քանակին ու կարգին:

3. Աղթամարցին, ինչպես իր նախորդներ Ֆրիկն ու Կոստանդին Երզնկացին, Մկրտիչ Նաղաշն ու Հովհաննես Թլկուրանցին, իր տաղերի մեջ այնպիսի բառեր ու արտահայտություններ է օգտագործել, որոնց մեծ մասը ըստ երևույթին, ինչպես վերը նշվեց արդեն մուտք էր գործել հայոց լեզվի մեջ և վաղուց ի վեր կիրառություն գտել մեր տաղերգուների երգերում: Դրանցից կարելի է հիշել բասար *– «խելամտություն», հասրաթ – «կարոտ», ղուսա – «վիշտ», սուրաթ – «դեմք»,* ջուհար, փոշիման, ֆրիաթ *– «աղաղակ» և շատ այլ բառեր: Այսպես օրինակ*[17]*.*

«Ջինչ որ մեզ խելֆ կա և *բասար*». Կ. Երզնկացի, էջ 141.

«Գնաց մանկութեան *հասրաթին*.
երեկ ինձ հոգս անիհուն». Ֆրիկ, էջ 342.

«*Հասրաթ* կա յիմ սիրտս, անշէղ կու վառի». Մ. Նաղաշ, էջ 26.

«Եւ յերակ զօրն ի *ղուսայ* հօգոմ մաշեմ
զիս անդադար». Կ. Երզնկացի, էջ 147.

«*Ղուսան* շատոց ցաւ բերէ, ի ցաւէն մարդ մեռանի». Մ. Նաղաշ, էջ 26.

«*Ի սուրաթին* մի նայել որ յերևան կա և յայտնի». Կ. Երզնկացի, էջ 157.

«է գեղեցիկ կերպիւ *սուրաթ*». Հ. Թլկուրանցի, էջ 25.

«Խիստ *փոշիման* ի վայր մնաց, պաշար չունէր հետ գնալու». Ֆրիկ, էջ 309.

«*Ֆրիաթ* կանչեմ հազար 'ւ աճեղ հառաչ բերեմ լալով». Կ. Երզնկացի, էջ 91.

Գրիգորիս Աղթամարցու բառապաշարում եղած օտարաբանությունները սրանով չեն ավարտվում: Մեր տաղերգուի մոտ կան բազմաթիվ բառեր, ոճեր ու արտահայտություններ, անգամ պատկերներ, որոնք սփռված են արևելյան շատ ժողովուրդների, մասնավորապես պարսից բանաստեղծության մեջ: Ահա սրանք են, որ Աղթամարցու մոտ պետք է գրական փոխառության ճանապարհով մուտք գործած լինեն: Հատկանշական է, որ այս փոխառությունների մի մասում պահպանված են պարսկերենի առանձնահատկություններից իզաֆետը, ինչպես օրինակ ապի հայաթ – آب حیات *«կենաց ջուր, անմահական ջուր»,* նաֆայի թաթար – تاتار نافه. *«թաթարական նաֆե... մշկայծյամի հոտավետ պորտը, մուշկը»,* մըղոի սահար – مرغ سحر *«այգաբացի թռչուն, սոխակ, աքաղաղ», մուսուլմանական կրոնին բնորոշ հասկացություններ՝* մէհրապ – محراب *«մզկիթի ավագ սեղանը, որմնախորշը»,* խալամուլլայ – كلام الله *«աստուածո խոսք, Ղուրան», ինչպես և* թիր ու համան – تیر و کمان *«նետ ու աղեղ»,* ղանդ ու շաքար – قند و شکر *«շաքար ու անուշ» արտահայտու-*

17 Օրինակները բերվում են հետևյալ հրատարակություններից. **Ֆրիկ**, *Դիվան*: Ի լույս ընծայեց Տիրայր արքեպիսկոպոս, Նյու Յորք, 1952: *Կոստանդին Երզնկացի, և յուր քերթուածները*, ուսումնասիրությամբ հրատարակեց Հ. Մ. Պոտուրյան, Վենետիկ, 1905: **Կ. Կոստանյան**, *Մկրտիչ Նաղաշ և յուր տաղերը*, Վաղարշապատ, 1898: **Կ. Կոստանյան**, *Հովհաննես Թլկուրանցին և յուր տաղերը*, Թիֆլիս, 1892:

թյունների համատեղ օգտագործումը և այլն: Փոխառությունների, ինչպես և ամբողջովին պարսկերեն, հազվադեպ նաև թուրքերեն, տողերի վարպետ կիրառումը Աղթամարցու ստեղծագործությունների մեջ լավագույն դրավականն է արևելյան դրականության նրա իմացության: Այսպես, Աղթամարցին գրում է՝

«Բերկրութեան բաժակ և *ապի հայաթ*» (տաղ ԻԱ, տող 41):

Ընդգծված արտահայտությունը և հետագա տողերում բերվող օրինակները կարելի է գտնել XIII–XVI դարերի շատ բանաստեղծների մոտ, բայց գուգահեռների համար հիմնականում փաստեր ենք բերում Հաֆեզից (վախճ. 1368 թ.), որպես Արևելքի քնարական բանաստեղծության առավել հռչակված ու հեղինակություն վայելող դեմք, որը մի քանի դար շարունակ իր ազդեցության տակ է պահել արևելյան դրականությունը: Ապի հայաթ *արտահայտությունը Հաֆեզի մոտ հետևյալ ձևով է օգտագործված*[18]*:*

لب چو آب حیات توهست قوت روح *(Հաֆեզ, էջ 46)*
وجود خاکی مارا ازوست لذت راح

Շուրթդ հոգուն ուժ պարգևող *անմահական ջուրըն* է.
Եվ մեր նվաստ գոյության վայելք տվող գինին է):
«Տաշխ և կինամոն *նաֆայի թաթար*» (Աղթամարցի, Ի, 46)

درآن زمین که نسیمی وزد زطرهٔ دوست *(Հաֆեզ, էջ 22)*
چه جای دم نافه های تاتاریست

(Այն հոգում որ զեփյուռ փչի սիրեցյալի խոպոպից,
էլ ինչ կարիք *թաթարական նաֆեի*):
«Քաղցրաձայն կաքաւ *մըրղի սահար* ես» (Աղթամարցի, ԻԱ, 48)

شرح مجموعهٔ کل مرغ سحر داند و بس *(Հաֆեզ, էջ 23)*
که نه هر کو ورقی خواند معانی دانست

(Ծաղկեփնջի գովքը միայն երգել գիտե *սոխակը* (մըրղի սահար)
Ոչ ամեն մարդ կհասկանա թերթած գրքի իմաստը):
«*Մէհրապ է* հաշած *զուներդ* ի նմա» (Աղթամարցի, ԻԱ, 10)

محراب ابروان بنما تا سحر کهی *(Հաֆեզ, էջ 19)*
دست دعا برآرم و در کردن آرمت

(Ցույց տուր դու ինձ *մեհրաբը* (կեռը) հո հոմֆերի.
Որ աղոթքի մեկնած ձեռս պարանոցիդ փաթաթվի):
«Ունեւդ է *քաման*, թարթափդ է հո *թիր*» (Աղթամարցի, ԻԱ, 29)

زچشمش جان نشاید برد کز هر سو که می بینم *(Հաֆեզ, էջ 69)*
کمین از کوشهٔ کردست و تیر اندر کمان دارد

18 Հաֆեզից բերված օրինակները վերցված են حافظ، دیوان، چاپ بروخیم (**Հաֆեզ**, *Դիվան*), Թեհրան, 1315/1937 հրատարակությունից: Հայերեն թարգմանությունները հոդվածագրինն են:

(Պրծում չկա ամեն կողմից ինձ հալածող աչերից.
Ջի լարել է՝ դարաւն մտած, *նետ-աղեղը* դեպի ինձ):
«Շրթունքդ է *շաքար*, խաւսաւնքդ *գանդ* է» (Աղթամարցի, ԻԱ, 25)

از چاشنی قند مکو هیچ وزشکر *(Հաֆեզ, էջ 34)*
زآنرو که مرا از لب شیرین تو کامست

(*Գանդ շաքարի* սին վայելիին՝ էլ ո՛չ մի խոսք, ո՛չ մի գովք.
Այն իսկ պահից, երբ տեր դարձա նեկտարածոր շրթերիդ):

4. Գրիգորիս Աղթամարցու մոտ նկատվում է նաև, որ նա իր վերջահանգերը հարմարեցնելու համար դիմում է օտար բառերի ու արտահայտությունների, օրինակ.

Քանի առնէք դուք ինձ *ադաբ*,
Սիրաս ի սիրոյ եղեր *քաբաբ*,
Ես կու մաշիմ վարդին *սաբաբ*,
Իմ հալս առանց իւրն է *խարաբ*: (ԺԹ, 5–8)

Շրթունքդ է fո լար կըլափդ է *անբար*,
Տաշխ և կինամոն նաֆայի *թաթար*,
Ջըմուտ և հալուէ ու լալ և *ճօհար*,
Ջօհրայ մուշթարի ՚ւ առուսեակ պայծառ: (Ի, 45–48)

Վեր ես գընացեր fան *գսինոբար*,
Նըռնենի դըրախտ և սալփ *չինար*,
Լեզուդ է շիրին fան զՄըսրի *շաքար*,
Ի fո թըշնամւոյն շըլինիըն *տապար*: (Ի, 48–52)

Ջաւրըն կու մաշիմ ի հոգս ՚ւ ի *դուսայ*,
Վախեմ թե լինիմ ի fեզնէ *ջուդայ*,
Կամ զիս մոռանաս ու տաս ինձ *ջազայ*,
Բուդիմ խիրադմանդ fաղի *դիւանայ*: (ԻԱ, 61–65)

5. Աղթամարցու մոտ օտար բառերը մեծ մասամբ օգտագործված են որպես էպիտետ ու մետաֆոր: Սա բացահայտում է բանաստեղծի միտումը՝ ստեղծած պատկերի գգացումը ավելի ուժեղացնել, պատկերը ավելի տպավորիչ դարձնել: Այսպես, օրինակ.

Գեղեցիկ բազա *լատիֆ ու թառ* ես (ԻԱ, 46)
Ունեդ է *քաման*, թարթափդ է fո *թիր* (ԻԱ, 29)
Նայեաց մեկ ընդ իս աչուդ *մաստան* (Ի, 21)
Մէհրապ է fաշած զուսեդ ի ներմա (ԻԱ, 10)
երբ որ դու շարժիս ոտաւդ *ըռօվան* (Ի, 57)
Վեր ես գընացեր fան *ըգսինոբար* (Ի, 49)
է *փըստա դըհան* ու բարակ շրթունք (ԻԱ, 50)

6. Աղթամարցին առանձին դեպքերում իր իսկ օգտագործած օտար բառերի ու պատկերների, անգամ ամբողջական պարսկերեն ու թուրքերեն տողերի համազոր հայերեններն է տալիս. այսպես.

(Բլլբուլ) բըգաւ թու բա աւազ (ԺԹ, 24)
(Բլլբուլ… Քաղցր) ձայնիւ եղանակէ (ԺԹ, 17–18)

Ըռանգ վարդին ոռպէս ըզլալ (ԺԹ, 41)
Վարդն է կարմիր գունով (վառած) (ԺԹ, 49)

Կէճայ ու կունտուզ ղլարըմ ֆըզան (Ի, 24)
Ըզտիւ և ըզգիշեր ողբամ անդադար (ԺԸ, 19)

է մահի թամամ… (ԻԲ, 37)
Կիալիր լուսին… (ԻԲ, 10)
… լուսին ի լման (ԻԱ, 1)

* * *

Ինչպես վերը նշեցինք, Աղթամարցին իր վերոհիշյալ տաղերի մեջ ունի նաև պարսկերեն ու թուրքերեն ամբողջական տողեր, որոնք գրչագիր տաղարանների արտագրողները չափազանց աղավաղել են ու դժվարացրել ընթերցումը: Այդ տողերը աղավաղված են տպագրվել նաև «Հայերգում», մեր պարբերականներում, իսկ Գ. Սրվանձտյանը «Մանանայում» միանգամայն դուրս է թողել: Կ. Կոստանյանը 1898 թվականին իր հրապարակած «Գրիգորիս Աղթամարցին և յուր տաղերը» աշխատության մեջ փորձել է այդ հատվածներում որոշ ճշգրտումներ կատարել և առանձին օտար բառեր ու ոճեր թարգմանել, բայց դժբախտաբար նրա ընթերցումներում չափազանց շատ սայթաքումներ կան: Ինքը Կոստանյանը, գիտակցելով այդ, գրել է. «Թուրքերեն և պարսկերեն բերված ոճերից և դարձվածներից շատերն այնքան խառն ընթերցվածներ ունին, որ դժվար է վերականգնել նոցա բնագիրը[19]» (ընդգծումը մերն է – Բ. Ջ.): Կամ՝ «Այս տաղի մեջ («Յետ գնալոյ վարդին» – Բ. Ջ.) բավական օտար բառեր կան. մեծ մասը պարզ չէ այն պատճառով, որ գրիչների աղճատումն է նկատվում»[20]: Այս հատվածների ոչ ճիշտ ընթերցումը վաստակավոր բանասերին բերել է միանգամայն սխալ եզրակացությունների: Այսպես, Կ. Կոստանյանը «Դու ես արեգակն» տաղի 29 և 30-րդ տողերը կարդացել է.

Ունեղդ է համան, թարթափդ է fn թիր,
Ջահանդար լաշքար մէֆունի թապտիր[21].

և եզրակացրել է, որ Աղթամարցին թերևս այս տողը Ֆիրդուսուց է ասել, «որովհետև Ջահանդար կամ Ջիհանդար (աշխարհակալ) Շահնամեի երգչի սիրած խոսքն է»[22]:

Ջխոսելով այն մասին, որ մի սովորական բառի վրա հենվելով չի կարելի նման որոշակի եզրակացություն կատարել, պետք է նշել, որ երկտողի կոստանյանական ըն-

19 **Կ. Կոստանյանց**, *Գրիգորիս Աղթամարցին և յուր տաղերը*, էջ 60–61:
20 Անդ, էջ 45:
21 Անդ, էջ 68:
22 Անդ, էջ 71:

թերցումը սխալ է և ոչ մի իմաստ չունի: Երևանի Մատենադարանի ձեռագրերի, ինչպես և Ն. Ակինյանի «Գրիգորիս Ա կաթողիկոս Աղթամարի» աշխատության մեջ այս տաղի տվյալ հատվածի տարընթերցվածների հիման վրա երկտողը պիտի կարդալ.

Ունեղ է համաճ, թարթափդ է fո թիր,
Ջանգ աստ ու լաշխար մէֆուսի թադրիր (ԻԱ, 29–30),

որը և թարգմանվում է.

Ունեղ է աղեղ, թարթափդ է fո նետ,
Պատերազմ է և դու բանակ ես պատրաստում:

Հետագայում, 1915 թվականին Ն. Ակինյանը՝ «Հանդես ամսօրյայում» հրատարակելով խնդրո առարկա տաղերը, աշխատել է նույնպես այս հատվածները ճշգրտված ներկայացնել: Բայց այստեղ ևս մեծ սխալներ են սպրդել:

1958 թվականի վերջերին Վիեննայում առանձին գրքով լույս տեսավ Ն. Ակինյանի ամբողջական ուսումնասիրությունը նվիրված Գրիգորիս Աղթամարցու ստեղծագործությանը՝ քննական բնագրերով հանդերձ: Հարգելի բանասերը իր կազմած բնագրերի համար հիմք է ընդունել Վիեննայի Մխիթարյան մատենադարանի XVI դարի մի քանի ձեռագրեր՝ ձեռքի տակ ունենալով նաև գրիգորիսյան տաղերի բազմաթիվ հրատարակությունները:

Այս աշխատությանը կցված է նաև Աղթամարցու ստեղծագործությունների պարսկերեն ու թուրքերեն տողերի (ընդամենը 43 տող) վերծանությունն ու թարգմանությունը: Վերծանությունը, ինչպես նշում է գրքի հեղինակը, իր խնդիրքով ժամանակին կատարել են Մ. Բիտտները, Հովհ. Մասեհյանը, Հ. Աճառյանը, Ա. Սևրուգյանը[23]: Հեղինակավոր բանասեր-գիտնականները ըստ երևույթին չատ ճիգ են գործադրել այս հատվածների ընթերցման համար: Բայց այստեղ ևս կան առանձին տողերի ու բառերի ոչ ճիշտ ընթերցումներ ու թարգմանություններ, որոնց հետևանքով աղավաղված է դրանց իմաստը: Այսպես օրինակ, ԺԹ տաղի 24-րդ տողը ընթերցված է՝

«Բլլբով բըգաւթ ու բա աւազ»

և թարգմանված է

«Ով սոխակ, ըսավ անիկա (բլլբովը՞ – Բ. Ջ.) երգելով»[24],

մինչդեռ, ինչպես հայերեն կոնտեքստից է երևում, Վարդն է դիմում Բլբուլին և խնդրում երգել. մի քանի տող առաջ այդ միտքը ասված է և հայերեն.

«Վարդն կասէ. Բլլբո՛ւլ, երգէ՛,
Քաղցր ձայնիւ եղանակէ՛» (ԺԹ, 17–19):

Սխալը բխում է բըգաւթ ու բառերի ոչ ճիշտ բառանջատումից: Տողը պետք է վերակազմել հետևյալ կերպ.

23 Տե՛ս **Ն. Ակինյան**, *Գրիգորիս Ա կաթողիկոս Աղթամարի*, էջ ՃԽՍԳ:
24 Անդ, էջ ՃԽՍԴ:

«Բլլբուլ բըզաւ (օ) թու բա աւազ»

որի և բառացի թարգմանությունն է՝

«Բլբո՛ւլ, խոսիր դու երգով»:

ԻԱ տաղի 30-րդ տողը ընթերցված է.

«Ջան գաստ ու շաֆար[25] մէֆունի թաղբիր»

և թարգմանված է՝

«Դուն իբրև թշնամի զինվոր պատրաստություններ
կը տեսնես՝ զիս սպանելու (բառական՝ կյանքի դեմ՝
զինվորի կըսես ճնարքներ)»[26]:

Առաջին երկու բառի սխալ ընթերցման հետևանքով թարգմանությունը անհեթեթ է ստացվել. մինչդեռ պետք է լինի՝

Ջանգ աստ ու լաշքար մէֆունի թաղբիր
(Պատերազմ է և դու բանակ ես պատրաստում):

Այս ընթերցմամբ հասկանալի է դառնում բանաստեղծության տվյալ տան իմաստը, որտեղ սիրուհու հոնքերը համարվում են աղեղներ («քաման»), իսկ արտևանունքները՝ նետեր («թիր»): Ի դեպ պետք է ասել, որ Ն. Ակինյանին թվացել է, որ fաման *բառը ձեռագրական սխալ է, ուստի և գրքի բառարանում* fամանի *դիմաց գրել է՝ «կարդա՝ քամար»[27]: Սա թյուրիմացություն է. պետք է պահպանել բնագրային ձևը՝ քաման – «աղեղ» իմաստով:*

ԻԲ տաղի 38-րդ տողը ընթերցված է.

«է fաման ապրու, *արմաստի* նիգար»

և թարգմանված է՝

«Ո՛վ կամար հոնմեր, գինովցած սիրելի»[28]

պետք է լինի՝

«է fաման ապրու, *սարմաստի* նիգար»
(Ով աղեղ հոնմ[եր], սիրածով հարբած).

Ընթերցման և թարգմանության այսպիսի սխալներ կան Ի տաղի 12, 16, 23, 24, 25 և 26-րդ տողերում, ԻԱ տաղի 3, 8, 13, 15, 20, 32 և 44-րդ տողերում, ԻԲ տաղի 42, 71, 72-րդ տողերում:

Մենք հակամետ ենք կարծելու, որ այս տողերը ոչ թե փոխառություն են, այլ Աղթամարցու իրեն ստեղծագործությունն են հանդիսանում՝ չնայած դրանց մեջ օգտա-

25 Վրիպակ է. պետք է լինի *լաշքար*. տե՛ս անդ, էջ 92:
26 Անդ, էջ ՃԽԶ:
27 **Ն. Ակինյան**, *Գրիգորիս Ա կաթողիկոս Աղթամարի*, էջ 135:
28 Անդ, էջ ՃԽԷ:

գործված պարսից բանաստեղծությանը բնորոշ ոճերին ու պատկերներին. այս ձևի մեջ էլ մեր տաղերգուն հետևել է ժամանակի բանաստեղծության հնարանքներին: Նկատելի է, որ այս տողերի տաղաչափությունն ու հանգավորումը հարմարեցված են հայկական բանաստեղծության օրենքներին:

Վերը բերված փաստարկումները, ինչպես և այս տողերի մեջ հիշատակված արևելյան գրականության մի քանի հերոսների անունները (Քանանցի Հովսեփ, Մալջնուն, Ճըրհատ), պարսկերենի չարահյուսական մի քանի արխաիզմների առկայությունը (տե՛ս ստորև), որոնք հանդիպում են նաև պարսից դասական գրականության լեզվում, լավագույն ապացույց են, որ Գրիգորիս Աղթամարցին ըստ ամենայնի քաջատեղյակ է եղել այդ գրականությանը և առանձին դեպքերում օգտագործել է նրա գեղարվեստական հնարանքները:

* * *

Պարսկերեն ու թուրքերեն տողերի վերծանումը և թարգմանությունը մենք ավարտել էինք, երբ Երևանում ստացվեց Ն. Ակինյանի վերոհիշյալ նոր աշխատությունը, որտեղ հրապարակված մեզ հետաքրքրող տաղերը իրենց տարընթերցվածներով ոչ մի էական տարբերություն չտվին մեր ձեռքի տակ եղած ձեռագրերից, ուստի և այստեղ բավարարվում ենք միայն խնդրո առարկա հատվածների տարընթերցվածների վկայակոչումով՝ ըստ Երևանի Մատենադարանի հետևյալ ձեռագրերի, միաժամանակ նշելով մյուս բանասերների ընթերցումների և թարգմանությունների մեջ եղած վրիպումները:

ձեռագիր	*№*	*ժամանակ*
A	8968	*1556 թ.*
B	3668	*ԺԶ դ.*
C	7707	*1611 թ.*
D	2398	*1613 թ.*
E	3081	*1617 թ.*
F	7709	*1620 թ.*
G	3498	*1624 թ.*
H	1989	*1647 թ.*
I	5623	*1663 թ.*
J	8967	*1682 թ.*
K	7715	*1688 թ.*
L	7128	*1693 թ.*
M	7717	*1695 թ.*
N	3411	*ԺԷ դ.*
O	5668	*ԺԷ դ.*
P	9003	*ԺԷ դ.*

Q	8659	*ԺԷ դ.*
R	2485	*ԺԷ դ.*
S	7193	*ԺԷ դ.*
T	7039	*ԺԷ դ.*
U	7714	*1714 թ.*
V	597	*1737 թ.*
W	5954	*ԺԸ դ.*
X	8540	*ԺԸ դ.*
Y	7057	*ԺԸ դ.*
Z	6985	*ԺԸ դ.*
a	2676	*ԺԸ դ.*
b	1990	*1808 թ.*
c	4296	*1824–39 թ.*
d	8083	*1825 թ.*
e	4256	*1845 թ.*
f	3751	*ԺԹ դ.*
g	8682	*ԺԹ դ.*
h	7712	*ԺԹ դ.*
i	3751	*ԺԹ դ.*

Պարսկերեն և թուրքերեն տողերը վերակազմելու համար հիմք են ընդունված հետևյալ ձեռագրերը.

ԺԸ տաղ՝ ABEFGHIJLMNRSWXYZbefjh:

ԺԹ տաղ՝ ABEFGKMNOPSTUWbf:

Ի տաղ՝ ACEFHIMNOQVf:

ԻԱ տաղ՝ ADFHJOQac:

ԻԲ տաղ՝ AEFIKNOQUd:

* * *

Նախապես անհրաժեշտ է նշել, որ Աղթամարցու տաղերի վաղ շրջանի արտագրություններում նկատելի են պարսկերենի ձայնեղների և չնչեղ-խուլերի ոչ օրինաչափ խլացում. մի երևույթ, որ հավանաբար հիմք ձեռագրի կամ գրչի բարբառի հետևանքը կարող է լինել: Մենք գերադասեցինք ընտրել այն տարընթերցվածները, որոնք ավելի են համապատասխանում գրական պարսկերենին:

Միաժամանակ նկատելի են պարսկերենի ձայնավորների տառադարձման հետևյալ օրինաչափությունները.

1. زبر *(a) տառադարձվում է* ա. *ինչպես՝* نادر *(nadāram)* – նադարամ:

2. زیر *(e) տառադարձվում է* ը, *երբեմն միայն* ե (է). *ինչպես՝* دراز *(deraz)* – դըրազ:

3. شپش *(o) տառադարձվում է* ու, *ինչպես՝* گل *(gol)* – գուլ, دشمن *(dosman)* – դուշման:

4. و *(o) հազվադեպ տառադարձվում է* աւ (o). *ինչպես՝* بکو *beqo)* – բըգաւ(o):

5. Բառամիջի և բառավերջի ی *(i) հիմնականում տառադարձվում է* է. *օր.* دیر *(dir)* – դէր, *հազվադեպ է* ی*>*ի *տառադարձումը:*

Բլբուլ *բառը ձեռագրերում բազմապիսի տառադարձության է ենթարկված. գերադասեցինք բերված ձևը, որ ավելի մոտ է պարսկական արտասանությանը, հատկապես եթե նկատի ունենանք, որ* ու*-ն փոխարինում է* o*-ին:*

Տաղ ԺԸ. «Յետ գնալոյ վարդին»

Տող 36. Ազ մա նագահ ռաւթ սըոի ու փինհան.[29]

از مانا که رفت سری و پنهان

Մեզնից հանկարծ գնաց գաղտնի ու թաքուն:

72. Թուրա խաբար ամադ, սալամ ու դուայ.[30]

ترا خبر آمد سلام و دعا

Քեզ լուր եկավ, ողջույն ու մաղթանք:

Ծնթգր. – Թուրա *բառի* رա – را *հետադրությունը այստեղ (ինչպես և ԻԱ տաղի 20-րդ տողում) արխաիկ կիրառությամբ բառին տալիս է անուղղակի խնդրի իմաստ, մինչդեռ պարսկերենի հետագասական շրջանում, ինչպես և ներկայումս,* رա*-ն ուղիղ խնդրի նշանակությամբ է կիրառվում: Այսպես՝ Սաադիի «Գոլեստանի» հնագույն ձեռագիր օրինակներում (ԺԳ դար) անուղղակի խնդրի նշանակությամբ* رա*-ի փաստերը շատ են. օրինակ՝* بخشتی ترا عیسی *«Սևամորթ քեզ նվիրեցի», մինչդեռ ուշ շրջանի ընդօրինակություններում այն փոխարինված է* به *նախդիրով՝* بخشتی بتو را عیسی *«Սևամորթին ք.քեզ նվիրեցի» (տե՛ս P. M. Алиев, Новое издание "Гулистана" Са'ди, "Советское востоковедение", 1956, № 6, էջ 77):*

104. Նադարամ թաղաթ, նա եմ մըսխալ խուն.[31]

ندارم طاقت و یک مثقال خون

Չունեմ ուժ, կարողություն, ոչ էլ մեկ մսխալ արյուն:

29 b եազ: L նագը: f ըգալ *փխ* նագահ: h նակահ: AF ազատ [H հաղաթ: b քաղըտ] *փխ* ռաւթ: ELN ռաւտ: h ռավթ: AEFHLN սղի: b սըոնի: f առի: f սրի: AFH հու *փխ* ու: b չիք ու: JRXWYZe *տողի փոխարեն ունեն՝* Չի գթցես [R գթնուս: XYZ գտնուս: W գտնու: e գտնուն] սիրելիդ [W սիրելիտ] ի յայսմիկ [R ի սմիկ: XZ ի այսմիկ: W ի յասմիկ: e ի յայմիկ] գարնան:

30 L թուր: AEFLN հապար: I հաբար: ABEFGMNbfj ամատ: H օմատ: I ամաթ: L ոմոտ: LM սելամ: AEN տովա: F լութվայ: GIf ղուղա: H դւայ: LM տուայ: b տուվայ: j դվայ:

31 AEFN նաթարամ: H նէդարամ: AE գաղայաթ: FN դաղաթ: H թաղաթն: AF է [EN թէ] *փխ* նայ: H *չիք* նայ: AEFIN եկ: BM էք: f յիք: AEFN *հուն*: M խոյն:

Տաղ ԺԹ. «Ծաղկունքն ասեն»

23. Ամրի թուրայ բաշաղ գըրազ.[32]

24. Բըլբոլ բըգաւ(օ) թու բայ աւազ։[33]

عمر تورا باشد دراز بلبل بکو تو با آواز

Կյանիդ լինի fո երկար.
Բլբոլ խոսիր դու երգով։

Մնթգր. – *Աղթամարցու տաղերի Վիեննայի նոր հրատարակության մեջ 23-րդ տողը թարգմանված է՝ «Կյանք մը ըլլա քեզի, երկայն» (էջ ՃԽԴ)։ Ըստ երևույթին այստեղ* ամրի թուրայ *կապակցության մեջ* ի-ն հասկացվել է որպես وحدت ی =եզակիության հոդ *(անորոշ դերանուն), որը հայերեն թարգմանվում է «մի (մը)», մինչդեռ դա պարսկերենի իզաֆետն է, որ Աղթամարցու մոտ հիմնականում տառադարձվում է* ի-ով, *ինչպես օրինակ՝* ճողիողի սաբաճ= صبح دهدهء *։ Կոստանյանը նույնպես վերջին ձևով է հասկացել և տողը ճիշտ թարգմանել (տե՛ս հիշ. աչխ., էջ 56)։*

25. Մուղան գուֆթան[դ] այ բլբլուլէ.[34]

مرغان کفتند ای بلبل

Թռչուններն ասացին. ո՛վ բլբուլ։

Մնթգր. – *1. Կոստանյանի հրատարակության մեջ* մուղան *բառը* ֆիղան *է եղել, որը* ֆիղան *կամ* ֆըղան *(«ողբ») է հասկացել և տողը թարգմանել է. «ա՛յ ողբասաց սոխակ» (էջ 56)։*

2.Վիեննայի № 344 (ԺԶ դար) = B և № 797 (արտագրված 1604-1626 թ. ձեռագրից) =D տաղարանները տողը տալիս են թարգմանաբար. «Թըռչունքն ասին ով բըլբուլէ» (տե՛ս Ն. Ակինյան, հիշ. աչխ., էջ 77)։

3. Պարսկերենի համար ճիշտ չէ բլբուլ *ձևը. ավելորդ է վերջին է-ն։ Աղթամարցին այստեղ հավանաբար խոտորել է բառի ճչգրիտ ձևից՝ վերջահանգը հաջորդ տողերի հետ հարմարեցնելու համար.*

Մուղան գուֆթան[դ] այ *բլբուլէ*.
Քանի կանչես մէկ պահ լռէ...։

32 M էմրի: O ղուրմի: U թօրա: AFMTU պաշաթ: BEGN բաշաթ: Of բաշա: AFNT թրազ: U արազ:

33 AFMU պլպուլ: EN պուլպուլ: T պիւլպիւլ: f բլպուլ: AFT բրքօ: EN բրքա: G բըգաւվթ: M պըքօվ: O բէգու: U պգայ: f դւթայ: EN դրվ [G ու: M դու] *ւիխ* թու: U րա: f րաւ: M պա ավազ: O թէ աւազ: U մայ աւազ: f թայ աւազ:

34 B մըրղան: EN ֆիրղան: GMTU ֆուրղան: O մուղրան: f ֆրղան: AFT քըֆտայն ա: B գըֆան այ: EN քըֆթայն ա: G գըֆտան այ: M կըֆտայն ա: U գաֆտան այ: f դըֆան ա: AFM պլպուլէ: EN պուլպուլէ: T պիւլպիւլէ: f բլպուլէ:

Տաղ Ի. «Մաքուր պատկերով»

12. Ջեհիէ ճուսճ ու սուրաթ, զեհիէ սումբուլ.[35]

زهی حسن و صورت زهی سنبل

Ինչ բարի երես, ինչ ամբուլ.

Ծնթգր. – *Վիեննայի հրատարակության մեջ տողը թարգմանված է «Ինչքան սիրուն է գեղեցիկ դեմքը, և ինչքան (գերթ) հակինթ»:* Սումբուլ *թե՛ այստեղ և թե՛ ԻԱ տաղի 68-րդ տողում թարգմանված է «հակինթ»: Ճիշտ է,* սումբուլ *բառը այս նշանակությունը նույնպես ունի, բայց տվյալ դեպքում «նարդոս, ամբուլ» ծաղկի նշանակությամբ է օգտագործված:*

15. Բլլբուլ ու ղումրի, լատիֆ ու ղիւաֆ:[36]

16. Հօտհօտի սաբայ և ձէֆար մալաֆ:[37]

بلبل و قمری لطیف و زیرک
هدهد صباح و پیکر ملک

Բլբուլ ու տատրակ, ֆնֆուշ ու ճարպիկ,
Այգաբացի [դու] հոպոպ և պատկեր հրեշտակի:

Ծնթգր. – *Վիեննայի հրատարակության մեջ 16-րդ տողի արաբերեն* սաբայ *«այգաբաց, արշալույս» բառը որպես հատուկ անուն է ընդունված և չի թարգմանված (էջ ճԽԴ):*

23. Ճիկառում ֆապապ, կօզում եաշի ղան,[38]

24. Կէճայ ու կումտուզ ղըլարըմ ֆըղան:[39]

25. Սըբ ու սահարսան, ուզուն նուր ու նար.[40]

26. Թօֆար աղզընտան նօպաթ ու շաֆար:[41]

جکروم کباب کوزوم یاشی قان کیجه و کوندوز قلارام فغان
صبح و سحر سن اوزوم نور و نار تو کرآغزندان نبات و شکر

35 CEN զէ: FMO զէհէ: H զի: Q զիէհ: F հուսճուն: Hf ուսճ ու: M հիւսճ: Q *չիք* հուսճ: ACE ու զեհէ: FMN ու զէհէ: H զի է ու: Q զիհէ ու: f զէհէ ու: A սամպուլ: C սումպուլ: F սաճուր: H սամպօլ: IQ սումբուլ: M սիումպիւլ: N սունպուլ: O սուրաթ *փխ* սունպուլ: f սմպուլ:

36 ACEN պուլպուլ: F պլպուլ: H բլպուլ: M պիւլպիւլ: F խումրի: Q ղոմրիճ: EN զատիֆ: F լաքի: H լարիֆ: Q լաթիւ:

37 ACFMN յօտհօտի: H յօտհաւթի: Q հոտհոտ: IMO սաբաճ: N սափալ: Q սաբաճի: Q *չիք* և: CE փէքեար: f փետար: M փիքիր: N փէքեարը: Q փեքալր ու: f փէքար: A մէլաք: F մալ…: M մէլէք:

38 IOQ ջիգարում: M ճիկէրիմ: f ջըկարում: ACM քէպապ: HIOQ քաբաբ: f քաբապ: HI գեօզում: M կեօզում: Of գօզում: Q գօզմ: H յաշի: Q ազի: f աշի: FN խաճ: I ղամ:

39 HIOQ գէջայ: M կէճէ: f գէճայ: M վէ *փխ* ու: HIOQf գունդուզ: M կիւնտիւզ: C ղըլամ: EIO ղըլարամ: F խրլարըմ: HF էլարամ: M ղըլարըմ: Q ղիլարում: AFINQ ֆիղաճ: CEM ֆիրղաճ: Hf ֆրղաճ:

40 CEN սապահ ու: F սըրբու: H գուճուս: I սուբհ ու: M սուպհ ու: f դու բու: C սէհար: EN սահար: H սահասաճ: M սէհէրսէճ: CEMN իւզուճ: F ուզու: CEN նուր ու նաճ: I ուրի ու նար: MF նուրիճար:

41 CEN տօքար: M տօքէրսիճ: F աղըզտաճ: Hf աղզիճտաճ: I աղզիճդաճ: O եաղզիճդաճ: HIO նաբաթ: M նէպաթ: f նաբօթ: M շէքէր:

Սիրտն իմ այրված, արցունմս է արյուն,
Գիշեր ու ցերեկ ողբում եմ ես։
[Լույս] առավոտ ես, դեմդ հուրհրան,
Թափվում է բերնիցդ նաբաթ ու շաքար։

Ծնթգր. — *1. Կոստանյանը թուրքերեն այս հատվածի 23 և 24-րդ տողերը թարգմանել է «սիրտս այրված, աչք և ունքս արյուն, գիշեր և ցերեկ կոծում եմ» (էջ 61):* Եաշ *բառը ըստ երևույթին նա որպես* կաշ *«ունք» է ընկալել, որով և առաջացել է սխալը:*

Վիեննայի հրատարակության մեջ կօզում եաշի դան *թարգմանված է՝ «աչքերս արտասվալից» (էջ ճԽե), որ նույնպես ճիշտ չէ:*

2. Կոստանյանը 25 և 26-րդ տողերը չի թարգմանել: Վիեննայի հրատարակության մեջ 25-րդ տողի ուզում նուռ ու նար *սխալ կերպով ընթերցված է՝* ուզումնուռ հումար, *որի հետևանքով ամբողջովին աղավաղվել է տողը և թարգմանությունը դարձել անհեթեթ. «Առավոտյան այգեն ավելի երկար է առաքինությունը» (էջ ճԽե):*

Նույն հրատարակության մեջ 26-րդ տողի նօպաթ *բառը չգիտես ինչու «երաժշտություն» իմաստով է հասկացվել և տողը թարգմանվել է. «Կը հոսե բերնեն երաժշտություն և շաքար», մինչդեռ դա նույն նաբաթ (շաքարից պատրաստված քաղցրավենիք, բյուրեղյա տեսքով. մինչև այժմ էլ Պարսկաստանում և Միջին Ասիայում օգտագործվում է) բառն է, որ պարսից բանաստեղծության մեջ «շաքար»-ի հետ համազոր կիրառություն ունի:*

Տաղ ԻԱ. «Դու ես արեգակն»

3. Բաշադ ֆի շաւի Իսուֆի Քանհան.[42]
4. Է նօռասիդայ ղուլի բա բօստան։[43]

باشد که شوی یوسف کنعان
ای نو رسیده کلی به بوستان

Թերևս լինես Հովսեփ Քանանցին,

Ով դու պարտեզի նորահաս (իմա՝ նորաբաց) ծաղիկ։

Ծնթգր. — *1. Վիեննայի հրատարակության մեջ այս տողերը թարգմանված են՝*

Երանի թե դուն ըլլայիր Հովսեփ Քանանացին,
Ով նորահաս, վարդ ու բուրաստան։

Գոլ *և* բուստան *(բոստան) հայերեն հաճախ թարգմանվում են «վարդ» և «բուրաստան», բայց պարսկերենում* գոլ *ընդհանրապես «ծաղիկ» է նշանակում, իսկ* բուստանը՝ *«պարտեզ», ուստի մենք գերադասեցինք վերջինները, որովհետև համեմատությունը ավյալ դեպքում ընդհանրապես է կատարված:*

42 AFJac պաշաթ: DO բաշաթ: AF շօվի: D շօի: HO շաֆի: c շովի: AF եուսուֆի: H իսուֆի: J յուսուֆի: O ուսուֆի: A քիանհան:

43 AF նավռասիդա: D նայռասիդա: H նօվըռասիդայ: O նաւբռուզիդայ: c …ըռուզիդա: AF կուլիլա: a զուլիլա: c գիւլի: Afa *չիք* բա: O րէ. c դէր *փխ.* բա:

2. 4-րդ տողում գրական պարսկերենին կհամապատասխաներ բա-ն *փոխարինել c ձեռագրի դէր «մէջ» տարընթերցումով, բայց բոլոր ձեռագրերը, այդ թվում և Ն. Ակինյանի հրատարակածները ունեն* բա *(*به *– be) նախդիրը, որը «մէջ» իմաստով օգտագործված է պարսից դասական գրականության մէջ, այսպես. Սաադիի «Գոլեստանի» ամենավաղ ընդօրինակություններում (ԺԳ դ.) պահպանված է այս նախդրի ճիշտ նույն կիրառությունը, որը ուշ չրջանի ձեռագրերում՝ իմաստի տարբերակման հետևանքով, փոխարինված է* در *(dar) «մէջ» նախդրով.*

شب را به بوستان یکی از دوستان اتفاق مبیت افتاد

«Գիշերեցիմ բարեկամներից մեկի պարտեզում (be bōstan)»[44]

Բա *(be)-ի նման կիրառություն կա նաև Արիֆի (ԺԴ դ.) մոտ:*

به کورستان باکو کنبدی هست زند هر که بیند دست بر دست[45]

8. Ջըրա դէր ամպի բէմարամ բէ թու.[46]

چرا دیر آمدی بیمارم بی تو

Ինչո՞ւ ուշ եկար, հիվանդ եմ առանց քեզ.

Ծնթգր. – *Վիեննայի հրատարակության մէջ տողը ճիշտ է թարգմանված, բայց ունի մի ավելորդ բառ, որ բնագրում չկա. «Ինչո՞ւ ուշ եկար* տուն*…» (էջ ճԽե).*

Ջնայած տողի ճիշտ թարգմանության՝ պարսկերեն բնագրի բէմարամ *«հիվանդ եմ» բառը չգիտես ինչո՛ւ փոխարինված է* բէբարամ *(էջ ճԽե): Այստեղ սոսկ մ>բ հնչյունափոխության կամ տառասխալի հետ չէ, որ գործ ունենք, որովհետև դրքի էջ 91-ում, տարընթերցումների մէջ,* բէմարամ*-ի դիմաց Ն. Ակինյանը ծանոթագրում է՝ «կարդա՛ բէ բարամ», որը, իհարկե, ճիշտ չէ:*

13. Թու բէթըլմամուր և մաֆաթուլլայ:[47]

تو بیت المعمور و مکت الله

Դու բեյթոլմամուր և Մեքքե աստուծո:

Ծնթգր. – *Վիեննայի հրատարակության մէջ* բեյթոլմամուր *թարգմանված է «տուն փափագի» (էջ ճԽե), մինչդեռ բառս (արաբ.* بیت المعمور*) ըստ մուսուլմանական հասկացողության երկնային այն տունն է, որ գտնվում է Մեքքեի սրբավայրի (*بیت الله الحرام*) դիմաց:*

44 Տե՛ս *Р. М. Алиев*, *Новое издание "Гулистана" Са'ди*, "Советское востоковедение", 1956, № 6, էջ 77:

45 Տե՛ս Мухтәсәр Азербайчан әдәбийяты тарихи, ճ. 1, Բաքու, 1943, էջ 118:

46 DHJa չրա: O չրայ: Q չոա: H զուր: J տիր: Q դր: a զէմ: AF ամատի: D ամաթի: H օմատի: J էմէտի: O այմաթ: Q ոմադի: a ամադէ: A պիւմարամ: Da րիմարամ: F պիամարամ: J պիմարամ: O միմարամ: Q վիմամ: AF պէ թու: H բայ թու: J բի դոյ: O բէ դու: Q րը թու: a րէ դու:

47 AFO դու: H թոյ: a տու: AF բեթըլմամուր: O բէթըլմամուլ: Q բեթլմամուլ: c պէտիլմապուռ: Q ի (c ու) *փխ* ե: D մաքայթուլայ: Q մաքաթլաճ:

15. Բըսթանամ թասւէհ բրփուշամ խրղայ։[48]

بستانم تسبیح بپوشم خرقه

Թազրեհ ձեռ բեռեմ, հագնեմ ես ֆուռն։

Ծնթգր. — ***Վիեննայի հրատարակության մեջ տողս թարգմանված է՝ «Կ'ուզեմ առնուլ թեզպեհը, հագնիլ սքեմ» (էջ ճԽԶ):***

20. Դուշմանի թուրայ շաւադ ջիգարխուն։[49]

دشمن ترا شود جکر خون

Քո թշնամու սիրտը դառնա արյունոտ

(բառացի՝ Քո թշնամին դառնա արյունասիրտ):

Ծնթգր. — *1.* թուրա ***բառի համար տե՛ս ԺԼ տաղի 72-րդ տողի մեր ծանոթագր.:***

2. ***Վիեննայի հրատարակության մեջ տողը ընթերցված է՝ «Դուշմանի չումա չաւի ջիգարխուն» (էջ ճԽԶ), որի բառացի թարգմանությունը կլինի՝*** «Ձեր թշնամին լինես ***արյունասիրտ»: Ճիշտ է, մի քանի ձեռագրեր տալիս են նման տարընթերցումներ, բայց դրանք բացահայտ սխալ են, որովհետև, նախ՝ ամբողջ տաղի մեջ թե՛ հայերեն և թե՛ պարսկերեն տողերում դիմումը արվում է եզակի դու-ով և, երկրորդ՝ ենթակայի ու ստորոգյալի դեմքերի (թշնամին լինես) ակնբախ անհամաձայնություն գոյություն ունի:***

23. Է՛ ամբարֆըշան հուրի ու փարի։[50]

ای عنبر فشان جوری و پری

Ո՛վ համպարաբուխ հուրի ու փերի։

Ծնթգր. — ամբարֆըշան — عنبر فشان ***բառը Վիեննայի հրատարակության մեջ թարգմանված է «ամբարսփիւռ», սակայն նպատակահարմար է այն թարգմանել «համպարաբուխ», ինչպես ունենք*** աթաշֆըշան — آتش فشان ***«հրաբուխ», որ ավելի ճիշտ է:***

30. Ջանգ աստ ու լաշքար մէֆունի թադբիր։[51]

جنک است و لشکر میکنی تدبیر

Պատերազմ է և դու բանակ ես պատրաստում։

Ծնթգր. — ***Տե՛ս էջ 209–210:***

---

48 A պրստանամ։ DO բստանամ։ F պստանամ։ H բըստանամ։ Q բուսանամ։ a բըրտանամ։ c բստուանամ։ AF թազպեհ։ D թարէհ։ H թասպի։ Oa թզրէհ։ Q թասբեհ։ c թասպէհ։ AFa բըփօշամ։ D փուշանամ։ O բարփաւշամ։ Q բրդփուշամ։ c փըփուշամ։ AF ղըրխայ։ H խըրղայ։ O խըրհայ։ Q խըրխայ։ c խրխա։

49 AFa տուշմանի։ D դուշմաի։ H թօրայ։ AF շումա (D շումեայ։ c շօմա) *փխ* թուրայ։ AF շաւի։ D շօի։ H շօվաթ։ J շաւէթ։ O շաւի։ a շաւաթ։ AF ճիկարխուն։ D ջիկարխոյն։ J ջիգարխոյն։ O ջիգարհուն։ a ջիւարխուն։ c ջիկարիխուն։

50 AF ամպարֆըշան։ D ամբարփշան։ H ամպարփշան։ O ամբարֆիշան։ c անպարֆիշան։ H փահրի։

51 AF ճանկ ասա։ H ջանգ ասա։ a ջանգ աստան։ F լալքար։ Aa մեքունի։ F մէքուն։ AF թատպիր։ D թաթքիր։ H թապտիր։

32. Ջեհէ հումմ ու հրաման, զեհէ սախթադիլ։[52]

ز هی حکم و فرمان ز هی سخت دل

Ինչ հուքմ ու հրաման, ինչ դաժանություն։

Ծնթգր. – *Վիեննայի հրատարակության մեջ տողը թարգմանված է. «Մերթ պատվեր և հրաման, մերթ կարծրասիրտ (կեցվածք)» (էջ ճխՋ). Ջեհէ – ز هی բառը նշանակում է «Ինչ, ինչքան», մինչդեռ այստեղ թարգմանված է «մերթ», որ ճիշտ չէ, այն դեպքում, որ Ի տաղի 12-րդ տողում նույն բառը թարգմանված է «ինչքան» (էջ ճխԴ)։* Սախթադիլ *բառացի նշանակում է «կարծրասիրտ», որ և համազոր է* դաժանության*։ Տվյալ դեպքում ավելորդ է «կեցվածք» լրացուցիչ բացատրությունը։ Մեր թարգմանությունը բանաստեղծության իմաստը ամբողջացնում և ավելի հստակ է դարձնում. տաղի 33-րդ տողում ասված է՝*

«Թրով ու սրով շատ nf խոցեցիր» (էջ 92),

որի համար էլ բանաստեղծը մեղադրում է իր սիրածին՝ ասելով.

«Ի՛նչ հումմ ու հրաման, ի՛նչ դաժանություն»։

43. Բըդէ փիալէ ու շիրին շարբաթ,[53]

44. Մուդա զընդա fունի դարի fարամաթ.[54]

بده پیاله و شیرین شربت
مرده زنده کنی در کرامت

Փիալե տուր ինձ և fաղցր օշարակ,
Կյանք ես տալիս մեռյալին, ո՛վ դու հրաշագործ։

Ծնթգր. – *Վիեննայի հրատարակության մեջ այս տողերը թարգմանված են՝*

Տուր ինձ բաժակ և fաղցր օշարակ,
զմարդ կը կենդանացնես, դուն ունիս
հրաշքի զորություն (դուն հրաշագոր ես) (էջ ճխՋ)։

Այստեղ 44-րդ տողի մուդա – مرده *«մեռյալ» ընթերցված է* մարդա *և թարգմանված «զմարդ», բայց այս դեպքում պարսկերենը պետք է լիներ* մարդ rա – مرد را*։ Բայց անգամ նման ընթերցումով բանաստեղծության իմաստը խաթարվում է. այստեղ խոսքը մեռյալին կյանք պարգևելու մասին է։*

64. Բուգիմ խիրադմանդ fարղի դիւանայ.[55]

52 D զէհէ… զէ: H զի է… զի է: O զէհէ… զէհէ: a զէ… զեհե: ADF սահթադիլ: HO սահտայդիլ. a նահթադիլ: Ուղղում ենք հ>խ *ըստ Վիեննայի* № 684 ձեռագրի (տե՛ս **Ն. Ակինյան**, հիշ. աշխ., էջ 92)։

53 AF պըթէ: DJ պտէ: a պէ: AC փիեալէ: DHJO փիալայ: a փիլալայ: c փիյալայ: H շիրին շիրաի: J շին: AFc շարպաթ: J շարաթ:

54 ADFH ու փխ մուրդա: J մուրտէ: Oa մրդայ: c մուրատ: F զրդա: H զանտայ: J զնտան: f զնտա: Jc քուն:

55 AF պութիմ: DH բութիմ: O բաւթիմ: a բուդէմ: Aa խիրաթմանդ: F խրատմանդ: HO խիրամանդ: DH քուրդ քարդի: AF գևանայ:

بودیم خردمند کردی دیوانه

Իմաստուն էինք, դու խելագարացիր։

66. Նաւ (օ) բլլբոլ ամատ ղումրի ու հօտհօտ.[56]

نو بلبل آمد قمری و هدهد

Նոր բլբոլ եկավ, տատրակ ու հոպոպ.

68. Նաւ (օ) ղոլ ու սումբոլ ես էի կարոտ.[57]

نو کل و سنبل...

Նոր վարդ ու ամբոլ…

Ծնթգր. — *1.* Սումբոլ *բառի համար տե՛ս Ի տաղի 12-րդ տողի մեր ծանոթագրությունը:*

2. Բոլոր ձեռագրերը ունեն հօտհօտ, *ճիշտ տառադարձությամբ պետք է լիներ* հօդհօդ, *պահում ենք առաջին ձեր բանաստեղծության տան հանգավորումը չխախտելու համար, որ է.*

Նոր գարուն եղև և նոր առաւօտ.
Նօ բլբլբոլ ամատ ղումրի ու հօտհ*օտ*.
Նոր ձայն առնակեց, նոր նստաւ ի *մօտ*.
Նօ ղոլ ու սումբոլ ես էի կար*օտ*։

Տաղ ԻԲ. «Դու դրախտ եդմայ»

15. Քօհի Սլբաանդել և փուս էմիայ[58]

کوه سرندل و پر کیمیا

Սրաանդել լեռն [ես]՝ լի էիմիայով (իմա՝ հարստությամբ)։

37. է մահի թամամ, դրհանի թանկթար.[59]
38. է համան աբրու, սարմաստի նիգար։[60]

ای ماه تمام دهان تنکتر
ای کمان ابرو سرمست نکار

56 ADF նոր: H նով: A պուլպուլ: F պլպուլ: H բօլպօլ: AF ամատ: DH օմատ: O աճու *փխ* ամատ: D *չիք* ու:

57 AF նա: H նօվ: AF կուլ: AF սամպուլ: D սանբուլ: H սամպօլ: O շուքուֆթա ու սամբօլ: A շուքուֆթա *փխ* սունբուլ: Ոչ մի ձեռագիր այս տողում *սումբոլ* ձևը չի տալիս. ուղղում ենք Ի տաղի 12-րդ տողի հիման վրա:

58 K քաֆի: d դաֆի: I սըրաանդեղ: K սրաանտալ: U սրաանգել: d սէրէնտիլ: FK փաս: d փիո: K քիէմիայ: O փառք է իմայ: U քիմիայ: d քիմիեա: EN տողի *փխ ունեն*՝ Լեառըն Վարագայ և Գալիլիեայ:

59 U թապան *փխ* թամամ: d տենտան: AFUd տրհանի: EN դահանի: K ու հանի: AEFKN թանկտար: I թանգթար: O թանգտար: U թանկտան: d թէնթար:

60 EN չիք է: D էյ: d քէմպան: AEFNOU ապրու: d էպրու: EN սարէմէնդու: U սարևմաստի: d սէրմէսի: AEFNOU նիկար: d նիկեար:

Ո՛վ լիալուսին, ճեղքեւան.
Ո՛վ աղեղաճոմ, սիրածին հարբեցնող.

Մնթգր. – *38-րդ տողի* սարմաստի նիգար *Վիեննայի հրատարակության մեջ թարգմանված է «գինովցած սիրելի» (էջ ճխէ). այստեղ* սարմաստի ի *իզաֆետը հաշվի չի առնված, որը և սխալի տեղիք է տվել: Ի դեպ պիտի ասել* սարմաստի *բառում վրիպակ է թույլ տված՝ տպագրված է* արմաստի, *իսկ էջ 98-ում՝ բնագրի մեջ ճիշտ է:*

41. Սումբուլ ’ւ ռայհան, լալէ ու դուլգար.[61]
42. Բլլբուլ գուանդա ամադ բա բահար.[62]
43. Նալա ու ֆիդան մէֆունաթ սահար.[63]
44. Բաշադ ֆի բինամ ըռուի դիլդար:[64]

سنبل و ریحان لاله و کلزار
بلبل کوینده آمد با بهار
ناله و فغان میکند سحر
باشد که بینم روی دلدار

Սմբուլ ու ռեհան, կակաչ ու ծաղկունք,
Երգիչ սոխակը եկավ գարնան հետ.
Ողբ ու կոծ է անում [մինչև] առավոտ.
Թերևս տեսնեմ դեմքը սիրածիս:

Մնթգր. – *1. Վիեննայի հրատարակության մեջ 42-րդ տողի* գուանդա *բառը ընթերցված է* գաւանդայ, *որը գրչական սխալ է համարվել և ենթադրվել է, թե պետք է* գաւանդա *կարդալ (ի դեպ՝ չնայած տողատակի ծանոթագրության, էջ ճխէ-ում բառը* գաւանդա *էլ մնացել է), որը և թարգմանվել է «վազելով», մինչդեռ դա պարսկերեն* գույանդե *– ասյոք «երգիչ, ասացող» բառն է և գործածական է պարսից բանաստեղծության մեջ. հիշենք թեկուզ Սաադիի հետևյալ բեյթը.*

اول اردیبهشت ماه جلالی
بلبل کوینده بر منابر قضبان

Ջալուլի [տոմարի] օդիբեհիշտ ամսի սկիզբն էր.
Երգիչ սոխակը ճյուղերի վրա [երգում էր]:

(Տե՛ս 15 ص ،1248 برلين ،کلستان ،سعدی شیرازی, *Սաադի Շիրազի, Գուլեստան, Բեռլին, 1348/1927, էջ 15):*

61 AF սանպուլ: I սամբուլ: XU սունպուլ: O սմբուլ: U չիք ’ւ: F ըռեհան: NU ըռահան: Q ըռիհան: AFIO լալա: U լալահ: AF կուլզար: EN կուհար:

62 AF պլպուլ: ENU պուլպուլ: AF կավանտայ: EN կուվանտէ: I գաւանդայ: U կուվանտա: AFO ամատ: EN ամաթ: U աւմատ: OU պայ: EN հաբաբ: U պահար:

63 AF նալայ: EN լալէ: O նաշալ: U նալ: F մեքունաթ: I մէքուաթ: O մէգուաթ: U միքունաթ: EN սէհար: I հազար *փխ* սահար:

64 AEFNU պաշաթ: I բաղաթ: O բաշաթ: AFU պիպինամ: EN քի պինամ: I քբինամ: O բիբինամ: EN ըռաւնի: U ըռուհի: AEFNU ահլտար:

Կոստանյանը (էջ 65) այս բառը նույնպես գուանդա *է ընթերցել և թարգմանել է «երգեցիկ»:*

2. 43-րդ տողը Վիեննայի հրատարակության մեջ թարգմանված է. «Կը հեծե և կ'ողբա առավոտը լուսացնելով» *(էջ ձԽԷ): Ընդգծված բառը ավելորդ է և չի բխում բնագրից:*

3. 44-րդ տողի ըռուի – ری *«դեմք» Կոստանյանը ըռահ –* ہار *«ճանապարհ» է ընթերցել (էջ 66), որը ճիշտ չէ:*

59. Սահրա մէզարդամ համչու Մաջնուն.[65]

60. Իմոօզամ Ֆըրհատ դիլի ման փուռ խուն.[66]

صحرا میکردم همچو مجنون
امروزم فرهاد دل من پرخون

Թափառում եմ անապատում հանց Մեջնուն.
Այսօր Ֆարհատ եմ, սիրտս լի արյուն.

Մնթգր. – *Վիեննայի հրատարակության մեջ 60-րդ տողը չնայած ճիշտ է թարգմանված (էջ ձԽԸ), բայց* ղիլի ման *ընթերցված է* ղիլիմ ա, *որը սրբագրելի է:*

63. Շօխշանգ շահարի, ըռու արզաւան.[67]

64. է լ[ա]պ աղիղի ու դուռի դանդան:[68]

شوخ شنگ شکری رو ارغون
ای لب عقیقی و در دندان

Ջվարթ ու գեղեցիկ (իմա՝ շողշողուն) շահար ես [և] կարմրադեմ.
Շրթերդ սարդիոն և ատամներդ մարգարիտ:

Մնթգր. – *64-րդ տողը տալիս ենք ըստ Վիեննայի հրատարակության ընթերցման, չնայած վերջնականապես համոզված չենք, որ ճիշտ ձևն է գտնված:*

67. Սէ ոօզ բուդիմ փէշի թու մէհման.[69]

---

65 սէհրա: AOU մէքարդամ: E մուքարթամ: F մէքարտամ: N մաւքաթարամ: d ձէքերտեմ: IOUd համչուն ու: AO մաճնուն: EN ու մաճլուն: F ու մաճնուն, U համչում. d. մէջն: Q *տողի փոխարեն ունի՝* Սըճարի կարդամ ինձ նշմունքն իմ աչուն:

66 Q իմզուռամ: d իմսօզէմ: ANU ֆըրհաթ: O ֆըրհահ: Q ֆըրյադ: d ֆէրեաթ: AU տիլի մա: EN տիլի մէ: I դիլի մայ: O դիլեմայ: d տիլամ: Q փրո: d փուր ու: A հուն: EN հաճ:

67 AF շօղշանկ: O շաւղշանգ: Q յուշանք: AFU շաքարին: IO ճուռի: Q հրու: Q աւաղան *փխ* արղաւան: U արղուան: d տողի *փխ ունի՝* շէֆխ շէմսի սիֆէթ շէքլի էրղէվան:

68 A ուէլ պաղիղու: FIO ու էլ պաղիղի: Q ելպայ աղեղի: U ու էլ պաղիղուէճ: QU և *փխ* ու: AU ճուրի դանդան: F տուրի տանտան: Q դիտա դանդան: d *տողի փոխարեն ունի՝* տոհանի սէտէֆ էզ դուրի դանդան:

69 AFU ըոօզ: Q ռուզ: U ըռուզ: AF պութիմ: O բութիմ: Q բաւշամ: U պուտիմ: A փէշէ: U փիշի: O դու *փխ* թու: I մէհուան:

68. Մառանջ մէրաւամ, սարվարի խուբան.[70]

سه روز بودیم پیش تو مهمان
مرنج میروم سرور خوبان

Երեք օր ֆեզ մոտ ձյուր էի.
Մի՛ տխրիր, գնում եմ, [ո՛վ] գեղեցիկների գլխավորը:

Մնթգր. — *Վիեննայի հրատարակության մեջ 68-րդ տողը ճիշտ է ընթերցված, բայց թարգմանված է սխալ. «Մի նեղանար, որ չերթամ, ով դու գեղեցիկներու ամենամեծը» (էջ ՃԽԸ):* Մէրաւամ — میروم *պարսկերեն* رفتن «գնալ» *բայի սահմանական եղանակի ներկա ժամանակի առաջին դեմքն է, որ թարգմանվում է «գնում եմ» և ոչ թե միանգամայն հակառակը՝ «չերթամ»:*

71. Ջուն թարկ բըդահամ ղուլի խօշբուի.[71]

72. Գար բինամ հազար ջաւր ու սըթամի:[72]

چون ترک بدهم کل خوشبوئی
کر بینم هزار جور و ستمی

Երբ [ֆեզ] թողնեմ (իմա՝ թողնում եմ)՝
բուրավետ դու ծաղիկ ես.

Թե [ֆեզ] տեսնեմ (իմա՝ տեսնում եմ)՝ հազար
բռնություն ու անիրավություն ես:

Մնթգր. — *Վիեննայի հրատարակության մեջ տողերը ճիշտ են վերծանված, բայց էջ ՃԽԸ-ում* ջաւր *բառի մեջ տառասխալ է թուլլ տրված և տպագրված է* զօր, *այն դեպքում, երբ բնագիրը (էջ 99) ունի* ջաւր*: Պարսկերենի չարահյուսության օրենքները բացառելու,* խօշբուի *և* սըթամի *բառերի ի դիմորոշ հոդերը, ինչպես նաև չուն բառի «երբ» համազոր իմաստը նկատի չառնելու հետևանքով տողերի թարգմանությունը այս հրատարակության մեջ հետևյալ պատկերն է ստացել.*

Ի՞նչպես կարող եմ թողնել հոտավետ վարդ մը,
Եթե տեսնեմ (իսկ) հազար բռնություն, պատիժ (էջ ՃԽԸ):

---

70 A մառանչ: U սապահ *փխ* մառանջ: A մերաւամ: I մէրովամ: Q մերաւեմ: U միռավամ: I սարուար ու: Q սալուվարի: AI խուբամ: F խուպամ: U խուտամ: d 67, 68 *տողերի փոխարեն ունի հետևյալ աղավաղված թուրքերեն հատվածը.*

մէթինտէն օլտում ղայաքըլուրյամ.
նիճօլար ճալ դարշի տուրտուղում զէման:

71 AEN չունկ: I թարք: O թանգ: Q թարգ: AEN պըթահամ: F պըդահամ: I բըդամ: Q բըդահեմ: U պըդէճամ: AEN կուլի: O գիւլի: E խօշբուխ: O խաւզ բուի: Q խալ բոյի: U խաւշ մուի:

72 EN գարբինամ: FO գար բինամ: Q կար բէնամ: U ագար պինամ: U պինկ *փխ* հազար: EN ճավրի սիթամի: I ջօր: O ջուր: Q որ ճէնց սհաթ մի:

Սխալաշատ է նաև Կ. Կոստանյանի թարգմանությունը՝ «մինչև իսկ մոռանամ (թարկը տամ – թարկ բրդահամ), անուշահոտ վա՛րդ, թե տեսնեմ, հազար առատություն, վայելչություն» (էջ 66):

РАСШИФРОВКА ПЕРСИДСКИХ СТРОК В ПЕСНЯХ ГРИГОРИСА АХТАМАРЦИ

(Р е з ю м е)

В конце XV и в начале XVI вв. на острове Ахтамар (Ванское озеро) жил и творил Григорис Ахтамарци, один из крупнейших представителей средневековой армянской поэзии.

20 Ըստ պրոֆ. Մինորսկու Ֆազլոլլահ Նաիմին ծնվել է 740/1339 թ. և Միհրանշահի կողմից մահապատժի է ենԹարկվել 804/1401 թ. (տե՛ս *Bulletin of the School of Oriental and African Studies University of London*. 1954, vol. XVI, part 2, էջ 273): Նաիմիի մահապատժի պրոֆ. Մինորսկու նշած թվականը չի համընկնում Անկարայի վերը բերված ձեռագրի հիշած թվականին, որը 796/1394 թ. է:

կերեն լեզվին: Բայց այս փաստարկը ժխտվում է Ծրիկի ողջ ստեղծագործության ոգով, որը միանգամայն հակասում է քառյակի պարսկերեն բնագրի մեջ արտացոլված միստիքական սիրո հասկացողությանը: Հայ թարգմանիչը սրանից խուսափելու համար և որպեսզի այդ սերը, ինչպես Կոստանդին Երզնկացին կասեր «ի մարմին» չհասկացվի, չաղավաղելով հանդերձ քառյակի գաղափարական հենքը՝ զոհվելու գաղափարը, «սիրո զոհարան (բնագրում՝ խոհանոց)» խոսքերը թարգմանել է՝ «ի սուրբ սեղանոյն վերայ», իսկ վերջին տողի մուսուլմանական սովորությունը՝ «Պիղծ կլինի այն [կենդանին], որին չեն մորթում» չատ նուրբ և վարպետորեն փոխարինել է քրիստոնեականով՝ «Գիտեմ՝ անպիտան դառնայ այն մատաղն, որ զինքն չը զեննեն»:

Հնարավոր է նաև մի այլ ենթադրություն. միգուցե թե՛ պարսկերեն քառյակը և թե՛ նրա հայերեն թարգմանությունը հետամուծ են, որևէ գրչի քմահաճույքի արդյունք: Բայց սա ևս ժխտվում է, երբ մանրամասն քննության ենք առնում Իվ բանքը ամբողջությամբ վերցրած:

ՆՈՐԻՆ ՖՐԿԱՆՆ ԱՍԱՑԵԱԼ[21]

Ի սուրբ սեղանոյն վերայ ման զաղէկն այլ իրէ չի զենեն,
Ջնիխարն ու զվատուն[22], եղբայրէ, Աստուծոյ զայն ե՞րբ ղըբըլեն:
Թ'ողոդ սիրելի ես դու, հանց արա, որ զրեզ չհոտեն,
Գիտեմ՝ անպիտան դառնայ այն մատաղն, որ զինին չը զեննեն[23]:

Գեմ զայս դու գիտես, եղբայր, որ յէգուց ըզրեզ կու կոչեն,
Դու հանցեղ ճարակ արա, որ անդէն ըզրեզ չի զենեն:
Թէ խելէ ու բասար ունիս և էրննես ամէն շահ ու զէն,
Լինիս դու աստէն մատաղ, որ անդէն ըզրեզ ղըբըլեն:

Թէ չար, թէ բարի գործեա յաւէ աւր զամէն կու գըէն,
Յորժամ որ դիւան դրնեն՝ զայն դաւթարն յառաջ կու բերեն:
Ջինչ որ էեզ վերայ մընայ չար մարդոյ՝ ի դէմ կաորնեն.
Ում խելէ ի վերայ լինի, զայն պարտիէն աստէն վրճարեն:

Բարաթ մի աստի առնուն, որ յէգուց ի հաւն ցուցանեն,
Թէ չէ ե՞րբ Ջատիկ լինի, որ ամէնն ուտեն ու խրմեն:
Լինիս դու ի մեծ զընդան, չար ուզողէն ըզրեզ կու կախեն,
Պահանջեն ըզգործըն էո, զինչ արեր աստէնս՝ կու գիտեն:

Նախապես ասացինք, որ Տիրայրի կազմած Դիվանի Ի, ԻԱ, ԻԲ քերթվածները Բոդլեյան ձեռագրում մի ամբողջություն են կազմել: Ուշադիր ընթերցումը ցույց է տալիս, որ բացի վերջահանգերի ձևական տարբերությունից, այդ քերթվածներից յուրաքանչյուրը առանձին մի բանաստեղծություն է իր սեփական այուժեով, որտեղ բանաստեղծը

21 Այս վերնագիրը Տիրայր արքեպիսկոպոսի հավելումն է:

22 Տիրայր արքեպիսկոպոսը ձեռագիր բնագրի *զվատուն* ուղղել է *զվատուժ*, որը սխալ է. պարսկերեն բնագրում خوشت زن «վատաբարո» է ճշանակում, հետևաբար պետք է թողնել բնագրի *զվատուն* ձևը:

23 Քառյակը տալիս ենք, ինչպես 110 էջում, ըստ Բոդլեյան ձեռագրի:

մի կոնկրետ հարց է դնում, զարգացնում և հասցնում է տրամաբանական վախճանի, բայց այդ երեք բանքերը մի ընդհանուր գաղափարական գիծ ունեն. դա հանդերձյալ կյանքի ապահովման հարցն է, որին հասնելու համար, նախ՝ ի բանքում հորդոր է արվում այս աշխարհում (աստէնս) բարուքթյուն, լավութթյուն անել, որպեսզի այն կյանքում (անդէն) «բարուքթեան հասանիք», այնուհետև ԻԱ բանքում զարգացվում է այս կյանքում (աստէնս) զոհաբերվելու (մատաղ լինելու) գաղափարը, որպեսզի անդրշիրիմյան կյանքում (անդէն) մարդը ընդունելի լինի, ի վերջո՝ ԻԲ բանքում խորհուրդ է տրվում պահքով ու արտասուքով թողութթյուն որոնել, գթառատ ու առանց նենգութթյան լինել, որպեսզի այս աշխարհից (աստի) ելնելուց հետո անհատը անմահութթյուն գտնի, որովհետև հանդերձյալ կյանքին արժանի է միայն բարեգործ, անձնազոհ և պահքով ու արտասուքով իր կյանքը անցկացնողը և ոչ թե մեծատունը:

Սակայն չնայած գաղափարական ընդհանուր գծին՝ այս քերթվածներից հատկապես առաջին երկուսը (Ի, ԻԱ) լեզվաարտահայտչական միջոցների կիրառմամբ, հատկապես բառապաշարով, նույնպես շատ ընդհանրութթյուններ ունեն: Այսպես.

1) Նույն բառերով համարյա նույն մտքերի կրկնութթյուններ.

ա) «Թէ խելք ու բասար ունիս» (բանք Ի, տող 46, բանք ԻԱ, տող 9)[24]:

բ) «Ճարակ դուք հանցեղ արէք» (Ի, տող 34).

«...Դու հանցեղ ճարակ արա» (ԻԱ, տող 8).

գ) «Ջանա աստէնս ճար արա», որ չըլնիս յանդէն խոտելիք (Ի, տող 7).

«...Դու հանց արա, որ գքեզ չի խոտեն» (ԻԱ, տող 5):

2) Այնպիսի օտար բառերի օգտագործում, որ բնորոշ է միայն Ֆրիկին.

ումեկ – سید, փոչըմնել – شمان نشیڤ, թագըիր – تبیر, ղումաշ – شاڤ, բասար – صبر (Ի).

ղըբըլ – قبول, բասար – صبر, գէն – زین, դիւան – دیوان, դաւթար – دفتر, բարաթ – برات, գնդան – زندان (ԻԱ):

Ստեղծագործական այս ողջ հենքի վրա թարգմանված քառյակը ինչ-որ ավելորդութթյուն չէ, ընդհակառակը այն կազմում է ԻԱ բանքի անքակտելի մասը, ավելին՝ ողջ բանքը կառուցված է հենց քառյակում զարգացվող գաղափարի վրա և բխում է նրանից: Բայց քառյակում և նրա չարունակութթյան մեջ միայն գաղափարական բովանդակութթյունը չէ, որ ընդհանուր է, ընդհանուր են նաև նրանց տաղաչափութթյունը, լեզվաարտահայտչական միջոցներն ու բառապաշարը.

ա) Ինչպես թարգմանված քառյակը, այնպես էլ ողջ բանքը գրված են 7-3-5 ոտքով: Այս չափը բնորոշ է Ֆրիկի ողջ ստեղծագործութթյանը. «Դիվանում» նրան վերագրված 51 բանաստեղծութթյուններից 27-ը այս չափով է գրված.

բ) թե՛ թարգմանված քառյակը և թե՛ ողջ բանքը գրված են եա վերջահանգով.

գ) թե՛ քառյակի և թե՛ նրա չարունակութթյունը կազմող ողջ հատվածի բառապաշարը նույնն է.

---

24 Տողերի թիվը նշանակում ենք ըստ Ֆրիկի դիվանի:

դ) Թարգմանված քառյակի և բանքի մնացյալ հատվածի մեջ, ինչպես Ֆրիկի մյուս գրվածքներում, հաճախակի է օգտագործված nr *չաղկապով ստորադասական երկրորդական նախադասություն. օրինակ՝*

Թ'ողորդ սիրելի ես դու, հանց արա, nr *զքեզ չհոտեն (տ. 5)*

Գիտեմ անպիտան դառնայ այն մատաղն, nr *զինքն չի զենեն (տ. 7)*

Գեմ զայս դու գիտես, եղբայր, nr *յէգուց զքեզ կու կոչեն (տ. 8)*

Այսպես են կազմված նաև 10, 15, 16 տողերը:

Բերված փաստերը, թվում է, բավարար ապացույց են, որ քառյակի թարգմանիչը նույն ինքն է ո՛վ հորինել է ԻԱ բանքի մնացած հատվածը: Իսկ այս բանաստեղծությունը համեմատության դնելով Ֆրիկի մյուս, հատկապես ԺԶ, ԺԷ, ԺԸ, ԺԹ, Ի քերթվածների հետ, աներկբայելիորեն գալիս ենք այն եզրակացության, որ քառյակի թարգմանիչը կարող էր լինել ոչ այլ ոք, քան այս բանաստեղծությունները հորինողը, իսկ քանի որ Ֆրիկն է դրանց հեղինակը, ուրեմն և կարող ենք հաստատապես ասել, որ քառյակի թարգմանիչը Ֆրիկն է:

Արդ, եթե Ֆրիկն է քառյակի թարգմանիչը, ապա այն կարող է թարգմանված լինել միայն 13-րդ դարի երկրորդ կեսում, իսկ քառյակի հեղինակ կարող է լինել մինչ այդ ժամանակը ապրած որևէ բանաստեղծ:

Այսպիսով հանձին Ֆրիկի, մենք գործ ունենք ոչ միայն տաղանդավոր բանաստեղծի, այլև չնորհալի թարգմանչի հետ, որը ոչ միայն քաջ իմացել է իր մայրենի լեզուն, այլև տիրապետել է ժամանակի ամենահարուստ լեզուներից մեկին՝ պարսկերենին[25]:

Վերը չարադրած բոլոր փաստերն ու հանգամանքները մեզ իրավունք են տալիս եզրակացնելու.

1. Մի քանի օտար աղբյուրների հաղորդումները Ֆրիկյան պարսկերեն քառյակի հեղինակի վերաբերյալ վերջնականապես չի լուծում քառյակի հեղինակի ինքնությունը, այնքանով որ հեղինակ համարվող անձանց ապրած ժամանակաշրջանը ավելի ուշ է, քան նրա թարգմանչի ժամանակը:

2. Քառյակի թարգմանիչը միջնադարյան մեր տաղանդավոր բանաստեղծ Ֆրիկն է:

25 Ֆրիկի թարգմանիչ լինելու հանգամանքը մի ավելորդ անգամ մերժում է Տիրայր արքեպիսկոպոսի այն անհիմն պնդումը, թե «Ֆրիկը դպրոց չէ տեսել, *անգրագետ* է» (տե՛ս «Դիվան», էջ 19):

ՐԱՖՖԻՆ ՊԱՐՍԻՑ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ[1]

XIX դարը Պարսկաստանի համար սոցիալ-քաղաքական տեսակետից ծայրահեղ հետամնացության մի ժամանակաշրջան էր, փաստորեն միջնադար, որ շարունակվեց մինչև XX դարի առաջին տասնամյակները: Երկիրը ապրում էր ֆեոդալական մասնատվածության պայմաններում, շահական ու խանական բռնակալությունները, մուսուլման կղերականության խավարամոլությունը, պետական պաշտոնեության կամայականությունները, անպատիժ կողոպուտներն ու շահագործումը անասելի ծանր պայմաններ էին ստեղծել ոչ միայն պարսիկ, այլև երկրում ապրող մյուս ժողովուրդների՝ հայերի, ասորիների, քրդերի, բելուչների և այլոց համար:

Հայ մեծանուն վիպասան Րաֆֆին, կյանքի առաջին տասնամյակները ապրելով և աշխատելով իր ծննդավայր Սալմաստ գավառում, աշխատանքի բերումով չրջագայելով երկրում, մի քանի տարի պաշտոնավարելով Թավրիզի Արամյան դպրոցում, ի մոտո կարողացել էր ուսումնասիրել Պարսկաստանի վիճակը և սուր դիտողականությամբ տեսնել երկրում ապրող իր ժողովրդի ծանր առօրյան, նրա հետ կողք-կողքի ապրող փոքրամասնությունների համապատկեր աննախանձելի կյանքը, ֆեոդալական բռնակալության ընդերքում խմորվող նոր հարաբերությունները, գաղութատիրական պետությունների քաղաքական նկրտումները Արևելքի նկատմամբ, ինչպես նաև երկրում սկզբնավորվող լուսավորական չարժման առաջին ծիլերը: Որպես հայ գրող, Րաֆֆին, բնականաբար, մտահոգված էր իր ժողովրդի ճակատագրով, համակված էր օտար լծից նրա ազատագրման խնդիրներով, սակայն լինելով առաջադիմական, դեմոկրատական գաղափարների տեր ճշմարիտ գրող, մեծ հումանիստ, նա մտահոգված էր նաև հարևան ժողովուրդների ճակատագրով: Նա երազում էր նրանց առաջադիմության, լուսավորության մասին և նրանց փրկությունը տեսնում էր քաղաքակրթության տարածման մեջ, այս հանգամանքը երաչխիք համարելով նաև իր ժողովրդի ապագա ազատ ու բարեկեցիկ կյանքի համար: Սրանով պիտի բացատրել այն նշանակալի տեղը, որ Րաֆֆին իր գեղարվեստական, պատմագիտական ու հրապարակախոսական երկերում հատկացրել է պարսկական թեմատիկային:

Իր գեղարվեստական ստեղծագործություններում համակողմանիորեն ներկայացնելով պարսկական իրականությունը, նա պատմաբանի ու գրականագետի բծախնդրությամբ աշխատել է ընթերցողներին ծանոթացնել Պարսկաստանի հին ու նոր պատմությանը, պետական կառուցվածքին, կրոնական այլազան համայնքներին ու աղանդներին, ազգային սովորություններին, բանահյուսությանը, գիր ու գրականությանը: Իհարկե, Րաֆֆու ծրագրերը ավելի լայն ու ընդարձակ են եղել. նա ցանկացել է նաև թարգմանություններ կատարել պարսկական պատմական սկզբնաղբյուրներից ու գրականությունից, սակայն ոչ պայմաններն են նպաստավոր եղել և ոչ նրա ժամանակն է ներել:

Իրանի, նրա պատմության ու գրականության նկատմամբ Րաֆֆու հետաքրքրությունը ինչ-որ տեղ համահունչ է ներհուն լուսավորիչ Մեսրոպ Թաղիադյանի համան-

---

[1] Տե՛ս «Լրաբեր հասարակական գիտությունների», 1987, № 7, էջ 19-26:

ման աշխատանքներին, սակայն ավելի խորն ու քննադատական: Րաֆֆու ողջ ստեղծագործությունը վկայում է պարսկական իրականության բազմակողմանի իմացությունը: Այն ժամանակներում, երբ պարսկահայությունը անազատ պայմաններում մեկուսացած, նեղ համայնքային կյանքով էր ապրում, մի կերպ խղճուկ գոյությունն էր պահպանում և տեղի հայ մտավորականներից չատ քչերն էին գիտակցում պետական պարսկերեն լեզվի կարևորությունը մասնավորաբար հայ համայնքի իրավունքները պետական մարմինների առաջ պաշտպանելու, ինչպես և երկրի ներքին կյանքին գործուն մասնակցություն ունենալու առումով, Րաֆֆին ուղիներ ու միջոցներ էր որոնում լուսավորելու նաև պարսիկ ժողովրդին, համոզված, որ լուսավորված ազգի ենթակայության պայմաններում իր ժողովրդի վիճակը ավելի տանելի կլինի: Պարսկական իրականությունից Րաֆֆին չէր անջատում նաև Ատրպատականի ադրբեջանցի բնակչությանը, որը նույնպես խարխափում էր հետամնացության ճիրաններում ու չահագործվում ֆեոդալախանական իշխանավորների կողմից:

Պարսկերենի նկատմամբ Րաֆֆու հետաքրքրությունը սկսվել է դեռևս ուսումնառության տարիներին, սակայն այս չրջանում, ըստ երևույթին, գիտելիքները այդ բնագավառում այնքան խոր չեն եղել, ուստի ստիպողաբար կիսատ թողած ուսման տարիներից հետո իր ծննդավայր Փայաջուկում չարունակել է խորացնել պարսկերենի գիտելիքները: Րաֆֆու առաջին կենսագիրներից ու մտերիմներից Ավագ-խան Ավթանդիլյանը գրում է. «Նա սկսել էր մեծ եռանդով սովորել պարսկերեն լեզուն, նպատակ ունենալով պարսից հին պատմական գրքերը հայերենի թարգմանել: Այդ առթիվ էլ նա ժամերով երկար խոսում էր ծանոթ պարսիկ վաճառականների և մոլլաների հետ, աշխատելով լսելով էլ ծանոթանալ նրանց պատմության և օրենքի հետ, և արդեն բավական տեղեկություններ էր ձեռք բերել: Ես չատ անգամ հանդիպել եմ Րաֆֆիին պարսիկ վաճառականների հետ միասին նստած, որոնք թողնելով իրենց առևտրական հաչիվները, խոսում էին իսլամ և քրիստոնեական կրոնքի այս ու այն կետերի վրա: Պարսիկներն առհասարակ չատ են հարգում այն հային, որը կարող է կրոնքի մասին բավականաչափ խոսել: Այդ կողմից Րաֆֆին չատ էր հարգված պարսիկների երևելիներից, իբրև գործին տեղյակ մարդ»[1]:

Րաֆֆու պարսկերեն իմացությունն են վկայում նրա ստեղծագործություններում պարսկերեն բազմաթիվ բառերի ու հասկացությունների ստուգաբանություններն ու ճշգրիտ բացատրությունները, անգամ մի առիթով նա անդրադարձել է հայերենի ֆ հնչյունը պարսկերեն համապատասխան բառերում ֆ-ով արտասանվելու փաստին, ինչպես՝ «ֆարման՝ հրաման, ֆրուշթա՝ հրեչտակ, ֆամ՝ համ»[2]:

Պարսկերենին տիրապետելու մասին վկայում է ինքը՝ Րաֆֆին, «Ճանապարհորդություն Պարսկաստանում» ակնարկաշարում, որ 1872 և 1873 թթ. տպագրել է «Մշակում»՝ Արաքսի պարսկական ափում գտնվող Ս. Նախավկայի վանք կատարած իր այցելության կապակցությամբ: Նա գրում է. «Իմ ուշադրությունը ավելի գրավեց մի պարսկերեն արձանագրություն, որ փորված էր ահագին մարմարիոնի վերա և հագցրած էր վանքի դռան ճակատին: Այս արձանագրության պարունակությունից երևաց, որ պար-

1 **Ավագ Ավթանդիլյան**, *Պատկերներ Րաֆֆիի կյանքից*, Ալեքսանդրապոլ, 1904, էջ 55:

2 **Րաֆֆի**, *Երկերի ժողովածու*, հ. 8, Երևան, 1957, էջ 368:

սից մեծ իշխան Նախբուլ-Սալթանան (խոսքը Աբաս Միրզայի մասին է – Բ. Ջ.) նվիրել է մի ամբողջ գյուղ (Դարաշամբ անունով) Ս. Նախավկային՝ որպես վանքային կալվածք և հաստատել է յուր նվերը արքունական ֆերմանով»[3]: Րաֆֆին, չարունակելով այս պատմությունը, գրում է, թե տեղի վանահայրը, տեսնելով, որ ինքը հմտորեն կարդում է պարսկերեն և անգամ արտագրում է արձանագրությունը, զարմանում է: Փոքր-ինչ ավելի ուշ, 1880 թ. Ավագ Ավթանդիլյանին գրած նամակներից մեկում, Րաֆֆին հայտնում է, որ Գորոյանցից խնդրել է իրեն ուղարկել պարսկերեն փոքրիկ և հետաքրքիր վեպիկներ, այնպիսիք, որ «հետաքրքիր են ընթերցանության համար», որովհետև «ես այժմ պարապվում եմ պարսկերենով»[4]:

XIX դարի 60-80-ական թվականներին և հետագայում ԵՒս մերձավոր արևելյան առաջավոր մտավորականությունը, մուսուլման ժողովուրդների հետամնացության կարևոր ազդակներից մեկը համարելով արաբատառ գրության յուրացման դժվարությունները, ուղիներ էր որոնում բարենորոգելու պարսիկների, օսմանյան թուրքերի և այլ ժողովուրդների գիրն ու գրականությունը: Այս խնդրի շուրջ Պոլսում, Թեհրանում և Լոնդոնում լույս տեսնող արևելյան լեզուներով պարբերականներում ու գրականության մեջ բուռն վեճեր են տեղի ունենում և զանազան առաջարկություններ են արվում: Րաֆֆին իր հերթին արձագանքում է այդ վեճերին և «Պարսկական նամակներում», որ հավանաբար գրվել են 1856-1868 թթ., արաբական գիրը առաջարկում է փոխարինել «մի այլ ազգի այբուբենով», տվյալ դեպքում հայոց գրով, որովհետև, ինչպես գրում է նա, «չատ հարմար է հայոց այբուբենը, որ բոլորովին կարող է համապատասխանել պարսից և թուրքերի (ադրբեջանցիների – Բ. Ջ.) լեզվի հնչյուններին»[5]: Րաֆֆին, թերևս, այս եզրակացության էր հանգել՝ նկատի ունենալով այդ ժամանակներում օսմանյան թուրքերենը հայերենով տառադարձելու պոլսահայերի դրական փորձը: Րաֆֆին գտնում էր, որ արաբերեն գրերը պարսկերենի, ինչպես նաև թուրքերենի ուսուցման համար մեծ խոչընդոտ են, ուստի պետք է դրանք փոխվեն: «Պարսիկները, – գրում է նա, – այժմ սեփական տառեր չունին, նրանք գործ են ածում արաբական տառեր, որի թե՛ գրության ձևը և թե՛ կարդալու դժվարությունը, ամբողջ տարիներով մաշում է խեղճ երեխաներին, մինչև որ նրանք կարողանում են հասարակ ընթերցանությունը սովորել… Երեխան մի քանի տարի չարչարվելով, հազիվ ուսանում է ընթերցանությունը, այն էլ գրության մի քանի ձևերով միայն, որովհետև գրության ձևերն այնքան չատ են, որ ամբողջ կյանքում պետք է սովորել»: Նա մեկ առ մեկ հիշատակում է գրության ձևերի անունները՝ «խաթթի, ղորանի, նասթալիխ, շըքաստա, դիվանի, խաթթի քուֆի»[6]: Այս անունների ճշգրիտ հիշատակումն իսկ ապացուցում է, թե մեծանուն գրողը որքան լավ է տիրապետել պարսկերենին. պետք է նշել, որ ժամանակի ոչ բոլոր գրագետ պարսիկները կարող էին իմանալ այդ ամենը:

Պարսկերենի գրության բարեփոխման հարցերին նա անդրադարձել է նաև հետագայում: 1877 թ. գրած ճանապարհորդական տպավորություններում մեկ անգամ ևս հայերեն գրերն է հարմար համարում պարսկերենի ու թուրքերենի համար, իր առա-

3 Նույն տեղում, էջ 323-324:

4 **Րաֆֆի**, *Երկերի ժողովածու*, հ. 10, Երևան, 1959, էջ 565:

5 Նույն տեղում, հ. 8, էջ 613:

6 Նույն տեղում, էջ 612-613:

ջարկը հիմնավորելով այն համոզմամբ, թե «հայոց տառերը շատ հարմար են թուրքերեն լեզվի արտաբերության համար, որովհետև նրանց բոլոր հնչյունները կարելի է ձևակերպել մեր տառերով»[7]:

Լուսավորության տարածումը Իրանում կարևոր էր երկրում ապրող բոլոր ժողովուրդների, այդ թվում նաև հայերի համար: «Մեր հայերիս օգուտը, – գրում է Րաֆֆին, – պահանջում է, որ այս կողմերի (իմա՝ Ատրպատականի – Ռ. Զ.) մահմեդականների մեջ տարածվի ուսումը...»[8]:

Րաֆֆին ի մոտո հետևել է Իրանի քաղաքական կյանքում տեղի ունեցող իրադարձություններին, քաջատեղյակ է եղել պարսկական լուսավորիչների այն ծրագրերին, որոնցով նրանք ցանկանում էին բարեփոխել պարսկերենի արաբական գրերը: Այդ լուսավորիչներից էր նաև հայազգի Միրզա Մելքում խանը, որի անվանը տարբեր առիթներով հանդիպում ենք Րաֆֆու մոտ: «Սալբուս» առաջաբանում մեծանուն վիպասանը Միրզա Մելքումի մասին հետևյալ տեղեկությունն է տալիս. «Միրզա Մելքում խան Սարթեփը՝ այն գիտնական հայ տղամարդը՝ Փարիզից Պարսկաստան բերեց ֆրամասոնականության սերմերը: Թեհրանում նա ստացավ չահից առանձին տուն, ուր սկսեց յուր դասախոսությունքը և փոքր միջոցում գտավ յուրյան բազմաթիվ հետևողներ: Մոլլաները սարսափելով նկատեցին այդ կորստաբեր ուսմունքը, որ մի ահագին վիշապի նման, բերանը բաց արած, կամեր կլանել, ուտել և մաշել իսլամականությունը... Ֆրամասոնականության աշակերտները կոչվում են ահլի-ֆարամուշխանայք»[9]: Այնուհետև Րաֆֆին անդրադառնում է պարսիկ «լուսավորյալ երիտասարդներին», որոնք կրթություն ստանալով Եվրոպայում, նոր, առաջադեմ գաղափարներ են բերում իրենց հետ. «Պարսից հետաքրքիր և նորասեր բնավորությունը առիթ է տվել նոցա ընդունակությանը՝ եվրոպիուց բերել Ասիա այն ազատ գաղափարները, որ բաժան-բաժան են արած լուսավոր աշխարհի բոլոր հասարակությունքը: Եվ Վոլթերի, Բյուխների, Ֆոյերբախի, Ռուսսոյի, Լուի-Բլանի, Պրուդոնի, կաբեի և լուսավոր դարուս այն մեծամեծ մտածողների փիլիսոփայությունքը լսելի են լինում պարսկական բարբառում»[10]:

Ֆարմուշխանեն Նասր ադ-Դին շահի հրամանով ցրվել է 1862 թ., իսկ Մելքում խանը՝ ձերբակալվել և երկրից աքսորվել, սակայն որոշ ժամանակ անց, նկատի ունենալով նրա միջազգային հեղինակությունը, հրավիրվել է դիվանագիտական աշխատանքի: Այս ժամանակներում էլ, 70-ական թթ., գրվել է «Սալբիի» առաջաբանը, որտեղ Րաֆֆին, դեպքերի թարմ ազդեցության ներքո, արձանագրել է Մելքում խանի գործունեության առաջին շրջանի մասին: Այդ դեմոկրատ գործչի նկատմամբ Րաֆֆին միշտ էլ կենդանի հետաքրքրություն է պահել: 1872 թ. Ավագ Ավթանդիլյանին գրում է. «Միրզա Մելքում խանի մասին ոչինչ չեն գրում, թե նա ինչ նորություններ արեց կամ անելու միտք ունի Պարսկաստանի քաղաքական կյանքում»[11]:

---

7 Նույն տեղում, էջ 547:

8 Նույն տեղում:

9 Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1983, էջ 16:

10 Նույն տեղում:

11 Նույն տեղում, հ. 10, էջ 530:

Ավելի ուշ, 1886 թ. հրապարակած «Գաղտնիք Ղարաբաղի» գրքի ընդարձակ գրախոսականում Րաֆֆին նորից է հիշատակում Միրզա Մելքում խանին և անդրադառնում է պարսկերենի գրերի բարենորոգման հարցին. «Պարսից տառերի և գրության ձևը փոխելու խնդիրը այժմ մի մեծ մանկավարժական հարց է դարձել Պարսկաստանում: Այդ հարցը առաջին անգամ բարձրացրեց հայ ազգի Միրզա Մելքում խանը, – պարսից Դռան Լոնդոնի լիազոր դեսպանը: Այժմ նա պարսկերենի համար մի նոր ձևով տառեր է հնարել և «Գյուլիստանը» նույն տառերով տպագրել է տվել Լոնդոնում: Եթե ընդունելություն գտնի հարգելի պարսկագետի աշխատությունը, պարսից մանկավարժությունը մեծ դյուրություններ կգտնե»[12]:

Պարսկերենի գրության բարեփոխման Միրզա Մելքում խանի և նրա գաղափարակիցների այս և չատ ուրիշ ծրագրերը այդպես էլ չիրականացան, մինչև օրս էլ այն մնում է իբրև պարսիկ առաջավոր մտավորականության երազներից մեկը:

Պարսից գրականության և ընդհանրապես մշակույթի հարցերին Րաֆֆին հպանցիկ անդրադարձել է իր չատ ստեղծագործություններում, բայց դրանք առավել հանգամանորեն արծարծված են նրա «Պարսկական նամակներում», որ լույս է տեսել «Արաքս» հանդեսում գրողի մահվանից հետո 1892 թ.: Սակայն ակնարկաշարի գրելաոճը, 80-90-ական թվականներին պարսից իրականությանը հուզող մի չարք հարցերի ավելի խոհեմ ու իմաստնաբար քննարկումը այդ ակնարկներում ենթադրել է տալիս, որ դրանք պետք է գրված լինեն ավելի ուշ, թերևս կյանքի վերջին տասնամյակում, երբ ծրագրեր էր մշակում պարսից գրականությունից թարգմանություններ կատարելու: Անվանի բաֆֆիագետ Խ. Սամվելյանը իր կազմած «Րաֆֆին ժամանակակիցների հուշերում» ժողովածուի ծանոթագրություններում գրում է, որ «Պարսկերենից Րաֆֆու կատարած որևէ թարգմանություն մեզ չի հասել: 1887 թ. «Արձագանքում» հրապարակված մի հաղորդությունից հայտնի է, որ Րաֆֆին «Քեչկյուլ» լրագրի խմբագիր պ. Ջալան էֆենդի Ունսի-Զադեի աջակցությամբ... սկսել է պարսկերենից հայերենի թարգմանել պարսկական հռչակավոր «Լեյլի Մեջլում» սիրավեպը («Արձագանք», 1887, № 39, էջ 615)»[13]:

«Ուսում և գրականություն» ակնարկում Րաֆֆին, անդրադառնալով պարսկական կրոնական սխոլաստիկ մանկավարժությանը, դրա բարեփոխման անհրաժեշտու-

12 Նույն տեղում, էջ 413-414 (տողատակի ծանոթագրություն): Նոր Ջուղայում ծնված Միրզա Մելքում խանը, բուն անունով՝ Հովսեփ Մելքումյան (1834-1908): XIX դարի երկրորդ կեսի Իրանի քաղաքական ու մշակութային ակնառու գործիչներից է: Նրա լուսավորական ու հրապարակախոսական գործունեությունը, դրամատուրգիական երկերը, հիմնադրած «Կանուն» պարբերականը նշանակալի դեր են խաղացել Իրանի հասարակական ու քաղաքական կյանքում: Միրզա Մելքում խանի կյանքին ու գործունեությանն է նվիրված 1973 թ. Թեհրանում լույս տեսած դոկտ. Ֆերեջթե Նուրայիի «Միրզա Մելքոմ խան Նիզամ ադ-Դովլեի գաղափարների հետազոտությունը» խորագրով ծավալուն (252 էջ) մենագրությունը: Ըստ Նուրայիի (էջ 109) Միրզա Մելքում խանը 1885 թ. Լոնդոնում իր իսկ ստեղծած պարսկերեն նոր տառերով, բացի Րաֆֆու հիշատակած Սաադիի «Գոլեսթանից», հրատարակել է ևս երկու գրքույկ՝ «Լուսավորություն» և «Մի օրինակ «ադամիյյաթ» («մարդկություն») գրերից»: Պարսկերենի այս նոր, «մալքոմյան» կոչվող, այբուբենը, խարսխված լինելով արաբական ավանդական գրի վրա, գրվում էր ոչ թե աջից ձախ, այլ ձախից աջ, այբուբենի մեջ էին մտցված պարսկերենում գիտակցված բոլոր ձայնավորները, և ի վերջո՝ նոր գրերը գրվում էին ոչ թե իրար հետ ներհյուսված, այլ անջատ, մի հանգամանք, որ պետք է մեծապես նպաստեր պարսկերեն տպագիր խոսքի զարգացմանը, դյուրացներ գրագիտության տարածումը և մշակույթի վերելքը՝ ժամանակի հետամնաց Պարսկաստանում (նույն տեղում, էջ 104):

13 *«Րաֆֆին ժամանակակիցների հուշերում»*, Երևան, 1986, էջ 811:

թյանը, իր գնահատանքի համառոտ խոսքն է ասում պարսիկ դասական բանաստեղծության մի քանի մեծերի՝ Ֆիրդուսու, Նիզամիի, Սաադիի, Հաֆեզի, «Մասնավիի» հեղինակի (Ջալալ ադ-Դին Ռումիի) և XIX դարի անվանի բանաստեղծ Ղաանիի (Րաֆֆու երկերի ժողովածուի մեջ՝ սխալմամբ Ղազանի) վերաբերյալ: Այս հեղինակները պարսից գրականության այն անուններն են, որոնց ստեղծագործությունները առաջին հերթին են դրվում պարսկերենը սովորողների տրամադրության ներքո, և հավանաբար Րաֆֆին ևս այդ հեղինակների միջոցով է հաղորդակից դարձել պարսկական գրականությանը: Մի առիթով նա գրել է. «Մի ազգի կամ ժողովրդի բարոյական և մտավոր պատկերն ավելի ճշտությամբ երևում է նորա բանաստեղծության մեջ. կամենում ես ճանաչել նրա հոգին, կարդա նորա երգերը»[14]: Այս առումով էլ հետաքրքիր է պարսից բանաստեղծության մասին տարբեր ժամանակներում նրա արտահայտած տեսակետները: «Պարսից գրականությունը, –գրում է Րաֆֆին, – հատկանում է յուր բանաստեղծական ոգով. կարծես գործնական և իրողական մտածողությունը երբեք չէ սովորել այդ ազգը: Արբեցած ղեյլանի ծխով, յուր ուղեղը բորբոքած աֆիոնի թմրությամբ, ցողուն չատրվանի մոտ, ողկուզիների հովանիների տակ, միշտ յուր կիսամերկ հարեմների քնքշությամբ հրապուրված պարսիկը, արդարև չէր կարող գործնական կերպով մտածող մարդ լինել, նա բնականապես լինում է երևակայող: Այդ պատճառով պարսիկների բանաստեղծությունը առավել երևակայական է, քան թե բնական: Բնությունը զգալի չէ պարսիկներին, ո՛չ միայն բանաստեղծության մեջ, այլև նկարչության գեղարվեստից մեջ»[15]: Ըստ Րաֆֆու, «նկարչությունը չատ առաջ է գնացած պարսիկների մեջ: Ոչ ոք այնպես գեղեցիկ չէ կարող նկարել սենյակի պատերը, որպես պարսիկը: Այստեղ մարդ տեսնում է պարսիկին իր երևակայության ճոխ ֆանտազիայով: Նրա պատերի վրա նկարված է յուր սիրելի ջեննաթը յուր հուրիներով և փերիներով, մշտականաչ արմավենիներ, սիրամարգներ, վարդի թփեր յուր գույնզգույն սոխակներով և թութակներով, կիսամերկ կանայք կամ ածում են կամ պար են գալիս. մի խոսքով ամեն հրաշալիք, որով միշտ հրապուրվում է Արևելքը... Նրանց նկարների մեջ մարդ երբեք չի տեսնում բնությունը»[16]: Րաֆֆու քննադատությունը այստեղ, ամենայն հավանականությամբ, պարսկական նկարչության մեջ բնության, մարդու անշարժ ու անկենդան պատկերմանն է վերաբերում, որտեղ ըստ նրա՝ «չկան բնության նկարագիրներ, նրա մեջ դուրս բերված անձնավորությունները անգամ մի տեսակ հրեշտակներ են, որ ապրում են բանաստեղծի երևակայության մեջ»[17]:

X դարի պարսից մեծ դյուցազներգու Ֆիրդուսին Րաֆֆու ամենասիրած բանաստեղծներից է, նրա հիացմունքի առարկան, որովհետև, նրա «Հրաշալի գործը, «Շահնամեն», ժողովրդական վիպասանության մի անմահ հուշարձան է, իր խոսքով՝ մի արձանագրություն, որ ճիշտ է «չունի Վալտեր-Սկոտի պատմական ճշտությունները, բայց նրա վիպասանական ճարտարությունը գերազանցում է Հոմերոսի Եղիականից: Ֆիրդուսու հերոսները երևում են հսկայական զորությունով, նրանք ներկայացնում են տիտա-

14 **Րաֆֆի**, *Երկերի ժողովածու*, հ. 9, Երևան, 1958, էջ 81:

15 Նույն տեղում, հ. 8, էջ 614-615:

16 Նույն տեղում, հ. 9, էջ 142:

17 Նույն տեղում:

նական ուժեր, հերքուլյաններ, աջեմի փահլևաններ. իսկ մարդու հոգեկան հատկությունները, բարյաց ազնիվ մտապատկերներով պահպանված են նրանց մեջ ամենայն ճշտությամբ»[18]: Այս նույն գնահատականը նա ավելի վաղ, 1875 թ., արտահայտել էր Թավրիզից գրած «Նամակ Պարսկաստանից» հոդվածում, որտեղ մեծ գրողը խոսում է պարսիկ արևապաշտների՝ գաբրերի և պարսից հին պատմության մասին, որի համար «Ֆիրդովսու գիրքը» թանկագին հարստություն է, չնայած «որպես առասպելավիպական բանաստեղծություն, զուրկ է պատմական ճշտությունից»[19]: Այդ հոդվածում է, որ Րաֆֆին հարց է դնում, որպեսզի «մերայինք... մեր պատմությունը հարստացնելու և մեր լեզվի փիլոլոգիային նյութ տալու նպատակով» ուսումնասիրեին նախաիսլամական պարսից գրականությունը, նրանց լեզուն և ավանդությունները: Այստեղ է, որ Րաֆֆին հայտնում է, թե ինքը «արդեն սկսել է գործել այդ մասին, որքան կներեին հանգամանքները, որքան թույլ կտար յուր դրությունը»[20]: Ֆիրդուսու նկատմամբ ունեցած պաշտամունքով պետք է բացատրել, որ մեծ վիպասանը իր առաջին վեպի՝ «Սալբիի» հերոսին՝ Հովհաննեսին, վերանվանում է «Շահնամեի» Ռուստամի անունով: Այդ մասին վեպի սկզբում իսկ վկայում է ինքը՝ Րաֆֆին, գրելով, որ «Յուր պատանեկության հասակում վայելչագեղ և քաջ տղամարդ լինելու համար [Հովհաննեսը] ստացավ Ֆիրդովսիի հերոսի անունը՝ «Ռուստամ»[21]:

Ֆիրդուսու նկատմամբ Րաֆֆու հետաքրքրությունը չարունակվում է մինչև կյանքի վերջին տարիները. 1887 թ. նա ռուսերենից թարգմանում է և «Աղբյուր» ամսագրում տպագրում Հայնեի «Ֆիրդուսի» բանաստեղծությունը և Վ. Օսյանիկովի «Ֆիրդուսի» գողտրիկ պատմվածքը, վերջինիս մեջ իրեն թույլ տալով մի քանի փոփոխություններ կատարել, որովհետև, ինչպես ինքն է գրում, դրանք «չէին համապատասխանում այն ավանդությանը, որ կապված է պարսից մեծ բանաստեղծի կենսագրության հետ»[22]:

Հայտնի է, որ Ստեփանոս Նազարյանցը նույնպես մեծ համարում է ունեցել Ֆիրդուսու ժառանգության մասին և իր դոկտորական դիսերտացիան էլ նվիրել է պարսիկ դյուցազներգուին: Այն երկու գրքով լույս էր տեսել ռուսերեն[23]: Թվում է, որ Րաֆֆին պետք է ծանոթ լիներ այս հրատարակությանը, սակայն Րաֆֆու և Նազարյանցի աշխատանքների ու գնահատականների համեմատությունը ոչ մի ընդհանրություն չի բացահայտում, ուստի և պետք է եզրակացնել, որ Րաֆֆու տեսակետները Ֆիրդուսու և ընդհանրապես պարսից գրականության մասին ինքնուրույն են, չնայած իրենց մեջ ունեն ժամանակի եվրոպական արևելագիտության ընդհանուր արժագանքները:

Ֆիրդուսուց հետո XIII դարի մեծ բանաստեղծ Սաադին է, որ մի քանի անգամ հիշատակվում է Րաֆֆու ստեղծագործություններում: Միջնադարյան մեր գրականության մեջ Սաադիի «Գոլեսթանը» ծանոթ է դեռևս XV դարի սկզբներից և նրա առանձին

18 Նույն տեղում, հ. 8, էջ 615:

19 Նույն տեղում, հ. 9, էջ 189:

20 Նույն տեղում:

21 Նույն տեղում, հ. 2, էջ 40:

22 Նույն տեղում, հ. 8, էջ 687:

23 **С. Назарянц**, *Абул-Касем Фердауси Тусский творец книги царей, известной под названием «Шах-Намэ»*, кн. 1-2, М., 1849-51.

հատվածները թարգմանաբար կամ հայատառ պարսկերենով ընդօրինակվել են հայկական գրչագիր մատյաններում և հնատիպ հրատարակությունների մեջ[24]: Սաադին իր երկերում անողոք քննադատության է ենթարկել մոնղոլական արշավանքների շրջանի ավատատիրական հարաբերությունները, ծաղրել, պարսավանքի է ենթարկել աշխարհիկ ու հոգևոր իշխանավորներին, նրանց բարքերն ու բարոյական սկզբունքները: Սաադիի ստեղծագործությունն աչքի է ընկնում արևելյան բանահյուսության չռայլ օգտագործումով, ինչպես նաև՝ պարզ պատկերավոր ոճով, անմիջականությամբ, խոր մարդասիրությամբ և ժողովրդասիրությամբ: Այս իսկ առանձնահատկությունները պատճառ են դարձել, որ Սաադիի «Գոլեսթանն» ու «Բոստանը» պարսիկ մտավորականության ամենասիրած գրքերից դառնան և դարեր շարունակ օգտագործվեն որպես պարսկերենի ուսուցման ձեռնարկներ: Րաֆֆին Սաադիի ղեկքում նույնպես ելնում է իր գեղագիտական չափանիշներից և նրան գնահատում որպես մի գրողի, որ կերպարները ներկայացնում է կենդանի, կյանքը պատկերում ճշմարտացի: Սաադիի գրվածքները համեմատելով Եզովպոսի, Լաֆոնտենի ու Կռիլովի առակների հետ, Րաֆֆին գրում է. «Սաադիի առակները չունին ոչ Եզովպոսի, ոչ Կռիլովի և ոչ էլ Լաֆոնտենի առակների ձևերը — անշուշտ, անլեզու առարկաների խոսակցությամբ դուրս բերել բարոյականություն: Սաադիի առակները առնված են կենդանի տիպերից, այդ պատճառով նրանց ավելի հարմար է փոքրիկ վեպիկներ կոչել, քան թե առակներ: Նրա Գյուլիստանը և Բոստանը կարող են համարվել արևելյան կյանքի ճիշտ պատկերները»[25]:

«Ուսում և գրականություն» հոդվածում Րաֆֆին խոսում է նաև Ջալալ ադ-դին Ռումիի «Մասնավի» պոեմի մասին՝ առանց հեղինակի անունը տալու: Այս ծավալուն երկը, որ սուֆիզմի հիմնական դրույթների չափածո մեկնաբանությունն է՝ մատուցված արևելյան առակներով ու զրույցներով, Րաֆֆին գնահատում է որպես եզակի մի երկ, «որ յուր սուր միստիկական ոճով փչրում է իսլամի կրոնական մոլեռանդությունները: Մասնավին թերևս չունի Վոլտերի սիստեման յուր փիլիսոփայության մեջ, այսուամենայնիվ նա կարող է առաջին ազատ հեղինակությունը համարվիլ, ընդդեմ իսլամի սնոտիապաշտության»[26]:

Րաֆֆին իր հոդվածներում հիշատակել է նաև Շիրազի անմահ քնարերգու Հաֆեզին, XIX դարի առաջին տասնամյակների անվանի բանաստեղծներ Ղաանիին ու Միրզա Շաֆիին (Վիսալ), իր գեղարվեստական երկերում օգտվել է Ֆարհադ ու Շիրին, Լեյլի ու Մաջնուն սիրավեպերի բանահյուսական տարբերակներից, ըստ Ավագ-խան Ավթանդիլյանի վկայության, ծանոթ է եղել Նուշիրվան արքայի խրատներին:

Վերոհիշյալ բոլոր փաստերը գալիս են վկայելու, որ ի դեմս Րաֆֆու, գործ ունենք մի քաջատեղյակ ու բանիմաց արևելագետի հետ, որի գրական ու գիտական վաստակը այս տեսանկյունից ըստ ամենայնի քննելու պարագային, ավելի պիտի լուսավորվի մեր մեծ վիպասանի պայծառ դեմքը:

---

24 Տե՛ս **Բ. Լ. Զուքասզյան**, *Հայ-պարսկականք* («Մերձավոր և միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Իրան» (ժողովածու), Երևան, 1969, էջ 207-217):

25 Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 615:

26 Նույն տեղում:

РАФФИ О ПЕРСИДСКОЙ КУЛЬТУРЕ И ЛИТЕРАТУРЕ

Р е з ю м е

Выдающийся армянский романист Раффи (А. Мелик-Акопян) многими узами связан с персидской литературой, как и вообще с персидской культурой.

Первые десятилетия его жизни прошли в Салмасте (Иран), где он родился, а ранняя трудовая деятельность связана с городом Тавризом, что дало ему возможность изучить жизнь различных слоев иранского населения, состоящего не только из персов, но и армян, ассирийцев, курдов, белуджев и других народностей.

Персидская тематика занимает значительное место в творчестве Раффи. В его художественных, историографических, публицистических сочинениях сохранились интересные факты, которые свидетельствуют о его глубоких знаниях в области истории древнего и нового Ирана, государственного строя, религиозных общин и сект, народных обычаев, фольклора, литературы и языка. Рассматриваемые факты раскрывают образ Раффи как сведущего востоковеда, великого гуманиста, прогрессивного мыслителя, заинтересованного в просвещении не только родного народа, но и других национальностей, проживающих на территории Ирана.

ИЗ ИСТОРИИ ЛИТЕРАТУРНЫХ СВЯЗЕЙ АРМЯНСКОГО И ДРУГИХ ВОСТОЧНЫХ НАРОДОВ В СРЕДНИЕ ВЕКА[1]

Армянская словесность, первые памятники которой относятся к V в., содержит в себе богатые данные по истории и культуре не только Армении, но и многих других стран. Будучи ценными историческими первоисточниками, эти дошедшие до нас произведения представляют собой крупное литературное явление.

Как известно, начиная с X в. развивается классическая литература Ближнего Востока, переживая бурный подъем в последующие века. В это же время в армянской литературе появились такие крупные поэты-мыслители, как Григор Нарекаци, Григор Магистрос, Иоаннес Имастасер, Нерсес Шнорали, Костандин Ерзнкаци, Фрик и др.

Еще в ранние века армянская литература соприкасалась с культурой развитых народов того времени, многое заимствовала у них, многому научилась и многое дала, но не потеряла своего национального облика и самобытности. С этим же явлением мы сталкиваемся и в последующие века.

В первой четверти XI в., когда в далеком Хорасане переживал свой закат знаменитый поэт-эпик Фирдоуси, в Армении делал свои первые литературные шаги Григор Магистрос - один из видных армянских политических деятелей, многосторонне образованный человек своего времени. Известно, что Григор Магистрос владел несколькими языками (греческим, сирийским и др.), пользовался литературой, созданной на этих языках, делал переводы с греческого и сирийского языков.

Г. Магистрос превосходно знал также эпос иранских народов и персидский язык (дари), о чем свидетельствуют несколько сжатых фрагментов, сохранившихся в его письмах относительно Ростама, Исфандиара, Аждахака, и употребление отдельных персидских слов в его речи.

Существующие в армянской средневековой литературе упоминания об эпосе иранских народов служат красноречивым свидетельством того, что армяне приняли близко к сердцу тысячелетнюю борьбу народов Ирана против Турана. Поражение зла и победа добра в эпических песнях Ирана и Средней Азии вдохновляли армянский народ, который впоследствии переместил иранско-среднеазиатских героев в Армению, сделал их вполне своими, национальными героями, приспособил к своему миропониманию, к духу своего эпоса и создал армянско-иранскую эпическую поэму «Ростам-Зал» - одно из ответвлений народного эпоса «Цуры».

Приведенные в «Письмах» Г. Магистроса цитаты из эпоса иранских народов интересны в том отношении, что они показывают, как этот эпос, знакомый армянской действительности еще с V в. (М. Хоренаци), продолжает жить

---

[1] Տե՛ս Материалы Первой Всесоюзной конференции в Ташкенте, 1958, с. 736-740.

и в дальнейшем. Он был известен Г. Магистросу в таких подробностях, с которыми мы не встречаемся в «Шах-наме». Так, в «Шах-наме» Фирдоуси в «Третьем приключении» раздела «Семь приключений Ростама» рассказывается, как Ростам по дороге в Мазандаран встречается с драконом. Дракон приближается к Ростаму ночью, когда он спит, и намеревается уничтожить его. Однако Рахи бодрствует. Он дважды будит Ростама, но дракон немедленно исчезает. Ростам страшно негодует на коня, понапрасну потревожившего его сон. Дракон приближается в третий раз. Теперь он лицом к лицу сталкивается с Ростамом и на вопрос последнего, кто он такой, высокомерно отвечает:

«От пасти моей не спастись никому!
Пустыня от края до края моя,
Землею и воздухом властвую я.
Орел залететь не дерзает сюда,
Сюда заглянуть не посмеет звезда».

Они сражаются. Ростам уничтожает дракона, и кровь течет рекой.

«Кровь злого дракона забила ключом,
Вокруг разливаясь: луг, поле и ров
Все разом окутал багровый покров».

Это красочное сказание у Г. Магистроса изложено очень сжато, всего лишь в нескольких строках. Таков любимый стиль автора, от которого он редко отказывается. Интересующий нас фрагмент следующий:

«А некий Ростом, который звался Сачик, у горы, именуемой Дабаванд имел лошадь, которая звалась Раш, то есть гнедой, а так как Ростом спал, ожидал его смерти Дюзех, и так как тот Дюзех никогда не спал, Ростом почувствовал, что он думает. Ростом увещал лошадь, чтобы та была осторожна, и она никогда не спала. Однажды ночью к нему подходит Дюзех и находит его пьяным, и Раш, зная это, до тех пор бьет копытами о земь и ржет, пока не будит Ростома и таким образом спасает его».

В этом рассказе Г. Магистроса есть несколько подробностей, которые отсутствуют в вышеупомянутом фрагменте Фирдоуси. Прежде всего, в «Шах-наме» определенно не сказано, где именно происходил поединок Ростама с драконом. Между тем Г. Магистрос указывает, что он состоялся около горы Дабаванд (т. е. Дамаванд).

Далее. Из сообщаемого Г. Магистросом выясняется, что вступивший в поединок с Ростамом дракон был не кто иной, как сам Ад-Дюзек. В письмах это имя дается в двух чтениях - Дюхех и Дюзех, причем, по нашему мнению, вернее вторая форма.

Итак, этот фрагмент из «Писем» Г. Магистроса делает смысл сказа Фирдоуси более ясным. Если до сих пор сражавшийся с Ростамом дракон был каким-то случайным колдуном-драконом, то теперь становится ясно, что это сам Ад, воплощение зла, который в битве с добром терпит поражение.

Вслед за легендой о Ростаме и Дюзехе Г. Магистрос рассказывает один из моментов борьбы Ростама и Исфандиара. «И однажды, - читаем мы там, - когда Ростом спал, случайно настигает его Спандиар, угрожает опрокинуть на него Дабаванд. Пробужденный им густоволосый встряхивает кудрями, как некогда Кронид, давая знак Олимпу, и концом башмака отбрасывает (гору) назад».

Фирдоуси в «Шах-наме» описал очень много эпизодов борьбы Ростама и Исфандиара, однако этого эпизода у него нет. По-видимому, отдельные сказы эпоса, передвигаясь с Востока - из Средней Азии и Хорасана - на Запад, переменили и место своего действия. Это доказывают факты, сохранившиеся в 36-м письме, где автор упоминает о Бюраспе Аждахаке, Исфандиаре и Артавазе, изгнанных из общества и закованных в цепи в горных крепостях: «Знаю и Бюраспа в горе Дабаванд, что есть Конторос Прюдоа, - пишет автор, - не должен забывать Спандиара, запертого в горе Сабалан, или нашего Артаваза на вершине Арарата на горе Масис».

Здесь легенда о Бюраспе, вероятно, взята у Хоренаци, у которого в разделе «Из персидских сказаний» рассказывается, как Хруден уводит Бюраспа Аждахака на гору Дмбавид (т. е. Дамаванд) и запирает в какой-то пещере. Во втором отрывке того же раздела - «Изложение того, что заключает в себе истинное сказание о Бюраспе» - Хоренаци сообщает, что подлинное имя Бюраспа Аждахака - Контжар Пюрада (в другой рукописи - Прюдеа, Прида) и что свидетельство об этом он нашел в какой-то халдейской книге. Один из лучших знатоков древнеармянской литературы академик С. Малхасян в своих комментариях к переводу «История Армении» Хоренаци на современный армянский язык сообщает, что в переводах, имевшихся у нас под рукой, никаких свидетельств о Контавре Пюриде, с которым Хоренаци отождествляет Бюраспа Аждахака, нет». С таким отождествлением не встречаемся мы и в «Шах-наме».

Итак, указанные факты дают нам право заключить, что это сведение Г. Магистрос заимствовал у Хоренаци. Что же касается того, что Исфандиар был заперт в горе Сабажан, то и об этом никаких свидетельств в «Шах-наме» нет. Как мы сказали, это один из фактов локализации эпоса. Возможно, что отдельный момент эпоса иранских народов слился с какой-либо местной народной легендой. Гора Сабалан расположена очень близко к границам Армении, находится в восточной части современного Иранского Азербайджана. Возможно, что местные жители рассказывали о том, как Исфандиар был заперт в горе Сабалан, и Г. Магистрос воспользовался этим рассказом.

В 75-м и 80-м письмах Г. Магистроса имеется еще несколько других эпизодов из иранского эпоса, и поскольку в «Шах-наме» не было обнаружено фактов, параллельных им, мы обращаем внимание специалистов, занимающихся иранским эпосом, на эти эпизоды.

* * *

С первым упоминанием названия «Шах-наме» в армянской литературе мы встречаемся у поэта Костандина Ерзнкаци. Он жил в конце XIII – начале XIV в. в г. Ерзинка (Ерзинджан). После заглавия одного из своих стихотворений он делает следующее примечание: «Сидел некий муж и скандировал Шах-наме, братья попросили (меня), мол, сложи нам стихи размером Шах-наме. Я создал эти стихи, прочитайте размером Шах-наме». Время создания стихотворения неизвестно, однако мы находим его в одной рукописи, переписанной в 1336 г. в Тавризе.

1934 г., когда праздновалось тысячелетие со дня рождения Фирдоуси, в Ереване выходит в свет сборник «Фирдоуси», где в числе прочих статей было опубликовано интересное и ценное исследование академика М. Абегяна «Стихотворный размер «Шах-наме» в армянской поэзии. Здесь автор показывает, что размер «Шах-наме» - мотакариб, одной из особенностей которого является долгота и краткость слогов, основанные на коротких и длинных гласных, - нельзя выразить в армянском языке. Поэтому Костандин находит выход: «Вместо долгих слогов, - говорит проф. Абегян, - на которые падают ритмические ударения персидского языка, он ставит находящиеся под ударением слоги армянского языка, а остальные слоги оставляет безударными. Таким образом, в 11- слоговой строке под ударение ставятся 2-ой, 5-й, 8-й и 11-й слоги, на которые падает ударение и в персидском языке».

К. Ерзнкаци заимствовал этот размер у Фирдоуси, однако, как указывает проф. М. Абегян, еще в X в. известный армянский поэт Григор Нарекаци написал стихотворение тем же стихотворным размером.

Факт использования К. Ерзнкаци размера «Шах-наме», а также сохранившиеся в письмах Г. Магистроса фрагменты иранского эпоса, по-видимому, не известны широким кругам советских востоковедов. В противном случае они нашли бы свое отражение в послесловии к опубликованному недавно в Москве русскому переводу «Шах-наме».

* * *

Одним из интересных фактов взаимосвязей армянской и персоязычной литературы является написанное армянскими буквами персидское четверостишие в «Диване» поэта XIII в. Фрика. Это четверостишие было впервые опубликовано в сборнике стихотворений Фрика, изданном в 1941 г. в Ереване, а во второй раз – в 1952 г. в Нью-Йорке в «Диване» Фрика. В обоих сборниках четверостишие напечатано в искаженном виде, как в рукописи. Издатель «Дивана» архиепископ Тирайр сообщает, что он часто обращался к персидским филологам, чтобы они перевели четверостишие, однако поврежденное состояние текста не дало им возможности это осуществить. Наконец, по просьбе Тирайра основную часть четверостишия, за исключением первых трех слов (Ярмут пахи эшхи), мастерски расшифровал и перевел проживающий в Нью-Йорке иранист Мирдат Тирякян.

Окончательно четверостишие было расшифровано в 1956 г. в Ереване В. Автандиляном и А. Папазяном, которые не только прочитали три первых искаженных слова, но смогли также заметить, что следующие за четверостишием строки как раз и являются его переводом.

Расшифровка четверостишия вызвала ряд интересных и важных вопросов. Кто был автором четверостишия - сам Фрик или какой-либо другой поэт? Кто перевел его на армянский язык - Фрик или какое-то другое лицо? И, наконец, когда был сделан перевод? Тирайр сообщает, что эти вопросы остаются неразрешенными.

Ключом для выяснения вопроса о личности автора был труд профессора Тегеранского университета доктора Садега Кийа «Словник горганского диалекта». В предисловии к исследованию приведены новые биографические данные об основателе секты хуруфитов Фазлуллахе Наими и его последователях.

В данном случае нас интересует цитата из вышедшей в 1935-1936 гг. в Тегеране Книги Мухамеда Али Тарбиата «Мудрецы Азербайджана», которую приводит доктор Садег Кийа и в которой опубликовано наше четверостишие, а также говорится об его авторе. Вот этот отрывок:

«В правление хана Джаханшаха дочь Фазлуллаха и некто по имени Юсуф вновь начали проповедывать в Тавризе учение секты хуруфитов, но вместе приблизительно с пятьюстами душ были подвергнуты казни и сожжены. И это четверостишие принадлежит дочери Фазлуллах.

Здесь следует, к сожалению, отметить, что Мухамед Али Тарбиат не указывает источника этих сведений. Однако, по-видимому, вопрос о первоисточнике разрешается в статье доктора Садега Кийа, которая вышла в свет в декабрьском номере журнала литературного факультета Тегеранского университета за 1954 г. Он приводит отрывок из хранящейся в библиотеке факультета истории и языка Анкарского университета рукописи № 12-97 (озаглавленный им «Могилы Тавриза»), которая подтверждает данные Тарбиата.

На третьей странице вышеупомянутой рукописи сказано: «Дочь Молана Фазлуллаха Наими Хуруфи, которую вместе со многими казнили во время царя Джаханшаха, похоронена в этой же могиле. Это четверостишье принадлежит ей…».

Как известно, хуруфитское сектантское движение широко распространилось, и к нему примыкал ряд видных мыслителей того времени, в том числе и крупный азербайджанский поэт Имадэддин Насими. Он был одним из руководителей и наиболее энергичных проповедников секты. За эти сектантские идеи в 1417 г. в гор. Алеппо с него была содрана кожа.

В 1869-1870 гг. в Константинополе вышли в свет избранные стихотворения И. Насими на азербайджанском и персидском языках. На восьмой странице сборника мы снова сталкиваемся с персидским четверостишием Фрика, которому предшествует комментарий «из речей великого Сейида, прославленного в качестве ходавандегара». А в хранящейся в Ереванском Матенадаране рукописной книге азербайджанских стихотворений И. Насими, написанных

арабскими буквами, мы встречаем двустишие, где выражена та же идея о принесении себя в жертву, что и в четверостишии, и не случайно начальные слова первой строки двустишия и третьей строки четверостишия одинаковы.

Эти факты дают нам право заключить, что автором четверостишия мог быть, по всей вероятности, и азербайджанский поэт И. Насими. Возможно, четверостишие было одним из девизов хуруфитов и распространялось среди сектантов, а в дальнейшем, после казни И. Насими, по недоразумению его приписали дочери Фазлуллаха.

Итак, если И. Насими действительно является автором четверостишия, то оно должно быть написано не ранее 1386 г. (дата образования секты) и не позднее 1417 г. (год смерти И. Насими).

Довод в пользу того, что Фрик является автором четверостишия, полностью отвергается всем духом его творчества, который совершенно противоречит отраженному в персидском тексте четверостишия мистическому пониманию любви, характерному для этой секты. Армянский переводчик, стремясь к тому, чтобы эта любовь не была понята, как сказал бы Костандин Ерзнкаци, «во плоти», и не искажая идейного содержания четверостишия - принесение себя в жертву, - слова «кухня любви» перевел как «на священном алтаре», а мусульманский обычай, переданный последней строкой, очень тонко и мастерски заменил христианским.

После всего этого перед нами возникает очень сложный вопрос: как мог Фрик, который жил в конце XIII в., оказаться переводчиком четверостишия, написанного в конце XIV или начале XV в. В данном случае возможны два предположения: либо автором персидского четверостишия был не И. Насими, а кто-нибудь другой, живший не позднее XIII в., либо четверостишие было переведено не Фриком.

Первое предположение, по нашему мнению, отрицается вышеприведенными фактами. Второе же кажется более вероятным. По-видимому, какой-то незнакомый нам армянский поэт, живший в XIV или, скорее всего, в XV в., одинаково хорошо владевший как армянским, так и персидским языками, перевел в стиле Фрика четверостишие на армянский язык и включил его в число стихов Фрика. При этом он превратил четверостишие в тему и, развивая фриковское понимание загробной жизни, сочинил целое стихотворение.

Поскольку личность автора четверостишия стала нам известна только в последнее время, наше предположение относительно переводчика четверостишия и времени перевода нуждается в серьезном исследовании.

Однако в любом случае наличие армянского перевода четверостишия И. Насими в «Диване» одного из крупнейших наших поэтов - Фрика, как и факт существования азербайджанских песен И. Насими в рукописных песенниках, хранящихся в Матенадаране, служит прекрасным доказательством литературных связей армянского и азербайджанского народов.

Вопрос взаимосвязей литературы армянского народа и народов Ближнего Востока еще не изучен. Мы попытались в своем докладе обратиться к некото-

рым фактам, относящимся к этим связям. Отдельные темы и средства выразительности, используемые в нашей средневековой поэзии, при всей своей национальной оригинальности имеют много общего с литературой народов Востока и нуждаются в серьезном изучении.

МЕЧТЫ СБЫВАЮТСЯ НА РОДИНЕ[1]

После войны Советское правительство предоставило возможность скитавшимся на чужбине армянам вернуться на родину. Вместе с тысячами армян репатриировался в Советскую Армению и я. На второй же день после того, как я ступил на родную землю, 25-го августа 1946 года, я вкусил первые плоды советской демократии: был принят в Ереванский государственный университет, приобрел право на высшее образование.

Прошли годы. И сегодня, когда оглядываешься на путь, который прошли тысячи людей, подобно мне вернувшихся на родину, еще лучше представляешь себе, какие широкие возможности открылись перед нами. Очень многие из нас добились больших успехов в жизни, стали инженерами и педагогами, работниками руководящих органов, кандидатами наук. Я назову хотя бы репатриировавшихся из Ирана лектора Ереванского государственного университета инженера-геолога Вегуни, врача Багдасаряна, работника издательства Арзуманяна, кандидатов исторических наук Папазяна, Еганяна, кандидата филологических наук Автандиляна и многих, многих других.

Армяне, репатриировавшиеся в Советскую Армению, стали почетными гражданами социалистической Родины. Они избирают и избираются в законодательные органы, вкладывают свой труд в дело процветания своей страны. Наши мечты сбылись.

---

[1] Տե՛ս Газета «Коммунист», Ереван,1958, № 61, մարտի 13, էջ 3:

АРМЯНО-ИРАНСКИЕ ЛИТЕРАТУРНЫЕ СВЯЗИ В V-XVIII ВЕКАХ (РАЗЫСКАНИЯ)[!]

Процесс развития духовной культуры каждого народа всегда в той или иной степени связан с общим развитием культур соседних и других народов. В различные исторические эпохи, в различных общественных и политических условиях эти связи находят своеобразное проявление: то как характерные для данной эпохи общие явления и направления, то в виде непосредственного влияния одной культуры на другую, то как простые заимствования и т. п.

Армянская словесность со дня своего зарождения теснейшим образом соприкасалась с литературами развитых народов того времени (греческой, римской, сирийской, персидской и др.).

Приступая к исследованию армяно-иранских литературных взаимоотношений, мы не ставили перед собой задачи всесторонне изучить и проанализировать их сложные проявления в различных областях армянской культуры.

Պահլավունի իշխանական գերդաստանը Բագրատունյաց թագավորության օրոք ոչ միայն աչքի է ընկել ռազմական գործերով, անձնազոհաբար մարտնչելով հայրենիքի թշնամիների դեմ, այլև մեծ գործեր է ծավալել երկրի չինարարության ու ժողովրդի լուսավորության բնագավառներում: Պահլավունիները շատ լավ են գիտակցել իրենց ավանդը երկրի պաշտպանության ու նրա խաղաղության ապահովման գործում և ամենայն հպարտությամբ ու իրավունքով Վահրամ Պահլավունու կառուցած լավագույն վանական համալիրներից մեկի՝ Մարմաշենի վանքի վրա արձանագրել են. «Էաք ամենայն տամբ ու տոհմիւք հաւատարիմք տէրանց մերոց եւ նահատակեալ ի վերայ տանս Հայոց աշխատութեամբ եւ արեամբ մերով եւ որդոց մերոց, եւ գանձուց առատութեամբ եւ ամենայն հնարիւք խնդրէցաք զխաղաղութիւն աշխարհիս»:

Վահրամ սպարապետի մահվան լուրը շատ ծանր ու խորն է ընկալում նրա եղբորորդին՝ անվանի պետական ու զինվորական գործիչ, գիտնական ու բանաստեղծ Գրիգոր Մագիստրոսը, որը դեռևս մանկության տարիներից սերտ կապված է եղել նրա հետ և նրա հովանավորությամբ է կրթվել ու դաստիարակվել:

Գրիգոր Մագիստրոսի հայտնի նամակներից մեկը, որ ժամանակի Սյունաց արքեպիսկոպոս Հովհաննեսի մխիթարական նամակի պատասխանն է, իրականում մեծ սպարապետի հիշատակին նվիրված բանաստեղծական մի չքնաղ խոսք է՝ գրված հարազատի և հայրենյաց զավակի կորստի մեծ ցավով, նրա արժանիքների ամենայն գիտակցությամբ: Դա մի գողտրիկ դյուցազներգություն է, որտեղ սպարապետը հառնում է որպես արտաքին ու ներքին բազում բարեմասնություններով օժտված մի անզուգական հերոս: Մագիստրոսը համոզված է, որ եթե Պահլավունի իշխանը ավելի վաղ ժամանակներում ապրած լիներ, նրա սխրանքները առասպել կհամարվեին, ինչպիսիք են հելլեն դյուցազուններին նվիրված երգերը:

---

[1] Հրապարակվել է «Սովետական Հայաստան» օրաթերթում, 1988, № 9, էջ 32-33:

Հայտնի է, որ Գրիգոր Մագիստրոսը ժամանակի արտակարգ կրթված ու զարգացած աշխարհիկ գործիչներից է եղել, նա տիրապետել է հունարենին, ասորերենին, պարսկերենին ու արաբերենին, քաջահմուտ է եղել անտիկ փիլիսոփայությանը, քերականությանը, առասպելաբանությանը, բանաստեղծության տեսության խնդիրներին, հաղորդակից է եղել հարևան ժողովուրդների վիպական ստեղծագործություններին և, իհարկե, առաջին հերթին իր հայրենի մատենագրությանն ու ժողովրդական բանահյուսությանը: Այս լայն իմացության հենքի վրա, անկասկած, շատ հեղինակավոր ու վստահելի են դառնում հայ գուսանական արվեստին տված նրա գնահատականը. «Ամենայն մրմունջք և երգք գուսանութեան ի հայումս առաւել, բան ի յունականին գտանեմք: Քանզի չափ ու կշիռ բանի արուեստաւորեալ ներգործեն զայսոսիկ չքնաղ եւ դժուարագիւտ եւ հրաշալի առասուիւնս...»:

Սրանով իսկ պիտի բացատրել այն հանգամանքը, որ Մագիստրոսը իր նամակներում անկաշկանդ դիմում է ժողովրդական բանահյուսության ակունքներին և իր խոսքը համեմում առակներով, ասացվածքներով, հունական ու իրանական վիպական զրույցներից քաղված մեջբերումներով, հայոց հեթանոսական ժամանակների երգերի պատառիկներով, որոնց ժողովրդական ծագումը նա չի մոռանում ընդգծել՝ «ի գռեհիկս ասացեալ» վերապահությամբ:

Մագիստրոսի այս նամակը ոչ միայն մի ճոն է Վահրամ Պահլավունի իշխանի հիշատակին, այլև թանկարժեք մի աղբյուր մինչ 11-րդ դարը գոյություն ունեցող հայկական ժողովրդական ծեսերի ու սովորությունների մասին:

Ըստ Գրիգոր Մագիստրոսի վկայության, հայոց թաղման ծիսակատարությունների ժամանակ մի քանի տեսակ երգեր են կատարվել՝ դամբանական, ողբերգական, ներբողական, և անգամ բանաստեղծություններ են արտասանել, որ կոչվել են գերեզմանական: Վերջիններս, իհարկե, հայտնի լալյաց երգերը չեն, որը Մագիստրոսը հիքից (այսինքն՝ թշվառների) և կանանց ողբերգականս» է անվանում, դա «իմաստասիրական երգ» է, գերեզմանական ողբի մի տեսակ, որի ժամանակ տղամարդիկ ցնցոտիներ են հագնում, պարում են և հող լցնում գլխներին՝ իրենց որբությունը և թշվառ վիճակը ցուցադրելու, իրենց հարազատին դեպի «երանավետ ուղեւորութիւն»՝ հանդերձյալ կյանք ճամփու դնելու համար:

Եվ ահա, երբ Գրիգոր Մագիստրոսը գրիչ է վերցնում Սյունաց արքեպիսկոպոս Հովհաննեսին չնորհակալություն հայտնելու հորեղբոր մահվան առթիվ նրա գրած մխիթարականի համար, ակամայից սկսում է ողբալ սգավորի իր վիճակը, որ փոքր-ինչ հետո իրականում դառնում է մի ներբող՝ ճոնված նահատակ հորեղբոր հիշատակին, սակայն Մագիստրոսը չի համարձակվում իր խոսքը ներբող համարել, «քանզի որք զներբողականս արժանապէս մատենագրեն», պետք է գովերգվողի պես աղնիվ ու վեհ վարք ունենան, իսկ ինքը իր այդ վիճակում «անկենդան» է և միայն ողբ կարող է ասել:

Մագիստրոսի այս ինքնատիպ նամակում արձակ խոսքը ագուցված է բազմաթիվ չափածո տողերով, որոնք, թվում է, Վահրամ Պահլավունուն նվիրված դյուցազներգության բեկորներ են, աշխարհիկ մեր դպրության թանկարժեք մասունքներ: Ներբողի առաջին տողերը ողբասացության բնույթ ունեն.

Աւաղ որդւոյս սիրեցեալ եւ կարօտեալ
ի սուրբ եւ ի բաղցր ճօրէն,
Աւաղ տարագիր ու արտակացեալ,
յաստուածային fո խրատուէ,
Աւաղ կենդանութեանս,
որ երանեմ վախճանելոյդ…

Այնուհետեւ բանաստեղծը, անդրադառնալով իր խոսքերի ողբերգական ելևէջին, ինքն իրեն է դիմում, թե ինչո՞ւ պետք է նրա՝ սպարապետի մասին ողբ ասել՝ «զի՞նչ զքոյդ ասացից ողբերգական», չէ՞ որ նա իր պապերի նման արժանի է դյուցազներգության: Այս պահից էլ Գրիգոր Մագիստրոսը փոխում է նամակի ոճը և սկսում է գովերգել իր դյուցազուն հորեղբորը՝ համեմատելով նրան մեր պատմության առասպելականացած հերոսներ Արտաշեսի ու Արշակի, չքնաղադեմ Արայի ու Սոսանվեր Անուշավանի հետ, մաքրակենցաղ ու ողջախոհ Գրիգոր Լուսավորչի և հայրենասեր ու աչխարհաչեն Արամի հետ: Սպարապետի բարեմասնությունները բազում են, որոնք բանաստեղծի գրչի տակ չափ ու կշիռ են ստանում.

Քաջահանճար և ուշեղ (իմա՝ ուշիմ),
Իմաստուն եւ խոհեմ,
Հեզ եւ հանդարտ,
Առղարադատ ու անաչառու,
Առատ ու զուարթ,
Մարդասէր ու օտարասէր,
Անոխակալ եւ անյիշաչար,
Անապատասէր եւ կրօնաւորասէր,
Եւ ամենայն բարեաց օթեւան…

Ածականների նման կուտակումով, խոսքի զարմանալի հստակությամբ, տողերի կազմակերպումով, կարծեք, Մագիստրոսը նարեկացիական ակունքներից է սնվել, բայց, եթե Նարեկացին նման և բազում այլ խորախորհուրդ խոսքերով ներբողում է «անքնին բարձրեալին», ապա Մագիստրոսը փառաբանում է մեծ սպարապետի հերոսական ու մարդկային կերպարը, մի մարդու, որն իր համար ուսուցիչ է եղել և հայր, իշխան ու տեր, ուստի երբ նա հեռացել է կյանքից, երախտապարտ աշակերտը իրեն ու իր նմաններին որբ ու թշվառ է համարում և տարակուսանքների մեջ գրում է.

Ո՞ զմեզ այժմ խրատէ,
եւ ո՞ մատակարարէ զտկարութիւն մեր,
Ո՞ եւ զանժուժութիւն համբերութեամբ իւրոյ մխիթարէ,
Ո՞ զաղխատս կերակրէ՝ առատատուր եւ զուարթ լրջմտութեամբ,
եւ ո՞ արդար դատողութեամբ զորբս եւ զայրիս տածէ,
Կամ զգերեալն գնէ,
Կամ զբանտարկեալսն առնակէ,
Կամ զցրուեալսն ժողովէ…

Կարդում ես այս տողերը և ոճից ու տաղաչափությունից ակամայից հիշում մեր հեթանոսական քերթության այն փոքրիկ ու գողտրիկ բեկորը, որ, իբր, Արտաշես արքան ասել է իր մահվանից առաջ, և որ, ի դեպ, մեզ է հաղորդվել իր իսկ՝ Գրիգոր Մագիստրոսի միջոցով.

Ո՞ տայր ինձ զծուխ ծիրանի,
Եւ զառաւօտն նաւասաւդի,
Ջվազելն եղանց
Եւ զվարգելն եղջերուաց.
Մեք փող հարուաք
Եւ թմբկի հարկանէաք,
Որպէս օրէնն է թագաւորաց…

Այնուհետև Մագիստրոսը իր նամակում նորից անցնում է արճակի և պատմում, թե ինչպես Վահրամ Պահլավունու բարեգործությունների համբավը սփռված է եղել հարևան ժողովուրդների մեջ. «Եւ այս յաչխարհին Քաղդէացւոց եւ Մարաց, եւ Պարթեւաց, եւ պատարագօք պատուէին զքեզ», եւ Յունաց իսկ ինքնակալացն պատուեալ մեծագոյն իշխանութեամբ», իսկ վրացիները, որոնք հաճախ նրա դաշնակիցներն են եղել թշնամիների դեմ մղած մարտերում, նրան, որպես դյուցազնի, երգեր էին ճոնում և, ինչպես ընդունված էր ժամանակին, տներում ու քաղաքների հրապարակներում գովերգում, փառաբանում էին նրան: Եվ այստեղ էլ ինքը՝ բանաստեղծ Մագիստրոսը, ոգևորվում, խանդավառվում և իր որդիական պարտականությունն է համարում նրա գովքը հյուսել, որը նորից վերածվում է չափածո խոսքի ու գովասանության.

Քեզ այդպէս վայել էր թագաւոր,
Եւ յայսպիսի պաղատան ճեմել,
Այսպիսի խռախճանութեամբ խռախճանալ,
Այսպիսի հայրենիս ստանալ,
Այսպիսեօք գանձօք փարթամանալ,
Այսպիսի կարասեօք…
Այսպիսի կառօք կառամարտել,
Յայսպիսի ձիրնթացս արշաւել,
Յայսպիսի ստադիոն բազմել,
Ջայսպիսի մրցումն տեսանել,
Այսպիսի փողհարօք և թմբկօք ճոխանալ,
Այսպիսի ոռւօք զբօսնուլ,
Այսպիսի բաղանեօք մարիլ:
Քոյովդ ջերմագոյն արեամբ ի ֆումդ սպառազինեալ
Եւ հանդիսացեալ առնիւն.
Այսպիսի հօր ըղնացեալ լինել որդի,
Այսպիսումն ծնողաց ժառանգորդ,
Յայսպիսեաց արմատոց շառաւիղ:
Դու՝ մեռելոցն ֆոց փոխելոցն տեացս՝

Փրկութեան պատճառ,
եւ կենդանեացս՝ յուսոյ,
եւ ողորմութեամբ յաստուածուստ:

Գրիգոր Մագիստրոսը ընդհանրապես հայտնի է որպես բացառիկ խրթնաբան հեղինակ, սակայն բերված հատվածները արտակարգ պարզ են ու հստակ, որոնցով արժանին է հատուցվում նահատակ սպարապետին: Այստեղ միաժամանակ գծագրվում է միջնադարյան Հայաստանում Բագրատունյաց իշխանության տարիներին տեղի ունեցող հանդիսությունների նկարագիրը, որ շատ բանով հիշեցնում է հեթանոսական ժամանակներից ավանդված սովորությունները, տոնախմբություններն ու որսորդությունը, որ մեզ նորից հղում է դեպի արտաշիսյան երգը, որտեղ նավասարդյան տոներն են հիշվում՝ որսորդության փողերի հնչյուններով և թմբուկների զարկերով:

Գրիգոր Մագիստրոսի նամակի մեջ պահպանված այս մասունքները ենթադրել են տալիս, որ դրանք Վահրամ Պահլավունի իշխանաց իշխանին նվիրված Մագիստրոսին պատկանող ավելի ընդարձակ դյուցազներգության բեկորներն են, որ նա վարպետորեն ագուցել է իր նամակին՝ մեզ ավանդելով 11-րդ դարի հայոց աշխարհիկ բանաստեղծության եզակի նմուշներ:

ԳՏՆՎԵԼ Է «ՆՅՈՒԹՈՎ ԵՎ ԳՐՈՒԹՅԱՄԲ ՊԱՏՎԱԿԱՆ» ՁԵՌԱԳԻՐԸ[1]

Մեր թերթի 1968 թվականի հուլիսի 24-ի համարում տպագրվել էր բանասեր Պարույր Մուրադյանի «Որտե՞ղ է հիմա նյութով ու գրությամբ պատվական ձեռագիրը» վերնագրով հոդվածը: Հր. Աճառյանի «Կյանքիս հուշերից» գրքի լույս ընծայման կապակցությամբ հեղինակն այդտեղ անդրադարձել էր ուղիղ յոթանասուն տարի առաջ, 1906 թվականին, Թավրիզում անվանի գիտնականի տեսած այն եզակի երկի ձեռագրին, որ կոչվել է «Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ»:

Պրոֆ. Աճառյանը, ինչպես նշված է նրա հուշերում, ժամանակի սղության պատճառով այդ մատյանին ծանոթացել է հպանցիկ, ուստի և միայն կարողացել է կատարել դրա նկարագրությունը և ընդօրինակել հիշատակարանը: Փոքր-ինչ ավելի ուշ, 1910 թվականին, իր կազմած Թավրիզի հայերեն ձեռագրաց ցուցակում Աճառյանը գրել է. «Սույն պատվական և խիստ հետաքրքիր գրվածքը ընտիր գանձարան մ՚ է հայերեն անասնաբուծական և անասնաբուժական բառերու, այնպես որ գրքիս լիակատար ուսումնասիրությունը պիտի տա թե՛ ընդարձակ տեղեկություններ գիտության մասին և թե՛ բազմաթիվ հայերեն նոր բառեր մեր բառարանի համար»:

Հուրախություն հայագիտության, «Բժշկարանը» գտնվեց ԱՄՆ-ում, երբ շրջագայությամբ այնտեղ էր գտնվում բանասեր Բ. Զուգասզյանը: Խմբագրության խնդրանքով նա այդ մասին պատմում է իր հոդվածում, որը և տպագրում ենք ստորև:

Միջնադարյան հայ մատենագրությունը, դժբախտաբար, հարուստ չէ անասնաբուծության և անասնաբուժության վերաբերյալ հուշարձաններով: Պրոֆ. Աճառյանի հայտնաբերած սույն «Բժշկարանը» այդ եզակի երկերից է, որ ըստ հիշատակարանի հայոց Սմբատ Գ. արքայի (1296-1298) հրամանով Գրիգորիս կաթողիկոսի օրոք Սիս քաղաքում թարգմանվել է «ի յարապ գրէ ի հայ բառ»: Այս իրողությունից էլ ելնելով՝ Պ. Մուրադյանը վերը նշված հոդվածում իրավացիորեն ընդծում է ձեռագրի առանձնահատուկ արժեքը նաև հայ-արաբական գրական-մշակութային առնչությունների պատմության ուսումնասիրման առումով և խոսում երկը արաբերենից հայերենի փոխադրող ասորի բժիշկ Ծարաջի ու նրա գործընկեր Թորոս քահանայի բնույթի մասին:

«Բժշկարանը» 18-րդ դարում հայերենից թարգմանվել է վրացերենի և թարգմանության ձեռագիր մի օրինակը ներկայումս պահվում է Թբիլիսիի Կ. Կեկելիձեի անվան ձեռագրերի ինստիտուտում: Նկատի ունենալով, որ հայերեն թարգմանության ձեռագիրը համարվում էր կորած, բանասերը իր հոդվածում առաջարկում է վրացերենից այն վերաթարգմանել հայերենի:

«Բժշկարանի» ձեռագիրը ԱՄՆ-ում գտնվելու մասին մեզ տեղեկացրել էր Կալիֆորնիայի համալսարանի Մերձավոր Արևելքի երկրների բաժնի վարիչ, պրոֆ. Ա. Սանջյանը: Մեզ բախտ վիճակվեց այն տեսնել լոսանջելոսաբնակ Զ. Սարաջյանի մոտ և չնորհակալությամբ ստանալ մանրաժապավեն օպիսը: Զ. Սարաջյանը հայտնեց, որ տարիներ առաջ,

---

[1] Հրապարակվել է «Սովետական Հայաստան» օրաթերթում, 1976, № 203, սեպտեմբերի 1, էջ 4:

երբ իրենց ընտանիքը ապրում էր Թավրիզում, հայրը՝ Խաչիկ-աղա Սարաջյանը, ձեռագիրը գնել է դերձակ Շիրմազանից, որի մոտ և ժամանակին տեսել էր պրոֆ. Աճառյանը:

Ձեռագիրը պահվում է խնամքով և հոգատարությամբ, գտնվում է ճիշտ նույն վիճակում, ինչպես նկարագրված է Թավրիզի ձեռագրացուցակում, բաղկացած է ընդամենը 184 թերթից (368 էջ), գրված է 26x18 սմ մեծությամբ հաստ ու ողորկ թղթի վրա, գրությունը խոշոր բոլորգիր է, 6 բ էջի վրա հնդիկ ձընայ իմաստասերի գծապատկերն է, իսկ 33 բ էջում կա ձիու ոչ վարպետորեն գծված խոշորադիր մի նկար, որի չուրջը գրված են ձիու մարմնի մասերի անունները: Ձեռագրի սկզբից և վերջից թերթեր են ընկած. սկզբից պակասում է ԱԺԳ գլուխների ցանկը, իսկ վերջից՝ հիշատակարանի մի մասը: 7 ա էջից մինչև 183 բ էջը «Բժշկարանի» 182 գլուխներից բաղկացած բնագիրն է լրիվ, այստեղ նախ խորհուրդներ են տրվում ձի ճանաչելու մասին, բնութագրվում են ձիերի դրական ու թերի կողմերը, մանրամասն նկարագրվում են հիվանդությունները, բուժման եղանակները՝ դեղատոմսերով հանդերձ, անհրաժեշտ խնամքն ու հոգսը:

Լեզվական իր ատաղձով «Բժշկարանը» համահունչ է 13-րդ դարի Կիլիկյան Հայաստանում ստեղծված այնպիսի հանրահայտ հուշարձաններին, ինչպիսիք են Սմբատ Գունդստաբլի «Դատաստանագիրքը», «Ասիգք Անտիոքայ» ֆրանսերենից թարգմանված օրենքների ժողովածուն, և մասնավորապես, արաբերենից թարգմանված «Գիրք վաստակոց» գյուղատնտեսության ձեռնարկը:

Ինչպես վկայված է, 1263 թ., հայոց Հեթում Ա արքայի օրոք, հայերենի են թարգմանվել պողպատաձուլության, թրագործության, քիմիայի, աստղագիտության և ձիաբարմանության վերաբերյալ գործեր, որոնցից մեզ է հասել միայն ներկայումս Փարիզի ազգային մատենադարանում պահվող «Գիրք արուեստի քիմիական» երկի ձեռագիրը:

Հանրահայտ է, որ դեռևս հին ժամանակներից Հայաստանը հռչակված էր իր ազնվացեղ ձիերով ու գրաստներով և ձիաբուծությունը կարևոր տեղ էր գրավում երկրի տնտեսության մեջ: Այս ավանդույթը շարունակվեց նաև միջին դարերում. Կիլիկյան Հայաստանի ձիերը նույնպես մեծ համարում ու ճանաչում ունեին ներքին ու արտաքին շուկաներում: Եվ դա հասկանալի է. մարտական ու տոկուն ձիերի ու գրաստների մեծ կարիք ուներ հայկական հեծելազորը, միաժամանակ դրանք եկամտի կարևոր աղբյուր էին և արտահանվում էին շատ երկրներ:

Նման պայմաններում միանգամայն պարզ է, թե Կիլիկյան թագավորության մեջ ինչու էին մեծ ուշադրություն դարձնում ձիաբուծության զարգացմանը, թե ինչու էր Հեթում Ա-ն հրամայում թարգմանել «Վասն ձիոյ պայթարնմանն» (բնագիրը մեզ չի հասել), իսկ Սմբատ Գ-ն՝ «Բժշկարան վասն ձիոյ և առհասարակ գրաստնոյ» ձեռնարկները:

Անասնաբուժության վերաբերյալ առաջին գրավոր վկայությունները մեզ են հասել Հին Եգիպտոսից, Ասորիքից, ձիաբույժներ են եղել Հնդկաստանում, Իրանում և Հին Հունաստանում, հավանաբար նաև Ուրարտուում, որտեղ ձիաբուծությունը տնտեսության կարևորագույն բնագավառներից մեկն էր: 10-րդ դարում Կոնստանտին Ծիրանածին Բյուզանդիայի կայսրը կազմել է տվել ձիաբուժական և գյուղատնտեսական ամբողջական ձեռնարկներ: 11-13-րդ դարերից պահպանվել են արաբերեն ու պարսկերեն ձիաբուժարաններ: Թե մեր «Բժշկարանը» ինչ առնչություններ ունի ժամանակին գոյու-

թյուն ունեցած օտարալեզու ձիաբուժարանների հետ, հայտնի կդառնա հետագա ուսումնասիրություններից:

Ինչպես նշվեց վերը, «Բժշկարանի» հիշատակարանում ասված է, որ այն թարգմանված է արաբերենից: Միջնադարում, անգամ մինչև անցյալ դարի վերջերը, թարգմանություն ասելով՝ ավելի հաճախ հասկանում էին փոխադրություն որևէ լեզվից՝ թարգմանչի ազատ միջամտությամբ՝ հավելումներով ու կրճատումներով: Ձեռքի տակ չունենալով «Բժշկարանի» արաբերեն հիմք բնագիրը, դժվար է ասել, թե բժիշկ Ծարայը և նրան օժանդակող Թորոս քահանան ինչպիսի միջամտություններ են կատարել հայերեն թարգմանության մեջ, բայց, որ կան միջամտություններ՝ ակնբախ է. այսպես՝ բնագրի առաջին իսկ գլուխը, որ ավելի առաջաբանի տպավորություն է թողնում, շարադրված է քրիստոնյա մարդու հասկացողությամբ, ավելին՝ կրում է հայերեն մտածողության որոշակի հետք. ձի բառը բացատրվում է հայկական ժողովրդական ստուգաբանությամբ, այն է՝ «ճիգ ընթացող և արագ արշաւող», ձիերի խարանանշանների (դաղերի) մեջ կան և հայկական տառաճևեր, թարգմանչի միջամտություններից են, հավանաբար, նաև այն նշումները, որտեղ առաջին դեմքով ասված է, թե առաջարկվող տվյալ բուժումը փորձված է և կամ թե առաջարկվում է այլ բուժում:

Անասնաբուժության զարգացման ներկա ժամանակաշրջանում միանգամայն պարզ է, որ խոսք չի կարող լինել ձիադարմանական այս երկի մասնագիտական արժեքի վերաբերյալ, չնայած հնարավոր է առանձին հարցեր հետաքրքիր լինեն ձիաբույժներին: «Բժշկարանը» այսօր արժեքավոր է որպես մշակութային երևույթ և, որ ամենակարևորն է, որպես միջին հայերենի եզակի հուշարձան թե՛ անասնաբուծական իր տերմիններով, թե՛ բառարաններին անծանոթ հայերեն նոր բարդություններով և թե՛ օտար, հիմնականում արաբերեն ու պարսկերեն, բառերի փոխառություններով:

Ձեռագրի մեջ արտացոլված լեզվական երևույթները հարստացնում են մեր գիտելիքները միջին հայերենի վերաբերյալ և հաստատում վաստակաշատ գիտնականի եզրակացությունը, թե հիրավի «Բժշկարանը» «նյութով և գրությամբ պատվական» մի հուշարձան է:

«ԲԺՇԿԱՐԱՆ ՁԻՈՅ» ԵՐԿԻ ՆՈՐԱՀԱՅՏ ԱՐԱԲԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ[!]

Համահեղինակ՝ Արամ Տեր-Ղևոնդյան

Հայ-արաբական մշակութային կապերի դրսևորման առավել կարևոր երևույթներից է Կիլիկյան հայոց Սմբատ արքայի (1296-1298 թթ.) կարգադրությամբ ասորի բժիշկ Ցարաչի կազմած «Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ» ձիաղարմանության երկը: Ըստ Ցարաչի թողած հիշատակարանի՝ իր աշխատանքը գրելու համար նա օգտվել է հնդկական ու արաբական աղբյուրներից, ինչպես ինքն է նշում՝ «ի բազում իմաստասիրաց՝ Ճընայ և Ապի Ուսուֆին և Ըռայչիտայ և այլ բազում հնդկաց և Պաղտըտայ իմաստասիրացն»[1]:

XIII դարի երկրորդ հիսնամյակում չարունակվում էր Կիլիկյան հայոց պետականության առաջընթաց զարգացումը, ընդարձակվում էին նրա քաղաքական ու տնտեսական կապերը հարևան և հեռավոր երկրների ու իշխանավորների հետ: Երկրի քաղաքական ու ռազմական հզորությունը ամրապնդելու, ուժեղացող արտաքին վտանգին դիմագրավելու համար հայ իշխանավորները ինքնաբերաբար ավելի մեծ ուշադրություն էին դարձնում երկրի տնտեսության, մասնավորաբար գյուղատնտեսության վերելքին և արտաքին ու ներքին առևտրի ծավալմանը: Այս ժամանակներում է, որ արաբերենից հայերեն են թարգմանվում «Գիրք վաստակոցը», ինչպես նաև աստղագիտության, քիմիաբանության, ձիաղարմանության, պողպատաճուլության և թրագործության վերաբերյալ գրքեր[2]:

Հայաստանը վաղուց անտի ճանաչված էր որպես ձիաբուծության կարևոր կենտրոն, իսկ այդ ավանդները չարունակվում էին նաև Կիլիկյան հայոց պետականության գոյության ժամանակներում: Եվ դա հասկանալի է. մարտական ու տոկուն ձիերի ու գրաստների մեծ կարիք ուներ հայկական հեծելազորը, ձին միաժամանակ եկամտի կարևոր աղբյուր էր և արտահանվում էր շատ երկրներ: Հետևաբար, պատահական չէր, որ Կիլիկիայում ձիաբուծական ձեռնարկներ էին կազմվում:

Բժիշկ Ցարաչի կազմած ձիագիտական երկից միայն մեկ ամբողջական ձեռագիր է մեզ հասել, մինչդեռ ըստ մատենագիտական տեղեկությունների միջնադարում գործածության մեջ են եղել դրա այլ ընդօրինակություններ ևս, որոնցից մեզ հայտնի են 1504 թ. Սեբաստիայի օրինակը (1788 թ. սրանից կատարվել էր «Բժշկարանի» վրացերեն թարգմանությունը) և ներկայումս Վենետիկի Մխիթարյան մատենադարանում պահվող «ի

! Տե՛ս «Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան 1985, № 11, էջ 63-68:

1 *«Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ»* (ԺԳ դար), աշխատասիրությամբ Բ. Լ. Զուգասզյանի, Երևան, 1980, էջ 163:

2 «Բազմավեպ», 1867, էջ 354, **Գ. Զարպհանալյան**, *Հայկական թարգմանություններ նախնյաց*, Վենետիկ, 1889, էջ 558, **Տոքթ. Վահրամ Հ. Թորգոմյան**, *Հայ բժշկական ձեռագիրք ս. Ղազարու վանքին*, «Բազմավեպ», 1924, էջ 387-388:

դրաստու բժշկարանէն փոխած» խորագիրը կրող ձեռագիր պատառիկը[1]: Ցարաջի «Բժշկարան ձիոյ» երկի մի ամբողջական օրինակը 1906 թ. Իրանի Թավրիզ քաղաքում տեսել և նկարագրել էր պրոֆ. Հր. Աճառյանը: Հետագայում այդ մատյանը երկար ժամանակ հրապարակից դուրս էր եկել ու կորսված էր համարվում և միայն 1971 թ. Կալիֆոռնիայի համալսարանի Մերձավոր արևելքի երկրների բաժնի վարիչ, պորֆ. Ա. Սանջյանի աջակցությամբ այն հայտնաբերվեց Լոս Անջելոսի բնակիչ Զարեհ Սարաջյանի մոտ: 1972 թ. հոդվածիս հեղինակներից Բ. Զուգասզյանին բախտ է վիճակվում տեսնել այդ մատյանը և ստանալ դրա մանրաժապավենը, իսկ փոքր-ինչ ավելի ուշ՝ 1980 թ., նրա աշխատասիրությամբ Երևանում հրապարակվում է «Բժշկարանը»՝ համապատասխան առաջաբանով և ընդարձակ ստուգաբանական բառարանով: Այս երկը, որ միջնադարյան հայ բժշկագիտության կարևոր հուշարձաններից է, արժեքավոր է նաև իր բառագանձով՝ հայերեն անծանոթ նոր բարդություններով, օտար՝ հիմնականում արաբերեն ու պարսկերեն, բառերի ու տերմինների փոխառություններով:

Բ. Զուգասզյանը, «Բժշկարանը» ըստ ամենայնի համեմատելով մի խումբ արաբերեն ու պարսկերեն միջնադարյան ձիաղարմանության երկերի հետ, որոնք չափազանց մանվածապատ, ավելորդ մանրամասներով, բարդ շարադրանք ունեն[2], եկել է այն եզրակացության, որ բժիշկ Ցարաջը, օգտվելով հանդերձ իր ձեռքի տակ եղած օտար աղբյուրներից, ստեղծել է շատ ինքնատիպ, պարզ ու դյուրըմբռնելի մի երկ, որի տարբեր ընդօրինակությունները դարերի ընթացքում օգտագործվել են հայկական ձիաբուծական կենտրոններում:

Վերջերս հայտնի դարձավ, որ Վաչինգտոնի զինվորական գրադարանում պահվում է ձիաղարմանության արաբերեն ձեռագիր մի երկ, որ թարգմանված է հայերենից[3]: Արաբերեն ձիագիտական այս երկի ուսումնասիրությունը (մանրաժապավենի հիման վրա) հնարավորություն ընձեռեց բացահայտելու արաբ-հայկական հարաբերությունների նոր, հետաքրքիր մի էջ: Այս իմաստով կարևոր է ձեռագրի հետևյալ առաջաբան-հիշատակարանը.

«Սա մի գիրք է, որ պարունակում է ձիու նկարագրությունը և նրա հիվանդությունների բուժումը: Սա հայերեն գրով էր և վերածվել է արաբերեն գրի: Բանն այն է, որ մեծ իշխան մուլքահիզ (իմա՝ պայքարող) Հուսամ ալ-Դին Լաջինը, որը ծանոթ է Սարխադի անվամբ և աստվածապահ Եգիպտոսի մեծամեծ ամիրաներից է, այն (իմա՝ հայերեն բժշկարանը) վերցրել է հայոց թագավորի գանձապահարանից, գտնելով այն այլ գրքերի մեջ, երբ թշնամին ջարդվել և խեղճացել էր աստվածապահ Հոմս հայտնի քաղաքից այն կողմում [տեղի ունեցած ճակատամարտում], Մանսուրի (իմա՝ Հուսամ ալ-Դին Լաջինի) տիրակալության օրերին, աստված փառավորի նրա իշխանությունը: Նա [գիրքը] տվել էր իր խոնարհ ծառա Իբրահիմին, որը հայտնի է բանակի քարտուղար անվամբ, դրոշների

1 Տե՛ս «Բազմավեպ», 1867, էջ 354:

2 Տե՛ս «Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ» երկի հրատարակության առաջաբանը, էջ 24:

3 Այս արժեքավոր տեղեկությունը 1984 թ. շնորհակալությամբ ստացել ենք Քլիվլենդի (ԱՄՆ) համալսարանի պրոֆեսոր, հայագետ-լեզվաբան Ջոն Գրեփինից, որի սիրալիր օժանդակությամբ ստացվեց նաև արաբերեն ձեռագրի մանրաժապավենը: Ձեռագրի նկարագրությունը տե՛ս **Schullian D. M., Sommer F. E.,** *Catalogue of incunabula and manuscripts in the Army Medical Library*, 1948, N. Y., p. 298.

պահեստում, երբ այնտեղ ձերբակալված էր: Նրա մոտ բերվեցին մի խումբ հայ գերիներ, որոնք գիտեին այդ գիրը: Նա (իմա՝ Իբրահիմը) ստուգեց և այն վերածեց արաբերենի, հետևեց դրանց իմաստին ու ուղղեց, որ հասկանալի լինի և յուրաքանչյուր հատվածը համապատասխանի [հայերենին]: Գիրքը բովանդակում էր գիտելիքներ ընտիր ձիերի մասին, դրանց նշանները, և վատ ձիերի նշանները, հիվանդությունները, ախտերը, դրանց բուժումը դեղերով, դեղաբույսերով, քրտնեցումով, կտորներով, գորգերով, արցունքով, [տեղում] կանգնեցնելով և այլ միջոցներով: Դեղերի ու դեղաբույսերի անունները և եզրերը (տերմինները) [հաճախ] արաբերեն անհասկանալի էին և բարձրյալն աստված նրան օգնեց հայ գերիների մեջ արհեստին գիտակ մի վիրաբույժ գտնել, որը անհասկանալի բառերը բանիմացորեն բացատրեց, քանզի այդ գիրքը բովանդակում էր այն, ինչ նա ստուգել էր փորձով, իսկությունը ճշտել և ճշմարտությունն իմացել էր:

Հայոց թագավորը այն (գիրքը) ձեռք էր բերել Բաղդադի գիտության տնից՝ խալիֆայական գանձատնից, երբ պարտված (sic) այնտեղ էր գնացել թշնամու մոտ ծառայության ժամանակ, և գիրքը արաբերեն էր, որ նա հայերենի վերածեց: Այսպիսով [գիրքը նորից արաբերենի վերածելով], արդարությունը վերադարձավ իր տեղը: Աստված է հաջողություն բերողը, և նրան ենք ապաստանում նպատակին հասնելու և իղձերն ու ծրագրերը իրականացնելու համար՝ եթե նա կամենա:

Եվ այս Տիբրի ճակատամարտը վերոհիշյալ Հոմսից այն կողմ [տեղի է ունեցել] ռաջաբ ամսի տասնիններին, կենտ օրը, հինգշաբթի, հիջրի վեց հարյուր ութ թվականին, փառք Աստուծո»:

«Բժշկարանի» արաբերեն թարգմանության առաջին գլուխն ունի նաև հետևյալ տեղեկությունը.

«Հիվանդությունների, լավ ու արատավոր նշանների մասին, ինչ որ հետաքրքիր է բժիշկ Մուհամադ իբն Խալիֆա Յակուբին՝ արաբական ցեղից, և նրա հետ այդ բանում մասնակցել է Սադ-ալ-Դին իբն ալ-Զահիր պարսիկը: Իսկ նա, որ հայերենի է վերածել, կոչվում է Մահբուբ և նրա ընկերը՝ Աբու-լ-Ֆարաջ, նա [Մահբո՞ւբը] արաբերեն, ինչպես նաև այլ լեզուներ լավ չգիտեր:

Հայոց թագավորը Բաղդադ քաղաքի գիտության տնից գիրքը վերցրել էր Եգիպտոսի և Ասորիքի (Շամ) տեր ալ-Զահիր Ռուքն ալ-Դին Բայբարսի թագավորության ժամանակ [1260-1278 թթ.]. աստված նրա հոգին սրբացնի և նրա չիրիմը լուսավորի:

Սա մի օգտակար գիրք է ձիու, նրա հիվանդությունների, լավ ու արատավոր նշանների մասին»:

Տարբեր ձեռագրատներում պահվող արաբերեն ձեռագրերի ցուցակների ստուգումից պարզվում է, որ ձիաղարմանության հայերեն այս երկի արաբերեն թարգմանության երեք այլ ընդօրինակություններ ունեն՝

1. Բրիտանական գրադարանը (նախկին թանգարանը), Or. 3133 (=815), ընդօրինակված 1854 թ.[1]: Ռիուի նկարագրությունից պարզվում է, որ ի տարբերություն ամբրիկյան ռազմական բժշկական գրադարանի «Ախրապատինի» արաբական թարգմանու-

1 **Ch. Riew**, *Supplement to the Catalogue of the Arabic MSS in the British Museum*, London, 1984, p. 552-555.

թյան տարբերակի, այս մատյանը 182 գլխի փոխարեն բաղկացած է 183 գլխից, բայց ունի նույնատիպ առաջաբան-հիշատակարան:

2. Գոթայի գրադարանը, № 2087[1]: Ըստ Ռիուլի (անդ) այս օրինակը չնչին տարբերությամբ արձագանքում է Բրիտանական թանգարանի օրինակին:

3. Արաբական թարգմանության մի տարբերակ ևս նկարագրված է դոկտ. Ջոն Լիի ձեռագրացուցակում[2]: Ջեռագրի ներկայիս հասցեն հայտնի չէ: Ըստ Ռիուլի (անդ) այս օրինակը ևս համընկնում է Բրիտանական թանգարանի տարբերակին:

«Բժշկարանի» արաբերեն նորահայտ թարգմանության մանրամասն համեմատությունը Ֆարաջի կազմած հայերեն «Բժշկարանի» հետ հնարավորություն է տալիս ճշտելու այս երկու բնագրերի փոխադարձ կապը, ինչպես նաև Ֆարաջի երկի ստեղծման, հետագա ճակատագրի մասին հանգելու նոր և ավելի հավաստի եզրակացությունների.

1. Աներկբայորեն հաստատվում է, որ արաբերեն «Բժշկարանի» հիմքը Ֆարաջի երկն է եղել. ինչպես Ֆարաջի մոտ, արաբերեն թարգմանության սկզբում ևս դրված է գրքի 182 գլուխների ցանկը, սակայն արաբերենում պահպանված է միայն 47 գլուխ, մյուս գլուխները պակասում են, չկան նաև գրքի սկզբում գտնվող ճննա իմաստասերի և հետագա չարադրանքի մեջ առկա ձիու գծապատկերները և խարանանշանները (դաղերը): Հայերեն «Բժշկարանի» առաջին գլխի բովանդակությունը, որտեղ քրիստոնյա Ֆարաջը մի քանի նախադասությամբ անդրադառնում է աշխարհի արարչությանն ու կենդանիների անվանադրությանը և ձի բառը ստուգաբանում է հայ մարդու մտածողությամբ որպես «ձիգ ընթացող և արագ արշավող» փոխարինված է վերը բերված հիշատակարանի երկրորդ հատվածով, որտեղ խոսվում է Բաղդադում հայոց արքայի գտնվելու և Մահրուբի ու Աբու-լ-Ֆարաջի կողմից արաբերեն ձիագիտական մի երկ հայերեն թարգմանելու մասին: Արաբերեն բժշկարանի մնացյալ 46 գլուխները փոքր հապավումներով, բայց համարյա բառացիորեն, համընկնում են հայերեն բնագրին:

*2. Մեր ձեռքի տակ գտնվող Ֆարաջի բժշկարանի ընդօրինակության մեջ պակասում է ԺԷ գլուխը՝ «Վասն նշաննոյ և հետ որոյ լինի ձին», մինչդեռ այն առկա է արաբերեն թարգմանության մեջ**: *Նշանակում է հայերեն հիմք-բնագրից արդեն 1296-98*

1 **W. Pertsch**, *Die arabischen Handschriften der herzoglichen Bibliothek zu Gotha*, vierter Band, Gotha, 1883, s. 110-111.

2 **J. Lee**, *Oriental MSS Purchased in Turkey*, N. 141.

* Բերենք այստեղ արաբերեն Բժշկարանի ԺԷ գլխի թարգմանությունը, որով լրացվում է 1980 թ. հրատարակության համապատասխան պակաս հատվածը:

Գլուխ տասնութերորդ

Խալերի և մաճիկների անունները և այնպիսիների, որոնք ձիերին հատուկ խալերի նշաններ ունեն:

Եթե դրանց մեջ կան սպիտակ մաճիկներ կամ սպիտակ խալեր, կոչվում են միագույն (անխառն):

Իսկ եթե դրանցում նշան չկա, կոչվում են առանց նշանի:

Եթե մաճիկները սպիտակ վզով են, թեքված, և եթե [ձիան] երկու աչքերն ու թարթիչները սպիտակ են, կոչվում են մուրիր [սպիտակ արաբական ձիեր ունեցող]:

Եթե երկու աչքերը շեկ են և դրանցում մաճիկներ չկան՝ լայն ուժեղ սպիտակ [են]:

Դրանցում կան բարձրահասակներ և կան այնպիսիք, որոնք նրա քթին են հասնում [միանում]:

Կա այնպիսին, որ սպիտակ է մինչև երասանակի [լկամ] տեղը:

Այս անունները բոլորը կոչվում են մաճիկներ:

Եթե ճակատին լինի կլորաձև սպիտակ, ապա կոչվում է մաճիկ:

թվականներին ընդօրինակություններ են եղել, որից և մեկը մեզ հայտնի օրինակն է (տպված 1980 թ.), իսկ մամլուկների կողմից հայոց արքայի գանձարանից վերցվածը, թերևս, հիմք-բնագիրն է եղել և կամ ավելի ամբողջական ընդօրինակությունը:

3. Ֆարաջի «Բժշկարանի» արաբերեն նորահայտ թարգմանության հիշատակարան-առաջաբանում, ինչպես տեսանք վերը, ասված է, որ հայերեն «Բժշկարանը» Եգիպտոսի ամիրա Հուսամ ալ-Դին Լաջինը (որին և Մանսուր էին անվանում) վերցրել է հայոց թագավորի գանձարանից՝ Հոմս քաղաքի մոտ տեղի ունեցած Տիբրի ճակատամարտից հետո, որ տեղի է ունեցել հիջրի 608 թվականին, այսինքն՝ 1212 թ.: Սակայն այս թվականը անհարիր է Լաջինի իշխանության տարիների հետ, որ են 1297-1299 թթ.: Վերջինս ստույգ է, հետևաբար, գրչական սխալ պիտի համարել 1212 թվականը:

Հայկական և արաբական աղբյուրները Լաջինի հարձակումը Կիլիկիայի վրա որոշակիորեն նշում են 1298 թ.: Հայտնի է, որ այդ ժամանակ Կիլիկիայում թագավորական գահի համար պայքար էր սկսվել երկու եղբայրներ Սմբատի և Կոստանդինի միջև, իսկ Եգիպտոսի սուլթան Լաջինը (նաև՝ Լաչին), առիթը հարմար գտնելով, հրամայում է իր զորաբանակներին մտնել Կիլիկիա: Երկու զորամասեր ամիր Բեդ էդ-Դին Բեկթաջի և Հալեպ էդ-Դին Սինջարի հրամանատարությամբ երկու կողմից ներխուժում են Կիլիկիա: Սինջարի զորամասերը հասնում են Սիս: Ինչպես գրում է Սամվել Անեցու պատմության շարունակողը, «մսրցին (իմա՝ եգիպտացին) եմուտ ի Կիլիկէ և առհասարակ այրեաց զգեօղ և զքաղաք և զբազումս եսպան և զայլս վարեաց: Եւ այլք զայս Զհէ (747+551=1298) թվին ասեն ելեալ. և ճիշդն այն է»[1]: Արաբ ժամանակագիրներից Աբուլ-Ֆիդան, որ մասնակցել է այդ արշավանքներին, վկայում է, որ Լաջինի բանակները Սսի երկիր են մտել երկու անգամ. առաջինը հիջրի 697 թվականի ռաջաբ ամսի երկրորդ տասնօրյակին (1298 ապրիլի 23 – մայիսի 2)՝ կողոպտելով և ավերելով երկիրը, և երկրորդը ավելի ուշ՝ նույն թվականի հունիս-հուլիս ամիսներին, երբ չրջապատում և գրավում են Համուս ամրոցը[2]: Ամենայն հավանականությամբ, այս Համուսը (որ և Նաչիմա է կոչվել) արաբական «Բժշկարանում» հիշված Հոմսն է: Ինչպես տեսնում ենք 1298 թ. մամլուկների հարձակումը Կիլիկիայի վրա զուգադիպում է Ֆարաջի «Բժշկարանի» ստեղծման տարիներին՝ 1296-1298 թթ.: Այստեղից պետք է եզրակացնել, որ 1298 թ. հայոց թագավորի գանձատնից կողոպտված ձիաղարմանության երկը Լաջինի հրամանով կարող էր թարգմանված լինել 1298 թ. վերջերին և կամ 1299 թ.՝ նրա սուլթանության վերջին տարում:

4. Հայտնի է, որ ժամանակի արաբական աշխարհում բազմաթիվ ձիամատյաններ կային, բայց հավանաբար դրանցից և ոչ մեկը Ֆարաջի կազմածի պես պարզ ու դյուրըմբռնելի, ավելորդաբանություններից ու անոտիապաշտությունից զուրկ չեն եղել: Բացի այդ, Ֆարաջի «Բժշկարանի» մեջ գրաստների հիվանդությունների բուժման հա-

---

Եթե վերևի կեսում կա սպիտակություն, կոչվում է ոուսմա [քթի մի կողմը սպիտակ]:
Եթե սպիտակ է ինչպես քիթը, կոչվում է ներկված:

1 *«Սամուէլի քահանայի Անեցւոյ հաւաքումն ի գրոց պատմագրաց»*, Վաղարշապատ, 1893, էջ 153-154, հմմտ. **Г. Микаелян**, *История Киликийского армянского государства*, Ереван, 1952, с. 430.

2 *«Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին»*, կազմեց Հ. Նալբանդյան, Երևան, 1965, էջ 240:

մար հանճնարարվող դեղորայքն ու միջոցները մեծ մասամբ փորձված են եղել: Դրանով իսկ պիտի բացատրել, որ Լաջինը կարգադրել է այն թարգմանել արաբերեն:

5. Հետաքրքրական է նաև արաբական թարգմանության առաջին գլխում բերված տեղեկությունը հայերեն այս «Բժշկարանի» Բաղդադում թարգմանված լինելու մասին: Մի հանգամանք, որի յուրովի արձագանքը գտնում ենք Փարիզի Ազգային մատենադարանում պահվող հայերեն ձեռագիր «Գիրք արուեստի քիմիական» երկի հիշատակարանում, որտեղ ասվում է, որ հայոց Հեթում Ա թագավորը, երբ «գնաց ԺՀՌ (18.000) հեծելով ի վերայ թշնամոյն սուլտանին և կոտորեաց և սպառեաց զամենեսին և գնաց մեծաւ պատվով ի Պաղտատ առ Նսոր խալիֆայն», Ստեփանոս անունով մի ուսյալ սարկավագի թարգմանել տվեց «Գիրս Վասն ձիոյ պայթարնման և Վասն թրի չինելոյ և Վասն արեգական և լուսնի արուեստին» և բերեց հայոց աշխարհ[1]:

Ինչպես տեսնում ենք, այս հաղորդումը իր ոչ ոք տվյալներով՝ հայոց թագավորի Բաղդադում գտնվելու և ձիաղարմանության երկ թարգմանելու մասին, ինչպես և ժամանակի՝ 1263 թ., առումով համընկնում է «Բժշկարանի» արաբական նորահայտ թարգմանության տվյալներին՝ հայոց թագավորը գիրքը ձեռք է բերել Բաղդադի գիտության տնից, Բայբարսի օրոք, որ իշխել է 1260-ական թվականներին: Բայց հարկ է նշել, որ չեն համընկնում թարգմանիչների անունները. վերի հայկական հիշատակարանում՝ Ստեփանոս, իսկ «Բժշկարանի» արաբական թարգմանության մեջ՝ Մահբուբ և Աբու-Ցարաջ: Ցարաջի անվան հիշատակումը այստեղ և հայկական «Բժշկարանում» ենթադրել է տալիս, որ թերևս 1260-ական թվականներին Ցարաջը նույնպես եղել է Հեթում Ա-ի ծառայության մեջ և շատ ավելի ուշ՝ 30-35 տարի հետո, 1296-98 թթ., ելնելով քաղաքական իրադրությունից, իր կազմած «Բժշկարանը»՝ Թորոս քահանայի խմբագրությամբ, ճոնել է Սմբատ արքային:

1980 թ., երբ հրատարակության էր պատրաստվում Ցարաջի կազմած «Բժշկարանը», Հեթում Ա-ի ժամանակ Ստեփանոսի թարգմանած «Վասն ձիոյ պայթարնման» երկը մի այլ, մեզ չհասած բժշկարանի էր համարվել: Արաբական նորահայտ թարգմանության տվյալների լույսի ներքո կարելի է ենթադրել, որ թերևս դրանք նույն երկի տարբեր խմբագրություններ են եղել:

6. Օտարերկրյա ներխուժողների կողմից հայկական մշակութային մատենադարանների կողոպուտների մասին մեր աղբյուրներում բազմաթիվ տեղեկություններ են պահպանվել: Ցարաջի «Բժշկարանի» արաբական սույն թարգմանությունը վկայում է մի այլ, ցարդ որևէ այլ տեղ չհիշատակված, կիլիկյան գանձատան ավերման մասին, որտեղ և որպես մի թանկարժեք մատյան պահվել է Ցարաջի կազմած ձիաղարմանության երկը: Զի բացառվում, որ սրա հետ մեկտեղ հայոց արքայական գանձապահարանում բազում այլ մատյաններ ևս եղած լինեն, որոնք մամլուկների կողմից ավարի են ենթարկվել: Այն, որ օտար ներխուժողները գանձատունը թալանելիս ուշադրություն են դարձրել գրչագիր մատյաններին, վկայում է, որ նրանք շատ լավ գիտակցում էին գրավոր, հատկապես գանձատանը պահվող հուշարձանների արժեքը, որոնցից նրանք օգտվել են հօգուտ իրենց մշակույթի:

1 Տե՛ս «Բազմավեպ», 1867, էջ 354:

7. Ֆարաջի «Բժշկարանի» արաբերեն նորահայտ թարգմանությունը թույլ է տալիս խորհելու, որ, հավանաբար, հայերենից արաբերեն թարգմանված այլ երկեր ևս լինեն, որոնք ցարդ հայտնի չեն հայագիտությանը, ուստի այս նկատառումով վերջին տարիներին լույս տեսնող արաբական ձեռագրացուցակները պետք է լինեն բանասերների ուշադրության կենտրոնում:

8. Արաբ-հայ միջնադարյան մշակութային առնչությունների փաստերը հարուստ չեն. հայերենից արաբերեն թարգմանված միայն երկու հուշարձան է հայտնի՝ Ագաթանգեղոսի «Պատմությունը» և «Աղվեսագիրքը»: Այս իսկ առումով արժեքավոր է Ֆարաջի «Բժշկարանի» արաբերեն նորահայտ թարգմանությունը, որը մի նոր և հետաքրքիր էջ է բացում արաբ-հայկական մշակութային կապերի պատմության մեջ:

НОВОВЫЯВЛЕННЫЙ АРАБСКИЙ ПЕРЕВОД СОЧИНЕНИЯ «ЛЕЧЕБНИК ЛОШАДЕЙ»

Соавтор Арам Тер-Гевондян

Р е з ю м е

В 1296-98 гг. по поручению киликийского армянского царя Смбата III врач-сириец Фарадж составил на армянском языке руководство, озаглавленное им «Лечебник лошадей и вообще вьючных животных». В средние века это сочинение переписывалось неоднократно, однако до нас дошел его единственный экземпляр, ныне являющийся собственностью частного лица в США. На основе микрофильма, снятого с этого экземпляра, Б. Чукасзян в 1980 г. опубликовал в Ереване текст «Лечебника».

Ныне стало известно, что в 1298 г. войска Хусам аль-дина Ладжина (Сархада) во время похода на Киликию обнаружили в казне армянского царя список «Лечебника лошадей» на армянском языке и перевели его на арабский. Арабский текст предваряет подобное предисловие, в котором говорится, при каких обстоятельствах был обнаружен армянский текст и кто перевел его на арабский язык. Ныне четыре списка с текстом «Лечебника» на арабском языке хранятся в зарубежных библиотеках.

Сравнение арабского перевода с армянским доказывает, что имеющиеся в них расхождения незначительны и тексты совпадают.

Известно, что в средние века с армянского на арабский были переведены лишь «История Агафангела» (V век) и сборник притч «Лисья книга». Найденный «Лечебник лошадей» – третья книга, которая открывает новую страницу в истории арабо-армянских отношений.

ՆՈՐԱՅԱՅՏ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ՝ ՋԻԱԲՈՒԾՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ[1]

Մեծանուն հայագէտ Փրոֆ. Հրաչեայ Աճառեանը 1906 թուին Իրանի Թաւրիզ քաղաքում տեսել ու նկարագրել է 13-րդ դարի մի եզակի անասնաբուժական մատեան, որը հիացմունքով բնութագրել է որպէս «Նիւթով ու գրութեամբ պատուական ձեռագիր»: Փրոֆ. Աճառեանը, ինչպէս տեղեկանում ենք նրա յիշողութիւններից, ժամանակի սղութեան պատճառով «Բժշկարան ձիոյ եւ առհասարակ գրաստնոյ» կոչուող այս յուշարձանին ծանօթացել է հապճեպ, ուստի միայն կարողացել է կատարել դրա նկարագրութիւնը եւ ընդօրինակել յիշատակարանը:

Դեռեւս 50-ական թուականներից Մաշտոցի անուան Մատենադարանի տնօրէնութիւնը սկսել էր հետաքրքրուել այս ձիամատեանի ճակատագրով: Ստացուած կցկտուր տեղեկութիւնները ձեռագրի հետքերը տանում էին Ամերիկայի Միացեալ Նահանգներ: Եւ ահա 1972 թուին Լոս Անճելըս քաղաքի բնակիչ Զարեհ Սարաջեանի մօտ մեզ բախտ վիճակուեց ձեռագիրը տեսնել եւ ստանալ դրա մանրաժապաւէնը:

Երեւան վերադառնալուց յետոյ մանրաժապաւէնի հիման վրայ միջնադարեան այս անասնաբուժական երկը պատրաստեցինք հրատարակութեան, որը մանրամասն առաջաբանով ու ստուգաբանական բառարանով հրատարակեցինք 1980 թուականին:

Այս բժշկարանը հայ-արաբական մշակութային կապերի դրսեւորման առաւել կարեւոր երեւոյթներից է, զոր 1296-1298 թթ. կիլիկեան հայոց արքայ Սմբատի կարգադրութեամբ կազմել է ասորի բժիշկ Ֆարաճը քահանայ Թորոսի աջակցութեամբ: Ըստ Ֆարաճի թողած յիշատակարանի, նա իր աշխատանքի համար օգտուել է հնդկական ու արաբական աղբիւրներից, ինչպէս ինքն է գրում՝ «ի բազում իմաստասիրաց՝ ճնա, Ապի Ուսուֆին եւ Ըռաշիտայ եւ այլ բազում հնդկաց եւ Պաղտատայ իմաստասիրացն»:

13-րդ դարի երկրորդ յիսնամեակում չարունակւում էր կիլիկեան հայոց պետականութեան առաջընթաց զարգացումը, ընդարձակւում էին նրա քաղաքական ու տնտեսական կապերը հարեւան եւ հեռաւոր երկրների ու իշխանութիւնների հետ: Երկրի քաղաքական ու ռազմական հզօրութիւնը ամրապնդելու, ուժեղացող արտաքին վտանգին դիմագրաւելու համար հայ իշխանաւորները ինքնաբերաբար աւելի մեծ ուշադրութիւն էին դարձնում երկրի տնտեսութեան, մասնաւորաբար գիւղատնտեսութեան վերելքին, եւ արտաքին ու ներքին առեւտրի ծաւալմանը:

Այս ժամանակներում է, որ արաբերէնից հայերէնի են թարգմանւում միջնադարի կարեւորագոյն գիւղատնտեսական երկերից «Գիրք վաստակոց»-ը, ինչպէս նաեւ աստղագիտութեան, քիմիաբանութեան, ձիաղարմանութեան, պողպատաճուլութեան եւ թրագործութեան վերաբերեալ գրքեր:

Հայաստանը վաղուց անտի ճանաչուած էր որպէս ձիաբուծութեան կարեւոր կենտրոն: Փոքր Ասիայի արեւելքում ձին արդէն մ.թ.ա. 1900-1700 թուականներին օգտագործւում էր ե՛ւ ռազմակառքերում, ե՛ւ որպէս լծկան: Յետագայում եւս, արդէն ուրար-

---

[1] Հրապարակվել է «Արեւ» ամսագրում, Կաիիրե, 1986, № 20493, դեկտեմբերի 24-25, էջ 2:

տական ժամանակաշրջանում, ճիաբուծությունը եղել է երկրի տնտեսության հիմնական ճիւղերից մէկը:

Հին Հայաստանում ճիաբուծության զարգացման մասին են վկայում Քսենոփոնն (430-354 մ.թ.ա.) եւ Ստրաբոնը (Ա. դար մ.թ.ա.):

Հայ եւ օտար աղբիւրները վկայում են, որ մինչ արաբական արշաւանքները, Հայաստանը յատկապէս Արշակունիների ժամանակ, ունեցել է հզօր հեծեալ բանակ:

Ջիաբուծական աւանդները Հայաստանում շարունակուել են նաեւ յետագայ դարերում. Կիլիկիայի ճիերը նոյնպէս մեծ համարում ու ճանաչում են ունեցել ներքին եւ արտաքին շուկաներում: Եւ դա հասկանալի է. մարտական ու տոկուն ճիերի ու գրաստների մեծ կարիք ունէր հայկական հեծելազօրը, միաժամանակ դրանք եկամտի կարեւոր աղբիւր էին եւ արտահանւում էին շատ երկրներ: Հետեւաբար պատահական չէր, որ Կիլիկիայում ճիաբուծական ձեռնարկներ էին կազմւում:

Բժիշկ Ծարաճի կազմած ճիագիտական երկից ամբողջական միայն մէկ ձեռագիր է հասել՝ Զարեհ Սարաջեանի օրինակը, մինչդեռ ըստ մատենագիտական տեղեկութիւնների միջնադարում գործածութեան մէջ են եղել դրա այլ ընդօրինակութիւնները եւս, որոնցից մէկը 18-րդ դարում հիմք է հանդիսացել վրացական թարգմանութեան համար:

Հայ հեղինակների ինքնուրոյն ճիագիտական երկեր մեր մատենագրութեանը յայտնի չեն, բայց պէտք է ենթադրել, որ Հայաստանի հարուստ արօտավայրերում սփռուած տասնեակ հազարների հասնող ճիերը խնամուել եւ բուժուել են գործնական գիտելիքներ ունեցող ճիապանների ու ճիաբուժների միջոցով:

Հայերէն սոյն ճիամատեանի համեմատութիւնը մեզ մատչելի արաբերէն ու պարսկերէն ճիագիտական մի քանի ձեռնարկների հետ ցոյց է տալիս նրանց կառուցուածքի եւ բովանդակութեան որոշ ընդհանրութիւն, բայց կան եւ բացայայտ տարբերութիւններ ու հեղինակային միջամտութիւններ, մի հանգամանք, որ խորհել է տալիս, թե բժիշկ Ծարաճը, թերեւս հետեւելով արաբական ճիամատեաններին, որոնք «ասացեալ» են «ի բազում իմաստասիրաց» եւ դրանց երկերի նմանողութեամբ կազմել է պարզ ու համառօտ, դիւրըմբռնելի շարադրուած իր ճիամատեանը:

Բժիշկ Ծարաճը իր առջեւ դրուած խնդիրն ի կատար է ածել մասնագէտի ամենայն բարեխղճութեամբ, ինչպէս մեծն բժշկապետ Մխիթար Հերացին, նա եւս վկայակոչում է իր աղբիւրները՝ յանուանէ յիշատակում դրանց հեղինակներին թէ՛ երկի յիշատակարանում եւ թէ՛ բնագրում, անգամ մատեանի սկզբում դրել է հնդիկ ճնա իմաստունի գծանկարը: Ձեռնարկը դիւրըմբռնելի դարձնելու նպատակով Ծարաճը վարպետութեամբ նկարել է նաեւ մի ճի՝ մարմնի իւրաքանչիւր անդամի մօտ գրելով նրա դրական ու մերժելի յատկութիւնները: Ինչպէս Մխիթար Հերացին իր «Ջերմանց մխիթարութիւնը» գրել է «գեղջուկ եւ արճակ բարբառով զի դիւրահաս լիցի ամենայն ընթերցողաց», այնպէս եւ յետագայ 13-րդ դարի գործնական մի շարք երկեր Գիրք Վաստակոցը, Քիմիաբանութիւնը, այդ թւում եւ Ծարաճի Բժշկարանը շարադրուած են ժողովրդին հասկանալի խօսակցական լեզուով: Ի միջի այլոց ասենք, որ սրանով պիտի բացատրել մեր բառարաններին անծանօթ բազմաթիւ հայերէն բարդութիւնների եւ օտար, հիմնականում արաբերէն եւ

իրանական ծագում ունեցող, անգամ ֆրանսերէն մի քանի բառերի ձեւագիտական տերմինների առկայութիւնը Բժշկարանում:

Վերը թուարկած առաւելութիւններն են, ըստ երեւոյթին, թելադրել, որպեսզի 1298-1299 թուականներին կիլիկիա ներխուժած Եգիպտոսի մեծ իշխան Հուսամ ալ-տին Լաճինի բանակները հայոց արքայի գանձատունը թալանելու ժամանակ ուշադրութիւն դարձնեն այս ձիագարմանական երկին եւ անմիջապէս այն թարգմանել տան արաբերէնի:

Պատմական ու մշակութային այս կարեւոր փաստին մենք իրազեկ դարձանք վերջերս՝ Քլիվլենտի (ԱՄՆ) համալսարանի Փրոֆ. Հայագէտ Ճոն Կրեփինի օգնութեամբ: Ուաշիկթընի գրադարաններից մէկում պահւում է հայերէնից արաբերէնի թարգմանուած մի ձեռագիր անասնաբուժական մատեան: Մեր խնդրանքը այդ գրադարանին՝ ուղարկելու ձեռագրի ժապաւէնը, չուտով կատարուեց: Հետազօտութիւնից պարզուեց, որ այս մատեանի աւելի լրիւ ընդօրինակութիւնները պահւում են Բրիտանական գրադարանում եւ Կոթայի (ԳԴՀ) Հերցոգկլինիկեն ձեռագրատանը: Շուտով ստացուեցին նաեւ սրանց մանրաժապաւէնները, որոնց համեմատութիւնը Ֆարաճի Բժշկարանի հետ հաստատեց, որ արաբերէնը թարգմանուած է այս իսկ հայերէն Բժշկարանից. արաբերէնը ունի 132 գլուխների նոյն ցանկը, ինչ հայերէնը, բնագիրը նոյնութեամբ, բացի առաջին փոքրիկ գլխից, համընկնում է հայերէնի հետ, տերմինները համարեա նոյնն են: Արաբերէն թարգմանութեան մանրամասն առաջաբան յիշատակարանում քանիցս չեչտւում է հայերէնից թարգմանուած լինելու հանգամանքը:

Արաբերէն այս հետաքրքիր յուշարձանի մանրամասների հաղորդակից լինելու համար մեր խնդրանքով պատմական գիտութիւնների դոկտոր, արաբագէտ Արամ Տէր-Ղեւոնդեանը թարգմանեց այդ առաջաբանը. ահա դրա մի մասը:

«Սա մի գիրք է, որ պարունակում է ձիու նկարագրութիւնը եւ նրա հիւանդութիւնների բուժումը: Սա հայերէն գրով էր եւ վերածուել է արաբերէն գրի: Բանն այն է, որ մեծ իշխան Հուսամ էլ-տին Լաճինը, որը ծանօթ է Սարխատի անունամբ եւ աստուածապահ Եգիպտոսի մեծամեծ ամիրներից է (իշխել է 1297-1298 թթ.), հայերէն բժշկարանը վերցրել է հայոց թագաւորի գանձապահարանից գտնելով այն այլ գրքերի մէջ, երբ թշնամին (այսինքն՝ հայերը) ջարդուել եւ խեղճացել էր աստուածապահ Հոմս յայտնի քաղաքից այն կողմում (տեղի ունեցած ճակատամարտում), Մանսուրի (իմա՝ Լատինի) տիրակալութեան օրերին, աստուած փառաւորի նրա իշխանութիւնը: Նա գիրքը տուել էր իր խոնարհ ծառայ Իպրահիմին, որը յայտնի է բանակի քարտուղար անունամբ, դրօշների պահեստում, երբ այնտեղ ձերբակալուած էր: Նրա մօտ բերուեցին մի խումբ հայ գերիներ, որոնք գիտէին այդ գիրքը: Նա՝ Իպրահիմը, ստուգեց եւ վերածեց արաբերէն բառերի, հետեւեց նրանց իմաստին եւ ուղղեց, որ հասկանալի լինի, եւ իւրաքանչիւր հատուածը համապատասխանի հայերէնին: Գիրքը բովանդակում էր գիտելիքներ ընտիր ձիերի մասին, նրանց նշանները, եւ վատ ձիերի նշանները, հիւանդութիւնները, ախտերը, դրանց բուժումը դեղերով, դեղաբոյսերով, քրտնեցումով եւ այլն: Դեղերի ու դեղաբոյսերի անուննները եւ տերմինները յաճախ արաբերէն անհասկանալի էին եւ բարձրեալն Աստուած օգնեց հայ գերիների մէջ արհեստին գիտակ մի վիրաբոյժ գտնել, որը անհասկանալի բառերը բանիմացօրէն բացատրեց, քանզի այդ գիրքը բովանդակում էր այն, ինչ նա ստուգել էր փորձով, իսկութիւնը ճշդել եւ ճշմարտութիւնը իմացել էր»:

Հայկական եւ արաբական աղբիւրները Լաճինի յարձակումը Կիլիկիայի վրայ որոշակիօրէն 1296 թ. են նշում: Յայտնի է, որ այդ ժամանակ Կիլիկիայում թագաւորական գահի վրայ պայքար էր սկսուել երկու եղբայրներ Սմբատի եւ Կոստանդինի միջեւ, իսկ Եգիպտոսի սուլթան Լաճինը, առիթը պատեհ գտնելով, հրամայում է իր զօրաբանակներին մտնել Կիլիկիա: Ինչպէս գրում է Սամուէլ Անեցու Պատմութեան շարունակողը՝ «Մսրցին (այսինքն՝ եգիպտացին) եմուտ ի Կիլիկէ եւ առհասարակ այրեաց զգեօղ եւ զքաղաք եւ բազումս եսպան եւ զայրս վարեաց: Եւ այլք զայս Ջխէ (1298 թ.) ամին ելեալ եւ ճիշդն այն է»:

Օտարերկրեայ ներխուժողների կողմից հայկական միջնադարեան մատենադարանների կողոպուտների մասին մեր աղբիւրներում բազմաթիւ տեղեկութիւններ են պահպանուել: Ծարաճի Բժշկարանի արաբական սոյն թարգմանութիւնը վկայում է մի այլ՝ ցարդ որեւէ այլ տեղ չյիշատակուած, կիլիկեան գանձատան աւերման մասին, որտեղ եւ որպէս թանկարժէք մասունք, պահել են եւ այդ ճիաղարմանութեան երկը: Զի բացառւում, որ սրա հետ մէկտեղ հայոց արքայի գանձապահարանում բազում արժէքաւոր այլ մատեաններ եւս եղած լինեն, որոնք մամլուքները աւարի են ենթարկել: Այն, որ օտար ներխուժողները գանձատունը թալանելիս ուշադրութիւն են դարձրել գրչագիր մատեաններին, վկայում է որ նրանք չատ լաւ գիտակցում էին գրաւոր, յատկապէս գանձատանը պահւող, յուշարձանների արժէքը, որոնցից նրանք օգտուել են յօգուտ իրենց մշակոյթի:

Կիլիկեան Բժշկարանի արաբերէն նորայայտ թարգմանութիւնը թոյլ է տալիս խորհելու, որ հաւանաբար հայերէնից արաբերէնի թարգմանուած այլ երկեր եւս լինեն, որոնք ցարդ յայտնի չեն հայագիտութեանը, ուստի այս նկատառումով պէտք է հետախուզուեն արաբական գրչագիր մատեանները:

Հայերէնից արաբերէնի թարգմանուած միջնադարեան մեր գրականութեան մէջ յայտնի են Ագաթանգեղոսի պատմութիւնը եւ Ազուեսագիրքը: Այժմ յայտնի է դառնում նաեւ երրորդ յուշարձանը՝ կիլիկեան Ջիամատեանը, որը մի նոր էջ է բացում հայ-արաբական յարաբերութիւնների պատմութեան մէջ:

УНИКАЛЬНАЯ РУКОПИСЬ[1]

(«Лечебник лошадей и вообще вьючных животных»)

Известный арменовед Рачья Ачарян в 1906 г. в Тавризе (Иран) увидел и описал уникальную рукопись XIII в. по ветеринарии. Он с восхищением охарактеризовал ее как «отменную по письму и по содержанию». Из воспоминаний проф. Ачаряна мы узнаем, что из-за нехватки времени, он бегло ознакомился с памятником, озаглавленным «Лечебник лошадей и вообще вьючных животных», успев лишь сделать его описание и передать колофон (памятную запись).

Еще с 50-х годов дирекция Матенадарана интересовалась судьбой книги. Были получены скудные, обрывочные сведения, что рукопись находится в США. В 1972 г. нам посчастливилось увидеть ее у жителя города Лос-Анджелеса Заре Сараджяна, получить ее микрофильм.

Возвратившись в Ереван, мы подготовили на основе микрофильма средневековое сочинение по ветеринарии к изданию. В 1980 году опубликовали текст рукописи, снабдив его этимологическим словарем.

Лечебник, составленный по распоряжению киликийского армянского царя Смбата в 1296-1298 гг. сирийским врачом Фараджем при содействии армянского священника Тороса, стал важным свидетельством армяно-арабских культурных связей. Как повествует оставленный Фараджем колофон, он использовал в работе индийские и арабские источники – книги «многих мудрецов – Джена, Али Усуфа, Рашида и многих иных индийских и багдадских мудрецов».

Во второй половине XIII века продолжалось развитие Киликийского армянского государства, расширялись его политические и экономические связи с соседними и отдаленными странами и княжествами. Для укрепления политической и военной мощи страны, чтобы противостоять растущей внешней опасности, киликийские армянские властители обращали большое внимание подъему экономики, в частности, сельского хозяйства и расширению внутренней и внешней торговли.

В это время с арабского на армянский переводится одно из важнейших руководств по сельскому хозяйству – «Книга труда» (перевод греческой «Геопоники»), а также книги по астрономии, химии, ветеринарии, сталелитейному делу и изготовлению сабель.

Армения издавна была известна как важный центр коневодства. Уже в 1900-1700 гг. до н. э. коней запрягали и в колесницы, и использовали как тягловую силу. В урартскую эпоху коневодство было одной из основных отраслей экономики страны.

О развитии коневодства в Древней Армении повествует Ксенофонт (430-345 гг. до н. э.) и Страбон (I в. до н. э.). Армянские и иноязычные источники

---

[1] Տե՛ս «Коммунист», 1986, № 97, ապրիլ 20, էջ 3:

свидетельствуют, что до арабских нашествий, особенно при Аршакидах, Армения имела сильную конницу.

Традиции коневодства продолжались и в последующие века. Киликийские кони были известны на внешних и внутренних рынках. И это естественно: армянская конница остро нуждалась в выносливых боевых и вьючных животных. В то же время лошади считались важной статьей дохода и экспортировались во многие страны. Следовательно, составление пособий по разведению лошадей в Киликии далеко не случайность.

Полный текст Лечебника, составленного Фараджем, сохранился в единственном экземпляре – в рукописи, находящейся у Заре Сараджяна. Однако, согласно библиографическим данным, в средние века в обращении были также и другие списки этого Лечебника, один из которых в XVIII веке явился основой для грузинского перевода.

Оригинальные произведения армянских авторов по коневодству нашей литературе не известны. Но следует полагать, что лечение и уход за многочисленными стадами, рассеянными по обширным пастбищам Армении, осуществлялись конюхами и ветеринарами, имеющими практический опыт.

Сравнение Лечебника лошадей с некоторыми, доступными нам, арабскими и персидскими руководствами по коневодству, выявило некоторые общности в композиции и содержании, хотя имеются и явные расхождения. Этот факт позволяет думать, что врач Фарадж, быть может, следуя арабским книгам по коневодству, написанным «многими мудрецами», и, беря их за образец, избавил свой труд от сложностей и подробностей этих пособий и составил кратко изложенное сочинение по коневодству. Врач Фарадж выполнил стоящую перед ним задачу добросовестно и профессионально. Так же, как великий врач Мхитар Гераци, Фарадж ссылается на использованные им источники, поименно называя авторов как в колофоне, так и в самом тексте. В начале книги мы видим графическое изображение индийского мудреца Джена. Для того, чтобы сделать доступней пособие, Фарадж также мастерски нарисовал лошадь, поместив рядом с изображением каждой части тела описание ее положительных и отрицательных черт.

Лечебник Фараджа, как и ряд произведений XIII в., имевших практическое значение, как, например, «Книга труда» («Геопоника»), химия и т. д. написаны таким же «простонародным и свободным языком», как «Утешение при лихорадке» Мхитара Гераци, «дабы быть удобопонятным всем читателям». Этим следует объяснить наличие множества встречающихся в Лечебнике и не внесенных в армянские словари сложных армянских и иноязычных слов, имеющих в основном арабское и иранское происхождение и даже несколько французских слов и терминов по коневодству.

La publication par l'Institut H. Ačaryan de l'Académie des sciences de la R.S.S. d'Arménie des tomes I et II des Regards sur l'histoire de de l'arménien littéraire du Moyen Age est une nouvelle étape pour ces études, dont les auteurs (H. D. Muradyan, M. H. Muradyan, S. M. Ant'osyan, L. S. Hovsep'yan, P. K. Vardapetyan, L. L. Karapetyan), après avoir rassemblé les résultats des études faites sur l'arménien du Moyen Age et à la suite des publications de textes faites ces dix dernières années ont réexaminé certaines hypothèses et certaines conclusions pour répondre aux questions posées par l'étude du moyen arménien.

Pour contribuer à l'examen du vocabulaire de l'arménien du Moyen Age l'auteur a ajouté à l'édition du Traité d'hippiatrie un important glossaire de termes obscurs, des mots composés nouveaux et des emprunts étrangers avec leur étymologie. On trouve dans ce glossaire un grand nombre de mots dont l'origine ne se trouve pas dans les dictionnaires publiés à ce jour, ainsi que certains mots qui apparaissent pour la première fois.

Traduit de l'arménien par Léon T. Hatchikian

1 **A. Aydənean**, *Grammaire critique de la langue vulgaire ou moderne arménienne*, Vienne, 1866 (en arménien); **L. Hovnanean**, *Recherches sur la langue vulgaire des anciens*, cahier I, Vienne, 1897 (en arménien); **J. Karst**, *Historische Grammatik des Kilikisch-Armenischen*, Strassburg, 1901; **M. Abełyan**, «Chants anciens de troubadours», *Bulletin scientifique*, *Telekagir* (1927), nos 2-3 (en arménien); **H. Ačaryan**, *Histoire de la langue arménienne,* t. II, Erévan. 1951 (en arménien); **A. Abrahamyan**, *Les Partinipes arméniens et la signification de leurs formes*, Erévan, 1951, (en arménien); **G. Ĵahukyan**, *Les Ouvrages grammaticaux et orthographiques dans l'Arménie ancienne et médiéval*, Erévan, 1954 (en arménien); **S. Łazaryan**, *L'Arménien moyen*, t. I, Erévan, 1960 (en arménien).

ԱՐԵՎԵԼԱԳԻՏԻՏԱԿԱՆ ԱՅԼ ՀՈԴՎԱԾՆԵՐ

ՀԱՅ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐԸ
(ԳԵՈՐԳ ԴՊԻՐ ՊԱԼԱՏՑՈՒ ՄԱՀՎԱՆ 150-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ)[1]

Մինչև անցյալ դարի վերջերը հեռավոր Կոստանդնուպոլսի Էտիրնե-Գաբուի հայկական գերեզմանատանը եղել է մարմարակերտ մի չիրիմ-հուշարձան, որի վրա մեսրոպատառ ճոն է քանդակված եղել անխոնջ մանկավարժ ու գիտնական Գեորգ Դպիր Պալատցու հիշատակին:

Նրա գրական հարուստ ժառանգությունից հետմահու հրատարակվել է միայն մի աշխատություն՝ պարսկերեն-հայերեն բառարանը, հայ բառարանագրության մեջ եզակի տեղ ունեցող մի ծավալուն ու օգտաշատ հուշարձան, որ իր կատարումով կանգնած է եղել ժամանակի եվրոպական բառարանագիտության ամենաբարձր մակարդակի վրա: Նրա մահվանից անցել է ամբողջ մեկ ու կես դար և մեծանուն գիտնականը հիշվել է միայն այս աշխատանքով: Սակայն չատ ավելի մեծ է եղել նրա վաստակը. վերջին տարիներս հրապարակված մի քանի հոդվածներ նոր լույս են սփռում նրա գրական ժառանգության վրա, որը ձեռագիր վիճակում պահպանվում է Վենետիկում, Պոլսում, Երուսաղեմում և մեզ մոտ՝ Երևանում: Ապրելով ու ստեղծագործելով 18-րդ դարի երկրորդ կեսին, այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ հայ միտքը նոր վերածնունդ էր ապրում, Գեորգ Դպիրը ծավալել է մանկավարժական ու գիտա-թարգմանչական բուռն գործունեություն և իր լուման մուծել լուսավորական չարժման գործին:

Տիրապետելով բազմաթիվ լեզուների (եբրայերեն, հունարեն, լատիներեն, արաբերեն, պարսկերեն և թուրքերեն), Գեորգ Դպիրը ոչ միայն թարգմանություններ է կատարել այդ լեզուներից, դրանց համար կազմել քերականական ձեռնարկներ, գրել պատմական ուսումնասիրություններ՝ մեծ չափով օգտվելով օտար սկզբնաղբյուրներից, այլև զբաղվել է գրչությամբ՝ ճշգրտելով ու սրբագրելով միջնադարյան հայկական առանձին հուշարձաններ:

Հատկապես բեղմնավոր է եղել նրա թարգմանչական գործունեությունն իր գիտական գործունեության առաջին տասնամյակներում: Այդ տարիներին, հավանաբար գործնական նպատակներով, պարսկերենից նա թարգմանել է 13-րդ դարի հեղինակ Աբդուլազիզ Աբդուլռահման Թաբրիզիի «Բանալի աստղաբաչխության...» (1768 թ.), «Գիրք մեծագին և պատուական ականց...», որը տպագրված է 1807 թ. Կոստանդնուպոլսում, իսկ հունարենից թարգմանել է «Բան յաղագս նաւապետաց՝ գափուտան կոչեցելոյ...» (1769 թ.) և չատ ուրիչ աշխատություններ: Նրա գրական թարգմանություններից կարևոր է հիշատակել «Հայելի գրոցն Հոմերոսի, որ է արձակ պատմութիւն Իլիականին, թարգմանեալ ի յոյն բնագրէ, յամին 1783 թ.», որը «Իլիականի» մեզ հայտնի առաջին հայերեն թարգմանությունն է:

---

[1] Հրապարակվել է «Գրական թերթում», 1963, № 2, հունվարի 11, էջ 2:

Գեորգ Դպիրի պատմագրական կարևոր ուսումնասիրություններից է «Գիրք պատմութեան արքայից Օսմանեան զարմին...», որը ժամանակին օգտագործել է Գաբրիել Այվազովսկին իր «Օսմանյան պատմության» համար:

Գեորգ Դպիրը հայ այն մտավորականներից է եղել, որ խորը գիտակցել է հնագույն գրչագրերի արժեքն ու նշանակությունը մեր ժողովրդի պատմության ու մշակույթի համար և մասնակցել է դրանց փրկության աշխատանքին՝ թե անձամբ արտագրելով և թե՛ հավաքելով: Ղալաթիայի մատենադարանի ձեռագրերի մեջ եղել են Խորենացու և Եղիշեի պատմությունների դպիրյան այնպիսի արտագրություններ, որոնց հիմք-օրինակները եղել են ընտիր, Եղիշեինը՝ 1167 թվականից: Զպիտի մոռանալ նաև, որ Գեորգ Դպիրի ջանքերով է վերջնական կորստից փրկվել ու համաշխարհային գիտական հասարակայնության սեփականություն դարձել Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնի» աշխարհում միակ հայերեն թարգմանության օրինակը: Նրա արտագրությամբ է նաև պահպանվել, իսկ Ղևոնդ Ալիշանի ջանքերով հրատարակվել հռչակավոր «Գիրք վաստակոցը»:

Սակայն Գեորգ Դպիրի գլուխգործոցը նրա պարսկերեն-հայերեն բառարանն է, որը «Բառարան պարսկերէն ըստ կարգի հայկական այբուբենից» խորագրով լույս է տեսել 1826 թվականին, Կոստանդնուպոլսում, Հակոբ Տյուզյանի հմուտ առաջաբանով և անմիջական հսկողությամբ: Այս բառարանը ոչ թե սոսկ «բառգիրք» է, ինչպես անվանել է ինքը Դպիրը, այլ իրանական մշակույթի մի հանրագիտարան, որտեղ կարելի է ամփոփ տեղեկություններ գտնել իրանական դիցաբանության, առասպելաբանության, ժողովրդական ասացվածքների ու առածների, սովորությունների ու բարքերի, վիպական հերոսների, ականավոր գիտնականների ու բանաստեղծների մասին և շատ այլ հետաքրքիր նյութեր: Բառարանում յուրաքանչյուր բառահոդվածի համար տրված են ոչ միայն մի քանի իմաստներ, այլև հայատառ պարսկերենով բերված են բազմաթիվ վկայակոչումներ իրանա-տաջիկական դասական գրողներ Ռուդաքիից, Ֆիրդուսուց, Օմար Խայամից, Սաադիից, Հաֆըզից և շատ ուրիշներից, անգամ առանձին դեպքերում այդ վկայակոչումները թարգմանված են հայերեն, որով բառարանը էլ ավելի է հարստանում և արժեքավորվում, մի բան, որ իր նմանը և նախատիպը չի ունեցել մեր գրականության մեջ:

Իհարկե պարսկերեն-հայերեն բառարաններ ձեռագիր վիճակում եղել են և Դպիրից շատ առաջ, դեռևս խոր միջնադարում, բայց մեզ ծանոթ այդ բառարաններից ոչ մեկը Դպիրի աշխատանքի ո՛չ ծավալը, ո՛չ որակը և ո՛չ հարստությունը չի ունեցել:

Մոտ երեսուն տարվա գիտա-մանկավարժական ու թարգմանչական գործունեությունից, ինչպես և բազմաթիվ բառարանների ու ձեռնարկների համակողմանի ուսումնասիրությունից հետո է միայն Գեորգ Դպիրը լծվում իր հոյակապ բառարանի ստեղծման աշխատանքներին: Նախաձեռնելով այս դժվարին գործը, Դպիրը առաջին հերթին ուսուցողական նպատակներ է հետապնդել:

Գեորգ Դպիրի բառարանը հարուստ է իր քերականական գիտելիքներով: Բառարանում կան նաև պարսկերեն բառերի բազմաթիվ ստուգաբանություններ, որոնք հիմնականում ճիշտ են:

Բառարանը իր հրապարակվելու օրվանից մինչև այսօր ամենուրեք օգտագործվում է մեծ սիրով: Դա գրական այնպիսի մի կոթող է, որից դեռևս շատ երկար ժամանակ

կարող են օգտվել և՛ պարսկերենը ուսումնասիրողը, և՛ ազգագրագետն ու բանագետը, և՛ լեզվաբանն ու գրականագետը:

Գեորգ Դպիրի պարսկերեն-հայերեն բառարանը, փաստորեն փակելով հին և միջին դարերի հայ և իրանական ժողովուրդների գրական կապերի պատմությունը, միաժամանակ նոր ժամանակների մշակութային նոր փոխհարաբերությունների սկիզբը դարձավ, իսկ ինքը՝ Գեորգ Դպիր Պալատցին, հանդիսացավ հայ արևելագիտության հիմնադիրը:

ԳԷՈՐԳ ԴՊԻՐ ՊԱԼԱՏԵՑՈՒ ԿԵԱՆՔԻ ԵՒ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹԻՒՆԸ[!]

(Համառուն անտիպ աշխատութեան առաջաբանը)

18-րդ դարի երկրորդ կէսը հայ մտքի նոր վերածննդի սկզբնաւորման ժամանակաշրջանն էր: Եւրոպայի հասարակական-քաղաքական կեանքում տեղի ունեցող մեծ տեղաշարժերը իրենց հետաւոր արձագանքներն են գտնում նաեւ Արեւելքի ժողովուրդների մօտ: Այդ յեղաբեկումների անմիջական հետեւանքը հայ իրականութեան մէջ լուսաւորական գործի ծաւալումն էր նախ արտաչխարհի հայաշատ կենտրոններում, ապա աւելի ուշ՝ բուն Հայաստանում: Առեւտրական յարաբերութիւնների աշխուժացման ու զարգացման հետեւանքով հայ եւ տարբեր ժողովուրդների միջեւ ստեղծւած սերտ շփումը նպաստում էր միաժամանակ նրանց մշակութային փոխյարաբերութիւնների ծաւալմանը: Հէնց սրանով էլ պիտի բացատրել այն հանգամանքը, որ հայ մշակոյթի խոշոր կենտրոններում դպրոցական գործը, այդ թւում եւ օտար լեզուների դասաւանդումը, նոր ու կայուն հիմքերի վրայ է դրւում:

Լուսաւորական գործը լայն ծաւալ է ստանում նաեւ Կոստանդնուպոլսի հայկական համայնքում. բացւում են դպրոցներ, տպագրւում են ինքնուրոյն ու թարգմանական աշխատութիւններ, գեղարւեստական երկեր:

Ժամանակի Պոլսահայ մտաւոր կեանքի լաւագոյն ներկայացուցիչներից էր Գէորգ Դպիր Տէր Յովհաննիսեանը, յայտնի Պալատեցի մականունով (1737-1811[1]), որը 18-րդ դարի երկրորդ կէսին մանկավարժական ու գիտա-թարգմանչական բուռն գործունէութիւն էր ծաւալել Կ. Պոլսում:

Տիրապետելով բազմաթիւ լեզուների (եբրայեցերէն, յունարէն, լատիներէն, արաբերէն, պարսկերէն, թուրքերէն), Գէորգ Դպիրը ո՛չ միայն թարգմանութիւններ է կատարել այդ լեզուներից, դրանցից ոմանց համար կազմել քերականական ձեռնարկներ, բառարաններ, գրել պատմական ուսումնասիրութիւններ՝ մեծ չափով օգտւելով օտար սկզբնաղբիւրներից, այլեւ զբաղւել է գրչութեամբ՝ ընդօրինակելով, ճշգրտելով ու սրբագրելով միջնադարեան հայկական առանձին, բացառիկ արժեքաւոր յուշարձաններ:

Բեղմնաւոր է եղել Դպիրի թարգմանչական գործունէութիւնը յատկապէս իր գիտական աշխատանքների առաջին տասնամեակներում. այդ տարիներին պարսկերէնից թարգմանել է 15-րդ դարի հեղինակ Աբդուլ Ազիզ Աբդուլռահման Թաբրիզիի «Բանալի աստեղաց...» (1768 թ.), անանուն հեղինակի «Գիրք մեծագին եւ պատուական ականց...» (1779 թ., տպագրւած 1807 թ. Կոստանդնուպոլիս), իսկ յունարէնից թարգմանել է «Բան՝

[!] Տե՛ս «Իրաւ Նամե», 1993, ֆ. 6:

1 Մինչեւ վերջերս գրականութեան մէջ Գէորգ Դպիրի մահուան թւականը 1812-ն է համարւել, որ իրականում նրա տապաւնագրում յիշատակւած հայկական թւականութեամբ՝ ՌՄԿԱ-ի վրայ 551 տարւայ պարզագոյն յաւելման արդիւնք է: Հայր Միքայել Ղամչեանի նամակի հրապարակումը (տե՛ս **Հ. Ճեմճեմեան**, *Գէորգ Դպիր Տէր Յովհաննիսեան (Պալատեցի) եւ Մխիթարեանները*, Վենետիկ-Սուրբ Ղազար, 1984, էջ 61) ճշգրտում է այն՝ 1811 նոյեմբերի 23, որ նոյնպէս ընկնում է հայկական ՌՄԿԱ թւականի մէջ:

յաղագս նաւապետաց՝ գափուտան կոչեցելոյ…» (1769 թ.) եւ «Հայելի գրոցն Հոմերոսի, որ է արձակ պատմութիւն Իլիականին» (1783 թ.) երկերը:

Գէորգ Դպիրի պատմագրական կարեւոր ուսումնասիրութիւններից է «Գիրք պատմութեան արքայից Օսմանեան զարմին…» աշխատութիւնը:

Ինչպէս յիշատակել է նրա կենսագիր Ա. Այվազեանը, Դպիրը կազմել է նաեւ արաբերէնի ու պարսկերէնի դասագրքեր. արաբերէնինը նկարագրւած է Ղալաթիայի ձեռագրացուցակում (թ. 183), իսկ պարսկերէնինը՝ հաւանաբար «Ոճք պարսկական ասից եւ խօսից» (1810 թ.) անտիպ բառարանին կցւած քերականութիւնն է[2]:

Գէորգ Դպիրը հայ այն մտաւորականներից է եղել, որ շատ լավ գիտակցել է հնագոյն հայերէն գրչագրերի արժէքն ու նշանակութիւնը մեր ժողովրդի պատմութեան ու մշակոյթի համար եւ մասնակցել է դրանց վերկութեան աշխատանքին՝ թէ՛ անձամբ արտագրելով եւ թէ՛ հաւաքելով: Բաբկէն Կիւլեսերեանը Ղալաթիայի մատենադարանի ձեռագրերի մէջ նկարագրել է Մովսէս Խորենացու եւ Եղիշէի պատմութիւնների դպիրեան այնպիսի ընդօրինակութիւններ, որոնց հիմք-օրինակները եղել են ընտիր. Եղիշէինը՝ 1167 թւականից: Անհրաժեշտ է յիշել, որ Դպիրի ջանքերով է, որ վերջնական կորստից փրկւել ու համաշխարհային գիտական հասարակայնութեան սեփականութիւնն է դարձել Եսէբիոս Կեսարացու «Քրոնիկոնի» («Ժամանակագրութեան») աշխարհում միակ հայերէն թարգմանութեան օրինակը: Նրա ընդօրինակութեամբ է նաեւ պահպանւել, իսկ Ղ. Ալիշանի աշխատասիրութեամբ հրատարակւել հռչակաւոր «Գիրք վաստակոցը» (13-րդ դար): Այս երկի փոխառեալ օտար երկբայելի բառերի մեկնութեան համար գրչի կատարած աշխատանքի մասին Ղ. Ալիշանը գրել է. «յԱյսմ պէտ արարեալ դիւրութեան՝ յանցելում դարու՝ ծանօթ բանասէրն եւ հմուտ հայերէն եւ տաճիկ լեզուաց (թուրք, պարսիկ եւ արաբացի), Գէորգ Պալատացի արարեալ էր ըստ իւրում կարի՝ քաղուած եւ մեկնութիւն բառիցն, նշանակելով եւ զթուրք եւ ուրեք զարաբացի կամ զպարսիկ յորջորջմունս նոցին»[3]:

Գէորգ Դպիրի կեանքում կարեւոր իրադարձութիւն է եղել 1781-82 թթ. նրա ճանապարհորդութիւնը դէպի Հայաստան, որ տեւել է 14 ամիս. նա եղել է Դերջանում, Մուշում, Աղթամարում, Հաղբատում, Էջմիածնում, ծանօթացել է այդ շրջանների վանքերում պահւող ձեռագրերին, օր ու գիշեր ուսումնասիրել է դրանք եւ լաւագոյն ու բացառիկ արժէք ներկայացնող յուշարձանները կամ ամբողջովին ընդօրինակել եւ կամ նրանց տարընթերցումները անց է կացրել արդէն տպագրւած աղբիւրների լուսանցքների վրայ: Ճանապարհորդութեան ծախսերի մի մասը հոգացել են Վենետիկի Մխիթարեանները, որի դիմաց Դպիրը նրանց է տրամադրել իր ընդօրինակած մատեանները կամ կատարած բաղդատութիւնները: Եւ այս բոլորից յետոյ նա դժգոհ է եղել իր կատարած աշխատանքից, որովհետեւ նիւթական անճուկ վիճակում է գտնւել. այլապէս իր աշխատանքներին կարող էր այլ գրիչ-ընդօրինակողներ ներգրաւել եւ աւելի մեծ արդիւնքով վերադառնալ տուն:

18-րդ դարի վերջերին Կոստանդնուպոլիսը մշակութային կարեւոր կենտրոն էր ո՛չ միայն թուրք ու հայ, այլեւ յոյն մտաւորականութեան համար, իսկ Գէորգ Դպիրը սերտ

2 Վենետիկի Մխիթարեան մատենադարան, ձեռ. 793, էջ 111-221:

3 **Ղ. Ալիշան**, *Գիրք վաստակոց:* Տե՛ս «Բազմավէպ», 1877, էջ 198:

չփման մէջ է եղել նրանց հետ, եւ օգտւել է թուրքական ու յունական ձեռագրատների իրեն ընձեռած հնարաւորութիւններից:

Առաւել սերտ է եղել Դպիրի յարաբերութիւնները Մխիթարեան միաբանութեան հետ, չնայած 18-րդ դարի երկրորդ կէսին Պոլսում կաթոլիկների նկատմամբ իշխող անհանդուրժողական, անգամ թշնամական վերաբերմունքի. մի վիճակ, որ Դպիրի դիպուկ խօսքով՝ «թէ՛ մահական եւ թէ՛ ահական» էր, «լի փնդորութեամբ վատախորհուրդ ա-րանց», «անյարմար ու չփոթական»: Գէորգ Դպիրը աւելի քան երեսուն երկար տարիներ նամակագրական կապ է պահել Մխիթարեանների հետ, բարձր է գնահատել նրանց լուսաւորական-հայագիտական գործունէութիւնը, նրանց տեղեակ է պահել իր գիտական աշխատանքների ծրագրերին, նրանց է վստահել իր բանասիրական աշխատանքների պահպանութիւնը, փոխադարձաբար նրանցից ստանալով թէ՛ բարոյական քաջալերանք եւ թէ՛ նիւթական օժանդակութիւն: Դա են վկայում Դպիրի նամակներում յաճախ յանդիպող բարձր գնահատականները Մխիթարեան միաբանութեան հասցէին: Մի առիթով Դպիրը խորհրդաւոր իր մօտ գտնւող գրչագրից քաղւածքներ է ուղարկում Վենետիկ եւ հարցնում, թէ արդեօ՞ք նրանք կցանկանան այդ գրչագիրը ունենալ, որովհետեւ, գրում է նա, «դուք միայն էք յիրաւի արժանի վայելման այնպիսի ստուգագիծ մատենագրութեանցն գերամեծար նախնեացն մերոց, եւ ձեր օրհնեալ Միաբանութիւնն է՝ որ զնոցա վաստակն յարգէ եւ ի լոյս ածէ, վասն որոյ եւ զձէնջ մեծապէս չնորհակալ են նոքա ի փառս իւրեանց անդ ի յերկինս, ուստի եւ մաղթանք նոցին՝ որ վասն ձեր առ Աստուած՝ նպաստաւոր է զարգացման ձերում Միաբանութեան, որ ի չինութիւն Հայկազեան տոհմի կայ հաստատեալ, զոր հաստատուն պահեսցէ Տէր ի խնամս իւր»[4]: 1784 թ. մայիսի 27-ին Հ. Ստ. Ագոնցին գրած նամակում կարդում ենք՝ «Արդ մի՛ կասիցիք ի գործոյն, որ մեծ լուսաւորութիւն է ազգին մերոյ, եւ ձեզ առաւել եւս նիւթ պարծանաց՝ ընդ այլ բազում մեծագործութիւնսն, զորս ի վերջին ժամանակս արարիք, եւ զլեզուն մեր յոտին կանգնեցիք, եւ զվաստակս աշխատութեան ընտիր արանցն Հայոց՝ արդիւնացուցիք, եւ զհայկական լեզուն լրիվ կատարելագործեցիք»[5]: Մխիթարեաններն էլ իրենց հերթին բարձր են գնահատել մեղւաջան բանասէրի աշխատանքները եւ միշտ պատրաստակամ են եղել նրան օժանդակելու. մի առիթով Վենետիկի Մխիթարեան միաբանութեան աբբահայր Ստեփանոս Վ. Ագոնցը Դպիրին յղած իր նամակներից մէկում յետեւեալ գնահատականն է տւել նրա գործունէութեանը. «Թէպէտ երեսօք անծանօթք ի միմեանց, այլ սիրով հոգւոյն զօդեալք ընդ միմեանս: Եւ ի ձեռն վարդապետաց մերոյ գովելի հանդիսացեալ ձեր ի մեզ, անմոռաց ունիմք ի սրտի զյիշատակս սիրելւոյդ չքեղ պանծանօք անչինչ արձանագրեալ զանուն ձեր ի կարգս բարեսէր երախտաւորաց միաբանութեան մերոյ, որոյ պայծառութեան եւ յառաջադէմն զարգանալոյ՝ մտադիւր փափաքող եւ խնդամիտ բերկրեցող հաւաստեաւ ճանաչեմք զձեզ. նոյն եւ թելադիր յառաւելն եւ ի կարեւորն եւ յօգտակարն օր ըստ օրէ փութաջան եւ վաստակակից՝ անտարակոյս մտօք հաւատամբ եւ սպասեմբ տեսանել զԱգնւութիւնդ»[6]:

---

4 **Հ. Ս. Ճեմճեմեան**, *Գէորգ Դպիր Տէր Յովհաննիսեան (Պալատեցի) եւ Մխիթարեանները*, Վենետիկ-Սուրբ Ղազար, 1984, էջ 77:

5 Անդ, էջ 96:

6 **Ա. Այվազեան**, *Շար հայ կենսագրութեանց*, ճ. Ա, Կ. Պոլիս, էջ 70-71:

Գէորգ Դպիրի աշխատութիւնների ու թարգմանութիւնների ձեռագրերը դեռեւս իր կենդանութեան օրօք ուշադրութեան են արժանացել եւ յաճախ են ընդօրինակւել. դրանցից մի քանիսը ներկայումս պահւում է հայկական տարբեր ձեռագրատներում, իսկ հետեւեալները տպագրութեան են արժանացել միայն նրա կեանքի վերջին տարիներին եւ հետմահու Կոստանդնուպոլսում, Պողոս Արապեանի տպարանում:

1. «Գիրք առակաց Սողոմոնի որդւոյ Դաւթի», 1806.

2. Ագաթիդոս Սարկաւագ, Բացատրութիւն յորդորական գլխոցն, 1806.

3. «Գիրք մեծագին եւ պատուական ականց…», 1807.

4. Գրիգոր Նարեկացի, «Գիրք աղօթից», 1907.

5. «Բառարան պարսկերէն ըստ կարգի հայկական այբուբենից»՝ Գեորգ Դպիրի գլուխ գործոցը, լոյս է տեսել փոքր-ինչ աւելի ուշ, 1826 թ., նոյնպէս Պողոս Արապեանի տպարանում, Տիւզեան Յակոբ Չէլէպիի ջանքերով եւ Պէզճեան Յարութիւն ամիրայի միջոցներով:

Գէորգ Դպիրի այս գրքերի լոյս ընծայումը Պողոս Արապեանի տպարանից ենթադրել է տալիս, որ Արապեան տպարանատէր-հրատարակիչը բարձր է գնահատել անխոնջ գիտնականի գրչի արգասիքները եւ դիւրութիւններ է ստեղծել դրանց հրատարակման համար:

Յակոբ Տիւզեանը Դպիրի մասին հետեւեալ վկայութիւնն է տւել. «…ի ծաղկափթիթ տիոց մինչ յալիս ծերութեան՝ անխոնջ վաստակեալ ի ճգունս ուսումնասիրութեան, գիտնականաց արդեամբք ունէր ժառանգելն զյարգ, եւ ի համազգեաց համարումն եւ պատիւ: Տեղեակ բազմասեռն լեզուաց, յունականին, եբրայերէնին, պարսկականին, արաբացւոցն, լատինականին, եւ հայկականին գրաւորական ուսման, սրտեռանդն նուիրեալ զաւուրս իւր եւ գիշերս ողջոյն յօգուտ իւր ազին, ի թարգմանութիւնս, ի պատմականս եւ յայլս չհաւէտս եւ խմաստալից գրուածս. գեղեցիկս օժտեաց այրս պանծալի գիւր ազն Արամեան. ժառանգութիւն անմահական թողեալ առ համազգիս գիւրն քրտանց բազմադէմ եւ անգին վաստակս»[7]:

Իհարկե պարսկերէն-հայերէն բառարաններ ձեռագիր վիճակում եղել են եւ Դպիրից շատ առաջ, դեռեւս խորը միջնադարում, երբ Հայաստանի դպրանոցներում յունարէնի եւ արաբերէնի հետ մէկտեղ դասաւանդւում էր նաեւ պարսկերէնը: Անհրաժեշտ է նշել, որ մեզ ծանօթ միջնադարեան այդ բառարաններից եւ ոչ մէկը Դպիրի աշխատանքի ո՛չ ծաւալը, ո՛չ գիտական բարձր մակարդակն ու հարստութիւնը չի ունեցել:

Դպիրի բառարանը հրատարակւելու օրւանից մինչեւ այսօր ամենուրեք չարունակում է օգտագործւել: Դա գրական այնպիսի մի կոթող է, որից դեռեւս շատ երկար ժամանակ կարող են օգտւել ե՛ւ պարսկերէնը ուսումնասիրող հայ սկսնակը, ե՛ւ ազգագրագէտն ու բանագէտը, ե՛ւ լեզւաբանն ու գրականագէտը: «Գէորգ Դպիրի պարսկերէն բառարանը գնահատելի է յատկապէս նրանով, – գրել է մեծանուն լեզւաբան Հրաչեայ Աճառեանը (1876-1953), – որ զուտ պարսիկ բառերի հաւաքածոյ է ներկայացնում, չկան

7 **Գէորգ Դպիր**, *Բառարան պարսկերէն…*, Կ. Պոլիս, 1826, էջ Է:

այնտեղ այն հազարաւոր եւ մասամբ թուրք բառերը, որոնցով սիրում են այժմ պարսիկները իրենց գեղեցիկ լեզուն ապականել»[8]:

Դպիրի այս բառարանը հայ բժշկագիտութեան տեսանկիւնից գնահատելով վաստակաչատ տօքտ. Վահրամ Թորգոմեանը (1858-1942) գրել է. «Այս բառարանը լի է հայ բժշկական եւ բուսական սքանչելի բառերով, զորս մեծագոյն մասամբ ինքը կերտած է»[9]: Նա անդրադարձել է նաեւ Պալատեցու թարգմանած «Գիրք ականցին». «Այս գիրքը կը խօսի պատուական քարերու մարդուս զգայարանքներուն վրայ ունեցած բարերար ազդեցութիւններու մասին, թէեւ այսօր բժշկական տեսակետով նշանակութիւն եւ կարեւորութիւն չունի այն, բայց իբրեւ հայերէն գրուած, կը պարունակէ ախտաբանական ընտիր բառեր, զորս կրնանք երբեմն օգտագործել բժշկութեան վրայ հայ լեզուով բան մը գրել ուզած ժամանակնիս:

Բայց ամէնէն լաւ գործը զոր Գէորգ Պալաթեցի պարգեւած է հայ բժշկութեան, Սիմէոն Մագիստրոսի «Յաղագս զօրութեանց կերակաց» ընդարձակ երկասիրութիւնն է, զոր յունարէնէ թարգմանած է 1783-ին՝ ընտրելագոյն գրաբարով... Աքանչելի հատոր մըն է սա, ունի հայերէն բժշկական գեղեցիկ ասութիւններ, որոնք կը յայտնեն ո՛չ միայն Պալատեցիին քաջ լեզուագիտութիւնը, այլեւ՝ անոր գիտնասէր խոր հմտութիւնը»[10]:

«Գէորգ Դպրի պարսկերէնէ հայերէն բառարանը, – գրել է պոլսահայ անուանի մտաւորական Պետրոս Կարապետեանը (1871-1937), – իրապէս կատարեալ աշխատասիրութիւն մըն է կարելի է ըսել, մանաւանդ դար մը առաջուան ուսումնական վիճակը նկատողութեան առնելով՝ եւ ինչպէս նաեւ իր տեսակին մէջ եզական է կրնանք ըսել, քանի ան ոչ միայն մեր մէջ, այլեւ թուրքերու մէջ գոյութիւն չունի նմանօրինակ երկասիրութիւն մը, ուրեմն մեծագոյն պատիւը պէտք է ընծայել այս բազմահմուտ պալաթցիին»[11]:

«Գեւորգ Դպիրը մեր մշակոյթի պատմութեան մէջ, – գրել է հայ բառարանագրութեան պատմութեան քաջագիտակ Գասպար Գասպարեանը (1901-1981), – յայտնի է եւ կմնայ իր պարսկերէն-հայերէն բառարանով, որն իր թարգմանութեամբ, մեկնութիւնների ճշտութեամբ, քերականական ճիշտ կառուցածքով, պատմական, աշխարհագրական լայն տեղեկութիւններով հանդիսանում է հայ բառարանային, հայ լեզւաբանութեան, հայագիտութեան արժէքաւոր աղբիւրներից մէկը»[12]:

Գէորգ Դպիրի Պարսկերէն-հայերէն հոյակապ բառարանը, փաստօրէն փակելով հին ու միջին դարերի հայ եւ իրանական ժողովուրդների գրական ու մշակութային կապերի պատմութիւնը, միաժամանակ նոր փոխյարաբերութիւնների սկիզբը դարձաւ, իսկ ինքը Գէորգ Դպիր պալատեցին, բառի իսկական առումով, հայ արեւելագիտութեան հիմնադիրը եղաւ:

---

8 Տե՛ս **Գարեգին քհ. Կիրակոսեան**, *Բառարան պարսկերէն-հայերէն*, Ջուղա Սպահան, 1933, Հ. Աճառեանի «Յառաջաբանը», էջ VIII:

9 Տե՛ս **Մելգոն Ասատուր**, *Երեքդարեան պատմութիւն Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյ Պալաթու (1627-1931)*, Կ. Պոլիս, 1931, էջ 205:

10 Անդ, էջ 206:

11 Անդ, էջ 221-222:

12 **Գ. Գասպարեան**, *Հայ բառարանագրութեան պատմութիւն*, Երեւան, 1968, էջ 167:

19-րդ դարի կէսերից սկսած Գէորգ Դպիր Պալատեցու անունը հայ մշակոյթի պատմութեան մէջ սկսել է յիշատակւել խորին յարգանքով ու ակնածանքով: «Դասագիրք ազգային պատմութեան» ձեռնարկի (Կ. Պոլիս, 1862) հեղինակ Ստեփան Զաքարեանցը (?-1888) ազգի երախտաւոր երեւելի վարժապետների շարքում առաջինը յիշատակում է Գէորգ Դպիրին՝ նշելով բազմաթիւ օտար լեզուների նրա իմացութիւնն ու նրա «Պարսկերէն-հայերէն» բառարանը:

Գէորգ Դպիր Պալատեցու կեանքի ու գործունէութեան մասին առաջին ամբողջական աշխատանքը պատկանում է պոլսահայ անուանի մտաւորական Աբրահամ Այվազեանին, որը իր «Շար հայ կենսագրութեանց» աշխատութեան Ա պրակում (Կ. Պոլիս, 1893 թ.) աշխատել է ի մի բերել մինչեւ 19-րդ դարի վերջերը հասած նրա վերաբերեալ զրոյցները, ինչպէս նաեւ Պոլսի զանազան գրադարաններում ու մասնաւոր անձանց հաւաքածոներում պահւող Դպիրի տպագիր ու անտիպ աշխատութիւնների մասին տեղեկութիւնները, որոնք հիմնականում հաւաստի են եւ վեր են հանում հայ մեծանուն բանասէրի վաստակը:

Հայ բանասիրութեան համար կարեւոր նորոյթ հանդիսացաւ Վենետիկի Մխիթարեան մատենադարանում պահւող Դպիրի ձեռագրերի վերաբերեալ 1957 թ. «Բազմավէպում» հրապարակւած Հ. Արիստակէս Մանուկեանի կազմած մատենագիտութիւնը:

Դպիրագիտութեան բնագաւառում ծանրակշիռ աշխատանք է Հ. Սահակ Ճեմճեմեանի «Գէորգ Դպիր Տէր Յովհաննիսեան (Պալատեցի) եւ Մխիթարեանները» ուսումնասիրութիւնը[13]: Այստեղ հրապարակւած Դպիրի նամակները, հասցէագրւած Վենետիկի Մխիթարեան հայրերին, բացայայտում են այն խորին համակրանքն ու ակնածանքը, որ գիտնականը տածել է հանդէպ Մխիթարեան միաբանութիւնն ու նրանց հայրենանուէր գործունէութիւնը, ինչպէս նաեւ Մխիթարեանների փոխադարձ յարգալի վերաբերմունքն ու հոգատարութիւնը դէպի ներհուն ու բազմաբեղուն բանասէրը: Դպիրի նամակները միաժամանակ հիանալի արտացոլում են ժամանակի հայ բանասիրութեան բարձր մտաւորական մակարդակը եւ գրական ու պատմական մեծ արժէք են ներկայացնում:

Գէորգ Դպիրի կենսագրականը հետազօտելու համար կարեւոր աւանդ է պոլսահայ անուանի բանասէր Գէորգ Բամպուքճեանի «Մատենագիտութիւն Պալատեցի Գէորգ Դպիր Տէր Յովհաննիսեանի» մանրակրկիտ աշխատանքը, որը որպէս յաւելւած կցւած է Հ. Ս. Ճեմճեմեանի վերոյիշեալ գրքին (էջ 121-127):

Վաստակաշատ բանասէր Ասատուր Մնացականեանը, (1912-1983) Մաշտոցեան մատենադարանում յայտնաբերելով Գէորգ Դպիրի անտիպ թարգմանութիւններից մէկը՝ Հոմերոսի Իլիականի արձակ տարբերակը, եւ այս առիթով ի մոտոյ ծանօթանալով Դպիրի գործունէութեանը, գրել է. «Գէորգ Դպրի այս անչափելի աշխատասիրութեան ամենահզօր գործօնը եղել է նրա անհուն սէրը՝ դէպի իր ժողովուրդը, նրա մեծահարուստ մշակոյթը եւ ազատութիւնը»[14]: Իսկ Յակոբ Սիրունին (1890-1973) նրան համարել է 18-րդ դարի հայ նոր վերելքի նախակարապետներից. «ԺԸ դարը մեզ տւել էր երկու նախակարապետներ հայ նոր վերելքին համար, Պաղտասար Դպիրն ու Գէորգ Պալատեցին, որոնք

13 «Բազմավէպ», 1982, թթ. 1-2, 3-4: Նոյնը առանձին գրքով՝ Վենետիկ Սուրբ Ղազար, 1984:

14 «Գրական թերթ», Երեւան, 1965, սեպտ. 24:

Կոլոտի եւ Նալեանի դարը կօժտէին նոր հնարաւորութիւններով արեւմտահայ նոր վերածնունդի մեծ թափէն առաջ»[15]:

Հայ մշակոյթի հին ու նոր անուանի ներկայացուցիչների կեանքի ու գործունէութեան չատ ու չատ էջեր յայտնի պատճառներով անծանօթ են մնացել: 19-րդ դարից սկսած հայ բանասիրութիւնը աշխատել է իր կարելին անել այս բացը լրացնելու համար. գրւել են համառօտ եւ ընդարձակ կենսագրականներ, առանձին ժողովածուներում ու տարեցոյցներում, գրականութեան պատմութիւններում համառօտակի ներկայացւել են նրանց դիմապատկերները, իսկ վերջին տասնամեակներում փորձեր են արւել գրականագիտական նոր տեսակով՝ առանձին գործիչների կեանքի ու գործունէութեան տարեգրութիւններով, աւելի մանրամասն ու փաստացի վերականգնել նրանց կեանքի ուղին: Նման աշխատանքների լաւ աւանդներ կան ռուս գրականագիտութեան մէջ, իսկ մեզ մօտ առաջինը հանգուցեալ գրականագէտ Արամ Ինճիկեանն էր, որի ջանքերով կազմւեց «Միքայէլ Նալբանդեանի կեանքի ու գրական գործունէութեան տարեգրութիւնը» (լոյս է տեսել 1954 թ. Նալբանդեանի ծննդեան 125-ամեակի առթիւ): Դրան յաջորդեցին մի քանի նմանատիպ աշխատանքներ[16]:

Ջեռնամուխ լինելով ուշ միջնադարի բազմավաստակ հայագէտ-արեւելագէտ Գէորգ Դպիր Պալատեցու կեանքի եւ գործունէութեան տարեգրութեան կազմութեանը, աշխատասիրողը նպատակ է ունեցել մեզ հասած սուղ փաստերի հիման վրա տարի առ տարի, իսկ հնարաւորութեան դէպքում նաեւ օրը օրին հիւսելու հայ անխոնջ բանասէրի կենսագրութիւնը՝ համոզւած, որ առաջիկայում մեր մշակոյթի հետազոտողները նոր փաստերով ու տեւեալներով կհամալրեն ու կհարստացնեն մեծանուն գիտնականի կեանքի անծանօթ էջերը:

Գէորգ Դպիր Պալատեցու սոյն տարեգրութիւնը կազմելու աշխատանքներին մեծապէս նպաստեց Մխիթարեան միաբանութեան հրաւէրով 1989 թ. աշնանը Վենետիկ, Ս. Ղազար, կատարած մեր այցելութիւնը, որտեղ մենք կարողացանք ի մոտոյ չփւելու Գէորգ Դպիրի հարուստ ժառանգութեանը, եւ ձեռագրերի հիման վրայ մանրամասնօրէն ստուգելու երկբայելի չատ տեղեր, ճշգրտելու անհրաժեշտ ձեռագրագիտական տեւեալները, այնպէս որ եթէ առանձին մանր փաստեր սոյն տարեգրութեան մէջ չհամընկնեն այլ աղբիւրների տեւեալներին, ապա դրանք պէտք է մեր ճշգրտումների արդիւնքը համարել:

Այստեղ հարկ ենք համարում մեր խորին շնորհակալութիւնը յայտնել Վենետիկի Մխիթարեան միաբանութեան առաջնորդ յարգարժան Հ. Ներսէս Ներսէսեանին, մատենադարանի պատասխանատու Հ. Սահակ Ճեմճեմեանին, ինչպէս նաեւ Հ. Ղուկաս Ծոկոլեանին, Վենետիկ գտնւած օրերին մեր նկատմամբ ցուցաբերած հոգատարութեան ու օժանդակութեան համար:

---

15 «Լրաբեր հասարակական գիտութիւնների», 1972, թ. 10, էջ 77:

16 **Խ. Սամուէլեան**, *Կոմիտասի կեանքի եւ գործունէութեան տարեգրութիւն:* «Սովետական արուեստ», 1969, թ. 10-ից մինչեւ 1975, թ. 9: **Ա. Մ. Ճարուրեան**, *Դանիէլ Վարուժանի կեանքի եւ ստեղծագործութեան տարեգրութիւն*, Երեւան, 1984: **Սուրէն Ճ. Վանեցի**, *Վազգէն առաջին կաթողիկոս ամենայն հայոց:* Համառօտ տարեգրութիւն (1908-1955), Էջմիածին, 1986:

ԶՕՐԱՅՐ ՄԻՐԶԱՅԵԱՆԻ «ՊԱՐՍԻՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ» ԱՆՏԻՊ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆԸ[1]

Իրանահայ անուանի բանաստեղծ, թարգմանիչ ու գրականագէտ Զօրայր Միրզայեանը ծնուել է Թեհրանում 1916 թ. մարտի 10-ին վաստակաւոր թարգմանիչ ու հասարակական գործիչ Յովսէփ Միրզայեանի ընտանիքում: Նախնական կրթութիւնը ստացել է Թեհրանի հայոց ազգային դպրոցում, իսկ միջնակարգը՝ Թեհրանի ամերիկեան քոլեջում: Պատանեկան տարիներից նա հրապուրուել է գրականութեամբ, գրել բանաստեղծութիւններ ու պատմուածքներ, կատարել թարգմանութիւններ համաշխարհային դասականներից, ինչպէս նաեւ ժամանակակից գրողներից ու բանաստեղծներից: Մեծ է եղել նրա աւանդը մասնաւորաբար պարսից գրականութեան թարգմանութեան բնագաւառում: Նրա ստեղծագործութիւնները՝ բանաստեղծութիւններ, պատմուածքներ, թարգմանութիւններ ու գրականագիտական աշխատանքներ, տպագրուել են ինչպէս իրանահայ, այնպէս նաեւ սփիւռքահայ պարբերականներում՝ Թեհրանի «Վերածնունդ» թերթում, որին աշխատակցել է մինչեւ կեանքի վերջը, «Ալիք» ամսագրում, Բեյրութի «Սփիւռք», «Շիրակ», «Բագին» եւ Բոստոնի «Պայքար» հանդէսներում: Առանձին գրքերով լոյս են տեսել Զ. Միրզայեանի ստեղծագործութիւնները՝ «Թաց մայթը» (Թեհրան, 1957), բանաստեղծութիւնների ու պատմուածքների «Հատընտիրը» (Թեհրան, 1965), Դոստոեւսկու «Հեղիկը» (Թեհրան, 1954), Բաբա Թահեր Օրիանի «Քառեակները» (Թեհրան, 1954), «Աբու Ալի Սինայի կեանքը» (Թեհրան, 1954): Հայաստանում նրա ոտանաւորներից ու թարգմանութիւններից առանձին նմոյշներ տպագրուել են 1985 թ. «Սփիւռքահայ գրականութիւն» ժողովածոի մէջ:

Զ. Միրզայեանը սփիւռքահայ ամենաբեղուն գրողներից էր: Նա հանդէս է եկել թէ՛ հայ եւ թէ՛ պարսիկ մամուլում, ջատագով է եղել երկու ժողովուրդների բարեկամութեան ու համագործակցութեան: Նա եղել է Թեհրանի «Նոր էջ» գրական կազմակերպութեան հիմնադիրներից եւ վարչութեան ամենաեռանդուն անդամներից մէկը, միաժամանակ անդամակցել է Իրանի հայ գրողների միութեանը:

Զօրայր Միրզայեանը մահացել է Թեհրանում 1964 թ. յուլիսի 13-ին:

* * *

Զ. Միրզայեանը դեռեւս 40-ական թւականներից սկսած պարսկերէնից կատարած իր թարգմանութիւններին համառօտ տեղեկութիւններ էր կցում իր թարգմանած գործերի հեղինակների կեանքի ու գործունէութեան մասին: Փոքր-ինչ աւելի ուշ նա մտայղանում է այդ սուղ տեւեալները աւելի ընդարձակել եւ ստեղծել պարսից գրականութեան պատմութիւն, սակայն նրան յաջողւում է իրագործել իր ծրագրի մի մասը միայն. անակնկալ մահը ընդհատում է սկսուած աշխատանքը:

Միրզայեանի մահուանից յետոյ նրա հարազատները եւ գրչակից ընկերները, ի մի բերելով նրա այս աշխատութեան աւարտուն ու մշակուած բաժինները՝ վաղ ժամանակնե-

---

[1] Տե՛ս «Իրաւ ձամե», 1993, ճ. 7:

րից մինչեւ 13-րդ դար, եւ անաւարտ հատւածները՝ 13-րդ դարից մինչեւ 20-րդ դարի 60-ական թթ. հրատարակութեան նպատակով տրամադրում են Հայաստանի Գիտութիւնների ակադեմիային: Ակադեմիկոս Կարապետ Մելիք-Օհանջանեանը, ծանօթանալով Միրզայեանի աշխատանքին, բարձր է գնահատում այն եւ նպատակահարմար է գտնում դրա հրատարակութիւնը որոշակի լրացումներից ու խմբագրումից յետոյ: Ակադեմիայի նախագահութիւնը 1968 թ. հոկտեմբերի 9-ի իր որոշմամբ Արեւելագիտութեան սեկտորի միջոցով Զ. Միրզայեանի աշխատանքի տպագրութեան պատրաստումն ու խմբագրումը յանձնարարեց տողերիս գրողին:

Զ. Միրզայեանի աշխատանքը մանրակրկիտ խմբագրումից յետոյ 1972 թ. հոկտեմբերին քննարկուեց Գիտութիւնների ակադեմիայի Արեւելագիտութեան ինստիտուտում եւ յանձնարարուեց տպագրութեան, սակայն ժամանակի իշխող քաղաքական պայմանները դժւարութիւններ հարուցեցին եւ խափանեցին գրքի հրատարակութիւնը, գիրք, որ այնքան օգտակար կլիներ պարսից գրականութեամբ եւ մշակոյթով հետաքրքրուղ հայ ընթերցողների լայն շրջանակներին եւ ուսանողութեանը:

Մեր օրերում, երբ նոր փուլի մէջ են մտնում հայ-իրանական յարաբերութիւնները, համոզւած ենք, որ այս աշխատանքի հրապարակումը կարեւոր նպաստ կլինի այդ յարաբերութիւնների զարգացման ու ընդլայնման համար:

* * *

Հայ իրականութեան մէջ ցարդ պարսկական գրականութեան պատմութեանը նուիրւած ոչ մի ամբողջական աշխատանք չենք ունեցել. Հայաստանում եւ սփիւռքում լոյս տեսած առանձին մենագրութիւններ ու հետազօտութիւններ հեռու են պարսկալեզու հսկայածաւալ գրականութեան թէկուզ համառօտ պատկերը ներկայացնելուց: Զ. Միրզայեանի աշխատանքը այս առումով առաջին փորձն է:

Քաջ տիրապետելով պարսկերէնին, անգլերէնին, ֆրանսերէնին, ռուսերէնին եւ ձեռքի տակ ունենալով ականաւոր արեւելագէտներ Սաիդ Նաֆիսիի, Զաբիհոլլա Սաֆայի, Էդուարդ Բրաունի, Ռընէ Գրուսէի, Հանրի Մասէի, Եւգենի Բերտելսի, Ստարիկովի, Եան Ռիբկայի եւ այլոց աշխատութիւնները, Զ. Միրզայեանը ստեղծել է մի ինքնատիպ գործ, որ փոքր-ինչ դուրս գալով գրականութեան պատմութեան սահմաններից, որոշ իմաստով իրանական մշակոյթի համառօտ հանրագիտարանի բնոյթ է ստացել:

Պարսկալեզու գրականութեան պատմութեան կարեւորագոյն խնդիրներից է նրա պարբերացումը, որը քննարկւում է աւելի քան մէկ ու կէս հարիւրամեակ: Խնդիրը այն է, որ մասնագէտները երկար ժամանակ զբաղւել են եւ ներկայումս չարունակում են զբաղւել անչափ հարուստ այդ գրականութեան բանասիրական քննութեամբ, հեղինակների ու նրանց ստեղծագործութիւնների ժամանակագրական դասակարգումով եւ, յաճախ պարսկալեզու գրականութեան տարածքային ողջ սահմանները ընդգրկելու եւ միեւնոյն ժամանակահատւածում տարբեր հարստութիւնների ու առանձին իշխանաւորների արքունիքների շուրջ համախմբւած բանաստեղծների ու մտաւորականութեան գործունէութեան առանձնայատկութիւնները բացայայտելու նպատակով. ընթացել են միջնադարեան արեւելեան կենսագիրների ու գրական ժողովածուներ կազմողների ուղիներով, գրողներին ու նրանց գործերը ներկայացրել են մերթ ըստ աշխարհագրական

խմբաւորման եւ մերթ ըստ իշխող հարստութիւնների դասակարգման սկզբունքներով: Գրականութեան պատմութեան առանձին հեղինակներ զուգակցում են եւ այս երկուսը: Կան նաեւ ըստ գրական ոճերի եւ ուղղութիւնների պարբերացման սկզբունքը կիրառողներ: Վերջին տասնամեակներում աւելի գերիշխող է դառնում պարբերացման ժամանակագրական սկզբունքը, որը մերթ ընդ մերթ զուգակցում է ըստ հարստութիւնների պարբերացման սկզբունքով: Մեթոդոլոգիական այս ուղիով է ընթացել ռուս արեւելագէտ Է. Բերտելսը, որին եւ հիմնականում հետեւել է Զ. Միրզայեանը:

Միրզայեանի «Պարսից գրականութիւն» աշխատութեան իւրաքանչիւր պատմական ժամանակաշրջան ունի ներածական բաժին, որտեղ տրւած է դարաշրջանի քաղաքական պատմութեան համառօտ ուրւագիծը, գրական չարժման, գրական ուղղութիւնների առանձնայատկութիւնները: Խոշոր հեղինակներին նւիրւած մենագրական գլուխներում տւեալ հեղինակի կեանքի ու գործունէութեան մասին տրւած են անհրաժեշտ բանասիրական տեղեկութիւններ, վերլուծւած են նրա ստեղծագործութիւնները, վեր են հանւած դրանց գեղագիտական արժանիքները: Աշխատանքը առաւել արժեքաւորւում է քննութեան առարկայ հեղինակի ստեղծագործութիւններից Զ. Միրզայեանի կատարած թարգմանութիւններով:

Ստորեւ ներկայացւում է մի քանի հատւած Միրզայեանի աշխատանքից:

ԱՄԻՐ ՄՈՒՀԱՄԱԴ

Ամիրոչչոարա Աբու Աբդոլլահ Մոհամմադ իբն Աբդոլ-Մալեք Մոեզզի Նիշաբուրին մէկն էր Սելջուկեան չրջանի արքունական մեծագոյն ներբողագիրներից, որը կասիդան հասցրեց մինչ այդ չգերազանցւած կատարելութեան: Այդ արւեստի մէջ նա արժանաւոր հետեւորդ եւ ժառանգ էր Ղազնաւեան դասական չրջանի մեծ ներբողագիրներ Օճսորիի, Ֆարրոխի եւ Մանուչեհրիի եւ, չնայած նրա արւեստը եւ գունագեղ ոճը երբեմն գերազանցում են իր նախորդներին, այդուհանդերձ նրան պակասում է իր նախորդների հանճարեղ չունչը:

Ամիր Մոեզզին մեծ հռչակ է վայելում Իրանում որպէս նորարար բանաստեղծ: Նեզամի Արուզի Սամարղանդին իր «Զահար մաղալէում» նրան անւանում է «Պարսկաստանի նրբագոյն երգիչներից եւ գերագոյն արւեստագէտներից մէկը, որի քերթւածները իրենց թարմութեամբ եւ երաժշտականութեամբ հասնում են անգերազանցելի բարձրութեան եւ կատարեալ են իրենց սահունութեան եւ հմայքի մէջ»: Աւելին «Լոբաբոլ-ալբաբում» նրա մասին ասում է, որ միայն երեք բանաստեղծներ կարող են միմեանց հետ համեմատւել՝ Ռուդաքին Սամանեաններից, Օնսորին Ղազնաւեանների եւ Ամիր Մոեզզին Սելջուկների օրոք:

Ամիր Մոեզզիի բանաստեղծութիւններում գործածւած պատկերներն ու նմանութիւնները, հակադրութիւններն ու համադրութիւնները, որոնք նրա օրօք բոլորովին կամ մասամբ նորութիւններ էին, նրանից յետոյ եկող բանաստեղծների միջոցով անընդհատ կրկնւելով ընդհանրացան, դարձան սովորական եւ արդէն ձանձրացնող չաբլոններ: Օրինակ՝ Ամիր Մոեզզիի քերթւածներում է, որ առաջին անգամ հանդիպում ենք յետագայում առատօրէն գործածւած հետեւեալ նմանութիւններին՝ արտասւաթոր աչքը՝ մար-

գարտաբեր խեցիի, սիրուհու շրթերը՝ շաքարահամ կարկեհաններուի, սիրուհու աչքը՝ սիրեկանի արեամբ լեցուած նարգիզի, եւ այլն: Այսպէս, օրինակ.

Այն օրից ի վեր, երբ շաֆաաահամ շրթերդ տեսայ.
Երկու աչերս խեցիներ դարձան, մարգարտով լեցուն.
Խեղճ սիրեկանի հոգին բոցալէզ ճնոց է ազահ,
Աչերը նրա՝ ծովածին խեցի, բոցերի ծոցում:

*

Թէ մազերդ մշկաբոյր չեն մեղանչել դէմիդ դէմ,
Ապա ինչո՞ւ գլխիկոր ցած չեն թափւել գլխիդ մօտ.
Մեղաւոր են թէ նրանք, ինչո՞ւ Աստւած անպատիժ
Թոյլ է տւել, որ ապրեն այդ դրախտում մշկահոտ:

*

Շուշանն է անփուշ ու վարդն է փշոտ,
Ասում են մարդիկ, բայց փուչ խօսք է դա,
Քանզի փշեր կան շուշաններիդ շուրջ,
Մինչ ֆո վարդի շուրջ՝ ես փուշ չտեսայ:

Ամիր Մոեզզիի ծննդեան ճշգրիտ թւականը յայտնի չէ: Գիտենք միայն, որ նա երիտասարդ էր, երբ հայրը, բանաստեղծ Բորհանին, վախճանուեց Սուլթան Մալիք-շահի թագաւորութեան առաջին տարիներին, չուրջ 1072 թւականին: Ամիր Մոեզզին ամենայն հաւանականութեամբ մահացել է հեջրի 518-521 (1125-1127) թւականների միջեւ:

Ամիր Մոեզզին նախապէս եղել է Սուլթան Մալիք-շահի արքունական բանաստեղծը, իսկ նրա մահից յետոյ, Իրանի խառնակ շրջանում, թափառել է պալատից պալատ Հերաթում, Նիշաբուրում եւ Սպահանում: Նա իր փառքի գագաթնակետին է հասել Սուլթան Սանջարի օրօք, որը նրան անչափ յարգում էր եւ «հայր» էր անւանում:

Բերենք մի քանի հատւած Մոեզզիի բանաստեղծութիւններից.

Այս մաճիկը յօնքն է կարծես իմ եարի,
Նա նման է արաբական աղեղի,
Ոսկուց կոփած պայտ է կարծես նրբագիծ
Գինդ է կախած հորիզոնի ականջից:

*

Ո՛վ ուղտապան, զարկիր վրան
Եարիս երկրում անզուգական,
Որ ես մի պահ ողբամ նրան,
Ողբամ կեանքը այս անցողիկ:

*

Առնի սիրտս ծովի նման,
Առեամբ ջրեմ ես խոպան.
Աշխարհն դառնայ ցափ ովկեան
Ինձ հետ լացեն դաշտ, ծաղիկ:

*

Ձեմավայրում սիրեկանիս,
Ուր ծաղկում էր վարդ, նարգիզ,
Շրջում է արդ մի մկնաթիս,
Թեւածում են բու, չղջիկ:

ՆԱԴԵՐ ՆԱԴԵՐՓՈՒՐ

Նադեր Նադերփուրը ծնւել է 1929 թ. Թեհրանում: 1948-ին ուղեւորւել է Ֆրանսիա, ուր մնացել է երեք տարի, ուսումնասիրելով ֆրանսիական եւ միջազգային գրականութիւն, 1951-ին վերադարձել է Իրան: Սկսել է աշխատակցել «Սոխան» գրական հանդէսին եւ բանաստեղծութիւններ է հրատարակել համարեայ բոլոր կարեւոր գրական պարբերականներում: 1954 թ. հրատարակւել է նրա բանաստեղծութիւնների առաջին գիրքը «Աչքեր եւ ձեռքեր» խորագրով, իսկ հետագայ տարիներին լոյս են տեսել «Բաժակի աղջիկը» (1955,) «Խաղողի երգը» (1958), «Արեւի ծարիրը» (1960): 1963 թ. հրապարակւել է Նադերփուրի բանաստեղծութիւնների հատընտիր ժողովածուն:

Բանաստեղծի ստեղծագործութեան առաջին շրջանը, որն ընդգրկում է 1947-ից 1953 թւականները, գուտ պատանեկան փնտրտուքի շրջան էր, քաղցր տենչեր, չհասկացւած սիրոյ մտորումներ, մութի մէջ դեգերող ստւերներ, ինքնասպանութեան խոհեր, տւայտանքներ անհնարին եւ անհասանելի երազանքների համար:

Օտար հորիզոններից վերադառնալով Իրան, նա իրեն աւելի հաստատուն է զգում հայրենի հողի վրայ, աւելի մօտ իրականութեանն ու ժողովրդին եւ կարծես աշխատում է իր քերթւածներով պատռել հոգին պարուրած մութը, դուրս գալ հոգեկան թմբիրից, ներծծել իր ժողովրդի արմատների աւիշը: Բայց չուտով իրերի դրութիւնը նրան նորից ճգում է հոռետեսութեան գիրկը. նա իրեն ընկճւած եւ լքւած է զգում, տեսնում է, որ բանաստեղծական մեկուսացման մէջ անկարող է պայքարել իրականութեան դէմ: Հետեւաբար նա պարփակւում է հոգու մշուշի մէջ, ուր թագաւորում է երկիւղը, կեանքի սարսափը:

1953-ից յետոյ այդ հոռետեսութեան մէջ մեծ տեղ է գրաւում սէրը: Սիրային հեշտանքը դառնում է նրա էութեան միակ ճգտումը, լքւած բանաստեղծի միակ ապաստանը: Այս շրջանում է, որ նա գրում է «Խաղողի երգը» քերթւածների ժողովածուն, ուր առաջին անգամ, գուցե միակ զգացումը, որ նա կարողացել է արտայայտել, սէրն է, հեշտանքը, կիրքը, որով կարծես ուզում է նա դափնել իր գոյութիւնը, իդեալականացնել կեանքը, փախչել տգեղ իրականութիւնից, մարդկանցից, իր անմիջական շրջապատից:

Նադեր Նադերփուրը իրաւամբ համարւում է 50-ական թւականների իրանական բանաստեղծութեան պսակը: Իր ժամանակի ոչ մի պարսիկ բանաստեղծ արւեստի կատարելութեան մէջ նրան չի հաւասարւել: Նրա գծած պատկերները գունագեղ են, խայտաբղէտ, իւրաքանչիւր պատկեր իր զմայլիչ գեղեցկութիւնը ունի: Սիմւոլը նրա գերագոյն

նպատակն է եւ երբեմն դրանց կուտակումով աշխատում է բանաստեղծութեան ընդհանուր միտքը սիմուոլիկ դարձնել:

Նադերփուրը գրում է Նիմա Եօշիչի հետեւողականութեամբ՝ գործածելով հին դասական ձեւերի եւ արուզի եղծւած տողերը, բայց եւ իր խառնւածքին հաւատարիմ, վախենում է համարձակ նորաձեւութիւններից:

ԽԱՂՈՂԻ ԵՐԳԸ

Ի՞նչ եմ ասում
Ո՞վ է ասում, ափշն այս խաղցր խաղողի
հատիկի մէջ՝ մեղր է հիւթեղ:

Ի՞նչ մեղր է դա, արցունք է սա,
Ծեր ու տանջւած պարտիզպանի արցունքն է սա:
Որ գիշերներ ոտի վրայ,
Անհուն, արթուն մինչ լուսաբաց,
Ոռթն է ջրել
Մէջք է ծռել,
Երկուտակւել, ինչպէս ընձիւղն ոռթատունկի:
Լոյս է տւել ողկոյզների հատիկներին իր աչքերի արցունքներով,
Ուրախութիւն է պարգեւել ուղէշներին առեամբ սրտի:

Ի՞նչ եմ ասում:
Ո՞վ է ասում, որ ափշն այս խաղցր խաղողի
հատիկի մէջ՝ մեղր է հիւթեղ:
Ի՞նչ մեղր է դա, արիւն է սա,
Տանջւած ու ծեր պարտիզպանի արիւնն է սա,
Պէտք չէ եզմել այդման անփոյթ,
Պէտք չէ խմել այդման անփոյթ արիւնը նրա:

Եւ դուք, եւ դուք, ո՛վ գնորդներ իմ երգերի,
Թէ բառերիս հատիկներում,
Ընձիւղներում ֆերթւածներիս
Տեսնում եք լոկ գինի ու մեղր, արցունքներն են, արիւնն է իմ,

Ի՞նչ նեկտար է, արցունք է սա, արիւնն է իմ:
Ինչո՞ւ եմ այդ գինի կոչում:
Հարբեցումն այս հարբեցում է օտարոտի,
Դուք իմ առեամբ եք հարբենում,
Սրտիս առեամբ:
Ամեն մի բառ ճիչ է խղճուկ, որ պոկում եմ սրտիս խորից,
Արնոտ ծով է այս երգը լոկ,
Ծով եզրաթափ առեան գինով:

Ի՞նչ մեղր է սա, արցունքը այս ամեն բառիս հատիկի մէջ,
Ի՞նչ մեղր է սա, այս արիւնը իմ երգերիս ուղէշներում։
Այդման անփոյթ պէտք չէ ճզմել այդ հատիկը շրթունքներով,
Ատամներով պէտք չէ սեղմել այդման անփոյթ ընձիւղը այս։

Սա մի թաս է արեամբ լեցուն։
Մի բաժակ է արցունքների։
Այդման անփոյթ մի՛ բարձրացնիլ։
Այդման անփոյթ մի՛ դատարկիլ գաւաթը այս։

ԵՐԿՈՒ ՀԱՅԵԼԻ

Ես խօսքեր եմ ասել ձո մասին
Գարունների,
Ծառերի,
Քամիների։

Քեզնից հեռու՝
Ես կոյր էի։
Ձո դիւթանքի գաղտնիքները
Թաքցրել եմ կրծքիս խորշում։

Գաղտնիքը այդ չփորձեցիր երբէք կարդալ։
Գաղտնիքը այդ ես քեզ ասել չփորձեցի։
Եւ գիշերներ ես հսկեցի նրանց վրայ։

Այսօր,
Երկու հայելու պէս իրար դիմաց,
Շեղբեր են մեր հայեացքները խաչաձեւած.
Եւ որպէսզի չփթթի մեր սրտերում բաղեղը յանցանքի,
Մենք պոկել ենք սրտից արմատը կրքերի։

ՀԱՅԵԱՑՔԴ

Հսկայ մի սարդի ոստայնի պէս
Փշրւել էր ապակին։

Հայեացքիդ աղամանդը անգութ խզեց ապակին.
Ապակին թափւեց ծառերի լոութեան մէջ։

Այժմ մնացել են աչքերդ եւ մի լուսին,
Եւ այդ երկուսը նայում են անթարթ,
Նայում են աչքերիս։

ՖՈՐՈՒՂ ՖԱՐՐՈՒԽԶԱԴ

Ծնւել է 1934 թ. Թեհրանում: Սկսել է գրել 1953-ից: Լոյս են տեսել նրա երեք ժողովածուները՝ «Գերին» (1955 թ.), «Պատ» (1956 թ.), եւ «Հանցանք» (1958 թ.):

Ֆարրուխզադի առաջին երկու ժողովածուները զգացմունքների իրենց անկեղծութեամբ, անսքող արտայայտութիւններով եւ այն մօտեցմամբ, որ բանաստեղծուհին որդեգրել էր սիրոյ եւ սեռի վերաբերմամբ մամուլի էջերում տեղի տւին բուռն վիճաբանութիւնների:

Ֆարրուխզադի բանաստեղծութիւնների մէջ աչքի են զարկում Արեւելքի կնոջ սիրոյ ողբերգական լքւածութիւնը: Նա «կեանքի» գերին է, արուի ճորտը, կքած այն անորոշ «հանցանքի» եւ յուսալքման բեռի տակ, որով բարձել ու կեանքից մեկուսացրել է յաղթական արուն:

Ժողովածուների խորագրերը արդէն արտայայտում են Ֆարրուխզադի ամբողջ ներաշխարհը: Բանաստեղծուհին գեղեցիկ կերպով է արտայայտում սիրոյ տւայտանքները, սիրող կնոջ զգացումների հակասութիւնները, յաղթանակի հաճոյքը եւ պարտութեան դառնութիւնը:

ՄՈՒԹ ՍԵՆԵԱԿՈՒՄ

Լուսինն էր շողում գունաթափ դէմքին,
Մեղմն էր ծիծաղում աչքերում նրա.
Հարբած հառաչի կրակն էր ծխում
Լռած շրթերի խառուղու վրայ:

Անխօս եւ այրող ցանկութեամբ լեցուն
Հառեցի նրան հայեացքս հարբած.
Իրանս գրկեց բազուկների մէջ,
– Տո՛ւր ինձ գաւաթը, – շրթիս մրմնջաց:

Ես ապաստանում մի մութ գիշերւայ
Սուերը թեւիեց սուերի վրայ.
Մի շունչ հրկիզեց այտերս պաղած
Ու շուրթս նուլեց շրթերին նրա:

Ֆ. Ֆարրուխզադը մահացել է 1967 թ. փետրվարի 14-ին ինքնաշարժի արկածի հետեւանքով: Խմբ.

ՄԻՋՆԱԴԱՐԱՊԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՔՆԱՐԵՐԳՈՒՀՆԵՐ

ՀԻՆԱՎՈՒՐՑ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԷՋԵՐԻՑ[1]

Մաշտոցյան Մատենադարանի № 5622 ձեռագրի ճակատագիրը չատ բանով չի տարբերվում հայերեն հազարավոր այլ ձեռագրերի պատմությունից. սա ևս գրված է այնպիսի օրերում, երբ հայոց աշխարհը տնքում էր օսմանյան լծի տակ, երբ ամենուր բռնություն էր ու կամայականություն:

Ձեռագիրը կրում է հայոց 1149 թվականը (=1700): Այստեղ ընդօրինակված են Հովհաննես Թլկուրանցու, Առաքել Սյունեցու առանձին ստեղծագործությունները, «Պղնձե քաղաքի պատմությունը», ինչպես նաև բժշկագիտական երկեր: Ձեռագրի գրիչը Գրիգոր անունով ոմն քահանա է, որ մատյանը արտագրել է «Մերձ Դըլկաթայ Մոկաց թաղին…

Ի դառն եւ ի նեղ ժամանակին,
Ուր զօրացեալ է այլազգին,
Քանզի խռոխտայ մեր թշնամին՝
Ձմեզ կլանել յորովայնին…

Ժլատ են «Պղնձե քաղաքի պատմության» ընդօրինակումն ավարտելու կապակցությամբ գրչի թողած չափածո այս հիշատակարանի բառերը, սակայն խոսուն են ու նրա հոգեկան խռովքը արտահայտող:

Գրիգոր Մոկացին. — այսպես ենք անվանում գրչին միջնադարի բազում Գրիգորներից նրան տարբերելու համար,— բացի չափածո հիշատակարանից (էջ 56ա) այս մատյանում ընդօրինակել է նաև ստորև ներկայացվող երկու ոտանավորները (էջ 107ա-109ա), որոնք ինչքան մեզ հայտնի է, մինչ այժմ չեն հրապարակվել: Այս երկու ոտանավորները ամենայն հավանականությամբ գրչի ստեղծագործություններն են, որովհետև, նախ՝ դրանց լեզվա-ոճական ձևերում ու տրամադրության մեջ չատ ընդհանրություններ կան, այնուհետև թե՛ հիշատակարանի և թե՛ առաջին ոտանավորի թվականները («Ռ եւ հարիր քառասուն եւ Թ» =1700) նույնն են եւ ի վերջո կարևոր հանգամանք է նաև այն, որ այդ ոտանավորները պահպանվել են միայն այս մատյանում:

Առաջին ոտանավորի խորագրից՝ «Վասն գնալոյն մեր ի Կոցու անապատին, որ ծովն զմեզ արգելոյր» և բանաստեղծության բովանդակությունից պարզվում է, որ այն գրված է Վանա ծովի վրա տեղի ունեցած փոթորկի անմիջական տպավորության ներքո, այն ժամանակ, երբ գրիչը իր ընկերակիցների հետ ուխտի է գնացել Կոտուց անապատ: Երկրորդ ոտանավորը՝ «Տաղ դինու եւ ուրախութեան», հետաքրքիր է որպես ժամանակի սեղանի երգ-բարեմաղթության, որ ճշմարտացիորեն արտացոլում է ուշ միջնադարի հայ մարդու կենցաղն ու սովորույթները, նրա կենսասիրությունը: Երկու ոտանավորներն էլ,

---

[1] Հրապարակվել է «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթում, 1971, № 26, հունիսի 30, էջ 7:

չնայած կրոնական չղարչին, հագեցած են ժողովրդական պարզ ու անմիջական մտածողությամբ, աչխարհիկ տրամադրություններով:

Գրիգոր գրչի Վանա ծովի փոթորկին նվիրված ոտանավորը մի փոքրիկ մարգարիտ է, որ փայլում է բնության տարերքի պատկերավոր նկարագրությամբ, խոսքի անմիջականությամբ ու երաժչտականությամբ: Այստեղ ծովը ներկայացված է դիմառնաբար որպես կենդանի էակ. և ամեն ինչ իրական է, չոշափելի: Հատկանչական է, որ փոթորիկը բանաստեղծը համեմատում է իրեն քաջ ծանոթ «դուչմանի» ու նրա «ասքարների» հարճակման հետ: Սակայն սա չի խանգարում, որ նա հայրենի ծովակի նկատմամբ իր սերը դրսևորի խոսքի մտերմիկ երանգով, ջերմ չնչով. որքան քնքչանք ու խանդաղատանք կա թեկուզ առաջին իսկ «Ծովի՛կ, մի՛ կանչեր, մի՛ կանչեր» տողում, որի կրկնությունը յուրաքանչյուր տան վերջում ոչ միայն քնարական չունչ է տալիս երգին, այլև աղոթքաղերսանքի պատրանք է ստեղծում:

Կարելի է ենթադրել, որ բանաստեղծական ակնքախ ճիրքով օժտված Գրիգոր Մոկացի գրիչը ունեցել է նաև այլ ոտանավորներ, որոնք դեռևս չեն հայտնաբերվել և կամ, ցավոք, մեզ չեն հասել:

ՁԵՌԱԳԻՐԸ ԲԱՑՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՔԸ!

Ամրան չոգ եւ ճմեռուայ ցուրտ ամիսներին Մատենադարանում համեմատաբար աշխատանքային անդորր է լինում. մեր երկրի տարբեր վայրերից եւ արտասահմանից եկող զբօսաշրջիկների հոսքը դէպի մեր հոգեւոր մշակոյթի այս կենտրոնը նուազում է եւ, բնականաբար, պակասում են Մատենադարանի տնօրինութեան եւ գիտական անձնակազմի հոգսերը. ամէն ոք աշխատում է օգտուել միջանկեալ այս դադարներից եւ կենտրոնանալ իր գիտական հետազօտութիւնների վրայ:

1981 թ. Յունուարի 9: Առօրեայ աշխատանքները նոր էին սկսուել, երբ ուժեղ թափով բացուեց իմ գրասենեակի դուռը եւ աղմկով ներս եկաւ Հրազդանի շրջանի Ջրառատ աւանի բնակիչ Մելիքսեթ Պօղոսեանը: Հաստ վերարկուի մէջ փաթաթուած, մորթէ գլխարկը մինչեւ ականջները իջեցրած բարձրահասակ մեր բարեկամը առանց բարեւի ու պաշտօնականութեան, լայն ժպիտը դէմքին, մեծ ու վստահ քայլերով մօտեցաւ իմ գրասեղանին: Ես ոտքի կանգնեցի:

– Հը, հընկեր Բաբգէն, ո՞նց ես: Էս անգամ քո կուշտը դարտակ չեմ եկել: Մաղարիչ խոստացիր՝ նիշանց տամ:

Մելիքսեթ ապէրը ծերունական միամիտ խորամանկութեամբ ժպտում է, նայում է ուղիղ աչքերիս մէջ, ապա հանգիստ նստում է առաջարկուած աթոռին, լրագրով փաթաթուած ծրարը դնում է վրան.

– Հէչ բան էլ չեմ բերել: Զարաֆաթ կ'ենեմ: Էս եաներին ի էկել, ասի գնամ հընկեր Բաբգէնի քէֆը խարցնեմ:

– Շատ լաւ ես արել: Ես էլ ասում եմ՝ էս մեր Մելիքսեթ ապէրը ուր է կորել, ո՛չ ձայն կայ, ո՛չ խապար: – Խօսում եմ, բայց երեխայի պէս մի աչքս ծրարին է, իսկ ծերունին չարունակում է կատակել, հրճուել, տեղը թանկացնել:

– Մի բաց, մարի՛կ, տե՛ս, երկու խարիր տարուայ գիրք ի, գրուկ գիրք ի:

Դանդաղ բացում եմ ծրարը, Մելիքսեթ ապէրի երկար առաջաբանը հետաքրքրութիւնս նուազեցրել էր: Այո, իսկապէս ճեռագիր է: Վեր ու վար եմ անում, թերթում եմ: Առանձնապէս ոգեւորուելու առիթ չկայ. գրչութիւնը պարզ է, յար եւ նման 17-18-րդ դարերի հայերէն տպագիր գիրքերի բոլորգիր տառատեսակներին: Նոր ճեռագիր է: Բացում եմ առաջին էջը. «Ստեփանոս քահանայինս է գիրքս»: Ոչինչ չասող մակագրութիւն: Ստեփանոս անունով այնքան քահանաներ կան: Ուշադրութիւն չեմ դարձնում այդ տողին: Շրջում եմ ճեռագիրը, տեսնենք յիշատակարան ունի՞. վերջից բազմաթիւ թերթեր դատարկ են: Նորից վերադառնում եմ մատեանի սկիզբ. ի՞նչ բովանդակութիւն ունի: Թերթում եմ: Սկզբից նոյնպէս մի քանի թերթեր դատարկ են: Այնուհետեւ սկսւում է բնագիրը՝ «Գրիգոր Նարեկայ վանաց վանքի հոգեմատեան հռետորի եւ փիլիսոփայի ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ»: Պարզ է՝ Նարեկացու «Ողբերգութեան Մատեան»ի ընդօրինակութիւնն է: Յետոյ ի՞նչ: Այս մատեանի տասնեակ ընդօրինակութիւնները կան

! Տե՛ս «Լրաբեր», Լոս Անջելես, 1983, № 43, օգոստոսի 13 - № 44, օգոստոսի 20, էջ 5:

մեզ մօտ եւ աշխարհի տարբեր ձեռագրատներում, իսկ հնագոյնը 1173 թուականից, Գրիգոր Մլիճեցու սքանչելի մանրանկարներով, մեր Մատենադարանի սեփականութիւնն է: Այս բացառիկ յուշարձանի համեմատութեամբ ի՞նչ արժէք պիտի ունենայ Մելիքսեթի բերած մատեանը: Լուռ մտորում եմ եւ չարունակում դանդաղ թերթելով առաջ գնալ, թերեւս որեւէ մակագրութիւն կամ նշում գտնեմ գրչի մասին: Ծերունին լուռ հետեւում է իմ չարժումներին, զգում եմ նրա ե՛ւ անհամբերութիւնը ե՛ւ հայեացքի ծանրութիւնը:

– Էս խօ տպուկ գիրք ի, գրուկ չի: – Իրեն իսկ խօսելաոճին նմանուելով կատակում եմ:

– Դու վերջը մտի՛կ, վերջը, գիրերով թուականը կարդա: – Մելիքսեթ ապէրը ձեռքը մեկնում է դէպի մատեանը եւ յուզուած, արագ-արագ չուռ է տալիս թերթերը, եւ հատ-հատ կարդում է.

– Ռ, Մ, Ժ, Խազար էրկու խարիր տասը էղա՞ւ: Վրան եկ խինդ խարիր իցուն մէկ: Զեղա՞ւ հազար օխտը խարիր վացուն մէկ:

Հրճուելով ծերուկի ուշիմութեամբը, չարունակում եմ կատակել.

– Մի երկու հարիւր տարուայ գիրք չէ՞: Այսպիսի գրքեր ինչքան կ'ուզես, – ասում եմ, բայց միաժամանակ աչքի տակով կարդում եմ փոքրիկ յիշատակարանի առաջին տողերը. «Գրեցաւ ի Գիլան Անգալի եկեղեցին Թուին ՌՄԺ»: Ահա թե ինչ: Լարւում եմ. ինձ ծանօթ չէ Իրանի Գիլան նահանգի Էնզելի նաւահանգստի գրչավայրը: Յիշատակարանի յաջորդ տողերը ինձ դիւթում են: Աչքերիս չեմ հաւատում: Զգում եմ, որ գլուխս պտոյտ է գալիս, լսում եմ սրտիս ուժգին զարկերը: Մի քանի անգամ հայեացքս սահում է էջի վրայով, բայց արդէն ոչինչ չեմ կարողանում կարդալ: Աչխատում եմ ինքս ինձ տիրապետել. աչքերիս առջեւ ամբողջ էջով մէկ կարդում եմ՝ «Սայեադ Նովայ»: Մի՞թէ: Արդեօք երազի մէ՞ջ եմ: Թերեւս պատրանք է: Սայեաթ-Նովայի նոր ձեռագի՞ր է իմ առջեւում: Ափսոս, մտածում եմ, եթէ աչքերս բացեմ, երազը կ'անէհանայ: Նորից տողերը յստակւում են եւ ես պարզօրէն կարդում եմ. «Ով ընթերցող, յիշեա գծող Ստեփանոս վարդապետս, որ Սայեադ Նովայ ասին եւ հայր իմ մատիսի կարապետ եւ դուք յիշեալ լինիք. առաջնորդութեան Հախպատ Զաքարիայ վարթապետի Թիփլիզցի»:

Իմ հրաշալի երազը ընդհատում է Մելիքսեթ ապէրը: Նա, հաւանաբար, տեսնելով, որ մի քանի տողի ընթերցումը երկար տեւեց եւ կամ նկատելով իմ յուզմունքը, դիմում է ինձ.

– Հը՛, մեր տղա՛յ, ի՞նչ կ'ասես, խալիւորը մի բան կը խասկանա՞յ:

– Ի հարկէ՛, ի հարկէ՛: Դու միանգամայն իրաւացի ես: Դու ճիշդ ես վերծանել թուականը: – Հրճուանքից նորից եմ կատակում եւ վերամբարձ ու պաշտօնական ոճով խօսքս ուղղում եմ նրան. – Արգումանի որդի Մելիքսեթ, ձեզ վաղուանից աչխատանքի ենք ընդունում Մատենադարանում: Դուք լավ բանասէր կը դառնաք:

Մելիքսեթ ապէրը էլի ինչ-որ բաներ է ասում, բայց ես այլեւս նրան չեմ լսում: Հրապուրուած նորից եմ կարդում յիշատակարանի ժլատ տողերը: Վայրկենաբար աչքիս առջեւ է գալիս մեզ մօտ Մատենադարանում պահուող Սայեաթ-Նովայի ընդօրինակած մատեանի յիշատակարանը, յար եւ նման այս նոր մատեանի յիշատակարանին: Բայց արդեօք չե՞մ սխալւում: Առանց յապաղելու գրապահարանից վերցնում եմ Սայեաթ-

Նովայի խաղերի յայտնի Դաւթարի նմանահանուելիւնը (ֆաքսիմիլիէն), որ 1962 թ., մեծ աչուղի յոբելեանի առթիւ տպագրուելեան էինք պատրաստել ես եւ բանասէր Պարոյր Մուրատեանը: Այդ հրատարակուելեան մենք կցել էինք նաեւ 1766 թ. Զաքաթալայի չրջանի Կախս քարւանսարայում Սայեաթ-Նովայի ընդօրինակած ձեռագրի յիշատակարանի լուսանկարը այն նկատառումով, որ մասնագէտները ձեռքի տակ ունենան տարբեր ժամանակներում Սայեաթ-Նովայի գրած մատեանների պատկերը եւ անհրաժեշտուելեան դէպքում կարողանան օգտագործել դրանք: Եւ ինչ հետաքրքիր զուգադիպուելիւն. ստացւում է, որ ես հրատարակիչս, պէտք է օգտուէի այդ նմանահանուելիւնից:

Մելիքսեթ Պօղոսեանի բերած ձեռագրի եւ Կախս աւանում ընդօրինակուած մատեանի յիշատակարանները հաստատում են, որ երկուսն էլ մէկ գրչի՝ Սայեաթ-Նովայի ձեռքի գործն են, աւելին՝ միեւնոյն գրչուելիւնը ունի նաեւ Դաւթարը: Հրաչք է: Յայտնաբերուած է Սայեաթ-Նովայի ձեռքով ընդօրինակուած մի նոր յուշարձան: Միտքս աչխատում է հաչուիչ մեքենայի արագուելեամբ. հիմա էլ բանասիրական զանազան հարցեր են ներխուժում մտքիս մէջ. ինչո՞ւ է Սայեաթ-Նովան ձեռագրի սկզբում իրեն Ստեփանոս քահանայ անուանել, իսկ վերջում՝ 1761 թ.՝ Ստեփանոս վարդապետ. Կախս քարւանսարայում 1766 թ. ընդօրինակուած ձեռագրում եւս նա իրեն քահանայ է անուանում: Հետեւաբար՝ ե՞րբ է նա կրօնաւոր դարձել, ե՞րբ է Պարսկաստան գնացել եւ ինչո՞ւ: Այս վերջին փաստը յայտնի չէ ընդհանրապէս: Եւ էլի չատ հարցեր: Ուրախուելիւնից ոտքի եմ կանգնում, ջերմօրէն գրկում եմ բարեկամիս:

– Բա՛, Մելիքսեթ ապէրը վատ բան կը բերի՞: Մի խատ էլ փաթոթաւոր գիր կայ, մի քանի արշին, էն էլ կը բերեմ: Անցեալ տարի մի կնգայ կուչտը կաչուի վրայ գրուկ գիրք կար, էնենց կաչի, ոնց որ դաբախանից նոր դուրս էլած: Ասի՝ պառաւ, տանենք Մատենադարան, ասաւ՝ յետոյ: Նէ վախտ անց գնացի, ասաւ՝ կորել ա, ասի՝ իմալ կորել ա: Պառաւը սուտ ասաւ: Տեսնենք վերջը ինչ կը լինի:

– Իսկ փաթոթը ինչո՞ւ չես բերել:

– Մկայ էսօր խէս գործը թամամնայ, էն մէկն էլ կը բերեմ:

Մելիքսեթ ապէրը երբ հրաժեչտ էր տալիս, իրեն վստահեցրի, որ նա անպայման պարգեւատրում կը ստանայ:

– Զարաֆաթ կ'ենեմ, մեր տղայ: Փաթոթն էլ կը բերեմ: Դէ, ես գնացի:

Այնքան էի հրապուրուել նոր մատեանով, որ չհասցրի իմանալ, թէ Մելիքսեթ ապէրը որտեղ էր գտել այն, ինչ հանգամանքներում: Բայց դա առանձնապէս մտահոգիչ չէր. մի քանի օրից նորից պիտի հանդիպէինք:

Երկու չաբաթ չարունակ գլխովին տարուում եմ Սայեաթ-Նովայի կեանքի ու գործունէուելեան փաստերով, անդադրում փնտռտուքներ եմ կատարում ձեռագիր ու տպագիր աղբիւրներում, աչխատում եմ վերականգնել երգչի կեանքի 1759-1763 թուականների մէջ ընկած ժամանակաշրջանի, վաստակաչատ սայեաթնովայագէտ Մօրուս Հասրաթեանի խօսքերով ասած՝ «նրա կենսագրուելեան չլուսաբանուած կարեւորագոյն էջերը»:

Ըստ Սայեաթ-Նովայի որդու Օհանի վկայուելեան՝ Վրաստանի թագաւոր Հերակլը նեղացել էր «իր խեղճ ստրուկ» Սայեաթ-Նովայի վրայ եւ հեռացել էր պալատից: Այս դէպքը գրականուելեան մէջ ենթադրել են, որ տեղի է ունեցել 1759 թ., որից յետոյ, թե-

բեւս 1762-63 թթ. նա ձեռնադրուել է քահանայ, մինչդեռ նոր մատեանից որոշակիօրէն տեղեկանում ենք, որ 1760-61 թուականներին, նա արդէն հոգեւորական է եւ հովւում է Էնզելի նաւահանգստում:

Իսկ ինչո՞ւ Էնզելիում: Այստեղ հարցի լուծմանը օգնելու է գալիս նոր ձեռագրի յիշատակարանում նշուած Զաքարիա վարդապետի ինքնութիւնը: Հաղբատի առաջնորդ Զաքարիա Պաթինեանը, որ առանց եպիսկոպոսական աստիճան ունենալու 1752 թ. գրաւել է Հաղբատի առաջնորդութիւնը (այդ ժամանակներում Հաղբատի թեմական առաջնորդը նստում էր Թիֆլիսում) եւ 60-ական թուականներին ժողովրդի կողմից արտաքսուել էր Թիֆլիսից, ապաւինել էր Պարսկաստանի «իշխանապետ» Քերիմ խան Զենտին: Վերջինիս հրամանով Զաքարիան էջմիածնում եպիսկոպոս է ձեռնադրւում եւ պաշտօնապէս նշանակւում է Հաղբատի առաջնորդ: Սայեաթ-Նովայի ընդօրինակած «Ողբերգութիւն Մատեանի» յիշատակարանում Զաքարիայի անուան յիշատակումը ենթադրել է տալիս, որ նա է եղել տարաբախտ երգչին քահանայ ձեռնադրողը եւ նրան Էնզելի ուղարկողը:

18-րդ դարի առաջին տասնամեակներում Էնզելին վաղուց արդէն կարեւոր կենտրոն էր Արեւելք-Ռուսաստան առեւտրական կապերի օրաւուր աճող յարաբերութիւններում: Իսկ այդ բնագաւառում նշանակալի դեր ունէր հայ վաճառականութիւնը, որը Ռեշտ-Էնզելի-Հաշտարխան առեւտրական տարանցիկ ճանապարհի վրայ կարեւոր յենակէտեր ունէր: Հայկական եկեղեցու գոյութիւնն իսկ Էնզելիում վկայում է, որ այդ ժամանակներում այստեղ նշանակալի թուով հայեր են ապրել: Իսկ քանի որ Էնզելին Նոր Ջուղայի հայոց թեմի ենթակայութեան բնակավայրերից էր, ապա տեղի քահանայի նշանակումը նոյնպէս պէտք է գտնուէր Նոր-Ջուղայի Ամենափրկչեան վանքի առաջնորդութեան իրաւասութեան ներքոյ: Թերեւս պէտք է հաւանական համարել, որ Զաքարիա վարդապետը Սպահանում Քերիմ խան Զենտի մօտ գտնուած ժամանակ, Նոր Ջուղայի առաջնորդին միջնորդել է իր ձեռնադրած Ստեփանոս քահանային (Սայեաթ-Նովային) նրա թեմի որեւէ հայկական եկեղեցում հովիւ կարգել:

Այնուհետեւ, եթէ 1760-61 թթ. Սայեաթ-Նովան քահանայ է ձեռնադրուել, ապա ինչո՞ւ է «Ողբերգութեան Մատեան»ի յիշատակարանում իրեն վարդապետ կոչում: Այս խնդիրը չատ ջուր է վերցնում, ի վերջոյ եկեղեցական օրէնսգրքերի որոշ մեկնաբանութիւններից հնարաւոր է լինում պարզել, որ վարդապետ կոչումը այստեղ որպէս ամուրի եւ վարդապետական գաւազան կրող հոգեւորական չպիտի հասկանալ, որովհետեւ վաղ միջնադարում, անգամ մինչեւ 20-րդ դարի սկիզբները չատ արժանաւոր, գիտուն ու զարգացած եկեղեցականների, այդ թւում աբեղաների ու քահանաների, վարդապետ էին անուանում: Այստեղ հաւանական է դառնում եզրակացնել, որ Սայեաթ-Նովան 1759-61 թուականների միջեւ ձեռնադրուել է որպէս ամուսնացեալ քահանայ եւ իր բանաստեղծական շնորհքի, գրչութեան արուեստով զբաղուելու, թերեւս նաեւ լաւ քարոզիչ լինելու համար նոյնպէս վարդապետ է կոչուել:

Սակայն ողջ երիտասարդական տարիները երգի ու սազի հետ անցկացրած աշուղը չափազանց ծանր պիտի տանէր հոգեւորականի սքեմը, ուստի վրացերէն գրած իր խաղերից մի քանիսի մէջ նա դժգոհում է իր նոր վիճակից, գրելով՝ «Աչխարհական էի՝ քահանայ դառնալս ինչիս էր», «Սեւ կաբայում սգուորութիւն չեմ ուզում»:

Գրականութեան մէջ ենթադրել են, որ Սայեաթ-Նովան այս ոտանաւորները գրել է 1770 թուականներից յետոյ, մինչդեռ նոր ձեռագրի լոյսի տակ հաւանական է դառնում եզրակացնել, որ դրանք կարող էին միայն գրուել հոգեւորական դառնալու առաջին տարիներին, երբ չափազանց ծանր է եղել «սեւ կաբան» եւ նա այդ աղերսագիր-ոտանաւորներով դիմել է Հերակլ թագաւորին իրեն չվանել, չհեռացնել՝ խոստանալով նրա մօտ գնալ «իրանական ծէսերով» եւ այլեւս չդիմել «շահին ու սուլթանին»: Հնարաւոր է, որ Հերակլը ընդառաջել է իր նախկին աչուղին եւ թոյլ է տուել վերադառնալ Վրաստան եւ հաստատուել մայրաքաղաքից հեռու Զաքաթալայի շրջանի կախօ Քարւանսարայում, որտեղ եւ 1766 թուականին նա ընդօրինակել է ներկայումս Մատենադարանում պահուող թիւ 4270 ձեռագիրը:

Այն իրողութիւնը, որ Սայեաթ-Նովան կրօնական դառնալուց անմիջապէս յետոյ սկսում է ընդօրինակել Գրիգոր Նարեկացու, «Ողբերգութեան Մատեան»ը, ցոյց է տալիս, որ երգիչը իր հոգեկան խռովքը աշխատել է մեղմել նորից բանաստեղծութեան մէջ, այս անգամ արդէն ընթերցելով ու ընդօրինակելով իրեն հոգեհարազատ նոյնպիսի մի խռովայոյզ բանաստեղծի ստեղծագործութիւնը, որպիսին էր Գրիգոր Նարեկացին:

Այս եզրակացութիւնները ոգեւորում են ինձ եւ օր առաջ ցանկանում եմ մեր բանասիրական աշխարհին ու հանրութեանը ծանուցանել Սայեաթ-Նովայի ընդօրինակած ձեռագրի յայտնաբերումը: Բարեբախտաբար, այդ օրերին վարչական աշխատանքները չխանգարեցին ինձ եւ Յունուարի վերջերին արդէն նորայայտ մատեանի վերաբերեալ առաջին հաղորդումը ներկայացրի Սովետական Հայաստան *լրագրին: Խմբագրութիւնը առանց յապաղելու 1981 թ. Փետրուարի 2-ին հրապարակեց իմ յօդուածը, իսկ մի քանի ամիս յետոյ, Մայիս ամսին, Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայի* Լրաբեր *հանդէսը լոյս ընծայեց Սայեաթ-Նովայի նորայայտ մատեանի վերաբերեալ իմ փոքրիկ հետազօտութիւնը:*

Մելիքսեթ Պօղոսեանի յայտնաբերած ձեռագիրը Սայեաթ-Նովայի կեանքի մի նոր էջը բացեց եւ մեր գրականութեան պատմութիւնը հարստացրեց նոր փաստերով:

Այսպէս է ձեռագրերի աշխարհը. լի անակնկալներով, հիասթափութիւններով ու ուրախութիւններով: Սպասենք նոր յայտնաբերումների:

ՆՈՐ ԷՋԵՐ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԿՅԱՆՔԻՑ[1]

130 տարվա պատմություն ունի սայաթնովագիտությունը: Այս ընթացքում հայտնաբերված են մեծ երգչի միայն երկու ինքնագիր մատյան. առաջինը նրա խազերի հայտնի տետրակն է՝ Դավթարը, որի հիման վրա Գ. Ախվերդյանը 1852 թվականին առաջին անգամ հրապարակել է Սայաթ Նովայի հայերեն երգերը, երկրորդը՝ 1766 թվականին Զաքաթալայի շրջանի Կախս քարվանսարայում նրա ընդօրինակած գրչագիրն է, որը 1906 թվականին Թավրիզում տեսել ու նկարագրել է պրոֆ. Հրաչյա Աճառյանը և ներկայումս պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում, 4270 թվահամարի ներքո:

Սայաթ-Նովայի ընդօրինակած մի երրորդ մատյան, երջանիկ պատահականությամբ, օրերս բերվեց Մատենադարան: Այս ձեռագիրը գիտական մեծ արժեք է ներկայացնում, որովհետև նոր լույս է սփռում երգչի կյանքի մի ժամանակաշրջանի վրա, որը բանասերների կարծիքով նրա կենսագրության «ամենամութ էջերն» են կազմում: Սա այն ժամանակաշրջանն է, երբ Սայաթ-Նովան վտարվում է պալատից և հոգևորական ձեռնադրվում: Դեռևս 1852 թ. Գ. Ախվերդյանը գրել է. «Սայաթ-Նովու կրոնավորելու տարին ոչ ով չէ իմանում: Դժվար թե նա մտած ըլի վանքն իր կնոջ մահից (իմա՝ 1768 թ. – Բ. Զ.) առաջ, միայն շատ կարելի է, որ մէ քանի տարի իր կնոջ մահից էլ առաջ հրաժարած ըլի խաղ ասելուցն, էնդուր որ Դավթարում չէ պատահում 1759-ից հետո հանած խաղ»:

Հետագայում անվանի շատ բանասերներ զբաղվեցին Սայաթ-Նովայի կյանքի ու ստեղծագործության ուսումնասիրությամբ և նրա աշուղական ու կրոնական գործունեության վերաբերյալ շրջանառության մեջ դրեցին նորանոր փաստեր, սակայն, ինչպես գրում է սայաթնովագետ Մ. Հասրաթյանը, նրա կենսագրության չլուսաբանված կարևորագույն էջերը մնացին 1759 թ. վերջերից մինչև 1762-63 թվականները:

Նորահայտ ձեռագիրը, որի բովանդակությունը Գրիգոր Նարեկացու «Ողբերգության մատյանն» է, ընդօրինակված է հայոց ՌՄԺ թվականին (1760 սեպ. – 1761 սեպ.) իր իսկ Սայաթ-Նովայի ձեռքով, Պարսկաստանի Գիլան նահանգի Էնզելի (Անզալի) նավահանգստի հայկական եկեղեցում:

Բնագրի առանձին էջերի վրա կան փոքրիկ հիշատակագրություններ, իսկ վերջում պահպանված է Սայաթ-Նովայի թողած հետևյալ հիշատակարանը.

Գրեցաւ ի Գիլան Անզալի եկեղեցին, թվին ՌՄԺ (1210+551=1761): Ով ընթերցող, յիշեայ գծող Սըտեփանոս վարդապետս, որ Սայեադ Նովայ ասին, և հայր իմ մա[հ]տիսի կարապետ և դուք յիշեալ լինիք: Առաջնորդութեան Հախպատ Զաքարիա վրթ Թիփլիզցի:

10x17սմ չափսի կաշեկազմ ձեռագիրն ունի 336 թերթ, գրված է տպագիր հիշեցնող բոլորագիր ձեռագրով և սովորական արագագիր բոլորագրով:

Ստորև տալով նոր տվյալներից բխող մեր առաջին եզրակացությունները, համոզված ենք, որ առաջիկայում մեր բանասերները, հիմք ընդունելով նորահայտ ձեռագրի հավաստի հաղորդումները, կվերանայեն և կճշգրտեն մեծ երգչի կենսագրության հա-

---

[1] Հրապարակվել է «Սովետական Հայաստան» օրաթերթում, 1981, № 27, փետրվարի 1, էջ 4:

ճախ միայն կռահումների վրա կառուցված ու «մչուչի մեջ» մնացած առանձին ժամանակահատվածները:

1. Սայաթ-Նովան հայոց ՌՄԺ (1760/61) թվականը կրող իր ընդօրինակած ձեռագրի որոշ էջերում իրեն անվանում է Տեր Ստեփանոս քահանա, իսկ ձեռագիրը ավարտելիս՝ վարդապետ: Նշանակում է 1761 թվականից մեկ երկու տարի առաջ նա քահանա է ձեռնադրվել և իր բանաստեղծական շնորհքի, գրչության արվեստով զբաղվելու, թերևս նաև լավ քարոզիչ լինելու համար, վարդապետ է կոչվել:

Այստեղ վարդապետ կոչման տակ չպետք է նկատի ունենալ ամուրի ու վարդապետական գավազան կրող հոգևորականի, որովհետև, ինչպես հաստատում է Բ. Կյուլեսերյանը, միջնադարում ընդունված էր կանամբի (ամուսնացած) արժանավոր եկեղեցականներին ևս վարդապետ անվանել: Զի բացառվում, որ Սայաթ-Նովայի ժամանակ ևս այդ կարգը գոյություն ունեցած լինի, որովհետև անգամ շատ ավելի ուշ ժամանակներում, մինչև 20-րդ դարի սկիզբները վարդապետ բառը գործածվում էր նաև «աբեղա կամ վանական բառերի նշանակությամբ» (Վ. Բաստամյանց):

Աչուղությունը թողնելուց հետո Սայաթ-Նովայի հոգևորական լինելու փաստը իր ժառանգների հիշողություններում պահպանված է եղել մինչև անցյալ դարի կեսերը:

Իր հոգևորական լինելու մասին Սայաթ-Նովան ակնարկել է վրացերեն խաղերից մեկում՝ «Իմ խիղճ գլուխ, քիզիդ էս ինչ պատահից» (1963 թ. հրատ., Վ.-32): Հավանաբար կրոնավորի իր նոր վիճակից դժգոհ լինելու հանգամանքն է թելադրել նրան հորինել այդ խաղը, որտեղ նա ասում է (բերում ենք բառացի թարգմանությունը).

Աշխարհական էի՝ fահանա դառնալն ինչիս էր:

Մ. Հասրաթյանը 1959-ին այս խաղի հորինումը թվագրել է 1761-63 թթ., իսկ 1963-ին, երբ Սայաթ-Նովայի վարդապետ դառնալու ժամանակը փոխադրել է ավելի ուշ, երգի հորինումը դրել է 1775-1777 թթ.: Հիշված խաղի ոգուց և տրամադրությունից զգացվում է, որ երգիչը պետք է այն ստեղծած լինի հոգեկան ծանր ապրումների ժամանակ, երբ «թագավորի կամքով» մեջլիս կանչվող «գոված-անվանի» աչուղը կաչկանդվել է «սև քուրճով»: Իսկ այսպիսի տրամադրության մեջ Սայաթ-Նովան կարող էր լինել հոգևորական դառնալու սկզբնական շրջանում և ոչ թե դրանից 10-15 տարի հետո, երբ նա արդեն վաղուց պետք է հաշտված լիներ իր վիճակին: Կարծում ենք խնդրո առարկա խաղը պետք է գրված լինի 1759-61 թվականների ընթացքում:

2. 1963 թ. հրատարակված Սայաթ-Նովայի «Հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն խաղերի ժողովածուի» առաջաբանում Մ. Հասրաթյանը երգչի այս չրջանի կենսագրության վերաբերյալ մի քանի հարցեր է դնում. եթե Սայաթ-Նովան «մինչև 1762-65 թվականները մնացել է պալատում, ո՞ւր է նրա կյանքի բանաստեղծական վկայությունը, ո՞ւր են այդ տարիներին գրած խաղերը... Եթե վտարվել է պալատից 1759 թ. կեսերին (որին համամիտ ենք), մնացե՞լ է մայրաքաղաքում 3-4 տարի, թե հեռացել կամ հեռացվել, և ինչո՞վ է զբաղվել»: «Առայժմ, – չարունակում է Մ. Հասրաթյանը, – ամենահավանականն այն է, որ պալատից վտարվել է ավելի վաղ, քան 1762-64 թթ...., այդ տարիներին մնացել է Թիֆլիսում հալածական վիճակում»:

Նորահայտ վկայությունները հաստատում են Մ. Հասրաթյանի կռահումը, որ Սայաթ-Նովան 1762-64 թթ. առաջ է պալատից հեռացվել, որովհետև, ըստ վերոհիշյալ հիշատակարանի 1761 թ.նա արդեն հոգևորական է և ապրում է Պարսկաստանում:

Ելնելով այս փաստերից պետք է սրբագրել այն տեսակետը, թե Սայաթ-Նովան այդ տարիներին ապրել է Թիֆլիսում կամ Կախո ավանում: Սայաթ-Նովան կարող էր Վրաստանի որևէ վայրում (այդ թվում և Կախո ավանում) ապրած լինել 1762-1766 թվականներին և ոչ դրանից առաջ, որովհետև 1761 թ. նա Պարսկաստանում էր:

3. Մինչև այժմ ենթադրություններ են եղել, որ Սայաթ-Նովան երիտասարդական տարիներին ճանապարհորդությամբ եղել է Պարսկաստանում, Հնդկաստանում և այլուր: Այս նոր մատյանից որոշակիորեն տեղեկանում ենք, որ 1760/61 թթ. նա եղել է Կասպից ծովի Էնզելի նավահանգստում: Բայց թե ի՛նչ հանգամանքներում է նա այս քաղաքն ընկել, առայժմ հայտնի չէ: Պարզ է, որ հայրենի երկրից հեռու, այդ օտար միջավայրում երգիչը պետք է իրեն մենակ զգար, հոգեկան ծանր վիճակում լիներ, «սրքվուր» լիներ, ինչպես ակնարկում է հավանաբար այդ ժամանակ իսկ Հերակլ թագավորին ուղղած իր ոտանավոր-աղերսագրում (Վ - 31):

Ե՛կ, մի՛ վիթի իմ առունըս թասերով,
Թանգ առած իմ fու ահագին ծախսերով,
Մողըտ գու fամ իռանական ծեսերով,
Դուն ինձ պահիր ատլասով ու խասերով,
Սիվ կաբայում սըվուռութին չիմ ուզում:

Արդյո՞ք «իրանական ծեսեր» արտահայտությունը չի հուշում խաղը գրելու ժամանակ Իրանում նրա գտնվելը:

Թվում է, որ այս և այլ ոտանավոր-աղերսագրերին (դրանցից է նաև «Արթար դատէ, չէ՞ վուր թաքավուր իս դուն» - Վ-30) ընդառաջել է Հերակլը և Սայաթ-Նովային թույլ է տվել վերադառնալ Վրաստան և հաստատվել մայրաքաղաքից հեռու՝ թերևս Ջաքաթալայի չրջանի Կախո ավանում, որտեղ և 1766 թվականին ընդօրինակել է ներկայումս Մատենադարանում պահվող № 4270 ձեռագիրը:

Այստեղից էլ ճշգրտվում է նաև այս երկու խաղերի (Վ–30, Վ-31) գրելու մոտավոր ժամանակը՝ 1759-61 թվականներ:

4. Ցարդ բանասիրությանը հայտնի էր 1766 թ. Կախո քարվանսարայում Սայաթ-Նովայի ընդօրինակած ձեռագիրը: Նորահայտ մատյանը որոշակի կռվաններ է տալիս պնդելու, որ աշուղությունը թողնելուց և կրոնավորի սքեմ հագնելուց հետո երգիչը նվիրվել է գրչության գործին:

Այն իրողությունը, որ Սայաթ-Նովան կրոնական դառնալուց անմիջապես հետո սկսում է ընդօրինակել Գրիգոր Նարեկացու «Ողբերգության մատյանը» ցույց է տալիս, որ երգիչը իր հոգեկան խռովքը աշխատել է մեղմել նորից բանաստեղծության մեջ, այս անգամ արդեն ընթերցելով ու ընդօրինակելով իրեն հոգեհարազատ նույնպիսի մի խռովահույզ բանաստեղծի ստեղծագործությունը, որպիսին Գրիգոր Նարեկացին է:

5. գրականության մեջ կասկածներ են եղել, որ Սայաթ-Նովան կրկնակի ամուսնություն է ունեցել. առաջին անգամ իբր մինչ 1747-48 թթ. և երկրորդ անգամ՝ 60-ական թվականներին. երկրորդ կնոջ անունը իբր Մարմար է եղել, որ մահացել է 1768 թվականին:

Սայաթ-Նովայի առաջին ամուսնության վարկածն ինչ-որ չափով ընդունելի էր մինչև այն ժամանակ, երբ նրա ծնունդը դնում էին 1712, 1713 կամ 1717 թվականներին, սակայն, երբ հաստատված է երգչի ծննդյան ճշգրիտ թիվը՝ 1722, և որ, ըստ նոր ձեռագրի նա 60-ական թվականներին արդեն քահանա էր, հավանական է դառնում ենթադրել, որ Սայաթ-Նովան մինչև այդ ամուրի է եղել և ամուսնացել է կամ այդ թվականի վերջերին և կամ 1761-ի սկզբներին՝ 38-39 տարեկան հասակում:

Մինչ 1760-ական թվականները Սայաթ-Նովայի ամուրի լինելու մասին որոշակի ակնարկ է նաև վերը հիշված վրացերեն «Արթար դատե, չէ՞ որ թագավուր իս դուն» (Վ– 30) ոտանավորի հետևյալ տողը. «Ոչ կողակից ունեմ, ոչ էլ խնամի»: Իսկ այս ոտանավորը, ինչպես տեսանք, պետք է հորինված լինի 1759-61 թվականներին:

Բերված փաստերը, այսպիսով, հնարավորություն են տալիս վերականգնելու մեծ երգչի կյանքի 1759-61 թվականների՝ «ամենամութ էջերի», հետևյալ տարեգրությունը.

1759-61 թթ. Սայաթ-Նովան ձեռնադրվում է քահանա:

1761 թ. Սայաթ-Նովան Պարսկաստանի Գիլան նահանգի Էնզելի նավահանգստի հայոց եկեղեցում է:

1761 թ. Սայաթ-Նովան Էնզելի քաղաքում ընդօրինակում է Գրիգոր Նարեկացու «Ողբերգության մատյանը»:

1759-61 թթ. Սայաթ-Նովան վրացերեն երեք ոտանավոր-աղերսագրեր (Վ– 30, 31, 32) է գրում վրաց Հերակլ թագավորին:

1759-61 թթ. Սայաթ-Նովան ամուսնանում է լոռեցի Մարմարի հետ:

1759-66 թթ. Սայաթ-Նովան զբաղվում է նաև գրչությամբ:

Սայաթ-Նովայի ընդօրինակած նորահայտ ձեռագիրը Մատենադարանում գրանցվել է 10838 թվահամարի ներքո:

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԸՆԴՕՐԻՆԱԿԱԾ ՆՈՐԱՀԱՅՏ ՁԵՌԱԳԻՐ ՄԱՏՅԱՆԸ[!]

1981 թ. հունվարին մաշտոցյան Մատենադարանը ձեռք բերեց 1761 թ. Պարսկաստանի Գիլան նահանգի Էնզելի (Անզալի) նավահանգստում գրված ձեռագիր մի մատյան, որի գրիչը Սայաթ-Նովան է[1]:

Մինչև այժմ մեծ աշուղի գրչին պատկանող երկու մատյան էր միայն հայտնի. առաջինը նրա հայտնի Դավթարն է՝ հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն խաղերի ժողովածուն, որի հիման վրա 1852 թ. Թիֆլիսեցի բժիշկ-բանասեր Գ. Ախվերդյանը հրատարակեց Սայաթ-Նովայի հայերեն խաղերը[2], իսկ երկրորդը 1766 թ. Զաքաթալայի շրջանի Կախո քարվանսարայում Ստեփանոս քահանայի (նույն ինքը Սայաթ-Նովայի) ձեռքով ընդօրինակված գրչագիրն է, որ 1905–1906 թթ. Թավրիզում տեսել ու նկարագրել է Հրաչյա Աճառյանը[3]: Այս ձեռագիրը պատկանել է Սողոմոն Մելիք-Աբրահամյան անունով մի թավրիզեցու և 1911 թ. Էջմիածնի մատենադարան է ուղարկվել Կ. Եպ. Տեր-Մկրտչյանի ջանքերով[4]:

Նորահայտ ձեռագիրը Հրազդանի շրջանում գտել և Մատենադարանին է հանձնել 70-ամյա գրքասեր, ջրառատցի Մելիքսեթ Արզումանի Պողոսյանը:

1. Ձեռագրի նկարագրությունը

Ժամանակ՝ *ՌՄԺ (12 սեպ. 1760 – 12 սեպ. 1761):* Տեղ՝ *Անզալի (նավահանգիստ Պարսկաստանի Գիլան նահանգում):* Գրիչ՝ *Ստեփանոս վարդապետ, «որ Սայեաղ Նովայ ասին»:* Թերթ՝ *336. դատարկ՝ 1–5, 329–336:* Նյութ՝ *թուղթ:* Մեծություն՝ *10x17 սմ:* Գրություն՝ *միասյուն:* Գիր՝ *բոլորգիր (տպագիր հիշեցնող՝ 6–256ա, 278ա–281բ և արագագիր՝ 256ա–277բ, 282ա–328ա):* Տող՝ *21–25:* Կազմ՝ *կաշեպատ տախտակ, դրոշմազարդ:* Պահպանակ՝ *թուղթ:* Հանգամանք՝ *բավարար:*

Ծանոթ. – *Ձեռագիրը էջակալված է հայերեն տառանիշերով: Էջահամարներում կան ցատկումներ և կրկնություններ:*

Բովանդակություն

Գրիգոր Նարեկացի «Մատեան ողբերգութեան»:

Ծանոթ. – *գրիչը չի ընդօրինակել «Մատեանի» ԺԲ գլխի «Ընկալ քաղցրութեամբ...» հատվածը, նշելով՝ «որ գրեալ է Գ[ի]րս Սաղմոսաց, աս տ ոչ գրեցանք» (թ.*

! Տե՛ս «Լրաբեր հասարակական գիտությունների», 1981, № 7, էջ 66-77:

1 Ձեռագիրը Մատենադարանում ստացվելու մասին հոդվածագրի հրապարակումը տե՛ս «Սովետական Հայաստան», 1. II, 1981:

2 **Սայաթ-Նովա**, Լուս գցած աշխատասիրութեամբ Գ. Ախվերդյան, Մոսկվա, 1852:

3 **Հր. Աճառյան**, *Ցուցակ հայերեն ձեռագրաց Թավրիզի*, Վիեննա, 1910, էջ 97:

4 **Օ. Եգանյան**, *Մատենադարանի ձեռագրական հավաքածուները* (Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, Երևան, 1965, էջ 80, 81, 89):

36ա), չի ընդօրինակել նաև ԽԱ գլուխը՝ «Գրեալ է Սաղմոս ժամայգրքին, աստ ոչ եղա: Տէր Ըստեփանոս քայանայս» (թ. 146ա):

«Մատեանի» ՀՋ գլուխը Սայաթ-Նովան թյուրիմացաբար ընդօրինակել է ՀՋ գլխից հետո (թ. 276ա), սակայն, նկատելով իր սխալը, համապատասխան տեղում (թ. 315ա) նշել է՝ «որ գրեալ է առաջին վարագի», իսկ Ղ գլուխը ընդօրինակել է ՀԵ գլխից առաջ (թ. 278ա), որի համար գրում է. «Այս աղօթս յառջին թղտիս գրեալ ՀՐ. մի մե[ղ]ադիր լինիք»:

Հիշատակարան գրչի

1ա. Ստէփանոս քահանայինս է գ[ի]րքս:

225ա. Ըստեփանոս քահ[ա]յնային:

251ա. Ով ընդերցող, յիշեա զտէր զՍտ[ե]փանոս քայ[ա]նայս:

328ա. Գրեցաւ ի Գիլան, Անգալի եկեղեցին, թվին ՌՄԺ (12 սեպ. 1760 – 12 սեպ. 1761): Ով ընթերցող, յիշեայ գծող Սըտեփանոս վարդապետս, որ Սայեադ Նովայ ասին, և հայր իմ մա[հ]տիսի Կարապետ, և դուք յիշեալ լինիք: Առաջնորդութեան Հախպտո Զաքարիա վ̅թ Թիփլիզցի: (Տե՛ս նկար XX, 7)

Սայաթ-Նովայի այս նոր մատյանը մաշտոցյան Մատենադարանում գրանցվել է 10838 թվահամարի ներքո:

Ձեռագրի հիշատակարանի և հիշատակագրությունների հավաստի վկայությունները նոր լույս են սփռում Սայաթ-Նովայի կյանքի այն ժամանակաշրջանի վրա, որը, բանասերների միահամուռ կարծիքով, նրա կենսագրության «ամենամութ էջերն» են կազմում: Սա այն ժամանակաշրջանն է, երբ Սայաթ-Նովան վտարվում է պալատից և հոգևորական ձեռնադրվում: Իսկ որ անվանի աշուղը հեռացվել է պալատից՝ վկայում է նրա որդի Օհանը: «Հիշատակված է,– գրել է նա,– որ Սայաթ-Նովան իր ողորմած, ամենուրեք հայտնի, Վրաստանի բարձրապատիվ, տեր Թագավորի կողմից դժգոհության է արժանացել և նա խռովել է իր խեղճ ստրուկ Սայաթ-Նովայից և հեռացրել է պալատից»[5]:

Սայաթ-Նովայի աշուղությունից հոգևորական կյանքին անցնելու վերաբերյալ ոչ մի որոշակի փաստ մինչև այսօր չենք ունեցել: Դեռևս 1852 թ. Գ. Ախվերդյանը գրել է. «Սայաթ-Նովու կրոնավորվելու տարին ոչ ով չէ իմանում: Դժվար թե նա մտած ըլի վանքն իր կնոջ մահից (1768 թ. – Բ. Զ.) առաջ, միայն չատ կարելի է, որ մե քանի տարի իր կնոջ մահիցն էլ առաջ հրաժարած ըլի խաղ ասելուցն, էնդուր որ դավթարում չէ պատահում 1759-ից հետո հանած խաղ», և ապա ավելացնում է՝ «Սայաթ-Նովու վանական կյանքի վրա չունիմ ոչինչ տեղեկություն»[6]:

Հետագայում անվանի չատ բանասերներ զբաղվեցին Սայաթ-Նովայի կյանքի ու գործունեության ուսումնասիրությամբ և նրա աշուղական ու գրական ստեղծագործությունների վերաբերյալ նորանոր փաստեր չրջանառության մեջ դրին, սակայն, ինչպես

5 **Սայաթ-Նովա**, *Հայերեն, վրացերեն, աղրբեջաներեն խաղերի ժողովածու*, կազմեց, խմբագրեց և ծանոթագրեց Մորուս Հասրաթյանը, Երևան, 1963, էջ XXXII:

6 **Սայաթ-Նովա**, 1852, էջ ԺԱ:

գրում է վաստակաշատ սայաթնովագետ Մ. Հասրաթյանը, նրա կենսագրության չլուսաբանված կարևորագույն էջերը մնացին 1759 թ. վերջերից մինչև 1762–1763 թվականները[7]:

Նորահայտ գրչագրի ընձեռած չափազանց կարևոր վկայությունները հնարավորություն են տալիս հիմնովին վերանայելու մեծ երգչի կյանքի որոշ նշանակալի փաստեր և ճշգրտելու նրա մի քանի խաղերի հորինման ժամանակները:

2. Սայաթ-Նովան գրիչ

Ցարդ բանասիրությանը հայտնի էր 1766 թ. Կախո քարվանսարայում Սայաթ-Նովայի ընդօրինակած ձեռագիրը (Մատենադարան № 4270): Նորահայտ մատյանը որոշակի կովաններ է տալիս պնդելու, որ աշուղությունը թողնելուց և կրոնավորի սքեմ հագնելուց հետո Սայաթ-Նովան նվիրվել է գրչության գործին:

Այն իրողությունը, որ Սայաթ-Նովան կրոնական դառնալուց անմիջապես հետո սկսում է ընդօրինակել Գրիգոր Նարեկացու Ողբերգության մատյանը, ցույց է տալիս, որ երգիչը իր հոգեկան խռովքը աշխատել է մեղմել նորից բանաստեղծության մեջ, այս անգամ արդեն ընթերցելով ու ընդօրինակելով իրեն հոգեհարազատ նույնպիսի մի խռովահույզ բանաստեղծի ստեղծագործությունը, որպիսին Գրիգոր Նարեկացին էր:

Ընդօրինակության ժամանակ Սայաթ-Նովան բնագրի որոշ հատվածներ կրճատել է՝ համապատասխան նշում կատարելով (թ. 36ա, 146ա), իսկ մի երկու դեպքում էլ գլուխները ետուառաջ է ընդօրինակել (թ. 315ա): Ընդօրինակության մեջ կան որոշ բացթողումներ, որոնք կարող են և նախագաղափար օրինակից գալ: Բնագրում եղած մի շարք ուղղագրական սխալները, թվում է, արդյունք են Սայաթ-Նովայի խոսակցական բարբառի ազդեցության: Ըստ երևույթին, աշուղությունը թողնելուց հետո Նարեկացու Մատեանի պես գրաբար բարդ բնագրի ընդօրինակության անցնելը այնքան էլ հեշտ չի եղել երգչի համար: Նկատելի է, որ ուղղագրական վրիպումները Մատյանի սկզբի մասում ավելի շատ են, քան վերջում, երբ արդեն նա բավական վարժված պետք է լիներ ընդօրինակման արվեստին:

Մատյանի գրչության ձևերը նույնանում են Սայաթ-Նովայի բանաստեղծությունների տետրակի (հայտնի Դավթարի) և 1766 թ. Կախո քարվանսարայում նրա ընդօրինակած մատյանի գրչաձևերին, մի հանգամանք, որ անհերքելիորեն հաստատում է հայտնաբերված նոր գրչագրի Սայաթ-Նովայի ինքնագիր լինելը:

Մ. Հասրաթյանը մի առիթով դիտել է, որ Սայաթ-Նովան շատ է օգտվել «Պղնձե քաղաքի պատմության» 1708 թ. Կ. Պոլսի հրատարակությունից. «ամբողջ տողեր է օգտագործել իր խաղերի մեջ», «նույնիսկ [Դավթարի] իր հայերեն բոլորգրով ձեռագիրը *կարծես բառացիորեն ընդօրինակել է* այս գրքի շրիֆտից*»[8] (ընդգծումը մերն է – Բ. Ջ.): Այս եզրակացությունը այնքան էլ հիմնավորված չէ, որովհետև XVIII դ. սկզբի Կ. Պոլսի տպարանների տառատեսակները իրարից քիչ են զանազանվել և Սայաթ-Նովան, իր ձեռքի տակ ունենալով այդ հրատարակություններից մի քանիսը, կարող էր օգտվել դրանց տառատեսակներից: Չի բացառվում նրա ծանոթությունը նաև Ողբերգության մատյանի*

7 **Սայաթ-Նովա**, 1963, էջ XXIX:

8 Նույն տեղում, էջ 258:

1701 թ. Կ. Պոլսի հրատարակությանը, որի տառատեսակը նույնպես նման է Դավթարի բոլորգրին: Կ. Պոլսի այս ժամանակների որոշ գրքերի սկզբնատառերի թռչնագիր ու ձկնագիր ձևերն են հիշեցնում նաև Դավթարի առաջին հինգ թուրքերեն խաղերի դէդիլար բառի Դ սկզբնատառը:

Սայաթ-Նովայի ընդօրինակած Ողբերգության մատյանի առանձին գլուխների համեմատությունը մինչ 1760 թ. եղած այդ երկի հրատարակությունների հետ, փոքր խոտորումներով հանդերձ, տարընթերցումների առավել ընդհանրություններ են տալիս, մասնավորաբար սկզբի գլուխներում՝ 1701 թ. հրատարակության հետ, իսկ վերջին գլուխներում՝ 1726 թ. հրատարակության հետ: Թերևս պետք է ենթադրել, որ Սայաթ-Նովան իր ընդօրինակության համար որպես հիմք օգտագործել է ինչ-որ անծանոթ մի ձեռագիր՝ առանձին դեպքերում օգտվելով նաև տպագիր նարեկներից:

3. Էնզելիճ՝ գրչության վայր

Հայկական ձեռագրերի ստեղծման վայրերի աշխարհագրությունը չափազանց ընդարձակ է, սակայն մեր ձեռքի տակ գտնվող աղբյուրներում Պարսկաստանի Գիլան նահանգի Էնզելի (Անզալի) նավահանգիստը որպես գրչության վայր հայտնի չէ: Սայաթ-Նովայի ընդօրինակած 1760/61 թվականի այս ձեռագիրը մեկ նոր անունով հարստացնում է հայերեն ձեռագրերի գրչության տեղանունների ցուցակը և հետաքրքիր էջ է բացում իրանահայ գաղութի մշակույթի պատմության մեջ:

Զարմանալի պատահականությամբ կախո ավանում 1766 թ. Սայաթ-Նովայի ընդօրինակած ձեռագրի տեղաշարժման պատմությունը ևս կապվում է Պարսկաստանի, այս դեպքում արդեն Թավրիզ քաղաքի հետ: Այստեղ ուշադրության է արժանի ձեռագրի վերջին էջի վրա գտնվող հետևյալ փոքրիկ հիշատակագրությունը. «Մահտիսի Օվանէս Ղազարե[ան]. Գիրեցի 1814 Թարվէզ»[9]: Դժբախտաբար այս դեպքում ևս հայտնի չէ, թե 1766 թ. կախո քարվանսարայում գրված ձեռագիրը ինչպե՛ս և ի՛նչ հանգամանքներում է 1814 թ. գտնվել Թավրիզում:

4. Ե՞րբ է Սայաթ-Նովան կրոնավոր դարձել

Մինչ այժմ Սայաթ-Նովայի կրոնավոր լինելու ամենավաղ և հավաստի տեղեկությունը 1766 թվականից էր. դա իր իսկ ձեռագրով կախո քարվանսարայում ընդօրինակված մատյանի հետևյալ հիշատակարանն է եղել. «Թուին Հայոց ՌՄԺԵ [սեպ. 1765 – սեպ. 1766]… գրեցաւ ի կախոյ քարվանսարէն: Ո՞վ ընթերցող յիշեայ զգծող գրոյս մեղապարտ Ստեփանոս քայհանայս, որ Սաեադ Նովայ կոչեն և հայրն իմ մահտեսի Կարապետն և մայրն իմ Սարրայ և դուք յեշեալ լինիք առաջի Աստուծոյ: Ամէն»[10]:

Ելնելով այս և Սայաթ-Նովայի Դավթարում Պենտելենց Իովանեի թողած հիշատակագրություններից, Լ. Մելիքսեթ-Բեկը գտնում է, որ «խաղերի ինքնաձեռագիր մատյանը (Դավթարը), գրված և ավարտված է եղել 1765 թվին, երբ Սայաթ-Նովան դեռևս աշխարհական է եղել, և որ մոտավորապես այս թվականի չուրջն է տեղի ունեցել նրա հեռա-

9 Մատենադարան, ձեռ. № 4270, թ. 279բ:

10 Նույն տեղում, թ. 276բ:

ցումը ոչ միայն Վրաց էրեկլե Թագավորի արքունիքից (իբրև պալատական աչուղ-սազանդարի), այլև Թբիլիսիից քչելը»[11]:

Կախո ավանում ընդօրինակված ձեռագրի հիշատակարանից Մ. Հասրաթյանը եզրակացրել է, որ 1766 թ. «արդեն գրիչ Ստեփանոսը երեք-չորս տարվա քահանա էր»[12], մինչդեռ նոր ձեռագրի տվյալները նրա քահանա լինելու թվականը տանում են 1760–1761 թթ. և հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ Սայաթ-Նովան քահանա (կուսակրոն) է ձեռնադրվել 1759–1760 թվականների միջև, այսինքն պալատից հեռացվելուց հետո, և փոքր-ինչ անց, թերևս 1761 թ.՝ վարդապետ, որովհետև իր ընդօրինակած Ողբերգության մատյանի սկզբնական էջերում թողած հիշատակագրություններում (1ա, 146ա, 225ա, 251ա) իրեն քահանա է անվանում, իսկ վերջին հիշատակարանում (328ա)՝ վարդապետ: Սակայն այս դեպքում ինչպե՞ս բացատրել այն փաստը, որ 1768 թ., կնոջ մահվան ժամանակ, նա չորս զավակի (Մելիքսեթ, Օհան, Սառա, Մարիամ) հայր էր[13], չէ՞ որ ըստ հայ եկեղեցու գործող կանոնադրության վարդապետը ամուսնանալու իրավունք չուներ: Ելնելով այս հանգամանքից, ավելի հավանական է եզրակացնել, որ Սայաթ-Նովան 1759–1761 թվականների միջև ձեռնադրվել է որպես ամուսնացյալ քահանա և իր բանաստեղծական չնորհքի, գրչության արվեստով զբաղվելու, թերևս նաև քարոզիչ լինելու համար է վարդապետ կոչվել: Իսկ որ նա գիտակ էր եկեղեցական մատենագրությանը, դա ևս փաստ է: Բավական է հիշել հենց իր ընդօրինակած Ողբերգության մատյանի հիշատակագրությունը (թ. 36ա), որտեղ նա նշում է, թե ԺԳ գլխի «Ընկալ քաղցրութեամբ» հատվածը չի ընդօրինակել, որովհետև «գրեալ է ի Գ[ի]րս Սաղմոսաց»[14]: Նշանակում է՝ նա այնքան քաջատեղյակ է եղել Սաղմոսին, որ բերանացի իմացել է նրա առանձին հատվածները, կամ հիշենք իր խաղերում հիշած եկեղեցական գրքերը՝ Ավետարան, Հայսմավուրք, Հարանց վարք կամ երգ երգոցից նրա քաղած արտահայտությունները, որոնք ժամանակին նկատել է Գ. Ախվերդյանը:[15]

Այստեղ վարդապետ *կոչումը որպես ամուրի և վարդապետական գավազան կրող հոգևորական չպիտի հասկանալ, որովհետև վաղ միջնադարում, ինչպես հաստատում է հայ եկեղեցու կանոնների խոշոր գիտակ Բ. ծ. վրդ. Կյուլեսերյանը,* «վարդապետ *տիտղոսը միմիայն ամուրի եկեղեցականության հատուկ չէր, այլ՝ առհասարակ ամուրի կամ կանամբի արժանավոր եկեղեցականներ անխտիր կրնային* վարդապետել»[16]: *Հետևաբար, չի բացառվում, որ Սայաթ-Նովայի ժամանակ ևս այդ կարգը գոյություն ունեցած լինի, որովհետև անգամ շատ ավելի ուշ ժամանակներում, մինչև XX դ. սկզբները* վարդապետ *բառը գործածվում էր նաև «աբեղա կամ վանական բառերի նշանակությամբ»[17]:*

---

11 **Լ. Մելիքսեթ-Բեկ**, *Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին*, հ. Գ, Երևան, 1955, էջ 149:

12 **Սայաթ-Նովա**, 1963, էջ XXXII:

13 **Սայաթ-Նովա**, 1852, էջ ԺԲ:

14 Մատենադարան, ձեռ. № 10838, թ. 36ա:

15 **Սայաթ-Նովա**, 1852, էջ ԺԳ:

16 **Բաբգեն ծ. վրդ. Կյուլեսերյան**, *Վարդապետության աստիճանները հայ եկեղեցվո մեջ*, Անթիլիաս, 1980, էջ 70:

17 Նույն տեղում, էջ 34:

Սայաթ-Նովայի հոգևորական դառնալու փաստը իր ժառանգների հիշողություններում պահպանված է եղել մինչև անցյալ դարի կեսերը: Այս կապակցությամբ է, որ Գ. Ախվերդյանը գրում է, թե Սայաթ-Նովան «իր զավակներուն Թիֆլիզում թողած՝ գնում, հեռանում է Հաղբատու Սուրբ Նշանի վանքն, որտեղ կրոնավորված ճեռնադրվում է աբեղա»[18]: Այստեղ կարևորը կրոնավոր դառնալու խնդիրն է. միայն երախտաշատ բանասերը նրա կրոնավորելու ժամանակը դնում է 1768 թվականից՝ կնոջ (Մարմարի) մահից հետո: «Երբեք չենք կարող հաչվել,— գրում է Գ. Ախվերդյանը,— Սայաթ-Նովու կրոնավորելն էս ժամանակից առաջ. թե մե երկու տարի էլ հետ դնենք ու ընդունենք 1770-ն հայնժամ մեր երգիչն կրոնավորելիս էլել պիտի ըլի 58 տարեկան»[19]: Այստեղ Գ. Ախվերդյանը ճիշտ է այնքանով, որ գիտե Սայաթ-Նովան կրոնավոր է եղել, սակայն չփոթել է ժամանակը: Նորահայտ ճեռագրում Սայաթ-Նովան 1760–1761 թթ. արդեն իբրեն քահանա ու վարդապետ է անվանում:

Իր հոգևորական լինելու մասին Սայաթ-Նովան ակնարկել է նաև վրացերեն խաղերից մեկում՝ «Իմ խիղճ գըլուխս, քիզիդ էս ինչ պատահից» (Վ–32)[20]: Պետք է ենթադրել, որ խաղը գրվել է կրոնավոր դառնալու սկզբնական շրջանում. նոր վիճակից դժգոհ լինելու հանգամանքն է թելադրել նրան հորինելու այդ խաղը, որտեղ ասված է (բերում ենք բառացի թարգմանությունը).

Աչխարհական էի՝ քահանա դառնալն ինչիս էր[21]:

---

18 **Սայաթ-Նովա**, 1852, էջ Ժ:

19 Նույն տեղում, էջ ԺԱ:

20 Վ տառանիշը և արաբական թվանշանը Մ. Հասրաթյանը պայմանականորեն օգտագործում է ցույց տալու Սայաթ-Նովայի խաղերի 1963 թ. հրատարակության մեջ վրացական խաղերի բաժինը և խաղի հերթական համարը:

21 Մ. Հասրաթյանը վրացերեն խաղերը թարգմանելիս հնարավոր չափով աշխատել է հարազատ մնալ բնագրին, սակայն քանի որ նա ձգտել է թարգմանությունը կատարել Սայաթ-Նովայի լեզվով և չափածո, ուստի առանձին տեղերում շեղումներ է թույլ տվել, ինչպես իրավացիորեն ցույց են տվել բանասերներ Պ. Մուրադյանը («Սայաթ-Նովան ըստ վրացական աղբյուրների», Երևան, 1963, էջ 11) և Պ. Հակոբյանը («Սայաթ-Նովայի Հաղբատի վանքում լինելու հարցի շուրջ», «Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 3, էջ 222–223):

Վերոհիշյալ խաղի նշված տողը Մ. Հասրաթյանը 1963 թ. (**Սայաթ-Նովա**, էջ 129) թարգմանել է.

Ասեք, կըրունավուր դառնալն ինչի՞ս էր,
Վայ թե դա հենց իմ անբախտ օրի՞ցն էլավ:

Վաստակաշատ վրացագետ Մելիքսեթ-Բեկը (նշվ. աշխ., էջ 246–247) այս նույն տողերը հետևյալ կերպ է թարգմանել՝

Աշխարհիկիս տերտերությունն ինչի՞ս էր.
Ինձ վարդապետ ձեռնադրվելըն ինչի՞ս էր…

Իսկ Պ. Մուրադյանը (նշվ. աշխ., էջ 11) այս տողերը թարգմանել է.

Աշխարհական էի, քահանանալն ինչիս էր
Արի ասա՝ աբեղայությունն ինչիս էր:

Ինչպես տեսնում ենք, երեք թարգմանություն՝ երեքն էլ տարբեր: Խնդիրն այն է, որ այստեղ թարգմանիչներն առաջնորդվել են այն իրական փաստով, որ Սայաթ-Նովան խաղը գրելիս կրոնավոր է եղել և դժգոհել է իր վիճակից, բայց, ինչպես մեր խնդրանքով ստուգեց երիտասարդ սայաթնովագետ Հ. Բախչինյանը, վրացերեն այդ տողերում նա իրեն ո՛չ աբեղա և ո՛չ էլ վարդապետ է անվանում, այլ՝ կրոնավոր, քահանա:

Մ. Հասրաթյանը 1959 թ. այս խաղի հորինումը թվագրել է 1761–1763, իսկ 1963 թ., երբ Սայաթ-Նովայի վարդապետ դառնալու ժամանակը փոխադրել է 1768–1770 թթ. հետո, երգի հորինումը դրել է 1775–1777 թթ.[22]: Մի բան, որ հիմնավորված չէ: Հիշված խաղի ոգուց և տրամադրությունից զգացվում է, որ երգիչը պետք է այն ստեղծած լինի հոգեկան ծանր ապրումների ժամանակ, երբ «թագավորի կամքով» մեջլիս կանչվող «գոված-անվանի» աչուղը կաչկանդվել է «սև քուրճով»: Իսկ այսպիսի տրամադրության մեջ Սայաթ-Նովան կարող էր լինել հոգևորական դառնալու սկզբնական շրջանում և ոչ թե դրանից 10–15 տարի հետո, երբ նա արդեն վաղուց պետք է հաշտված լիներ իր վիճակին: Մ. Հասրաթյանի կողմից այս խաղի առաջին թվագրումը՝ 1761–1763, ավելի մոտ է իրականությանը. կարծում ենք խնդրո առարկա խաղը պետք է գրված լինի 1759–1761 թթ. ընթացքում:

5. Սայաթ-Նովան Իրանում

1963 թ. հրատարակված Սայաթ-Նովայի «Հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն խաղերի ժողովածուի» առաջաբանում Մ. Հասրաթյանը երգչի այս շրջանի կենսագրության վերաբերյալ մի քանի հարցեր է դնում. եթե Սայաթ-Նովան «մինչև 1762–1765 թվականները մնացել է պալատում, ինչպես ենթադրում են բանասերներից շատերը, ո՞ւր է նրա կյանքի բանաստեղծական վկայությունը, ո՞ւր են այդ տարիներին գրած խաղերը... Եթե վտարվել է պալատից 1759 թ. կեսերին (որին համամիտ ենք), մնացե՞լ է մայրաքաղաքում 3–4 տարի, թե հեռացել կամ հեռացվել, և ինչո՞վ է զբաղվել»: «Առայժմ,– շարունակում է Մ. Հասրաթյանը,– ամենահավանականն այն է, որ պալատից վտարվել է ավելի վաղ, քան 1762–1764 թթ..., այդ տարիներին մնացել է Թիֆլիսում հալածական վիճակում»[23]: Կան նաև բանասերներ, որոնք ենթադրում են, թե Սայաթ-Նովան 1759–1768 թթ. եղել է Կախո ավանում:

Նորահայտ ձեռագրի վկայությունները հաստատում են Մ. Հասրաթյանի կռահումը, որ Սայաթ-Նովան 1762–1764 թթ. առաջ է հեռացվել պալատից. ըստ վերոհիշյալ հիշատակարանի՝ 1761 թ. նա արդեն հոգևորական էր և ապրում էր Պարսկաստանում:

Ելնելով այս փաստերից, պետք է վերանայել այն տեսակետը, թե Սայաթ-Նովան այդ տարիներին ապրել է Թիֆլիսում կամ Կախո ավանում: Սայաթ-Նովան կարող էր Վրաստանի որևէ վայրում (այդ թվում և Կախո ավանում) ապրած լինել 1762–1766 թվականներին և ոչ դրանից առաջ, որովհետև 1760/61 թթ. նա Պարսկաստանում էր, ավելի որոշակի՝ Կասպից ծովի Էնզելի նավահանգստում: Բայց թե ի՞նչ հանգամանքներում է նա այս քաղաքն ընկել, առայժմ միայն ենթադրություններ կարելի է անել:

Այստեղ ուշադրության արժանի է նորահայտ ձեռագրի հիշատակարանի վերջում նշված Զաքարիա վարդապետի ինքնությունը. սա Հաղպատի առաջնորդ Զաքարիա Պաթինյանն է, որ, ըստ Հովհաննես Ղրիմեցու, Գրիգոր Երրորդ Սուրկուսյանի մահից հետո դարձել է Հաղպատի առաջնորդ (1752–1770): Ինչպես պատմում է Ղրիմեցին, Զաքարիան առանց եպիսկոպոսական աստիճան ունենալու 1752 թ. գրավում է Հաղպատի ա-

22 **Սայաթ-Նովա**, *Հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն խաղերի ժողովածու*, կազմեց Մ. Հասրաթյան, Երևան, 1959, էջ 130, **Սայաթ-Նովա**, 1963, էջ 129:

23 **Սայաթ-Նովա**, 1963, էջ XXIX:

ռաջնորդությունը (նկատենք, որ Սայաթ-Նովան նրան որպես վարդապետ է հիշատակում), սակայն որոշ ժամանակ անց ժողովրդի կողմից արտաքսվում է: Զաքարիան ապավինում է Պարսկաստանի «իշխանապետ» Քերիմ խան Զենդին (1748–1779), որի հրամանով գալիս է Էջմիածին, եպիսկոպոս է ձեռնադրվում և պաշտոնապես նշանակվում Հաղպատի առաջնորդ[24]:

Մելիքսեթ-Բեկը Իոանե Բագրատիոն արքայազնի «Կալմասորայի» (1800–1828) հայերեն թարգմանության ծանոթագրություններում գրել է. «Մեզ հասած աղբյուրներից, դժբախտաբար, չի ստուգվում Սայաթ-Նովայի 1765–1766 թթ. քահանա ձեռնադրող Հաղբատի առաջնորդ եպիսկոպոսի կամ արքեպիսկոպոսի անունը, սույնպես և 1768 թվականից հետո նրան վեղար տվող եպիսկոպոսի կամ արքեպիսկոպոսի անունը»[25]: Ելնելով այն փաստից, որ Ողբերգության մատյանի սայաթնովյան ընդօրինակության հիշատակարանում (1760/61 թվականին) բերվում է Զաքարիա վարդապետի անունը, կարելի է ենթադրել, որ նա է եղել Սայաթ-Նովային հոգևորական ձեռնադրողը և նրան Գիլան նահանգի Էնզելի նավահանգիստ ուղարկողը:

XVIII դ. առաջին տասնամյակներում Էնզելին վաղուց արդեն կարևոր կենտրոն էր Արևելք–Ռուսաստան առևտրական կապերի օրավուր աճող հարաբերություններում: Իսկ այդ բնագավառում նշանակալի դեր ուներ հայ վաճառականությունը, որը Ռեշտ–Էնզելի–Հաշտարխան առևտրական տարանցիկ ճանապարհի վրա կարևոր հենակետեր ուներ: Հայկական եկեղեցու գոյությունն իսկ Էնզելիում, որտեղ Սայաթ-Նովան ձեռագիր է ընդօրինակել, վկայում է, որ այդ ժամանակներում այստեղ նշանակալի թվով հայեր են ապրել:

Հայերը Էնզելիում հաստատվել են դեռևս XVII դ. սկզբներից: Ըստ Հ. Տեր-Հովհաննյանցի, Շահ-Աբասի կողմից Պարսկաստան բռնագաղթված հայերի մի մասին «բնակեցուցանեն ի Քաշան, զմասն մի ի Ղազբին, ի Գիլան, յԱնզալի և ի Դարբանդ»[26]: Էնզելիի հայկական գաղթօջախը գտնվել է Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի ենթակայության ներքո. «վիճակավոր քաղաքք Ջուղայի Ամենափրկչեան վանի ի Պարսկաստան են՝ Ջուղայ, Շիրազ, Բուշեհր, Թէհրան, Համադան, Ռաշտ և Անզալի»[27]:

Արդ, եթե Էնզելին Նոր Ջուղայի ենթակայության քաղաքներից էր, ապա տեղի քահանայի նշանակումը նույնպես պետք է գտնվեր Ամենափրկչյան վանքի առաջնորդի իրավասության ներքո: Թերևս այնքան էլ անհավանական չէ ենթադրել, որ Զաքարիա վարդապետ Թիֆլիսցին[28] Սպահանում գտնված ժամանակ, երբ գնացել էր Քերիմ խան Զենդի մոտ, Նոր Ջուղայի առաջնորդին միջնորդած լինի իր ձեռնադրած Տեր Ստեփանոս քահանային (Սայաթ-Նովային) Պարսկաստանի որևէ հայկական եկեղեցու հովիվ կարգել: Անհավանական չէ ենթադրել նաև, որ Սայաթ-Նովան կարող էր ուղեկ-

---

24 «**Յովհաննու Ղրիմեցւոյ** *Պատմութիւն հոչակաւոր վանից Հաղբատայ Ս. Նշանին*», հրատ. Հ. Համամզասպ Ոսկյան, Վիեննա, 1965, էջ 119–120, նաև՝ **Պ. Հակոբյան**, նշվ. հոդվ.:

25 **Լ. Մելիքսեթ-Բեկ**, նշվ. աշխ., էջ 260:

26 **Յարութիւն Տէր-Յովհաննեանց**, *Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան*, հ. Ա, Նոր Ջուղա, 1880, էջ 30:

27 Նույն տեղում, հ. Բ, էջ 104:

28 Հ. Տեր-Հովհաննյանցը (նշվ. աշխ., հ. Բ, էջ 59–60) որպես Նոր Ջուղայի միաբան հիշատակում է ոմն տփխիսցի Զաքարիա եպիսկոպոս, որը 1752 թ. նշանակվել է «յաջորդ և վերատեսուչ վանին»:

ցած լինել Զաքարիային Պարսկաստան կատարած նրա ուղևորության ժամանակ: Այս դեպքում արդեն հարց է առաջանում վերոհիշյալ հաղպատյան առաջնորդական վեճերին Սայաթ-Նովայի մասնակից լինելու մասին, որը և, թերևս, պատճառ եղած լինի Թիֆլիսից նրա հեռանալուն:

Էնզելի–Աստրախան գծի վրա սայաթնովյան ոտնահետքեր են նկատվում 1966 թ. «Գրական թերթում» բանասեր Աս. Մնացականյանի արժեքավոր հրապարակումներում՝ Սայաթ-Նովայի «Թաքաուր իս դիւանս արա» երգի աստրախանյան տարբերակում և Սայաթ-օղլան աչուղի ինքնակենսագրական խաղում, որոնցից, ինչպես գրում է Մնացականյանը, պարզվում է, որ «Աստրախանում, դեռևս Սայաթ-Նովայի կենդանության օրերին, եղել է ոչ միայն նրա երգերը տարածող Փարակեցի Հովհաննես Ավետիսյան անուն-ազգանունով գործիչ, այլև Սայաթ-Նովայի երգերի ճեռագիր օրինակ, արտագրված Սայաթ-Նովայի ինքնագրից անմիջապես կամ միջնորդաբար»: «Հնարավոր է,– եզրակացնում է անվանի բանասերը,– որ հետագայում ևս այդ կողմերի հետ կապվող աղբյուրներից երևան գան ուրախառիթ նոր անակնկալներ»[29]:

Նորահայտ ճեռագիրը հաստատում է Մնացականյանի կռահումը: Էնզելին, որ Աստրախանի հետ անմիջական նավագնացական կապի մեջ էր, վստահաբար մտնում է «այդ կողմերի» մեջ: Չի բացառվում, որ Փարակեցի Հովհաննես Ավետիսյանը Էնզելիում ծանոթացած լինի մեծ երգչի խաղերին և դրանց ընդօրինակությունը, կամ դրանց գոց արած տարբերակները իր հետ տարած լինի Աստրախան:

Կասկած լինել չի կարող, որ հայրենի երկրից հեռու, այդ օտար միջավայրում, երգիչը պետք է իրեն մենակ զգար, հոգեկան ծանր վիճակում լիներ, «սրքվուր» լիներ, ինչպես ակնարկում է, հավանաբար, այդ ժամանակ իսկ Հերակլ թագավորին ուղղած իր ոտանավոր-աղերսագրում (Վ–31).

Եկ, մի վիթի իմ առումըս թասերով.
Թանգ առած իմ fու աճագին ծախսերով,
Մոդըտ գու fամ *իրանական ծեսերով*,
Դուն ինձ պահիր ատլասով ու խասերով
Սիվ կաբայում սըրվուտութին չիմ ուզում:

Արդյո՞ք «իրանական ծեսեր» արտահայտությունը չի հուշում խաղը գրելու ժամանակ Իրանում նրա գտնվելը:

Սայաթ-Նովան «Իմ խիղճ գըլուխ, քիզիդ էս ինչ պատահեց» խաղում (Վ–32), ինչպես նկատել է Մ. Հասրաթյանը[30], նույնպես ակնարկ ունի Իրանում (այլև Թուրքիայում) լինելու մասին.

Սայաթ-Նովուն դուս մի անի՝ պահպանի,
էլ չի գընա շահի մոդն ու սոլթանի:

---

29 **Աս. Մնացականյան**, *Շարք է մտնում սայաթնովյան ևս մի երգ* («Գրական թերթ», 1966, № 51), *ընդհի՝ «Սայաթ Նովա»* (բանասիրական ճշգրտումներ) ոոդվածը («Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 3, էջ 273–275):

30 **Սայաթ-Նովա**, 1963, էջ XII:

Նորահայտ ձեռագրի տվյալների պաստառի վրա, կարծում ենք, այս վերջին տողը պետք է ոչ թե բանաստեղծական հնարանք համարել, այլ որոշակի փաստ:

Թվում է, որ այս ոտանավոր-աղերսագրերին (Վ–30, 31, 32) ընդառաջել է Հերակլը. հավանաբար, 1762 թ. հետո Սայաթ-Նովային թույլ է տվել վերադառնալ Վրաստան և հաստատվել մայրաքաղաքից հեռու, Թերևս Ջաքաթալայի շրջանի Կախո ավանում, որտեղ և 1766 թ. ընդօրինակել է ներկայումս Մատենադարանում պահվող № 4270 ձեռագիրը:

6. Սայաթ-Նովայի ամուսնության խնդիրը

Գրականության մեջ կասկածներ են եղել, որ Սայաթ-Նովան կրկնակի ամուսնություն է ունեցել. առաջին անգամ իբր 1747–1748 թթ. առաջ, և երկրորդ անգամ՝ 60-ական թվականներից հետո, թե իբր երկրորդ կնոջ անունն է Մարմար եղել, որ մահացել է 1768 թ.[31]:

Սայաթ-Նովայի առաջին ամուսնության վարկածը ինչ-որ չափով ընդունելի էր մինչև այն ժամանակ, երբ նրա ծնունդը դնում էին 1712, 1713 կամ 1717 թվականներին, սակայն Պարույր Սևակի և սայաթնովագետ Հ. Բախչինյանի բերած համոզեցուցիչ տասնյակ փաստարկներից և խաղերում առկա ինքնակենսագրական ակնարկների ու ծածկագիր թվականների մանրակրկիտ հաշվումներից հետո[32], երբ հաստատված է երգչի ծննդյան ճշգրիտ թվականը՝ 1722, և որ, ըստ նորահայտ ձեռագրի, նա 60-ական թվականներին արդեն քահանա էր, հավանական է դառնում ենթադրել, որ Սայաթ-Նովան մինչ այդ ամուրի է եղել և ամուսնացել է կա՛մ այդ թվականի վերջերին, կա՛մ 1761 թ. սկզբներին՝ 38–39 տարեկան հասակում:

Մ. Հասրաթյանը, նկատի ունենալով Կախո քարվանսարայում 1766 թ. Սայաթ-Նովայի ընդօրինակած ձեռագրի հիշատակարանը, իրավացիորեն եզրակացրել է, որ 1766 թ. «արդեն գրիչ Ստեփանոսը երեք-չորս տարվա քահանա էր»[33]: Դա են հաստատում և ավելի ճշգրտում նաև նոր ձեռագրի տվյալները:

Մինչ 1760-ական թվականները Սայաթ-Նովայի ամուրի լինելու մասին որոշակի ակնարկ է նաև վրացերեն «Արթար դատէ, չէ՞ որ թաքավուր իս դուն» (Վ–30) ոտանավորի հետևյալ տողը. «Ոչ կողակից ունեմ, ոչ էլ խնամի»: Իսկ այս ոտանավորը, ինչպես տեսանք, պետք է հորինված լինի 1759–1761 թվականներին:

Բերված փաստերը, այսպիսով, հնարավորություն են տալիս վերականգնելու մեծ երգչի կյանքի 1759–1761 թվականների «ամենամութ էջերի» հետևյալ տարեգրությունը.

1759–1761 թթ. Սայաթ-Նովան ձեռնադրվում է քահանա:

---

31 Նույն տեղում, էջ XXX:

32 **Պարույր Սևակ**, *Սայաթ-Նովա*, Երևան, 1969, էջ 13–117, **Հ. Բախչինյան**, *Դիտողություններ Սայաթ-Նովայի Դավթարի վերաբերյալ* («Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 3, էջ 209–220), նույնի՝ *Սայաթ-Նովայի կենսագրության երկու հարցի շուրջ* («Բանբեր Երևանի համալսարանի», 1977, № 2, էջ 162–168):

33 **Սայաթ-Նովա**, 1963, էջ XXXII:

1760/61 թթ. Սայաթ-Նովան Պարսկաստանի Գիլան նահանգի Էնզելի նավահանգստի հայոց եկեղեցում է:

1760/61 թթ. Սայաթ-Նովան Էնզելի քաղաքում ընդօրինակում է Գրիգոր Նարեկացու Ողբերգության մատյանը:

1759–1761 թթ. Սայաթ-Նովան վրացերեն երեք ոտանավոր-աղերսագրեր (Վ–30, 31, 32) է գրում վրաց Հերակլ թագավորին:

1759–1761 թթ. Սայաթ-Նովան ամուսնանում է լոռեցի Մարմարի հետ:

1759–1766 թթ. Սայաթ-Նովան զբաղվում է նաև գրչությամբ:

НОВОНАЙДЕННАЯ РУКОПИСЬ, ПЕРЕПИСАННАЯ САЯТ-НОВОЙ

Р е з ю м е

До нас дошли два манускрипта, написанные рукой великого поэта-ашуга XVIII в. Саят-Новы. Первый содержит его песни на трех языках – армянском, грузинском и азербайджанском, и хранится в Музее литературы и искусства им. Е. Чаренца. Другой манускрипт представляет собой сборник переписанных им отдельных частей Библии и Календаря и ныне хранится в Матенадаране им. Маштоца.

В начале 1981 г. в Матенадаран поступила третья рукопись, переписанная Саят-Новой, это «Книга скорбных песнопений» гениального поэта X в. Григора Нарекаци. В конце рукописи Саят-Нова оставил следующую памятную запись: «Написана в Гиляне, в церкви Анзали, в 1761 году. О, читатель, помяни меня, Степаноса вардапета, которого называют Саят-Новой, и отца моего махтеси Карапета, и да будете помянуты и вы».

Этот памятник представляет особый научный интерес, так как раскрывает факты жизни Саят-Новы, касающиеся 1760–1761 гг., то есть того периода, когда он был удален от двора грузинского царя, пострижен в монахи.

На фоне новых фактов стало возможным определить время написания трех грузинских песен, адресованных царю Ираклию.

Рассматриваемая рукопись показывает, что Саят-Нова занимался и литературной деятельностью, за что его в свое время называли вардапетом, хотя он и не имел этой степени.

[1977. HUMANISMUS UND MENSCHENBILD IMT UND IN DER ANTIKE h.28]
Konferenzvorträge. Herausgegeben von der Sektion Orient - und Altertumswissenschaften der Martin-Luther-Universität Halle-Wittenberg.

! Die Entwicklung weltlicher Tendenzen in der armenischen Poesie (10. - 12. Jahrhundert) [1]

Das 10. Jahrhundert ist für Armenien als ein Jahrhundert des Aufschwungs des politisch-sozialen Lebens charakterisiert: Die Existenz unabhängiger armenischer Fürstentümer, die Herausbildung von großen Städten als Ergebnis der Entwicklung von Handwerk und Handel, begleitet von bäuerlichen Bewegungen - all dies trug in bedeutendem Maße zu einer Belebung des gesellschaftlichen Lebens dieses Landes bei. Naturgemäß mußten sich diese Erscheinungen unmittelbar in den verschiedenen Bereichen der armenischen Kultur widerspiegeln in der Ausbreitung von klösterlichen Lehrzentren, in der Wiederaufnahme der Tradition der armenischen Historiographie des 5. Jahrhunderts, im Fortschritt der exakten Wissenschaften, in der stürmischen Entwicklung der armenischen Architektur und nicht zuletzt im Aufblühen der schönen Literatur und Kunst.

Es ist vollkommen verständlich, daß diese kulturellen Wandlungen unter der Bedingung einer strengen Kontrolle seitens der herrschenden Schichten und der armenischen Kirche vor sich gingen, und daß die Kirche nachdrücklich auf der Unantastbarkeit der scholastischen Dogmen ihrer Ideologie beharrte und ihre strengen asketischen Sitten und Gebräuche verteidigte. Jedwede Abweichung von den bestehenden religiösen Normen und Prinzipien, jede neue Idee und Meinung wurden als Häresie und Sektierertum angesehen. Unter jenen neuen Ideen fand in dieser Epoche in Armenien die häretische Bewegung der Thondrakier weite Verbreitung, die, ähnlich verwandten sozialen Bewegungen im Orient, die Frage der Besitzlosigkeit aufwarf und zahlreiche kirchliche Satzungen und Zeremonien verwarf. Diese Bewegung mündete nicht selten in Aufstände. Die armenischen Feudalherren und die Kirche führten einen unerbittlichen Kampf gegen die Thondrakier, waren jedoch nicht in der Lage, die Ausbreitung dieser Ideen aufzuhalten, die im weiteren Verlauf aus Armenien nach Europa drangen.

Die neuen Verhältnisse, die sich im gesellschaftlichen Leben ausprägten, wirkten stark anregend auch auf die Entwicklung der Literatur, und bereits zu Beginn des 10. Jh,.begannen in der armenischen Literatur, besonders in der Dichtkunst, weltliche Ten-

---

! Martin-Luther-Universität Halle-Wittenberg, Wissenschaftliche Beiträge 1977 / 28 (1 2), Halle (Saale) 1977, ss. 271-281.

1 Humanismus und Menschenbild im Orient und in der Antike : Konferenzvorträge / hrsg. von der Sektion Orient- und Altertumswissenschaften der Martin-Luther-Universität Halle-Wittenberg Kongress: Konferenz ; (Halle, Saale) : 1973.11.. - Halle (Saale) : Univ. Halle-Wittenberg, 1977. - 427 S. (Wissenschaftliche Beiträge der Martin-Luther-Universität Halle-Wittenberg / 1977,28, S. 271-281; Aus dem Russischen übersetzt von P. Nagel

denzen in Erscheinung zu treten. Sie traten vor allem in der Sphäre der geistlichen Dichtung zutage, in den Versuchen, zu ihrem Inhalt die Suche nach Wegen zur geistigen Errettung des Menschen, die Umwertung der Begriffe der menschlichen Würde und der Fähigkeiten des Verstandes, das reale Leben und die Schönheit der Natur zu machen. In der Epoche des Mittelalters irrte der gläubige Mensch umher; wenn er versuchte, Licht auf das komplizierte Wechselverhältnis zwischen Gott und Mensch, Irdischem und Himmlischem, Geistigen und Körperlichem zu werfen, so stieß er mit den verworrenen Deutungen des religiösen Denkens jener Zeit zusammen; da er infolge von Rückständigkeit und Beschränkung keinen Ausweg fand, verfiel er einem tiefen Pessimismus und klammerte sich an die Ideale einer allmächtigen Gottheit und der Ewigkeit des jenseitigen Lebens. Jedoch gerade im Verlaufe dieser Zusammenstöße stürzten häufig viele seiner religiosen Überzeugungen ein, und Elemente einer profanen Weltanschauung drangen in das klerikale Milieu ein und von dort aus auch in die Literatur.

Grigor Narekaçi, ein Dichter des 10. Jh., war der erste in der armenischen Literatur, der die Begrenztheit der herrschenden geistlichen Dichtung, ihre erstarrten, durch die kirchlichen Normen geheiligten Formen überwand, eine subjektive Lyrik schafft und dadurch den Aufschwung der armenischen Dichtkunst bestimmt hat.

Narekaçi war der erste Dichter in der armenischen Literatur, der die menschliche Persönlichkeit besungen hat, ihre seelische Erschütterung, Leiden und Unruhen, und, begeistert für die Natur, die Schönheit der Welt gepriesen hat. Narekaçi ist ein gläubiger Mensch, ein echter Vertreter seines Jahrhunderts und seiner Klasse. Die höchste allmächtige Kraft ist für ihn Gott, der Allgewaltige und Unbegreifliche, dessen "unvergleichlicher Barmherzigkeit" und "gerechter Hand" er seine sündhafte Seele anvertraut, jene Seele, die die innere Welt seiner Zeitgenossen widerspiegelt, aller Christen, vom Kleinsten bis zum Größten, der Sünder und der Gerechten, der Knechte und der Sklaven, ja auch der "stolzen Machthaber". Und der große Humanist ruft aus:

> "Die Sammlung dieser Lieder, von denen jeder Vers
> gefüllt ist bis zum Rand mit schwarzer Trauer,
> verfaßte ich, der ich des Menschen Leidenschaften kenne,
> da ich selbst sie in mir tadle."[2]

Gewiß ist das noch keine weltliche Dichtung im strengen Sinne des Wortes - weder der Dichter noch seine Zeit waren dafür reif. Narekaçi nimmt, obwohl er im Rahmen einer rein subjektiven Lyrik verbleibt, den Schmerz, an dem die Gesellschaft leidet, mit allen Fasern seiner Seele wahr, und indem er sich selbst anprangert und erniedrigt, sucht er Wege zur Rettung des Menschen der Feudalgesellschaft. Namentlich zu diesem Zweck schuf er das "Buch der gramvollen geistlichen Gesänge", damit es die seelischen und körperlichen Gebrechen der göttlichen Geschöpfe heile. Und der Dichter vertraut

2 Nach der Übertragung von N. Grebnev:
Собрание песен сих, где каждый стих
Наполнен скорбью черною до края,
Сложил я - ведатель страстей людских-
Поскольку сам в себе их порицаю.

sich mit seinem ganzen Wesen der Idee des Menschen und der Menschlichkeit an, der Gerechtigkeit, indem er danach strebt, sich mit der Gottheit zu vereinen.

Nachdem Narekaçi bereits einmal die scholastischen Traditionen der Dichtung verletzt hat und von ihm der unter der schweren Last der "Erbsünde" gebeugte Mensch besungen wurde, wagt es der Dichter, in ihm eine göttliche Kraft zu erblicken, indem er zum Wortführer der Gefühle der gesamten leidenden Menschheit wird und sich nicht mehr fürchtet, seine Begeisterung für die Herrlichkeiten der von Gott geschaffenen Natur zum Ausdruck zu bringen - er ist nicht mehr der rauhe asketische Mönch, sondern ein Mensch, der trunken ist von unendlich vielen Farben, wohlriechenden Rosen, murmelnden und lieblichen Bächen. Und Narekaçi verfaßt Lieder, die ungeachtet ihrer äußeren religiösen Hülle tatsächlich ein wunderbarer Hymnus auf die Natur sind - ein Hymnus, in dem das Herz des von der Liebe zur Natur erfüllten Dichters schlägt:

"Die diamantene Rose nahm
ihren Glanz von der Leuchte des Tages,
als sie lautlos versank
in den unendlichen Meerespiegel.

Es schien, als ob die göttliche Blüte
sich über der Meeresweite entfalte,
es schien, als ob über ihr erglänzte
eine reife safranfarbene Frucht."[3]

Wahrscheinlich gaben derartige Lieder Narekaçis den Vorwand für Verdächtigungen, er sei ein Häretiker, In einer der Quellen heißt es: "Da er alles daransetzte, die kirchliche Ordnung, die in Verfall geraten war, zu verbes- sern, begannen einige Leute über ihn vor den Bischöfen und Fürsten zu lästern, und bezeichneten die Wahrhelten dieses Lehrers als nachlässig im Glauben und häretisch."

Während Narekaçi die reale Welt und den Menschen im allgemeinen würdigte, so preist der wenig später, am Anfang des 11. Jh. wirkende Vardan Aneçi in einer von ihm über ein religiöses Thema verfaßten Ode (übrigens sein einziges erhaltenes Werk) schon konkret den Menschen als Schöpfer, seinen Verstand, seine Kraft und seine Weisheit:

"O du, geflügelter Mensch,
an Gestalt und Vernunft geschaffen gleich mir!
Und Kraft und Weisheit habe ich hineingelegt

3

Алмазная роза взяла
Свой блеск у дневнего светила,
Когда оно тихо входило
В морскую бескрайнюю гладь.

Казалось: богровый цветок
Над ширью морской распустился,
Казалось, над ней засветился
Созревший шафрановый плод.

in die Züge deines Angesichts
und in das gekrönte Haupt
und in deinen Genius, unbestreitbar,
In deine früchtebringende Vernunft, die ohne Mangel." [4]

Vardan Aneçi scheut sich nicht, in seine Ode Bilder aus dem Alltagsleben des arbeitenden Bauern einzubeziehen. Das macht sein Werk noch greifbarer und anschaulicher, für die Wahrnehmung leichter zugänglich und vermittelt ihr den Hauch der Poesie.

Die Befreiung der armenischen Dichtung von den einengenden Wegen der Religion wurde in bedeutendem Maße gefördert durch die Volkskunst, deren überaus reichen Quellen sich die armenischen Dichter dieser Periode zuzuwenden beginnen. Grigor Narekaçi war einer der ersten, der einzelne Formen der armenischen Volkslieder aufgriff.

Zu den größten Denkern und Staatsmännern der ersten Hälfte des 11. Jh. gehört Grigor Magistros Pahlavuni. Überaus bewandert sowohl in der griechischen Literatur als auch in der Literatur der Völker des Vorderen Orients, schätzte er die Kunst der armenischen Volkssänger (Gusanen) hoch; ihre ältesten Textproben waren bereits im 5. Jh. durch den Vater der armenischen Geschichtsschreibung, Moses Chorenaçi, aufgezeichnet worden. Die altarmenische gusanische Kunst, die vollständig weltlich war und unabhängig von der offiziellen Literatur fortlebte und bis in unsere Zeit gelangte, befand sich zur Zeit des Magistros auf einem so hohen Niveau, daß der berühmte Gelehrte und Dichter - im Gegensatz zur ablehnenden Haltung der Kirche - sie höher einschätzte als die griechische Poesie dieser Zeit, "Alle Seufzer und Lieder der Gusanen", schrieb Grigor Magistros, "die heutzutage bei den Armeniern vorhanden sind, achten wir höher als de griechischen, da das bei ihnen ausgewogene Verhältnis von Inhalt und Form sie zu auserlesenen, nicht leicht zu verstehenden und wunderbaren Liedern macht".

Nach einer derartigen Einschätzung wird deutlich, warum Magistros in einzelnen Fällen in seinen "Briefen" Angaben der armenischen und persischen Volkskunst zitiert und sogar nach dem Muster der armenischen epischen Gesänge den armenischen Heerführer verherrlicht, der heroisch in der Schlacht mit den Horden der Seldschuken gefallen ist. Die Möglichkeiten, die die geistlichen Dichtungen boten, waren viel zu begrenzt für den Lobgesang auf den kriegerischen Geist des um seine Existenz kämpfenden Volkes, seinen Heldenmut, und deshalb wandte sich Magistros dem epischen Stil der Folklore zu. Der von Magistros besungene Held erscheint nicht als "sündhafter, ohnmächtiger" Mensch, der seine Hand zu Gott ausstreckt, sondern als wirkliche Persönlichkeit, als Patriot und rechtschaffener Mensch, gerecht und human, er hilft

4 "О ты крылатый человек,
Созданный обликом и разумом подобный мне,
И силу и мудрость вложил
В черты лица твоего
И в увенчанную голову,
И в бесспорный гений твой,
В плодотворный и нескудеющий и разум твой,"

den Waisen und Witwen, rettet das Leben der Gefangenen, befreit die Eingekerkerten, führt einen unbeugsamen Kampf gegen den Feind und geht heldenhaft zugrunde.

Der Prozeß der Loslösung der armenischen Literatur von der religiösen Gebundenheit im 11. Jh. verzögerte sich ein wenig infolge der ungünstigen politischen Verhältnisse, ist jedoch nicht völlig zum Stillstand gekommen. An der Schwelle vom 11. zum 12. Jh. begegnen wir bereits einem solchen in Versform gefaßten Werk, das von den Themen der Evangelien vollständig entfernt ist. Dies ist das Poem von Ovannes Imastaser (gest. 1129), in dem das Problem der Entstehung von Poesie und Musik betrachtet wird. Das war für jene Zeit ein wesentliches Problem. Völlig neu war auch die Struktur des philosophischen Poems. Der Dichter hat sich hier der Dialogform zugewandt; die Akteure sind der Dichter selbst und der Star. Der Star erscheint als die Verkörperung der Natur, ihr vollkommenes Werk, von dem der Mensch lernen und dem er sich angleichen muß. Die Dichtung muß eine Widerspiegelung der Natur sein. Dieses pantheistische Weltverständnis zeugt von dem vollständigen Sieg des weltlichen Prinzips in der armenischen Literatur. Gewiß, in den folgenden Jahrhunderten blühte auch die armenische geistliche Dichtung, jedoch war diese nicht mehr das asketische Lied der früheren Periode, sondern eine realistische Wiedergabe des Lebens, nur dein Äußeren nach die verschleierte, begrenzte religiöse Weltanschauung der Gläubigen.

Auf dem Wege, der von Grigor Narekaçi gewiesen worden war, ging auch der große Dichter des 12. Jh. Nerses Schnorhali (gest. 1172). Zu seiner Zeit hatte die armenische Literatur bereits einen erheblichen Fortschritt gemacht und neue Traditionen geschaffen, die Schnorhali selbst mit großer Meisterschaft weiterentwickelte, indem er eine neue Seite in der armenischen Dichtkunst aufschlug.

Seine dichterische Sprache trägt nicht den Stempel des komplizierten und verwickelten Denkens der vorhergehenden Periode, sie ist klar und sehr faßlich und verfolgt gleichzeitig praktische Ziele: zur Aufklärung des Volkes beizutragen, Patriotismus und Ergebenheit gegenüber dem Glauben anzuerziehen.

Schnorhali, der eine der vielseitigst entwickelten Persönlichkeiten seines Zeitalters ist und an der Spitze der armenischen Kirche steht, befand sich stets im Zentrum des politisch-gesellschaftlichen Lebens des Nahen und Mittleren Ostens und förderte durch seine gesamte Tätigkeit die Festigung des neu geschaffenen Kilikisch-armenischen Staates.

Nerses Schnorhali sah die Schönheit der Kunst im Gefolge des realen Lebens, in der Natur, er verschmähte auch nicht das künstlerische Schaffen des Volkes, aus dem er einzelne Genres in die offizielle Literatur einbezog, er entwickelte die armenische Verskunst und wurde faktisch zum eigentlichen Wegbereiter des armenischen Reimverses. Gewiß, Grigor Narekaçi und Grigor Magistros verfaßten schon vor ihm Reimverse, jedoch namentlich Schnorhali wandte sie durchgängig und sehr kunstfertig in seinen Werken an, wobei er neue Wege für die nachfolgende Entwicklung in der armenischen schönen Literatur bahnte.

Bedeutend ist der Beitrag Nerses Schnorhalis auf dem Gebiet der Entwicklung der armenischen Scharakane, der geistlichen Gesänge. Wenn in der Vergangenheit die Thematik dieser Gattung der geistlichen Lieder streng begrenzt war, so wurde sie durch

Schnorhali nicht nur durch martyriologische und dogmatische, sondern auch durch weltliche und patriotische Themen bereichert. In die geistlichen Lieder gingen die Gestalten bekannter Persönlichkeiten ein, die sich im Kampf um die Selbständigkeit der armenischen Kirche und um die Unabhängigkeit der Heimat eingesetzt hatten. Diese Lieder wurden in der Folgezeit, da ein armenischer Staat nicht existierte, zu einer jener scharfen Waffen, die das armenische Volk geistig stärkten und ihm die Möglichkeit gaben, um seine Existenz und Kultur zu kämpfen.

Schnorhali führt in die armenische Literatur die Gattung des umfassenden historischen Poems ein, durch die er die armenische Poesie auf eine neue Stufe hob. Eines seiner besten Werke über ein historisch-patriotisches Thema ist das Poem, das dem Fall der Stadt Edessa (Nordmesopotamien) gewidmet ist. Der Dichter gab ihm den Titel "Klage um Edessa". Mehr als 2000 Zeilen umfassend trägt dieses Werk völlig weltlichen Charakter und ist durchdrungen von glühhendem patriotischen und humanistischen Geist. Die realistische Feder des Dichters zeichnet in reichhaltigen und markanten Bildern blühende und wohlgeordnete Städte, ihr alltägliches Leben, ihre natürlichen und architektonischen Schönheiten. Der Autor beweint mit den Lippen einer verlassenen Mutter (in der Gestalt Edessas) den Verlust ihres und ihrer Kinder einst glücklichen Lebens.

"O, ich war an einem heiteren Tag Königin in goldenem Gewand,
Haine von dunklem Saum,
Blattwerk von üppigen Fransen
verzierten es einst ringsum.
Und die Mauern, im Wettstreit mit der Höhe,
hoben Türme über sich empor.
O wo seid ihr, alle meine Angehörigen,
Zehntausende von Söhnen,
Zehntausende von Töchtern?
Ihr - die ihr einstmals vor mir tanztet,
Ihr- Rosen, die im Frühling blühten,
Ihr- reichen Apfelbaumes Früchte,
Ihr - mein dichtbepflanzter Weinberg,
Ihr- meines Weinstocks Schößlinge -
Mein süßer Garten, du mein goldener ..." [5]

5 Nach der Übertragung von V. Betaki:
О, я была погожим днем
Царицей в платье золотом,
И рощи темного каймой,
Листвы тяжелой бахромой
Его украсили кругом.
И стены, споря с высотой,
Вздымали - башни над собой...
О где ты, вся моя семья,
Десятки тысяч сыновей,
Десятки тысяч дочерей?

Schweren Herzens hat der Dichter die Verödung der einst wohlgeordneten Städte erlebt, den Untergang der prächtigen Tempel und Paläste unter den Schlägen der Barbaren, die Ausrottung Tausender unschuldiger Menschen. All das wird in dem Poem mit grenzenloser Bitternis und Herzweh beschrieben. Jedoch beschränkt sich Schnorhali nicht auf diese Beschreibungen, im gleichen Atemzug rühmt er die Selbstverleugnung und den Heroismus der mit dem Feind Kämpfenden, ihre Einigkeit und Entschlossenheit, dem Feind keinen Fußbreit Boden, sogar um den Preis des Lebens, zu tiberlassen. Nur eine Antwort gibt es gegenüber dem Feind: "Gegen das Schwert - das Schwert, gegen das Feuer - Feuer", gleich den Vätern gilt es zu kämpfen - hier ist bereits der Widerhall der geflügelten Worte des armenischen Historikers des 5. Jh., Elisäus, zu vernehmen: "In bewußter Aufopferung sterben ist Unsterblichkeit".

"Bruder schrecke nicht zurück! Sei stolz und kühn!
Verletze nicht die heil'gen Bande,
aber den guten Namen bewahre
und unseren innigen Bruderbund,
damit nach. Tag' und Jahren noch
deiner Taten ganzer Ruhm
inmitten der Völker der Erde lebe." [6]

Es mutet an, als ob die Stimme eines Menschen unserer Tage gegen die Kräfte des Bösen und der Gewalt ertönt. Der Humanismus des Dichters erreicht in diesem Werk seinen Gipfel. Unter den schweren Schlägen des Schicksals 1äßt er den Mut nicht sinken, er weicht nicht voll kläglichen Jammers um die Niederlage zurück, er gibt kein trauriges und hoffnungsloses Jammern von sich und vertraut nicht auf die Barmherzigkeit des Allmächtigen. Das Poem endet in zuversichtlichem Glauben an den Sieg. Schnorhali ist gewiß, daß die Leiden vergehen und ein Ende haben müssen und der Mensch eines friedlichen und glücklichen Lebens würdig ist.

Das Werk Schnorhalis verkündet den Sieg des weltlichen Prinzips in der armenischen Literatur.

Вы - танцевали предо мной,
Вы - розы, что цвели весной,
Вы - щедрой яблони плоды,
Вы - виноградник мой густой,
Вы - саженцы моей лозы -
Мой сладкий сад, сад золотой ...

6 Nach der Übertragung von V, Betaki:
Брат не страшись! Будь горд и смел!
Не попирай священных уз,
Но имя доброе храни
И кровный братский наш союз,
Чтоб многие года и дни
Вся слава подвигов твоих
Жила среди племен земных.

ԲՆԱԳՐԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԵԲԱՍՏԱՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ»[1]

Առաջին համաշխարհային պատերազմի արհավիրքի տարիներին հայ մշակույթի անգնահատելի հարստություններ հետ ոչնչացան ու անհետ կորան բազմահազար հայերեն գրչագիր մատյաններ, այդ թվում և Սեբաստիայի ս. Նշան վանքի մոտ 300 ձեռագրերը: Այս հարստությունից առանձին մասունքներ հետագայում երևան եկան և հանգրվանեցին զանազան ձեռագրատներում: Դրանց թվին է պատկանում 19-րդ դարի սկզբի պատմիչ Հովհաննես Սեբաստացու «Պատմութիւն Սեբաստիոյ» աշխատությունը, եզակի մի գործ, որտեղ տրված է Փոքր Հայքի երբեմնի ծաղկուն կենտրոն Սեբաստիայի 11-19-րդ դարերի ժամանակագրական համառոտ պատմությունը և որը նոր լույս է սփռում հայ ժողովրդի արևմտյան հատվածի պատմության, մասնավորաբար 17-18-րդ դարերի նվազ ուսումնասիրված ժամանակաշրջանի վրա:

Միջնադարյան հայ պատմագրության վերջին ներկայացուցիչներից է Հովհ. Սեբաստացին, որի կյանքի ու գործունեության հիմնական տվյալները պահպանված են իր իսկ պատմության մեջ: Հովհաննեսը, բնիկ անունով Հովնան, աշակերտել է Հակոբ Արմտանցուն: Սեբաստիո առաջնորդ է եղել 1809-1829 թվականներին և հայտնի է դարձել իր ծավալած լուսավորական ու շինարարական աշխատանքներով. նրա ջանքերով Սեբաստիայում բացվել են նոր դպրոցներ, վերակառուցվել պատմական որոշ հուշարձաններ:

19-րդ դարի առաջին տասնամյակները ծանր ժամանակներ էին ինչպես ողջ Արևմտյան Հայաստանի, այնպես էլ Փոքր Հայքի համար: Ռուս-թուրքական, ռուս-պարսկական պատերազմները, օսմանյան կայսրության մեջ ֆեոդալական հակամարտությունների սրումը, տնտեսական անկայուն վիճակը, ինչպես նաև հայ եկեղեցու ներսում գոյություն ունեցող հակասությունները ծանր իրադրություն էին ստեղծել երկրի հայ բնակչության համար: Պատմական այսպիսի պայմաններում է գործել Հովհ. Սեբաստացին՝ արժանանալով հարգանքի և լայն ճանաչման:

Մեծ չէ նրա գրական ժառանգությունը. ոտանավորների մի շարք, որ տպագրվել է 1825 թվականին Թիֆլիսում՝ «Ներբողական նուագերգութիւնք» խորագրով, մի քարոզագիրք և ամենակարևորն ու արժեքավորը՝ «Սեբաստիայի պատմությունը», վերջին երկուսն անտիպ:

Հովհաննես Սեբաստացու բանաստեղծությունները հիմնականում չշափելով կրոնական թեմաներ՝ միաժամանակ արտացոլում են օրվա քաղաքական անցուդարձից թելադրված նրա հայրենասիրական տրամադրությունները, հոգու խռովքը, հույսերն ու հավատքը ապագայի նկատմամբ:

---

[1] Հրապարակվել է «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթում, 1973, № 42, հոկտեմբերի 16, էջ 6-7:

Քաջատեղյակ լինելով հայ հին ու միջնադարյան մատենագրությանը, ինչպես նաև ձեռքի տակ ունենալով Մ. Ջամչյանի պատմությունը, Սեբաստացին ճեռնամուխ է եղել իր «Պատմության» ստեղծմանը:

Աշխատության խորագրից պետք է ենթադրել, որ հեղինակի նպատակն է եղել գրել Սեբաստիայի հռչակավոր ս. Նշան վանքի պատմությունը, տալ նրա առաջնորդների ժամանակագրությունը: Այս հենքի վրա ստեղծվել է մի ամփոփ, ոչ մեծ աշխատանք, որն իրականում Սեբաստիա քաղաքի պատմությունն է՝ Սենեքերիմ Արծրունու կողմից ս. Նշան վանքի հիմնադրման ժամանակից՝ 1021-ից մինչև 1818 թվականը:

«Սեբաստիոյ պատմութեան» սկզբի հատվածը չարադրելու համար պատմիչը օգտագործել է Ագաթանգեղոսի, Գրիգոր Մագիստրոսի, Մատթեոս Ուռհայեցու, Սամվել Անեցու և այլոց պատմություններում Սեբաստիայի մասին պահպանված տեղեկությունները, իսկ ուշ շրջանի համար, որ «Պատմության» առավել կարևոր մասն է, գավազանագրքեր, ձեռագրական հիշատակարաններ, կոնդակներ, ծանարտակներ (համախոսականներ), տապանագրեր, մասնատուփերի արձանագրություններ ու ավանդություններ: Աղբյուրներ, որոնց մեծ մասը իսպառ ոչնչացել է: Մանր ժամանակագիրներից «Պատմության» մեջ հիշատակված են Թադեոս և Հովհաննես Սեբաստացիները (16-րդ դար), Անանուն Սեբաստացին (16-րդ դար) և Հարություն Երզնկացին (18-րդ դար):

Հայ ժողովրդի միջնադարյան պատմության որևէ հատվածի քննությունը ինքնին ցուցադրում է այն քաղաքական, տնտեսական ու կրոնական հալածանքները, որ օտար նվաճողները գործադրում էին իրենց հպատակ ժողովուրդների նկատմամբ: Եվ պատահական չէ, որ Հովհ. Սեբաստացու «Պատմության» յուրաքանչյուր էջ մեր ժողովրդի ծանր առօրյայի, բռնակալության դեմ նրա դիմադրության կենդանի պատկերումն է:

Սեբաստիան, ինչպես օսմանյան կայսրության շատ այլ նահանգներ, 18-րդ դարում և 19-րդ դարի սկզբում միջֆեոդալական հակասությունների և դրանցով պայմանավորված ներքին պատերազմների թատերաբեմ էր: Երկրում տիրող անիշխանության հետևանքով բռնակալ փաշաները Սեբաստիայում հաճախակի փոխարինում էին իրար, ընդ որում ամեն մեկն իր հերթին անասելի կեղեքում էր աշխատավոր խավերին՝ անկախ նրանց ազգային պատկանելությունից: Եվ այնուամենայնիվ, հայերի և ընդհանրապես քրիստոնյաների վիճակը կայսրության մեջ շատ ավելի ծանր էր. քրիստոնյա տարրը կեղեքվում էր նաև դավանանքի համար ենթարկվելով բռնադանճումների, կամայականությունների ու ալան-թալանի: Սակայն իրավական այս անհավասար պայմաններում իսկ հայ ու թուրք բնակչությունը առանձին դեպքերում համատեղ պայքարի է ելել օսմանյան իշխանավորների դեմ: Պատմական նման փաստեր մեր աղբյուրներում քիչ են պահպանվել: Այս իսկ առումով շատ արժեքավոր են Հովհ. Սեբաստացու տված տեղեկությունները: Այսպես, օրինակ, 1790 թ. Սեբաստիայի կուսակալ է նշանակվում Թուրունճօղլի անունով մեկը, որ «հարկապահանջությամբ սկսեց նեղել քաղաքացիներին, որի համար նրանք միաբանվելով՝ ընդդիմացան փաշային և պատերազմելով՝ արտաքսեցին քաղաքից»: Ավելի ուշ, 1802 թ., քաղաքի իշխանությունը անցնում է Հուսեին փաշայի ձեռքը, որի «անգութ և մարդախողխող բնավորության համբավը վաղուց ի վեր հնչում էր հեռվից, ուստի քաղաքացիները հայերը և այլազգիները, միաբանվելով զինվեցին նրա դեմ և թույլ չտվին նրան մտնել քաղաք»: Սեբաստիայի բնակչության հետևողա-

կան համատեղ պայքարն այս բռնակալի դեմ ստիպում է սուլթանին ժողովրդի զայրույթը մեղմելու և նոր հուզումների առաջն առնելու համար դիմել ծայրահեղ միջոցի. Հուսեին փաշան ձերբակալվում և գլխատվում է:

Ըստ երևույթին հայերի ու թուրքերի համագործակցության դրական արդյունքը ոգևորում է Սեբաստիայի բնակչությանը, որը 1808 թ. մեկ անգամ ևս համատեղ ելնում է մի այլ բռնակալի դեմ. «Այս օրերին, – գրում է Սեբաստացին, – ռուսական պատերազմից վերադառնալով՝ իշխելու հավակնությամբ քաղաքին է մոտենում Զափանօղլի Մուհամեթ բդեչխը, բայց քաղաքացիները դիմադարձ են կանգնում և թույլ չեն տալիս նրան քաղաք մտնել. նրանք մարտկոցներ են ստեղծում, քաղաքի չուրջ թնդանոթներ են դնում. հայերն ու այլազգիները զինվելով՝ պատրաստվում են պատերազմի... Մուհամեթ բդեչխը սոսկալի վրդովված՝ իր չուրջն է հավաքում ավելի քան քսան հազար զորք, որ տեղավորված էր շրջակա գյուղերում, և երեք ամիս շարունակ պաշարված է պահում քաղաքը»: Ի վերջո, ինքը՝ Հովհաննես Սեբաստացին, որ ս. Նշանի տեղապահ առաջնորդն էր այդ ժամանակ, դուրս է գալիս նրանց առջև և համոզում է խնդիրը խաղաղությամբ լուծել: Դեպքերի այսպիսի գործուն մասնակից պատմիչը այնուհետև ավելացնում է, որ թեպետ քաղաքացիները և գյուղացիները «բազմավիշտ տառապանքներ ու անճկություն կրեցին», բայց ազատվեցին չարիքից:

Սեբաստացու «Պատմության» մեջ հետաքրքիր մանրամասներ կան 12-16-րդ դարերի հայ եկեղեցու պատմության առանձին դրվագների վերաբերյալ: Այն առավել հարուստ նյութ է տալիս եկեղեցու ներսում 18-րդ դարում գոյություն ունեցած հակասությունները բացահայտելու առումով:

Դեպքերի ճշմարտացի ու փաստալի նկարագրությունները հստակորեն ցուցադրում են նաև արևմտահայության մեջ աստիճանաբար իշխող դիրքեր ձեռք բերող հայ ամիրայության գործունեությունը. Սեբաստացին վկայում է, որ ամիրաները, տնտեսական ամուր կապեր ունենալով Կ. Պոլսի բարձրաստիճան թուրք պաշտոնեության՝ փաշաների ու կուսակալների, շրջանակներում, անգամ արքունիքում, արդեն 18-րդ դարի սկզբներից սկսել էին իրենց կամքը թելադրել արևմտահայ կյանքին, իրենց շահերից ելնելով՝ ուղղություն տալ եկեղեցական ու աշխարհիկ կազմակերպություններին:

Արևմտահայության և մասնավորաբար Սեբաստիայի ընկերային տնտեսական հարաբերությունների ուսումնասիրման առումով արժեքավոր են Սեբաստացու այն հաղորդումները, որոնք վերաբերում են սեբաստացի ջրկիրների 1714 թ. Պոլսում գոյություն ունեցած «համարվեստ» (համքարական) կազմակերպությանը, ինչպես և փոքր-ինչ ուշ Սեբաստիայում գործած համքարություններին: Արժեքավոր է նաև ս. Նշան վանքի մասնամասն նկարագրությունը, որ կցված է «Պատմությանը» և լայն պատկերացում է տալիս վանքի տնտեսական գործունեության մասին: Ուշադրության արժանի են տարբեր դարերում կյանքի թանկացման, սովի ու հրդեհների մասին «Պատմության» տարբեր էջերում գրանցված փաստերը:

Սեբաստիայի տնտեսական կյանքի պատկերը առավել լրիվ է դարձնում քաղաքի եկեղեցական տարբեր ծուխերում 1827 թ. ընդգրկված հայ բնակչության ցուցակը, որը կցված է «Պատմության» երուսաղեմյան տարբերակին: Թե ո՛վ է ցուցակ կազմողը՝ տվյալ դեպքում այնքան էլ կարևոր չէ. հետաքրքրականն այն է, որ այդ ցուցակից հայտնի է

դառնում, թե 18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի սկզբներին ինչպիսի արհեստներով է զբաղվել քաղաքի հայ բնակչությունը և մոտավորապես որքան է եղել նրա թիվը: Այս առումով ցուցակի ժողովրդագրական (դեմոգրաֆիական) քննությունը կարող է նպաստել արևմտահայ պատմության ուսումնասիրմանը:

Դեռևս անցյալ դարի կեսերից սկսած առանձին հետազոտողներ՝ Ղ. Փիրղալեմյանը, Պ. Նաթանյանը, Ա. Աղեքսանդրյանը, Կ. Գաբիկյանը, Թ. Գուշակյանը և ուրիշներ, ծանոթանալով Սեբաստացու «Պատմության» ձեռագիր օրինակին, բարձր են գնահատել նրա աղբյուրագիտական արժեքը: Նրանցից ոմանք այն հրապարակելու փորձեր են արել, սակայն այս կամ այն պատճառով դա չի հաջողվել: Միայն Գյուտ քահ. Աղանյանցը Փիրղալեմյանի հատվածական ընդօրինակությունը կարողացել է 1912 թ. հրապարակել իր «Դիվան հայոց պատմության» ժողովածուի 10-րդ դրքում:

Երկու տարի առաջ տողերիս հեղինակին հայտնի դարձավ, որ Երուսաղեմի ս. Հակոբյանց վանքի և Վենետիկի Մխիթարյանների մատենադարաններում պահվում են «Սեբաստիայի պատմության» տարբեր ընդօրինակություններ, որոնց մանրաժապավենները սիրահոժար տրամադրվեցին մեզ: Ի հավելումն սրանց, վերջերս պրոֆ. Գառնիկ Ստեփանյանը Մաշտոցի անվան Մատենադարանին նվիրեց այդ «Պատմության» մի այլ ընդօրինակությունը: Այս ամենը հնարավորություն են ստեղծել հրատարակության պատրաստելու Փոքր Հայքի երբեմնի մայրաքաղաքի՝ Սեբաստիայի 800-ամյա պատմությանը նվիրված՝ Հովհաննես Սեբաստացու պատմագրական երկը:

ԵՂԻԱ ԿԱՐՆԵՑԻ[1]

Զափազանց բարդ եւ խոչ ու խութերով լի կյանք է ունեցել 18-րդ դարի առաջին կեսի վաճառական ու դիվանագետ, միաժամանակ բանահավաք ու բառարանագիր Եղիա Կարնեցին:

Մոսկվայում, Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվում պահվող Կարնեցու գրական ու նամակագրական ժառանգությունը, հաշվեմատյաններն ու առևտրական գործարքների վերաբերյալ փաստաթղթերը, Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանի սեփականությունը հանդիսացող նրա ընդարձակ հուշամատյանը հնարավորություն են տալիս ամբողջական գաղափար կազմելու ոչ միայն ուշ միջնադարի այս հետաքրքիր ներկայացուցչի գործունեության մասին, այլև վերահասու լինելու Միջին ու Մերձավոր արևելքի մի շարք երկրների ժամանակի տնտեսական, հասարակական ու քաղաքական կյանքի իրադարձություններին:

Եղիան ծնվել է Կարինում 1689 թ. խոտրջուրցի վաճառական Մուշեղանց Աստվածատուրի ընտանիքում: Գրաճանաչություն ձեռք բերելուց հետո հոր խորհրդով իր ուսումը նա շարունակել է «ամենայն վարուք բարեգործ և բարեկենցաղ և կատարեալ ամենայն գրոց» գրավաճառ ու կազմարար տիրացու Գրիգորի մոտ: 1705 թ. հոր անակնկալ մահվանից հետո Եղիայի խնամակալությունը ստանձնել է հորեղբոր որդին՝ Ղազար Մարգարյանը: Սա, առանց հապաղելու, Եղիայի հետագա ուսումնառությունը վստահում է Կարին հաստատված հայտնի աստվածաբան պատրի Պետրոս Ռիքարտին, որը ուշիմ և ընդունակ պատանուն կարճ ժամանակում կարողանում է դավանափոխ անել: Եղիան դառնում է կաթոլիկ և զբաղվում է քարոզչությամբ: Պատրի Ռիքարտը նրան կարգում է դպրապետ: Այս ընթացքում Եղիան գրում է կրոնադավանաբանական մի շարք շարադրություններ: Շուտով Եղիան ստիպված է լինում թողնել իր սիրած գործը և Ղազարի հետ դուրս գալ վաճառականության:

Ամբողջ մի տասնամյակ նա շրջում է Ռուսաստանում, Պարսկաստանում, Օսմանյան կայսրության տարբեր վայրերում, լինում է Մոսկվայում ու Աստրախանում, Թավրիզում ու Սպահանում, Բաղդադում ու Հալեպում, Իզմիրում ու Կոստանդնուպոլսում և այլ վաճառաշատ քաղաքներում:

Այդ տարիներին Կարնեցին կապեր է հաստատում Իսրայել Օրու (վխճ. 1711), հայ ազատագրական պայքարի այս ռահվիրայի, պարսկական դեսպանության չքախմբի երբեմնի պաշտոնյա Ֆրանսիացի Պոռեկարի (Բերգարի) հետ, իսկ 1717 թ. սկզբներից ծառայության է ընդունվում նրա տնօրինության տակ գտնվող Արևելյան հնդկական առևտրական ընկերության Թավրիզի մասնաճյուղում:

Թավրիզում պաշտոնավարելու տարիներին Եղիա Կարնեցին իր գործարարությամբ և լեզուների իմացությամբ մեծ հեղինակություն է ձեռք բերում տեղական իշխանությունների մոտ և ճանապարհ է հարթում դեպի Շահ Թահմազի արքունիք: Այդ ժամանակներում Թահմազը խուսյս էր տվել պարսից մայրաքաղաք Սպահանը գրաված

---

[1] Հրապարակվել է «Սովետական Հայաստան» օրաթերթում, 1983, № 1, էջ 28-29:

աֆղաններից և, հաստատվելով Ատրպատականում, իրեն շահ էր հայտարարել: Շահ Թահմազի հրամանով 1723 թ. Եղիան դիվանագիտական առաքելության է մեկնում դեպի Եվրոպա՝ իշխանության բարձրանալու մասին նրա ուղերձները Կարլոս 6-րդին, Լյուդովիկոս 15-րդին և Հռոմի պապին տանելու համար:

Եղիա Կարնեցին տարիներ շարունակ իր վաճառականական ուղևորությունների ընթացքում ամենուր սերտ կապեր է հաստատել տեղի կաթոլիկ՝ ճիզվիտ ու քափուչին հայրերի հետ և իր հնարավոր բոլոր միջոցներով աշխատել է սատար լինել նրանց գործունեությանը՝ պատրանք ունենալով, որ թուրք-պարսկական դարավոր լծից հայ ժողովրդի ազատագրումը հնարավոր է միայն քրիստոնյա Եվրոպայի օգնությամբ: Իսկ գավառացի պարզամիտ երիտասարդի պատկերացմամբ եվրոպական քրիստոնյա աշխարհը միասնական շահերով ապրող մի ամբողջություն էր, որ պետք է մտահոգված լիներ մահմեդական լծից Արևելքի քրիստոնյաների փրկությամբ: Այս մոլորություններից Կարնեցին շատ ուշ է ազատագրվում:

Հայ ժողովրդի ազատագրական պայքարին Եղիա Կարնեցու մասնակցության մասին որոշակի փաստեր պակասում են, բայց ռուսական իր կողմնորոշման վերաբերյալ նա հստակորեն խոսում է իր հուշամատյանում: Կարնեցին իր գլխավորած պարսկական պատվիրակությունը Եվրոպա է առաջնորդում Ռուսաստանի վրայով՝ հույս ունենալով այնտեղ հանդիպել Պետրոս Առաջինին և Հայաստանի ազատագրման վերաբերյալ իր ծրագրերը ներկայացնել նրան: Սակայն Պարսկաստան ու Ռուսաստան հաստատված կաթոլիկ քարոզիչները, որոնք ակնդետ ու քայլ առ քայլ հետևում էին արևելյան երկրների նկատմամբ Պետրոսի վարած քաղաքականությանը և ամեն ձևով աշխատում էին խոչընդոտներ հարուցել նրա առջև, տեղյակ լինելով Եղիայի նպատակներին, պատվիրակության անդամ լեհ քափուչին պատրի Հովհաննեսի խարդավանքներով, Ռուսաստան հասնելուն պես, Եղիային զրպարտում են որպես պարսկական լրտեսի և ձերբակալել են տալիս:

Եղիա Կարնեցին տասներեք երկար տարիներ տառապում է բանտերում ու աքսորում և, ի վերջո, երբ անմեղությունը հաստատվում է և ազատվում է կալանքից, մեկնում է Եվրոպա, հույս ունենալով իր երբեմնի բարեկամների միջոցով վերստանալ կորցրած կարողությունը, դիրքն ու աշխատանքը: Եվրոպայում նա լինում է Լեհաստանում, Դանիայում, Հոլանդիայում, Ֆրանսիայում ու Իտալիայում, շատ դռներ է նա թակում, շատ իշխանավորների մոտ է լինում, փորձում է հանդիպել Արևելյան հնդկական առևտրական ընկերության ղեկավարներին, ֆրանսիական պետական գործիչներին, Հռոմի պապին, պատմել տարիների իր անկաշառ ծառայությունների, նրանց պատճառով կրած զրկանքների մասին, սակայն նրան ըստ ամենայնի ոչ ոք չի ընդունում, ոչ ոք չի ունկնդրում: Ճարահատյալ նա նորից բռնում է Պարսկաստանի ճամփան, որտեղ իշխանությունը անցել էր արդեն Նադիր շահին, իսկ Շահ Թահմազի մտերիմներն ու գործակիցները հետապնդվում էին: Նրան թշնամաբար են ընդունում նաև Պարսկաստանի տարբեր քաղաքներում ապրող կաթոլիկ հայրերը: Եղիան մատնվում է անել վիճակի, հուսահատ ու ընկճված, կորցրած և՛ դիրք, և՛ կարողություն, որոշում է վերադառնալ իր ծննդավայրը՝ Կարին:

Երբ 1743 թվականին Եղիան ոտք է դնում հայրենի քաղաքը, արդեն մահացած են լինում մայրը, եղբայրները: Թափառական Կարնեցին օթևանում է իր հոգևոր քրոջ մոտ:

Կաթոլիկ կղերը այստեղ ևս նրան հանգիստ չի տալիս: Ջախղակ վաճառականն ու դիվանագետը ստիպված կարինից ևս խույս է տալիս՝ փոխադրվելով պապենական գյուղ՝ Խոտրջուր, որտեղ և 1747 թվականին ձեռնամուխ է լինում իր կյանքի հուշերի շարադրմանը:

Եղիա Կարնեցին դեռևս պատանեկան տարիներից գիր ու գրականության նկատմամբ մեծ հակումներ է ունեցել, հրապուրվել է լեզուների ուսումնասիրությամբ, ազատ ժամանակը տրամադրել է ժողովրդական բանահյուսության նմուշների գրառմանը:

1717 թ. հետո, երբ Կարնեցին հաստատվում է Թավրիզում, ավելի հետևողականորեն է զբաղվում գրական աշխատանքով. նա ձեռնամուխ է լինում թուրքերեն-հայերեն բառարան կազմելուն, գրի է առնում ժողովրդական բանահյուսության առանձին արժեքավոր նմուշներ՝ վիպական զրույցներ, առակներ, տաղեր, կազմում է առօրյա կարիքների համար անհրաժեշտ գիտելիքների ու ժամանցային բնույթի հնարամիտ թվաբանական խնդիրների ժողովածու:

Եղիա Կարնեցու գրական ժառանգության մեջ իր ուրույն տեղն ունի նրա կյանքի հուշագրությունը՝ շարադրված 1747-1749 թվականներին, որ խորագրված է «Պատմութիւն իմն կարճառօտ ի վերա անձկութեան Եղիայիս Աստուածատուրեան Մուշեղանց, զոր կրեցի ի ազգէն Ֆռանկաց, մանաւանդ ի խաբեբայ կրոնաւորաց նոցա և ի սուտ եկեղեցւոյ եւ բարեկամ կոչեցելոցս»:

«Պատմության» մեջ Եղիան հետադարձ հայացքով վերագնահատում է անցյալի իր ողջ գործունեությունը, խարազանում իր սխալները՝ իր տառապանքների ու զրկանքների հիմնական մեղավորներին համարելով ֆրանկ հոգևորականներին և անձամբ իրեն, որ կուրորեն հրապուրված է եղել նրանց գաղափարներով՝ անսալով թե՛ իր բանականության ձայնին և թե՛ բարեկամների ահազանգումներին:

Օժտված լինելով վիպելու անժխտելի ձիրքով, իր կյանքի ողիսականը Եղիա Կարնեցին շարադրել է աշխույժ ու կենդանի լեզվով՝ համեմված ժողովրդական բառ ու բանով, առակներով ու ասացվածքներով: Դեպքերի նկարագրությունները հաճախ նրա մոտ վերաճում են փոքրիկ զրույցների ու ակնարկների, իսկ պատմական իրական գործող անձինք՝ ընդհանրացված գեղարվեստական կերպարների:

Վերջին մի քանի տասնամյակներում Եղիայի ժառանգությամբ զբաղվել են Համազասպ Ոսկյանը, պրոֆեսորներ Աշոտ Հովհաննիսյանը, Աշոտ Աբրահամյանը, Մխրալի Սեիդովը, բանասերներ Աքբար Երևանլին ու Բախտիար Հովակիմյանը:

Ստորև հրապարակվող առակները քաղված են Կարնեցու «Պատմությունից», որոնցով հեղինակը ցանկացել է բացահայտել իր հակառակորդների բարոյական կերպարը, նրանց ընչաքաղցությունը, անձնասիրությունն ու մարդատյացությունը: Այս առակները հիմնականում եվրոպական ծագում ունեն. առաջին երկուսը Եղիան լսել է վերոհիշյալ ֆրանսիացի Պոռեկարից, իսկ մյուս երկուսը թերևս գրական հիմք ունեն:

ԵՍԱՄՈԼ ԿՐՈՆԱՎՈՐԸ

Երկու կրոնավոր ճանապարհ գնալիս թելից կախված մի գունդ տեսան: Կրոնավորներից մեկը ցանկացավ թելը կտրել: Տեղում գտնվող մի անցվոր դիմեց նրան.

– Այդ ի՞նչ ես անում:

– Ուզում եմ թելը կտրել, – պատասխանեց կրոնավորը:

– Իսկ դու գիտե՞ս, որ աշխարհը այդ թելից է կախված: Եթե կտրես՝ ողջ աշխարհը կկորչի, – ասաց անցվորը:

– Իմ ի՞նչ փույթն է, թե աշխարհը կկորչի, – պատասխանեց կրոնավորը: -Ես այս թելի կարիքն ունեմ, պետք է հագուստ կարեմ:

ՍՈՎԱԾ ԱՐՋԸ

Արջը սովում էր և ուտելիք չէր գտնում, մտածեց իր զավակին ուտել, բայց ինչպե՞ս:

– Ինձ կմեղադրեն, թե՝ իր զավակին կերավ:

Այսպես խորհեց և իր քոթոթին թավալեցրեց տղմի մեջ, այլանդակեց ու կերպարանափոխեց, ապա նայեց նրան ու ասաց.

– Ո՞վ է սա:

Դարձավ ինքն իրեն, պատասխանեց.

– Քո զավակն է:

Արջը երկար նայեց իր քոթոթին և ասաց.

– Քավ լիցի: Սա ոչնչով ինձ նման չէ:

Այս ասելով, նա սկսեց քոթոթին պատառոտել:

ԳՈՐՑՆ ՈՒ ԿԱՐԻՃԸ

Կարիճը եղբայրացավ գորտի հետ: Մի օր նա եկավ լճի ափ՝ իր եղբորը տեսության: Շատ խոսեցին, թե քիչ կարիճը դարձավ գորտին, թե՝

– Ցանկանում եմ լճի վրա զբոսնել:

Գորտը նրան առավ չալակը և մտավ ջուրը: Լճի վրա կարիճն ասաց գորտին.

– Եղբա՛յր, ուզում եմ քեզ խայթել:

– Ինչպե՞ս, – պատասխանեց գորտը, – չէ՞ որ ինձ հետ եղբայրացել ես, խոստացել ես բարեկամ լինել, քո դեմ ի՞նչ եմ արել, ընդհակառակը՝ դեռ քեզ չալակս եմ առել ու բերել զբոսանքի: Սա է՞ բարության վարձը:

– Իսկապես որ քեզ հետ եղբայրացել եմ, և դու ինձ ոչ մի վատ բան չես արել, բայց բնությունս այնպես է , որ մինչև չխայթեմ՝ ապրել չեմ կարող:

Այս լսեց թե չէ, գորտը սահեց կարիճի տակից և լողալով հեռացավ. կարիճը խեղդվեց:

ՃԳՆԱՎՈՐ ՄՈՒԿԸ

Մուկը չրջում էր չտեմարանում, որտեղ արճճե թիթեղով պատած բազմաթիվ գլուխ պանիրներ կային: Մուկը գգաց, որ այստեղ իր ապրուստի համար ինչ-որ բան կա: Այն-

քան այսկողմ ու այնկողմ ընկավ, մինչև որ փաթեթը թուլլ մի գլուխ պանիր գտավ: Շատ չարչարվելուց հետո գլուխը ներս մտցրեց. այսքան ուտելիքը բավ էր մինչև իր կյանքի վերջը: Ուրախացավ, կերավ, հագեցավ և ասաց.

— Սրանից ավելի էլ ի՞նչ է պետք: Կբնակվեմ այստեղ և ուրախ ու երջանիկ կապրեմ: — Փոքր-ինչ մտածելուց հետո դարձյալ ինքն իրեն ասաց, — թե որ հիմի այստեղ մնամ, ազգականներս կսկսեն ինձ որոնել, տեղս կգտնեն և ընկեր կգառնան այս բարիքին: Գնամ նախ հրաժարվեմ նրանցից և ապա գամ անհոգ բնակվեմ այստեղ:

Մուկը գնաց իր ազգականների մոտ, կանչեց նրանց բոլորին և ասաց.

— Որոշել եմ աշխարհից հրաժարվել, քաշվել մի վանք և կրոնավոր դառնալ:

Ազգական մկները, լալով ու սգալով, բերին նրան գլուխ պանիրների մոտ՝ համոզված, որ դրանք քարի բեկորներ են: Ողբ ու կոծից հետո ճգնավորը մտավ անցքի մեջ, իսկ ազգականները հրաժեշտ տալով, հեռացան:

Անցան բազում օրեր: Մի որսորդ կատու լույս ընկավ և սկսեց ոչնչացնել մկների ցեղը: Կատվի պատժից ազատվելու համար մկները հավաքվեցին խորհրդի: Երբ ոչ մի ճար չգտան, ասացին.

— Գնանք մեր պապի մոտ և նրանից մի հնար խնդրենք. մեր մեջ նա է ամենափորձվածը:

Գնացին կանգնեցին անցքի մոտ ու ճայնեցին: Մուկը լսեց՝ վախեցավ. չլինի թե մեկն ու մեկը ներս ընկնի և տեսնի այս վանքի բարիքը: Գլուխը անցքից հանեց և նվաղած ճայնով, իբր քաղցից ու ծարավից թուլացած, հարցրեց.

— Ի՞նչ է պատահել, ինչո՞ւ եք եկել:

Մկները աղմկեցին.

— Մեռնում ենք սովից: Կատվի ահից չենք կարողանում դուրս գալ և ուտելիք գտնել:

— Ես աշխարհից հրաժարվեցի, որ նման գործերի չխառնվեմ: Գնացե՛ք, դուք գիտեք ձեր անելիքը:

— Թե չես ուզում մեզ օգնել, գոնե քեզ մոտ մի տեղ տուր, գանք քեզ հետ միասին ճգնենք:

— Հեռացե՛ք, այստեղ բավարար տեղ չկա: Թե ցանկանում եք ճգնավոր դառնալ, ահա՛ մտե՛ք այս քարերի մեջ:

ԵՂԻԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԻ (ԿԱՐՆԵՑՈՒ) ԳՐԱԴԱՐԱՆԸ[!]

Հայկական վանքերին ու եկեղեցիներին առընթեր գոյություն ունեցող մեծ ու փոքր գրատների, ինչպես և մասնավոր անձանց սեփականությունը հանդիսացող գրականության ցուցակներ ու ցանկեր վաղ ժամանակներից մեզ չեն հասել: Մաշտոցի անվան Մատենադարանի հայերեն ձեռագրերի հարուստ հավաքածոներում գրանցված գրացուցակներից հնագույնը 1411 թվականից է, որտեղ հիշատակված են սբ. Ստեփանոս վանքի գրչագիր մատյանները[1]: Առավել սուղ են մինչև XIX դ. անհատական գրադարաններում պահվող գրականության վերաբերյալ տեղեկությունները: Իհարկե, թերթելով հայ հին ու միջնադարյան մատենագիրների երկերը, հնարավոր է վերականգնել նրանց օգտագործած առանձին աղբյուրներ, սակայն որոշակիորեն մեզ հայտնի չէ դրանցից դուրս նրանց ընթերցանության առարկա հանդիսացած գրական ու գիտական այլ գրքերի բնույթը:

Այս առումով ուշադրության է արժանի Եղիա Մուշեղյանի (1689-1750[c]) գրադարանի գրքերի և ձեռագիր մատյանների ցուցակը, որը նրա գրական ու նամակագրական ժառանգության և առևտրական գործարքների փաստաթղթերի հետ մեկտեղ պահվում է Մոսկվայում՝ Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվում[2]:

Այս արխիվում պահվող Եղիա Մուշեղյանի անձնական գործի մասին առաջին անգամ համառոտ տեղեկություններ են հաղորդված 1833 թ. Մոսկվայում հրատարակված «Հայ ժողովրդի պատմության ուսումնասիրությանը վերաբերող ակտերի ժողովածուի» առաջին մասում[3]: Եղիայի դիվանի նյութերի փաստացի օգտագործումը սկսվել է մեր դարի 20-ական թվականներից: Պատմաբան Աշոտ Հովհաննիսյանը առաջինն էր, որ 1921 թ. այդ դիվանից նյութեր է հրապարակում իր «Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը» աշխատության մեջ[4]: Խոսելով Եղիա Մուշեղյանի գրագրությունների մասին, Ա. Հովհաննիսյանը ավելի ուշ, 1959 թ., գրել է, որ դրանք «պարունակում են փոթորկահույզ այդ ժամանակվա Իրանի տնտեսական ու քաղաքական պատմությունը լուսաբանող հարուստ և անգնահատելի նյութեր»[5]: Հաջորդը Հ. Ոսկյանն էր, որ 1927 թ. «Հանդես ամսօրյայում» առանձին հատվածներ է հրապարակում Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանում պահվող Մուշեղյանի հուշամատյանից՝ «Պատմութիւն իմն կարճառօտ ի վերայ անձկութեանց Եղիայիս Աստուածատուրեան Մուշեղանց, զորս կրե-

---

[!] Տե՛ս «Լրաբեր հասարակական գիտությունների», 1983, № 1, էջ 61-74:

1 Մատենադարանում պահվող գրացուցակների ձեռագրահամարները տե՛ս *«Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվամբ Մատենադարանի»*, կազմեցին Օ. Եգանյան, Ա. Ջեյթունյան, Փ. Անթաբյան, հ. Ա, Երևան, 1965, էջ 1408, հ. Բ, Երևան, 1970, էջ 1208: Նմանատիպ ցուցակներից մեկը հրապարակել է Ս. Տեր-Հակոբյանը՝ *«Վարդանայ վարդապետի Բաղիշեցւոյ «Յուցակ գրոց Ամրդօլու վանուց»* («Արարատ», 1903, էջ 176-189):

2 Историко-дипломатическое управление МИД СССР, Архив внешней политики России (այսուհետև՝ АВПР), фонд Сношения России с Арменией (այսուհետև՝ СРСА), 1724, «А», опись 100/1.

3 *«Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа»*, часть I, М., 1833, с. 363.

4 **Ա. Գ. Հովհաննիսյան**, *Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը*, Էջմիածին, 1921, հավելված:

5 **Ա. Գ. Հովհաննիսյան**, *Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության*, գիրք 2-րդ, Երևան, 1959, էջ 612:

ցի ի ազգէն Փռանկաց, մանաւանդ ի խաբեբայ կրօնաւորացն նոցա և ի սուտ եխպայրց և բարեկամ կոչեցելոց»[1] (համառոտության համար այսուհետև Եղիայի պատմությունը պայմանականորեն անվանում ենք «Հուշամատյան»): Այս ձեռագրի նկարագրությունը 1963 թ. Ոսկյանը տվել է Վիեննայի Մխիթարյան մատենադարանի ձեռագրացուցակում[2]: Եղիա Մուշեղյանի ժառանգության ուսումնասիրման բնագավառում կարևոր ավանդ ունի պրոֆ. Աչոտ Աբրահամյանը, որը 1937 թ. Դ. Գաբրիելյանի հետ մեկտեղ սկսել են հետազոտել Մոսկվայում պահվող Մուշեղյանի արխիվը: 1953 թվականից Ա. Աբրահամյանը իր ուսումնասիրություններում և հրապարակումներում գիտական շրջանառության մեջ է դրել Եղիայի դիվանի նյութերը, գրել է համառոտ կենսագրությունը, որը նրա նամականիի հետ մեկտեղ լույս է ընծայել 1968 թ.՝ «Եղիա Կարնեցու դիվանը» խորագիրը կրող հատորում[3]: Եղիայի դիվանից հրապարակումներ են կատարել աղբբեջանցի բանասերներ Միրալի Սեիդովն ու Աքպեր Երևանլին, նրա ժառանգությանն են անդրադարձել նաև Համիդ Արասլին և Բախտիար Հովակիմյանը[4]:

Եղիան ծնվել է Կարինում, 1689 թ., խոտրջուրցի վաճառական Մուշեղանց Աստվածատուրի ընտանիքում: Տիրացու Մինասի մոտ գրաճանաչությունն ձեռք բերելուց հետո իր ուսումը նա շարունակել է «ամենայն վարուք բարեգործ և բարեկենցաղ և կատարեալ ամենայն գրոց» գրավաճառ ու կազմարար տիրացու Գրիգորի մոտ:

XVIII դ. առաջին տասնամյակներում Կարինում և ընդհանրապես Մերձավոր ու Միջին Արևելքում գործող կաթոլիկ հոգևորականները իրենց գիտելիքներով, ժողովրդի նկատմամբ առերևույթ ցուցաբերվող ուշադրությամբ, բարեպաշտությամբ ընդգծված կիրթ ու քաղաքավարի վերաբերմունքով կարողացել էին թուրք-պարսկական լծի տակ հեծող, լուսավորության կարոտ հայ բնակչության մեջ որոշակի հեղինակություն ձեռք բերել: Դրանով պիտի բացատրել այն հանգամանքը, որ առանձին հայ լուսավորչական ընտանիքներ իրենց զավակների կրթությունը վստահում էին նրանց: Այս նույն ուղիով է ընթացել Եղիայի հորեղբոր որդին՝ Ղազար Մարգարյանը, որը Եղիայի հոր՝ Աստվածատուրի անժամանակ մահից հետո (1705) ստանձնել էր նրա խնամակալությունը: Մարգարյանը Եղիային ուսման է հանձնել կարին հաստատված անվանի աստվածաբան Պետրոս Ռիքարտին, որը ուշիմ ու ընդունակ պատանուն կարողացել է շատ հեշտությամբ դավանափոխ անել. Եղիան դարձել է մոլեռանդ կաթոլիկ և զբաղվել քարոզչությամբ: Պետրոս Ռիքարտը նրան կարգել է դպրապետ: Սակայն կարիքը ստիպել է Եղիային թողնել քարոզչական աշխատանքը և Ղազարի հետ դուրս գալ վաճառականության:

---

1 **Հ. Հ. Ոսկյան**, *Եղիա Ա. Մուշեղյան և իր գրական արտադրությունները* («Հանդես ամսօրյա», 1927, էջ 367-376):

2 **Հ. Հ. Ոսկյան**, *Յուցակ հայ ձեռագրաց Մխիթարյան մատենադարանին ի Վիեննա*, հ. Բ, 1963, էջ 567:

3 *«Եղիա կարնեցու Դիվանը»*, առաջաբանը և ծանոթագրությունները պրոֆ. Ա. Գ. Աբրահամյանի, Երևան, 1968:

4 "Әрмэни шаири Миранын Азәрбаичан дилиндә шеирләри" ("Азәрб. ССР ЭА Низами адына әдәбийят вә дил институтунун әсәрләри", Бакы, 1956, IX, сәh. 172-194): **Ա. Երևանլի**, *Եղիա Մուշեղյանի գրական ժառանգությունից* («Պատմա-բանասիրական հանդես», 1972, № 1, էջ 103-114), **Н. Араслы**, *XVII-XVIII әср Азәрбайчан әдәбийяты тарихи*, Бакы, 1956, сәh.182-183, **Բ. Հովակիմյան**, *17-րդ դարի անհայտ բանաստեղծը* (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1957, № 6, էջ 77-84):

Եղիայի դավանափոխության և ողջ հոգով կաթոլիկներին հարելու հողը նախապատրաստվել էր դեռևս հոր կենդանության օրոք՝ կազմարար Գրիգորի մոտ սովորելիս: Ինչպես ինքը՝ Եղիան է պատմում իր կյանքի վերջին տարիներին գրած «Հուշամատյանում»[1], նա Գրիգոր վարժապետից հաճախ էր լսել, որ «մեր ազգն ի մէջ մոլուԹեան և սխալանաց են. ճշմարտուԹիւն է ի մէջ Ֆռանկաց» (էջ 6ա), իսկ հայրը, որ Ֆռանկների հետ առևտրական կապեր է ունեցել, միշտ գովաբանել է նրանց, ասելով, որ «ո՛չ խոսին սուտ, ո՛չ երդնուն, ո՛չ խաբեն»: Ի հավելումն սրանց, Արևելքի չուկաներում մեծ հռչակ ձեռք բերած եվրոպական զանազան ապրանքները շլացրել էին միամիտ պատանուն, որը, տեսնելով այդ «խտակ, հաստատ, գեղեցիկ, անհասանելի, հնարագործ և հնարագիւտ» իրերը, եզրակացրել էր, Թե եԹե աստված նրանց հետ չլիներ, «ոչ տայր նոցայ այնքան շնոր, որ այսքան զարմանալի իրս յելանէ ի ձեռաց նոցայ» (էջ 7ա): Այս բոլորը, ինքնաբերաբար, խորը կնիք էին դրել դեռատի Եղիայի հոգում, և նա երազներ էր փայփայել՝ գնալ «Ֆռանկների աշխարհը», շարունակել իր կրթությունը: Այդ տարիների իր տրամադրությունների մասին Եղիան «Հուշամատյանում» գրել է, որ նա երազել է թռչնի թևեր ունենալ, «զի թռուցեալ գնայի անդ, բնակէյի ի մէջ ճշմարտուԹեան, յուսանէյի ամենայն գիտուԹիւն, լնանէյի ամենայն շնորհիւ, ապրէյի ապահով՝ ի վեր, քան զամենայն» (էջ 7ա):

1705-1717 թթ. Եղիան շրջել է Ռուսաստանում, Պարսկաստանում, Օսմանյան կայսրության մեջ. եղել է Շամախիում, Մոսկվայում, Աստրախանում, Թավրիզում, Սպահանում, Բաղդադում, Հալեպում, Իզմիրում, Կոստանդնուպոլսում և այլ վաճառաշատ քաղաքներում: Այդ տարիներին է, որ նա ծանոթանում և կապեր է հաստատում Իսրայել Օրու (վխճ. 1711 թ.) պարսկական դեսպանության երբեմնի պաշտոնյա ֆրանսիացի Պոռեկարի (Բերգարի) հետ, իսկ 1717 թ. սկզբներից ծառայության է ընդունվում վերջինիս տնօրինության տակ գտնվող Արևելահնդկական ընկերության Թավրիզի մասնաճյուղում:

1721 թ. ապրիլի 27-ին Թավրիզում մեծ երկրաշարժ է տեղի ունենում, հազարավոր մարդիկ են մնում փլատակների տակ, ահռելի է լինում նաև նյութական վնասը, քաղաքի բնակիչները սարսափահար պատսպարվում են մերձակա բնակավայրերում: Թավրիզից չտապ հեռանում են նաև Արևելահնդկական ընկերության օտարերկրյա ծառայողները, ինչպես նաև կաթոլիկ հայրերը: Եղիան, չնայած իր գործընկերների հորդորներին, մնում է Թավրիզում և աշխատում է ընկերության հարստությունը և իր ունեցվածքը դուրս բերել փլատակների տակից: Եղիայի համար սկսվում են ծանր ժամանակներ: Թավրիզում ընկերության առևտրական գործունեությունը փաստորեն կանգ է առնում, Պոռեկարը փոխադրվում է Սպահան, այնուհետև Հալեպ և նամակներով Եղիայից պահանջում է պարտատերերից հավաքել ընկերության ստանալիքները և ուղարկել իրեն, իսկ մյուս կողմից Եղիային պահանջներ են ներկայացնում ընկերության պարտապանները:

Ըստ երևույթին այս ժամանակներում էլ Եղիան ծրագրեր է փայփայում իրականացնելու պատանեկան տարիների իր երազանքը՝ գնալ Եվրոպա, ազատվել բոլոր մտա-

1 «Պատմութիւն իմն կարճառօտ…». տե՛ս Վիեննայի Մխիթարյան մատենադարան, ձեռ. № 980: Այս ձեռագրից բերված մեջբերումների ուղղագրությունը պահպանվում է նույնությամբ, իսկ վերջում տրվում է համապատասխան էջահամարը: Ա. Աբրահամյանը Եղիա Կարնեցու «Դիվանի» առաջաբանում հատուկ նպատակով այս հուշերը անվանել է «Անձնկություն»:

հոգուբյուններից և զբաղվել իր սիրած գրական աշխատանքներով: Եվ ահա, 1722 թ., երբ նա կարճ ժամանակով գտնվում էր Սպահանում, Շահ Սուլթան Հոսեյնը դոմինիկյան միաբանության անդամ պատրի Թադեոսին հանձնարարում է իր ուղերձները տանել եվրոպական պետությունների ղեկավարներին: Իմանալով այդ, Եղիան թախանձում է պատրի Թադեոսին ուղեկցել նրան և «մտանել առ այն արքայութիւնն», որին տենչացել է «ի մանկութենէ» (էջ 41ա), սակայն վերջինս մերժում է նրան և կշտամբում այդպիսի հավակնության համար, որովհետև պատրին ցանկանում էր միայնակ ստանալ «չնորհն Թագաւորաց» (էջ 41բ):

Վաճառականությամբ զբաղվելու տասներկու երկար տարիների ընթացքում, ինչպես նաև Արևելահնդկական ընկերության մեջ ծառայելու ժամանակ Եղիան իր կապերը չէր խզել կաթոլիկ շրջանների հետ, անգամ Պոռեկարի զգուշացումից հետո էլ, թե՝ «Զի՞նչ է այդ քո արարն, խելքդ դրել ես ընդ նոսայ, հեռու կաց ի նոցանէ, որ ոչ կորնչիս» (էջ 26բ), նա չարունակում է կույր հավատք ունենալ դեպի պապականությունը և նրա ներկայացուցիչները, որովհետև ինչպես հետագայում ինքն իսկ խոստովանում է, նա հավատացած է եղել, «թէ փափն յում որ կամի առաքել արքայութիւն՝ յառաքէ, և յում որ կամի առաքել դժոխս՝ առաքէ: Ոչ թէ միայն հաւատայի, – չարունակում է Եղիան, – թէ միայն փափն ունի կարողութիւն զայս առնել, այլև ամենայն պատրիան նորայ՝ առաքեալքն ի նմանէ» և «վասն այնորիկ առժամայն կատարէյի զնոսայ թէ՛ հոգևոր և թէ՛ մարմնաւորաց իրաց, ոչ քննէյի լաւն և զվատն, օգուտն և զվնասն, եթէ ասէյին խաւարին լոյս, լուսին՝ խաւար, այնպէս հաւատայի զինչ ասացից առաւել կարգաւորս...» (էջ 25բ-26ա): Եղիան, ուր էլ որ լիներ, աշխատում էր սերտ կապեր հաստատել տեղի կաթոլիկ հայրերի հետ և հնարավոր բոլոր միջոցներով, մինչև իսկ երբեմն իր կյանքն ու գույքը վտանգի ենթարկելով, սատար էր լինում նրանց գործունեությանը՝ պատրանք ունենալով, որ թուրք-պարսկական լծից հայ ժողովրդի ազատագրումը հնարավոր է միայն քրիստոնյա Եվրոպայի օգնությամբ: Իսկ պարզամիտ երիտասարդի պատկերացմամբ եվրոպական քրիստոնյա աշխարհը միասնական չահերով ապրող մի ամբողջություն էր, որ պետք է մտահոգված լիներ մահմեդական լծից Արևելքի քրիստոնյաների, այդ թվում և հայերի փրկությամբ. «Ես, – գրում է Եղիան իր կյանքի վերջին տարիներին, – միամիտ կարծէյի, թէ ամենից քրիստոնէյից թագաւորքն միաբանին վասն այս գործոցն օկտութեան, վասն ռուստի գալն ի վերայ պարսից» (228բ):

Այս մոլորություններից կարնեցին շատ ուշ է ձերբազատվում՝ տարիների դաժան փորձով աստիճանաբար հասկանալով Արևելքի նկատմամբ եվրոպական պետությունների գաղութակալական քաղաքականության բուն էությունը:

Թավրիզում պաշտոնավարելու տարիներին՝ 1717-1723 թթ. Եղիա Մուշեղյանը իր գործարարությամբ և լեզուների իմացությամբ մեծ հեղինակություն է ձեռք բերում տեղական իշխանությունների մոտ և ճանապարհ է հարթում դեպի Շահ Թահմազի արքունիքը: Այդ տարիներին պարսից Շահ Սուլթան Հոսեյնի որդի Թահմազը խուսյս էր տվել Սպահանը գրաված աֆղաններից և, իբրեն չահ հայտարարելով, ապաստանել էր Ատրպատականում: Շահ Թահմազը որոշում է իշխանության բարձրանալու մասին ուղերձներ ուղարկել Եվրոպա՝ Կարլոս VI-ին, Լյուդովիկոս XV-ին և Հռոմի պապին: Ուղերձները Եվրոպա տանելու համար կազմվում է հատուկ պատվիրակություն, որը պիտի գլխավո-

բեին Սեյիդ Համզե բեկը, քափուչին պատրի Հովհաննեսը և Եղիա Մուշեղյանը[1]: Ինչպես պարզվում է Եղիայի նամակներից ու իր «Հուշամատյանից», պատվիրակության փաստացի ղեկավարը ինքն է լինում, ուստի և Շահ Թահմազի հանճնարարությունը կատարելու համար որոշում է պարսկական պատվիրակությունը Եվրոպա առաջնորդել ոչ թե Թուրքիայի վրայով (պատճառաբանելով, որ ճանապարհները վտանգված են), այլ Ռուսաստանի: Այս դեպքում նա հոգու խորքում հույս էր փայփայում, որ Ռուսաստանում հնարավորություն կունենա հանդիպելու Պետրոս Առաջինին և նրան ներկայացնելու թուրք-պարսկական լծից հայ ժողովրդի ազատագրման իր ծրագրերը: Բայց թե Եղիան ի՛նչ ծրագրեր ուներ և ի՛նչ մասնակցություն է ունեցել ժամանակի հայ ազատագրական շարժումներին, առայժմ հայտնի չէ, միայն իր և, ընդհանրապես, հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման մասին նա արժեքավոր դրառումներ է կատարել հիշյալ «Հուշամատյանում». «Թէպէտ վաղուց գիտէյի, – գրում է Եղիան, – թէ Պետրոս թագաւորն գալոց է փրկել զազգն մեր, բայց առաչի անգամն, որ գնացի Շամախի [1705 թ.] և հաստատութեամբ լսեցի, թէ ամենևին ռուստ թագաւորն գալոց է առնուլ յերկիրն Պարսից, վասն փրկելոյ զմեզ, առժամայն ուխտ եդի յանձին իմոյ ասել ամենայն յաւուր հինկ հայր մեր և հինկ ողջոյն Մարիամ... այսու դիտավորութեամբ, թէ՝ Տէր Աստուա՛ծ, զմի ի տասանց կենացն իմոց հա՛տ յինէն և դի՛ր ի վերայ կենացն Պետրոս թագաւորին, Տէ՛ր, տո՛ւր նմա առաւել կարողութիւն, զօրութիւն, որ ամենայն յաջողութեամբ գայ և ազատէ զմեր ազգն» (էջ 226ա, 226բ), այնուհետև նա ավելացնում է. «էյի ազգաւ հայ և որ վաղուց գիտէյի այտ գործն, թէ ռուս թագաւորն կամի ազատել զազգն իմ տառապեալ...: Ոչ թէ միայն ես գիտէյի զայտ գործն, այլև ամենայն ազգն իմ, այր և կին, ծեր և տղայ, և ամենեքեան յայտնապէս խօսէյին և ոչ ի ծածուկ» (էջ 226բ, 227ա):

Եղիայի եվրոպական առաքելությունը տապալվում է Թավրիզ նստող քափուչին պատրի Բեռնարտոսի և պատվիրակության կազմի մեջ մտնող լեհ քափուչին պատրի Հովհաննեսի խարդավանքների հետևանքով. 1724 թ. կեսերին, երբ պատվիրակությունը հասնում է Ռուսաստան, Եղիան զրպարտվում է որպես պարսկական լրտես և ձերբակալվում: Տասներեք տարի բանտերում և աքսորում տառապելուց հետո, ի վերջո, հաստատվում է նրա անմեղությունը և, կալանքից ազատվելով, մեկնում է Եվրոպա, հույս ունենալով իր երբեմնի բարեկամների միջոցով վերստանալ կորցրած կարողությունը, դիրքն ու աշխատանքը:

Եղիան Ռուսաստանից անցնում է Լեհաստան, երկու տարի այնտեղ մնալուց հետո, Դանիայի և Հոլանդիայի վրայով գնում է Ֆրանսիա, այնուհետև՝ Իտալիա, շատ դռներ է թակում, շատ իշխանավորների մոտ լինում, փորձում է հանդիպել Արևելահնդկական ընկերության Փարիզի կենտրոնական վարչության պատասխանատու պաշտոնյաներին, ֆրանսիական պետական գործիչներին, Հռոմի պապին, պատմել տարիների իր անկաշառ ծառայությունների, նրանց պատճառով կրած զրկանքների մասին, սակայն նրան ոչ ոք ըստ ամենայնի չի ընդունում, ոչ ոք չի ունկնդրում, ընդհակառակը, խորհուրդ է տրվում վերադառնալ Պարսկաստան և տեղի միսիոներների միջնորդությամբ լուծել իր հարցերը:

1 Կարլոս VI-ին ուղղված պարսկերեն ուղերձի մի շատ լավ պատճենը պահվում է Եղիայի թղթերում (АВПР, ф. СРСА, 1724, «А», д. 15, л. 5), որը, հայերեն թարգմանությամբ հանդերձ, մտադիր ենք առաջիկայում հրատարակել:

Ճարահատյալ Եղիան նորից բռնում է Պարսկաստանի ճամփան, որտեղ, իշխանությունն արդեն անցել էր Նադիր շահին, իսկ Շահ Թահմազի մտերիմներն ու գործակիցները հետապնդվում էին: Եղիան, վերադառնալով Պարսկաստան, գնում է մինչև Մաշհադ քաղաքը Նադիր շահին հանդիպելու և պարսկական իշխանություններին պահ տված իր հարստությունը (չուրջ 500 թուման) նրանից ստանալու: Այդ ժամանակ Նադիր շահը դեռևս չէր վերադարձել հնդկական իր արշավանքներից: Բարեկամների խորհրդով կարնեցին հրաժարվում է Նադիրին հանդիպելու մտադրությունից և նորից փորձում է ապավինել Սպահանում ու Թավրիզում գտնվող կաթոլիկ պատրիներին, բայց նրանք ևս թշնամաբար են ընդունում նրան: Եղիան մատնվում է անել վիճակի: Հուսահատ ու ընկճված, կորցրած և՛ դիրք, և՛ կարողություն, նա որոշում է վերադառնալ իր ծննդավայրը՝ Կարին, որտեղ և վերջնականապես կապերը խզում է կաթոլիկների հետ:

Երբ 1743 թ. Եղիան ոտք է դնում հայրենի քաղաքը, արդեն մահացած են լինում մայրը, եղբայրները: Նա օթևանում է իր հոգևոր քրոջ մոտ: Կաթոլիկ կղերը այստեղ ևս նրան հանգիստ չի տալիս. հարազատներին գրգռում է նրա դեմ, բանսարկություններ է անում հայերի շրջանում՝ խոսք տարածելով, թե իբր նա է խանգարել ռուսների առաջխաղացմանը դեպի Հայաստան, մյուս կողմից՝ Պոռեկարի պարտքատերերը նրանից են պահանջում իրենց ստանալիքները, որովհետև Եղիան երիտասարդ տարիներին միամտություն էր ունեցել Պոռեկարի փոխարեն ինքը ստորագրել պարտամուրհակները: Այս բոլորը ստիպում են ձախողակ վաճառականին ու դիվանագետին Կարինից խույս տալ, այս անգամ արդեն փոխադրվել պապենական գյուղ՝ Խոտրջուր, որտեղ 1747-ին ձեռնամուխ է լինում իր հուշերի շարադրմանը:

Եղիա Կարնեցին դեռևս պատանեկան տարիներից գիր ու գրականության նկատմամբ մեծ հակումներ է ունեցել, հրապուրվել է լեզուների ուսումնասիրությամբ (սովորել է լատիներեն, ֆրանսերեն, մասամբ պարսկերեն, լեհերեն ու ռուսերեն, մայրենի լեզվի պես իմացել է թուրքերեն): 1717 թ. հետո, երբ նա հաստատվում է Թավրիզում, ավելի հետևողականորեն է սկսում զբաղվել գրականությամբ. ձեռնամուխ է լինում թուրքերեն (արևելյան) – հայերեն բառարանի կազմությանը, գրի է առնում հայ և աղրբեջանական բանահյուսության առանձին արժեքավոր նմուշներ՝ վիպական զրույցներ, առակներ, տաղեր, կազմում է առօրյա կարիքների համար անհրաժեշտ գիտելիքների և ժամանցային բնույթի հնարամիտ թվաբանական խնդիրների ժողովածու: Ուշադրության է արժանի նրա կազմած տաղարանը, որտեղ հավաքված նյութերի մեծ մասը աղրբեջաներեն է և հիմնականում սուֆիական աղանդավորական բովանդակություն ունի: Ըստ երևույթին տաղարանում ընդգրկված բանաստեղծությունների ընդվզողական բնույթը համահունչ է եղել Եղիայի այդ տարիների տրամադրություններին: Այս տաղարանի շնորհիվ կորստից փրկվել են հայազգի Միրանի, աղրբեջանական բանաստեղծներ Նասիմիի, Խաթայիի, Ղովսիի և այլոց առանձին արժեքավոր ստեղծագործությունները, Քյոր-օղլու վիպասքի հնագույն տարբերակներից մեկը:

Ստանձնելով Շահ Թահմազի հանձնարարությունը՝ գլխավորելու Եվրոպա ուղևորվող պարսկական պատվիրակությունը, Եղիա Մուշեղյանը հավանաբար նպատակ է ունեցել երկար մնալ Եվրոպայում և, շարունակելով առևտրական գործունեությունը, միաժամանակ իրականացրել իր ծրագրերը գիտական ուսումնասիրության վերաբերյալ:

Սրանով իսկ պիտի բացատրել, որ ճանապարհ ելնելով, նա իր հետ է վերցնում առևտրական գործարքների վերաբերյալ ունեցած փաստաթղթերը՝ հաշվեմատյանները, մուրհակները, տարբեր ժամանակներում գրած հարյուրավոր նամակների պատճենները, ստացած նամակները, իր գրական գործերը՝ հավաքած բանահյուսական հարուստ նյութերը, կազմած տաղարանը, բժշկական նյութերի ժողովածուն և այլ բազմաթիվ աշխատանքներ: Այս բոլորը 1724 թ. ձերբակալման ժամանակ բռնագրավվել և հետագայում հանձնվել է Ռուսաստանի արտաքին նախարարության դիվանին, որով և կորստից փրկվել և մեզ է հասել Եղիայի արտակարգ հարուստ ու հետաքրքիր, իր տեսակի մեջ եզակի արխիվը:

Նշված նյութերից այստեղ քննության ենք առնում Կարնեցու գրադարանի ցուցակը, որով հնարավոր է լինում պարզել XVIII դ. առաջին տասնամյակներում ոչ միայն Եղիա Կարնեցու, այլև ժամանակի փոքր-ինչ լուսավորված անհատների գրական հետաքրքրությունների շրջանակները, հրապարակի վրա գտնվող գրականության բնույթը: Պահպանված վավերագրերից պարզվում է, որ Եղիան քաջ գիտակցել է գրքի կարևորությունը իր ինքնազարգացման, ապագա գրական ծրագրերի իրականացման համար և պարբերաբար աշխատել է հարստացնել իր գրադարանը՝ ժամանակի չափանիշներով մեծ գումարներ հատկացնելով գրքեր ձեռք բերելու նպատակին:

Եղիան երեք տարբեր առիթներով կազմել է իր գրքերի ցուցակը. առաջին անգամ 1720 թ. ապրիլի 30-ին, երբ նա դրանք ցուցակագրում է, համարակալում և կնքում, որպեսզի հիշի, թե ում է գիրք տվել և կարողանա ետ պահանջել, «քանզի կամ անիրաւաբար են առեալ, կամ խնդրել են ընթեռնուլ և յետ տալ, և ոչ են տվել յետ»[1]: 1721 թ. Թավրիզի մեծ երկրաշարժից հետո Եղիան փլատակների տակից դուրս բերած իր տան ապրանքները և Արևելահնդկական ընկերության Թավրիզի մասնաճյուղի ունեցվածքը ի պահ էր տվել նույն ընկերության տեղացի աշխատակից Ալինաղիին և մեկնել Սպահան: Վերադարձից հետո Ալինաղին չատ բան է յուրացրած լինում, և Եղիան երկար ժամանակ, իշխանությունների աջակցությամբ, պայքար է մղում ետ ստանալու նրան վստահված ապրանքները: Այդ կապակցությամբ 1723 թ. հուլիսի 21-ին Թավրիզում կազմում է մի նոր ցուցակ, հետևյալ բացատրությամբ. «Յամի տեառն 1723, յուլիսի 21, Թարվեզ: Գրեցի ինչ որ տան ապրանք ունէր: Յետ յերկրաշարժէն և գողն տարածէն ինչ որ յետ էր մնացել ամենն մի ըստ միոջէ գրեցի: Այսօր, որ է թիւն 1724 ապրիլի 26-ումն, նորոգեցի տեղս, գրեցի մի ըստ միոջէ Հաշտարխան քաղաքի: Վասն այն ամենայն ունեցած ինքնմինս տեղս գրեցի, որ լաւ յիմանամ, թէ զորն կայ, կամ զորն կորեաւ, կամ զորն չնորհեցի այլոց, կամ զորն ծախեցի և կամ զորն գողն գողացան, քանզի երբեմն պատահեցաւ զոր գողացան իրքս [և] ի հարցանելն ոչ կարէյի ուղիղ պատասխանել, հարկ էր որ յաւել կամ պակաս ասել՝ ի մտածելն լինէր ճանճրութիւն և խիղճմտանք, վասն այն խորհեցա աստ գրել ճախ կոյսն մատենիս ունեցածս և յաջ կոյսն՝ դէմն՝ ծախն, գնացածն և կործան իրին, որ դիուրաւ իմանամ, թէ ինչ կայ կամ ինչ ունիմ՝ առանց դեգերմանն»[2]: Այս ցուցակում նա իր տան ապրանքների հետ հիշատակում է և գրքերի համառոտ վերնագրերը: Երրորդ անգամ, արդեն 1724 թ. ապրիլի 26-ին, Եվրոպա ուղևորվելու ճանա-

1 АВПР, фонд СРСА, 1724, «А», опись 100/1, д. 10, л. 4а.

2 Նույն տեղում, էջ 9ա:

պարհին, Հաշտարխանում կազմած գրքերի ցուցակում եղիան ավելացնում է նաև իր ձեռագիր մատյանների ցանկը (տե՛ս հրապարակվող գրացուցակը՝ №№ 38, 40, 41, 42, 43, 47, 48):

Այս ցանկերում հիշատակված գրքերի մի մասը դավանաբանական ու կրոնական բնույթ է ունեցել, լույս է տեսել Հռոմում և քարոզչական նպատակներով ունիթորների միջոցով փոխադրվել է Հայաստան ու հայաշատ այլ վայրեր: Գրքերից մի քանիսը բառարաններ են եղել, որոնք վկայում են դեպի լեզուները եղիայի ունեցած հետաքրքրության մասին: Կան նաև առակների ժողովածուներ, տոմարագիտական գրքեր և այլն: Այս տվյալները եզակի արժեք են ներկայացնում XVIII դ. առաջին տասնամյակներում տպագիր հայերեն գրքի նկատմամբ ցուցաբերվող հետաքրքրության սահմանները, դրանց գինն ու արժեքը պարզելու առումով:

Եղիա կարնեցին, լինելով արտակարգ բծախնդիր անձնավորություն, իր հաշվեմատյաններում, որոնք նաև օրագրի բնույթ ունեն, պարբերաբար նշել է գնած գրքերի անունները, գինը, հաճախ էլ վաճառողի անունը: Այսպես.

1718 թ. հունիսի 22. «Յօվակիմի ձեռօվն Շամախու մին գիրքս էկաւ. Բարոյական աստուածաբանութիւն» (АВПР, ф. СРСА, 1724, «А», д. 10, л. 46):

1718 թ. հունիսի 25. «Մին Օվասափ գիրք առի, մին ճՌ (150) դիան» (նույն տեղում):

1718 թ. հուլիսի 2. «Մին Սաղմոսմեկնիչ գիրք Բճ (200) դիան» (նույն տեղում):

1719 թ. հունվարի 29. «Շամախու ղրկել էր Մօվսէսն Թոխաթցի Պէկլէրի որդի Մինասի ձեռօվն Գ գիրք, որ է՝ Մտածական աւետարան, մին նոր կտակարան, մին գիրք Ջափ կչռոց…

Ղրկել էր հաշտարխանցի Քուրթ Գրիգորի ծառա կարապետին հետ… մին Հայելի ճշմարտութեան գիրք, մին Տօմար ձեռագիր, մին Խօստօվանագիրք» (նույն տեղում, 5ա):

1719 թ. մարտի 24. «Թավրիզեցի տէր Մարտիրոսի կնկանից առի է գիրք. մին Ռեճ (1500) դիան, որ է՝ Մին. Պարտէզ հոգևոր, Բ. Խոկումն քրիստոնէական, Գ. Շահ Ապաս գիրք, Դ. Պատմութիւն Հռօմայու եկեղեցեացն պատկերներօվն և դաւանութիւն ուղղափառի հաւատո, Ե. Ծաղիկ զօրութեան գիրք, Զ. Քարօզգիրք, Է. Քրիստոնէական վարդապետութիւն» (նույն տեղում, 6ա):

1719 թ. սեպտեմբերի 29. «Մին Քրիստոնէական գիրք առի մաքաղաթ կողով, որ կան լաթինի և կան հայևար է. Կ (60) դիան» (նույն տեղում, 6բ):

1719 թ. հոկտեմբերի 15. «Հինգ իտալիանի գիրք առի, որ է իմ մօհրօվն մօհրած. առաչինն է, թէ ինչպէս վարվել պիտի թօփն ու թուֆանքն ի պատերազմի և որսի, երկրորդն է վասն առողջացնելու զկենդանիս ի ցաւոց և թէ որպէս կրտեն խոզք և մչակեն զբուրաստանս, երրորդն է որսի և թուֆանքի, չորրորդն է բժըշկագիր զանազան դեղից և աստեղաբաչխութեան, որօվ ուսուցանէ առողջութիւն մարմնոյ կեցութեան, հինգերորդն է բժըշկագիրգ և զանազան իրաց, որ այս է: Գրգի գինն տվի Գճ (300) դիան Ալահվերտու կնկանից» (նույն տեղում, 6բ):

1720 թ. մարտի 19. «Բ. Ռօզարի գիրգ, որ առել էի ախլցխացի Գորկու որդի Սաոյից, այսօր գինն տվի իւր ախպէր Մարգարին Դճ (400) դիան» (նույն տեղում, 7ա):

1720 թ. սեպտեմբերի 29. «Գանձայեցի տէր Եսեայի վարդապետի որդի տիրացու Յուսէփէն... առի ժամագիրգ Աստուածածնի մին ճիե (125) դիան» (նույն տեղում):

1721 թ. մարտի 27. «Առաջ քան Դ (4) տարի, որ էրզրմա իմ հօրախպօր որդի Ղազարն ինձ համար որ ղրկել էր մին Համառօտական իմաստասիրութեան գիրք և մին Բուբաստան աղօթից էրզրմցի օսկերիչ Օվանէսի որդի Վարդանին վրա, Գանճու պահել էր մինչև ցայժմ և ղրել էր պատրի Յուսէփ-Մարիայի կուշան: Աստ արաւ մեզ գանճայեցի Իսայեա վարդապետի որդի Ուսէփն և ես գրեցի և ուզեցի, Յուսէփն տվել էր ղափանցի Բինիաթի որդի Գրիգորին. այսօր ինձ հասաւ թոխաթեցի Մելքսեթի ձեռօվն:

Որովհետև իմ ամէն գրգերոյս կողմն կնքել եմ և համար դրել, սոցա ևս համար դնեմ, որ պակասեալն դիւրաւ որոնեմ.

31. Գիրքս է Համառօտական իմաստասիրութեան:

32. Գիրգս է փոքր Բուբաստան աղօթից, վերո տպիցն» (նույն տեղում, 9բ):

1721 թ. հունվարի 22. «Գանճայեցի Ուսէփն մին ժամագիրգ ևս ուզել էր Աթիբեկին համար, առի և տվի Թիֆլիսեցի Հախվերտուն, որ տանի Գանճա, տա Աթիբեկին, դին 200 դիան» (նույն տեղում):

1721 թ. փետրվարի 2. «Մին Աստուածածնա ժամագիրգ առի, Թիֆլիսեցի Հախվերտո ձեռօվն ղրկեցի Գանճա Գանճայեցի Աթիբեկին» (նույն տեղում, 9բ):

Եթե նկատի ունենաք, որ Եղիան, ըստ իր գրանցումների, յուրաքանչյուր օրվա ուտեստի համար հատկացնում էր 25-30 դիան[1], իսկ յուրաքանչյուր գիրք միջին հաշվով արժեր 150-200 դիան[2], ապա պարզ կդառնա, թե գրքերը որքան սուղ էին այդ ժամանակներում:

Եղիա Մուշեղյանի գրադարանի ամբողջական պատկերը վերականգնելու համար 1720 թ. ապրիլի 30-ի և 1724 թ. ապրիլի 24-ի ցուցակների բաղդատությամբ ստորև հրապարակում ենք նրա գրքերի ցանկը: Գրքերի հերթական թվահամարները Եղիա Մուշեղյանը դրել է յուրաքանչյուր գրքի անվան վերջում. մենք նպատակահարմար գտանք դրանք փոխադրել սկիզբ, որոնցով և տողատակում հղում ենք տվյալ գրքի ավելի ընդարձակ և ճշգրիտ նկարագրությունը, որը, ըստ հնարավորին, վերականգնել ենք Ա. Մյասնիկյանի անվան պետական հանրապետական գրադարանի հրատարակած մատենագիտական ցուցակի օգնությամբ[3]: Մի քանի գրքերի ինքնությունը չենք կարողացել պարզել, ուստի և տողատակում դրանք չենք նշել:

Ե. Մուշեղյանի գրքերի ցուցակի համար հիմք ենք ընդունել 1720 թ. ապրիլի 30-ին Թավրիզում նրա կազմած ցուցակը (АВПР, ф. СРСА, 1724, «А», опись 100/1, д. 10, л. 4а, 3а), իսկ В պայմանական նշանով տվել ենք 1724 թ. ապրիլի 24-ին Հաշտարխանում կազմած գրացուցակի (նույն տեղում, л. 9а, 11б-14б) տարբերակը:

---

1 Նույն տեղում, գ. 16, թ. 15ա:

2 10000 դիահը մեկ թումանա կամ 1000 կոպեկ էր. տե՛ս «Գանձ չափոյ, կշռոյ, թուոյ և դրամից բոլոր աշխարհի», Ամստերդամ, 1699, էջ 27:

3 *«Հայ ձեռագիր գրքի մատենագիտական ցուցակ (1512-1800)»* (այսուհետև՝ «Հայ ձեռագիր գիրք»), Երևան, 1963:

[ԵՂԻԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐՔԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ]

Յամի տեառն 1720, ապրիլի 30 հին տոմարին, Թարվեզ: Ինչ որ գիրք ունիմ կշռիս հասպն մի ըստ միոչէ ներքո գրեմ այս օրինակաւս, ասելով նմրա 1՝ այս ինչ գիրգ կայ, նմրա 2՝ այսինչ անունով գիրգ կայ, որ իմով կնքաւս կնքած է: Եւ է իմ կնիքս այս* և

---

* Դրված է կնիքը:

1 «Պարզաբանութիւն հոգենուագ Սաղմոսացն Դաւթի մարգարէին, ժողովեալ ի զանազանից մատենից վարդապետաց եկեղեցւոյ և թարգմանեցեալ... ի նուաստ Յոհաննիսէ վարդապետէ Կոստանդնուպոլսեցւոյ», Վենետիկ, տպ. Նահապետ Ագուլեցի, 1687, 840 էջ: Մինչև 1721 թ. միայն սաղմոսների այս մեկնությունն է հրապարակված, ուստի կարծում ենք, որ սույն գիրքն է եղել Եղիայի գրադարանում:

3 «Գիրք մտածական աղօթից, բանալի ջերմեռանդակերտ», թարգմ. Պետրոս Թիֆլիսեցի, Կ. Պոլիս, հրատ. Մխիթար Սեբաստացի, 1701, 128 էջ:

4 Պետրոս Արագոնացի և Բարդուղիմէոս [Բոլոնիացի], Խրատք և հոգեշահ քարոզք, Վենետիկ, 1704, 270 էջ:

6 Պօղոս Փիրոմալի, Յաղագս ճշմարտութեան հաւատոյն քրիստոնէականի առ Շահ Ապաս արքայն Պարսից ի Պօղոսէ Փիրումալլէ, Հռոմ, 1670, 207 էջ:

7 «Վարդապետութիւն քրիստոնեական, Doctrina Christiana, Armenice, in Latinum versa et publicata A...M. Theodoro Petraeo:», Ամստերդամ, հրատ. և տպ. "Impensis Auctoris et Typls Armeniorum»". 1667, 72 էջ:

8 Iacobus Villotus (Յակոբ Վիլլոտ), Explanatio professionis Fidei orthodoxae, Ք անվանաթերթ, Մեկնութիւն դաւանութեան ուղղափառի հաւատոյ, Հռոմ տպ. Propaganda Fide (Ուրբանյան), 1711, 173 էջ:

9 «Նորագոյն ծաղիկ զօրութեանց: Flos Virtutum», թարգմ. Հովհաննես Կոստանդնուպոլսեցի (Հոլով), Հռոմ, տպ. Propaganda Fide (Ուրբանյան), 1675, 248 էջ:

10 Ղուկաս Վանանդեցի, Գանձ չափոյ, կշռոյ, թուոյ և դրամից բոլոր աշխարհի, Ամստերդամ, տպ. Թովմաս Վանանդեցի, 1699, 80 էջ:

11 Ռոբերտոս Բելլարմինոս, Վարդապետութիւն քրիստոնէական, թարգմ. Բարսեղ վրդ. Կոստանդնուպոլսեցի, Լիվոռնո (Ալիկոռնա), հրատ. Ոսկան Երևանցի և Կարապետ Անդրիանացի, տպ. Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի, 1670, 362 էջ: Մինչև 1721 թ. «Քրիստոնէական վարդապետութիւն» խորագրով գրքեր են լույս տեսել՝ 1667 թ. Ամստերդամում (72 էջ), 1667 թ. Ամստերդամում (72 էջ) հայերեն և լատիներեն, Ոսկան Երևանցու վերոհիշյալ հրատարակությունը, և վերջինիս վերահրատարակությունը Լիվոռնոյում 1699 թ. ու Վենետիկում (72 էջ) 1710 թ. (տե՛ս «Հայ հնատիպ գիրք», № 63, 64, 74, 181, 248): Այս հրատարակություններից ամենածավալունը Ռոբերտոս Բելլարմինոսինն է, որի համար է Եղիան ծանոթագրում «մեծ» և որպես այդպիսին հնագույնը՝ «հին»:

12 Մինչև 1721 թ. «Նոր կտակարանը», համաձայն «Հայ հնատիպ գրքի», 4 հրատարակություն է ունեցել՝ 1668 թ., 1698 (1700) թ., 1710 թ. և 1720 թ.: Թե սրանցից որն է եղել Եղիայի գրադարանում, հայտնի չէ:

13 «Պաշտօն աստուածային», թարգմ. Ղուկաս Վանանդեցի, տպ. Թովմա Վանանդեցի, 1704, 184 էջ:

14 Թօվմայ Գեմբացի (Կեմպացի), Համաոետևումն Քրիստոսի, Imitatio Christi Thomae A. Kempis. – Ք. անվանաթերթ, Գիրք Թօմայի Գեմբացւոյ... Յաղագս համաոետևմանն Քրիստոսի, թարգմ. Հովհաննես Կոստանդնուպոլսեցի (Հոլով), Հռոմ, տպ. Propaganda Fide (Ուրբանյան), 1705, 611 էջ: Այս գիրքը նախապես երեք հրատարակություն է ունեցել՝ 1624, 1696, 1700 թթ.: Եղիան, ինչպես ծանոթագրում է, ունեցել է սրա «նոր տիպը», որ հավանաբար վերջինն՝ 1705 թ. հրատարակությունը եղած պիտի լինի:

15 «Գիրք մտածական աղօթից, բանալի ջերմեռանդակերտ», թարգմ. Պետրոս Թիֆլիսեցի, Մարսել (Մարսիլիա), 1708, 144 էջ: Այս գիրքը նախապես 1701 թ. տպագրել է Մխիթար Սեբաստացին Կ. Պոլսում, ապա 1708 թ. վերահրատարակվել է Մարսելում: Եղիան ունեցել է և՛ առաջին հրատարակությունը, (տե՛ս № 3), և՛ վերջինս, որ նա «նոր տիպ» է անվանում:

16 «Գիրք այբուբենից և կերպ ուսանելոյ զլեզուն իտալական» (Այբբենարան), Մարսել, հրատ. Սողոմոն Լևոնյան, տպ. Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի, 1675, 94 էջ:

17 «Գիրք խոստովանութեանց», Կ. Պոլիս, հրատ. Աստվածատուր Ագուլյաց Դաշտեցի, 1698, 112 էջ:

18 Ղուկաս Վանանդեցի, Համաձայնութիւն հնգետեսակ ամսոց հոօմայեցւոյ, Ազարիայի, հայոց, հրէից և տաճկաց (Տօմար), Ամստերդամ, տպ. Թովմա Վանանդեցի, 1698, 106 էջ:

19 «Տօմարաց գիրք հայոց, հռօմայեցւոց և պարզատօմար, ընդ որոց և Տաղ Յովասափու, մարմնախաղաց և երազահաւն», Ամստերդամ, 1668, 260 էջ: Այս գիրքը, համաձայն «Հայ հնատիպ գրքի», 4 հրատարակություն է ունեցել՝ 1668, 1668 (?), 1678 և 1696 թթ.: Հայտնի չէ, թե սրանցից որն է եղել Եղիայի գրադարանում:

20 Ստեփանոս Ստեփանյան Կամենցի, Դուռն ողորմութեան Աստուծոյ նուիրեցեալ ամենապայծառի խօճայ Սաֆրադի որդւոյ Մուրատին, Վենետիկ, տպ. Անտոն Բորտոլի, 1702, 294 էջ: «Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակում» այս գիրքը նկարագրված է ըստ եղած գրականության: Ըստ Վ. Ներսիսյանի Catalogue of Early Armenian books (Լոնդոն, 1980, էջ 59) գրքի մեկ օրինակը պահվում է Բրիտանական գրադարանում՝ № 17030, a. 3:

21 Հավանաբար № 17 գիրքն է, որ այստեղ կրկնվել է:

22 «Խոկումն քրիստոնէական», թարգմ. Հովհաննես Կոստանդնուպոլսեցի (Հոլով), Վենետիկ, տպ. «Տանն Սահրատեան», 1687, 224 էջ: Գրքի երկրորդ հրատարակությունը լույս է տեսել 1719 թ. Վենետիկում: Հայտնի չէ, թե որ հրատարակությունն է եղել Եղիայի գրադարանում:

23 «Պարտեզ հոգևոր», Giardino spirituale, թարգմ. Հովհաննես Կոստանդնուպոլսեցի (Հոլով), Լիվոռնո, հրատ. Ոսկան Երևանցի և Կարապետ Անդրիանացի, տպ. Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի, 1670: Այս գիրքը, համաձայն «Հայ հնատիպ գրքի», վերահրատարակվել է 1678, 1683 (–1684), 1704 և 1710 թվականներին: Թե սրանցից որն է եղել Եղիայի գրադարանում, հայտնի չէ:

29 «Ժամագիրք սրբուհւոյ կուսին Մարիամու Աստուածածնին և ննջեցելոց (Ժամագիրք Աստուածածնի և ննջեցելոց)», Վենետիկ, տպ. Անտոն Բորտոլի, 1706, 264 էջ:

30 «Բուրաստան աղօթից», թարգմ. Ստեփանոս Լեհացի, Վենետիկ, տպ. Անտոն Բորտոլի, 1707, 464 էջ: Այս գիրքը նախապես երկու հրատարակություն է ունեցել՝ 1685 և 1704 թվականներին: Եղիան երկուսն էլ ունեցել է, որ «մին նոր տիպ» և «մին նոր» (տե՛ս նաև № 32) է անվանում:

31 Խաչատուր Էրզրումեցի Առաքելեան, Համառօտական իմաստասիրութիւն, երկու հատորով, հ. Ա, Վենետիկ, տպ. Անտոն Բորտոլի, 1711, 751 էջ: Այս գրքի 2-րդ հատորը նույնպես լույս է տեսել 1711 թ.: Եղիայի նկարագրությունից պարզ չէ, թե արդյո՞ք երկու հատորներն էլ եղել են նրա ձեռքի տակ:

32 Տե՛ս № 30-ի ծանոթագրությունը:

33 Franciscus Rivola, Dictionarium Armeno-Latinum (Ֆրանչիսկոս Ռիվոլա, Բառգիրք հայ-լատին), Միլան տպ. Collegii Ambrosiani, 1621: Այս բառարանը հրատարակվել է նաև 1633 թ., Փարիզում: Սրանցից որևէ մեկն է եղել Եղիայի գրադարանում:

34 Երեմիա վարդապետ (Մեղրեցի), Բառգիրք հայոց, Լիվոռնո, հրատ. Սարգիս Եվդոկիացի (Սաֆեթճի), 1698, էջ 334:

35 Յովհաննէս Կոստանդնուպոլսեցի (Հոլով), Բ անվանաթերթ, Հայելի ճշմարտութեան, Վենետիկ, տպ. Միքելաննջելո Բորբոնի, 1680, 200 էջ:

36 «Գիրք մեկնութեան յայտնութեանն սրբոյ Յովհաննու», թարգմ. Պետրոս Թիֆլիսեցի, Կ. Պոլիս, հրատ. Մխիթար Սեբաստացի, 1700, 208 էջ:

37 «Համառօտ գիրք աղօթից», Կ. Պոլիս, տպ. «Մարտիրոս Դպրի որդւոյ Սարգսի», 1721, 256 էջ:

38 Եղիա Մուշեղյանի այս և ստորև հիշատակված մյուս ձեռագիր մատյաններից մի քանիսը պահվում են վերը հիշված Ռուսաստանի արտաքին քաղաքականության դիվանում:

39 «Գիրք աշխարհաց և առասպելաբանութեանց, որ է աղուէսագիրք», Ամստերդամ, հրատ. Ոսկան Երևանցի, տպ. Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի, 1668, 88, 224 էջ: Այս գիրքը մինչև 1724 թ. 3 հրատարակություն է ունեցել՝ 1678, 1683, 1698 թթ.: Հայտնի չէ, թե սրանցից որ մեկն է եղել Եղիայի գրադարանում:

40 Պահպանված է ամբողջությամբ՝ «Գիրք խաղից երաժշտականաց յարմարեալ այլևայլ արանց և պէսպէս կապակցութեանց խօրթնայիմաց իրաց, այսինքն՝ բանաստեղծ արանց հնարեալ», չափերը՝ 10,8x16,5 սմ, էջ 1-164բ, 1721, Դավրէժ (տե՛ս АВПР, ф. СРСА, 1724, опись 100/1, д. 3):

41 Պահպանված է ամբողջությամբ՝ «Գիր վասն բժշկութեան դեղորէյից և զանազան իրաց փորձեցելոյ», չափերը՝ 10,5x16,3 սմ, էջ 1-65բ, 1720, դեկտեմբերի 8, Դավրէժ (տե՛ս АВПР, ф. СРСА, «А», 1724, опись 100/1, д. 4):

42 Պահպանված է ամբողջությամբ՝ «Գիրք հնարից և պէսպէս արուեստից և զանազան երաց», չափսերը 10,8x16,4 սմ, էջ 1-147բ, 1720, դեկտեմբերի 22, Դավրէժ (տե՛ս АВПР, ф. СРСА, 1724, «А», опись 100/1, д. 5).

45 «Գրգուկ կարևոր հանապազորդեան, ներսում կայ պարունակեալ պարզատօմար, լուսնացոյց և այլ մանրամասնաբար բան», Մարսել, հրատ. Ոսկան Երևանցի, 1673:

46 Հավանաբար № 35 գրքի երկրորդ օրինակն է:

որչափ որ այս նշան կնքաւս գիրք գտնվի այլոց կուշտն իմ է, քանզի ոչ ունելով սովորութիւն, որ իմ գրգերիցն այլոց բաղչեմ և կամ ծախեմ: Որովհետև այսպէս է, եթէ ուրուք գնտանիս այսու նշանաւ գիրք, պարտին հատուցանել յետ, քանզի կամ անիրաւաբար են առեալ կամ խնդրել են ընթեռնուլ և յետ տալ, և ոչ են տվել յետ. պարտին յետ տալ անպատճառ:

1. Ունէյի Աստուծով նմրա մին, նո. 1, գիրգ Սաղմոսամեկնիչ:

B. Մին Սաղմոսամեկնչի գիր. համար մին.

2. Ունէյի Բարոյական աստուածաբանութիւն, նմրա Բ.

B. Մին Բարոյական աստուածաբանութեան գիրգ:

3. Ունէյի Մեկնութիւն և մտածութիւն սրբոյ Աւետարանի տեառն մերո Յիսուսի Քրիստոսի. նմրա երրորդ:

B. Մին գիրգ մտածական սուրբ Աւետարանիս:

4. Ունէյի Գիրք խրատականք քարօզիի. նմրա չորրորդ:

B. Մին Գիրք խրատական և քարօզից:

5. Ունէյի Գիրք պատմութեան և տիպն Հռոմայու եկեղեցեաց, մանաւանդ սուրբ Կաթուղիկէյի եկեղեցւոյն Պետրոսի գլխաւոր առաքելոյն Քրիստոսի և մեկնութիւնն լեզուաւ իտալիանի և կարճառօտ մեկնութիւն հայոց լեզուաւ և իշեալ (=յիշեալ) կայ դաւանութիւն լեզուաւ հայոց:

B. Մի գիրք իտալիայի և հայևար. Հռոմայու քաղաքին պատմութիւն:

6. Ունէյի Գիրք ճչմարտութեան հաւատոյն Քրիստոսի առ Շահ Ապաս արքայն պարսից:

B. Գիրք հաւատո հակաճառութեան Շահ Ապասի (Այս գիրգն յերկրաչարժին կորեաւ):

7. Ունէյի քրիստոնէական վարդապետութիւն լաթին և հայ լեզուաւ:

B. Քրիստոնեական վարդապետութեան գիրք հայևար և լաթինևար:

8. Ունէյի Մեկնութիւն դաւանութեան ուղղափառի հաւատոյ համար:

B. Մեկնութիւն դաւանութեան ուղղափառաց:

9. Ունէյի նորագոյն Ծաղիկ զօրութեան:

B. Մին Ծաղիկ զօրութեան գիրք:

10. Ունէյի Գիրք արհեստի չափոց և կշռոց բոլոր աշխարհի. համար Ժ:

B. Մին Գիրք արհեստից և վերա չափոց և կշռոց:

11. Մեծ վարդապետութիւն քրիստոնէական. համար ԺԱ:

B. Մին Գիրք քրիստոնէական վարդապետութեան մեծ և հին:

12. Նոր կտակարան. համար ԺԲ:

B. Մին Նոր կտակարան:

13. Պաչտօն Աստուածածնի:

B. Մին գիրք Պաչտօն Աստուածածնի:

14. Թոմայի Գեմբացւոյ:

B. Նոր տիպ Թոմայի Գեմբացւոյ:

15. Մտածական աղօթից:

B. Մին մտածական աղօթից, նոր տիպ:

16. Այբուբենից և քերականութիւն իտալիան լեզուի:

B. Այբուբենի և քերականութեան Իտալիայի:

17. Խոստովանութիւն:

B. Գիրք խոստովանութեան ուսուցանելոյ:

18. Համաձայնութիւն հինգետեսակաց տօմարից և աստղաբաշխութեան:

B. Համաձայնութիւն հնկից տեսակաց տօմարաց և աստղաբաշխութեան:

19. Հայոց տօմար և Յովասափի:

B. Հայոց տօմար և Օվասափ:

20. Դուռն ողորմութեան:

B . Դուռն ողորմութեան գիրք:

21. Խրատ խոստովանութեան:

B. Գիրք խոստովանութեան կերպն ուսցնելո:

22. Խոկումն քրիստոնէական:

B. Խոկումն քրիստոնէական:

23. Փոքր պարտէզ հոգևոր:

B. Փոքր պարտէզ հոգևոր:

24. Գիրք բժշկական իտալիանի:

B. Իտալիանի գիրք բժշկարան:

25. Կանոն վարելի թուֆանկ ի պատերազմի իտալիանի լեզուաւ:

B. Իտալիանի լեզուաւ, որ ուսուցանէ թֆանք ցգելո:

26. Բառգիրգ իտալիանի, հօռմի, թուրքի սովրելու:

B. Բառգիրք հռոմի, թուրքի, իտալիայի:

27. Իտալիանի գիրք, որ կուսուցանէ որսալ և թուֆանք քցել և այլք:

B. Իտալիայի որսալո և թֆանք ցքելո:

28. Բժշկագիրք. իտալիանի լեզուաւ զանազան դեղոց:

B. Իտալիէւար բժշկական գիրք:

29. Ժամագիրք սրբոհւոյ քուսին Մարիամու Աստուածածնին:

B. Մին ժամագիրք սրբոհւո Մարիամու:

30. Բուրաստան աղօթից:

B. Մին նոր տիպ Բուրաստան աղօթից: (Այս Բուրաստան աղօթից գիրքն կորուցի սահմանաճանփին):

31. Ունիմ Համառօտական իմաստութեան գիրք՝ չարաղրեալ Խաչատրո վարդապետէ Էրզրմեցո:

Բ. Մին Համառօտական իմաստուքեան [գիրք]՝ չարադրեալ Էրզրմեցւոյ Խաչատրո աստուածաբան վարդապետէ:

32. Մին փոքր Բուբաստան աղօթից. նմրա...

Բ. Մին նոր Բուբաստան աղօթից:

33. Մին փոքր Բառգիրք իտալիանի:

Բ. Մին փոքր Բառգիրք հայի և իտալիայի:

34. Մին Հայոց բառգիրք:

Բ. Մին հայի բառգիրք: Էրզրմցի Ոսկոնց Մղտսի Սարգսիննն է:

35. Մին Հայելի ճշմարտուքեան:

Բ. Նույնը:

36. Գիրք մեկնուքեան երանելոյն Յօհաննու յառաքելոյ:

Բ. Մին Մեկնուքիւն Յօհաննու առաքելւո:

37. Գիրք աղօթմատուց:

Բ. Մին Աղօթքմատուց փոքր:

38. Գիրք Ղօվսի, որ հայևար թարգմանած է և գրած:

Բ. Մին իմ ձեռնագիրն, որ Ղօվսու ասմունքն է, գրած կիսատ:

39. Գիրք աղուէսուց և Աչխարհացուց:

Բ. Մին Աղուէսգիրք և Աչխարհացոյց:

40. Գիրք խաղի. ձեռնագիր:

Բ. Մին իմ ձեռնագիր և պէս պէս խաղի, ղազալի և երգոց:

41. Գիրք բըժիչկի և դեղորէից. ձեռագիր:

Բ. Մին գիրք իմ ձեռնագիր ի վրայ դեղորէյից և բժշկուքեան:

42. Գիրք պէսպէս հնարից և գործոց. ձեռնագիր:

Բ. Մին իմ ձեռնագիրս ի վրա պէսպէս հնարից և խաղալոյ:

43. Գիրք առակած. ձեռնագիր. և առասպելաբանուքեանց:

Բ. Մին իմ ձեռնագիրն ի վրա առասպելաբանուքեանց և առակաց:

44. Գիրք հակաճառուքեան ընդդէմ Գ ազգաց, արարեալ պատրի Միքայելէ:

Բ. Մին Գիր հակաճառուքեան Գ ազգաց վերա, արարեալ պատրի Միքայէլէ:

45. Գիրգ պարզատօմար և համարողական արհեստի:

Բ. Մին Գիրք պարզատօմար և համարողական արհեստի:

46. Գիրգ հայելի ճշմարտուքեան:

Բ. Մին Գիրգ հայելի ճշմարտուքեան:

47. Գիրք բժշկաց և պէսպէս դեղոց. ձեռնագիր:

Բ. Մին իմ ձեռագիր ի վրա պէսպէս դեղոց:

48. Մին փոքր ձեռնագիր տօմար:

Բ. Մին ձեռագգիր հին տօմար:

[Եղիա Կարնեցու ձեռագիր մատյանների ցանկը]**

– ԺԱ (11) հատ իմ ձեռնագիր. կտակ, որ սկսեալ ի ծննդենէ գրել եմ ամէն անձանքն և պատմութիւն ճանապարհաց…

– Դ (4) հատ մատեն բարօվագրի տիպ, զոր ինչ (՞)…

– Մին տետր ի վերա հօվվական խաղի վերա, արարեալ պ[ատրի] Փաւ[լ]օ Լեհեցւո Յիսուսեանց կարգէն Փռուչինսքի[1]:

– երկու տետր իմ առաչի ձեռնագիրն է, որ գրել եմ տրամաբանութեան վրա Տրիանէյի և Ներսեսի հայոց կաթողիկոսի:

– Մին յերկան տետր իմ ձեռնագիրը. լեզվի ուռուսի, հայի և պարսի:

– ԺԳ (12) հատ մատեն ի վերա առի և տրոյ և փոքր գրած և անգիր:

– Զորս մագաղաթ պատկեր՝ մեծ և փոքր:

– երկու քարօզի տետր ձեռնագիր և չինած պ[ատրի] Փավլօյին:

– Բ (2) տետր իմ ձեռնագիր ի վրա համարողական արհեստի[2]:

– Իմ ձեռագիր. պատուական մի տետր բժշկարան:

– Մին տետր ֆռանսևար գրած, որ նոր սովորած ժամանակս գրեցի և առակներ գրած հայևար և ֆռանսևար[3]:

– Մին տետր պետաքահանային չինածի օրինակն: Բ բոլորակօվն իմ ձեռագիրն է և ծնունդ լուսնին նշանց կու տայ:

– Մին մատեն, որ յերկրաչարժին կորած իննքմինն նշանց կու տայ:

– Բ (2) փոքր տետր, բառի, ձեռնագիր. ֆռանցեզի:

– Ժ (10) մատեն ամեն կերպ խարճի և փող առնելո:

– Մին կապոցով թղթեր հսապի համար անցածի:

– Մին փոքր պասմա տետր աղօթից:

– Մին պասմա լաթինևար տետր աղօթից:

– Բ (2) թուխթ պաճիճ ձևելու օրինակի:

** АВПР, ф. СРСА, 1724, «А», д. 10, л. 13б.

1 Այս թատերգությունը պահպանված է ամբողջությամբ՝ «Հովուական խաղն ի գիշերին ծննդեան փրկչին Յիսուսի Քրիստոսի» (տե՛ս АВПР, ф. СРСА, 1724, г., «А», д. 10, л. 85а-93б):

2 Պահպանված է առաջին տետրը՝ «Գիր արհեստին համարողութեան, տետր յառաջին, եղև յամի տեառն 1715, սեպտեմբերի 7, Շամախի», չափսերը՝ 16,5x21,5 սմ, էջ 1-31ա՝ «Արհեստ համարողական, որ պիտանի վաճառականաց…», բովանդակում է՝ թվաճանաչություն, չորս գործողություններ՝ բազմաթիվ օրինակներով, էջ 31բ-34բ՝ «Յաղագս յընկերութեան կանոնին», ուսուցանում է շահի բաժանման կարգը առևտրական ընկերների միջև (տե՛ս АВПР, ф. СРСА, 1724, г. «Д», опись 100/1, д. 3, л. 1-34 б).

3 Նույն տեղում, «А», опись 100/1, д. 7, л. 1-30.

БИБЛИОТЕКА ЕГИИ МУШЕГЯНА (КАРНЕЦИ)

Р е з ю м е

Сведения о личных библиотеках, имевшихся в Армении до XIX в., очень скудны. Среди материалов различного характера (коммерческие тетради, письма, официальные государственные документы, стихотворные рукописные сборники и т. д.), хранящихся в деле купца XVIII в. Егии Мушегяна в фонде «Сношения России с Арменией» Архива внешней политики России, есть список книг личной библиотеки Мушегяна. Часть книг его библиотеки носила религиозный характер, были также словари, сборники басен, книги по медицине и теории календаря. В сообщении дается краткое описание жизни Е. Мушегяна, публикуется список книг его библиотеки.

ԵՂԻԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ ԱՌԱԿԱԳԻՐ[!]

Հայտնի է, որ Վարդան Այգեկցուց հետո, XIII-XVII դդ., հայ առակագրությունը առանձնակի զարգացում չի ապրել: Ճիշտ է, այդ ժամանակահատվածում Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու առակները հաճախ են ընդօրինակվել ձեռագիր ժողովածուներում, անգամ «Աղվեսագիրք» կոչվող առակների ժողովածուն XVII դարի երկրորդ կեսին երեք հրատարակություն է ունեցել (1668, 1683, 1698 թթ.)[1], բայց առակի ժանրով գրող նոր հայ հեղինակները երևան չեն եկել, չեն եղել նաև նոր թարգմանություններ: Այս առումով ուշ միջնադարի հայ գրականության պատմության համար հետաքրքրություն են ներկայացնում XVIII դարի առաջին կեսի վաճառական-բանահավաք Եղիա Մուշեղյանի (Կարնեցի[2], 1689-1750՞) դիվանում[3] պահվող 31 և «Հուշամատյանում»[4] գրի առնված չորս առակները:

Ադրբեջանցի բանասեր Աքպեր Երևանլին, 1972 թ. «Պատմա-բանասիրական հանդեսում» (№ 1, էջ 103-114) հրապարակելով վերոհիշյալ 31 առակները (ցավոք, բազմաթիվ սխալներով), համոզված է եղել, որ դրանք 1722 թ. Թավրիզում «գրի է առել» ինքը՝ Եղիա Մուշեղյանը:

Ա. Երևանլին իր այս հրապարակման ժամանակ փորձ չի արել որոշելու այդ առակների ծագումը, նրանց բնույթն ու առնչությունները հայերեն բնագրին զուգահեռ բերված ֆրանսերեն առակների հետ և բավարարվել է միայն արձանագրելով, որ «առակներին հաջորդում են դրանց ֆրանսերեն թարգմանությունները»[5]: Այլ կերպ ասած, Երևանլին ֆրանսերեն առակները թարգմանված է համարում հայերենից: Իրականում, սակայն, ինչպես ցույց է տալիս հայերեն ու ֆրանսերեն բնագրերի համեմատությունը[6], հայերեն առակները Եղիա Մուշեղյանը ոչ թե «գրի է առել», այլ թարգմանել է ֆրանսերենից:

Հիմնավորենք մեր այս եզրակացությունը:

! Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1984, № 1, էջ 178-195:

1 Ըստ «Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակի (1512-1800)» (Երևան, 1963, էջ 32), «Աղվեսագիրքը», հավանաբա ր, ունեցել է մի այլ հրատարակություն ևս՝ 1678 թ., բայց այդ գրքից օրինակներ չեն պահպանվել:

2 Եղիա Մուշեղյանի մասին մանրամասն տե՛ս «Եղիա Կարնեցու Դիվանը» (Նյութեր Մերձավոր Արևելքի և Անդրկովկասի պատմության), առաջաբանը և ծանոթագրությունները պրոֆ. Ա. Գ. Աբրահամյանի. Երևան, 1968: **Բ. Լ. Զուգասզյան**, *Եղիա Մուշեղյանի (Կարնեցու) գրադարանը.* – ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1983, № 1, էջ 61-74:

3 Историко-дипломатическое управление МИД СССР. Архив внешней политики России (АВПР), фонд «Сношения России с Арменией», 1724, оп. 100/1, д. 7, с. 20-31.

4 *«Պատմութիւն իմն կարճառօտ ի վերայ անձկութեանց Եղիայիս Աստուածատուրեան Մուշեղեանց, զորս կրեցի ի ազգէն Ճռանկաց, մանաւանդ ի խաբեբայ կրօնաւորացն ընդա և ի սուտ եխպայրց և բարեկամ կոչեցելոց»*. Վիեննայի Մխիթարյան մատենադարան, ձեռ. № 980: Համառոտության համար այսուհետև այս պատմությունը անվանում ենք «Հուշամատյան»:

5 «Պատմա-բանասիրական հանդես», 1972, № 1, էջ 104:

6 Համեմատությունը կատարել ենք Մատենադարանի աշխատակից, ֆրանսերենիհ քաջահմուտ Արիդա Կեսոյանի օգնությամբ:

Նախ նշենք, որ խնդրո առարկա առակները գտնում են 1722 թ. հունվար ամսով թվագրված Ե. Մուշեղյանի ֆրանսերենի ուսումնասիրման տետրում: Տետրի էջերը երկսյուն են. ձախ կողմում հայերեն առակներն են, իսկ հանդիպակաց աջ սյունակում՝ ֆրանսերենը, և ոչ թե հայերենին հաջորդում է ֆրանսերենը, ինչպես գրել է Ա. Երևանլին: Այս հանգամանքը այն նշանակությունն ունի, որ ընդօրինակման այդ ձևը ուսուցողական բնույթ է ունեցել: Նման նպատակով նույն այդ տետրում թարգմանված է նաև «Հովվական խաղն ի գիշերին» միստերիան, որի վերջում բերված են առանձին ֆրանսերեն բառերի բացատրություններ:

XVII դարում Եվրոպայում, չնորհիվ Եզոպոսի առակների լաֆոնտենյան մշակումների, աչխուժացում էր ապրում առակի ժանրը: Անգամ հայերեն «Աղվեսագրքի» հրատարակությունը 1668 թ. Ամստերդամում և դրա հետագա հրատարակությունները 1683 և 1698 թթ. կարելի է այդ հետաքրքրության յուրովի արձագանքը համարել հայ իրականության մեջ: Եղիա Մուշեղյանը, որ այդ տարիներին մեծ ոգևորությամբ բանահյուսական նյութեր էր հավաքում, անկասկած անուշադրության չէր կարող մատնել նաև առակի ժանրը, մանավանդ, որ նա, չնորհիվ «Աղվեսագրքի»[1], որից մեկ օրինակ ուներ իր անձնական գրադարանում[2], ծանոթ էր հայկական միջավայրում տարածված առակների բնույթին: Թերևս կարելի էր ենթադրել, որ նա իրեն ծանոթ հայկական առակներն է գրի առել ու թարգմանել ֆրանսերենի, որպիսի գայթակղություն ունեցել է Ա. Երևանլին, բայց դա բացառվում է, որովհետև Եղիայի տետրի ու «Աղվեսագրքի» միայն հետևյալ հինգ առակներն են, որ ընդհանուր սյուժե ունեն.

Եղիա Մուշեղյան	*«Աղվեսագիրք»*
2. մարդ ու ընկուզի ծառ	*ՃԻՐ. Այր մի և ընկոյզ և ճմերուկ:*
8. Մին էշ ու մին գէլ:	*ՃԳ. Գայլ և էշ:*
11. Առիւծ հիւանդ:	*ՀԵ. Առիւծ և աղուէս և արջ:*
14. Ագռաւ ու աղուէս:	*ԼԳ. Գայլագռաւ պանիր ի կտուցն և աղուէս:*
29. Մին չուն:	*Բ. Թագաւոր և չուն և չուքն:*

Մեծ տարբերություններ կան նաև Եղիայի ու «Աղվեսագրքի» նույն առակների պատումների մեջ: Բերենք միայն մեկ օրինակ.

Եղիա Մուշեղյան	*«Աղվեսագիրք»*
14. Մին ագռաւ մին ճոթ պանիր առեալ էր մին տան կտրիցն: Ընկուզի ծառի ծայրին նստել է, որ ուտէր: Աղուէս իրան տեսաւ, որ բերանումն պանիր ունէր: «Այ պարոն ագռաւ, –	*ԼԳ. Ագռաւ մի պանիր ունէր ի բերան, և նստէր ի բարձր աւանդակ տեղւոջ: Իսկ աղուէս փորձ առնոյր ի նմանէ հանել զպանիրն: Եւ մատուցեալ մօտ անդր և զակն ի նա հայեալ, երանի տայր*

1 *Գիրք աշխարհաց և առասպելաբանութեանց, որ է Աղուէսագիրք*, ի Սուրբ Էջմիածին Երեմիայ վարդապետէ. Լիվոռնայ, 1698: Համապատասխանաբար տե՛ս Ն. Մառ. Ժողովածոյք առակաց Վարդանայ. մասն Բ, Ս. Պետերբուրգ, 1894, առակներ ՃԻԴ, Խ, ՂԶ, ԻԴ, ՃՀԳ:

2 Տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1983, № 1, էջ 73: Այս ցուցակը Ե. Մուշեղյանը պատրաստել է 1720 թ. ապրիլի 30-ին:

ասաց, – ինչ որ քեզ վրա ինձ ասացել էին ողորդ ա, թէ ամէն հաւքի մէջ քանզ քեզ սիրուն չըկայ, քո թէպուրն ձնի պէս սպիտակ այ և թէ ձայն ունէիր էնչանք քաղցր, որչանք քո թէպուրն սիրուն ա, իրաւի արժանի կլինէիր անասնոց թագաւոր դառնալ»:

Ագռաւն աղուէսի թիթալն սրտի տաքութենով կլսէր և, հպարտութենով ուռեալ, սկսաւ ձայն հանել: Իր կտուցըն բռանց բացել էր՝ պանիրն ծառի տակն վայր ընկաւ: Աղուէսն հափեց և ագռաւի վրա ոըշխանտ անելոյ հետ փախաւ գնաց:

Խրատ.

Օվ որ քեզ հետ թիթալ կու խոսի և քեզ կգովէ, չատ անգամ քեզ վրայ ոըշխանտ կանէ և ուզում ա քեզ խափէ:

բնութեան, զի սևաթոյր գունով և գիշերոյ մանուկ, և վայելէ քեզ ծաղկիլ ի գունոյդ: Այլև զօրութիւնդ քո ի քեզ, որչափ ոչ այլում, բայց և իմաստութիւնդ և ոչ ինչ ևս արգել ունէր զթագաւորութիւնդ զարծուով զանց արարեալ ամենևին: Եւ թագաւոր հաւուց եթէ ձայն գոյր, և ոչ ամենևին կարօտ գտեալ էիր յիրիդ:

Դրդուեցաւ ի գովութենէն ագռաւն և զմեծաձայնութիւն ցուցանել կամեցեալ, եբաց զբերանն և գոչեաց յոյժ մեծ և պանիրն ի վայր անկեալ որս լինէր աղուէսուն: Եւ նա առլցեալ կրակովն ձայն քո ի քեզ, ասէ, կարի քաջ ով ագռաւ, բայց ի մտաց պակաս ես:

Զայս առասպելս գիտելով մի երբէք պատրիցիս ի սուտակասպաս գովութենէ:

Ե. Մուշեղյանի տեսրում ընդամենը 31 առակ է ընդօրինակված, որոնց համեմատությունը Եզոպոսի հայտնի առակների քննական բնագրի[1], ինչպես նաև դրանց լաֆոնտենյան մշակումների[2] հետ, ցույց է տալիս, որ 24 առակ, աննշան տարբերություններով, համընկնում են եզոպոսյան առակների հետ, իսկ մնացյալ յոթը իրենց զուգահեռներն ունեն լաֆոնտենյան տարբերակներում:

Ստորև բերվում է Ե. Մուշեղյանի տեսրի հայերեն առակների և Եզոպոսի ու Լաֆոնտենի տարբերակների համեմատական աղյուսակը[3]:

	Եղիա Մուշեղյանի թարգմանած առակները	*Եզոպոսի առակները*	*Լաֆոնտենի առակները*
1	*Աքլոր և ալմազ*	*…*	*Աքաղաղ ու մարգարիտ – 30*
2	*Մարդ ու ընկուզի ծառ*	*…*	*…*
3	*Կատու ու մկներ*	*…*	*Խորհուրդ մկանց – 36*
4	*Գեղեցի ու խիզաններն*	*Գյուղացի և իր որդիները – 100*	*…*
5	*Մարմին ու իր բաժինքն*	*Փորը և ոտքերը – 127*	*Փորն ու անդամներ – 59*
6	*Մեղր ու ճանճերն*	*Ճանճերը – 109*	*…*
7	*Ձեյթունի ծառ ու էղեջի*	*Կաղնին ու եղեգը – 105*	*Կաղնի ու եղեգն – 34*

1 *Եզոպոսի առակները*, ռուսերենից թարգմանեց Վարդգես Բաբայան. Երևան, 1972:

2 *Առակք Լաֆոնթենի*, թարգմ. Մեսրոպ Նուպարյանց. Թիֆլիս, 1899:

3 Առակների խորագրերին հաջորդող թվերը նշված գրքերի էջահամարներն են:

8	Մին էշ ու մին գէլ	Էշն ու գայլը – 148, 207	Ջի ու գայլ – 109
9	Աղուէս ու մարդի գլուխ	Աղվեսն ու դիմակը – 90	…
10	Էշ ու ձի ու գեղեցի	Էշն ու ջորին – 146	Էշ ու ձի – 138
11	Առխուծ հիւանդ	Առյուծը, գայլն ու աղվեսը – 177	Առյուծ, գայլ ու աղվես – 159
12	Մին գէլ, մին պառաւ	Գայլն ու պառավը – 137	…
13	Աղուէս ու հաղող	Աղվեսն ու խաղողը – 86	Աղվես ու խաղող – 72
14	Ագռաւ ու աղուէս	Ագռավն ու աղվեսը –125	Ագռավ ու աղվես – 14
15	Աղուէս ու լակլակ	…	Աղվես ու արագիլ – 29
16	Առխուծ ու մօծակ	Մոծակն ու առյուծը – 172	Առյուծ ու ճանճիկ – 42
17	Գէլ ու գառն	Գայլն ու գառը – 136	Գայլ ու գառնուկ – 26
18	Քամի ու արեգակ	Բորեասն ու արևը – 97	…
19	Աղուէս ու այծն	Աղվեսն ու այծը – 84	Աղվես ու նոխազ – 65
20	Որսարար ու վէրի կօվ	Եղջերուն ու խաղողը – 108	Եղջերուն ու որթատունկը – 113
21	Վէրի էշ ու տանու էշ	Վայրի ու տանու էշը – 234	…
22	Աքլորք ու կաքաւ	Աքաղաղներն ու կաքավը – 89	Կաքավ և աքաղաղներ – 211
23	Անասունք ու առխուծ	Առյուծն ու վայրի էշը – 188	Երինջ, այծ ու մաքի ընկեր եղած – 19
24	Սայրն յըղի	…	Լեռ երկանց մէջ – 111
25	Գէլ ու կռունկ	…	Գայլ ու արագիլ – 71
26	Դաչտի մուկն ու տան մուկն	Դաշտային ու տնական մկները – 197	Քաղքցի մուկը և դաշտեցի մուկը – 25
27	Մին կնիկ, մին հաւ	Այրին ու հավը – 101	…
28	Մին կնիկ ագահ	Ոսկե ձվեր ածող սագը – 112	Ոսկե հավկիթ ածող հավը – 111
29	Մին չուն	Շունը և մսի պատառը – 128	Շուն ու ստվեր – 139
30	Մին հալևոր մարդ ու մահ	Ծերուկն ու մահը – 102	Փայտահատ ու մահ –28
31	Այծյամ ու կովեր	…	Տիրոջ աչքը – 98

Անհրաժեշտ է այստեղ արձանագրել, որ Եղիայի թարգմանած առակներն ու Եզոպոսի հիմք-տարբերակները հիմնականում համընկնում են: Բերենք մեկ օրինակ միայն.

Եղիա Մուշեղյան

9. Մին աղուէսն քաղաք էկաւ ման գալ, մին քանտարարի խանութ մտաւ, տեսաւ մին փայտէ գլուխ խիստ լաւ շինած, առաւ իր առաջնու ոտներով և լաւ մտիկ անելով, յետոյ ահա ասաց. «Մին

Եզոպոս

27. Աղվեսն ընկավ արձանագործի արհեստանոց, ուր եղած-չեղածն իրար խառնեց: Եվ այստեղ նրա աչքովն ընկավ ողբերգակի դիմակը: Աղվեսը բարձրացրեց

սիրուն գլուխ դրսից՝ն, ափսոս, որ մէջն փուչ ա, մին դրամ եղուղ չունի»:

Խրատ

Մարդկանց և կանանց մէջն շատ կկտնւի այնպէս կերպարանքով, սիրուն, լաւ հագած, ակնկալած, ոսկով և արծաթով զարդարած, ինչ որ դրսից էրևում ա՝ լաւ ա, ամա մէջը փուչ է, շատ անգամ այնպիսիքն անխելք և անգէտք են:

ու ասաց. «Ինչ գլուխ է, բայց ուղեղ չունի»:

Առակս վերաբերում է այն մարդուն, որ փառահեղ մարմին ունի, բայց հոգին դատարկ է:

Հետևյալ փաստարկները ևս ապացուցում են, որ եղիայի հայերեն առակները թարգմանված են ֆրանսերենից.

ա. Ֆրանսերենով բերված առակների լեզուն կատարյալ միջին ֆրանսերեն է, ինչպես հաստատեցին 1982 թ. աշնանը Երևանում գտնվող ֆրանսիացի անվանի բանասերներ պրոֆ. Ֆրեդերիկ Ֆեյդին ու պրոֆ. Ժան-Պիեռ Մահեն: Եղիա Մուշեղյանը, որ, իր իսկ վկայությամբ, ֆրանսերեն իր նամակներն ու զեկուցագրերը գրելիս դիմում էր կաթոլիկ հայրերի օգնությանը, հազիվ թե կարողանար այդպիսի կատարյալ ֆրանսերենով թարգմանություններ կատարել:

բ. Ֆրանսերեն բնագրում կան մի շարք բառեր ու արտահայտություններ, որոնք բաց են թողնված հայերեն թարգմանության ժամանակ: Եթե առակները հայերենից թարգմանված լինեին, ապա ֆրանսերենում այդ բառերի ու արտահայտությունների անհրաժեշտությունը չէր լինի:

գ. Ֆրանսերեն բնագրի ընդօրինակության մեջ եղել են կոպիտ տառասխալներ ու բացթողումներ, որոնց մի մասը, հավանաբար, վերստուգման ժամանակ նկատել է ինքը՝ Մուշեղյանը և ուղղել է բնագրի վրա:

դ. Առակների հայերեն թարգմանության մեջ կան բայերի ժամանակների բազմաթիվ անհամաձայնություններ, որոնք հետևանք են թարգմանության ժամանակ թույլ տրված սխալների: Բնագիրը հայերեն լինելու դեպքում հազիվ թե Եղիան նման կոպիտ սխալներ թույլ տար:

Պետք է ենթադրել, որ Ե. Մուշեղյանը, Պարսկաստան հաստատված կաթոլիկ քարոզիչների մոտ ծանոթանալով Եզոպոսի առակների ֆրանսերեն թարգմանության ինչ-որ տարբերակի և անդրադառնալով դրանց մեծ մասի բացակայությանը հայկական առակագրքերում, սիրով ձեռնամուխ է եղել դրանց թարգմանությանը, մանավանդ որ միաժամանակ դրանով նա պետք է ավելի հմտանար ֆրանսերենին: Առակների թարգմանությունը կատարված է պարզ ու հասկանալի, ժամանակի խոսակցական արևելահայերենով: Թարգմանության մեջ գործածված մի շարք բարբառային բառեր ու ձևեր, ինչպես նաև բազմաթիվ պարսկերեն փոխառություններ, Նոր Ջուղայի բարբառն են հիշեցնում: Հավանաբար Եղիան, որ 1720-ից մինչև 1722 թ. կեսերը հաճախ էր լինում Նոր Ջուղայում, այս առակները թարգմանել է այնտեղ գտնված ժամանակ և իր շրջապատին

հասկանալի լինելու համար աշխատել է տեղական բարբառին բնորոշ տարրեր մտցնել իր լեզվի մեջ: Այս ենթադրության օգտին է խոսում առակներից մեկի («Շուն ու ատվեր») տեղայնացումը՝ Սպահան քաղաքի անվան հիշատակումով: Թերևս կարելի էր ենթադրել, որ առակները ինչ-որ մի այլ անձնավորության թարգմանություններն են եղել և Ե. Մուշեղյանը սոսկ դրանց ընդօրինակողն է: Նման եզրահանգումը բացառվում է, որովհետև այդ դեպքում Մուշեղյանը անպայման կնշեր իր աղբյուրը և կամ թարգմանչին. իր բոլոր աշխատանքներում նա բծախնդրորեն պահպանել է այդ սկզբունքը:

Եզոպոսյան առակների թարգմանությունը, ինչպես նաև տեղյակությունը հայ միջնադարյան առակագրությանը, Եղիային առակի ժանրի բնագավառում շատ բան են սովորեցրել, ուստի այս թարգմանությունից 25 տարի հետո, 1747 թ., երբ նա գրիչ է վերցնում իր կյանքի ողիսականը գրի առնելու, իր խոսքը ագուցվում է առակներով, ասացվածքներով և փոքրիկ զրույցներով: Օժտված լինելով վիպելու անժխտելի ձիրքով՝ Եղիա Մուշեղյանը իր «Հուշամատյանը» չարադրել է աշխույժ ու կենդանի լեզվով, համեմված ժողովրդական բառ ու բանով. դեպքերի նկարագրությունը նրա մոտ վերաճում է փոքրիկ զրույցների ու ակնարկների, իսկ պատմական իրական անձինք՝ ընդհանրացված գեղարվեստական կերպարների:

Այս «Հուշամատյանում» Մուշեղյանը տարբեր առիթներով իր հակառակորդների բարոյական կերպարը, նրանց ընչաքաղցությունը, անձնասիրությունն ու մարդատյացությունը բացահայտելու համար բերել է չորս գողտրիկ առակներ՝ «Ճգնավոր մուկը», «Անճնասեր կրոնավորը», «Սոված արջը» և «Գորտն ու կարիճը»[1]: Սրանցից առաջին երկուսի աղբյուրը Եղիան համարում է 1717 թ. Արևելյան հնդկական ընկերության Թավրիզի մասնաճյուղի տնօրեն մարսելցի Պոռեկարին (Բերգարին)՝ Իսրայել Օրու պարսկական դեսպանության երբեմնի քարտուղարին: Այս տարիներին Ե. Մուշեղյանն աշխատում էր Պոռեկարի մոտ և սերտ շփում ուներ նրա հետ: Պոռեկարը, տեսնելով Եղիայի կույր նվիրվածությունը կաթոլիկ կղերին, նրան քանիցս զգուշացնում է հոգևորականների խարդավանքներից և նրանց բուն էությունը բացահայտելու համար տարբեր առիթներով առակներ է պատմում, բայց Եղիան ուշադրության չի առնում: Այս առակները հետագայում, կյանքի վերջին տարիներին, նա վարպետորեն վերապատմում է իր «Հուշամատյանի» մեջ:

Առակներից մեկի՝ «Ճգնավոր մուկի» տարբերակը մշակված կա Լաֆոնտենի մոտ[2]: Հավանաբար ֆրանսիացի Պոռեկարը դրանք լսել կամ կարդացել է իր հայրենի երկրում: Ջենք կասկածում, որ մյուս երկու առակներն էլ եվրոպական ծագում պիտի ունենան: Այս առակները իրենց կառուցվածքային կատարելությամբ, խոսքի դիպուկությամբ և ընդհանրապես մշակվածությամբ վկայում են Եղիայի վիպելու կարողությունը, նրա գրական օժտվածությունը: Դասական առակներից սրանք տարբերվում են միայն վերջաբան հանդիսացող բարոյախոսական եզրակացության բացակայությամբ, բայց այդ եզրակացությունն ինքնին հասկացվում է ողջ պատումից: Առակների լեզուն գրաբար է՝ զերծ բարբառայնություններից և օտարաբանություններից: Ֆրանսերենից Եղիա Մուշեղյանի

1 Առակների խորագրերը մերն են – Բ. Ջ.:

2 Տե՛ս *Առակք Լաֆոնթենի*, էջ 144:

թարգմանած, ինչպես նաև իր «Պատմության» մեջ գրի առած առակները ոչ միայն մի նոր էջ են բացում հայ-ֆրանսիական գրական կապերի պատմության մեջ, այլև հարստացնում են հայ միջնադարյան գեղարվեստական գրականությունը:

* * *

Ինչպես նշվեց վերը, Եղիա Մուշեղյանի թարգմանած 31 առակները Ա. Երևանլին 1972 թ. հրապարակել է «Պատմա-բանասիրական հանդեսում» (№ 1, էջ 103-114) բնագրական աղավաղումներով ու սխալներով[1]: Նկատի ունենալով այս առակների կարևորությունը Եղիայի գրական ժառանգության, ինչպես և առակների լեզվի ուսումնասիրության առումով. ստորև վերահրատարակում ենք դրանք՝ հիմք ունենալով Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվի «Ռուսաստանի հարաբերությունները Հայաստանի հետ» ֆոնդի 100/I ցանկի 7-րդ գործը՝ էջ 20-31: Ի հավելումն դրանց՝ առաջին անգամ հրապարակվում են նաև Ե. Մուշեղյանի «Հուշամատյանում» (Վիեննայի Մխիթարյան Մատենադարան, ձեռ. № 980, էջ 26բ-28ա, 28ա, 263բ, 270ա) գրի առնված չորս առակները: Վերջում կցվում է հրապարակվող առակներում առկա օտար և բարբառային բառերի բառարանը, որտեղ ստուգաբանվում են այս բնագրերում առաջին անգամ հանդիպող մեր բառարաններին անծանոթ բառերը:

Բ. Լ. ԶՈՒԳԱՍԶՅԱՆ

ԳԻՐ ԱՌԱԿԱՑ ՀԱՅ ԳՐՈՎ ԵՒ ԲԱՌՈՎ

1. Աքլոր և ալմազ

Մէկ խօրօզ մէկ օր գետինն քուԹուԹ էր անում, աղբի մէջն մէկ լաւ ալմազ գտաւ, ճանկի մէջն բռնեց և աչքերն վրէն պչուցել էր, ասաց. «Հէր է սա մին պատուական ալմազ. մէկ ալմազԹրաչ չատ փող կուտեր, որ էս առնէր, ամա ի՞նչ պէԹք ա մէկ ալմազ մէկ աքլորի: Էլ լաւ էր ինձ, որ մին գարի հատ գտնէյի կամ մին փոքըր հացի փչրանք»:

Խրատ

Իմաստուն մարդն էն անճախ կուզէ, որ իրան պէտք է: Ինչի՞ ման ես գալիս էնտուր, որ քիզ պետք չէ:

---

1 Բերենք մի քանի օրինակ.
Առակ 1. պատահական ալմազ. ուղղելի՝ պատուական ալմազ:
Առակ 2. Զարմացիր այն իմաստութիւն. ուղղելի՝ զարմացիր աստուծոյ իմաստութեան...
Առակ 4. շատ ճղքեր առկաւ. ուղղելի՝ շատ ճղքեր առաւ:
Առակ 5. ճալող իկին. ուղղելի՝ ճալողիկին:
Առակ 10. Էն ժամանակ ձին. ուղղելի՝ Էն ժուկն ձին:
Առակ 15. ղայթաղ. ուղղելի՝ ղայր ազ (պարսկերեն է՝ «բացի» նշ.):
Առակ 22. Զպայ դու փռանկ. ուղղելի՝ Ապա դու փռանկ:
Առակ 28. Էն կնիկն. ուղղելի՝ խև կնիկն:
Առակ 31. Էս դիմն Էն դիմն. ուղղելի՝ Էս դիհն, Էն դիհն:

2. Մարդ ու ընկուզի ծառ

Մէկ մարդ մէկ օր մին մեծ ընկզի ծառի տակն կշտի է յընել: Ընկուզի ծառի մօտն կէր չատ-չատ դըդում: Էն մարդն վերևն մտիկ անելով ընկզի ծառին պտղին և ներքևն մտիկ անելով դըդմին, ասում էր իւր մտքումն. «Ինչի՞ էսէնց պստիկ թուփն էսէնց մեծ պտուղ կուտայ և ինչի՞ էսէնց հաստ ծառն էսէնց պստիկ յեմիշ կուտայ: Կումանքս, թէ աստուած քանզ էն է՛լ լաւ գիտէր գատերն չինել՝ մէկ մեծ ծառին պիտէր մեծ պտուղ և մին պստլիկ թփին պստլիկ պտուղ»:

Եբոր էն ասում էր, էրես ա մէն ընկուզ ծառիցն փրթաւ և ընկավ իրան գլխի վերեն: «Օ՞վ տէր, – աղաղակեց, – էտ ամէն ինչ, որ դու չինել ես, լաւ ես չինել: Եթէ ընկզի ծառի յեմիշն էս դըդմի չանքնին լինէր, ես էլ ողջ չէյի մնալ»:

Խրատ

Զարմացիր Աստուծոյ իմաստութեան և իրան գործոց վերա: Եւ ինչ որ չինել ա ամենևին մի՛ ասել՝ թէ վատ է:

3. Կատու և մկներ

Մին կատու անունն Միտու մի տան միչումն չատ մկներ կբռնէր. օրն քիչ-քիչ Ը (8) ու Ժ (10) կուտէր: Մկներն տեսնելով, որ իրանց ազգն հատնում էր, գլխըլում էր, բոլորվեցան, թէ՝ «Ի՞նչ անեմք, որ մեր թշնամու գուլմիցն պրծնիմք»: Էն բանի վրա չատ ժամանակ խորհելոյ յետև վերչն ամէնն միաբանեցան, թէ պիտէր մին պստի զանկ կատուի վզիցն կապել: Էն ֆանտօվն ասում ին. «Եբոր կատուն գուգայ, որ մեզ բռնէ, զանկի ծայնն կլեմք (կլսեմք) և փախչիմք մեր բնի մէջն»: Էն ժամանակն մին մեծ մուկն, որ կանչել էյին, որ մկներին գնտին վերակացու լինէր, երկու ոտներին վրա կանգնելով, «Էյի անխելք, – ասաց ծիծաղելով, – ձեր միչումն օվ ա՝ սրտոտ, որ կատուի վզիցն զանկն կապէ»: Էն խօսք, որ ասաց, ամեն մկներն սուս կացին:

Խրատ

Առաջ քան զմին իք[մ]ին հաստատես մին մասլահաթի վրա, նախ լաւ միտք արա, թէ էն բանն լինելո՞ բան ա:

4. Գեղեցի ու խիզաններն

Մին գեղեցի հիւանթ չատ տղէրք ուներ. էն տղէրքն հանապազ մէկ-մէկի հետ կռիւ կանէյին: Իրանց հայրն ընտոնց պարիչացնելու համար մէկ օր, որ ողջուկ էն իրան կշտին էյին, չատ ճղքեր առաւ, ողջուկ մէատեղ կապեց, մին դաստա չինեց, յետոյ էն դաստայ իր ամէն տղերքներին ձեռքն տվեց, ասաց. «Էս ճղքներն կոտորեցէք, եթէ գիտէք»: Առան և չատ յուժ արին, որ կոտրեն, ամայ չկարացին: Էն ժամանակն հիւանդն դաստէն առնու կբանա, հետ անէ և ճղքներն մէկ-մէկ առեալ ողջուկն էլ կկոտրէ առանց ջաֆայ ուտելոյ: Էն ժամանակն իրան խիզաններին ասաց. «Հէրէն ա, որ ձեզ կհանդիպի. որչանք վախտ մէկ-մէկու հետ պարիչ եք՝ մօնչ ով չի գիտել ձեզ զարար տալ, ամմա եբոր կու ջոկուէք, ձեր թշնամեաց հեշտ գլնի ձեր տունն քանտել»:

Խրատ

Էստօվ գիմանամք, թէ բաժանումն և ջոկումն ամէն չարեաց պատճառ է. զոր օրինակ միաբանութիւն և սէրն ամէն պարեաց պատճառ ա:

5. Մարմին ու իր բաժինքն

Մին օր մարմինի անդամներն հալողիկին հետ կռիւ արարին. «Մեք ամենեքեան, – ասում ին, – մարմնի առողջութեան համար անդադար բանի եմք կենում. աչքն մտիկ անելօվ, ականճ լսելօվ, լեզու խօսելով, ատամներն ծամելով, ձեռներն բանի կենալով, ոտներն ման գալօվ, էտ թամպալ ստամոքն պարարտանա, կշտանա և չատ մսօվ լցվի, և էլ ոչինչ անէ: Բաց թողումք և էստուց յետև էլ իրան համար բանի չը կենամք»:

Ապա սկսան էլ գատ չանել իսկի. աչքն էլ չէր տեսնում, ականճն էլ չէր լսում, լեզու էլ չէր խօսում, ատամներն էլ չէյին ծամում, ձեռներն էլ բանի չէին կենում, ոտներն էլ ման չէին գալիս. ինչ հանդիպեցաւ մին քանի օր յետև մարմին և ամենայն անդամքն էնչանք տկարացան, որ ըսկի ղուվատ չունէյին: Էն վախտ իրանց միչումն ասացին. «երբոր մեր միչումն հաչտութիւն կէր չաղ էյինք և յուժօվ: Անճախ են ժամանակիցն, որ մեք բաժանվել եմք, էս խեղճ հալի մէջն էմք յընկել, ապա պիտի, որ մեր կռուիցն պրծնումք և առաչի պէս խաղաղութեամբ կենամք. էն ժամանակն աչքն սկսաւ մտիկ անել, ականճն լսել, լեզուն խօսիլ, ատամներն ծամել, ոտներն ման գալ, ձեռներն բանի կենալ և մէ քանի օր յետև մարմին և անդամքն իւրեանց տկարութենիցն պրծան»:

Խրատ

Շատ հետ որ գուզեմք ուրիչի վատութուն անեմք մեր վրէն գուգա. բաժանումն ցրուէ, միաբանութիւն կու պահէ:

6. Մեղր ու ճանճերն

Մէկ օր մէկ տան մէջն կեր մին աման լիքն մեղր. ճանճերն չուտ թռան էն անուշ կերակրի համն տեսնուն. ամա երթալն փոչիմանեցան, գէրա էնտոնց ոտներն մեղրիցն կպան բանտ յելան. հենց որ չի գիտացին դուս գալ, խեխտւեցան.

Մին պառաւ ճանճ, որ քանց էնտոնք չատ խելք ունէր, կասէր մեռնելո վախտն. «Վայ մեզ ընտուր համար, որ յուզեցինք մին գամէն զօվղ անել, մեք չարաչար կու մեռանիմք»:

Խրատ

Էլ ամէն օր օրկրամոլութիւն չատ-չատ չարեաց պատճառ ա:

Մին պստլիկ զօվղ մեղաւոր հէ՛մ հոգւոյն, հէ՛մ մարմնոյն կեանքն կորցնէ. ի՞նչ խեւութիւն:

7. Զեյթունի ծառ ու էղեքի

Մէկ պաղչի միչումն կէր մէկ ծիթենի և մէկ էղեքի: Ծիթենի ծառն հպարտանում էր, և ինքն զինքն զօվում էր, թէ արմատքն խորխոր ունէր, մին հաստ փոր, մեծ և բարձր ճղքերն և թէ ֆօռթօնայի և քամու դէմ էր կանգնում, և էղեքին ոչխանտ էր անում, և իր տկարութիւն իրան յերես էր տալիս: Մին բարակ քամի, որ փչում ա, կասէր. «Ամէն կողմից կեռանաս և յուժ չունիս, որ դէմ կայնիս»: Երբոր էն ասում էր, ահայ մին սաստիկ

ֆօռթունա վեր կու կենա մին մեծ քամօվն: Էղեքն չուտ կեռացաւ քամու խաթրօվն և իրան իսկի զարար չելաւ, ծիթենի ծառն պինտ մնաց, քամու դիմացաւ, բայց քամին յաղթեց, ծիթենի ծառն քօքահան գետին քցեց:

Խրատ

Հնազանդի՛ր քանզ քեզ յուժօվին, սկի մի՛ պարծացնել քեզ, թէ քանզ ուրիշներն մեծ ես: Ամենևին մարդի մի՛ անարգել իր բնական պակասութենիցն:

8. Մին էշ ու մին գէլ

Մին փուչ էր մտել մին իշի ոտն, հենց, որ չէր գիտել ման գալ, գետնի վրեն էր յընկել: Տքալօվ, աղաղակելով, խիստ արտասուք էր թափում, մին գէլ էնտեղանց անց կացաւ և, տեսնելով գէշն էն խեղճ հալի մէջ, խեղճ էկաւ: Էշն գէլին ասաց. «Ահայ աղայ, եթե գուզէյիր իմ ոտիցս էն փուշն հանել, ես քանի կենդանի եմ քո լաւութիւն չեմ մոռանալ»:

Մօտկանա գէլն և եբոր իշի ոտիցն իր ատամներովն փուշ էր հանում, էշն սկսեց աքցի տալ, և իր յետի ոտերօվն խեղճ գէլի ատամներն և չանէքն ջարթեց: Ասում են, թէ գէլն էն ժամանակն աղաղակեց. «Վա՛յ ինձ, էստուց առէջ իմ փէշակն էս էր, որ ուրիշ անասներն կսպանէյի ու կուտէյի, և ես ուզեցի այսօր իրանց հէգիմութիւն անել: Էն գտայ, որ ինձ արժան էր»:

Խրատ

Դուն քո արուեստն բանացուր, տե՛ս, ինչոր գիտես՝ էն արայ:

Մարդ կա, որ քանզ էն էշն <էն> անասուն են, որչանք որ նրանց լաւութիւն անես՝ էնչանք առաւել քեզ վատութիւն անեն:

9. Աղուէս ու մարդի գլուխ

Մին աղուէսն քաղաք էկաւ ման գալ, մին քանտարարի խանութ մտաւ, տեսաւ մին փայտէ գլուխ խիստ լաւ չինած, առաւ իր առաջնու ոտներօվ, և լաւ մտիկ անելով, յետո ահա ասաց. «Մին սիրուն գլուխ դրսիցն, ափսոս, որ մէջն փուչ ա, մին դրամ եղուղ չունի»:

Խրատ

Մարդկանց և կանանց մէջն շատ կկտնւի այնպէս կերպարանքով, սիրուն, լաւ հագած, ակնկալած, ոսկով և արծաթով զարդարած, ինչ որ դրսիցն էրևում ա՝ լաւ ա՝ ամա մէջ փուչ է, շատ անգամ այնպիսիքն անխելք և անգէտք են:

10. Էշ ու ձի ու գեղեցի

Մին գեղեցի մին էշ, մին ձի ունէր, էնտոնք բանացնում էր, որ իր ցորենն քաղաքն տանին, և ծախէ: Մին օր ճանփումն էր, էշ ձիան ասաց. «Ախպէ՛ր, մեր տէրն իմ քամակին վրա դրել ա մին կրկին ծանր բեռն, խիստ ծանր ա, չեմ գիտել տանիլ, չաֆախաթ արա էստուց մին փոքր վեր կալ, թէ չէ ես իմ բեռի տակն վէր կնկնիմ և կմեռնիմ»: Ձին իրան պատասխան էրետ. «Ախպէ՛ր, ամէն մէկ իրան բեռն տանի՝ շատ չէ, իմ բեռն էլ ա ծանր, բեռնտ տար զոր որ գիտես»: Ապայ էշն ուժ կանէ և առաջ կերթայ 2-3 սահաթ, ամա վերչն ուժահատ բեռնտակն ընկնի և մեռնի: Էն վախտն գեղեցին էշի բեռն վէր կալնու

և ձին վրէն դնէ, յետև էշն մաշկէ, և կաշին էլ դնէ ձիան վերա: «Վա՛յ ինձ, – ասաց էն ժուկն ձին, որ ամէն մէկ քայլ էրթալով քթահաը էր անցնում էնչքան ծանր բեռի տակն, – վա՛յ ինձ, ես չուզեցի էշի բեռն թեթևացնել, ապա պիտի համ թամամ բեռն, համ իշի կաշին էլ տանիմ»:

Խրատ

Ամէն օր կհանդպի, որ օվ որ չի յուզել մին քիչ ճաֆա քաշէ, մեծ ճաֆի մէջ կնկնի: Որչանք գիտես ամէն մարդի չաֆախաթ արա. քանի որ մարդի լաւութիւն կանես, քեզ էլ չահ գլնի:

11. Առիուծ հիւանդ

Մին օր առիւծն հիւանդացաւ, եբոր ուրիշ անասունքն էն խապարն իմացան, ամէն բոլորվեցան, դաս-դաս էկին առիուծի բունն՝ իրանց թագաւորին տեսութիւն. աղուէսն իրանց հետ չէր. Գէլ, որ վաղուց հետեն աղուէսի հետն քէն էր, էն մահանայ բռնեց, որ քէն հանէ: «Տե՛ս, վէլինամաթ, – ասաց, – տե՛ս աղուէսի հպարտութիւն, որչանք արժան չը տեսաւ, որ մեզ հետ գէր քո հրամնուց տեսութիւն, քո հալտ հարցանէր»: Էն գէլի խօսքերն առիուծին բարկացուցին աղուէսին դէմ: Էն վախտ աղուէսն կհասնի և առիուծն բառանչելով՝ «Հարամզատայ, – կասէ, – էտպէս քո թագաւորն կպատուես, կտեսնես, թէ ուրիշ ամէն կենդանիքն իմ առաչևն խոնարհեցան, դու միայն քո թագաւորին անհնազանդութիւն էս անում»: «Աստուած լաւութիւն և յերկար կեանք տայ իմ թագաւորին, – ասաց աղուէսն: – Հավատա՛յ, վէլինամա՛թ, թէ էն կենդանեաց ոչ օվ քան զիս սրտացաւ չէ էլել վասն քո լաւութեան: Ես ամէն հէքիմներն, ճառահներն և աթթէրներն տեսա, և էնչանք ման եկա, որ վերչն քո ցաւին դեղ գտա»:

«Բարօվ եկար, – ասաց աղուէսին առիուծն կակղացեալ, – ինձ թէզ ասա՛, որն ա դեղն, որ պիտի ինձ լաւացնէ»:

Աղուէսն ասաց. «Հէքիմներն բոլորվեցան մասլահաթ տեսնելո, հետև ողջուկ միաբանեցան, թէ քո հրամանուց լաւացնելոյ համար քան զայն լաւ դեղ չըկէր, որ թազա մօրթած գէլին մորթօվն պատատվիս»:

Էն վախտ առիուծն թռաւ գէլի վրէն, խեխտեց, մաշկեց և մորթօվ նորա զինքն պատատեց:

Ասում են, թէ եբոր գելն հառաչում էր, աղուէսն իրան վրա ոչխանտ անելօվ՝ «Սովրի՛ր, բիճ և անիրաւ, թէ բանպասող և կռուանի ախր-ախր փորձութեանց ընկնին, որ ուզում են ուրիշի վրայ գցել»:

12. Մին գէլ, մին պառաւ

Մին գէլ քաղցած չիմանիցն դուս ելաւ էկավ մին գեղ: Մին գիշեր որ ման էր գալիս էստեղ-էնտեղ լսեց մին պառաւ կնիկն, որ սուս կացնելո համար մին էրեխա, որ լալիս էր, ասէր իրան. «Սուս կացի՛ր, թէ չէ քեզի գէլին կուտամ, որ ուտէ»:

Ուրախացեալ գէլն կուգայ տան մօտն, որ իրան որսն տանի: Անկաճ դնելով՝ լսեց, թէ պառաւն ասում էր էրեխին իրան խորտին խաղացնելով. «Մի՛ վախնալ, որդի՛, եթէ գելն գուգա՝ կսպանեմք»:

Էն չաղ գելն ամանչուխենով գնաց՝ ասելով. «Էնտեղ իսկի ֆայտա չըկայ, ուր մին կերպ կասեն՝ ուրիչ կերպ անեն»:

Խրատ

Մի՛ հաւատալ էն մարդի, որ իրան լեզու և իր սիրտն միաբան չեն:

13. Աղուէս ու հաղող

Մին օր մին աղուէս քաղցեցած ման էր գալիս ուտելոյ համար, տեսաւ մին մեծ ճիթ հաղող, որ վազնի մին ճկքիցն կախ էր, շատ հետ վեր թռաւ, որ ափէ, ամա տեսնելով, որ նման չէր, որ ափէ, բաց եթող, ասելով. «Բաց թողումք՝ հասնի, դեռ ժուռ ա»:

Խրատ

Մարդ հպարտ համիչա մին մահանա կբռնէ, որ իր տկարութիւն յայտնի չը լինի:

14. Ագռաւ ու աղուէս

Մին ագռաւ մին ճոթ պանիր առեալ էր մին տան կտրիցն: Ընկուզի ծառի ծայրին նստել էր, որ ուտէր: Աղուէս իրան տեսաւ, որ բերանումն պանիր ունէր. «Այ պարոն ագռա՛ւ, – ասաց, – ինչ որ քեզ վրա ինձ ասացել էյին ողորդ ա. թէ ամէն հաւքի մէջ քանզ քեզ սիրուն չըկայ, քո թէպուրն ձնի պէս սպիտակ այ և թէ ձայն ունէյիր էնչանք քաղցր, որչանք քո թէպուրն սիրուն ա, իրաւի արժանի կլնէյիր անասնոց թագաւոր դառնալ»:

Ագռաւն աղուէսի թիթալն սրտի տաքութենով կլսէր և հպարտութենով ուռեալ, սկսաւ ձայն հանել: Իր կտուցն բռանց բացել էր՝ պանիրն ծառի տակն վայր ընկաւ: Աղուէսն հափեց և ագռաւի վրա ոըշխանտ անելոյ հետ և փախաւ գնաց:

Խրատ

Օվ որ քեզ հետ թիթալ կու խոսի և քեզ կգովէ շատ անգամ քեզ վրայ ոըշխանտ կանէ և ուզում ա քեզ խափէ:

15. Աղուէս ու լակլակ

Մին օր աղուէսն արագիլին պատիւ կանչեց բթուն պատուի, լակլակի առաջևն մին մեծ լանկառօվ խիստ ջրի ցիմա (՛) բերեց, լակլակն չէր գիտում ուտել, գայր ազ իր ճիգ-ճիգ կտցի ծայրօվն, ամա հաս հապաս էր կտցատում, քիչ-քիչ էր հափում, ամմա աղուէսն Բ. Գ. (երկու-երեք) թիքա արաց ողջուկն կուլ տուեց, ապայ արագիլն խիստ ամօթօվ մնաց, աղուէսի բնիցն քաղցած դուս ելաւ:

Մին քանի օր յետև արագիլն իր ամաչուխենի քէնն հանելոյ համար աղուէսն պատիւել կու կանչէ և դոր ինքն առաջ արեր էր իրայ կուշտն կու բերէ մին խիստ ջրի ղալիյեայ պլօր չիչի մէջ. չիչի վիզն ճիգ-ճիգ էր: Աղուէսն որ ղալիա տեսնում էր չիչի մէջն չիչի կչտերքն լիզում էր, ամա հապաս-հապաս, իսկի գատ չէր ափում: Էն չաղն արագիլն ուր ճիգ կտուցն կոխելով չիչի վզի մէջն ողջուք ղալիայ կերաւ, ապայ աղուէսն չարմանտայ մնաց և խիստ քաղցած դուս գնաց:

Խրատ

Օվ որ ուզում այ ուրիչի խափէ, արժան է, որ ինքն խափուի:

16. Առիուծ ու մօծակ

Մէկ օր մօծակն առիուծի կուշտն իրան ասաց. «Ասում են, թէ դուն քան զամէն անասուններն ուժով էս, տեսնումք եթէ ողորդ է, եկել եմ քեզ հետն քուշտի բռնեմ»:

«Դու ո՞վ ես, – ասաց առիուծն: – Եւ որչանք պիտի ըլնի էնչանք պստլիկ անասունին յուժ»:

«Յել տեսնեմք», – ասաց մօծակն: Եւ նոյն ժուկն մօծակ թռև առաւ թռաւ մտաւ առիուծի քիթն: Առիուծն քիթն ճմռթում էր, որ մօծակն քիթից հանէր, դետնին թաւալ-թաւալ էր գալիս, իր քինթն և իր դունչն ճանկով ճանկռատում էր, ամա հապաս-հապաս, ոչինչ չէր գիտել մօծակն քնթից հանել:

Էն ժուկն մօծակն առիուծի քնթից դուրս թռեալ, տեսել էս, ասաց, թէ՝ «Դոր ես քանզ քեզ էլ յուժով եմ»: Եըոր թռչում էր իր յաղթուեթեան համար հպարտ. ահայ իր անբախտուեթենով կնկնի գործարարի գործի մէջն. էնտեղ բանտ կմնայ, գործարարն չուտ գուգայ, իր գործովն մօծակին կպատատէ, կբռնէ կուտէ:

«Վա՛յ ինձ, – ասում էր հոգևար մօծակն, – առիուծին յաղթեցի, որ է անասնոց թագաւոր, և ահայ կերակուր դարձեալ եմ ճանավարին, որ քան գիս էլ փիս այ»:

Խրատ

Քո թշնամիցն հանապազ վախիր և իրանիցն պատրաստ կացիր, որչանք տկար լինի՝ գիտէ քեզ վնաս տայ: Ինչ բարի գործ, որ գործես, և որչանք չնորհք, որ ունիս, մի՛ հպարտանալ: Շատ անգամ դէմ կանգնիմք և յաղթեմք մեծ փորձուեթեանց մէջն, և թեթև փորձուեթեանց մէջ յաղթւիմք:

17. Գէլ ու գառն

Մին օր մին գառ ու մին գել մին առուիուումն ջուր ին խմում. գէլն վերևն, գառն ցածն: Գէլն գառին չլեթաղ անելօվ՝ «Շան որդի, – ասաց, – ինչի՞ պղտորես ջուրն, որ ես խմում եմ»:

«Թողուեթիւն արա՛, պարո՛ն, – ասաց գառն՝ վախից դողալօվ: – Դո՞ր ես գիտեմ պղտորել ջուրն, որ դու կխմես, չունքի դուն վերև ես, ես ցած»:

«Լաւ, – ասաց գելն, – էս բաց թողնեմք, ամա մոիտ չէ՞, – ասաց, – թէ մին տարի կայ, որ դու պատճառ ես եղել, որ չներն ինձ կծատեցին»:

«Ես մին տարի չկամ, – ասացն գառն, – հավատա՛, պարո՛ն, բռանց երեք ամիս ա, որ ես ծնել եմ»:

«Ինչ որ ըլնի, – ասաց գէլն, – քո հայրն կամ քո մայրն ինձ չատ անգամ չատ սրթամ են արել, պիտի քեզանից քէնն հանեմ»: Գելն էն ասելով՝ գառի վրա թռնում ա, կտրում ա, ուտում ա:

Խրատ

Աստուած մեծատանց բռնուեթենից քեզ պահէ, որչանք անմեղ լինիս, եթէ գուզեն քեզ վատուեթիւն անեն, ամեն կերպ մահանա կբռնեն, որ իրանց անիրաւ կամքն կատարեն:

18. Քամի ու արեգակ

Մին օր արեգակ ու քամի մինտեղ գնացին չքար, հասան մին մեծ դուզ և մին սարի ծայրին տեսին մին մարդ, որ խոտի վրէն թեք էր ընկած, ասացին՝ «Տկլորացնեմք էս մարդուն»: «Բաց թող, – ասաց քամին արևոյն, – ես անեմ»:

«Չէ, – ասաց արևն, – թող ես անեմ, կտեսնես թէ բանն գլուխ կտանեմ»:

Քամին կողին յընկաւ և սկսաւ դայիմ վարար ուժով փչել, ամա ոչին չարեց, զրա էն մարդն, որ սարի վրէն էր, իր չորն դեն չը գցեց, ամա առաւել պատատվեց քամու դէմն, էն ժուկ արեգակն սկսաւ իր չառավիղօվներօվ չոքացնել: Էն մարդն չոքումն փթթած՝ չորն հանեց:

Խրատ

Ուժօվ բան չէ լինիլ. ամէն ինչ քաղցրութենօվ կլնի: Հին առակ ա, թէ «Մեղրի կաթնօվն էլ շատ ճանճ կբռնւի, քան թէ քացախի կարասօվն»:

19. Աղուէս ու այծ

Մին օր աղուէս ու այծ խիստ ծարաւ էյին: Երկուքն էլ մտան մին հորի մէջ խմելոյ համար. կուշտ խմելոյ յետև ուզեցին հորիցն դուս գալ, ամայ չը կարացին: Էն ժուկ աղուէս էծին ասաց. «Խաթիռջամ կացի՛ր, ես ֆիքրեմ դոր պիտի էս տեղանց դուս ելնիմք, պիտի լա քո յետի ոտներին վրա կանգնիս և քո առաչի ոտներն հորի պատին դէմ դնես, քո կոտոշներն կեռացնես և գլուխտ ցածացնես սրտի դեմ, ես վեր ելնեմ և թռչելօվ հորիցն դուս կերթամ, և քեզ կհանեմ: Էծն աղուէսին հաւատաց և դոր ասացեր էր այնպէս արաց, աղուէսն հորիցն դուս ելաւ, սկսաւ հորի եզրն պար գալ, էծի վրա ոըչխանտ անելօվ և սկի հոգ չքաշեց, որ էծն հանէր: Էն ժուկ էծն բարկացաւ աղուէսին վրա և իրան երես տուեց, թէ անիրաւ էր և իր իրղարիցն դուս էր: Աղուէսն իրան ճուղապ տուեց. «Ծվ իմար և անխելք, եթէ քո գլխուտ էնչանք ըկուղ կեր, որչանք քո միրուքտ մազ ունի, առաջ քան մտնել էս հորի մէջ միտք կանէյիր, թէ ինչպէս դուս ելանեմ»:

Խրատ

Առաջ քան սկսել մին իքմին, լաւ միտք արա՛, թէ էն իքմինին վերջն դոր գլնի: Եթէ գուզես մին զարարի մէջ մտնուս, լաւ մտածէ՝ թէ դոր դուս գլնիս:

20. Որսարար ու վերի կօվ

Մէկ օր մէկ քանի որսարար գնացին որս, տեսին մին վերի կօվ, յետնէն վազ տուին: Վերի կօվ իգու մէջ փախաւ գաղուեցաւ: Որսարարներն մտան իգու մէջ, դէս-դէն, աս կուման այն կուման ման ին գալիս, ամա մոնչ ինչ չգտան, ապա բաց թողին գնացին: Էն ժուկ վերի կօվն սկսաւ այգու տերևներն ուտել: Որսարարք ձայնն իմացան, սկսան էլ նոր ման գալ և չունքի այգու տերևներն քիչացել էյին, թաք-թաք ին մնացել, որսարարքն վերի կօվ տեսին, մին թափանցրկօվ վեր գցեցին: Վերի կօվն մեռանելու ժուկն ասում էր. «Վա՛յ ինձ, էս տերև ինձ կու պահեր, ես բի աղուհաց և նամեք հարամ, լաւի փոխարէն վատութին արարի: Մեռնելու արժանի ելայ»:

Խրատ

Նոյն պատուհաս քեզ կհանդիպի, եթէ չարն հատուցանես փոխանակ բարոյն:

21. Վերի էշ ու տաճու էշ

Մին վերի էշ տան էշն տեսաւ, որ ախոռի մէջն հանգիստ նստած էր, գարի ղարման կուշտ ուտէր: Նախանձեցաւ իրան վերա, և ասաց. «Էրնեկ էն իշուն, երբոր ես սարին վրա կկենամ խեղճ, քաղցած, ողորմելի, նա զօվղ է անում և կուշտ ա ուտում»:

Մին քան օր յետև վերի էշն տեսաւ տան էշն, որ մէջքի վրէն ծանտր-ծանտր բեռն է տանում և էնտուր տէրն ծեծելով, թակելով, բզելով քշում էր, էն ժուկ վերի էշն ասաց. «Էտուց հետև քեզ վրեն էլ չեմ նախանձիլ, իմ զովզն քանց քոնն լաւ ա, քո ճաֆէն քանզ քո սաֆէն էլ շատ ա»:

Խրատ

Ամէն օր մեք մեծատուն տեսնեմք, որ լաւ կուտեն, կուշտ խմեն, սիրուն հագնին, զօվզ ուրախութիւն անեն, ամա խապար չեմք, թէ իրանց նեղութիւն, ճաֆա, փորձութիւն որչանք այ:

22. Աքլորք ու կաքաւ

Մին մարդ հինգ ու վեց աքլոր ունէր, մին կաքաւ առաւ, բերեց աքլորների մէջ ցգեց: Աքլորք ամէն օր կաքաւին հետ կռիւ կանէյին, թակէյին, կոըցատէյին: Կաքաւն խիստ տրտմեցաւ և ինքն իրան մէջն ասում էր. «Հալպաթ թե ինձ հետն էնպէս կռիւ են անում, զրա ես զարիպ եմ, էնտոնց զաթից չեմ»: Մէկ օր տեսաւ, թէ որճագներն մէկ մէկու հետ կռիւ ին անում, ասաց. «Զունքի էնպէս ա, էտուց հետև էլ չեմ տրտմիլ: Եթէ էնտոնք իրանց ազգի հետն կռիւ կանեն, ինչ զարմանք էն թէ զարիպի հետն միաբան չեն»:

Խրատ

Ապայ դու ֆռանկ մի՛ զարմանալ, թէ հայոց մէջ գտնվին խռօվասէրք, հակառակք կռուանիութք, որը քեզ նեղացնեն, չունքի ամէն օր տեսնես թէ ինքեանք իրանց հետն պարիչ չեն:

23. Անասունք ու առիուծ

Մին առիուծ ուրիչ հայվաններին հետն ընկերացաւ, թէ գնամք որս: Ղօվլ արաբին, թէ ինչ որ որս կանեմք՝ բաժանեմք: Գնացին, մին վայրի խոզ բռնեցին, ամէն անասունք եկին բոլորվեցան: Միննն ասաց. «Էս իմ բաժին ա»: Էն մէկէլ ասաց. «Էն ա իմ բաժին»: Նոյնպէս և այլք: Բարկացաւ առիուծն, վայրի խոզն բռնեց, չորս ճոթ արաց, ասաց. «Էս ճոթս իմն ա, զէրա ես քանզ ձեզ մեծ եմ, էն ճոթն էլ իմն ա, զրա ես քանզ ձեզ ուժով եմ, էն մէկէլ ճոթն էլ իմն ա, զրա ես շատ ճաֆա քաշեցի քանզ ձեզ, էս մնացած բաժինն օվ որ գուզէ առնու. ես իրան կկտրատեմ»: Անասունքն վախեցան, որսն թողին, դարտակ գնացին:

Խրատ

Եթե գուզես ուրիչի հետն ընկերանաս, քո պէսին հետ ընկերացիր: Թէ քանզ քեզ մեծի հետ ընկերութիւն անես, ինչ ղօվլ որ անէ, թէ քո հախն քեզ կուտամ, վերչ մին մահանա կբռնէ, որ քեզ զրկէ:

24. Սարն յղի

Մին օր մին խապար էլաւ, թէ մին սարն ուզում էր ծնէր: Ամեն ժողովուրդ պօլուկ-բօլուկ բոլորվեցան գնացին սարի կուշտն՝ տեսնեն թէ վերչ ինչ գլնի: Ողջ պաշարել էյին և սերկերտան, թէ էնչանք մեծ սարիցն ինչ կու ծնանի: Սարի ցաւ բռնեց, ծնաւ, բերեց մին պստլիկ մուկն, ժողովուրդ, որ տեսան, ծիծաղեցան, գնացին:

Խրատ

Շատ մարդ կայ, որ ինքն զինքն կգովէ, թէ ես չատ հունար ունեմ, էնպես արարի, էնպես գիտեմ, անեմ, ամմայ ձեռիցդ բան չի վեր կալ: Էնպես մարդն արժանի ա, որ իրան ոըշխանտ անեն:

25. Գէլ ու կոունկ

Մին գէլ մին ոչխարն բռնել էր, ուտում էր, մին ոսկոր ծուռ գնաց, կուլին բանտ էլավ: Խեղճ գէլն սկսաւ վայել, ամեն անասներին աղաղակել, թէ՝ «Աստուած կսիրեք էկէք մին ճար արէք, իմ կուլիցն ոսկրն հանեցէք»:

Վախեցան անասունք, ոնչօվ սիրտ չարեց, որ գէլին առաջ երթայ: Էն ժուկն մին կռունկ անց էկաց, գէլն ողորմորաց, ասաց. «Կռո՛ւնկ, իմ քո՛ւրս, քեզ մատաղ էրթամ, ինձ օգնութիւն տո՛ւր, դեղ արա՛, խեխտըվում եմ: Թէ էն ոսկրն իմ կուլիցն հանես, ինչ որ յուզես, էն քեզ կտամ»: Կռունկն էկաւ, իր յէրկէն կտուցն կոխեց գէլի կուլն, ոսկրն հանեց: Ասաց. «Գէլ ախպե՛ր, հրես ա պրծար, իմ հախն տուր»: Գէլն բարկացաւ և [ա-սաց]. «Գնա՛յ, դու մուննաթ չես գիտել, թէ գլուխտ իմ բերանումն էր ողջ դուս էկաւ, էլ ի՞նչ հախ ես ուզում»: Կռունկն էլ վախեցաւ, թռաւ, գնաց:

Խրատ

Շատ մարդ կայ, որ քանզ այն գէլն էլ զալում և բի աղուհաց են: Թէ դուն իրանց լաւութիւն կանես՝ իրանք քո լաւութիւն չեն յիմանալ: Եըոր դուն իրանց պէթքական ես, ողորմորան, խոնարհին քեզ առաջևն, եըոր իրանց չնորք արեցիր, քեզ էլ յ[էր]ես չեն տալ:

26. Դաշտի մուկն ու տան մուկն

Մին օր դաշտի մուկն էկաւ քաղաք, և տանու մկան պատիւ կանչեց: Գնացին դաշտն: Դաշտի մուկն ինչոր աղունք ու ազուղա պատրաստել էր, խոտ հատ և արմատ, ամէն առաջ բերեց: Ծիծաղեցաւ տանու մուկն ասաց. «Ապայ էս ա որ ուտես, խեղճ ես, մեք քաղաքումն կուտեմք գմեղր, շաքար, հաց և չատ ուրիչ անուշ կերակուր»: Դաշտի մուկն ասաց. «Ապա պիտի լա որ ինձ մին օր պատիւ կանչես, տեսնեմ ողորդ ես ասում»: «Աչքիս վրա, – ասաց տանու մուկն, – էքուց վատայ ա»:

Էքսն դաշտի մուկն էկաւ քաղաքն: Պատիւն թամամ հազիր էր և սկսում ին ուտել մին սիրուն օթաղի մէջն: Եըոր տանտէրն դուռն կբանա, ներսն կմտնու, մկներն կվախե-

նեն, և սոֆրից դողալօվ վեր կըկենան և կփախչեն իրանց բնի մէջն. տանտէրն օթաղից եըոր դուս էլաւ. տանու մուկն իր բնից դուս կուգա, և իր յընկերն կկանչէ, որ վախից դողալօվ իրան ասաց. «Ապայ դու էսենց կուտես, ես լաւ կուզեմ իմ խոտերն, իմ տակ...յիկներն անվախ, և թէ դաղտաղա ուտել, քան թէ ուտել հանապազ ձեր պատուա-կան կերակրեր վախի և դաղտաղի մէջ»:

Խրատ

Մեծատանց վրա նախանձում ենք, եըոր մինակ իրանց մեծուԹիւն տեսնումք, ամ-մայ, ամա օվ որ իրանց տրտ[մ]ուԹիւն, իրանց ճաՓա կճանաչէ էնտուր խեղճ են գալիս: Քիչ ապրանք առանց տրտմուԹեան լաւ է, քան շատ ապրանք տրտմուԹենի մէջ:

27. Մին կնիկ. մին հաւ

Մէկ օր մին [կնիկ] մին [հաւ] ունէր, որ ամէն օր մին ձու էր ածում, էն կնիկն իրան Փիքիրի մէջն ասաց. «Զունքի իմ հաւն օրն մին-մին ձու ա ածում, էկէր իրան շատ կուտ կտամ, մէկի աբիլն երկու կածէ, ապայ շատ կուտ տվեց: Հաւն էնչանք կիրացաւ, որ էլ ձու չածեց:

Խրատ

ԱգահուԹեն[է] փախի՛ր: Էն փոքր, որ աստուած քեզ տուել ա, էնտուց ռազի կա-ցի՛ր: Ով որ շատ գուզէ՝ ամէն կկորցնէ:

28. Մին կնիկ ագահ

Մին կնիկ մին հաւ ունէր, որ ամէն օր կածէր մին ոսկէ ձու: Էն կնիկն ասաց. «Ալպէտ ԹէՓ իմ հաւի փորի մէջն պիտի մին ոսկէ մատան լինի, ապայ հաւն մօրԹեց, փորն ճղեց, ամայ խև կնիկն ըսկի զատ փորի միչումն չը գտաւ, ապայ իր ագահուԹենիցն ամէն կօրուց և ըսկի զատ չչահեց:

Խրատ

Էրնեկ ընտուր, որ քիչ զատին ռազի ա: Ագահ մարդ շատ հետ կկորցնէ ինչ որ ունի, եըոր ուզում այ ինչ որ չունի:

29. Մին շուն

Մին շուն, անունն Վավուշ, մին օր Սպահանա գետումն լող տալով անց էր կենում: Բերանումն ունէր մին մեծ կտոր միս: Էն մսի չաքը ջրի մէջն երևում էր: Շունն էն չաքն տեսնելով՝ էնպես իմացաւ, ԹէՓ ալպէՓ մսի կտոր էր, բերանն բացաւ, որ բռնէ, ամայ զատ չգտաւ: Եւ էն միսն, որ բերանումն էր, ընկաւ, գետն տարաւ:

Խրատ

Ագահ մարդ էն չան պէս ա. ինչոր ունի հէրկից ռազի չէ: Հանապազ ուզում այ իւել ունենայ, ամա շատ հետ ողջուկ էլ կկորցէ:

30. Մին հալեւոր մարդ ու մահ

Մին հալեւոր մարդ գնացէր էր ջանկալիցն փէտ բեռ բերէր իր տուընն: Շալակի վրա ծանար էր, ծանտրուէթենէն դադրաւ ընկաւ, մահ կանչեց իրան համար: Մահն էն սահաթն իրան երևաց և ասաց, թէ՝ «Ի՞նչ բան ունիս ինձի հետ, որ ինձի կանչեցիր»: Ասաց հալեւորն, թէ՝ «Ես կանչեցի, որ ինձ օգնուէթիւն անես, որ էս բեռ փէտն վեր կալնես»:

Խրատ

Որչանք որ չարչարանք և ջաֆայ Ադամայ որդուն չատ ըլնի, մահին սազի չի ըլնիլ:

31. Այծեամ ու կովեր

Ջէյրան որսարարի վախիցն փախաւ, մին գոմ մտաւ, էնտեղ կովեր կէր, աղաչեց իրանց թողնին մին սահաթ էստեղ պահուի: Կովերն ասացին. «Էստեղ քու պահուելու տեղ չէ, ընտուր համար որ էս տանն նօքար կա, տէր կա, տղա կայ, ամէն սահաթ գուգան կերթան, քեզ կբռնեն»: Այծեամն ասաց. «եթէ դուք, նշանց չեք տալ, յահ չըկայ»:

Էն խօսքի վրա նօքարն եկաւ, այծեամն փախաւ խոտի տակն: Նօքարն չիմացաւ, դուս յելաւ, դուռն ամրեց, գնաց: Էն ժուկն ջէյրանին սիրտն պրկաւ, էլ չէր վախում: Մեծ եզն ասաց այծէմին. «Անմիտք նօքարին խափելն հեչտ ա, ամա տանտէրն, որ աչքն բաց ա, ամէն տեղն կբնտռտէ, ամէն բանն կիմանայ, չէ յըլնիր, որ խափես իրան, կու բռնէ գքեզ»: Մին սահաթից յետ տանտէրն էկավ մտաւ գոմն. էս դիհն էն դիհն ման գու գէր, էն խոտերին ձեռ տվեց, ջէյրանն գտաւ, բռնեց ու մորթեց:

Խրատ

Այծեամն, որ կփախչի, նման է մեղաւոր մարդին, որ իր մեխքիցն չի յուզեր փախնի, ամա Աստուած Աստուծոյ ճանփից ամէն օր իւել երկար լինի: Էն նօքարն, որ ջէյրանն չի տեսնիլ, խոստովանահայր ա, եըոր խոստովանիս մէկ մեղքն մեծ, որ քեզ կտանի դժոխքն, ամոթով չես ասել խոստովանահօրն, նօքարի նման կխաբես, ամա տանտէրն, որ Աստուած ա, եըոր գու գայ ամէնն խապար այ, ընտուր համար Աստուծոյ իսկի բան չի պահուիր: Աստուած չես կարեր խաբեր, գու գայ, կտեսնի, կու բռնէ կսպաննէ, դժոխք կու ցգէ:

ԱՌԱԿՆԵՐ ՔԱՂՎԱԾ «ՀՈՒՇԱՄԱՏՅԱՆԻՑ»

1. Ճգնաւոր մուկը

Մուկ մի չրջէր ամպարի միջ, յորում կային բազում կաղապարս պանրից, որք էին շապկած ի մէջ արճճից: Զգաց մուկն այն ի հոգի իւր, թէ գոյին ի մէջ նոցա գիր ինչ վասն ապրելոյ նորա: Այնքան աստ և անդ չրջեցաւ մինչոր գտաւ կաղապար մի, որ վրայի շապիկն թոյլ էր ծալած: Շատ աշխատեցաւ մինչոր կարաց գլուխն ի ներս մուծանել: Տեսաւ անդ իւր ցանկալի ապրուստն, որ որքան որ կենդանի էր բաւական լինէր ինքեան: Զկնի ուրախութեան իւր կերաւ գնմանէ, յագ և ասաց.

– Քան զայս առաւել ի՞նչ կամի յանձն իմ, – ասէ, – բնակեցայց աստ և միշտ ուրախ եղեց: – Դարձեալ խորհեցաւ և ասէ. – Աստ մնալս գուցէ վնաս առ բերէ, զի որոնեն զիս զազգն իմ և տեսնուն զայս բարիքս և լինին ընկեր բարեացս, զոր աշխա-

տանօք գտայ ես զայս: Գիտեմ զինչ արարիցի, – ասէ, – գնամ նախ հրաժարիմ ի ազգականացս և ապա գամ անհոգս բնակիմ աստ:

Այսպէս գնաց առ ազգականսն իւր, կոչեաց զնոսա զամենեսեանսն առ ինքն և ասէ.

– Ես կամիմ հրաժարիլ ի աշխարհէն և լինիլ կրօնաւոր և մտանել ի վասն ուրուք:

Լալով և սգալով բերին զնա առ կաղապարս պանրաց, տեսին նոքա այսքան արճըճապատ պանիրս, համարեցան թէ է կարկառս քարանց: Զկնի լալոյ և սգալոյ մտաւ ճգնաւորն ի ծակ անդր և նոքա ողջունեալ դարձան ի տեղիս իւրեանց:

Անցաւ աւուրս բազումս, յարեաւ որսորդ կատու մի, որ սպառեալ կամէր զամենայն սերունդս մկանց, վասն որոյ ժողովեցան ամենայն մկունք խորհիլ վասն կատուին հնար ինչ: Որ ոչ գտան ճար ինչ, ասեն.

– Գնացիք առ հաւն (նախահայրն) մեր, որ եմուտ ի քարս, հարցցուք ի նմանէ, քանզի հնագոյն է ի մեզանէ:

Գնացին և կանգնեցան ի վերայ ծակին և ձայնս արձակեցին: Երկեաւ մուկն, թէ մի գուցէ մտանէ ոք ի ներս և տեսանէ վայելչութիւն վանուցն այն, առժամայն գլուխն դուրս բերեց ի ծակէն, նւազ ձայնիւ հարցանէր ի նոցանէ, իբր թէ նւազեալ է ի կենաց՝ ի քաղց և ի ծարաւ մնալով:

– Վասն որո՞յ իրաց, – ասէ, – եկիք:

Նոքա բողոք բարձին և ասեն.

– Մեռանիմք ի սովու, քանզի յարեցաւ անօրէն կատու մի, որ ոչ կարեմք ելանել և գտանել կերակուր, որով ապրիցուք:

Պատասխանեց.

– Վասն այն հրաժարեցայ ես աշխարհէ, որ ոչ խառնակիմ այդպիսի իրաց: Գնացէ՛ք, դուք գիտեք ձեր օգուտն:

Պատասխանեն.

– Որ ոչ կամիս օգնել մեզ, գոնէ տուր մեզ տեղի, զի մեք ճգնիցուք ընդ քեզ:

Պատասխանեց.

– Աստ ոչ գոյ բաւական տեղի մեզ և ձեզ: Արդ եթէ կամիք լինիլ ճգնաւոր, ահա քարինք բազում կան առաջի ձեր, մտէք ի նոսա:

2. Անձնասէր կրօնաւորը

Կրօնաւորք երկու գնացին ի ճանապարհ, պատահեալ ի տեղի մի տեսանեն գունդ իր մի՝ կախեալ ի թելէ միոջէ: Կամեցաւ կտրել կրօնաւորն զթելն այն: Այր ոմն, որ անդ կայր, ասաց զկրօնաւորն.

– Այր դո՛ւ, զի՞նչ կամիս առնել:

Ասաց կրօնաւորն.

– Կամիմ զի հատից զթելն զայս:

Ասաց այրն.

– Ի թելէդ կայ ի կախեալ զամենայն աշխարհ, եթէ հատցես զդա՝ կորնչի ամենայն աշխարհ:

Պատասխանեց կրօնաւորն.

– Ինձ ոչ է փոյթ, եթէ կորնչի աշխարհ, այլ զայս թելս ինձ փոյթ է ունիլ, որով կարկատել կամիմ զհանդերձն իմ:

3. Սոված արջը

Արջն սովի և ոչինչ գտանէ ուտելի, խորհի ուտել զգաւակն իւր, բայց ենթադատէ ի մտի և ասէ.

– Մեղադրեն զիս, թէ եկեր զգաւակն իւր:

Կալնու զքոթոթն իւր և թաւալեցուցանէ զնայ ի մէջ տղմից այնքան, որ այլակերպի: Զկնի այնքան անարգուեան և չարչարանացն հայի դէպի նա և ասէ.

– Ո՞վ է սա:

Դարձեալ գառնայ և պատասխանէ ինքն իւրեան և ասէ.

– Քո գաւակն է:

Դարձեալ պատասխանէ.

– Քաւ լիցի. սա ամենայն իրօք ոչ նմանի ինձ:

Այնժամ սկսէ զնա պատառել և ուտել:

4. Գորտն ու կարիճը

Կարիճն ոմն եղբայրացաւ ընդ գորտի միոջ: Աւուր միում եկաւ կարիճն առ ափն լճին՝ տեսանել զեղբայրն: Զկնի բազում գրուցից, ասաց կարիճն ցգորտն, թէ՝

– Կամիմ, որ տանիս զիս ի ներքս ի լիճն զբօսանուլ:

Առաւ չալակն և խաղացոյց ի ներքս: Զկնի զբօսանացն ասաց կարիճն գորտուն, թէ՝

– Եղբա՛յր, կամիմ խայթել զքեզ:

Պատասխանեց գորտն և ասաց.

– Ինձ հետ եղբայրացել ես և խոստացար ընդ իս բարեկամութիւն պահել, քեզ հակառակ ինչ ոչ գործեցի, յաւել առի քեզ ի չալակս և բերի աստ զբօսանուլ, փոխանակ բարութեանս կամիս տրիտուր տալ:

Պատասխանեց կարիճն և ասաց.

– Իրաւ որ եղբայրացայ ընդ քեզ և դուն ապիրատ ինչ որ գործեցիր ընդ իս, բայց իմ բնութիւնս այնպէս է՝ մինչորոչ խայթեմ՝ ոչ լինիմ:

Ի ասել բանին պօստվեց գորտն ի տակէն կարճին և լողաց, բայց կարիճն եղև խեղդամահ:

ԲԱՌԱՐԱՆ[1]

Աբիլ *(27) – անստույգ նշ. բառ:*

+Ազուղա *(26) (պարսկ. azuḳa) – ուտելիք, պաշար:*

+Աթթէր *(11) (արաբ., պարսկ. ʻaṯṯār) – դեղավաճառ:*

+Ալմազթրաշ *(1) (պարսկ. almastrash) – ակնահատ, ադամանդագործ:*

○Ալպէթ *(28)*, Ալպէտ *(29) (արաբ.-պարսկ. albata) – իհարկե, անտարակույս: Տե՛ս և հալպաթ:*

Հալբաթ *ձևով օգտագործվում է որոշ բարբառներում (Մալխասյանց, ԺՀԼԲԲ):*

○Ախր *(11) (արաբ.-պարսկ. aḵhr) – վերջ, ավարտ:*

Ախր-ախր *– վերջ ի վերջո:*

Մալխասյանցը և ԺՀԼԲԲ ունեն ախար, ախըր, ախր *որպես եղանակավորող բառ «Ջէ՞ որ, ապաքեն, բայց դե» իմաստներով:*

Ամա, Ամմա *(1, 2...) (արաբ. պարսկ. amma) – բայց, սակայն:*

○Բանտ *(25) (պարսկ. band) – արգելք, պատնեշ:*

Բանտ էլավ *(25) – դեմ կանգնեց:*

Մալխասյանցը և ԺՀԼԲԲ ունեն բանդ և բանտ *«թումբ, կապ, հանգույց» իմաստներով:*

+Բթուն *(15) (թուրք. būtun) – ամբողջական:*

+Բի *(20, 25) (պարսկ. bī) – առանց,* ան *ժխտական նախածանց:*

+Բի աղուհաց *– անաղուհաց:*

□Բոանց *(17) – հազիվ հազ:*

+Բօլուկ, պօլուկ *(24) (թուրք. buluk) – խումբ:*

□Գլխըլել *(3) – հատնել:*

□Գործ *(16) – սարդոստայն:*

□Գործարար *(16) – սարդ:*

+Դաղտաղա *(26) (արաբ.-պարսկ. daghdagha) – երկյուղ, սարսափ, վախ:*

□Եղուղ *(9) – ուղեղ:*

+Ջաթ *(22) (արաբ.-պարսկ. dhāt) – 1. ցեղ, տեսակ: 2. բան:*

Ջատ *(2, 5) – տե՛ս* զաթ *2:*

Ջարար *(4, 19) (արաբ.-պարսկ. ḍarar) – վնաս:*

---

1 Յուրաքանչյուր բառի համար տրվում են տվյալ կոնտեքստի մեջ նրա ունեցած իմաստները: Փակագծերում բերված թվերը մատնանշում են առակի համարը: Բոլոր այն բառերը, որոնք մեր բառարաններում չեն գրանցված, ցույց են տրվում + պայմանանշանով: Եթե բառը ծանոթ է մեր բառարաններին, սակայն նորովի է մեկնաբանվում կամ բացատրվում, ապա այն ցույց է տրվում ○ պայմանանշանով: Բառարանում բերված են բարբառային որոշ ձևեր, որոնք տրվում են □ պայմանանշանով: Այս բառարանում վկայակոչված են՝ **Հր. Աճառյան.** *Հայերեն արմատական բառարան.* հհ. Ա–Է, Երևան, 1926-1935 = Աճառյան: **Ստ. Մալխասյանց.** *Հայերեն բացատրական բառարան.* հհ. Ա–Դ, Երևան, 1944-1945 = **Մալխասյանց.** *Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան.* հհ. Ա–Դ, 1969-1980 = ԺՀԼԲԲ:

+Ջէրա *(6, 23)*, զրա *(18, 22) (պարսկ. zīra) – որովհետև, քանի որ:*

○Ջուլմ (3) *(արաբ.-պարսկ. zulm) – բռնություն:*

Մալխասյանցը և ԺՀԼԲԲ ունեն զուլում *ձևով:*

+Ջօվղ *(6, 21) (արաբ.-պարսկ. dhok) – հաճույք:*

+էկէր *(27) (պարսկ. agar) – եթե:*

□էղէքի *(7) –եղեգ:*

□էրես *(2) – հրես, ահա:*

□ըկուղ *(19) – ուղեղ:*

+Թափանցըն *(20) (պարսկ. tapanca) – ատրճանակ:*

+Թիթալ *(14) (պարսկ. tītal) – չողոքորթություն:*

□ժուռ *(13) – խակ:*

□իւել *(16) – ավել, ավելի:*

+Իղար *(10) (արաբ.-պարսկ. īkrār. հայերենում* որ *եռևառաջնությամբ) – համաձայնություն:*

○լանկաո *(15) (թուրք. lankar) – տափակ ափսե (կավից կամ մետաղից):*

Մալխասյանցը ունի լանկաոի *ձևով:*

□խիզան *(4) – երեխա:*

+խաթիրջամ *(19) (արաբ.-պարսկ. khatirdjam‘) – վստահ, համոզված:*

□կուլ *(25) – կոկորդ:*

○կուման *(20) (պարսկ. gumān) – կարծիք:*

Աճառյանը (Բ, 302) ունի գուման *ձևով:*

+կոուանիութ *(22) – կռիվ նյութող:*

□հալողիկ *(5) – ստամոքս:*

հախ *(2, 14, 25) (արաբ.-պարսկ. hakh) – իրավունք, հասանելիք:*

+հապաս *(15, 16) (արաբ.-պարսկ.‘abath) – դուր:*

հաս-հապաս – *իզուր:*

+հէրկիզ *(29) (պարսկ. hargiz) – երբեք:*

○հունար *(24) (պարսկ. hunar) – չնորհք:*

Մալխասյանցը դնում է որպես պահլավական փոխառություն: Ուղղելի՝ պահլավ. փոխառություն է հնար, իսկ հունար նոր փոխառություն է պարսկերենից (տե՛ս Աճառյան, Դ, 335):

Ղալիա. Ղալիյեա *(15) (արաբ. ḳalīya) – մսով պատրաստված կերակուր:*

+Ղայրազ *(15) (պարսկ. ghayr-az) – բացի:*

○Ղօվլ *(23) (արաբ.-պարսկ. ḳūwl) – խոստում, պայման:*

Վկայված է XV դարից ղալ *ձևով, Ադամգիրք 21, 255 (Աճառյան, Արմատ. բառ., Դ. 538):*

○ճառահ *(11) (արաբ.-պարսկ. djarrah) – վիրաբույժ:*

Մալխասյանցը ունի ջառռահ*:*

○Մատան *(28) (արաբ.-պարսկ. ma'dan) – հանք:*

Մալխասյանցը ունի մադան *ձևով:*

□Մոնչ ինչ *(20) – ոչինչ:*

□Մոնչ (մօնչ) ով *(4) – ոչ ոք:*

Մուննաթ *(25) (արաբ.-պարսկ. minnat) – երախտիք, չնորհ:*

□Յընել *(2) – ընել, անել:*

+Նամէխհառամ *(20) (պարսկ. namakharām) – անաղուհաց, ապերախտ:*

+Շարմանտայ *(15) (պարսկ. sharmanda) – ամոթխած, ամաչկոտ:*

+Շարմանտայ *մնալ – ամոթով մնալ:*

○Շաֆախաթ *(10) (արաբ.-պարսկ. shafaḳat) – չնորհ, գութ:*

Մալխասյանցը ունի շափաղաթ *ձևով:*

+Շլթաղ *(17) (թուրք.-պարսկ. shilfaḳ) – ամբաստանություն:*

+Շքար *(18) (պարսկ. shikar) – որս:*

+Ջանէ *(8) (պարսկ. cana) – ծնոտ:*

+Ջիման *(12) (պարսկ. caman) – մարգագետին:*

□Ջուտ *(6)՝ հավանաբար չnuun – արագ-արագ:*

Պլօր *(15) (արաբ.-պարսկ. bilūr) –բյուրեղ:*

Պօլուկ *(24) – տե՛ս բօլուկ:*

+Ջանկալ *(30) (պարսկ. djangal) – անտառ:*

+Ռըշխանտ, ոշխանտ *(7, 11, 14, 19, 24) (պարսկ. rīshkhand) – ծաղր, ծանակ:*

+Սաֆէ *(21) (արաբ.-պարսկ. safā') – հաճույք:*

+Սերկերտան *(24) (պարսկ. sargardān) – տարակուսած:*

+Սիթամ *(17) (արաբ.-պարսկ. sitam) – անիրավություն, բռնություն:*

Սոֆրա *(26) (արաբ.-պարսկ. sufra) – սփռոց:*

Մալխասյանցը և ԺՀԼԲԲ ունեն սուփրա *ձևով:*

○Վատայ *(26) (արաբ.-պարսկ. wa'da) – ժամադրություն:*

Մալխասյանցը ունի վադա *ձևով:*

□Վեռի *(20, 21) – վայրի:*

+Վէլինամաթ *(11) (արաբ.-պարսկ. walīni'mat) – բարերար:*

+Յիմա *(15) – անստույգ նչ. բառ:*

+Քանտարար *(9) – արճանագործ:*

○Քուշտի *(16) (պարսկ. kushtī) – գոտեմարտություն:*

Ահառյանը (Զ, 1526) fուշտիկ *ձևով բառս վերցրել է Գաբամաճյանի բառարանից՝ նշելով, որ առանց վկայության է:*

+Ֆայտա *(12) (արաբ.-պարսկ. fayda) – օգուտ, չահ:*

○**Ֆիfr** *(27) (արաբ.-պարսկ. fikr) – միտք, մտածմունք:*

Մալխասյանցը ունի **փիfr,** ***իսկ ԺՀԼԲՒ*** **ֆիfr** ***ձևերով:***

+**Ֆիfրել** *(19) – մտածել, խորհել:*

Կազմված է արաբ.-պարսկ. **ֆիfr** ***(տե՛ս) «միտք, մտածմունք» և հյ.*** **ել** ***լծորդությամբ:***

+**Ֆօրթունա, ֆօրթուննա** *(7) (իտալ.-թուրք. fūrtūna) – փոթորիկ:*

ЕГИЯ МУШЕГЯН КАК БАСНОПИСЕЦ

Р е з ю м е

Среди материалов различного характера (коммерческие тетради, письма, официальные государственные документы, стихотворные рукописные сборники и т. д.), хранящихся в деле купца XVIII века Егии Мушегяна (1689-1750?) в фонде «Сношения России с Арменией» Архива внешней политики России, сохранилась его тетрадь для изучения французского языка, где переписана 31 басня на армянском и французском языках. Всестороннее исследование этих басен подтверждает, что они являются каким-то вариантом французского перевода басен Эзопа, переведенных в 1720-1722 гг. на разговорный армянский язык в иранском городе Новая Джульфа Егией Мушегяном. В дальнейшем, спустя почти 25 лет, Егия в книге своих воспоминаний записал еще 4 басни, которые сами по себе имеют художественную ценность. Деятельность Егии в области баснописаиия является новой страницей в истории армянской литературы XVIII века и представляет интерес с точки зрения изучения армяно-европейских литературных связей.

ԵՂԻԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ[1]

18-րդ դարի առաջին կեսի վաճառական ու դիվանագետ, միաժամանակ բանահավաք, բառարանագիր ու թարգմանիչ Եղիա Մուշեղյանի (Կարնեցի) գործունեությունը բացահայտվել է միայն վերջին տասնամյակներում:

Մոսկվայում Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվի, «Ռուսաստանի և Հայաստանի հարաբերությունները» ֆոնդում պահվող Եղիա Մուշեղյանի գրական ու նամակագրական ժառանգությունը, հաշվեմատյաններն ու առևտրական գործարքների վերաբերյալ փաստաթղթերը, Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանի սեփականությունը հանդիսացող նրա ընդարձակ «Հուշամատյանը» հնարավորություն են տալիս ամբողջական գաղափար կազմելու ոչ միայն ուշ միջնադարի այս հեռաքրքիր ներկայացուցչի գործունեության մասին, այլեւ վերահասու լինելու Միջին և Մերձավոր Արևելքի մի շարք երկրների ժամանակի տնտեսական, հասարակական ու քաղաքական կյանքի իրադարձություններին:

Եղիա Մուշեղյանի ժառանգության ուսումնասիրությամբ առավել կամ նվազ չափով վերջին 60 տարիների ընթացքում զբաղվել են Հ. Ոսկյանը, Ա. Հովհաննիսյանը, Ա. Աբրահամյանը, Մ. Սեիդովը, Ա. Երևանլին և Բ. Հովակիմյանը:

Եղիա Մուշեղյանը ծնվել է 1689 թ. և հավանաբար ապրել է մինչև 1750-ական թվականները: Նա դեռևս պատանեկան տարիներից գիր ու գրականության նկատմամբ մեծ հակումներ է ունեցել, հրապուրվել է լեզուների ուսումնասիրությամբ (սովորել է լատիներեն, ֆրանսերեն, մասամբ պարսկերեն, լեհերեն ու ռուսերեն, մայրենի լեզվի պես իմացել է թուրքերեն): 1717 թ. հետո, երբ նա հաստատվում է Թավրիզում, ավելի հետևողականորեն է սկսում զբաղվել գրականությամբ. ձեռնամուխ է լինում թուրքերեն (արևելյան) - հայերեն բառարանի կազմությանը, գրի է առնում հայ և աղրբեջանական բանահյուսության առանձին արժեքավոր նմուշներ՝ վիպական զրույցներ, առակներ, տաղեր, կազմում է առօրյա կարիքների համար անհրաժեշտ գիտելիքների և ժամանցային բնույթի հնարամիտ թվաբանական խնդիրների ժողովածու: Ուշադրության է արժանի նրա կազմած տաղարանը, որտեղ հավաքված նյութերի մեծ մասը աղրբեջաներեն է և հիմնականում սուֆիական աղանդավորական բովանդակություն ունի: Ըստ երևույթին տաղարանում ընդգրկված բանաստեղծությունների ընդվզողական բնույթը համահունչ է եղել Եղիայի այդ տարիների տրամադրություններին: Այս տաղարանի չնորհիվ կորստից փրկվել են հայազգի Միրանի, աղրբեջանական բանաստեղծներ Նասիմիի, Խաթայիի, Ղովսիի և այլոց արժեքավոր առանձին ստեղծագործությունները, Քյորօղլու վիպասքի հնագույն տարբերակներից մեկը:

Եղիա Մուշեղյանի թուրք-հայերեն անտիպ բառարանը, թեկուզ թերի վիճակում հայ լեզվաբանական գրականության ուշադրության արժանի էջերից է և տասնյակ նոր բառերով հարստացնում է հայերենի բառապաշարը, գաղափար է տալիս 18-րդ դարի

---

[1] Հայ միջնադարյան գրականության միջազգային գիտաժողով, Երևան, 1986, էջ 161-162:

առաջին քառորդում հայ արհեստավորական, առևտրական շրջանակների հայերենի բառապաշարի վիճակի մասին:

Միջնադարյան հայ գրականության պատմության համար հետաքրքրություն է ներկայացնում նաև Ե. Մուշեղյանի առակագրական գործունեությունը: Նոր ժամանակներում նա առաջինն է եղել, որ Եզոպոսի առակները ֆրանսերենից թարգմանել է ժամանակի խոսակցական արևելահայերենով: Մի քանի ինքնատիպ ու գեղեցիկ առակներ նա գրի է առել իր «Հուշամատյանում»:

Եղիա Մուշեղյանի գրական ժառանգության մեջ իր ուրույն տեղն ունի նրա կյանքի հուշագրությունը՝ շարադրված 1747-1749 թվականներին: Օժտված լինելով վիպելու անժխտելի ձիրքով, Ե. Մուշեղյանը իր կյանքի ոդիսականը շարադրել է աչխույժ ու կենդանի լեզվով, համեմված ժողովրդական բառ ու բանով, առակներով ու ասացվածքներով: Դեպքերի նկարագրությունները հաճախ վերաճում են փոքրիկ զրույցների ու ակնարկների, իսկ պատմական իրական գործող անձինք՝ ընդհանրացված գեղարվեստական կերպարների:

ԵՂԻԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ[1]

XVIII դարի առաջին քառորդում Իրանը տնտեսական ու քաղաքական ծանր ճգնաժամ էր ապրում. երկրի ֆեոդալական մասնատվածության ուժեղացման հետևանքով տնտեսությունը ծայրահեղ քայքայման էր հասել և սրվել էին միջցեղային հակամարտությունները՝ պատճառ դառնալով կենտրոնական իշխանության թուլացման և նրա ազդեցության ոլորտների սահմանափակման: Այս պայմաններում ուժեղացել էին նաև Իրանի գերիշխանության տակ հեծող ժողովուրդների ազատագրական նկրտումները. արևելքում ապստամբել էին աֆղանները, Միր Մահմուդը հաղթարշավով հասել ու գրավել էր պարսից մայրաքաղաք Սպահանը (1722 թ. հոկտեմբերի 22), հայերն ու վրացիները, ռուսական բանակների առաջխաղացումներից ոգևորված, պայքար էին ծավալել ազատագրվելու իրանական ու թուրքական դարավոր լծից, քրդերը գրավել էին Արևմտյան Իրանի կարևորագույն մի քանի քաղաքները, իսկ արաբ ցեղերը գլուխ էին բարձրացրել հարավ-արևմտյան նահանգներում:

Իրանի համար «փոթորկահույզ այս ժամանակաշրջանում» (ակադ. Աչոտ Հովհաննիսյանի բնորոշումն է) իրենց կայսրության սահմանները ընդարձակելու նպատակով քաղաքական հակամարտության մեջ էին մտել Ռուսաստանն ու օսմանյան Թուրքիան: 1722-1723 թթ. ռուսական զորքերը արդեն գտնվում էին Գիլանում, իսկ թուրքերը 1723 թ. գարնանը մտել էին պարսկական տիրապետության սահմանները և հաստատվել Սալմաստում: Քաղաքական այս խառնակ վիճակում ռուսական առաջխաղացմանը խոչընդոտներ հարուցելու համար Իրանում ակտիվ գործունեություն էին ծավալել նաև եվրոպական պետությունները:

Նախքան աֆղանների կողմից Սպահանի շրջապատումն ու գրավումը պարսից միապետ Շահ Սուլթան Հուսեյնի որդին՝ Թահմազը (Թահմասիբը), դուրս էր եկել մայրաքաղաքից և իր սահմանափակ բանակներով ապաստանել Ղազվին քաղաքում: Այստեղ նա, լսելով Սպահանի գրավման ու հոր գահընկեցության լուրը, անմիջապես իրեն շահ է հայտարարում և ռազմական գործողություններ է ծավալում իրեն հետապնդող Միր Մահմուդի զորաբանակների դեմ: Աֆղանների հրամանատար Ամանուլլան Ղազվինի մոտ պարտություն է կրում և վիրավոր վիճակում նահանջում է: Շահ Թահմազը հաստատվում է Թավրիզում՝ հույս ունենալով վերախմբավորել երկրի բզկտված ուժերը և, իր դիրքերը ամրապնդելով, վերականգնել Սեֆյան հարստության տիրակալությունը ողջ Իրանի վրա: Իր նպատակները իրագործելու համար նա միաժամանակ աշխատում է դիվանագիտական միջոցառումներով կանխել Ռուսաստանի ու Թուրքիայի կողմից Իրանին սպառնացող վտանգը. Պետերբուրգ ուղարկված պարսից դեսպան Իսմայիլ բեկը 1723 թ. սեպտեմբերի 12-ին ռուսների հետ փոխադարձ օգնության պայմանագիր է կնքում, ըստ որի Ռուսաստանին են թողնվում Պետրոս Առաջինի կողմից արդեն գրավված Դաղստանը և Բաքվից մինչև Ռեշտ ընկած Մերձկասպյան ընդարձակ տարածքը, իսկ Ռուսաստանը իր հերթին խոստանում է Իրանին օգնել աֆղանների դեմ մղած պայ-

---

[1] Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1987, № 4, էջ 82-91:

քարում: Այդ նույն ժամանակ Թահմազի մարդիկ բանակցություններ էին վարում նաև Կոստանդնուպոլսում[1]: Թուրքերը, տեղեկանալով ռուս-պարսկական դաշինքի մասին, վրդովվում են և, տարբեր ուղիներով ու միջոցներով խրախուսելով ապստամբ Միր Մահմուդին, դավեր են նյութում Թահմազի դեմ:

Մինչ Իսմայիլ բեկը Ռուսաստանում բանակցություններ էր վարում, Շահ Թահմազը ծրագրեր է մշակում օգտվել Ռուսաստանի ու եվրոպական որոշ պետությունների Իրանում ունեցած հակադիր շահերից և վերջիններիս հետ բարեկամական հարաբերություններ հաստատել՝ հույս ունենալով, որ թերևս նրանք կարողանան ներազդել Ռուսաստանի վրա և կասեցնել նրա առաջխաղացումը Իրանում:

Այս ծրագրի իրագործման համար նպաստավոր նախադրյալներ էին չուրջ մեկ տարի առաջ՝ 1722 թ., Եվրոպայից իր հոր՝ Շահ Սուլթան Հուսեյնի ստացած ուղերձները: Ինչպես վկայում է անգլիական Արևելահնդկական ընկերության Թավրիզի մասնաճյուղի կառավարչի տեղակալ Եղիա Մուշեղյան Կարնեցին, «չորս նամակ բերին պարսից թագաւորին՝ մուսի Շեալիեր պատրին ֆրանցիզո թագաւորէն, և մունսինօռ Բառնաբասն՝ Սպահանու եպիսկոպոսն, սուրբ փափէն, և կարմէլիթան պարոն Հիրինոմոսն՝ իմփեռատօռէն»[2]: Շահ սուլթան Հուսեյնը այդ ուղերձների պատասխանները պատրաստել և հանձնել էր Պառնաբասին (Բառնաբասին), բայց, ըստ երևույթին, աֆղանների արշավանքների հետևանքով դրանք հասցեատերերին չէին ուղարկվել: Այս կապակցությամբ Եղիա Մուշեղյանը հետևյալն է գրում իր «Հուշամատյանում». «Յամի տեառն 1722, որ էյի ես ի քաղաքն Սպահան, յառաջ քան պաշարումն աղուանից (—աֆղանից), պարոնտէրն տօմենիքանց Պառնաբասն հրաւիրեցաւ ընդրիս պարսից թագաւոր Շահ Սուլթան Հուսեյինին: Հրամայեցաւ ինձ գնալ ընդ նմայ, որ և գնացի: Անդ ընկալաւ երեք նամակք. պատասխան յիւր մատուցած նամակացն, որ էր մինն կայսերն, միւսն ֆռանցիզ թագաւորին, վերջինն փափին»[3]:

Շահ Թահմազը, քաջատեղյակ լինելով իր գահընկեց հոր դիվանագիտական այս ծրագրերին, որոշում է ինքն իրագործել դրանք. նա ուղերձներ է պատրաստում Հռոմեական սրբազան կայսրության կայսր Կառլոս VI-ին, Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս XV-ին և Հռոմի պապին: Այս ուղերձները Եվրոպա տանելու համար շահի հրամանով կազմվում է հատուկ դեսպանություն՝ Սեիդ Համզե բեկ անունով մի պարսիկի, Թավրիզի կապուցին հայրերից ազգությամբ լեհ պատրի Հովհաննես Մկրտչի և վերոհիշյալ Եղիա Մուշեղյանի գլխավորությամբ:

Եղիա Մուշեղյանը, որ 1717 թ. հաստատվել էր Թավրիզում, իր ծավալած առևտրական գործունեության, Իրանում հաստատված եվրոպական պետությունների ներկայացուցիչների և կաթոլիկ միաբանությունների մոտ ազատ ել ու մուտ ունենալու, ինչ-

1 **Mary Lucille Shay**. The Ottoman Empire from 1720 to 1734 as Reavealed in Despatches of the Venetian Baili. Westport (Connecticut), 1978, p. 108.

2 *Եղիա Կարնեցու Դիվանը*, առաջաբանը և ծանոթագրությունները պրոֆ. Ա. Գ. Աբրահամյանի, Երևան, 1968, էջ 213 (այսուհետև՝ Դիվան): Տե՛ս նաև **Եղիա Մուշեղյան Կարնեցի**, *Թուրքերեն-հայերեն բառարան*, աշխատասիրությամբ Բ. Լ. Չուգասզյանի, Երևան, 1936, էջ 9-18:

3 «Պատմութիւն իմն կարճառօտ ի վերայ անձկութեանց Եղիայիս Աստուածատուրեան Մուշեղեանց, զորս կրեցի ի ազգէն Փոռանկաց, մանաւանդ ի խաբեբայ կրօնաւորացն նոցայ և ի սուտ եխպայրց և բարեկամ կոչեցելոց», Վիեննայի Մխիթարյան մատենադարան, ձեռ. № 980, էջ 41ա (այսուհետև՝ Հուշամատյան):

պես նաև եվրոպական մի քանի լեզուների իմացության շնորհիվ մեծ հեղինակություն էր վայելում տեղական պետական շրջանակներում և Շահ Թահմազի թավրիզում հաստատվելուց հետո նրա մտերիմ բարեկամն էր դարձել:

Երբ Եղիային առաջարկվում է Եվրոպա մեկնող պարսկական դեսպանության անդամ դառնալ, նա անվարան համաձայնվում է, որովհետև, ինչպես գրում է իր «Հուշամատյանում», «ես ունէյի միշտ ի մտի գնալ Ֆռանկիստան և հասանիլ ի փափականացս իմ»[1]: Իսկ նրա «փափագը» դեռևս պատանեկան տարիներից եղել է՝ գնալ Եվրոպա, բնակվել «ի մէջ ճշմարտութեան», ուսանել «ամենայն գիտութիւն», լեցվել «ամենայն շնորհիւ» և ապրել «ապահով՝ ի վեր քան զամենայն»[2]:

Եվրոպա գործուղվող այս դեսպանության մասին շատ կարևոր վկայություններ են պահպանված Մոսկվայում՝ Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվի «Ռուսաստանի հարաբերությունները Հայաստանի հետ» ֆոնդի Եղիա Մուշեղյանի գործում, մասնավորաբար նամակներում, և Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանում պահվող նրա անտիպ «Հուշամատյանում»: Մուշեղյանի «գործի» կարևորագույն փաստաթղթերից է նաև Կառլոս VI-ին Շահ Թահմազի հղած պարսկերեն ուղերձի պատճենը[3], որ ցարդ գիտական շրջանառության մեջ չի եղել և մի նոր կողմով է լուսաբանում ժամանակի Մերձավոր Արևելքում ծավալված քաղաքական դեպքերը:

Ուղերձը գրված է պարսկական միջնադարյան դիվանագիտական գրագրության բնորոշ վերամբարձ ու խրթին ոճով, երկդիմի արտահայտություններով, որտեղ Շահ Թահմազը մեծարանքի բազմապիսի ածականներով դիմելով Կառլոս VI-ին հայտնում է հետևյալը.

Իր թագավոր հոր բարեհաճ կարգադրությամբ ինքը թագավորանիստ Սպահան քաղաքից մեկնել էր Ղազվին, որտեղ, համաձայն ավանդական օրենքների և երկրի բազմազգեցիկ իշխանավորների կամքի, ինքը գահ է բարձրացել: Ներկայումս հաստատվել է Ատրպատականում, որ ապահով վայր է, և որտեղ բավարար զորք կա իր հակառակորդներին ճնշելու համար: Ղազվինից մեկնելուց հետո տեղեկացել է, որ անհավատ Միր Մահմուդը մի մեծ զորաբանակ է ուղարկել Ամանուլլահի գլխավորությամբ, որն աստծու կամքով պարտվել է և վիրավոր վիճակում փախել, իսկ զորքը ցիր ու ցան է եղել: Ատրպատական հասնելուց հետո Թահմազին հայտնի է դարձել, որ աջ ու ձախ կողմերից բարեկամությունից խոսողները, առիթի են սպասում իրենց թաքուն թշնամությունը բացահայտելու: Ներկայումս, երբ ինքը ժառանգական գահի վրա է բարձրացել, ցանկանում է վերականգնել երկու թագավորությունների միջև եղած հին բարեկամությունը: Այդ նպատակով նախաձեռնություն է հանդես բերում և այս կողմերի (իմա՝ Իրանի) վիճակի մասին իր բարեկամին լրիվ տեղեկություններ հաղորդելու համար դեսպանություն է ուղարկում Սեիդ Համզե բեկի, կապուցին պատրի Յուհաննայի (Հովհաննեսի) և պալիոզի

1 Նույն տեղում, էջ 55բ:

2 Նույն տեղում, էջ 7ա:

3 Историко-дипломатическое управление МИД СССР, Архив внешней политики России (АВПР), ф. Сношения России с Арменией, 1724 г., «В», д. 15, л. 5.

(Արևելահնդկական ընկերության Թավրիզում նստող անգլիական ներկայացուցիչը) տեղակալ Յահյա Մուշեխի (Եղիա Մուշեղյանի) գլխավորությամբ:

Շահ Թահմազը միաժամանակ հայտնում է, որ նորին վսեմություն Շահ Աբասի ժամանակներից հաստատված կարգ ու կանոնը չարունակում է գործել և որ դա իր կողմից բանիմացորեն նկատի է առնված: Եվ քանի որ տեղյակ է իր բարեկամներին հակառակորդ հանդիսացողների տրամադրություններին, հետևաբար վաղեմի բարեկամության կարգի համաձայն պիտի ջանա նրանց դժվարությունները հաղթահարելու գործում օգտակար լինել և սիրո ու բարեկամության հիմքերը ամրապնդել:

Ուղերձի վերջում ասված է, թե՝ մեր նորին վսեմություն թագավոր հոր և դրախտաբնակ Սեֆևի արքաների և արևաթագ արքայիդ արժանապատիվ գերդաստանի ու հայրերի միջև եղած բարեկամության կայուն հիմքերն ու կարգը պետք է նույն ձևով միշտ կայուն ու անսասան լինեն: Շահ Թահմազը Կառլոս VI-ին հավաստիացնում է, որ Իրանում հաստատված պատրիների և ֆրանկների նկատմամբ նախկինում ցուցաբերված անհրաժեշտ ուշադրությունը կցուցադրվի և առաջիկայում:

1723 թ. նոյեմբերի սկզբներին, երբ ռուս-պարսկական դաշինքի կնքման լուրը դեռևս Շահ Թահմազին չէր հասել, Եվրոպա ուղևորվող այս պատվիրակությունը՝ 14 հայ և 5 պարսիկ պաշտոնյաներով, մեկնում է Թավրիզից և Ատրպատականի Արդաբիլ ու Կասկար քաղաքների վրայով նոյեմբերի 25-ին կամ 26-ին հասնում է Ռեշտ[1]:

Ատրպատականի բոլոր բնակավայրերից անցնելու ժամանակ դեսպանությանը պետական արժանավայել ընդունելություն և օգնություն է ցույց տրվում: Պատվիրակությունը Ռեշտ է հասնում այն ժամանակ, երբ ճմեռվա պատճառով նավագնացությունը դադարել էր: Ինչպես տեղեկանում ենք Եղիա Մուշեղյանի կողմից Շահ Թահմազի մոնշի ալ-մամալեք (պետական քարտուղար) Ալի Նաղիին գրած նամակներից, Եղիան և իր ուղեկիցները մի քանի ամիս ստիպված մնում են Ռեշտում: Այս ընթացքում Մուշեղյանը մտերմիկ հարաբերություններ է հաստատում տեղի պարսիկ բարձրաստիճան պաշտոնյաների, ինչպես և ռուսական էքսպեդիցիոն բանակի Ռեշտի կայազորի հրամանատարության հետ:

Թահմազի ուղերձում պատվիրակության պաշտոնական ղեկավարների թվում Եղիա Մուշեղյանի անունը երրորդ տեղում է, բայց իրականում ղեկավարը նա է լինում: Այդ մասին Մուշեղյանը քանիցս նշել է իր «Հուշամատյանում» և դա ապացուցվում է ուղևորության ժամանակ տարբեր քաղաքներից պատվիրակության անունով պարսից արքունիքին և Ատրպատականի տարբեր գավառապետներին ու քաղաքապետներին նրա հղած նամակներով, որոնց մեջ պարսիկ պատվիրակ Սեիդ Համզե բեկի անունը ոչ մի անգամ չի հիշատակվում: Ինչ վերաբերում է պատվիրակության մյուս ղեկավար պատրի Հովհաննեսին, որի անունը ուղերձում երկրորդ տեղում է, Մուշեղյանը գրել է, որ «ես զնա ծանօթ արարի չահին և մեծարեցի զնա առաչի նախարարացն»[2], իսկ նրա անունը ուղերձում իր անունից առաջ է գրել տվել, որովհետև, նախ, նա «կարգաւոր» (հոգևորական) է և պետք էր նրան հարգել և, ապա, մտավախություն է ունեցել, որ պատրին

1 *Դիվան*, էջ 225, 272-273, 284-285:

2 *Հուշամատյան*, էջ 83ա:

կարող է վիրավորվել, հատկապես որ նման առիթ եղել էր դրանից առաջ: Այս վերջին դեպքի մասին Եղիան գրել է. «Տեսաւ, որ իմ անունն առաջ էր գրած, խռովեցաւ յինէն և տրտմեցաւ յոյժ»[1]:

Շահ Թահմազի պետական քարտուղար Միրզա Ալի Նաղիին և այլ պաշտոնական անճանց հասցեագրված Եղիայի նամակները հաստատում են, որ պատվիրակության հետ կապված բոլոր խնդիրներով՝ սկսած նրա կազմի նշանակումից, ճամփորդության երթուղու որոշումից, դրամական հաշիվներից մինչև պարսկական ու ռուսական պետական մարմինների հետ ունեցած պաշտոնական հանդիպումներն ու բանակցությունները, անմիջականորեն զբաղվել է Եղիա Մուշեղյանը:

Նախքան պատվիրակության մեկնումը, պարսկական արքունիքում քննարկման առարկա է եղել նրա երթուղու հարցը. առաջարկներ են եղել, որ դեսպանությունը եվրոպա ուղևորվի Թուրքիայի վրայով, սակայն Մուշեղյանը գերադասել է Ռուսաստանի ուղին, պատճառաբանելով, որ Թուրքիայի ճանապարհները վտանգավոր են ու անապահով, բայց իրականում նա նպատակ է ունեցել Ռուսաստանում հանդիպել Պետրոս Առաջինին և նրան ներկայացնել հայ ժողովրդի ազատագրման իր ծրագիրը[2]: Բայց թե Եղիան ինչ ծրագրեր ուներ՝ առայժմ հայտնի չէ:

Ռուսաստանի վրայով պատվիրակության ճանապարհորդությունը դեպի Եվրոպա ապահովելու համար 1723 թ. հուլիսի 27-ին (նոր տոմարով) Եղիան Թավրիզից մի նամակ է հղում Ռեշտ՝ ռուսական բանակում ծառայող ֆրանսիացի սպա Ժան Լուի Տալանսոնին և խնդրում Աստրախան գնացող մի նավ ապահովել և օգնել ռուսական հրամանատարությունից «ճամփու գիր» (արտոնագիր) ստանալու[3]: Տալանսոնի պատասխանը չի հապաղում. օգոստոսի 12-ի իր նամակով նա հայտնում է, որ եղել է ռուսական զորահրամանատարի մոտ, որը խոստացել է և՛ նավ տալ, և՛ «ճամփու գիր»[4]:

Թավրիզի կապուցինների պետ Բեռնարդոսը, որ Եղիայի խոստովանահայրն էր, տեղեկանալով պատվիրակության առաքելությանը, հատկապես Եղիայի նպատակներին, առերևույթ չի առարկում նրան, բայց անբարյացակամ խորհուրդներով և այլևայլ սադրանքներով աշխատում է խափանել պատվիրակության ուղևորությունը: Հետագայում, ինչպես կտեսնենք, Բեռնարդոսը հասնում է իր նպատակին: Այդ մասին Մուշեղյանը մանրամասն գրել է իր «Հուշամատյանում»:

Պատվիրակությունը, Ռեշտ հասնելուց հետո, 1723 թ. դեկտեմբերից սկսած, հանդիպումներ է ունենում ռուսների հետ, որոնք հետաքրքրվում են նրա առաքելության նպատակներով: Տեղեկանալով, որ ուղերձներ են տարվում եվրոպական պետությունների ղեկավարներին, ռուս պաշտոնյաները խորհուրդ են տալիս պարսից արքունիքից նման մի ուղերձ ստանալ նաև Պետրոս Առաջինի անունով[5]: 1725 թ. փետրվարի 8-ին Մուշեղյանը

1 Նույն տեղում, էջ 24բ:

2 Նույն տեղում, էջ 226ա-226բ և 44ա-45բ:

3 *Դիվան*, էջ 213:

4 Նույն տեղում, էջ 218:

5 Նույն տեղում, էջ 239:

ռուսական հրամանատարության այդ պահանջի մասին գրում է Ալի Նաղիին, հույս հայտնելով, որ այդ դեպքում իրենք հանգիստ կանցնեն Ռուսաստանի վրայով[1]:

Պատվիրակության հապաղումը Ռեշտում եղիա Մուշեղյանի համար մտահոգությունների նոր դուռ է բացում, որովհետև չնախատեսված ծախսեր են առաջանում: Ստիպված նա Ռեշտից մի քանի անգամ դիմում է Ալի Նաղիին և խնդրում դրամ ուղարկել, քանի որ «այս ճանապարհն օսմանլուլի պէս չէ, որ թաքուն գնամք. պիտի աչքարա (բացահայտ) գնալ և այնպէս անել, որ արժանի լինի թագաւորի անուան», միաժամանակ ռուսների հետ հարաբերության մեջ մտնելու համար «քալամաչի» (թարգմանիչ) էր պետք, որը նույնպես լրացուցիչ ծախսերի հետ էր կապված[2]:

Եղիայի սուրհանդակները մի քանի ամիս չարունակ երթևեկում են Ռեշտի և Շահ Թահմազի բանակատեղիի միջև: Ըստ երևույթին շահը շատ էր շտապում, որպեսզի իր դեսպանները օր առաջ հասնեն Եվրոպա և իր ուղերձները տեղ հասցնեն, ուստի իր պետական քարտուղար Միրզա Ալի Նաղիի միջոցով եղիային խիստ կարգադրություն է անում դեսպանության ուղևորությունը արագացնել. Ալի Նաղին գրում է Եղիային, որ նախ պետք է թագավորի հրամանը կատարել և ապա դրամ պահանջել, միաժամանակ կտրուկ ավելացնում է՝ այսուհետև «փուչ բաների» համար սուրհանդակներ չուղարկել[3]: Սա այն դեպքում, երբ Եղիան նախքան Թավրիզից մեկնելը իր կանխիկ ունեցվածքը՝ 432 թուման[4], ժամանակավորապես (մինչև իր վերադարձը) պահ էր տվել պարսից գանձատանը[5]:

Ռեշտում գտնվելու մի քանի ամիսների ընթացքում եղիա Մուշեղյանը իր գործունեությամբ աշխատում է նպաստել ռուս-պարսկական հարաբերությունների բարելավմանը, ըստ երևույթին իր հավատարմությունը ռուսներին ցույց տալու և քաղաքական հեղինակություն չհեղելու համար: Այսպես՝ կասկար բնակավայրից նոյեմբերի 22-ին վերոհիշյալ ֆրանսիացի սպա Տալանսոնին գրած նամակում նա հայտնում է. «Որժամ հասանք Աստառա, անդ գտինք մին ծառա [ռուսաց] թագաւորին, որ ըմբռնեալ էյին կասկար, անունն Կոստանդին, Ֆեոդորի որդի, սիպիրցի, Սիլւանու գնտիցն, և մեզ հետ բերում ենք»[6]:

1723 թ. Կասպիականի ափերին, Կասկարի մոտ, նավաբեկության էր ենթարկվել ռուսական առևտրական մի նավ, որի մարդկանց բռնել և ունեցվածքը թալանել էին տեղի բնակիչները: Եղիան, որպես պետական հեղինակավոր ներկայացուցիչ, ռուսական հրամանատարության թելադրանքով նամակներ է ուղարկում տեղի կառավարիչներին՝ պահանջելով անհապաղ գտնել 1412 թուման արժողությամբ ապրանքները, վերադարձնել դրանք իրենց վաճառական տերերին և պատժել մեղավորներին: Այս կապակցությամբ նա մի նամակ էլ գրում է (1724 հունվարի 11) Շահ Թահմազի վարչապետ Էհտիմադովլա Աբդուլ Քարիմին և հայտնում, որ «Հիմիկս ուռուսի սարտարն էն ապրանքն

---

1 Նույն տեղում, էջ 281:

2 Նույն տեղում, էջ 238:

3 Նույն տեղում, էջ 283:

4 Մեկ թումանը այդ ժամանակ 1000 կոպեկ էր (տե՛ս *Գանձ չափոյ, կշռոյ, թուոյ և դրամից բոլոր աշխարհի*, Ամստերդամ, 1699, էջ 27), որ անում է 432 ոսկի ռուբլի:

5 *Հուշամատյան*, էջ 85բ:

6 Նույն տեղում, էջ 225:

ուզում է և շատ նեղացել է... Հրամայէք, որ այս նաւիս ապրանքն տան»[1]: Այս հողի վրա, ինչպես կասկարից հայտնում է Իսմայել բեկը, տեղի կառավարիչ Միրզիզ Սուլթանը հեռացվում է պաշտոնից, և իրեն էլ խիստ կարգադրություն է արվում, որ «չը լինի թէ մին բան անեմ, որ բարեկամութիւնն աւիրի»[2]:

Ռուս-պարսկական հարաբերությունները բարելավվելու իր դերին Եղիան մեկ անգամ ևս անդրադարձել է չուրջ քսան տարի հետո՝ «Հուշամատյանում» գրելով. «Ես որ գնացի Կիլան (1723), զօրավարն (իմա՝ պարսից հրամանատար Մուստաֆա խանը – Բ. Զ.) նստէր ի Աստառայ և իւր փոխանորդն ի Կասկար, նոր փարատել էր պատերազմն ի քաղաքէն Ըռաշտայ, յորում նստէր զօրաւարն ռուսաց Լևաշովն: Ես որ գնացի, հաստատեցի ի միջի նոցայ խաղաղութիւն: Որքան որ ես Կիլան մնացի՝ խաղաղութիւն երթևեկութիւն էր ի միջի նոցա: Զկնի փոխելոյն իմ անտի և գնալոյն ի Հաշթարխան, ապայ թէ դարձեալ չփոթին»[3]:

Ի վերջո դեսպանությունը 1724 թ. մարտի 29-ին հասնում է Աստրախան[4]: Եղիա Մուշեղյանը և իր ուղեկիցները այստեղ ևս ստիպված են լինում մի քանի ամիս սպասել, որովհետև ճանապարհը շարունակելու արտոնություն չեն կարողանում ստանալ: Այս հապաղման պատճառը, Եղիայի կարծիքով, Մոսկվայից Պարսկաստան վերադարձող պարսից էլչի (դեսպան) Իսմայիլ բեկն էր, որը տեղի ռուսական պետական մարմիններին ասել էր՝ «էս մարդիքն մի թողուք, որ գնան, զերա (որովհետև) իմ չինած բանն կաւիրեն: Եւ ինքն այս կերպիւս արդա (դիմում) գրեց և ղրկեց թագաւորին»[5]: Իսկ Իսմայիլ բեկի «չինած բանները» 1723 թ. սեպտեմբերի 13-ի ռուս-պարսկական դաշինքն էր: Եղիան ստիպված դիմում է Մոսկվայի պարսից դեսպանի խորհրդին:

Որոշ ժամանակ Աստրախանում մնալուց և ճանապարհորդության պաշտոնական ձևակերպումները ավարտելուց հետո դեսպանությունը ճանապարհ է ընկնում դեպի Մոսկվա, այնտեղից անցնելու դեպի եվրոպական երկրներ, սակայն Կասիմով կոչված վայրում պատվիրակության երթը կասեցվում է տեղական իշխանությունների կողմից. Եղիային և իր ուղեկիցներին, որոնց թիվը նվազել էր մինչև 8 հոգու, ձերբակալում և չղթայակապ ուղարկում են Մոսկվա, իսկ այնտեղից էլ տեղափոխում են Պետերբուրգի մոտ գտնվող Շլիսելբուրգի բերդը[6]: Շուրջ մեկ տարի բանտում մնալուց հետո, 1725 թ. մարտի 31-ին Եղիան Շլիսելբուրգից դիմում է ուղարկում կանցլեր Գավրիիլ Իվանովիչ Գոլովկինին և խնդրում է իրեն ընդունել, որովհետև «ունիմք հարկաւոր և պեթքական բան ասել թագաւորին, զի յոյս ունիմք, որ մեր բանէն բազում օգուտ գլնի թագաւորին, և սուրբ հաւատոյն և մեր ազգին»[7]: Մինչև այդ, 1725 թ. հունվարի 28-ին արդեն մահացել էր Պետրոս Առաջինը: Եղիայի «Հուշամատյանից» տեղեկանում ենք, որ կալանավոր եղած ժամանակ Եկատերինա թագուհին նրան առաջարկում է մնալ Ռուսաստանում. «Խոստա-

1 *Դիվան*, էջ 269:
2 Նույն տեղում, էջ 277:
3 *Հուշամատյան*, էջ 225ա:
4 *Դիվան*, էջ 287:
5 Նույն տեղում, էջ 287:
6 *Հուշամատյան*, էջ 30:
7 *Դիվան*, էջ 297:

ցաւ թագուհին ռուստաց, Կատարինայ Ալեքսեևնայն, – գրում է Եղիա Մուշեղյանը, – տալ ինձ յիւր տանէն մեծ իշխանի աղջիկ մի ի կնութիւն՝ վեց հազար տամբ գռեհկաւ, եթէ ծառայէյի նմայ, նայև յաւել խոստացաւ տալ ինձ մեծութիւն, իշխանութիւն, պատիւ և զօրավարութիւն»: Եղիան, որ արդեն «վայելել էր» ցարական բանտային դժոխային կյանքը, հրաժարվում է այս գայթակղիչ առաջարկներից, պատճառաբանելով, որ ինքը կատարելիք պարտավորություններ ունի. «Ես այս ամենայն հրաժարեցայ, – գրում է Եղիան իր «Հուշամատյանում», – վասն սիրոյն Ճռանցիզ թագաւորին, մտածելով այս բան, թէ այս բան ոչ ուղիղ գայ հաւատարմութեան, որովհետև ես խոստովանեցայ ծառայել նման», հետևաբար եթե իր խոսքը չպահի, ապա դա «ոչ վայել է հաւատոյս, ազգիս և տոհմիս»[1]:

Թերևս այս պատասխանն էլ վճռում է միամիտ «դիվանագետի» հետագա ճակատագիրը, Շլիսելբուրգից Եղիային տեղափոխում են Պետերբուրգ, ապա կրասնոյարսկ քաղաք, իսկ պատրի Հովհաննես Մկրտչին վերադարձնում են Աստրախան, որտեղ նա ապրում է «ի տան չահապապետին (քաղաքապետին)... ուտէ, ըմպէ և ուրախանայ», գրում է իր «Հուշամատյանում» Ե. Մուշեղյանը[2]:

Եղիա Մուշեղյանը Թավրիզից մեկնելիս հետն էր վերցրել իր առևտրական գործունեության հետ կապված բոլոր հաշվեմատյանները, փաստաթղթերը, ստացած նամակներն ու ուղարկածների պատճենները, որոնք չափազանց խնամքով ու գործիմացությամբ համարակալած պահում էր իր մոտ: Նա վերցրել էր նաև ժողովրդական բանահյուսության հավաքած նյութերը, կազմած տաղարանները և ուսումնառության նպատակներով զանազան լեզուներով կազմած փոքրիկ բառացանկերը և Թուրքերեն-հայերեն բառարանը, Եղովպոսի առակների ֆրանսերենից կատարած թարգմանությունը և այլ գրական աշխատանքներ:

Այս հսկայածավալ դիվանը իր հետ վերցնելու փաստը խորհել է տալիս, որ Եղիա Մուշեղյանը հավանաբար նպատակ է ունեցել Պետրոս Առաջինի հետ հանդիպելուց և հայ ժողովրդի ազատագրման իր ծրագրերի իրականացումից հետո մնալ Ռուսաստանում, կամ հակառակ դեպքում անցնել Եվրոպա և իրականացնել պատանեկան տարիների իր երազանքները (տե՛ս վերը, էջ 423): Սակայն դեպքերի ընթացքը միանգամայն հակառակ դասավորվելու հետևանքով Եղիայի ողջ արխիվը (այդ թվում և քննության առարկա Շահ Թահմազի ուղերձի պատճենը (իսկականը պատրի Հովհաննես Մկրտչի արխիվում է) և դեսպանության ուղևորության ժամանակ Թավրիզի հետ ունեցած ողջ նամակագրությունը, անգամ ձերբակալությունից հետո իշխան Գոլովկինին գրած դիմումի պատճենը) ռուսական համապատասխան մարմինների կողմից բռնագրավվում և ուղարկվում է Պետերբուրգ: Այս նյութերը ներկայումս պահվում են Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվում: Հավանաբար ցարական պաշտոնյաներին երկար ժամանակ է պետք եղել Եղիայի ողջ արխիվը մանրամասն ստուգելու և նրան տրված մեղադրանքները հաստատող փաստաթղթեր գտնելու համար, սակայն, ըստ երևույթին, էական որևէ բան չգտնելով, ձերբակալությունից երեք տարի հետո նրան ևս վերադարձնում են Աստրախան և պահում տնային կալանքի տակ:

---

1 *Հուշամատյան*, էջ 278բ-279ա:

2 Նույն տեղում, էջ 51ա-51բ:

Ինչպես հետագայում, 1747-1749 թթ. գրել է Եղիան, Ռուսաստանում իրեն մեղադրել են որպես պարսկական լրտեսի, իսկ զրպարտողը եղել է պատվիրակության ղեկավարներից լեհ կապուցին պատրի Հովհաննես Մկրտիչը, ճանապարհորդության ժամանակ իր խոստովանահայրը, իսկ սրան դրդողն ու հրահանգողը եղել է Թավրիզի կապուցինապետ Բեռնարդոսը, որի հրահրումներով Եղիայի պատվիրակության մեկնումից հետո նրան զրպարտող բազմաթիվ նամակներ են ուղարկվել ռուսական պաշտոնական մարմիններին, թե իբր Եղիա Մուշեղյանը ռուսների թշնամին է և դեմ է նրանց կողմից հայերի ազատագրմանը:

Իր ողջ կյանքում վաճառականությամբ և գրական աշխատանքով զբաղված «նոր ընծա» դիվանագետ Եղիա Մուշեղյանը մերթ միամտաբար կարծում է, որ պատրի Հովհաննես Մկրտիչը իրեն զրպարտել է լոկ փառամոլական դիտավորությամբ, որպեսզի այն պատիվներն ու հարգանքը, որ Եղիան պիտի ստանար ուղերձների հասցեատերերից, տրվեին իրեն՝ Հովհաննես Մկրտչին[1] և մերթ էլ, որ ավելի հավանական է, իր ռուսական կողմնորոշումն է համարում իր առաքելության ձախողման պատճառը[2]:

Եղիա Մուշեղյանը, որ երիտասարդական անփորձ տարիներին միամտաբար համոզված է եղել՝ թե ողջ քրիստոնյա աշխարհը, այդ թվում և Ռուսաստանը, միասնական ծրագիր ունեն Արևելքի քրիստոնյաներին մուսուլմանական լծից ազատագրելու համար, ռուսներին համակրելու և Պետրոս Առաջինին հանդիպելու իր ծրագրերի մասին անգ-գուշաբար հայտնել էր իր խոստովանահայրերին, սկզբում Թավրիզում պատրի Բեռնարդոսին, իսկ ուղևորության ընթացքում՝ պատրի Հովհաննես Մկրտչին, չնայած սա արդեն Ռեշտից սկսում է իր թշնամանքը բացահայտել Եղիայի նկատմամբ:

Կյանքի վերջին տարիներին Եղիա Մուշեղյանը, երբ արդեն ծեր էր և հիվանդ և «Հուշամատյանում» քննության է առնում իր ձախողումների պատճառները, գրում է. «Ես թագաւորի պէս կապրէյի ի յերկիրն Պարսից, հաշուէ թէ ես էյի թագաւոր: Արդ ընդէ՞ր թողի և գնացի: Կամէյի գնալ, որ անդ առաւել մեծութիւն գտանե՞մ: Ո՛չ: Քանի Աստուած զիս մեծացուցել էր յոյժ այնքան, որ ոչ ոք նախարարացն բազմէր ընդ չահին, բացի յինէն: Վասն սիրոյ և վասն բարեացն նոցայ, մանաւանդ վասն oգտին ազգին իմոյ *(ընդգծումը մերն է – Բ. Ջ.) թողի զայն փառքն, պատիւն և մեծութիւն, գնացի անդ, քանզի այնպէս կհաւատայի, թէ իմ թագաւորք են: Եթէ ոչ համարէյի նոցայ թագաւորք իմ՝ ոչ գնայի»[3]:*

---

1 Նույն տեղում, էջ 242ա:

2 Նույն տեղում, էջ 75բ-76ա:

3 Նույն տեղում, էջ 226ա: Շահ Թահմազի հետ ջերմ հարաբերություններ ունենալու մասին Եղիա Մուշեղյանի այս խոսքերը լոկ հետին թվով հպարտանալու հայտարարություններ չեն: Շահի հետ նա այնքան մտերիմ է եղել, որ տարբեր առիթներով ընծաներ է մատուցել նրան: Դրա մասին նա նշել է դեռևս «Հուշամատյանը» գրելուց շատ տարիներ առաջ (1723 թ.) կազմած իր ունեցվածքի ցուցակում. այսպես.

«Ցամի տեառն 1723, յուլիսի 21. Թարվէզ: Գրեցի ինչ որ տան ապրանք ունէյի: Ցետ երկրաշարժէն և գողն տարածէն ինչ որ յետ էր մնացել ամենն մի ըստ միոջէ գրեցի:...»:

«Միհ փոքր թուռ թօփ իր կաոօվն: Այս թօփն պարսից Շահ Թահմազին յընձայեցի իրան կաոօվ, Թարվէզ».

Բ (2) ֆռանկի չախու, որ ինձարիուք բանան և խփեն: Այս Բ (2) չախուն ես յընձայեցի Շահ Թահմազին, Թարվէզ:

XVIII դարի սկզբներին հայերի, այդ թվում և իր ռուսական կողմնորոշման մասին Եղիա Մուշեղյանը արժեքավոր վկայություններ է տալիս «Հուշամատյանում», որ գրի է առել 1747-1749 թթ., այն օրերին, երբ նա հայրենի Խոտրջրում կյանքի վերջին օրերն էր ապրում և կարիք չուներ, և պարտավորված էլ չէր, իր հայացքների մասին որևէ մեկին հաշիվ տալ: Թվում է, որ դրանով նա ցանկացել է իր ժողովրդի և պատմության առաջ պարզերես ներկայանալ: «Թէպէտ վաղուց գիտէի, – գրում է Մուշեղյանը, – թէ Պետրոս թագաւորն գալոց է փրկել զազգն մեր, բայց առաչի անգամն, որ գնացի Շամախի և հաստատութեամբ լսեցի, թէ ամենևին ռուստ թագաւորն գալոց է առնուլ յերկիրն Պարսից, վասն փրկելոյ զմեզ, առժամայն ուխտ եդի յանձին իմոյ ասել ամենայն յաւուր հինկ «Հայր մեր» և հինկ «Ողջոյն Մարիամ»՝ յիշատակաւ սրբազանից հնկից վիրացն Յիսուսի Քրիստոսի, այսու դիտաւորութեամբ, թէ՝ «Տէր Աստուած, զմի ի տասանց կենացն իմոց հա՛տ յինէն և դի՛ր ի վերայ կենացն Պետրոս թագաւորին: Տէր, տո՛ւր նմա առաւել կարողութիւն, զօրութիւն, որ ամենայն յաջողութեամբ գայ և ազատէ զմեր ազգն»[1]: Այս բոլորից հետո Մուշեղյանը իր «Հուշամատյանի» ապագա ընթերցողին հարց է տալիս. «Այր ոք, որ այսքան ջերմեռանդ սէր ունենայ ընդ ումէք, գլնի՞ հաւատալ, որ հակառակ գործէ ընդդէմ սիրելոյն այն: Եթէ ես այլ ազգ լինէյի և ոչ հայ, կարելի յէր աւատալ, թէ ես հակառակ նորայ գործէյի, այլ ես էյի ազգաւ հայ և որ վաղուց գիտէյի այդ գործն, թէ ռուս թագաւորն կամի ազատել զազգն իմ տառապեալ, զիա՞րդ կարէյի զայդ գործ գործել, որ չէր արժան, ևս անհնար վասն իմ: Ոչ թէ միայն ես գիտէյի զայդ գործն, այլև ամենայն ազգն իմ, այր և կին, ծեր և տղայ և ամենեքեան յայտնապէս խոսէյին և ոչ ի ծածուկ: Որպէ՞ս զօրէյի գործել հակառակ ռուստաց, որ ամէն օր տեսանէյի զտառապանն, զթշուառութիւնն և զգերիլն ազգին իմոյ»[2]:

Եղիա Մուշեղյանը համոզված է, որ եթե չլիներ իր «վասն ռուստաց բարի կամիլն և բարի խորհիլն», իրեն «ոչ մատնէր քափուչինն», «նա տեսաւ, – ավելացնում է Եղիան, – իմ փառքն, իմ զօրութիւն և իմ իշխանութիւն, որ ետ ինձ Աստուած և ստուգիւ զգաց, թէ իմ ձեռամբն լինելոց էր փրկութիւն ազգին իմոյ, նախանձեցաւ, աճապարեց ոչ լինիլ: Այս բան յայտնի յէ ամենայն հմուտ արանց և որպէս արեգական ճառագայթէ ամենեցուն»[3]:

Եղիայի աստրախանյան կյանքի տարեգրության մասին շատ աղոտ տեղեկություններ կան «Հուշամատյանում», չի պահպանվել նաև նրա հիշողությունների մի այլ մատյանը, որը վերնագրված է եղել «Գիրք ճանապարհաց»: «Հուշամատյանի» մեջ արված նշումներից տեղեկանում ենք, որ Աստրախանում նա երբեմն գաղտնի կերպով հանդիպել է պատրի Հովհաննես Մկրտչին, մի քանի նամակներ են փոխանակել, բայց սերտ հարաբերություններ չեն ունեցել: Երբ 1736 թ. Եղիան իրավունք է ստանում դուրս գալ Ռուսաստանից, նրան նորից ուղեկից է դառնում պատրի Հովհաննես Մկրտիչը, իսկ Լեհաստան հասնելուց հետո լքում է նրան, մեկուսանում ինչ-որ վանքում: Այս կապակցությամբ Եղիան գրել է. «Յամի տեառն 1736, յունիսի 24, յելինք ի Հաշթարխանու, 1737

Մին երկաթէ պուռնօթու ղութի (քթախոտի տուփ) ներկած: Այս պուռնօթու ղութին ևս յղնծայեցի Շահ Թահմազին...» (АВПР, ф. Сношения России с Арменией, 1724, «А», оп. 100/1, д. 10, л. 9а и 16а).

1 Նույն տեղում, էջ 226ա:

2 Նույն տեղում, էջ 226բ-227ա:

3 Նույն տեղում, էջ 227բ:

փետրվար 22 մտինք ի Վարշաւ, արքայանիստ քաղաքն լեհաց: Անդ մեկնեալ յինէն վերոյ ընկերն իմ քափուչին Օվանէսն»[1]:

Եղիա Մուշեղյանին բանտից և կալանքից ազատելու մասին ոչ մի ձևով չեն մտածում նրան դեսպանության ուղարկող պարսիկ իշխանավորները: Պարսիկների այս անտարբեր վերաբերմունքը Եղիան իր «Հուշամատյանում» բացատրում է նրանով, որ նրանց մոտ ևս իրեն ամբաստանած են եղել որպէս Պարսկաստանի թշնամի, թե իբր նա ուղերձները կամավոր է հանձնել ռուսներին, չահին հայտնել են, թե «Յետահիյէ բեկն (Եղիա Մուշեղյանը – Բ. Ջ.) ապստամբեցաւ և դառեցաւ ի քէն և միաբանեցաւ ընդ ռուստաց և քոյ տված նամայնքն (նամակները) մատուց ռուստաց թագաւորին»[2]:

Երկու տարի Լեհաստանում մնալուց հետո Եղիա Մուշեղյանը Դանիայի ու Հոլանդիայի վրայով ուղևորվում է Ֆրանսիա, այնուհետև Իտալիա՝ հույս ունենալով, որ իր եվրոպացի բարեկամները՝ Արևելահնդկական ընկերության Փարիզի կենտրոնը, կաթոլիկական հաստատությունները, ինքը Հռոմի պապը կհասկանան նրա գլխավորած դեսպանության ձախողման պատճառները, կօժանդակեն իրեն և կփոխհատուցեն իր կրած նյութական ու բարոյական վնասները: Սակայն ամենուրեք նա քար անտարբերության է հանդիպում և, խորը հիասթափություններ ապրելով, ստիպված նորից բռնում է Պարսկաստանի ճամփան: Այդ տարիներին իշխանությունը արդեն անցել էր Նադիր Շահին: Եղիան ցանկանում է հանդիպել երկրի նոր տիրոջը, պահանջել պետական գանձատանը ավանդ թողած իր հարստությունը, բայց նրան խորհուրդ են տալիս այդ մտքից հրաժարվել, քանզի նոր չահը թշնամանքով էր վերաբերվում Շահ Թահմազի նախկին բարեկամներին: Եղիան ստիպված ապավինում է կաթոլիկ կղերին, որոշ ժամանակ ապրում է Մեչհեդում, ապա գնում է Սպահան, այնտեղից էլ Թավրիզ, իսկ կաթոլիկ կղերականները իրենց վանքերում դժկամությամբ են նրան օթևան տալիս: Այս բոլորը ծանր է անդրադառնում Եղիայի առողջության վրա և նա 1743 թ. վերադառնում է իր ծննդավայրը, որտեղ արդեն մահացել էին մայրն ու եղբայրները: Այստեղ էլ նա ապրում է հալածական վիճակում. հայերը մեղադրում են նրան, որ իբր նա է պատճառ դարձել ռուսների առաջացման ձախողմանը, իսկ Արևելահնդկական ընկերության կարինի պարտատերերը պետական իշխանությունների առաջ հայց են հարուցում նրանից գանձելու իրենց պահանջները: Եղիա Մուշեղյանը կարինից խույս է տալիս հայրենի գյուղ՝ Խոտրջուր, որտեղ ապրում է նյութական ծանր ու անապահով պայմաններում: Այստեղ էլ նա գրի է առնում իր կյանքի համառոտ տարեգրությունը, որտեղ պատմում է հիմնականում կաթոլիկ միաբանությունների հետ ունեցած հարաբերությունների, Արևելահնդկական ընկերության մեջ իր պաշտոնավարության և դեպի Եվրոպա կատարած ուղևորության ձախողման մասին, ինչպես նաև տալիս է Ռուսաստանում ձերբակալվելու պատճառները:

1 Նույն տեղում, էջ 56բ:

2 Նույն տեղում, էջ 232բ:

ЕВРОПЕЙСКОЕ ПОСОЛЬСТВО ЕГИИ МУШЕГЯНА

Р е з ю м е

С целью установления связей с европейскими государствами шах Тахмасп II в 1723 году отправляет со специальным посольством послания Карлу VI, Людовику XV и папе римскому. Посольство, направляющееся из Тавриза в Европу через Россию, было арестовано в городе Касымове по обвинению в шпионаже. Были конфискованы документы и личные архивы руководителей посольства, в том числе и Егии Мушегяна. Ныне все эти материалы хранятся в Архиве внешней политики России, в фонде «Сношения России с Арменией». В числе документов сохранилась копня послания Карлу VI на персидском языке, сравнение которой с другими документами, содержащимися в деле Егии Мушегяна, и его мемуарами (Библиотека Конгрегации Мхитаристов а Вене, рук. № 980) проливает новый свет на историю дипломатических отношений Персии с Россией и европейских государств в первой четверти XVIII века.

ՀՆԱՏԻՊ ԳՐՔԵՐԻ ՆՄԱՆԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ

«ՊԱՐԶԱՏՈՒՄԱՐԻ» ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԹՎԱԿԱՆԸ[!]

(Նմանահանության պատրաստման առիթով)

Հայերեն առաջին տպագիր գրքերը վաղուց են մատենագիտական հազվագյուտ նմուշներ դարձել: Դեռևս հայկական տպագրության 400-ամյա հոբելյանի տոնակատարության նախապատրաստման օրերին, 1912 թ., երբ հայ տպագիր երախայրիքների հարցերը աչխուժորեն քննարկվում էին բանասիրության մեջ, արդեն իսկ կարևոր էր համարվում այդ գրքերի նմանահանությունները հրատարակելու խնդիրը: «Հոբելյանի առիթով ցանկալի է ունենալ անդրանիկ հայ տպագրության՝ Պարզատումարի ամբողջական լուսատիպ հրատարակությունը (նմանահանությունը)»,- գրել է մեծանուն հայագետ Ստեփանոս Մալխասյանցը[1]: Իսկ գործի իրականացումը նա Վիեննայի Մխիթարյանների պարտականությունն էր համարում, որովհետև այդ գրքերից մի քանիսը պահվում էին նրանց մոտ[2]: Սակայն վրա հասած համաշխարհային առաջին պատերազմը՝ մեր ժողովրդի համար իր աղետալի հետևանքներով, խափանեց այս և բազում այլ ազգային ծրագրեր:

Հայագիտության ժամանակակից վերելքը այժմեական են դարձել մեր գրավոր և տպագիր եզակի հուշարձանների նմանահանությունների հրապարակումը: 1974 թ. Մաշտոցի անվան Մատենադարանի նախաձեռնությամբ Գ. Կյուլպենկյան հաստատությունը Վենետիկի Մխիթարյանների տպարանում իրականացրեց հայերեն առաջին տպագիր գրքերից երկուսի՝ «Ուրբաթագրքի» և «Տաղարանի» նմանահանությունների հրատարակումը[3], իսկ չուտով «Հայաստանի գրքասերների ընկերության» կողմից հրապարակի վրա կդրվի նաև «Պարզատումարի» նմանահանությունը:

Հայերեն հնագույն տպագիր գրքերը հայագիտության մեջ ուշադրության առարկա դարձան անցյալ դարի 60-ական թվականներից, երբ 1865 թ. Ղևոնդ Ալիշանը առաջին անգամ մատնանշեց Աբգար Դպիր Եվդոկիացու հրապարակած «Սաղմոսարանից» (1565 թ.) ավելի վաղ տպագրված «Աղթարքի» առկայությունը[4]: Այնուհետև 80-90-ական թվականներին անվանի բանասերներ Գ. Զարբհանալյանի, Գ. Գովրիկյանի, Ա. Տիրոյանցի, Գ. Գալեմքյարյանի, Ս. Խապայանի և Տ. Պալյանի[5] ջանքերով նորանոր տեղե-

---

! Տե՛ս «Բանբեր Մատենադարանի», Երևան, 1984, №14:

1 «Մշակ», 1912, № 38:

2 «Մշակ», 1912, № 57:

3 Ուրբաթագիրք և Տաղարան: Նմանահանություն հայերեն առաջին տպագիր գրքերի (1512-1513): Առաջաբանը Բ. Չուգասզյանի, Վենետիկ, 1974:

4 «Բազմավէպ», 1865, էջ 214:

5 **Գ. Զարբհանալյան**, *Հայկական մատենագիտութիւն*, Վենետիկ, 1883,էջ 20, 300: **Գ. Գովրիկյան**, *Հայ տպագրութեանց ամենահին երախայրիքը*, «Հանդէս ամսօրեայ», 1899, էջ 209-212: **Ա. Տիրոյան**, *Առաջին դար հայկական տպագրութեանց*, «Բազմավէպ», 1890, էջ 30-104: Հ. Գ. Գ. [**Գ. Գալեմքյարյան**], *Հայ տպագրութեան երախայրիք մ՚ալ*, «Հանդէս ամսօրեայ», 1890, էջ 161-163: **Տ. Պալյան**, *Հայ տպագրութեան ամենահին երախայրիք մ՚ալ*, «Հանդէս ամսօրեայ»,1894, էջ 357-363:

կութիւններ հրապարակվեցին ևս չորս հայերեն տպագիր երախայրիքների վերաբերյալ, սահմանելով նրանց տպագրության հետևյալ կարգը՝ Պարզատումար, Պատարագատետր, Ուրբաթագիրք, Տաղարան, Աղթարք*:*

Հայ տպագրության 400-ամյա հոբելյանի առիթով 1912-1913 թթ. փորձեր կատարվեցին (Լեո, Ստ. Մալխասյանց, Ն. Ակինյան, Թեոդիկ, Ֆ. Մակլեր, Գ. Գալեմքյարյան և այլք) ճշգրտելու արդեն իսկ հայտնի այդ գրքերի տպագրության ժամանակը, վայրը, տպագրիչի ինքնությունն ու տպարանը, տպագրության հերթականությունը, ինչպես նաև դրանց արտաքին ձևավորման հարցերը: Շատ ավելի ուշ, 1946 թ., այս նույն խնդիրներին ամփոփ կերպով անդրադարձել է նաև Գարեգին Լևոնյանը իր « Հայ գիրքը և տպագրության արվեստը» աշխատության մեջ:

«Պարզատումարը» առաջին անգամ հայտնաբերվել է 1875 թ. Կարինում և ուղարկվել է Վիեննա, Մխիթարյան միաբանության գրադարանին[1]: «Պարզատումարի» մասին ընդարձակ հաղորդումով 1889 թ. «Հանդէս ամսօրեայում» հանդես է եկել Գ. Գովրիկյանը՝ նրա տպագրության տարին որոշելով 1512 թվականը և այն համարելով հայկական տպագրության առաջնեկը: Գովրիկյանը իր եզրակացության համար հիմք էր ընդունել գրքի սկզբում գտնվող հայկական 961 թվականը (961+551=1512), որը 35 տարիների պարզատումարի առաջին տարին էր. «զօրաւոր կռուան մըն է այս 961 թվականը,- գրում է հետազոտողը,- որով կրնանք քանի մը քայլ առնուլ և հետևութեանց հասնիլ... մտեանը տպուած է կամ այն տարին, զոր կը ցուցընէ թուականը, այսինքն՝ 961=1512 և կամ քանի մը ամիս և գուցե նոյն իսկ տարի մը յառաջ սկսած է, որպէս զի նշանակած 961 տարւոյն համար տոմարը պատրաստ ու գործածելի ըլլա»[2]:

«Պարզատումարի» տպագրության Գովրիկյանի առաջարկած 1512 տարեթիվը 22 տարի հետո կասկածի տակ վերցրեց Ստ. Մալխասյանցը և տոմարական մանրամասն հաշվարկներով եզրակացրեց, որ «Պարզատումարի» տպագրության ամենահավանական թվականը 1513-ն է: Խնդիրը այն է, գրել է խորհուն գիտնականը, որ «մեր հին գրքերում հայոց տոմարը հաշվում էին մեծ չարժական տոմարով և ոչ թէ անշարժ կամ Սարկավագաձիր տոմարով»[3] և փրկչական թվականը ստանալու համար ավելացնում էին 552 թիվը և ոչ թէ 551, ինչպես վարվել էր Գովրիկյանը: Մալխասյանցը իր հաշվումները կատարել էր «Պարզատումարի» մասին մամուլում եղած հաղորդումների հիման վրա՝ առանց ձեռքի տակ ունենալու գիրքը ամբողջությամբ:

Շուրջ մեկ տարի անց, 1913 թ., Մալխասյանցի հաշվարկները հաստատվեցին Գ. Գալեմքյարյանի չահեկան ուսումնասիրությամբ[4]: Պարզվեց, որ «Պարզատումարի» մեջ պահպանված է արարչության և հայկական թվականների օգնությամբ փրկչական թվականը որոշելու մի բանաձև, որը սպրդել էր Գովրիկյանի ուշադրությունից: Ահա այդ բանաձևի այն հատվածը, որ վկայակոչել է Գ. Գալեմքյարյանը. «Եթէ կամիցիս իմանալ զամս... ի Քրիստոսի ծննդենէն մինչև ի մեզ. կալ հինգ հարիւր և յիսուն և երկու և

1 Տե՛ս **Գ. Գալեմքյարյան**, *1513-ի հայ տպագրին գիւտին պատմական և նոր լուսաբանութիւններ*, «Հանդէս ամսօրեայ», 1913, էջ 711:

2 «Հանդէս ամսօրեայ», 1899, էջ 210:

3 «Մշակ», 1912, № 57:

4 «Հանդէս ամսօրեայ», 1913, էջ 709-718:

զհայ թուական ի վերայ բեր և այն է». Գ. Գալեմքյարյանը այս բանաձևը կիրառելով գրքի սկզբում գտնվող տոնացույցի առաջին տարվա նկատմամբ, գալիս է այն եզրակացության, որ «Պարզատումարի» տպագրության տարին 1513-ն է: Եզրակացությունը այնքան ակնբախ ու ճշգրիտ է եղել, որ Վիեննայի Մխիթարյան միաբանությունը անեբեր ընդունել է առաջարկված թվականը որպես «Պարզատումարի» տպագրության թվական և այդ հաշվով էլ 1913-ին տոնել է հայ տպագրության 400-ամյակը[1]:

Հայտնի է, որ հայերեն առաջին տպագիր գրքերից միայն «Պատարագատետրը» որոշակի հիշատակարան ունի, որտեղ նշված են ժամանակը՝ ՋԿԲ=962 թ., վայրը՝ Վենեժ (=Վենետիկ) և տպագրողի անունը՝ Հակոբ, որ իրեն համեստորեն «մեղապարտ» է կոչում: «Պատարագատետրը» 1894 թ. մանրամասն նկարագրող Տ. Պալյանը հայոց ՋԿԲ թվականը մեր թվականության վերածելու համար նախորդ ուսումնասիրողների նման առաջնորդվել է հայկական անշարժ տոմարով և ստացել է 1513 թվականը (962+551=1513): Գ. Գալեմքյարյանը իր վերոհիշյալ ուսումնասիրության մեջ, հիմք ընդունելով «Պարզատումարի» բանաձևը, ճշգրտել է նաև «Պատարագատետրի» տպագրության ժամանակը[2]. եթե «Պարզատումարի» դեպքում փրկչական թվականը որոշելու համար հայկական թվականության վրա առաջարկվում է ավելացնել 552, ապա «Պատարագատետրի» դեպքում ևս ՋԿԲ=962 թվականի վրա պետք է ավելացնել 552, այլ կերպ՝ 962+552=1514:

Գ. Գալեմքյարյանի հիմնավորված, պարզ ու չիտակ հաշվարկները, որ հրապարակվել էին համաշխարհային առաջին պատերազմի նախօրեին «Հանդէս ամսօրեայի» 1913 թ. դեկտեմբերի համարում, բնականաբար անմիջական արձագանքներ չունեցան մեր ժողովրդին պատուհասած աղետների տարիներին, իսկ հետագա ուսումնասիրողներն էլ սովորույթի ուժով չարունակեցին 1512 թ. համարել «Պարզատումարի» և 1513-ը «Պատարագատետրի» տպագրության թվականները և խորամուխ չեղան Գալեմքյարյանի հաշվարկումների մեջ: Անգամ 1963 թ. լույս տեսած «Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակում» «Պարզատումարի» տպագրության տարին 1512-ն է համարված[3]: Ավելին, մատենագետ Ա. Բաբայանը 1980 թ. ետ է վերադառնում անցյալ դարի 90-ական թվականները և կրկնում է Գ. Գովրիկյանի վաղուց սրբագրված տեսակետը՝ հայտարարելով, որ ինքը «համակիր է... ընդունել գրականության մեջ արդեն որպես հաստատուն ավանդույթ դրճած հայ առաջին տպագիր գրքի՝ «Պարզատումարի» թվականը՝ 1512 թիվը»[4]:

Հայ տպագրության 450-ամյակի առթիվ 1963-64 թվականներին հետաքրքիր հոդվածներով հանդես եկավ բանասեր-մատենագետ Ռաֆայել Իշխանյանը, որը իր հետազոտությունների ընթացքում քննության առնելով հայերեն հնագույն տպագիր գրքերի էջախորագրային ժապավենաձև ճակատազարդերի տեսակները, գործածության հաջորդականությունը և մաշվածության աստիճանը հանգեց այն ընդունելի եզրակացության, որ «Ուրբաթագիրքն» է եղել հայերեն առաջին տպագիր գիրքը և տպագրված

1 **Ա. Մարտիկյան**, *Համազգային մեծ յոբելեանը*, «Հանդէս ամսօրեայ»,1913, էջ 705-708:

2 «Հանդէս ամսօրեայ», 1913, էջ 713:

3 *«Հայ հնատիպ գրքերի ցուցակ» (1512-1800)*, Ե., 1963, էջ 3:

4 **Ա. Բաբայան**, *Ո՞րն է վերջապես հայ առաջին տպագիր գիրքը*, «Գրքերի աշխարհ» ամսաթերթ, 1980, № 3:

է 1512 թ.[1]: «Պարգատումարի» տպագրության «ամենահավանական» տարին Ռ. Իշխանյանը 1977 թ. հրապարակած իր արժեքավոր աշխատության՝ «Հայ գրքի պատմության» առաջին հատորում համարում է 1513 թվականը, միաժամանակ հարց է դնում, թե «Արդյո՞ք իրավացի էին նրանք (Ստ. Մալխասյանց, Գ. Գալեմքյարյան) ովքեր տոմարացույցի 961 թվականը արդի թվականության 1513 էին համարում»[2]:

«Պարգատումարի» սկզբում հիշատակված հայոց ՋԿԱ (961) թվականը մեր թվականության 1513 թ. համարելու օգտին խոսող մի այլ կռվան ևս կա, որ պահպանվել է «Պարգատումարի» խնդրո առարկա տոմարական բանաձևի սկզբի մասում, բայց, ըստ երևույթին վերծանման որոշ դժվարության պատճառով, դուրս է մնացել Գ. Գալեմքյարյանի վերոհիշյալ ուսումնասիրությունից և հետագա հետազոտողների ուշադրությունից:

Ահա այդ կարևոր բանաձևը ամբողջությամբ:

«Եթէ կամիցես իմանալ զամս ի սկզբանէ արարածոց մինչև ուր ես, կալ ը. և ջ.հ.զ. և զհայ թուական ի վերայ բեր և այն է: Եւ ի Ք[րիստոս]ի ծնընդենէն մինչև ի մեզ. կալ հինգ հարիւր և չիսուն ւ երկու և զհայ թուական ի վերայ բեր և այն է» (Է պրակ, էջ 7-8):

Ըստ էասյան կամ հինգհարյուրյակի՝ արարչությունից մինչև հայկական թվականության սկիզբը ընկած ժամանակաշրջանը ՐՋՀԶ=5976 տարի է, կամ, ինչպես Հովհաննես Իմաստասերն է գրում, «յԱդամայ մինչև հայ թուական... Ըստ Շ. եկին թուականին ՐՋՀԶ»[3]: Իսկ երբ սրան ավելացնում ենք «հայ թուականը», որ տվյալ դեպքում գրքի սկզբում տեղադրված տոնացույցի առաջին տարին է՝ 961, ստացվում է ժամանակի փրկչական թվականը, այլ կերպ՝ 5976+961=6937, որից դուրս բերելով արարչության էասյան թվականը մինչև մեր թվականության սկիզբը (5420+4[4]=5424), ստանում ենք 1513 թ. (6937-5424=1513): Մի թիվ, որ համընկնում է հիշատակագրության երկրորդ հատվածի Գալեմքյարյանի հաշվարկին՝ 961+552=1513:

Փրկչական թվականը որոշելու այս բանաձևերը հանդիպում են Հովհաննես Սարկավագի (Իմաստասերի) (XI-XII դդ.) տոմարական աշխատություններում («եթէ կամիցես գիտել՝ ի ծննդենէ Քրիստոսի մինչև ուր ես՝ եթէ քանի ամ է, կալ ՇԼԲ (552), զհայ թուականն ի վերայ բեր և այն է». Մատենադարան, ձեռ. 1999, էջ 22ա, «եթէ կամիցես գիտել... կալ ՐՋՀԶ (5976), զհայ թուականն ի վերայ բեր...» Մատենադարան, ձեռ. 1973, էջ 6ա)[5]: «Պարգատումարի» և Հովհաննես Սարկավագի այս բանաձևերի զուգադրումը,

---

1 **Ռ. Իշխանյան**, *Ո՞րն է առաջին հայ տպագիր գիրքը*, «Գրական թերթ», մայիսի 31: Նույնի՝ *Նորը հայ հնագույն տպագրության վերաբերյալ*, «Բանբեր Մատենադարանի» հ. 7, 1964, էջ 275-295: Նույնի՝ *Հայ հնագույն տպագրությունների ժամանակագրության հարցի շուրջ*: Անդ, հ. 8, 1967, էջ 183-188:

2 **Ռ. Իշխանյան**, *Հայ գրքի պատմություն*, հ. 1, Ե., 1977, էջ 47, 158:

3 **Ա. Գ. Աբրահամյան**, *Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը*, Ե., 1956, էջ 224:

4 Այս հավելյալ 4 տարիները Հովհաննես Իմաստասերը համարում է Ադամից հետո անցած հարյուրամյակներում ճաճանչ տարիներից գոյացած 4 տարին. «...ժողովին աւուրքն ճաճանչականի ՅԿԵ (365) ի յամաց ՌԻՆԿ-ից (1460-ից) և անցանէ շարժմունս եղանակացդ ի միւս ամն միով թուով և ժողովին ի թուականացդ՝ որ յելից Ադամայ ի դրախտէն աւուրք իբրև չորից ամաց սակաւ ինչ կամ ճուազ կամ աւելի մինչև ի գիր մատենիդ» (Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 262: Տոմարական այս մի քանի տարիների տարբերությունը նկատել է Մ. Չամչյանը (տե՛ս Պատմութիւն հայոց, հ. Գ. Վենետիկ, 1786, Ժամանակագրութիւն, էջ 6): Այս 4 տարիների փաստի վրա մեր ուշադրությունը հրավիրեց երիտասարդ տոմարագետ Ջուլետա Էյնաթյանը:

5 **Ա. Գ. Աբրահամյան**, *Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը*, Ե. 1956, էջ 201, 207:

ինչպես և գրքի սկզբում տեղադրված 35 (Ա-Փ) յոթներակներով տոնացույցը, վերադիրը և լուսնի ծնունդը որոշելու կարգերի հիշատակումը խորհել են տալիս, որ ի դեմս Հակոբ տպագրիչի մենք ունենք հայկական տոմարին քաջագիտակ մի անճնավորություն, որ անպայման առաջնորդվել է իր տպագրած գրքերում առկա բանաձևերով, հետևաբար դրանց մեջ հիշատակելով հայոց 961 և 962 թվականները, անպայման նկատի է ունեցել մեր թվականության 1513 և 1514 թվականները, որովհետև ապրելով ու աշխատելով Վենետիկում, նա չէր կարող չփոթել իր միջավայրում գործող փրկչական թվականը:

Կատարված այս հաշվարկումներից հետո, նկատի առնելով նաև Ռ. Իչխանյանի առաջարկած ճակատագարդերի մշակվածության աստիճանը, հայերեն առաջին տպագիր գրքերի (ներառյալ նաև «Ուրբաթագրքի» մեջ որպես առանձին ԳԳ պրակ տեղադրված «Վասն գանի» հատվածը) տպագրության հերթականությունը պայմանականորեն *պիտի սահմանել հետևյալ կերպ.*

1. Ուրբաթագիրք [1512], 2. Պարզատումար (1513), 3. Պատարագատետր (1514), 4. Աղթարք, 5. Տաղարան[1]*:*

Այս կարգը «պայմանական» ենք անվանում, որովհետև ամբողջովին չի կրկնում Ռ. Իչխանյանի առաջարկած եղանակով մեր հնագույն տպագիր գրքերի տպագրության հերթականությունը, բայց և միաժամանակ չի հակասում դրան, հատկապես եթե նկատի ունենանք, որ, ինչպես ներկայացմս, այնպես էլ հնում փոքր տպարաններում հաճախ մի երկու գիրք միասին են չարվում և ըստ չարված պրակների պատրաստվածության աստիճանի են տպագրվում, իսկ դրանց զարդագրերն ու ճակատագարդերը, սահմանափակ քանակության պատճառով, մի պրակից տեղափոխվում են մյուսի վրա: Հակոբ Մեղապարտի դեպքում ևս այս ձևը կարող էր կիրառված լինել, հատկապես եթե չբացառենք այն իրողությունը, որ Հակոբը կարող էր մեկ-երկու գրաշար-տպագրիչ գործընկերներ կամ աշխատակիցներ ունենալ և յուրաքանչյուրը մեկ գրքի վրա կաշխատեր:

Մեր այս ենթադրությունը ավելի համոզիչ է դառնում, երբ նկատի ենք ունենում «Պատարագատետրի» հիշատակարանը, որտեղ ասված է՝ «Գրեցաւ սուրբ տառս... ձեռամբ մեղապարտ Յակոբին»: Բանասիրության մեջ այս գրեցաւ *արտահայտությունը առաջարկում են* տպագրեցաւ հասկանալ*: Զբացառելով հանդերձ այս բացատրությունը, կարծում ենք* գրեցաւ*-ը կարելի է նաև ուղղակի ընկալել, այն առումով, որ Հակոբին՝ որպես զարգացած ու գրագետ անճնավորության, գիտենք որպես գրիչ ու խմբագիր, մեկը, որ տպագրվելիք առաջին գրքերի բնագրերը ընտրել և ընդօրինակել է ձեռագիր մատյաններից և իր գլխավորությամբ տպագրել է տվել գործընկերներին կամ աշխատակիցներին, որով* Հակոբը ոչ միայն հայկական տպագրության, այլև հռատարակչական գործի նախակարապետն է դառնում*:*

---

1 Գրքագիտության պատմության մեջ մինչև վերջերս հայ առաջին տպագիր գրքերի շարքում վերապահությամբ հիշատակվում էր և մի «Սաղմոսարան», որ իբր ժամանակին Սեբաստիայում տեսել էր Կարապետ Գաբիկյանը (տե՛ս «Հայ բժշկության շուրջ» նրա հոդվածը, «Բիւզանդիոն», 1906, №2963), սակայն, ինչպես պարզել է բեյրութաբնակ մատենագետ Արտաշես Տեր-Խաչատրյանը («Հասկ» հայագիտական տարեգիրք, նոր շրջան, Ա տարի, 1980, էջ 314), Կ. Գաբիկյանը հետագայում ճշգրտել է իր հաղորդումը այն առումով, որ իր տեսած ձնատիպը Աբգար Դպրի «Սաղմոսարանն» է եղել (տե՛ս, **Թէոդիկ**, *Ամէնուն տարեցոյց*, Պոլիս, 1915, էջ 24):

Նման աշխատաճևի արդյունքը կարող էր լինել այն, որ գրքերից մի քանիսի տպագրությունը կավարտվեր միաժամանակ: Սա են վկայում հակոբյան հրատարակությունների մեծ մասի համատեղ կազմված լինելու իրողությունը, որ այնքան դիպուկ նկատել է Ռ. Իշխանյանը[1]: Եվ հիրավի, դեռևս իրենց նախնական կազմերով պահպանված հայերեն առաջին տպագիր գրքերի մեզ ծանոթ հետևյալ օրինակները կազմված են միասին. այսպես՝

Մաշտոցի անվան Մատենադարանում՝

Տաղարան և Ուրբաթագիրք – *հնատիպ № №644, 656*

Պարզատումար և Աղթարք – *հնատիպ № №640, 665*

Ուրբաթագիրք և Պարզատումար – *հնատիպ № №1632, 1633*

Երևանի Մյասնիկյանի անվան պետական գրադարանում՝

Պարզատումար և Ուրբաթագիրք – *հնատիպ №3623*

Հայաստանի պատմության թանգարանում՝

Ուրբաթագիրք, Տաղարան և Պարզատումար – *հնատիպ №463*

կեսարիայում՝ Տ. Պալյանի տեսած օրինակները[2]:

Պատարագատետր, Ուրբաթագիրք և Տաղարան

Օքսֆորդի Բոդլեյան գրադարանում՝ Վ. Ներսիսյանի տեսած օրինակները[3]

Աղթարք և Պարզատումար *№ №3365 (1) և 3365 (2)*

Հակոբյան գրքերը տպագրությունից հետո միաժամանակ կազմվելու փաստարկ են նաև տպագրական ամենավերջին միավոր «Վասն գանի»-ի պրակը առաջին տպագրություն համարվող «Ուրբաթագրքի» մեջ մերթ Գ և մերթ Զ պրակներից հետո տեղադրված լինելու հանգամանքը[4] և Օքսֆորդի Բոդլեյան գրադարանի «Աղթարքի» Դ և Ե պրակների միջև «Տաղարանի» Զ մամուլի սխալ տեղադրումը[5]:

Գրքագիտության պատմության համար նվազ հետաքրքրություն չեն ներկայացնում հայերեն առաջին տպագիր գրքերի կազմերը, որոնք ցարդ ըստ էության քննության չեն առնվել: Դրանց՝ մեզ հասանելի հայաստանյան օրինակներից մի քանիսը պահպանել են սկզբնական վիճակը, որոնց քննությունը նույնպես նպաստում է համոզվելու, որ հակոբյան հրատարակությունները կազմվել և հրապարակ են հանվել դրանց բոլորի տպագրությունից հետո, ամենայն հավանականությամբ 1513-1515 թվականներին:

Մաշտոցյան մատենադարանի համատեղ կազմված «Տաղարանի» և «Ուրբաթագրքի» (№ №644, 656) և Հայաստանի պատմության թանգարանի նույնպես համատեղ կազմված «Ուրբաթագրքի», «Տաղարանի» և «Պարզատումարի» (№ 463) կաշեպատ տախտակի կազմերը դրոշմված են միևնույն զարդերով՝ վարդակներ, կրկնագիծ ճվաճև

1 **Ռ. Իշխանյան**, *Հայ գրքի պատմություն*, հ. 1, էջ 162:

2 «Հանդէս ամսօրեայ», 1894, էջ 357:

3 **Vrej Nersissian**, *Catalogue of Early Armenian books*, 1512-1850, London 1930, p. 47.

4 **Գ. Գալեմքյարյան**, ՈՒշվ. ՒՈդվածը, «Հանդէս ամսօրեայ», 1913, էջ 71, **Ռ. Իշխանյան**, ՈՒշվ. աշխ., էջ 142, «Ուրբաթագիրք և Տաղարան» (ննանահանություն), երկու խոսք, էջ ԺԷ-ԺԸ:

5 **Vrej Nersissian**, անդ:

և միագիծ կլոր չրջանակներ, որոնք մի դեպքում (Մատենադարանի օրինակ) երկրաչափական խիստ դասավորությամբ տեղադրված են եռագիծ կրկնակի չրջանակի մեջ (նկ. 1), իսկ մյուս դեպքում (Պատմության թանգարանի օրինակ) երկգիծ կրկնակի չրջանակի մեջ՝ անկանոն դասավորությամբ (նկ. 2). Մատենադարանի օրինակը ունի նաև բացված-քի բերանակալ նույն դրոշմազարդերով, իսկ պատմության թանգարանի օրինակի բերա-նակալը կտրված է[1]*:*

Մաշտոցյան մատենադարանի համատեղ կազմված «Ուրբաթագրքի» և «Պարգա-տումարի» (№ № 1632 և 1633) կազմը նույնպես սկզբնական է, բայց եռագիծ չրջանակ-ների մեջ խաչաձև դրոշմված են վեցթևանի աստղազարդեր, ինչպես նաև վարդակներ:

Կազմերը ունեցել են կաշվե ամրակներ, որոնց միայն փայտե մեխերի անցքերն են մնացել:

Ուշադրության են արժանի Մատենադարանի և Պատմության թանգարանի վերո-հիշյալ կազմերի աստառը, որ նույնորակ հաստ թելով գործված մուգ կապույտ կտավ է, ինչպես նաև կռնակի վերևի ու ներքևի եգրաքուդերը, որոնք գործված են սպիտակ ու կարմիր թելերով: Նման եգրաքուդեր ունեն Մատենադարանի № № 1632 և 1632 համա-տեղ կազմված և Մյասնիկյանի անվան պետական գրադարանի № 3623 գրքերի կազմե-րը: Վերջինիս կազմը չնայած սկզբնական է, բայց գուրկ է դրոշմազարդերից, վերանո-րոգվել է հետագայում և ունի մագաղաթյա պահպանակներ (թերևս Ժ կամ ԺԱ դարերի, մասն Ղուկասի ավետարանի):

* * *

«Պարզատումարը» իր բովանդակությամբ միջնադարյան մարդուն հետաքրքրող, գործնական նշանակություն ունեցող, երբեմն նաև սնոտապաշտության հետ առնչվող աչխարհիկ բնույթի նյութերի մի ժողովածու է, որ իր խորագիրը ստացել է գրքի սկզբում տեղադրված տոնացույցի անունով:

Ժողովածուի մեջ ընդգրկված են հետևյալ նյութերը.

1. Տարվա տանուտերների աղյուսակ:

2. «Պarզատումար» — *Հայոց եկեղեցու, ինչպես նաև մյուս քրիստոնեական եկեղե-ցիների տոները ժամանակային առումով չարժական բնույթ են ունեցել և դարերի ըն-թացքում օրացույցի կատարելագործման հետ մեկտեղ մի քանի անգամ բարեփոխում-ների են ենթարկվել: Տոմարական բարդ հաշվարկումները, որոնք աստղաբաչխական ճչգրիտ գիտելիքներ են պահանջել, միշտ չէ, որ հասանելի են եղել եկեղեցու, մասնավո-րաբար նրա ստորին դասի սպասավորներին, ուստի դեռևս վաղ ժամանակներից սկսած եկեղեցական տոների ու միջոց ուտիքների (եկեղեցական կարգով սահմանված պահքից ազատ օրերի) համար կազմվել են տոնացույցի պարզ և համառոտ ձեռնարկներ, որոնք կոչվել են* պարզատոմար (պարզատումար)*: Հայկական ձեռագիր մատյաններում երկու ձևի պարզատոմարներ են հանդիպում՝ աղյուսակային և պարզ արձակ չարադրանքով:*

1 Կազմերի դրոշմազարդերը վերականգնել է Մատենադարանի աշխատակից, նկարչուհի Լիլիթ Ամիր-ջանյանը:

Հակոբ Մեղապարտը օգտագործել է վերջին ձևը՝ տալով 35 տարիների տոնացույց՝ սկսած հայոց 961 թվականից:

3. Տարվա ամսանուններն ու նրանց օրերի թիվը, լուսնի ծնունդի, ինչպես և տարվա վերագրի որոշման բանաձևեր:

4. «Յաղագս ամպոց և երկնից». — *Այս բաժնում երկնային մարմինների ժողովրդական դարավոր դիտարկումների փորձի հիման վրա տրված են եղանակի փոփոխությունների կանխատեսումները, մի բան, որ չափազանց կարևոր էր հիմնականում գյուղատնտեսությամբ զբաղվող հայրենի երկրի ժողովրդի, ինչպես նաև Արևելք-Արևմուտք համաշխարհային տարանցիկ ճանապարհների վրա ուղևորությունների մեջ գտնվող հաց վաճառականության համար:*

5. «Թէ կամիս իմանալ զնմեռն թէ դժար գայ, թէ ոչ». — *Տոմարական հաշիվներով կանխագուշակումներ են առաջարկվում խիստ և թույլ ձմեռվա մասին:*

6. «Սրբոյն Կիւրղի հայրապետին ասացեալ է վասն կաղանդաց». — *Ըստ տարվա առաջին օրվա տոմարական զուգադիպության կանխագուշակումներ են արվում ողջ տարվա վիճակի, եղանակի, բերքատվության, հիվանդությունների և տեղի ունենալիք պատերազմների մասին:*

7. «Ումեմն իմաստասիրի ասեալ յաղագս լուսնին ատուրցն, որ զերազն յայտնէ». — *Տարբեր բնույթի աշխատանքներ կատարելու՝ տան հիմք գցելու, ցանելու, ճանապարհ ելնելու, հիվանդին բուժելու, երեխայի ծննդյան համար նշվում են լուսնային ամսի յուրաքանչյուր օրվա նշանակությունը, ինչպես նաև երազների կատարման ժամկետները:*

8. «Տղայի ծննդեան, վասն տղայի է ատուրն...». — *Երեխայի ծննդյան օրվա անունով կանխագուշակվում են նրա բնավորության գծերը, կյանքի տևողությունը:*

9. «Նշանացոյց». — *Տյառնընդառաջի տոնի 4-րդ օրվա եղանակի և աստղերի ցոլքի հիման վրա կանխագուշակումներ են առաջարկվում ողջ տարվա վիճակի մասին:*

10. «Յաղագս շարժմանց». — *Տարվա տարբեր ժամանակներում տեղի ունեցող երկրաշարժերով կանխատեսումներ են արվում ողջ տարվա ընթացքում տեղի ունենալիք դեպքերի մասին:*

11. [Տոմարագիտական բանաձև]. — *«Եթէ կամիցես իմանալ զամս ի սկզբանէ արարածոց մինչև ուր ես՝ կալ ը. և ջ.հզ. և զհայ թուական ի վերայ բեր և այն է: Եւ ի Ք[րիստոս]ի ծնընդենէն մինչև ի մեզ՝ կալ հինգ հարիւր և չիսուն ՚ւ երկու և զհայ թուական ի վերայ բեր և այն է»:*

12. «Վասն լուս[ն]ին, որ բակ առնու». — *Լուսնի չուրջ երբեմն գոյացող ծիածանագույն շրջանաձևի հիման վրա տարվա վիճակի մասին կանխատեսումներ են առաջարկվում.*

13. «Մարմնախաղաց». — *Մարմնի տարբեր մասերի շարժումների՝ խաղերի հիման վրա կանխատեսումներ են արվում մարդու հետ առաջիկայում տեղի ունենալիք դեպքերի համար:*

«Պարզատումարի» տպագրական արվեստը նույնն է, ինչ Հակոբ Մեղապարտի մյուս չորս գրքերինը. տառատեսակը բոլորագիր է, տպագրությունը երկգույն, բնագրերը սև, վերնագրերը և պարբերությունների սկզբնատառերը կարմիր, էջի չարվածքի չափսերը՝ 6,5×13 սմ, կազմի չափսերը՝ 9,5×14,5 սմ, պրակները՝ 8 (Ա-Է՝ 16 էջ, Ը՝ 8 էջ,

որից երկու էջ դատարկ), ընդամենը 120 էջ, ունի ժապավենաձև էջախորագրային ճակատազարդեր, զարդագիր գլխատառեր, տիտղոսաթերթի վրա՝ «Այս է պարզայտումար հայոց», էջ 118-ի վրա՝ տպարանանիշը լատիներեն D. I. Z. A. սկզբնատառերով:

«Պարզատումարի» 9 օրինակներ[1] պահվում են՝

Մաշտոցի անվան Մատենադարանում	*2 օրինակ*
Հայկ. ՍՍՀ Ալ. Մյասնիկյանի անվան պետական գրադարանում	*1 օրինակ*
Հայաստանի պատմության թանգարանում	*1 օրինակ*
Վիեննայի Մխիթարյան գրադարանում	*2 օրինակ*
Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի գրադարանում	*1 օրինակ*
Մյունխենի պետական գրադարանում	*1 օրինակ*
Օքսֆորդի Բոդլեյան գրադարանում	*1 օրինակ*

ДАТА ИЗДАНИЯ «ПАРЗАТУМАРА»

Р е з ю м е

В связи с подготовкой факсимильного издания «Парзатумара» («Объяснительного календаря») – одного из первых армянских печатных изданий, автор статьи изучил вопрос времени и последовательности издания первых армянских печатных книг. Принимая за основу формулу календарных исчислений Ованеса Саркавага (XI в.), приведенную в «Парзатумаре», автор статьи считает, что после «Урбатагирка» («Молитвенника», 1512 г.) был издан «Парзатумар» (1513 г.), а затем «Патарагатетр» («Требник», 1514 г.).

LA DATE D’EDITION DU “PARZATOUMAR”

(R é s u m é)

A l’occasion de l’édition en fac-simile du “Parzatoumar” (“Calendrier expliqué”), l’un des premiers livres arméniens imprimés, l’auteur de l’article a étudié la question des dates d’édition et de la succession des premiers livres arméniens imprimés. Se basant sur la formule des calculs du calendrier de Houhannes Sarkavag (XIe siècle), découverte dans le “Parzatoumar”, l’auteur considère que le “Parzatoumar” (1513) a été précédé de l’ “Ourbataguirk” (“Livre de prières”, 1512) et suivi du “Patarakatetr” (“Missel», 1514).

1 1946 թ. Գ. Լևոնյանին հայտնի էին միայն 6 օրինակ. տե՛ս նրա «Հայ գիրքը և տպագրության արվեստը», Երևան, 1946, էջ 44:

«ՈՒՐԲԱԹԱԳՐՔԻՑ» ՄԻՆՉԵՎ «ՈՒՐԲԱԹ»[1]

Վենետիկ... Աշխարհի համար հայտնի որպես ջրանցքների ու պալատների գեղեցկուհի քաղաք, լուսաչող անուն մեր ժողովրդի մշակույթի պատմության համար:

Յուրաքանչյուր հայ մտավորական, մասնավորաբար բանասեր-գրականագետ, իր հոգու աշխարհում յուրովի կերտած ունի Վենետիկի պատկերը, ինձ համար դա առաջին հերթին ջրանցքների ու չքեղ կառույցների պաստառի վրա ուրվագծվող, այս քաղաքում տպագրված հայերեն առաջին գրքերն են իրենց հրատարակչի՝ համեստաբար իրեն «Մեղապարտ» անվանող Հակոբի, պայծառ կերպարանքով, դա անմահանուն Մխիթար Աբբահոր լուսաչող դեմքն է, իր ստեղծած միաբանությամբ, դա Մուրատ Ռաֆայելյան վարժարանն է, իր հռչակավոր սաներով: Այս պատկերը չի փարատվում անգամ, երբ քեզ բախտ է վիճակվում անձամբ լինել Ադրիատիկի ափերին և ըմբոշխնել Վենետիկի աշնանային մշուշապատ գեղեցկությունը:

Սուրբ Մարկոսի հրապարակ. նայում ես քո չորս բոլորը, տեսնում ճարտարապետական հիասքանչ կոթողը, բայց դա մի պահ է միայն, ինքնաբերաբար սկսվում են մտորումներ. այս վայրերում քայլել են մեր պատմության ու գրականության մեծանուն կերտողները՝ «Հայկազեան» փառահեղ բառարանի հեղինակներ Գաբրիել Ավետիքյանը, Խաչատուր Սյուրմելյանը եւ Մկրտիչ Ավգերյանը, մեծանուն պատմաբան Միքայել Զամչյանը, Ավարայրի Բլբուլ Ղևոնդ Ալիշանը, հայագետ ու թարգմանիչ Արսեն Ղազիկյանը և հայ նոր դպրության ու մշակույթի չատ ու չատ այլ երախտավորներ:

Քայլում ես Վենետիկի նեղ փողոցներով, նավակներով սահում ջրերի վրայով, շրջում թանգարաններում և դու, հայ մարդ ու հայ բանասեր, չես կարող անընդհատ չվերադառնալ դեպի անցյալը, թե հայազգի Հակոբը 16-րդ դարում որտեղի՞ց եկավ հասավ Վենետիկ և ձեռնամուխ եղավ հայերեն գրքերի տպագրության: Հետաքրքիր կլիներ իմանալ, թե արդյո՞ք պահպանվել է այն շենքը, որտեղ տպագրվել են մեր առաջին գրքերը, արդյո՞ք Հակոբ Մեղապարտը սեփական տպարան ունեցե՞լ է, թե օգտվել որևէ վենետիկցի տպագրիչի ընձեռած հնարավորություններից: Սակայն պատմությունը առայժմ այս բոլորի մասին լռում է: Անգամ մինչև հիմա պարզված չէ, թե Հակոբ Մեղապարտը ո՞վ է եղել, ինչո՞վ է զբաղվել: Բայց որ նա գրագետ մարդ է եղել, հայրենասեր, լուսավոր ու պայծառ մի անձնավորություն, անառարկելի է:

Յոհան Գուտենբերգի տպագրության հանճարեղ գյուտից մի քանի տասնամյակներ էին անցել, իտալական քաղաքները, մասնավորաբար Վենետիկը, արդեն դարձել էին տպագրական գործի կարևորագույն կենտրոններ, երբ Վենետիկի հայ սակավաթիվ գաղութի երկնակամարում երևան է գալիս հայոց առաջին տպագրիչը: Իր ժողովրդի լուսավորության ճակատագրով մտահոգված հայորդին քաջ գիտակցում է գուտենբերգյան գյուտի մշակութային վերափոխիչ դերը համաշխարհային զարգացման բնագավառում, ուստի չի ցանկանում, որ իր ժողովուրդը ետ մնա քաղաքակրթության քարավանից և ձեռնամուխ է լինում հայերեն գրքերի հրատարակության:

---

[1] Տե՛ս «Ուրբաթ», 1990, № 3, մայիսի 4, էջ 4:

Իսկ Հակոբը ինչի՞ց պետք է սկսեր, առաջինը ի՞նչ գիրք պետք է հրատարակեր, որպեսզի իր չրջապատում հետաքրքրություն ստեղծեր հայ մարդուն անծանոթ տպագիր գրքի նկատմամբ: 16-րդ դարի առաջին կեսերից Վենետիկի հայկական գաղութը հավանաբար բաղկացած է եղել տեղում հաստատված հայ վաճառականներից ու արհեստավորներից, և Արևելք-Արևմուտք առևտրական քարավանային ճանապարհների վրա երթևեկող հայերից, որոնք և հանդիսանում էին հիմնական կապը հայրենի երկրի հետ: Սրանք էլ պետք է լինեին Հակոբի գրքերի առաջին ընթերցողները, մարդիկ, որոնց պետք է հետաքրքրեին ոչ թե պաշտամունքային ու խրթին բովանդակությամբ գիտական գրքերը, այլ այնպիսիք, որոնք բավարարում էին նրանց առօրյա, առտնին պահանջները: Մի երկրից մյուսը ճամփորդող, անընդհատ չարժման մեջ գտնվող միջնադարյան հայ վաճառականը, որ ենթակա էր հազար ու մի արկածի ու վտանգի, հարճակումների ու կողոպուտի, բնության արհավիրքների ու հիվանդությունների, ինքնըստինքյան միշտ ապավինել է գերբնական ուժերի մեծահոգությանը, նրանց խղճին, որի համար դեռևս հին ժամանակներից միշտ իր հետ կրել է զանազան աղոթքներ, չարը խափանող ու բարին հաստատող պահպանակ-գրեր, հմայիլներ: Ժամանակի ընթացքում այս տեսակի գրականությունը վերածվել է առանձին գրքույկների ու ժողովածուների, որոնցից առավել մեծազոր է համարվել, ըստ երևույթին, Ուրբաթագիրք խորագիրը կրող ժողովածուն, որտեղ ամփոփված առանձին առասպելախառն պատմություններ, չափածո աղոթքներ, պահպանակ-գրեր հանդիպում են ավելի վաղ կազմված ձեռագիր ոսկեփորիկների, այլևայլ ժողովածուների ու տաղարանների մեջ:

Այս նկատառումներով էլ պիտի բացատրել, որ Հակոբ Մեղապարտը 1512 թ. առաջինը տպագրում է Ուրբաթագիրք ժողովածուն: Այս խորագրով ձեռագիր ժողովածուներ արդեն գոյություն ունեին 15-րդ դարում (մեզ հայտնի հնագույն օրինակը Մաշտոցյան Մատենադարանի 3248 թվահամարի մատյանն է, որ կրում է 1476 թվականը):

Ժողովածուն Ուրբաթագիրք խորագիրն է ստացել թերևս այն պատճառով, որ այնտեղ ընդգրկված նյութերից առաջինը ունեցել է «Ուրբաթ աւր կամ չորեքշաբթի տանին զհիւանդն ի դուռն եկեղեցւոյն...» սկսվածքը:

1512-1514 թվականներին Հակոբ Մեղապարտը հրապարակի վրա է դնում ևս չորս անուն գիրք՝ Պատարագատետր, Պարզատումար, Աղթարք և Տաղարան*:*

Հայերեն հնագույն գրքերի տպագրությունը, ժամանակի հանգամանքները նկատի ունենալով, որակյալ է, մաքուր և կանոնավոր, հիմնականում պահպանված են բառանջատումները, սակավ են սխալները, հնարավորության սահմաններում տպագրական տառերը նմանեցված են ժամանակի ձեռագիր բոլորագրին, գրչագիր մատյանների հետևողությամբ էջերը զարդարված են խորաններով, թռչնագրերով, լուսանցազարդերով, տպագրությունը կատարված է երկգույն՝ սև ու կարմիր:

Հայերը Արևելքի առաջին ժողովուրդներից էին, որ հրապարակի վրա դրին իրենց մայրենի լեզվով տպագրված առաջին գրքերը. նրանք էին նաև առաջինը, որ փոքր-ինչ ավելի ուշ՝ 1638 թ. Միջին Արևելքում (Նոր Ջուղա) հիմնադրեցին առաջին տպարանը:

Հակոբ Մեղապարտի գործը անծանոթ պատճառներով ընդհատվեց. միայն 1565 թվականին Աբգար Դպիր Եվդոկիացու ջանքերով վերսկսվեց հայերեն գրքերի հրատա-

բակութիյունը: Իսկ ավելի ուշ, Մխիթար Սեբաստացին Սուրբ Ղազար կղզում այնպիսի հիմնավոր լուսավորական ու հրատարակչական գործ հիմնադրեց, որ երեք հարյուր տարի անընդմեջ ծառայում է մեր ժողովրդի լուսավորության հայրենանվեր գործին՝ հրապարակի վրա դնելով Մխիթարյան հայրերի դարակազմիկ աշխատությունները:

Մխիթարյան միաբանությունը այս օրերին, ինչպես մեր ողջ ժողովուրդը, ծանր ապրումների ու հոգսերի մեջ է: Նրանք ակնդետ հետևում են Հայրենիքում տեղի ունեցող իրադարձություններին, սրտատրոփ լուրեր սպասում Արցախից, նրանք են, որ իրենց վրա են վերցրել ահավոր երկրաշարժից տուժածների համար Իտալիայում կազմակերպված օգնությունը հավաքելու և հայրենիք առաքելու հիմնական գործը: Անցյալ տարի Վենետիկի Մուրատ-Ռաֆայելյան վարժարանը մեկ ամիս չարունակ իր կամարների տակ էր հյուրընկալել աղետից տուժած երեխաների մի մեծ խումբ: Ջնայած ստեղծված ծանր պայմաններին, չարունակվում է Մխիթարյանների լուսավորական-հրատարակչական գործունեությունը:

Հայագիտության ժամանակակից վերելքը այժմեական են դարձրել մեր ձեռագիր ու տպագիր եզակի հուշարձանների նմանահանությունների հրապարակումը: 1975 թ. Մաշտոցի անվան մատենադարանի նախաձեռնությամբ Գ. Կյուլպենկյան հաստատությունը Վենետիկում, Մխիթարյանների տպարանում, իրականացրեց հայերեն առաջին տպագիր գրքերից երկուսի՝ Ուրբաթագրքի և Տաղարանի նմանահանությունների հրատարակումը, իսկ Պարզատումարի նմանահանության հրատարակությունը ստանձնել է Հայաստանի գրքասերների «Դպրություն» ընկերությունը:

ՁԵՌԱԳՐԱՅՈՒՑԱԿՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ

ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ[1]

1971-72 թթ. ձմռան ամիսներին մասնավոր այցով գտնվելով Ամերիկայի Միացյալ Նահանգներում, հնարավորություն ունեցանք ծանոթանալու տարբեր քաղաքների թանգարաններում ու գրադարաններում, ինչպես նաև առանձին անհատների մոտ պահվող հայկական ձեռագրերի: Որոշ անձինք, մեր խնդրանքով, իրենց պատկանող ձեռագրերը նվիրաբերեցին Մաշտոցի անվան Մատենադարանին, որտեղ հազարավոր այլ ձեռագրերի հետ դրանք հավերժ կպահվեն իրենց նվիրատուների անուններով: Եղան և այնպիսիք, որոնք սիրահոժար թույլատրեցին նկարագրել իրենց մատյանները և ընդօրինակել դրանց հիշատակարանները:

Միացյալ Նահանգների գրադարանների հայկական ձեռագրերի փոքրիկ հավաքածուների մանրամասն նկարագրությունը պատրաստել է Կալիֆորնիայի համալսարանի Մերձավոր Արևելքի բաժնի վարիչ պրոֆ. Ավետիս Սանջյանը, որը բարյացակամորեն մեզ տրամադրեց իր նկարագրած 160 ձեռագրերի ցանկը: Սրանից դուրս Կոնգրեսի գրադարանում (Վաշինգտոն) եւ Ս. Երրորդություն հայկական եկեղեցում (Ֆրեզնո) ծանոթացանք մինչ այդ ոչ մի հայագետի կողմից չնկարագրված մի քանի հայերեն ձեռագրերի, որոնք անգամ գույքագրված ու համարակալված չէին, ուստի նպատակահարմար գտանք դրանք ևս նկարագրել և մյուս մատյանների նկարագրության հետ մեկտեղ հրապարակել: Ֆրեզնոյի ձեռագրերը մեզ հայտնի դարձան այդ քաղաքից մեկնելուց մի քանի ժամ առաջ, ուստի միայն կարողացանք դրանց հիշատակարանների լուսապատճենները վերցնել:

Նկատի ունենալով, որ այս ձեռագրերի նկարագրությունը, մեր տրամադրության տակ եղած ժամանակի սղության պատճառով, կատարում էինք չափազանց շտապ, հնարավոր է, որ լինեն որոշ վրիպումներ, որոնց համար խնդրում ենք ներողամիտ լինել:

ԱՄՆ-ում կատարած մեր աշխատանքների մասին 1972-74 թթ. մի քանի հոդվածներ ենք տպագրել մեր հանրապետության թերթերում ու հանդեսներում, որտեղ գնահատանքի խոսք ենք ասել մեր միջոցով ձեռագրեր և թանգարանային այլ արժեքներ հայրենիքին նվիրաբերողների հասցեին. օգտվելով այս պատեհությունից մեկ անգամ ևս մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում բոլոր նրանց, ովքեր սիրահոժար մեզ օգնեցին հայտնաբերելու հայկական ձեռագրերի նոր հասցեներ, ինչպես նաև նրանց, ովքեր հայրենասիրաբար իրենց մատյանները նվիրաբերեցին Մատենադարանին:

ԱՄՆ կատարած մեր շրջագայությունը ցույց տվեց, որ դեռևս գիտությանն անծանոթ հայկական շատ ձեռագրեր կան՝ ցրված աշխարհով մեկ, ուստի անհրաժեշտ է դրանք հայտնաբերելու նպատակով ծրագրված աշխատանք կատարել:

---

[1] Տե՛ս «Բանբեր Մատենադարանի», Երևան, 1977, №12, էջ 219-277:

1
ԱԻԵՏԱՐԱՆ
(Լոս Անջելոս, Արշակ Տիգրանյան, N2)

Լիսոնկա – Ծիծեռնբոյն ՁԺԹ – 1270

Գրիչ՝ *Բարսեղ:* Ստացող՝ *Հովհաննես:* Թերթ՝ *328:* Նյութ՝ *մագաղաթ:* Մեծություն՝ *12,8x17,8:* գրություն՝ *երկսյուն:* Գիր՝ *բոլորգիր:* Տող՝ *19:* Մանրանկարչություն՝ *Խորան 8 (Եւսեբիոսի թղթով և համաբարբառ կանոններով): Մատթեոս՝ 10բ, Մարկոս՝ 99բ, Ղուկաս՝ 159բ, Հովհաննես՝ 252բ: Կիսախորան՝ 11ա, 100ա, 160ա, 253ա: Լուսանցազարդ՝ բուսական: Զարդագիր՝ թռչնագիր: Կազմ՝ կաշեպատ տախտակ դրոշմազարդ: Վիճակ՝ բավարար:*

Հիշատակարան. Գրչի

251բ. Ով հրաշափառ և երջանիկ երկնաւոր հրեղէն դասուն... Հեղ յիս՝ յանարժան ծառայս քո ի Յովհաննէս և ի մեղուցեալ գծողս Բարսեղ, զգթութեան վտակս եւ մի՛ տար, Տէ՛ր, դատ ընդ ծառայիցս քո, որ ոչ արդարանամք, այլ մաղթանաւք մաւր քո, Քրիստոս, զմեղաց լուծն մեր խորտակեա՛ և քաւեա՛, և քեզ փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն, ամէն:

Ո՛վ ամենաերջանիկ և դասք սրբազան քահանայից, որք հանդիպիք աստուածային սուրբ Աւետարանիս, յիշեսջիք [ի] Տէր զարքայն Հայոց գԼոռն և զբարեպաշտ թագուհին իւր գԿեռաճ և զորդին իւրեանց Կոստանդին՝ զբարի շառաւիղն ի բարի արմատոց, որոյ Տէր Աստուած տացէ ժամանակս երկայնս և խաղաղականս և զաւրացուցէ ի վերայ թշնամեաց խաչին Քրիստոսի և պարագայից ամաւք շնորհեսցէ մեզ ընդ երկայն աւուրս. ամէն, ամէն: Եւ որ զմեզ յիշէա աղաւթիւք, և՝ նա եղիցի յիշեալ:

323 բ. Ի յԱթն հարիւրորդի տասներորդի իններորդի (1270) թուաբերութեան տումարի Հայոց, յառաջնորդութեան և դիտապետութեան անբիծ հեղինակին և յաջորդութիւն Աթոռոյ սրբոյն Գրիգորի՝ Տեառն Յակոբայ և ի թագաւորութեան Կիղեկեցւոց նահանգիս Հեթմոյ բարեպաշտի, և ի պարոնութեանն Հայոց Լևոնի՝ որդւոյ Հեթմոյ արքայի, զոր Տէր Աստուած տացէ սոցա ժամանակ խաղաղութեամբ երկայն ամաւք, և յետ յայսմ աշխարհ և ի հանդերձեալ կեանքն զանսպառ բարիսն պարգևեսցէ: Նաև երջանիկ ամենաւրհնեալ ամուսնոյն Լևոնի՝ Կիր Աննայի և դեռաբոյս մանկան նոցա Հեթմոյ տացէ Յիսուս Քրիստոս հոգի հեզութեան և իմաստութեան և երկիղ աստուածապաշտութեան և բազում ժամանակ խաղաղութեան և հանգիստ յաւիտենական ի յանվախճան կեանսն: || (324ա) Վասն որոյ աղաչեմ զամենեսեան առ հասարակ, ես նուաստըս Յոհաննէս, յետինս յորդիս եկեղեցւոյ, որ ցանկացող եղայ այսմ լուսայեղձ և կենսակիր, քառաջահեան, մշտալոյս բանից Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի աւետեաց Աւետարանիս, և ստացա զսա բազում աշխատութեամբ ի լուսատրութիւն մանգանց նորածնելոց Նոր Սիովնի և ի պայծառութիւն սրբոյ եկեղեցւոյ, ի բժշկութիւն հիւանդաց և ի վանում այսոց չարաց, ի պարծանըս քրիստոնէից և փառըս Քրիստոսի Աստծոյ մերոյ, ի յիշատակ հոգւոց մերոց և ծնաւղաց և բնաւ զարմից և կենդանեաց և մեռելոց uոrա, nr ստա[ցաւ] ի յարդար վաստակոց իւրոց՝ ի վայելումն անձին

իւոյ և Թոռոսի հանգուցելոյն ի Քրիստոս և յիշատակ Գրիգորի բահանայի և կենակիցն իւոյ Հռիփսիմէ[1], և ամենայն հաւատացելոց ննջեցելոց:

Արդ, ո՛վ սուրբ ճգնազգեայ կրաւ||(324բ)նաւորք և առաքելագումար դասք քահանայից, յորժամ վայելէք ի քաղցրաճաշակ, եդեմատունկ, աստուածառոյգ վտակաց աստուածային աւետարանական բանիցս, յիշեսջիք առաջի զենլոյն Քրիստոսի զստացող սորին զՅովհաննէս՝ ողորմութիւն գտանել յահեղ աւուրն ի մեծի ծագմանն յաներեկ ատենին, մանաւանդ զգծող սորին՝ զԲասիլ քահանայ, որ ի բազում աղաչանաց յանձն էառ զգծել սորին բազում աշխատութեամբ և տկար մարմնով յանխաղաղ նաւահանգիստ՝ այսր և անդր շրջելով յայրս և ի ծէրպս, զոր իմաստուն ընթերցողքդ և հմտական մտառուքդ ճանաչէք զարուեստ և զիմաստութիւն, որ ի սմա գանձեալ կայ, վասն որոյ աղաչեմ զամենեսեան՝ ընդ ստացողիս և զգրիչ յիշեսջիք ի Տէր, ողորմութիւն գտանել ի Քրիստոսէ: Եւ ||(325ա) նոյն ինքն հասարակաց պարգևատուն՝ամենեցուն ողորմեսցի՝ստացողիս և գրչին և այսմ յիշատակարանի գրողիս ի վայելողացդ. ամէն:

Արդ, գրեցաւ սա ի Լեառնս Կարմիր, *մերձ յանառիկ դղեակն* Բարձրբերդ, *ի վանքս* Լիսոնկա, *ընդ հովանեաւ* Սուրբ Աստուածածնին *և* Սուրբ Նշանին, *և աւարտումն սորա՝ ի յանապատս* Միծոնքոյն *եղև... ||:*

326բ. Յերեսս անկեալ աղաչեմ զամենեսեան, որք պատահիք սմին, յիշեցէք ի սրբամաքուր աղաւթս ձեր զերիցս երանեալ ծերունի պատուական քահանայն Յոհաննէս Գոմձգեցի, *որ զաւրինակն շնորհեաց, նաև զգրող աւրինակին զԸղբստակէս, և Տէրն փառաց ամենեցուն ձեզ և մեզ ողորմեսցի առ հասարակ ի յահեղ հրապարակին, ուր գործք թագաւորեն և սատանայ ամաւթ լինի:*

Հետագայի

ա. 327ա. Նաև զպատճառ եղեալ կազմութեան սորա զքեռ թագաւորին Հայոց Հեթմոյ *և զորդի աստուածասիրի և բարէպաշտի* Կոստանդեա *թագաւորահարն զՀռեփսիմի կրաւնաւորն յիշման արժանի արասջիք, և զկամզող սորա զԳրիգոր փակակալ և զեղբայր նորին զՍտեփաննոս վանական քահանայք:*

բ. 327ա. Զվերըստին նորոգող սուրբ Աւետարանիս զպատուական քահանայն զՏէր Մարտիրոսն *յիշեցէք ի Քրիստոս, ո՛վ մանկունք սուրբ եկեղեցոյ և դասք լուսերամից, զի ետ նորոգել և կազմել զսուրբ Աւետարանս՝յիշատակ հոգոյ իւրոյ և ծնաւղացն իւր՝ Զրախիա և իւր որդոյն՝ Ֆառաշատին և իւր կողակցին, և մաւրն իւրոյ՝ Մարիամին, և եղբաւրն իւր՝ Պռաճիմին, և ամենայն արեան մերձաւորա ||(327բ)ցն իւր՝ հընոցն և նորոցն, կենդանեաց և հանգուցելոցն, և որ յիշէ և յիշման արժան առնէ՝ յիշեալ լինի ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ իւր միւսանգամ գալըստեանն. ամէն:*

Դարձեալ կրկին անգամ յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զՏէր Մարտիրոսն և զկողակիցն իւր և ծնաւղսն իւր և լի բերանով Աստուածողորմի ասացէք, և Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն:

1 Ցրիվ հատվածը գրված է այլ ձեռագրով քերված տողի վրա:

Եւ դարձեալ յիշեցէք ի յերկնայթռիչ աղաւթս ձեր զկազմող սուրբ Աւետարանիս՝ զԿոզլոյ սուտանուն սարկաւագս, որ տառապեալ եմ և կորեալ և յոտ կոխան եղեալ փորձողին, բայց յոտ զՔրիստոս ունիմ և զՏիրամայր սուրբ Աստուածածինն։ Կազմեցօ սուրբ Աւետարանս ի թվին ՌԺԷ (1568). ամէն, ամէն։

գ. 1ա. Ծառայ Տեառն՝ մեղսալի Տէր Մովսէս *քահանայս թ[ւ]ոյս ՌՄՀ (1821) ամի սեպտեմբերի ԺԵ (15) եկի* Մետին, *օթէվանս մեր եղև* Ամթէցի Ղազանճի Վարա[.]եան *պարոն* Մելքոնին, *զոր և խնդրեմ ի Տեառն[է] տացէ կիեանս երկարս, շէն և պայծառ պահեսցէ. ամէն։*

դ. 1ա. թուին ՌՄՀԳ (1824) փետրվարին եկի Մետին Ղազանչի *պարոն* Մելքոնին *տուն, ես՝* Սուրբ Դանեալայ *ըսպասաւոր* Մելիքսէթ *վարդապետս, և վասն իմ մեղացս քաղաքն մահսարայ եղաւ (շրջապատվեց), մնացի. Տէր Աստուած այց արասցէ. ամէն։*

ե. 328ա. Պատճառ գրոյս այս է, որ ես մեղապարտ Տէր Կարապետ *եկի ի սուրբ* Երուսաղեմայ *նւիրակութիւն ի թվին ՌՄՀԳ (1824), ես ///։*

զ. 3ա. (Գրչափոռն) Հասցէ գիրս Տիարպաիր Հասան փաշի *խանն* Զալապիզատա *մահտեսի խօճայ պարոն* Յակոբին *ձեռն ի բարին. ամէն (նույնը՝ 9ա)։*

է. 189ա. 1867 հոկտեմբեր ամսոյ գնեցի զԱւետարանս ի Տիգրանակերտ, *յորժամ յուղի էաք գնալ ի* Սղերդ՝ *ձեռնադրելոյ հովիւ նոցա* զԱլիաս Նիկոմեացին։

Ս. Դաւթեան Սիմէօն *հովիւ աւետարանական հայոց ի* Բաղէշ։ *Ես ծննդեամբ* Սասունցի *Փընկոյի տունէն, Ջիթենաց գիւղէն։*

2
ԱՒԵՏԱՐԱՆ
(Նյու Յորք, Հ. Փ. Քրաուզ)

ԺԳ -XIII

Գրիչ Վարդերի ընդօրինակած երկաթագիր մեծադիր թղթյա այս մատյանը հնագետ ու պատմաբան, Թուրքիայում Ֆրանսիայի նախկին դեսպան Ժան Պոզիի մոտ տեսել և նկարագրել է Արտ. արք. Սյուրմեյանը (տե՛ս «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Եւրոպայի մասնաւոր հաւաքումներու», Ա, 1950, էջ 5-8)։ Ժ. Պոզին մատյանս գնել է 1936 թ. Կ. Պոլսում Ալեանաք անունով մեկից։

1971 թ. ապրիլի 30-ին Ժ. Պոզիի ձեռագրերն ու այլ հնություններ աճուրդի հանվեցին Փարիզում, որտեղ և այս ավետարանը ձեռք բերեց Նյու-Յորքաբնակ գրավաճառ Հ. Փ. Քրաուզը (16 East 46th st., New York)։

Պրն. Հ. Քրաուզը հոժարակամ մեզ ծանոթացրեց ձեռագրին և մեր խնդրանքով տրամադրեց մանրանկարների սլայդները։

3
ՄԱՍՆ ՂՈՒԿԱՍՈՒ ԱԻԵՏԱՐԱՆԻ
(Նյու Յորք, Ժյուլյեն Հովսեփյան)

ԺԳ–ԺԴ–XIII–XIV

Թերթ՝ *1:* Նյութ՝ *թուղթ:* Մեծություն՝ *12x9.5:* գրություն՝ *միասյուն:* Գիր՝ *բոլորգիր:* Մանրանկարչություն՝ *Մկրտություն (պահպանված են Հիսուսի և Հովհաննես Մկրտչի գլուխները):* Վիճակ՝ *եզրերը պատռված, մանրանկարը գունաթափ:*

Ծնթ. *Այս պատառիկը 1972 թ. փետրվարի 11-ին Նյու Յորքում տողերիս գրողի միջոցով Ժ. Հովսեփյանը նվիրել է Մաշտոցի անվան Մատենադարանին (Պատառիկ N1913):* (Տես նկար XV, 2)

4
ԱԻԵՏԱՐԱՆ
(Սաո Ֆրանցիսկո, Ջ. Մարտիկյան, N5)

Եղեգիս ՉԾԵ-1306

Գրիչ և ծաղկող՝ *Սարգիս կր.:* Ստացող՝ *Դանիել:* Թերթ՝ *453:* Նյութ՝ *թուղթ:* Մեծություն՝ *24x31,5:* գրություն՝ *երկսյուն:* Գիր՝ *բոլորգիր:* Տող՝ *15:* Մանրանկարչություն՝ *Խորան (համաբարբառով՝ կանոն Բ, Է-Ը)՝ 137բ, 140բ, Հարությունն Ղազարու՝ 138ա, Հարությունն Քրիստոսի՝ 351ա, քայքայված տարբեր մանրանկարների մասերից կազմված մի թերթ՝ 139բ, Իջեցումն խաչից և Հովհաննես ավետարանիչ (երկու նկարների տարբեր մասերը իրար են միացված)՝ 352բ, ինքնատիպ լուսանցազարդեր, յուրաքանչյուր ավետարանի զարդագրերը արված են տվյալ ավետարանիչի խորհրդանշանով:* Վիճակ՝ *վատ, թանաքակեր:*

Ծնթ. *Ավետարանից պակասում են բազմաթիվ թերթեր, կազմ և պահպանակներ չունի, թերթահան է: Աքանչելի մանրանկարները վնասված են:*

Ե. Լալայանը այս ձեռագրի մասին խոսում է իր «Նախիջևանի գավառ» ուսումնասիրության մեջ (տե՛ս «Ազգագրական հանդես», գիրք XII, 1905, էջ 171) և բերում է գրչի հիշատակարանի մի փոքրիկ հատվածը, որը և վերահրատարակված է պրոֆ. Լ. Խաչիկյանի «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններում», Երևան, 1950, էջ 42:

Այս Ավետարանը Ե. Լալայանը տեսել է Վերին Ագուլիսի Ս. Հովհաննու Մկրտչի եկեղեցում, սակայն թյուրիմացաբար նշել է որպես մագաղաթյա ձեռագիր: Լալայանը գրում է, որ ձեռագիրը ավետարանիչների պատկերներ ունի, մինչդեռ ներկայումս միայն Հովհաննես ավետարանիչի պատկերի մի մասն է պահպանվել:

Ինչպես տեղեկանում ենք ձեռագրի վերջին կցված հիշատակագրություններից (453ա և 459բ), Ագուլիսի դեպքերից (1918 թ.) հետո այն տարվել է Թավրիզ և վաճառվել: Հավանաբար հենց այդ ժամանակ էլ Ավետարանը կազմահան է արվել և մեծարվեստ մանրանկարները բարբարոսաբար պատառոտվել են:

Ձեռագրի մի քանի էջերի վրա դրված դրաքննչական պարսկերեն կնքադրոշմը (1310 .مراجعه و تفتیش شد .ب تـ‌ـبر) (Թավրիզ), ստուգվեց և քննվեց, 1310=1931 թ.) ենթադրել է տալիս, որ 1931 թ. իրավունք է ձեռք բերվել Ավետարանը Իրանից դուրս տանելու համար:

40-ական թվականներին ձեռագիրը գտնվել է Նյու-Յորքաբնակ գորգավաճառ և հնահավաք Պարույրյանի մոտ, որից և ձեռք է բերել Ջ. Մարտիկյանը:

1972 թ. հունվարին Սան Ֆրանցիսկոյում տողերիս գրողը այս ձեռագիրը նվեր ստացավ Մաշտոցի անվան Մատենադարանի համար (N10525): (Տես նկար XIV, 1)

Հիշատակարան. Գրչի

450ա, Աստուածապետականին բոլոր ինքնութիւնքն ի վեր ... || ... (450բ) ... Արդ, այսմ աստուածունակ և քրիստոսազաւր սուրբ Աւետարանիս փափաճելի տենչմամբ ցանկացեալ աստուածասէր և ցանկալի այրս Դանիէլ և ի թուականութեան Հայոց ՉԾԵ (1306) ետ գրել զսա և ծաղկեալ ոսկեզարդ տնաւրինականաւք ի ձեռն իմոյ մեղսաներկ և անպիտան կրաւնաւորի՝ Սարգսի, ի մայրաքաղաքս եղէգիս, ընդ հովանեաւ երից տաղաւարացս՝ Սուրբ Կաթողիկէիս և Սուրբ Աստուածածնիս և Սուրբ Նախավկայիս, ի յաշխարհակալութեան ղան Խարպանտին, զոր ազգն Իսմաէլի սուլտան անուանեն, ի թագաւորութեան Հա[յ]ոց Հեթմո[յ], և յիշխանութեան այսմ նահանգի իշխանաց իշխանի բարեպաշտ և ամենաւրհնե[ա]լն Բուրթելիի և Բուղտաիի՝ որդոց քրիստոսասէր և փառազարդ իշխանաց իշխանի էլիկոմիի՝ որդո[յ] մեծին Տարսաիճիի զոր Տէր Յիսուս յերկար ժամանակեա[յ] արասցէ մեզ ընդ երկայն աւուրս, ի հայրապետութեան աստուածապատիւ Տեառն Գրիգորի Անաւարզեցո[յ] սուրբ և ընտրեալ քաջ հռետորի և անյաղթ սոփեստի Տէր Յովաննէսի Ատպել արքեպիսկոպոսի, որդոյ իշխանաց իշխանի Լիպարտի, յաջորդող և աթոռակալ զկնի Տեառն Ստեփաննոսի, զոր տացէ զսա մեզ Տէր ընդ երկայն աւուրս ուղեղ վերակացութեամբ:

Արդ, բարի և աստուածասէր այր Դանիէլ՝ որ||(451ա)դի Մանուէլի, հա[յ]եցեալ և իմացեալ, թէ այսմ կենցաղս դիւրաւ սպառելոց է և վաղիւ կորնչելոց և նկատե[ա]լ զիմանալի աշխարհն և ցանկացեալ սիրոյն Քրիստոսի, ստացաւ զսա աւգնական և բարեխաւս իւր և ծնաւղաց իւրոց, հաւր իւրոյ՝ Մանուէլի և մաւր իւրո[յ]՝ տիկնոջն բարի ամուսնո[յ] իւրոյ՝ արքատիկնա[յ] և ծնաւղաց իւրոց և քրիստոսատուր զաւակաց իւրոց՝ Մուսէսի, Մանուէլի և այլոցն, և հոգևոր որդո[յ] ըստ աւազանին Դաւթի Թավրիժեցոյ, որ և զիս յորդորեաց յայս գործս բարի, և հարազատ եղբարց իմոց՝ Պարսամին և այլոցն:

Արդ, ես անարժան ծառայս Աստուծոյ Դանիէլս ի գուճ անկեալ աղաչեմ զձեզ՝ զկայծակնաճաշակ և զաստուածամաքուր սուրբ քահանայդ և զայլ ամենայն հաւատացեալսդ, որք ժողովիք առ դուրս Սուրբ Կաթողիկէին, որք ընթեռնուք և աւգտիք և որք լսէք և ի միտ առնուք, վասն սիրոյն Քրիստոսի, յիշեցէք զիս և զվերագրեալքս ի սմա, և Աստուած զձեզ յիշեսցէ յայսմ աշխարհի և ի հանդերձեալն յիւրում արքա[յ]ութեան, և դուք և մեք առ հասարակ ի միասին աւրհնեալ եղիցուք ի շնորհաց Որդոյն Աստուածոյ, զամէնն և զեղիցին ասասցեն սուրբք և հրեշտակք, որպէս և նմա փառք յաւիտեանս:

137բ. Ջամէնաւրհնեալ այրն Աստուծոյ զԴանիէլն յիշեցէք ի Քրիստոս և աստուած զձեզ յիշէ:

224բ. Յիշեցէք ի Քրիստոս զԴանիէլն և զծնաւղս նորա:

354ա. Քրիստոս, յիշեա զԴանիէլն և զծնողս նորա:

449բ. Մժշլբմ, լշբւ վբրծոհջ վժթժշղմ (=Սարգիս գրիչ յիշեցէք յաղաւթս):

Թէ կարդաս՝ դպիր ես և թէ ոչ՝ մի մեղադրել, պատճառ իմաստից է։

Որ յայս սուրբ Աւետարանէս թուխթ որոշէ վասն կտրելոյ, որ որոշել լիցի և նա ի շնորհաց Հոգոյն Աստուծոյ։

450ա. (Ներքևի լուսանցքում այլ գրչով լուծված է առաջարկվող գաղտնագիրն և առաջարկված նորը).

Եղբայր սիրո, և խոհեամ ըստ հանճարո, ծանիր փակեալ գիրդ այս թէ՝ զՍա[ր]գ[ի]ս գրիչ յաղ[աւթս] յիշեցէք։

Ապա թէ այլ գրես համանգամայն զորոյ որ կամիս կամ զառաջին գրերն գրէ՝ կամ զվ[երջին]։ Այս մինն յառջնէն է և մինն ի յետնէն։ Եւ զիմս կարդա. ք՛, ը՛, ք՛, ւ՛, ւ՛, է՛, պ՛, խ՛, տ՛, դ՛, ը՛, ք՛, է՛, ///։

Հետագայի

ա. 452ա. Զվերջին նորոգող այս լուսաւոր մաքրափայլ և մեծապայծառ սուրբ Աւետարանիս, բարէմիտ և զսրբասէր և մեծահարուստ առն Ղամբար, որ ետ կազմել զսուրբ Աւետարանս՝ յիշատակ իւրն և իւր ծնաւղացն, հաւրն՝ Իսպահանջին և մաւրն՝ Խոնդկարին և կենակիցն իւր՝ Ոլուղանին, պահապան իւրն և իւր զաւակացն, և ետ նորոգել զսայ ի հալալ ընչից իւրոց և բժժիշկ հոգոյ իւրոյ, կցորդ, լոյս և ապաւէն առ Քրիստոս և ճար՝ ճանապարհին վերջին և բանալի՝ դրան արքայութեան և գանձ՝ յերկինս անկողոպտելի և առ Քրիստոս միջնորդ և բարեխաւս իւրն և իւր ծնաւղացն և ամենայն արեան մերձեաւորացն, ամէն։

Դարձեալ աղաչեմ յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր Ջաֆէոս քահանայ հանդերձ ծնաւղաւքն, ընդ նմին և զԱստուածատուս, որ աւգնական եղէ ի կազմելն սորայ. և որ շատ և որ սակաւ աշխատանք ունին ի յայս սուրբ Աւետարանս, Աստուած միոյն հարիւրապատիկ տացէ այժմ և ի հանդերձելումն. ամէն։

Աղաչեմ զձեզ, ով սուրբ ընթերնողք, յորժամ ընթեռնուք կամ աւրինակէք, խնամքով բռնէք, զի թուխտն խիստ բարակ է և բազում աշխատութեամբ կազմ եղաւ, զի յոյժ հնացեալ էր և ծերացեալ այս սուրբ Աւետարանս։ Ի թվականիս ՋԽԹ (1494) կազմեցաւ։

բ. 452 բ. Եւ դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս, ով հարք իմ և եղբայրք, զվերջին գրող սուրբ և կենսատու, ամենափրկիչ Աւետարանիս ընթերծողք,

ՋՍտեփաննոս մեղօք լցեալ
Եվ քահանայ անուամբ կոչեալ,
Բայց ի գործոց յոյժ հեռացեալ,
Ջեվով միայն կեղծաւորեալ,
Ի յաշխարհէ ալեաց նմանեալ,
Բազում տեղիք շրջագայեալ,
Յետոյ եկեալ ի յայս բնակեալ,
Որ Ագուլեայ վանք կոչեցեալ,
Որ է Թօմաս սուրբ առաքեալ։

Արդ, ի թվականութեանն Հայոց ՌՄԻ և Բ (1773) եղև նորոգումն սուրբ Աւետարանիս, որ անկեալ է ի ձեռս անօրինաց, որ և եղեն պատջառ սորայ նորոգելոյն Ագուլեցի Օվանէսի *որդիք՝* Մկրտիչն, Կարապետն, Ջարախայն և Յարութիւն, *Աստուած իւրեանց կար և կարողութիւն տացէ, գործոց նոցին բարիաջողումն տացէ, և իւր ծնողացն և համայն ննջեցելոցն հանգիստ և արքայութիւն պարգևեսցէ, և իւրանքն որքան կենդանի են, սուրբ Աւետար[ան]իս զօրութեամբ ամենայն չարեաց և փորձանաց փրկեալ ազատեսցէ. և թէ հարցանէք սոցա՝ մականուամբն Շեխիենց տղայքն: Եւ յետ նորոգելոյն Դ (4) ե (5) դարի անցաւ, գրող չի գայր, որ սորա պակասն գրէր և լցուցանէր. յարկ եղև մեղաւորիս, սորա պակասն գրեցի խիստ նեղութեամբ, զրա (որովհետև) աչքս չէր տեսնիլ, ձեռքս կու դողայր. ծերութեան ժամանակիս կարողութեամբն Աստուծոյ աւարտ հասուցինք: Ով ոք որ ընթեռնուք, գրի խոշորութեան և սղալանացն ներումն շնորհէք, քանզի կար մեր այս էր:*

Արդ, աղաչեմ, զձեզ, ով ընթերնողք սուրբ Աւետարանիս, միով Հայր մերիւ յիշեցէք զվերոյգրեալ նորոգողքն, և զգրողն յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք, և դուք յիշեալ լինիք առաջի Քրիստոսի, ամէն:

Եղև նորոգումն ի հայրապետութեան սուրբ էջմիածնի տեառն Սիմէոն *կաթողիկոսի և սուրբ ուխտիս առաջնորդ* Թօմաս *վարդապետի. լիցի երկար կեանս. ամէն:*

գ. 453ա. «Արտագրութիւն յիշատակարան»

Ի 1827 ամի Տեառն և ժամանակս խռովութեանց պատերազմի Ռուսաց և Պարսից, եկին յանկարծ հէնք բարբարոսք յաւանն մեր Ագուլիս, *որ առ գետովն* Երասխայ, *և անողորմաբար զգրաւեցին զազգս մեր, և աւերեցին զտունս մեր, ընդ նոյն յափշտակելով և զեկեղեցին, և զսուրբ սքանչելագործ Աւետարանս զայս: Որ և երբեմն ի գիրառէ (՞) ազատեալ է ի տոհմէն Շախիանց: Իսկ արդ մեք չորքիիւ եղբարքս* Գէորգ, Թհան, Ջաֆարեայ, և Յովհաննէս Մկրտչին Հ[ա]խն[ա]զարենաց Վերին Ագուլեցի, *վառեալ ի սէր սուրբ հաւատոյ, և ազգի, և եկեղեցւոյ, գնայաք ի զանազան տեղիս դառն աշխատանք կրելով հարց և փորձ արարեալ և ի հրաշագործութենէ նորայ գտեալ՝ և բարբարոսաց տւեալ բազում գանձս՝ յետս դարձուցաք. և մեծաւ հանդիսիւն հանգուցաք յեկեղեցւոջ* Սուրբ Յովհաննէս Մկրտչին խեցեայձորայ *թաղին:*

Եւ արդ յերեսս անկեալ պաղատիմք զմաքրումից ընթերցողաց և ջերմեռանդ հանդիպողաց սուրբ ամենափրկիչ ձեռագիր կարմրակազմ Աւետարանիս և Նոր Կտակարանիս Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, յիշեսջիք ի Քրիստոս յոյսս ամենից մաքուր աղօթիւք զծնողսն մեր, զազգս, և զընտանիս և զմեզ զկենդանի յիշատակս նոցա, որպէս զի արժան աղօթիւք ձերովք և բարի մաղթանօքն հաշտեսցի ընդ նոսա և ընդ մեզ ամենազօր անաչառ դատաւորն ի միւս անգամ գալստեան իւրում, յիշեսցէ և զամենայն հաւատացեալս յարքայութեանն ե[ր]կնից պարգևելով մեզ զխոստացեալ պարգևս մխիթարական ձայնիւ և երանական և կենդանի մնացելոյս օրհնեսցէ զերկրաւոր զկեանս՝ պահելով ի խաղաղութեան, և յիշողքը յիշեալ լիջիք առաջի Քրիստոսի Աստուածոյ մերոյ ի հանդերձեալ աշխարհի. ամէն:
Ի 1848 ամի, ի 25 հոկտեմբերի ամսայ:

Ոչնչանալու ենթակայ սոյն յիշատակարանը արտագրուեց[1] ի 1931 թ. մայիս 2-ին ի Թաւրիզ (Պարսկաստան):

453բ. 1918 թւի Ափոլիսի *կոտորածից թալանին* Ափոլիսն *էր և բերում են ծախում Պարսկաստան՝* Թաւրիզում *և* Խոյում:

1921 թւ. Թաւրիզ. Գարսէվան Սողոմոնեան, *տարագիր* Ծաղկածորցի: *(Նույն էջի վրա դրոշմաթուղթ). «Made in Persia, Աւետարան, N21»:*

5
ԱԻԵՏԱՐԱՆ
(Վաշինգտոն, Կոնգրեսի գրադարան, Arm. MS N4)

Երուսաղեմ *ՉՀ—1321*

Գրիչ՝ *Ներսես աբեղա:* Թերթ՝ *562 էջ:* Նյութ՝ *թուղթ:* Մեծություն՝ *12,5x14:* գրություն՝ *երկսյուն:* Տող՝ 21: Մանրանկարչություն՝ *կիսախորան՝ յուրաքանչյուր Ավետերանի սկզբում: Լուսանցազարդ՝ բուսական: Զարդագիր՝ հանգուցագիր: Գույներ՝ սև, երբեմն կարմրադեղով:* Կազմ՝ *դրոշմազարդ կաշեպատ տախտակ, աստառը՝ մետաքսե գործվածք:* Պահպանակ՝ *վերջում երկու թերթ թղթե ձեռագրից (ԺԳ-ԺԴ դարեր):* Վիճակ՝ *բավարար, միայն կազմի վերևի աջ անկյունը ջարդված, կաշին պատռված:*

Ծնթ. *Ձեռագիրը թերթակալված չէ. էջաքանակը՝ ըստ գրադարանի քարտի: Մատթեոսի Ավետարանի սկզբնաէջի վրա՝ կնքադրոշմ «7260»:*

Ձեռագրին կցված անգլերեն չորս էջանոց մի նամակում, գրված 1891 թ. հուլիսի 22-ին Քլիֆոն Սփրինգսից (Նյու Յորք), հասցեագրված դր. Հ. Ֆոսթերին, նամակագիր Մերի Փ. Ռայթը հայտնում է, որ ինքը քննել է միս Բուչի կողմից Հ. Ֆոսթերին նվիրված ձեռագիրը, և տեղեկություններ է տալիս գրչի, ժամանակի և բովանդակության մասին: Նամակագիրը ըստ երևույթին, ծանոթ չի եղել հայկական տոմարին, ուստի և ժամանակի համար նշում է ոչ ուշ քան 14-րդ դար, մինչդեռ հիշատակարանում պարզ գրված է հայոց ՉՀ թվականը (1321):

Հիշատակարան. Գրչի

Փառք... Գրեցաւ լուսապայծառ և սուրբ Աւետարանս այս ձեռամբ մեղապարտ գծողի Ներսէսի *սուտանուն աբեղայի, ի սուրբ քաղաքս* Երուսաղէմի. *ընդ հովանեաւ սուրբ տնաւրինականաց Քրիստոսի աստուծոյ մերոյ փրկչի և* Սուրբ Հրեշտակապետացս *Միքայէլի և Գաբրիէլի և Ռափայ[ել]ի, ի թագաւորութեանն հայոց* Լևոնի, *որդոյ* Աշին *թագաւորի, և ի հայրապետութեան* Տեառն Կոստանդի, *որ կոչի* Դրազ[ա]րկցի, *ի յաթոռակալութեանս* Երուսաղէմի Տէր Վարդ[ա]նի:

Արդ, աղաչեմ զամենեսեան, որ հանդիպիք ի սմա ընթերցման բանի և սղալի՝ նա դուք ուղղեցէք սիրով և մի եպերելի, զի ի վշտալից ժամս գրեցի, յորժամ անաւրէն ազգն

1 Այս հիշատակարանը իրականում ոչ թե արտագրված է, այլ մեկ առանձին թերթի վրա տպագրված և կցված է ձեռագրին:

Մահմետի յարեան ի վերա երկրին Կիլիկէի *և աւար արարին և բազումք գերի վարեցին և զսուրբ եկեղեցիսն վերուստ ի վայր տապալեցին, որ էջմիածին անուն կոչի, և զայլսն։*

Դարձեալ *աղաչեմ անմեղադիր լինել խոշորութեան, զի կար մեր այս էր, այլ զի ցանկայի սուրբ Աւետարան և վասն չունևորութեան համարձակեցայ գրել զսուրբ Աւետարանս ի վայելումն ինձ և յիշատակ հոգւոյ իմոյ և ծնողաց իմոց՝* Աւտարշահի *և* Շնոհիֆորի *և մեծ մայրական իմոյ՝* Մէնտիկնայ *և քեռեկանն իմոյ՝* Յովանիսի, *որ* Կռակցի *կոչի և մաւրաքաւր որդոյն իմոյ՝* Կոստանդին *աբեղայի։*

Գրեցաւ ի յնտիր աւրինակէ, որ Ջորկցի *կոչի, ի թուաբերութեանս Հայոց ՉՀ (1321), ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ…*

Հետագայի

ա. (Մատթեոսի Ավետարանի սկզբնաթերթի վրա) Խաչատուր Հ. Միմասեան Հողեցի:

բ. (Ղուկասի Ավետարանի վերջում) Ես ||| ոս երէցս գնեցի զԱւետարանս ի Կիրակոս *երիցոյն Կ (60) տայիրի՝ ինձ յիշատակ և ծնողաց իմոց։*

6
ՄԱՆՐՈՒՍՄՈՒՆՔ
(Նյու Յորք, Տիրան արքեպս. Ներսոյան)

Ակներ *ՉՀԸ—1329*

Գրիչ, ծաղկող, կազմող՝ *Կարապետ:* Թերթ՝ *210:* Նյութ՝ *մագաղաթ:* Մեծություն՝ *10x7,2:* գրություն՝ *միասյուն:* Գիր՝ *բոլորգիր:* Տող՝ *16:* Մանրանկարչություն՝ *Ճակատազարդ՝ 1ա, 45ա, 61բ, 93ա, 158բ, 172ա, 191ա: Լուսանցազարդ՝ բուսական: Զարդագիր՝ թռչնագիր և հանդուցագիր:* Կազմ՝ *դրոշմազարդ կաշեպատ տախտակ, աստառը՝ խաչազարդ գործվածք. խաչերի թևերին՝ ՏՐ ԱԾ ՅՍ ՔՍ:* Վիճակ՝ *բավարար. վերջին թերթերը ջուր տեսած, մասամբ սևացած և որոշ տեղեր անընթեռնելի:*

Ծնթ. *Ձեռագիրս 1972 թ. հունվարի 21-ին Նյու Յորքում տողերիս գրողի միջոցով գեր. Տ. արքեպս. Ներսոյանը նվիրեց Մաշտոցի անվան Մատենադարանին (N10523):*

Հիշատակարան. Գրչի

209ա. Փառք… գրե||(209բ)ցաւ եղանակ[աւոր տառս, որ կոչի] Մանրուսումն [ի թվին ՉՀԸ] /// Յակոբայ, [ի թագաւորութեանս Լև]ոնի, ի հրեշտակաբնակ վանաւրէից, որ կոչի Ակներ, [ձեռամբ] կրկնամեռ անձ[ի]ն Կառա[պետի][1]:

---

1 Գեր. Տ. արքեպս. Ներսոյանը մեզ հայտնեց, որ ձեռագիրը համաշխարհային երկրորդ պատերազմի տարիներին Լոնդոնում իր մոտ է եղել և վնասվել է ջրից, որի հետևանքով հիշատակարանի որոշ հատվածներ անընթեռնելի են դարձել, բայց քանի որ ինքը նախապես ծանոթ է եղել հիշատակարանին, 209ա էջի լուսանցքում սև թանաքով նշել է թվականը՝ «ՉԾԸ (1309)», վայրը՝ «Ակներ» և գրչի անունը՝ «Կարապետ», ավելացնելով, որ «թրջուելէն առաջ յատակ կը կարդացուէր. Ն. Վ. Տ.»:
Մատենադարանի աշխատակից, ձեռագրագետ Օ. Եգանյանը կարողացավ հիշատակարանի վնասված որոշ հատվածներ վերականգնել, որով պարզվեց, որ ձեռագիրը ընդօրինակված է ՉՀԸ (1329 թ.) և ոչ ՉԾԸ (1309) թվականին: Միաժամանակ պետք է ավելացնել, որ 1309 թ. Լևոն թագավոր չենք ունեցել: Հիշատակարանի մեջ վկայակոչվածը Լևոն Դ-ն է (1321-1342): Սրա ժամանակ, ուրյն 1329 թ., Ակներում

Արդ, որք պատա[հիք] /// կամ աւրինակաւ, յի[շեց]էք ի [մեղսա]քաւիչ աղաւթս ձեր զեղկելի գրողին, այլ և զծաղկաւղ և զկազմաւղ սորա զԿ[արապետ] *և ծնաւղսն մեր, զի խիստ ի կարիս ենք, և Տէրն հասարակաց ձեզ յիշ[ո]ղացդ և մեզ յիշելոցս ողորմեսցի յիւր կրկնակի գալստեան, և նմա փառք: Գրեցաւ տետրակս յաւրինակէ Գրիգորի, որ մական /// || (210ա) [հոգոյ] իմոյ և ծն[ողացն իմոց] /// Մանկտաւ[ագ] ///* Մամխաթունիճ */// եացն ի Քրիստոս և ամենայն ազգ[ականաց] իմոյ: [Աղա]չեմ զամենեսեան [որք հան]դիպիք [սմա]յ, յիշեսջիք ի մաքր[ափա]յլ յաղաւթս ձեր ի Քրիստոս զմեզ. ինքն, որ առատն է ի տուրս բարեաց, մեզ և ձեզ ողորմեսցի յաւուրն մեծ և ահեղ դատաստանին, և նմա փառք յաւիտեանս. ամեն:*

171բ. Զգրողիկս յիշեա Տէր-ողորմեայիւ:

Հետագայի

ա. 210ա. Արդ գնեցի սայ յերուսաղէմ ի թվին Հայոց ՊԺ (1361) ամի /// և այժմ է թվիս ՊԻԳ (1374) ամին, և Քրիստոսի մարդասիրին փառք յաւիտեանս. ամեն:

բ. 210բ. Նուաստ ծառայ Յիսուսի Քրիստոսի, որ գնեցի զգիրքս տետրակս ի վայելումն անձին իմոյ թվին ՊՃՀԶ (1427): Ո՛վ սուրբ դասք լոյս երամից սրբոյ եկեղեցոյ մանկունք, յիշեցէք ի սուրբ յաղաւթս ձեր զմուրքուր իմ զՄարգարիտն, *որ զգիրքս գնեց: Դարձեալ աղաչեմ թողութիւն խնդրէք ծնողաց իւրոց* Մամխաթունիճ *և հաւր նորա* Մկրտչիճ *և զաւակի նորա* Մաւեմթագիճ *և զեւերխաթունիճ. թողութիւն խն[դրեցէք] ///:*

7
ՄԱՆՐՈՒՍՄՈՒՆՔ
(Ֆրեզնո, Միքայել Փափազյան)

Դրազարկ *ԶՀԶ—1327*

Գրիչ՝ *Ստեփանոս:* Ստացող՝ *Վասիլ սարկավագ:* Թերթ՝ *243:* Նյութ՝ *մագաղաթ (թուղթ՝ 155, 157-161, 163, 243):* Մեծություն՝ *9x12,5:* գրություն՝ *միասյուն:* Գիր՝ *բոլորգիր:* Տող՝ *16:* Մանրանկարչություն՝ *ճակատազարդ՝ 27բ, 55բ, 76բ, 116ա, 180ա, 196ա, 212բ: Լուսանցազարդ՝ բուսական: Զարդագիր՝ թռչնագիր և հանգուցագիր:* Կազմ՝ *կաշեպատ տախտակ, դրոշմազարդ:* Պահպանակ՝ *սկզբում 2 թերթ թուղթ (ԺԷ դ., բոլորգիր, միասյուն, մասն քարոզի):* Վիճակ՝ *բավարար, կազմի Բ փեղկի տախտակը կոտրված:*

Ծնթ. *Ձեռագիրս 1972 թ. հունվարին Ֆրեզնոյում տողերիս գրողի միջոցով պրն. Միքայել Փափազյանը նվիրեց Մաշտոցի անվան Մատենադարանին (N10524):*

Հիշատակարան. Գրչի

76ա. Ջմեղաւք դատապարտեալ ծառայս Աստուծոյ զՍտեփանոս յերկ[այն] *յիշեցէք աղաւթիւք՝ ի մեղաց թողութիւն:*

եղել է Կարապետ անունով մի գրիչ, որ այս հիշատակարանի ոճով այլ հիշատակարան է թողել իր ընդօրինակած մի Ավետարանում (Տե՛ս «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Խաչիկյան, 1950, էջ 219):

212ա. Ջստացաւղ մատենիս՝ զպատուական սարկաւագ Վասիլ *և զմեղաւոր հողս՝* Ստեփանոս յԵրկ[այն] *յիշեսջիք ի մեղաց թողութիւն։*

236ա. Փառք... Ի թուականին Հայոց ի ՉՀՉ (1327) գրեցաւ եղանակ[աւ]որ տառս ի սուրբ և հռչակաւոր ուխտս Դրազարկ *ձեռամբ մեղսաթաւալ || (236բ) և անարհեստ, սուտանուն գրչկայ* Ստեփանոս յԵրկա[յն] *ի թագաւորութեան* Լևոնի *դեռաբոյս պատանեկին, զոր Տէր Աստուած ընդ երկայն աւուրս պահեսցէ, և ի հայրապետութեան* Տէր Յակոբայ, *ի խնդրոյ աստուածազարդ և սրբասէր եպիսկոպոս* Տէր Վարդանայ *և քուէրորդւոյն իւրոյ՝ պատուական սարկավագ* Վասլին։

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք հանդի[պի]ք սմա ուսմամբ կամ աւրինակ դնելով, յիշեսջիք աղաւ||(237)թիւք մեղաց թողութիւն գյառաջասացեալ սրբասէր եպիսկոպոս Տէր Վարդան *և զվասիլ սարկաւագ և զծնողս նոցին, նաև զմեղաւոր հողս* Ստեփանոս *և ծնողսն մեր, և որք յիշէքդ զմեզ սրտի մըտաւք՝ յիշեալ լիջիք և դուք ի նոյն ողորմած Տէրն, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։*

Աղաչեմ չլինել մեղադիր խոշորութեան և սխալանաց, զի կար մեր այս էր։ Բայց գրեցաւ ի ստոյգ և յընտիր աւրինակաց, որպէս ահա յայտնի է ստոյգ գիտողաց։

Հետագայի

ա. 243ա. [Ի թ]ուաբերութիւնս Հայոց ՋՁԱ (1532) վասն քարոզութեան և ողորմութեան աշխարհիս, դարձեալ նոյեմբերի ԺԹ (13) ելաք և ճանապարհ արարաք բարի երթալու Երուսաղեմ, *և մեք բազկատարած և հառաջմամ[բ] սրտիւ հանապազ տալով զաստուածային աւրհնութիւն իմ հոգևոր եղբաւրն* Տէր Յովաննէս *աւագ քահանային. ամէն։*

բ. 161ա (ԺԹ դ., շեղագիր)

Ձեռքս գրն[այ]՝ դառնայ ի հող,

Գիրըս մընայ՝ յիշատակող։

Կափիրացի Մ. Յովանէսի հընագէտն է զայս գրող,

Ոտից կոխան ձերց ի հող։

Հայ[ր] մեր որ։

Ծնթ. *Կից՝ ձեռագրիս համառոտ նկարագրությունը (կատարված Գ. Հովսեփյանի կողմից) և Ներսես Ակինյանի հետևյալ արժեքավոր նամակը՝ հասցեագրված վերջին ստացող Միքայել Փափազյանին.*

Վիեննա, 19 յունիս 1934

Մեծապատիւ

պր. Մ. Փափազեան

Հաճութեամբ կարդացի Ձեր պատուական գրութիւնը, որ կը հաղորդէր ինձ նորութիւն ձեռագրական աշխարհէ։

Ձեռագրիդ բովանդակութիւնն է Մանրուսմունք, կոչուած նաև Խազտետր և Խազգիրք։ Կը պարունակէ մեսեդիներ և կցուրդներ, որոնք կ'երգեցուին (նաև այսօր) գիշերային, առաւօտեան, ճաշու և երեկոյեան ժամերգութեան ժամանակ։ Պետք է նկատել

«Մանրուսմունքն» տեսակ մը դասագիրք կամ առաջնորդ, որ նպատակ ունի երաժշտասէրներուն ուղղութիւն ցոյց տալ յիշեալ հատուածներն – որոնք սովորաբար solo կ'երգեցուէին – ի բերան ուսանելու: Մանրուսմունքներ երևան կու գան ձեռագիրներու մէջ սկսեալ ԺԴ դարու վերջերէն: Ինձի ծանօթ են օրինակներ 1312-էն (գրուած ի Սիս Գրիգոր քահանայէն), 1325-էն (գրուած ի վանս Գալու Գրիգոր Զորուկի օրինակէն), 1352-էն, 1353-էն, 1365-էն, 1373-էն ևն: Ձեր օրինակին գրիչն Ստեփանոս Երկայն ծանօթ է ուրիշ ձեռագիրներէ ալ: Զարմանքով նկատեցի, որ Ձեր օրինակի վրայէն ծագած է Գաղատիոյ Զարխափան վանքի թ. 8 Մանրուսմունքը, գրուած հաւանօրէն ԺԴ դարուն, ուր պահուած են նաև յիշատակարանները ամբողջութեամբ բառ առ բառ (ըստ Ազան վ. Համամճեանի ցուցակագրութեան. անտիպ): Դրազարկի մէջ գրուած ձեռագիրներու շարքին կը գրաւէ Ձեր օրինակը յետնագոյն տեղին, գոնէ չատ ծանօթ չեն 1327-էն յետոյ այս վանքին մէջ գրուած ձեռագիրներ:

Կը յուսամ թէ տողերս պիտի գոհացնեն Ձեր հարցասիրութիւնը:

Կը չնորհաւորեմ զՁեզ, որ ունիք այսպիսի պատուական Ձեռագիր մը և կը մաղթեմ, որ իբրև մնացորդ նախնեաց պահպանէք խնամով, մինչև որ հասնի մեծ Մատենադարան մը, ուր գոնէր պատուաւոր տեղ մը ի վայելս գիտութեան, յատկապէս երաժշտագէտներու:

Ես չափազանց չնորհակալ եմ Ձեր ազնուութեան, որ բարի եղաք ծանոթացնել ինձ ձեռագիրս. իցիր հետևէին Ձեր բարի օրինակին ոչ միայն ուրիշ նման հնութեան սեպհականատէրներ, այլ և մեծ հաւաքածոյքներու տէրեր... որոնք կը սիրեն միայն ամրածածուկ պահել նախնեաց մնացորդները, իրենք չեն օգտուիր և թոյլ ալ չեն տար այլոց օգտուելու: Փորձառութիւնս յայսմ մեծ է դժբախտաբար:

Երախտագէտ զգածումներով և յարգանքներով.

Հ. Ն. Ակինեան

8
ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ
(Սան Ֆրանցիսկո, Ջ. Մարտիկյան, N2)

Քեմճակի վանք (Ղրիմ) ՊԻԲ-1373

Գրիչ և ծաղկող՝ *Քրիստոսատուր:* Ստացող՝ *Մաղաքիա: Էջ՝ 301:* գրություն՝ *երկսյուն:* Գիր՝ *բոլորգիր: Տող՝ 21:* Մանրանկարչություն՝ *Լուսանցազարդ՝ բուսական: Զարդագիր՝ թռչնագիր:* Կազմ՝ *դրոշմազարդ կաշի:* Վիճակ՝ *բավարար:*

Ծնթ. *Ձեռագրի 1 և 300 էջերի վրա դրված է գրաքննչական պարսկերեն կնքադրոշմ (տե՛ս N4 ձեռագրի ծանոթ.):*

40-ական թվականներին ձեռագիրը գտնվել է նյույորքաբնակ գորգավաճառ և հնահավաք Պարույրյանի մոտ, որից և ձեռք են բերել Մարտիկյանները:

Հավանաբար այս մատյանը պատկանում է 1918 թ. Ագուլիսից թալանված և հետագայում Թավրիզում վաճառված ձեռագրերի խմբին (հմմտ. N4):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

էջ 1-227. Մատեան Ողբերգութեան Գրիգորի Նարեկացւոյ. բան Ա-ՂԶ:

էջ 277-278. Յիշատակ մատենիս գրութեան:

էջ 278-299. Վարք սրբոյ առնն Աստուածոյ Գրիգորի Նարեկացւոյ:

Հիշատակարան. Գրչի

էջ 299. Փառք...|| (էջ 300)... Արդ, եղև զրաւ գրչութեանս ըստ հոլովման շրջագայութեան ամաց թվակի ազգանազեան ազին աբեթական տումարի երկեակ քառից հարիւրոց և տասանց վեցից և թուոց վեցից (1373), յաշխարհս հոնաց, *որ կոչի Ղրիմ, ի հայրապետութեան Գրիգորի և մերոյ արքեպիսկոպոսին* Տէր Կիւրեղիճ. *ձեռամբ թարմատար և փցուն գրչի* Քրիստոսատուր *պիտականուն կրաւնաւորի, ընդ հովանեաւ հռչակաւոր երկնահանգէտ և սուրբ ուխտիս, որ կոչի* Քեմճակի վանք, *յանուն կենսակիս մաւրն լուսոյ* Սուրբ Աստուածածնիճ *և առ հանգստարան երջանիկ և սուրբ հաւրն մերոյ խաչաչարչար խոտաճարակ մեծ ճգնաւորին Քրիստոսի և ի տիեզերալոյս* Աւետիք *վարդապետին՝ յոյժ վայելուչ զուարթատեսիլ և տրտմահալած լեառնային և դաշտային ծովահայեաց:*

Արդ, այսմ հոգէպատում սուրբ կտակիս և աստուածաբանեալ սուրբ մատ||(էջ 301)ենի՝ հոգէնորոգ և արտաւարածին, այսահալած և բուժիչ ցաւոց, լուսաւորիչ հոգւոց և փարատիչ խաւարային խորհրդոց, խորտակիչ ամբարտաւանութեանց և վարժիչ նուաստախոհութեանց, ցանկացաւղ եղեալ սրբասնեալ և կուսակրաւն քահանայն Մաղաքիա *(քերված և գրված «Յոհաննէս») և ստացաւ զսա արդեանց իւրոց՝ ի վայելումն անձին իւրոյ և հրահանգ և վարժիչ հոգւոյն և մտաց և ի յիշատակ ծնաւղաց իւրոց (բաց թողնված տողեր են եղել, որտեղ գրված է հետագայի հիշատակարան):*

Որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր Մաղաքիա *(քերված և գրված «զՅոհաննէս») աբեղան՝ զստացաւղ գրոցս և զծնաւղսն իւր և զամենայն արեան մերձաւորսն, և զիս զանպիտան գծողակս* զՔրիս[տոսա]տուր *աբեղայն և զիման ամենայն: Յիշեսջիք և զշնորհաւղ աւրինակիս* զՍարգիս *կրաւնաւոր՝ սպասաւոր Սուրբ Նշանին (մեկ ու կես տող բաց) և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն:*

էջ 3. Ջնուաստ հողս զՔրիստոսատուր *կրաւնաւոր և ստացաւղն* զՄաղաքիա *(քերված) կրաւնաւոր յիշեսջիք աղաւթիւք առ Քրիստոս:*

էջ 71. (էջի ներքևի լուսանցքում) Զշեշտերն յաղագս եղանակի եդի, որ ոտնաչափն ուղորդ գայ և ի գոյնն, զի լալիք է:

էջ 122. Զանարժան գձողս աղաչեմ յիշել ի Տէր:

էջ 192. Ո՛վ սուրբք Աստուծոյ, որք աղաւթէք լուսաիղձ մատենի, զողորմելիս և զանարժան[ս] Քրիստոսատուր *կրաւնաւորս և ստացաւղ սուրբ կտակիս* Մաղաքիա *կրօնաւորն յիշե[սջիք] ի Քրիստոս:*

Հետագայի

ա. էջ 299. Արդ, ես խօջայ Փիրումս *ստացայ զսուրբ գիրքս, որ կոչի Նարեկ ի հալալ արդեանց իմոց առ ի վայելումն որդւոյն իմոյ* Տէր Յոհաննիս *և յիշատակ ի դուռն* Թումայի սուրբ առեղելոյն: *Մի՛ ոք իշխեսցէ հանել և կամ վաճառել զսա ի դրանէ սորին: Եւ որք յանդգնին՝ զբաժակն Յուդայի արբցեն:*

էջ 301. ...խոջա Փիրումին *և* Մարիամին *և եղբարց իմոց՝* Հախնազարին, Հայրապետին, Թէոդորոսին, Անդրէասին, Ստեփաննոսին, Մկրտչին *և ամենայն ընտանեաց իմոց:*

Եւ յորժամ ստացայ զսա, էր թուական Հայոց ՌՃԻ (1671),

բ. էջ 146. (Վերի լուսանցքում) Յայոց թվին ՌՄԽԸ *(1799). ԼԻԺԵՍ (ծածկագի՞ր):*

9
ԱԻԵՏԱՐԱՆ
(Սան Ֆրանցիսկո, Ջ. Մարտիկյան, N1)

ԺԴ–ԺԵ–XIV–XV

Թերթ՝ *281:* Նյութ՝ *մագաղաթ (թուղթ՝ 83-90, հետագայի հավելում):* Մեծություն՝ *12,5x17,5:* գրություն՝ *երկսյուն:* Գիր՝ *բոլորգիր:* Մանրանկարչություն՝ *խորան՝ 7 (թուղթ եվսեբի՝ 2բ, 3ա, Համաբարբառ կանոններ՝ 4բ, 5ա, 6բ, 7ա, 8ա, 9բ, 10ա): Մատթեոս՝ 14բ, Ղուկաս՝ 139բ, Հովհաննես՝ 219բ, երկգույն (կարմիր և կապույտ):* Կիսախորան՝ *15ա, 140ա, 220ա: Լուսանցազարդ՝ բուսական: Զարդագիր՝ թռչնագիր:* Կազմ՝ *արծաթապատ տախտակ, վրան խաչելություն, Բ փեղկի վրա մի քանի գունավոր քարեր, աստառը՝ չերտավոր գործվածք:* Վիճակ՝ *բավարար:*

Հիշատակարան՝ Հետագայի

ա. Կազմի վրա, խաչելության ներքևում՝ Յիշ[ա]տ[ա]կ է ոսկերիչ Յարութիւն, *ՌՄԾԳ (1804):*

բ. 14ա. Աստուած լուսաւոր[ի] Հօոմի *հոգին մէ զօլաթեմ Ավետարանիս գին տվեց: Աստուած լուսաւորէ* Պիմաթի *հո[գին]...*

գ. 90բ. 1918 թ. մարտի 7-ին մենք փախանք:

դ. 139ա. Յիշատակ է սուրբ Ավետարանս Յովհաննէս *և իւր եղբայր* Համբարձումին, *և իր զաւակ* Գէորգը *յաշխարհ եկաւ 1892 թուին: Աստուած իւրայն յարևշատութիւն տացէ և խաղաղ կօնօք պահեսցէ. ամէն:*

149ա. (Նույն ձեռքով) իս Գէորգը Յովսէփենց *մնաց անկատար:*

289բ.Վա՛յ քեզ, Մինաս, *Ռ (1000) բերան:*

10
ԱԻԵՏԱՐԱՆ
(Նյու Յորք, Արսեն և Արմանդ Փուշմաններ, N2)

ՊՀ-1421

Գրիչ՝ *Բարսեղ:* Ստացող՝ *Նորչա:* Թերթ՝ *237:* Նյութ՝ *թուղթ:* Մեծություն՝ *16,5x23,8:* գրություն՝ *երկսյուն:* Գիր՝ *բոլորգիր:* Տող՝ *18:* Մանրանկարչություն՝ *բոլորէջյան առյուծ՝ 69ա, Մարկոս՝ 69բ, Ղուկաս՝ 112բ: Կնոջ նկար՝ 236ա, Բարսեղ գրչի պատկերը՝ 236բ (մակագրված. «Սուրբ Ստեփաննոս, բարեխաւս առ Աստուած վասն անարժան Բարսեղի, զի տայ զմեղացն թողութիւն»):* Լուսանցազարդ՝ *բուսական:* Կազմ՝ *կաշեպատ տախտակ, դրոշմազարդ:* Պահպանակ՝ *մագաղաթ, 1 թերթ սկզբում, 2 թերթ վերջում՝ Ժ-ԺԱ դդ.:* Վիճակ՝ *բավարար. վերջին թերթերը մաշված: Նախկինում վերանորոգված և թերին լրացված:*

Հիշատակարան. Գրչի

235բ. Փառք... Շնորհիւն Աստուծոյ սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զսուրբ Աւետարանս ԺԱ (10) ամով և անսվաղ ձեռամբ իմով՝ Բարսեղի *տրուպ և անպիտան գրչի, մեղաւոր անձամբ: Արդ, աղաչեմ զամենեսեան՝ սխալանաց անմեղադիր լինել, վասն զի տառապանաւք և հեծութեամբ գրչի ի ստոյգ աւրինակէ՝ զցանն և զայլ խորհուրդն ի յայլուստ բերելով:*

Արդ, աղաչեմ զամենեսեան զընթերցողսդ, որ ընթեռնոյք և լուսաւորիք կամ որք աւրինակէք գրչութեամբ, ինձ և ծնողաց իմոց՝ Կոստանդին *և* Մամամաին, *ևս նոցա մաւրն՝* Ծաղկոցայ, *և եղբարց իմ՝* Աբրհիամա *և* Կարապետին *և* Դեղին *և քվեր՝* Մատոսին, *և* Հայրապետին *և* Երնեկին, *և ծրողիս՝* Բարսեղիս *և ամուսնոյ իմոյ: Ով հայ[ր]ք իմք, թողութիւն խնդրէք յԱստուծոյ, և նա կարող է ողորմութիւն շնորհել մինչև ձեզ. ամեն, ամէն, ամեն և ամենայն թամ||... (շար. էջերը թափված):*

Ստացողի

237ա. Փառք... որ հասոյց զմեզ ի վերջ տառիս և աստուածաբան սուրբ Աւետարանիս: Արդ, աղաչեմք զամենեսեանդ, որք հանդիպիք այսմ բուրաստանիս կամ տեսանելով և կարդալով, կամ աւրինակելով, կամ /// ով և ի աքանչելացն Քրիստոսի բժշկութիւն և ի հիւանդս և ախտաժետս ցուցանելով, յիշեսցջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զստացողս սորա զհայր Նորչա *և զանդրանիկ զորդին իւր՝* զՋվանն, *զսիրեցեալ յԱստուծոյ և յամենայն միահամուռ եկեղեցոյ ուխտէս և հասարակ ժողովրդոցս՝ մեծամեծաց մինչև զփոքունս, և զմեծ եղբայր իւր՝* զԱշխիբէկ, *և զհոգևոր մայր մեր՝* զԴուսիայ *և զսրբասէր դուստրն քոյրն մեր* զԳուլմելիք *և զթոռնե[րն]՝* Աստուածատուր, Խաչատուր, Թամսեր /// Վախախ, Աթամելիք, *որ են կենդա[նի՝] օրհնէ և զհանգուցելոցն՝ ողորմի /// Ամիրշայ, Սիրանչաւ, Ոսկի, Հոիփ[սիմէ]. ըստացաւ և ետ կազմել ի հալալ [ընչից] ի յիշատակ իւրեանց հոգոյն և նա /// յիշող յիշեալ լիչիք ի միւս անգամ. ամէն: Թվին ՊՀ (1421):*

Հետագայի

ա. 236ա. Աստուած վկա, ես Յովհաննէս *անպիտան աբեղէս գրեցի: Փառք... ես* Սմեոնս, *ես* Աղաջանս, *ես* Վրդանեսս, *ես* Մարիամս *տվինք մեր հայրենիք վերի ամբարն չափարովն վախմ ի դուռն* Սուրբ Յովաննէս Մկրտչին *յիշատակ ծնաւղաց մերոց, հաւրն մերոյ՝* Փանոսին, Աղայջանին *մայրն մեր՝* Թոխիճարին, Հասուլին *և եղբարց մերոց՝* Մելիքին, *հանգուցեալ առ Քրիստոս* եղիլին, Եբրիանոսին, Միրզաջանին *և քվերն մեր հանգուցեալ առ Քրիստոս՝* Ջինարին. *և հարսն մեր հանգուցեալ առ Քրիստոս՝* Գուլջհանին, *վկայութեամբ* Գրիգոր *վարդապետին* Ցաղնեցի: *Ես* Ամիրղուլի *որդի տանուտէր* Հայրապետս *վկայ, ես* Ասլանի *որդի* Սարգիս *վկայ, ես* Ամիրի *որդի* Փիրղալամս *վկայ: Ով հակառակ լինի այ[ս] վախմի... (անընթեռնելի երկու տող):*

բ. 237բ. Այլ մերձեալ աղաչեմք յիշատակել յաղօթս զհայր վանացն զմահտեսեալն Սուրբ Ստեփանոսին, *զհայր* Մարգարէն *և զանդրանիկ զաւակ երիտասարդն իւր* զՍտեփանոս, *զդեռաբուսիկ ծաղիկն և զեղկելի կազմող՝* զՊօղոս Ցաղեցի, *զաւելածուս սուրբ* Շուշանիս, *և յիշողք՝ յիշեալ լիջիք ի միւս անգամ գալուստն. ամէն:*

գ. 237բ. Ես մահդասի Պօղոս *իմ սրտիւ յաւժարութեամբ ԻՌ (20.000) դահեկան տվի դուռն սուրբ* Յովաննէս Մկրտչին *վահմու, որ բանացընի, դարենն Ռ (1000) դահեկան տայ եկեղեցուն լուսագին: Որ որ այլևս ///:*

11
ԱԻԵՏԱՐԱՆ
(Վաշինգտոն, Բաբկեն եպս. Վարժապետյան)

Սանահին ՊՂ-1441

Գրիչ և ստացող՝ *Տէրունական:* Ծաղկող՝ *Հովհաննես:* Թերթ՝ *302 (604 էջ):* Նյութ՝ *թուղթ:* Մեծություն՝ *14x17:* գրություն՝ *երկսյուն:* Գիր՝ *բոլորգիր:* Տող՝ *19:* Մանրանկարչություն՝ *Համբարձում՝ էջ 465: Մատթեոս՝ էջ 4, Ղուկաս՝ էջ 286: Կիսախորան՝ էջ 5, 175, 287:* Կազմ՝ *կաշեպատ տախտակ, դրոշմազարդ:* Վիճակ՝ *բավարար. պակասում են Մարկոս և Հովհաննես ավետարանիչների և տերունական նկարները:*

Հիշատակարան. Գրչի

էջ 599. Փառք... || (էջ 600)... Արդ, ես Տէրունական *աբեղայս, յետինս ի կարգաւորաց, յիշեցի զբան մարգարէին, որ ասէ. Երանի որ ունիցի զաւակ ի Սիոն կամ ընդանի յԵրուսաղեմ: Ընդ որս և ես մեծ յուսով և սուրբ սիրով գրեցի զԱւետարանս. զի թէպէտ չէի լաւագոյն, հմուտ այսմ արհեստի, այլ սէր կատարեալ ի բաց մերժէ զերկիւղն, ապաւինեցա յամենակարողն Աստուած, Բանն Հաւր և շնորհաւք Սուրբ Հոգոյն կատարեցի և ետու ծաղկել* Յոհաննէս վարդապետի *տիրական պատկե||(էջ 601)րաւք, բոլոր տնաւրինականօք, փառաւոր աւետարանչօք և գեղեցկատեսիլ խորանօք և դիւրահաւաց ծաղկաւք և գոյներանկ գեղօք, ծերացեալ աչաւք յաշխատեալ և նեղացեալ յոլով և կատարեալ կարողութեամբն Աստուծոյ: Նոյն և ես՝* Տէրունական, *ծերացեալ և նեխեալ անձամ[բ], յետինս աշակերտաց նորա, որով վըստահացոյց զիս ի շուք պատկերաց, կատարեցաւ շնորհաւք Սուրբ Հոգոյն*

դառն և դժնեա ժամանակիս, որով էառ զՇամշուլտա Ջահանշա ամիրզեն, գերեաց և կոտորեաց ի թվին ՊՂ (1441) ի յերկնայանգետ և գերահռ[չակ] սուրբ ուխտս Սանահին, *առ դռան մաւր լուսոյ* Աստուածածնիս, *կամացկութեամբ եղբարցս* Ներսէս *փիլիսոփաի և այլ միաբանից։*

Արդ, ես Տէրունականս, *հողս և մոխիրս, ստացայ զսուրբ օետարանս յիշատակ ինձ՝ հոգոյ [ի]մոյ և ծնողաց իմոց, հօր իմոյ՝* Եսիլին *և մօր իմոյ՝ || (էջ 602)* Թամթա *խաթունին, եղբարց իմոց և քերց և ամենայն յարեան մերձաւորաց, որք ի Քրիստոս են հանգուցեալ։ Վասն որոյ յերեսանկեալ աղաչեմ զհամայգումար դասքդ քահանայից, որք օգտիք ի սմանէ և լուսաւորիք սովո, յիշեցէք ի Քրիստոս՝ զիս զբազմամեղս* զՏէրունական, *որ ստացա զսա յիշատակ ինձ վայելումն, զի մեծ յուսով ստացա և սիրովն Քրիստոսի գրեցաւ և ծաղկեցաւ [յ]ոյժ տաժանմամբ, այլ և բարերարն Աստուած տացէ զիւր առատ ողորմութիւնն մեզ և ձեզ։*

Դարձեալ յերես անկեալ աղաչեմ զհա[ն]դիպողքդ աստուածախաւս բուրաստանիս, զի սահման է զգալի աչացս՝ նաել ի գեղեցիկ իր. լուսաւորի միտքն և իմաստանա, քաղցրանա կամքն և ուրախանայ, ապա ախորժի ամենայն զգայ ||(էջ 603)արանքն և տայ ի լեզուն զշահարար սերմն և լսելիս բազմաց և բերէ զպտուղ անուշ և արդիւնարար, այսինքն զբարի յիշումն և զԱստուածողորմայն ի խորոց սրտէ։

Արդ, որք նաիք ի ծաղկազարդ և հոգելից դրախտս, յիշեսջիք առ հասարակ զգրեալքս ի սմա ի սուրբ աղաւթս ձեր, և ձեզ յիշողացդ և մեզ յիշելոցս ողորմի Քրիստոս Աստուած, և նմա փառք յաւիտեանս, ամէն։

Ծաղկողի

էջ 287. ՋՅոհաննէս *մեղապարտ նկարիչ աղաչեմ յիշել ի մեղաց թողութիւն, վասն սիրոյն Քրիստոսի։*

Հետագայի

ա. էջ 2. ես Տէր Պետրոս *թողի զԱւետարանս ի հալալ արդեանց իմոց՝ յիշատակ ինձ և ծնողաց իմոց, (նույն ձեռքով տողամեջ՝ «և կողակցին իմոյ* Նիկարին*») և որդոցն իմոյ՝* Ղուկասին, Հայկազին, Գրիգորին, Անտոնին, *և դստերացն իմոց՝* Սառային, Եղիսաբետին, *և հարսին իմոյ՝* Սիրայխաթունին, Մարիանին, *և թոռանց իմոց՝* Պետրոսին, Մկէուսին, Քասպարին, Անտոնին, *և միւս այլ* Պետրոսին *և դստերաց նորին՝* Մարիանին, Խաթունճանին, Յարուսխին, Սալվինազին, *և այլ ամենայն յար[եան] մերձաւորաց իմոց՝ կենդանեաց և հանգուցելոցն, ամէն։*

Այլ ոչ ով դաւի չիլնի ո՛չ իմոց և ո՛չ աւտարաց, և թէ քահանայ լինի ազգի իմոյ՝ պաշտելոյ զսուրբ Աւետարանս, և եթէ ոչ, յիշատակ տանն իմոյ մնասցէ մինչև ի խորին ծերութիւնն։ Աստուած ողորմի Տէր Տէրունականին, *որ գրեաց զսուրբ Աւետարանս և ծախեաց մեզ, ամէն։*

Եւ զիս՝ անարժան Մկրտիչս *մի բերան յիշէք, գրող յիշատակարանիս։*

բ. էջ 603. Արդ, աղաչեմք յիշել ի Տէր կրկին ստացող սուրբ Աւետարանիս զԱմիրն, *որ ստացաւ զսա ի հալալ արդեան իւրոյ՝ յիշատակ հոգոյ և մարմնոյ ի ամենայն արեան*

մերձաւորաց, զի փափաքէի և առի, կարաւտ էի և տեսի, ծարաւ էի... (շար. էջ 604, անընթեռնլի):

գ. էջ 1. Զայս գըրչայ Աւետարանս առի Տէր Մինասեան *տապաղ* Կարապետենց /// *մենէ, որ փըրօթեսթանտ է. ի[նձ] ծախեցին, արժեքըն հինգ դուրուչօվ,* Շեկոյ *անպիտանիս: Վըկայ բանիս սրբազան* Յակոբ *վարդապետ և* Տէր Կարապետ, Տէր Յակոբեան *և* Առուսեան Յօհաննէս. *Հազար ութ հարիւր վաթսուն և մէկ, մարտի 25ին.* Տիկրանակերտ *(ստորագր.)* Յակոբ վարդապետ Տիգրանակերտցի *(երկու կնքադրոշմ):*

էջ 6. Ընծայի Աւետարանս Սուրբ Կիրակոս *եկեցեղոյն Տիկրանակերտի ի* Շեկոյ *ձայնառոր վարժապետէ:*

էջ 174. Ընծայի սուրբ Աւետարանս Սուրբ Սարգիս *եկեղեցոյ ձայնառոր վարժապետ* Շեկոյ *դպրէ ի դուռն* Սուրբ Կիրակոս *եկեղեցոյ. 1881 օգոստոս 15* Տիրանակերտ *(նման՝ էջ 283):*

12
ԱԻԵՏԱՐԱՆ
(Լոս Անջելոս, Արշակ Տիգրանյան, N3)

Վասպուրական ՁԺԱ-1462

Գրիչ՝ *Մկրտիչ ք.:* Ստացող՝ *Հովհաննես կր.:* Թերթ՝ *344:* Նյութ՝ *թուղթ:* Մեծություն՝ *17,5x25,5:* գրություն՝ *երկսյուն:* Գիր՝ *բոլորգիր:* Տող՝ *21:* Մանրանկարչություն՝ *Ծննդաբանություն՝ 1բ, Ավետում և Աստվածահայր Հովսեփ՝ 2ա, Մոգերի երկրպագություն՝ 2բ, Քառասունօրյա գալուստ՝ 3ա, Մկրտություն՝ 3բ, Պայծառակերպություն՝ 4ա, Հարսանիք Կանայում՝ 4բ, Անդամալուծի բժշկությունը և Ղազարոսի հարությունը՝ 5ա, Մուտք Երուսաղեմ՝ 5բ, Վերնատուն՝ 6ա, Մատնություն՝ 6բ, Խաչելություն և թաղում՝ 7ա, Դժոխքի ավերումը՝ 7բ, Հարություն՝ 8ա, Համբարձում՝ 8բ, Հոգեգալուստ՝ 9ա, Ղազարոսը Աբրահամի գոգում և Մեծատունը տապակի մեջ՝ 9բ, Քրիստոսը քառակերպյան աթոռի վրա և Ավետարանի պատվիրատու Հովհաննես կրոնավորը իր հոր՝ Տեր Մարտիրոսի հետ՝ 10ա: Խորան՝ 10 (թուղթ Եվսեբի՝ 10բ, 11ա, Համաբարբառ կանոններ՝ 11բ, 12ա, 12բ, 13ա, 13բ, 14ա, 14բ, 15ա): Մարկոս՝ 105բ, Ղուկաս՝ 166բ, Հովհաննես և Պրոխորոն՝ 267բ: Կիսախորան՝ 16ա, 106ա, 167ա, 268ա: Լուսանցազարդ՝ բուսական, կենդանական: Զարդագիր՝ թռչնագիր, հանգուցագիր:* Կազմ՝ *կաշեպատ տախտակ, դրոշմազարդ:* Պահպանակ՝ *մագաղաթ, մեկական թերթ սկզբից և վերջից՝ «Պատմութիւն Յովասափի և Բարաղամու», Ժ--ԺԱ դդ.:* Վիճակ՝ *բավարար:*

Ծնթ. *1972 հունվարի 8-ին Լոս Անջելոսում տողերիս գրողը այս ձեռագիրը նվեր ստացավ Մաշտոցի անվան Մատենադարանի համար (N10521):* **(Տես նկար XVI,3)**

Հիշատակարան. Գրչի

104բ. Քրիստոս Աստուած, քո սուրբ աւետարանչիս բարեխաւսութեամբ ողորմեա ստացողի սուրբ Աւետարանիս՝ Յովաննէս կրաւնաւորին, և ծնաւղացն՝ Մարտիրոս քահանային, և մօրն || (105ա), և ամենայն արեան մերձաւորացն իւրոց, և ինձ մեղապարտ գծողիս՝ Մկր[տ]չի, *և ծնաւղացն իմոց, և թող զմեղս մեր ամենեցուն, և այնոցիկ, որ ասեն զամէն:*

166ա. Ջատագով սուրբ Աւետարանիս՝ զՅովհաննէս կրաւնաւորն, որ եռափափագ սիրով ստացաւ զսա՝ զԱւետարանս աստուածախառա, ի յիշատակ հոգոյ իւրոյ և ծնաւղաց և ամենայն արեան մերձաւորաց իւրոց։

Արդ, որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք զսոսա անմոռաց յիշմամբ ի սուրբ աղաւթս ձեր և մեղաց թողութիւն խնդրեցէք ի Քրիստոսէ, և Աստուած, որ առատն է ի տուրս բարեաց, ձեզ և մեզ առ հասարակ ողորմեսցի. ամէն։

341ա. Փառք... || (342ա)... [ե]ւ սա [տե]սեալ զսորայս անճառ փրկագործութեան խորհուրդ, ոմն Յովհաննէս *կրաւնաւոր, զոր ի վաղուց հետէ ցանգացաւղ եղեալ աստուածախաւս սուրբ մատենիս, և ետ գրել զսայ, յիշատակ հոգոյ իւրոյ և ծնաւղացն՝* Մարտիրոս *քահանայիւն և* Աղութիւն, *և ամենայն արեան մերձաւորացն և երախտաւորացն։*

Եւ արդ, ես յետինս ի քահանայս և անարժանիս ի մանկունս եկեղեցւոյ՝ Մկրտիչ *քահանայ, հրաման առեալ ի պատուիրանադիր առաքելական բանէն, որ ասէ. Յոր կոչումն կոչեցար՝ ի նմին կացջիր...*

342բ. ...Արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս այս ձեռամբ սուտանուն գրչիս՝ Մկր[տ]չի, *անիմաստ և անախմար։ Եւ իմ անընդունակ գոլով յարուեստ գրչութեան և բազում մեղաց ցնորիւք պաշարեալ, այլ ըստ կարի մերում, զոր պարգ[և]եաց մեզ մարդասէր հոգին, բազում աշխատասիրեալ իմ սմայ, գրեցի անարժան ձեռաւք իմովք յ[ը]նտիր և ի ստոյ[գ] աւրինակէ, կենաւք տառապանաւք և բազում պանդխտութեամբ, նեղեալ չերևելի և յաներևոյթ թշնամեաց, ըստ նմանութեան կամ ծովու, որ չալեաց տատանեալ։ Իսկ գրեցաւ սուրբ աւետաբեր Աւետարանս ի մեծ թուականութեանս Հայոց ՋԺԱ (1462) ի կաթողիկո||... (շար. էջերը թափված)։*

Հետագայի

ա. 1բ. (Նկարի շրջանակի ստորին մասում կապույտ խորքի վրա սպիտակ երկաթագրով, մասամբ անընթեռնլի) ՋՂ /// եւ զծնաւղսն իւր յիշեց[էք ի] Ք[րիստո]ս։

բ. 105ա. (Այլ ձեռագրով, բոլորգիր, ԺԵ դար) Յիշեցէք ի Քրիստոս զՂումրի խաթուն, զԹուրանդէն և զԱվրան և զԹարսէն *և Աստուած ողորմի ասացէք սոցա. ամէն։*

գ. 5ա. (Նկարի լուսանցքում) Ես Տէր Պ[ե]տրոս Բ[ա]ղէշեցի, *ո[ր] կոչի որդի[ի]* Տէր Սարգ[ս]ի, *որ եկա[յ] զըռկան ժեղօվք* Ծապըկոռու Սուրբ Կարապետին, *որ հանդիպայ այս Աւետարանիս թուին ՌՄԾԴ (1805)-ին։*

դ. 266բ. Ջայս կարմիր Աւետարանս գնեցի Առաղցի Յարութիւն *վարդապետէն ի* Բաղէշ Սիմէօնս Սասունցի Դաւթեան։ *1873 թիւ Փրկչի, հոկ. 10։*

13
ՇԱՐԱԿՆՈՑ
(Սան Ֆրանցիսկո, Ջ. Մարտիկյան, N6)

ԺԵ-XV

Գրիչ՝ *Ղուկաս:* Թերթ՝ *474:* Նյութ՝ *թուղթ:* Մեծություն՝ *7,5x9,5:* գրություն՝ *միասյուն:* Գիր՝ *բոլորգիր:* Տող՝ *17:* Մանրանկարչություն՝ *ճակատազարդ՝ 72ա, 138բ, 175ա, 371բ, 399բ, 433բ: Լուսանցազարդ՝ բուսական: Զարդագիր՝ թռչնագիր, հանգուցագիր:* Կազմ՝ *կաշեպատ տախտակ, դրոշմազարդ:* Վիճակ՝ *քայքայված, ցեցակեր, սկզբից, միջից և վերջից պակասավոր:*

Ծնթ. *Ձեռագիրս 1972 թ. հունվարին Սան Ֆրանցիսկոյում տողերիս գրողի միջոցով Ջ. Մարտիկյանը նվիրեց Մաշտոցի անվան Մատենադարանին (N10526):*

Հիշատակարան. Գրչի

300բ. Ջմեղաւոր և զանարժան Ղուկասս յիշեցէք:

14
ՇԱՐԱԿՆՈՑ
(Ֆրեզնո, Սուրբ Երրորդություն Մայր եկեղեցի, N4)

ԺԵ-XV

Հիշատակարան չունի:

15
ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՑ ԼՈՒԾՄՈՒՆՔ ԴԺՈՒԱՐԻՄԱՑ ԲԱՆԻՑ Ի ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԳՐՈՑՆ ՅՈԲԱՅ
(Ֆրեզնո, Սուրբ Երրորդություն մայր եկեղեցի, N5)

ԺԵ-XV

Գրիչ՝ *Սարգիս*

Հիշատակարան՝ Գրիգոր Տաթևացու

/// [Եւ] ժողովողն մեկնութեան[ս է] Վանական *վարդապետն՝ աշակերտ* Մխիթար *վարդապետի, որ* Գոշ *անուանի, և է սա վարդապետն* Վարդանայ, *և* Վարդանն՝ Նեռսէսի, *և նա՝ Եսայեայ վարդապետին, որոց յիշատակն աւրհնութեամբ եղիցի. ամէն:*

[Ա]րդ, ես վերջինս ի ծնունդս եկեղեցոյ Գրիգոր *մականուն խնդրող բանի, որ ի վաղուց հետէ փափաքէի բոլոր Մեկնութեան Յոբայ: Եւ ի թուականութեանս Հայոց ՊՇԷ (1408) ամի եկեալ մեր յերկիրս Քաջբերունի և ձմերեալ ի հրեշտակաբնակ վանքս* Մեծոփոյ, *ի սպասու դամբարանաց վարժապետացն սրբոց: Եւ ընթերցմամբ հաւաքեցի զդժուարալոյծ բանս Յոբայ և զմեկնչաց նորա, այլ և սակաւ ինչ լուծումն* Առիստակիսի *և* Գէորգեա *ի խրատս գրչութեան, ընդ նմին և զքաղուածոյ մեկնութեանն Յովհաննու աւետարանչի, և ընծայեցի ի պա[տիւ] սուրբ տեղւոյս ուսում[նաս]էր անձանց՝ ուղղադաւան մտաց [և] ի գլուխս բաժանելով վասն մտաւոր տեսութեան և զարդ ուսման ի պէտս բեմասացութեան և ի խրատս զրուցատրութեան:*

Արդ, եթէ գտցի ինչ ի սմա ըստ հաճոյից խնդրողաց՝ Տեառն շնորհ[ք և թէ] ոչ՝ այնպէս շնորհք և պակասն [փոքր]ընկալ անաւթոյս մերոյ ն[երես]ցի, որ և լուսաւոր վարդապետին մերոյ Յովհաննն Որոտնեցւոյ ի սմա մասն բարեաց յիշեալ եղիցի: Որ և մ[եզ] յուսողաց և ձեզ յիշողաց ողորմութիւն Տեառն հասարակեսցի:

Այլ և աղաչեմ զմտերիմ գաղափարաւղս, գրել զսա[կ]աւ յիշատակ մեր, և դու[ք] գրեալ լիջիք ի գիրն կենացն յաւիտեանից. ամէն: Եղիցի, եղիցի:

Գրչի

Այլ և կրկին աղաչեմ յիշեցէք ընդ վերոյ ասացեալն զբազմամեղ գրիչս զՍարգիս *և զծնողն իմ և խոշորութեան անմեղադիր լերուք, զի կար մեր այս էր:*

16
ԱՒԵՏԱՐԱՆ
(Նյու Յորք, Ալիս Գավուքչյան)

ԺԵ-XV

Գրիչ՝ *Զաքարիա:* Ծաղկող՝ *Թումայ:* Նյութ՝ *թուղթ:* Մեծություն՝ *21,5x31:* գրություն՝ *երկսյուն:* Գիր՝ *բոլորգիր:* Տող՝ *21:* Մանրանկարչություն՝ *Քրիստոսը քառակերպյան աթոռի վրա՝ 2բ, Խաչակի զոհաբերությունը՝ 3ա, Ավետում՝ 3բ, Ծնունդ՝ 4ա, Մոգերի երկրպագությունը՝ 4բ, Քառասունօրյա գալուստ՝ 5ա, Կոտորումն մանկանց և Մկրտություն՝ 5բ, Հարսանիք Կանայում՝ 6ա, Նկանակների բաշխումը՝ 6բ, Անդամալույծների բուժումը՝ 7ա, Պայծառակերպություն և Ղազարոսի հարությունը՝ 7բ, Մուտքը Երուսաղէմ՝ 8ա, Ոտնլվա և Մատնություն՝ 8բ, Քրիստոսը Պիղատոսի առյանում՝ 9ա, Խաչելություն՝ 9բ, Դժոխքի ավերումը և Հարություն՝ 10ա, Համբարձում՝ 10բ, Հոգեգալուստ՝ 11ա, Սարգիս և Թեոդորոս զորավարներ՝ 11բ: Խորան՝ 10 (Թուղթ Եվսեբի առ Կարպիանոս՝ 12բ, 13ա, Համաբարբառ կանոններ՝ 13բ, 14ա, 14բ, 15ա, 15բ, 16ա, 16բ, 17ա): Մատթեոս՝ 18բ, Մարկոս՝ 95բ, Ղուկաս՝ 146բ, Հովհաննես և Պրոխորոն՝ 217բ: Կիսախորան՝ 19ա, 96ա, 147ա, 218ա:* Կազմ՝ *կաշեպատ տախտակ, դրոշմազարդ. Ա փեղկին մետաղյա 5 խաչեր, մեկը կապույտ ակով: Խաչերի վրա՝ «Աղայբէգի», «Ալիխան», «Յուխան», «Ֆռանգ[ուլ]», «Թրկէլդյ (՞):* Պահպանակ՝ *մագաղաթյա, երկուական թերթ սկզբից և վերջից, մասն Ավետարանի, Ժ-ԺԱ դդ.:* Վիճակ՝ *բավարար. միայն կողի կաշին պատռված:*

Ծնթ. *1972 թ. հունվարի 23-ին Նյու Յորքում տողերիս գրողը այս ձեռագիրը նվեր ստացավ Մաշտոցի անվան Մատենադարանի համար (N10522):* (Տես նկար XVII, 4)

Հիշատակարան. Գրչի

285բ. Փառք... որ տրամատեաց զմատունս վերջացեալ տկար ոգոյ՝ Ջաfարոյ սուտանուն կրօնաւոր, գրեալ և կարգեալ ըզճառս երախտեաց աստուածագործ սքանչելեացն, զոր ճշմարիտ և աստուածաբան միածին Որդին Աստուծոյ Յիսուս Քրիստոս ի վախճան աւուրցս այսոցիկ կատարեաց զնշանս և զարուեստս, որպէս զի որք ընթերցին, ի միտ առցին, թէ նոյն Տէր է, որ Մովսէսի հրամայեաց ||... (շար. էջերը թափված):

Ծաղկողի

16բ (խորանի վերին հեծանի վրա) ՁԹուա*մա ծաղկողս յիշեցէք ի Քրիստոս աղաչեմ։*

Հետագայի

ա. 286ա. Ով լուսերամ դասք քահանայից և մանկունք սուրբ եկեղեցոյ, յորժամ հանդիպիք սուրբ Աւետարանիս, ասացէք Աստուած-ողորմի Վարդանին *և ծընօղացն՝* Աբրեխամուն *և* Գօզալին, *կողակցուն՝* Մարանին, *որդոյն՝* Յովանէսին, Յոհաննիսին *և* Մկրտչին, *դստերացն՝* Սինուբարին, Մարգարտին, Ալթունին, *հարսներաց՝* Ջամանին, Գաֆարին, Հոռոմսիմին, Աբրեխամուն, Մանուկին, Մավիխանին. *ասացէք Աստուած ողորմի, որ ստացաւ զսուրբ Աւետարան ի հալալ վաստակոց իւրոց, ասացէք Աստուած ողորմի, Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն։*

Արդ, ես՝ Վարդանի *որդի* Յովանէս *և եղբարն իմ՝* Յոհան *և* Մկրտիչն *գնեցինք զսուրբ Աւետարանս ի հալալ վաստակոց մերոց՝ յիշատակ հոգոց մերոց և ծընօղաց մերոց՝* Վարդանին *և* Մարանին, *և ծընօղաց նորին՝* Փանոսին *և* Խոռոմին, *և* Տէր Յոհան *սրբասէր քահանային, որ կամակից եղև այս բարի բանին, թվին ՌՃԿԲ (1713)։*

բ. 287ա. Փառք... Ձվերջին զստացողս սուրբ Աւետարանիս՝ բարեմիտ և հաւատարիմ աղա Միխայէլ *և կողակիցն իւր* Թուռանդէն *առին զսուրբ և փրկագործ աւետարանն հրաշալի և բժիշկարար իւրեանց հոգոյն, յալալ վաստակոց իւրոց, անչինչ յիշատակ իւրեանց հոգոյն և ծնօղացն իւրոց՝ աղա* Բաղդասարին, *կողակցուն՝* Եղիսաբետին, *եղբօրն՝* Յակոբին, *քուրոչ՝* Թումաբետին *և հանգուցելոց նոցին, ամէն։*

Դարձեալ կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք աղա Միքաէլին, *կողակցուն՝* Թուռվանդին, *հօրն՝* Տէր Պետրոսին, *մօրն՝* Ջմրութին, *եղբօրն՝* Յովաս[ա]փին. *ամէն. որդոցն՝* Բաղդասարին, *կողակցուն՝* էբրեմսիմին, Յարութենին, *կողակցուն՝* Եղիսին, Մուրադխանին, *կողակցուն՝* Գարիանին, Գուլամիրին, *կողակցուն՝* Ջարիֆին || *(287բ)* Աւետին, *կողակցուն... (անվան տեղը բաց),* Ասլիխանին *և հանգուցեալ որդոց՝* Թումաջանին, Ասլիխանին, *ամէն։*

Դարձեալ կրկին անգամ աղաչեմք զսրբութիւնդ ձեր, ով լուսերամ դասք քահանայից և մանգունք սուրբ եկեղեցոյ և առ հասարակ ժողովուրդք, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր, լի տրիւ և բոլոր հաւատով Աստուած-ողորմի ասացէք աղա Բաղդասարին, *կողակցուն՝* Եղիսաբետին, *որդոյն՝ աղա* Միխայէլին, *կողա[կ]ցուն՝* Թուռվանդին, Տէր Պետրոսին, *կող[ակ]ցուն՝* Ջմրութին, *որդոյն՝* Յովասափին, Բաղդասարին, Մուրադխանին, եղիսին, Ջարիֆին, Աւետին, Ասլիխանին, Աստ[ու]ածատուրին, Թումին, Աղութին, *մեծին և փոք[ր]ին, առ հասարակ ամենեցուն. ամէն։*

Դարձեալ Աստուած ողորմի ասացէք յիշատակ գրողաց հոգոյն, Աստուած ողորմեսցի իւր միւսանգամ գալստեանն և ի յարհեղ դատաստանին. ամէն։

Թուվին ՌՃՁԹ (1734)-ին. ամէն։

Գրչափորձ (հայերեն և հայատառ թուրքերեն). 1ա, 2ա, 286բ։

17
ՄԱԾՏՈՑ
(Չիկագո, Օսկան և Լուսին Իսպիրյաններ)

ՋԾԳ-1504

Գրիչ՝ *Յակոբ եպս., Մկրտիչ:* Ստացող՝ *Պօհաճի Ասլան:* Թերթ՝ *131:* Նյութ՝ *թուղթ:* Մեծություն՝ *18x13,5:* գրություն՝ *մխասյուն:* Տող՝ *15-18:* Կազմ՝ *կաշեպատ տախտակ, դրոշմազարդ:* Պահպանակ՝ *մագաղաթ, երկուական թերթ սկզբից և վերջից, Ժ-ԺԱ դդ., մասն Մատթեոսի Ավետարանի:* Վիճակ՝ *բավարար. պահպանակները վնասված:*

Ծնթ. *Ձեռագիրս 1971 թ. դեկտեմբերին տողերիս գրողի միջոցով Իսպիրյանները նվիրեցին Մաշտոցի անվան Մատենադարանին (N10519):* (Տես նկար XIX, 6)

Հիշատակարան. Գրչի

115ա. Որ ողորմի մեղաւոր Մկրտչիս և ամենայն երախտաւորաց մեր և ծնողացն. ամէն:

130բ. Ով ամենաբարի Տէր Յիսուս, քո կամաւոր խոնարհութեամբդ ողորմեա մեղաւոր և անարժան գրչիս և ամենայն երախտաւորաց մեր և արեան մերձաւորաց մերոց, և Թղտիս կոկողի՝ մահդասի Տէր Ղազարի և արեան մերձաւորացն:

Գրեցաւ ի թվականիս ՋԾԳ (1504), և խոշորութեանս անմեղադիր լերուք, զի աւուրք ձմեռնային էր, բայց վասն թախանձանաց եղբաւր գրեցաւ յայս դժնդակ աւուրքս, որ է յունվար ի ԺԸ (18), և Քրիստոսի փառք յաւիտեան:

131ա. Փառք... Գրեցաւ սուրբ Մաշտոցս ձեռամբ Բ (2) գրչաց՝ Յակոբ եպիսկոպոսի և Մկրտիչ գրչի, ի խնդրոյ վարպետ Ասլանին *պօ[հաճ]ուն և իւր կենակցին՝* Փաշախաթունին *և ամենայն զարմից և զաւակացն:*

Արդ, յերես անկեալ աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սուրբ տառիս, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զստացաւղ սորա՝ զպօհաճի Ասլանն *և զկենակից նորին՝* զՓաշախաթունն, *և ձեզ յիշողացդ և մեզ առ հասարակ ողորմեսցի Քրիստոս Աստուածն մեր. ամէն:*

Հետագայի

ա. 106բ. (Նոտրգիր). Այս գիրս Բայվցոցն *մահտեսի* Թումաճան *որդի տիրացու* Տօնապետոս *1230 (1781)* գիրեց, *որ (=ով) որ կանդանէ (=կարդանէ)՝ օղորմիս հանէ:*

115ա. Բալիվցոնց *մահտեսի* Գեվորիճն *որդին* Օնանի *այս սընըն 1229 (1780) Վարդեվառին կիրակէն եղեալ է:*

115բ. Գիրս գրեալըն 1230 (1781): Գիրըս գրե[ալ Բալ[ի]վցոնց *մատեսի* Օվակիմն *թօռըն՝ մահտեսի* Թումաճանին *որդին տիրացու* Տօնապետս *գրեց: Այս գիրքըս տիրացու* Օնանի || *(116ա) որդի մահտեսի* Գեվորիճն *է. իւր որդի* [Օնա]նըն եղեր է *վառդէվառին բարկէտին [կիրակ]էն: Այս գիրըս եղեալ սընըն 1229 (1780): Այս է սընըն 1229 (1780):*

բ. 121բ. (Նոտրգիր, այլ) Յիշատակ այս գիրս տիրացու Թումաճանին, *տիրացու* Մարտիրոսին, *տիրացու || (122ա)* Գրիգորին, *տիրացու* Եսօֆին, *տիրացու* Կասպարին, *ով որ կարդանը՝ ողորմիս ասէ:*

18

ԺՈՂՈՎԱԾՈՒ[1]

(Ուեսթ-Հարթֆորդ, Քընեթիքեթ, օր. Ժոզեֆին Պարթ)

Եւքառա գլուղ, Կեսարիա ՌԹ-1560

Գրիչ՝ *Հակոբ ՔՀ. Սարգսյան:* էջ՝ *567:* Մանրանկարչություն՝ *«Միջորակ և որոշ չափով գունաթափ»:* Վիճակ՝ *լավ:*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ա. էջ 1-146 Նախերգան և Մեկնութիւն Արիստոտելի Ստորոգութեանցն՝ արարեալ Դաւթի անյաղթ փիլիսոփայի:

բ. էջ 146-252 Յաղագս մեկնութեան Պերի արմենի[ասի]:

գ. էջ 253-281 Արիստոտելի իմաստասիրի Յաղագս ամենայն աշխարհի:

դ. էջ 282-321 (Բովանդակությունը նշված չէ Մ. Ծ. վրդ. Սեմերճյանի նկարագրության մեջ):

ե. էջ 321-462 Երանելոյն Գրիգորի Նիւսացւոյ ասացեալ Վասն բնութեան մարդոյ:

զ. էջ 463-552 Գրիգորի եպիսկոպոսի՝ եղբօր Բարսղի Տեսութիւն ի մարդոյ կազմութիւն:

է. էջ 552-560 Հերմա Եռամեծի Առ Ասկղեպիոս (Սահմանք).

ը. էջ 562-567 (Այլ գրչի կողմից ընդօրինակված Սմբատ Թագավորի հիշատակարանը — տե՛ս ստորև):

Հիշատակարան՝ Հատված

«...ի քաղաքն Կեսարիայ *և ի գիւղն* Յեւքառայ, *ընդ հովանեաւ* Սրբոյ Կարապետի... *սուրբ վանացն և ձեռամբ հանճարեղագոյն* Տէր Յակոբ *շնորհալի քահանայի»:*

(562) Յաղագս յիշատակարանին ի վերջ մատենի այնորիկ յորմէ մեք զգիրքս զայս օրինակեցաք, զոր բարեպաշտ թաւաւորն Սմբատ *ոտանաւոր չափմամբ շարադրեալ էր այսպէս.*

Ո՛վ հանճարեղք իմաստ բանիս

Եւ մակացուք լոյս արհեստիս,

Մտադրութեամբ միտ դիք բանիս՝

Անյաղթ գիտուն վարդապետիս,

1 Այս ձեռագրի նկարագրությունը, որը կատարել է Տեր Մեսրոպ ծ. վրդ. Սեմերճյանը, և Սմբատ Գունդստաբլի հիշատակարանի լուսապատճենը մեզ է տրամադրել պրոֆ. Ա. Ուլուհոճյանը (Նյու Ջըրզի): Տե՛ս Մաշտոցյան Մատենադարան, անտիպ ձեռագրացուցակներ N127:

Որ զընթհանուրն առեալ գոյիս,
Դնեալ բաշխեաց մարդկան ազգիս՝
Իբր զընթհանուր զկենդանիս,
Բաժանեաց ի ձիս և ի ջորիս,
Ջորս հոմանւամբք առնէ տեղիս,
Իսկ բաշխելով զանւանս գոյիս՝
Միաւորէ դարձեալ ի միս։
Եւ յարանւամբք գոլ նմանիս,
Որպէս յարի ազգէն արիս,
Կամ ի միոյն նոյնն իսկ առ միս։
Արդ, ո՞նց պատմեմ զո[յ]ժն զբանիս,
Երբ կարի խիստ կարճ է տեղիս։
Բայց թէ հազար կարճեալ բանիս,
Հարկն կոչէ զիս այս տեղիս՝
Յիշել զմայրն ամէն գոյիս
Եւ զպատճառն ծնընդականիս,
Զգոյացութիւնն որով լինիմք
Եւ գոյանամք ի յաշխարիս։
(563) Եւ զիննէքին ընկերք սորին,
Որ սա գլուխ է տասնէկիս,
Ջորս անւանեաց Արիստոտէլ
Ստորոգութիւնք տասն սեռիս.
Եւ զոր գրեաց Արիստոտէլ
Նամակ և գիր զարմանալիս
Առ Աղեքսանդր իւր աշակերտ
Տիեզերակալ երեգ կուսիս,
Երբ հեռացեալ էր ի նմանէ
Առնուլ զչորս կողմն աշխարհիս,
Ջորս ընթհանրեաց ի քիչ տեղիս՝
Զգիտութիւն անճառելիս
Եւ ժողովեաց ի միասին
Զիմանալիս և զգալիս,
Ընթերցիք և զարմացիք,
Որք ի խնդիր լինիք բանիս,
Զմակագիր բնութեան ազգիս.

Գրիգորի Նիւսայ վարդապետիս,
Որ ժողովեալ ի մի տեղիս,
Յարմարեցի ի պատեհիս՝
Եւ մեղաւորս և ողբալիս,
Տրուպ զինւորս և եղկելիս,
Սմբատ *անուն իմ հայկազնիս,*
Տէր և պարօն Պապեղօնիս
Եղբայր Հէթմոյ *թագաւորիս*
Եւ սպայապետ հայոց գնդիս։
Նոյն և շինօղ ի բնէ նորոյ
Զանառ դղեակն անմարտելիս,
(564) Որ ըստ իմոյ անւանս եդի
Սմբատակլայ *քաջ ամրոցիս։*
Զորս աղաչեմ զամենեսին,
Որք ընթերցօղ լինիք գըրիս,
Խնդրել պա[ր]գևս ի Քրիստոսէ
Զթօղութիւն մեղաւորիս,
Եւ պարգևօղն առատաձիր
Տրիտուր բարեաց այս է բարիս,
Ի հայ ազգիս ի թվականիս
Ի վեցհարիւր իննսուն երրորդիս (տողամէջ՝ «693»)
Գրեցի վաթար ձեռօքս
Անլար ըզգիր յիշատակիս։

Եւ աստուծոյ մեծին հզօրին, անմահին, միայն կարողին, ընդհանուր գոյիցս արարողին և յետ ճշմարիտ հայրենի տէր և յետմնաց մնացողին, զի սուտ և խաբեբայ է ասել այլ ումէք ապրել կամ վայելել և կամ ճոխեալ ի վայելչութիւնս աշխարհի, բայց միայն ի նմանէ, այլ մահկանացուածս պարտ է ամենայնի խոկալ զմեռանիլն ըստ գրոյն և տեկանաւն և գործնականաւն զարդարել զբարս և զմշտնջենաւորին առնակից լինել, որում պարգևողին փառք յաւիտեանս. ամէն։

Ծնթ. *Սմբատ Գունդստաբլի այս հիշատակարանը այլ ձեռագրից հատվածաբար (տողք՝ 41-48, 49-52 և 59-62) հրատարակել է Ղ. Ալիշանը նախ «Սիսուանում» (1885, էջ 71 և 76), այնուհետև ամբողջապես՝ «Հայապատումում» (1901, էջ 481-482), իսկ Գ. Հովսեփյանը իր «Ցիշատակարանք ձեռագրացում» (1951, էջ 954) բերել է դրա մի այլ տարբերակը, վերցնելով Գրիգոր Նյուսացու «Յաղագս բնութեան» և Արիստոտելի «Ստորոգութիւնք» աշխատութիւնները ընդգրկող մի ձեռագիր մատյանից, որը Սմբատ Գունդստաբլի պատվերով ընդօրինակվել է 1239-1244 թթ.։*

Հիշատակարանը այստեղ կրկին հրապարակում ենք ամբողջությամբ, որովհետև սա ևս մի նոր տարբերակ է և ունի բազմաթիվ տարընթերցումներ:

19
ԱԻԵՏԱՐԱՆ
(Ֆրեզնո, Սուրբ Երրորդություն Մայր եկեղեցի, N3)

ՌԻԶ-1577

Հիշատակարան. Գրչի

Փառք... Շնորհիւ Տեառն սկսայ և խնամալք նորին կատարեցի եռափափաք սիրով հոգւ... (հաջորդ թերթն ընկած) սորին հեք և փանաքս, և տկար անձամ[բ] կատարեցի զառած[ե]ալ մեղալք Տէր Ռուբիանոս *(՞), մեծ* Տէր Թումայ, *միջնեկ* Տէր Թումէն, *փոքր* Տէր Թումայ, Տէր Դանիէլ, Վարդանէս, Մկրտիչ, Մազլում, Աւանէս, Նաւասարդ, Սարգիսին, Նաւասարդին, Մարիանին, Անթառանին, եղիսաբեթին, Հոռոմսիմին, Մարգարիտին, Փանոսին, Սիմէոնին, Մարտիրոսին *և ամենայն ար[ե]ան մերձաւորեաց կեն[դ]ան[ե]աց և ննջեցելոց յիշեցէք առ Քրիստոս, և Աստուած զձեզ յիշէ իւր միւսանգամ գալըստեան. ամէն:*

Յետոյ գրեցօ սակաւ յիշատակարանս. թվին ՌԻԶ (1577) էր. անմեղայդիր լերուք, զի կար մեր այս է:

Հետագայի

ա. Արդ, վերջին ըստացող սուրբ Աւետարան[ի]ս հեզահոգի և բարէմիտ աստուածասէր Ծատուրին *և ծնողացն իմոց՝* Դանելին *և մայրն՝* Շահփարին *և կողակցին՝* Հուրին *և եղբօրն իմ՝* Ավաին, *կողակցին՝* Հէրիին, *որդին՝* Ալահվէրտին: *Դարձեալ յիշեցէք* Ծատուրն, *որ սուրբ Աւետարանս գերի էր անգեալ ի ձեռն տաճկաց, որ ազատեաց սայ հալալ վաստակօք՝ իւրեանն յիշատակ: Դարձեալ յիշեցէք տանուտէր* Ծատուրն, *կողակցին՝* Հուրին, *դուստր* Շնաւտրն, *որ առ Քրիստոս է հանգուցեալ: Դարձեալ յիշեցէք* [Ե]զիկելի *թոռն* Տէր Կարապետ, *որդի՝* Դանել, Դաւիթն, Սարգիսն, *յիշեցէք* Ավաֆ, *կողակցին՝* Հէրիֆ, *որդի՝* Ալահվէրտին:

Դարձեալ յիշեցէք բարէմիտ Ծատուրն, *որ ետ նորոգել սուրբ Աւետարանս, անարժան և սուտանուն* Բարսեղ *իրիցոյ, և յուսուցիչ իմ* Սարգիս *քահանայն, որք ողորմին ասէք, ամէն: Թվին ՌՃՀԶ (1727) նորոգեցաւ ի գուղ, որ կոչի* Պարսումէցիֆ: *Ով որ ծախի կամ կրաւի սուրբ Աւետարանս ԳՃԺԸ (318) հայրապետաց նզովեալ լնի, Ուդայի մասնակից իւի:*

Ո՛վ եխբայրք, Սարու Մուստափայ փաշէն, *որ* Գանճայ *առաւ թվին ՌՃՀԳ (1724) էր:*

բ. (Շեղագիր) Ո՛վ եղբայրք, երէք թուխտ կարթայ այս կօղմից, թիւն կու իմանաք. որ է թիւն 1026 թիւն (1577), նօրօգեալ է 1196 թիւն (1747):

20
ԱԻԵՏԱՐԱՆ
(Նյու Յորք, Արսեն և Արմանդ Փուշմաններ, N1)
Խնդրակատար Ս. Աստուածածնի վանք ՌԼԳ-1584

Գրիչ՝ *Հովհաննես վրդ.,* *Ներսես աբեղա:* Ստացող՝ *Տէր* Աբրահամ: Թերթ՝ *285:* Նյութ՝ *թուղթ:* Մեծություն՝ *13x18:* գրություն՝ *երկսյուն:* Գիր՝ *բոլորգիր:* Տող՝ *21:* Մաուրանկարչություն՝ *Խորան՝ 10 (Եվսեբիոսի թղթով և համաբարբառ կանոններով): Մատթեոս՝ 6բ, Մարկոս՝ 86բ, Ղուկաս՝ 140բ, Հովհաննես և Պրոխորոն՝ 223բ: Կիսախորան՝ 7ա, 87ա, 141ա, 224ա: Լուսանցազարդ՝ բուսական: Զարդագիր՝ թռչնագիր:* Կազմ՝ *կաշեպատ տախտակ, դրոշմազարդ, աստառը՝ անզարդ գործվածք:* Պահպանակ՝ *սկզբում և վերջում մեկական չգրված անմշակ մագաղաթ:* Վիճակ՝ *բավարար:*

Հիշատակարան. Գրչի

Փառք... Արդ, կատարեցաւ աստվածախաւս և տիեզերաքարող Աւետարանս ի խնդրոյ պատուական և հաւատարիմ կրօնաւորին Տէր Աբրահամուն՝ ի յիշատակ հոգոյ իւրոյ և ծնաւղաց իւրոց, հաւրն՝ Թումաջանին և մօրն՝ Բեգիջանին, եղբօրն՝ Սահակին և կողակցին՝ Ջանազանին և որդոց նորին՝ Տէր Յակոբին, Վարդանին, Առսէնին, Նուրիջանին, Միրզաջանին և այլ եղբարցն՝ Մելիխեթին, Սարխոշին, և զհօրեղբաւր որդիքն՝ զՏէր Յովանէս և զՏէր Մովսէսն, զջոջ մամն իւր՝ զՏալիթէն, և այլ ամենայն արեան մերձաւորաց՝ կենդանեաց և հանգուցելոց. ամէն:

Եւ արդ, ես ունայնս ի բարեաց գործոց, որ անուամբ եմ և էթ և ոչ արդեամբք տէր ձայնիւ բարձրացեալ երէց գոլով և հոգով կո[ւ]րացեալ և մտաւք մոլար, ըստ իմում տկարութեանս գրեցի զսուրբ Աւետարանս ի վանքս որ կոչի Խնդրակատար, *ընդ հովանեաւ* Սուրբ Աստուածածնին *և այլ ամենայն սրբոցն:*

Եւ արդ, յայսքան և յայսպիսի բարեվայելուչ և մեծափառ սրբոցս գումար՝ բարեխօս աշխարհի և ապաւէն ապաստանի և քաւութիւն մեղուցելոց, զոր դիմեալ մեծաւ յուսով բարի արմատոյ շառաւիղն կատարեալն հաւատով և գործովք բարեաց զՏէր Աբրահամն *կրաւնաւորն, որ ստացաւ զսուրբ Աւետարանն ի հալալ արդեանց իւր՝ յիշատակ իւր և ծնաւղացն իւրոց, հաւրն՝ Թումաջանին և մօրն՝ Բէգիջանին, եղբօրն՝ Սահակին, և կողակցին՝ Ջանազանին և որդոց նոցին՝ Տէր Յակոբին, Վարդանին, Առսէնին, Նուրիջանին, Միրզաջանին, և այլ եղբարցն՝ Մելիխեթին, Սարխոշին, և հաւրեղբօր որդոցն՝ Տէր Յովանիսին և Տէր Մովսէսին, և ջոջ մամուն՝ Տալիթին, և ամենայն արեան մերձաւորաց՝ կենդանեաց և հանգուցելոց, զոր Տէր մեր Յիսուս Քրիստոս ողորմեսցի նոցա և թողութիւն շնորհեսցէ մեղացն նոցա և արժանի արասցէ արքայութեան իւրոյ. ամէն:*

Արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս ի թվականիս Հայոց ՌԼԳ (1584) ձեռամբ մեղաւոր Յովաննէս *նորաբոյս վարդապետի, որ յայսմ ամի եառ զգաւազանն շնորհալի և զիս՝ զանարժանս և զմեղաւոր անպիտանս, ունայնս ի բարեաց և փարթամս ի չարեաց* զՆերսէս *աբեղայս, որ միայն զանունս ունիմ և ոչ գործս: Եւ որք կարդայք կամ աւրինակէք, լի բերանով Աստուած-ողորմի ասացէք ինձ* Յովհաննէս *վարդապետի և ծնօղաց իմոց, հօրն՝*

Մատիւոսին *և մօրն՝* Շահուստանին, *և եղբարցն՝* Աբրահամուն *և* Խալիֆին, *և քուերցն և զամենայն արեան մերձաւորս, և զիս անարժանս* զՆերսէս՝ *մօրաքուերորդին նորին:*

Հետագայի

ա. 283բ. Ողորմի Աստուած Սախակին *և իւր կողակցին՝* Ոսկուն *և իւր որդոյն* Վա[ր]դանին, Սարգսի *և քուրոչն* Ջանայզանին, *որ զԱւետարան եղն մեր գնեց. Աստուած զուր մեղք թողնու. ամէն:*

բ. 284ա. Այլ և վերջապէս Աստուած-ողորմի ասացէք Նուբարին, *որ աշխատեցաւ կամ սպասաւորեաց սուրբ Աւետարանին. ևս Աստուած ողորմի ասացէք* Նուբարին, Մանուշակին, Յարութէնին. *ամէն:*

գ. 284 բ. Յիշեցէք ի Քրիստոս զՍախակ *և* զՍառայ, Այլմայստ, զԱյլթուն, *որ ազատեաց ի գերութենէ սուրբ Աւետարան:*

դ. 285բ. (Անընթեռնլի հիշատակագրութիւն. միայն կարդացվում է «ՌՁԳ» (1634) թվականը):

21
ԱԻԵՏԱՐԱՆ
(Նյու Յորք, Վարդան Վարդանյան)

ԺԶ-ԺԷ-XVI-XVII

Գրիչ՝ *Բարսեղ կր.:* Թերթ՝ *281:* Նյութ՝ *թուղթ:* Մեծություն՝ *12,5x17,5:* գրություն՝ *երկսյուն:* Գիր՝ *բոլորգիր:* Տող՝ *23:* Մանրանկարչություն՝ *Խորան՝ 10 (Թուղթ եվսեբի՝ 2բ, 3ա և Համաբարբառ կանոններ՝ 4բ, 5ա, 6բ, 7ա, 8բ, 9ա, 10բ, 11ա): Տիրամայր՝ 12բ, Քրիստոս՝ 13ա: Մատթեոս՝ 16բ, Մարկոս՝ 92բ, Հովհաննես՝ 221բ: Կիսախորան՝ 17ա, 142ա, 222ա: Լուսանցազարդ՝ բուսական:* Կազմ՝ *կաշեպատ տախտակ, աստառը՝ հասարակ գործվածք:* Պահպանակ՝ *թուղթ:* Վիճակ՝ *բավարար, բայց թերթահան:*

Ծնթ. *Ձեռագիրը Վ. Վարդանյանը ժառանգել է Թավրիզում՝ իր մորից:*

Հիշատակարան. Գրչի

89բ. Ջծոյլս ի բարին Բարսեղ *և եթ կրօնաւորս յիշեսջիք ի մաքրափայլ յօղօթս ձեր. ամէն:*

138բ. Ջառածեալս մեղօք Բարսեղ *և եթ կրօնաւորս յիշեսջիք ի Տէր:*

219բ. Աւրհնութիւն որ կարդայ, գովութիւն՝ որ լսէ. փառք տուողին և յիշատակ Բարսեղ *և եթ կրօնաւոր գրչիս. ամէն:*

Հետագայի

280բ. Ջսրբոյ Աւետարանիս զըստացօղն և զընծայ տուողն Սրբոյ Աստուածածնի *եկեղեցւոյս ոչ գոյր գրեալ ի սուրբ Աւետարանս, որոյ տըւօղն և նւիրօղն յիշեալ լիջի առաջի Քրիստոսի Աստուծոյ, և գտցի ողորմութիւն յաւուրն աներեկի անհուն գթութեան նորին. ամէն:*

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զնորոգող և զկազմել տըւօղ սուրբ Աւետարանիս՝ զաւագէրէց սրբոյ եկեղեցւոյս զՏէր Յովսէփն հանդերձ իւրովք միաբանիւքն. ամէն։

Նորոգ կազմ սորին եղև ի թուականութեանս ՌՃՂԱ (1742) և յունվարի Ա (1) ///։

22

ԱԻԵՏԱՐԱՆ

(Նյու Յորք, Արսեն և Արմանդ Փուշմաններ, N4)

ԺԶ-ԺԷ-XVI-XVII

Թերթ՝ *28:* Նյութ՝ *մագաղաթ:* Մեծություն՝ *11x16,8:* գրություն՝ *երկսյուն:* Գիր՝ *բոլորգիր:* Տող՝ *23:* Մանրանկարչություն՝ *Լուսանցազարդ՝ ավետարանական թեմաներով: Զարդագիր՝ թռչնագիր, հանգուցագիր:* Վիճակ՝ *վնասված և պակասուռ:*

Ծնթ. *Ձեռագիրը Փուշմանների հայրը, անվանի նկարիչ Հովսեփ Փուշմանը (մահ. 1966), ստացել է գրող Զապել Եսայանից Փարիզում:*

23

ԱԻԵՏԱՐԱՆ

(Սան Ֆրանցիսկո, Ջ. Մարտիկյան, N3)

Սեպ-Խիզան ՌԺԴ-1605

Գրիչ՝ *Մխիթար:* Ծաղկող՝ *Տեր Խաչատուր: Մեսրոպ սկ.:* Ստացող՝ *Հովհաննես ք՟.:* Թերթ՝ *312:* Նյութ՝ *թուղթ (մագաղաթ՝ 312):* Մեծություն՝ *14,5x19,5:* գրություն՝ *երկսյուն:* Գիր՝ *բոլորգիր:* Տող՝ *20:* Մանրանկարչություն՝ *Մարկոս՝ 86բ, Ղուկաս՝ 142բ, Հովհաննես՝ 236 բ: Կիսախորան՝ 1ա, 87ա, 143ա, 237ա: Լուսանցազարդ՝ բուսական:* Կազմ՝ *կաշեպատ տախտակ, դրոշմազարդ:* Վիճակ՝ *բավարար, միայն Մարկոս և Ղուկաս ավետարանիչների պատկերները վնասված:*

Ծնթ. *Ձեռագրի մի քանի էջերի վրա դրված է գրաքննչական պարսկերեն կնքադրոշմ (տե՛ս N4 ձեռագրի ծանոթ.):*

Այս Ավետարանի մասին գրել են՝ Մ. Սմբատյանցը («Նկարագիր ս. կարապետի վանից երնջակա...», 1904, էջ 308), Ե. Լալայեանը («Ազգագր. հանդես», 1905, էջ 159), Մ. Մաքսուդյանը («Արարատ», 1911, էջ 315), Գ. Հովսեփյանը («Հայաստանյայց եկեղեցի», 1944, հոկտ., էջ 20): Գրչի հիշատակարանը, ըստ «Արարատի» (որտեղ կան փոքր վրիպակներ) հրապարակված է «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններում», հ. Ա (կազմեցին Վ. Հակոբյան և Ա. Հովհաննիսյան, 1974, էջ 191):

Ձեռագիրը ժամանակին ունեցել է 351 թերթ, պակասում են սկզբի 26 թերթերի վրա եղած մանրանկարները և խորանների մեծ մասը:

Հիշատակարան. Գրչի

310ա. Աղաչեմ զձեզ յօժար սրտիւ,

Որք հանդիպիք այսմ տառի,

Յիշման առնէք զմեզ արժանի.

Եւ որ ասէ Աստուած-ողորմի

Ըստացօղի սուրբ Աւետարանի՝
Քաջ և արի Տէր Յովանիսին,
Որ մականուն Քաշիշ *կոչի.*
Ի միտ առեալ զբանն Եսայի,
Որ ասէ թէ՝ երանի,
Որ ունիցի ընդանեակ յերուսաղէմ,
Եւ զաւակ ի Սիովնի։
Ըստացաւ զսայ յաւժար սրտիւ,
Հալալ արդեանց իւր ամենի,
Սա է անջինջ սուրբ յիշատակ
Հոգոյ իւրոյ և ծնօղի՝
Տէր Միխայէլ *անուն կոչի,*
Եւ մօր նորա՝ Փաշաջանի։
Եւ որ առատն է պարգևի՝
Քրիստոս Աստուած ամենայնի,
Զարքայութիւն տացէ ձրի
Տէր Յովանէս քաջ վարպետի,
Եւ սուտանուն Մխիթար *գրչի,*
Որ տկար անձամբ ի յանձն առի,
Եւ տառապեալ կենօք գրեցի
Ի դառն և ի նեղ ժամանակի, || *(310բ)*

յորում նեղիմք ի յանօրինաց հարկապահանջութենէ, ևս առաւել ի սղութենէ հացի, որ լիտր ալիւրն ի Գ (3) շահի ու Գ (3) փարայ ծախեցին։ Ու ղըզըլպաշն եկաւ ի վերայ Վանայ *ու բազում ոճիր գործեաց, ու արենհեղութիւն արարին ի միմեանց, բայց զառաջիկայն Աստուած գիտէ, որ աշխարհս ամէն ի մէջ նեղութենաց և տառապանաց է, մեթէ մթան լուսարարն Քրիստոս՝ լոյս առնէ ամենայն աշխարհի։*

Շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զսուրբ Աւետարանս ի յերկիրն Մայեկաց, *ի գեօղն որ կոչի* Սեպ, *և ծաղկեցաւ ի մայրաքաղաքս* Խիզան, *ընդ հովանեաւ սուրբ է խորանացս՝* Սուրբ Յարութեան *և* Սուրբ Աստուածածնին, Սուրբ Յովանիսին *և* Սուրբ Գրիգորին, Սուրբ Ստեփանոսին, Սուրբ Սարգսին *և* Սուրբ Մարտիրոսին, *ի թուականիս Հայոց ի ՌԾԴ (1605), ի հայրապետութեան Տեառն* Տէր Մելքեսէթ *կաթողիկոսի էջ||(311ա)միածնայ և ի մերոյս* Ախթամարայ՝ Տէր Գրիգորիս *կաթողիկոսի Ամենայն Հայոց։*

Արդ, աղաչեմք զամենեսեանդ՝ զմանկունդ սուրբ եկեղեցւոյ, զի որք հանդիպիք սուրբ Աւետարանիս տեսութեան՝ կարդալով կամ օրինակելով և կամ հարևանցի տեսանելով, նա Աստուած-ողորմի ասացէք ինձ՝ մեղապարտ Գրիգորիսի, *և հօրքւէր որդոյն իմոյ՝* Տէր Խաչատուր *վարպետին, և* Մեսրոպ *սարկաւագին, որ աշխատեցան ի հետ անարժանիս՝*

ի ծաղկել սուրբ Աւետարանիս, և մեղաց թողութիւն հայցեցէք մեզ և ծնողաց մերոց և ամենայն աշխատաւորացս ի սմա. ամէն:

Արդ, որք ճաշակէք յաստուածային սեղանոյս և վայելէք յանմահական բուրաստանէս, նա Աստուած-ողորմի ասացէք և մեղ[աց] թողութիւն հայ[ցե]ցէք ըստ[ացողի] Աւետա[րանիս Տէր] Յովաննէս *բ[արեմիտ] քահանային և ծն[ողա]|| (311բ)ցն՝ մահդասի* Տէր Միխայէլին *և* Փաշաջանին, *և կողակցին՝* Ահլիփաշին, *և որդոցն՝* Վարդանիսին, Յոհաննիսին *և* Ամիրսէթին, *և եղբօրն՝* Ամիրսէթին՝ *և քւերն՝* Նուրանփաշին, *և հօրեղբարցն՝* Միրաքին, Գուլազըզին *և մահդասի* Ամիրազըզին, *և իւր որդոցն՝* Տէր Գրի[գոր]ին *և* Սեմեոն[րիմին], *և ամենայն ազգա[կանաց] նոցին՝ կեն[դանեաց] և հանգու[ցելոցն], և որ ասէ [զԱստուած] ողորմին, նա Աստուած իւրն ողորմեսցի. ամէն:*

Դարձեալ կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զըստացող սուրբ Աւետարանիս՝ զհեզահոգի Յովաննէս *քահանայն, և ըզծնօղսն իւր՝* Տէր Միխայէլն *և* զՓա[շա]ջանն, *և զայլ ամենայն արեան մերձաւորս սոցա՝ զկենդանիս և զհանգուցեալս, և որ ի սուրբ գիրքս աշխատանք և երախտիք ունին, նա Տէրն ինքն Քրիստոս ողորմեսցի սոցա յիւր միւսանգամ գալուստն. ամէն:*

Հետագայի

312ա. Դարձեալ կրկին անգամ յիշեսջիք զվերջի ըստացօղ սուրբ Աւետարանիս և ոսկեզօծ բուրաստանիս՝ Ագուլեցի *պարոն* Թումասն, *որ ի դառնալն յերկրէն հընտկաց ի* Թէոդոպոլիս, *հանդիպեալ էր անտանօր սրբոյ Աւետարանիս, զոր ուխտիւ ըստացաւ զսա ի հալալ ընչից իւրոց՝ առ ի ընծայելոյ ի դուռն* Սուրբ Թովմայի *առաքեալի վանիցն, որ զկնի գալոյն իւրոյ յԱգուլիս, եբեր ընծայեաց ի դուռն* Սրբոյ *առաքելոյս* Թովմայի, *և ետ յիշատակ իւրն և ծնողացն իւրոց՝ հեզահոգի հանգուցեալ մահտասի* Բաղտուն, *և մօրն՝* Մուրվաթին, *և կողակցոյն՝* Ասլուն, *և եղբարցն՝* Յովաննիսին, Գէորգին, Ստեփանին, *և քերցն՝* Ղայիթին, Աննային *և* Ոսկինարին, *որդւոցն՝* Կարապետին, *և դստերըն՝ || (312բ)* Սրբուհւոյն, *և այլ ամենայն արեան մերձաւորացն իւրաց. որ և յիշատակ անջնջելի լիցի իբրև որդի կենդանի ի մէջ սուրբ եկեղեցւոյ, բերելով զպտուղ անհատ միշտ յունկնդրութիւն կենդանեաց և հանգուցելոց, յազգաց յազգս և յորդւոց յորդի, անզրաւ յաւիտենիս. ամէն: Հայր մեր որ: Ըստացուած սորա եղև ի հազարերորդի հարիւրերորդի ութսուն և մի յարաբարդի (1732), յամսեանն սեպտեմբերի չօթնեներորդի:*

24
ԱԻԵՏԱՐԱՆ
(Նյու Յորք, Տիգրան Տեյիրմանճյան)

Խիզան ՌԾԸ-1608

Գրիչ և ծաղկող՝ *Կիրակոս:* Ստացող՝ *Ներսես արքեպիսկոպոս:* Թերթ՝ *343:* Նյութ՝ *թուղթ:* Մեծություն՝ *13,6x18,7:* գրություն՝ *երկսյուն:* Գիր՝ *բոլորգիր:* Տող՝ *21:* Մանրանկարչություն՝ *Աւետում՝ 5բ, Ծնունդ՝ 6ա, Քառասունօրյա գալուստ՝ 7բ, Մկրտություն՝ 8ա, Պայծառակերպություն՝ 9բ, Ղազարոսի հարությունը՝ 10ա, Մուտք երուսաղեմ՝ 11բ, Ոտնլվա՝*

12ա, Խաչելություն՝ 13բ, Թաղում՝ 14ա, Դժոխքի ավերումը՝ 15բ, Հարություն՝ 16ա, Հոգեգալուստ՝ 17ա, Խաչ տերունական՝ 18բ, Քրիստոսը քառակերպյան աթոռի վրա՝ 19ա: Խորան՝ 10 (Թուղթ Եվսեբի՝ 20բ, 21ա: Համաբարբառ կանոններ՝ 22բ, 23ա, 24բ, 25ա, 26բ, 27ա, 28ա, 29բ): Մատթեոս՝ 33բ, Մարկոս՝ 114բ, Ղուկաս՝ 173բ, Հովհաննես և Պրոխորոն՝ 265բ: Կիսախորան՝ 34ա, 115ա, 174ա, 266ա: Կազմ՝ *կաշեպատ տախտակ, դրոշմազարդ:* Վիճակ՝ *բավարար:*

Ծնթ. *Ձեռագիրը Տ. Տեյիրմանճյանը գնել է 1943 թ. հունվարին, Նյու Յորքում, պարսկական և Մերձավոր արևելյան արվեստի գործերի Քարմինաթիի հավաքածուի հրապարակային աճուրդում: Այս հավաքածուի մեջ եղել են նաև այլ հայերեն ձեռագրեր, Լևոն հայոց արքայի 1197 թվականի արձանագրությամբ թուրը և հայկական պղնձե մի խաչ. ձեռագրերից երեքը՝ ըստ աճուրդի ցուցակի (տե՛ս The Carminati Collection of Persian art. Public Auction sale. Parke – Bernet Galleries, Inc., 1943) NN 155, 156 և 170, գնել է Նյույորքաբնակ պրն. Հարություն Հազարյանը, իսկ մնացած հինգ ձեռագրերի (NN 23, 115, 150, 157, 161) և վերոհիշյալ իրերի ճակատագիրն անհայտ է:*

1972 թ. փետրվարի 14-ին Նյու Յորքում պրն. Տ. Տեյիրմանճյանը տողերիս գրողի միջոցով Մաշտոցի անվան Մատենադարանին նվիրեց այս ձեռագիրը (N10520): (Տես նկար XVIII, 5)

Հիշատակարան. Գրչի

334ա. Փառք ...|| (337ա) ... Ումն ի լուսածնեալ զարմից Ներսէս *արքեպիսկոպոս, զոր ի վաղուց հետէ ցանկայր աստուածախօս այսմ մարգարտաշար, լուսափթիթ սուրբ Աւետարանիս, և ետ գրել՝ յիշատակ բարի հոգւոյ իւրոյ և ծնողաց իւրոց, ի միտ առեալ զբանն || (337բ) Եսայեայ, որ ասէ. Երանի որ ունիցի զաւակ ի Սիոն և ընդանեակ յԵրուսաղէմ: Վասն այն յուսոյն ետ գրել զսուրբ Աւետարանս և զարդարել ետ ոսկւով և երանգ երանգ ծաղկով, յիշատակ իւրն և իւր ծնողացն, հօրն՝ Գրիգորին և մաւրն՝* Մոջանին, *և եղբարցն՝* Վանէսին, *և որդոցն՝* Վարդանիս[ի]ն, Դաւթին, Յոհաննիսին, Սարգսին, *և միւս եղբօրն՝* Նահապետին, Թումին *և որդոյն* Մարգարին, *դստերացն՝* Մոջանին, Թաւէզին, Մարգարտին *և քւերն՝* Ռուսին, *և ամենայն արեան մերձաւորաց նոցին. ամէն:*

Արդ, որ ճաշակէք յամենառատ սեղանոյս և վայելէք յաստուածային բուրաստանէս, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր առաջին անարիւն զենմանն ի ժամ սոսկալի սուրբ պատարագին և լի սրտիւ և բոլոր հաւատով Աստուած-ողորմի ասացէք ստացողի լուսապայծառ սուրբ Աւետարանիս՝ Ներսէս *եպիսկոպոսին, և ծնողաց նորին, հօրն՝* Գրիգորին, *և մօրն՝* || *(338ա)* Մոջանին, *և եղբարցն՝* Վանէսին, Նահապետին, Թումին, *և որդոցն՝* Դաւթին, Վարդանիսին, Սարգսին, Յոհաննիսին, Մարգարին, *և ամենայն արեան մերձաւորաց նոցին. ամէն:*

Եւ արդ, ես յետինս ի կարգաւորաց և անարժանս ի մանկունս եկեղեցւոյ, անարուեստ ի գիրս գրչութեան՝ Կիրակոս *անարժանս, հրաման առեալ ի պատուիրանադիր առաքելական բանէն, որ ասէ. Յոր կոչումն կոչեցար՝ ի նմին կացջիր: Շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զաստուածախօս և զաստուածաբնակ տառս՝ զլուսազարդ սուրբ Աւետարանս ի լաւ և յընտիր աւրինակէ, ի մեծ թուականիս Հայոց ի Ռ և Ծէ (1608) ամին, ի քաղաքիս, որ կոչի* Խիզան, *ընդ հովանեաւ աստուածաբնակ սուրբ տաճա-*

բացս՝ Սուրբ Յարութեան *և* Սուրբ Աստուածածնին, Սուրբ Յովաննէս Մկրտչին, Սուրբ Ստեփաննոսին *և* Սուրբ Գրիգորին, Սուրբ Սարգսի Ջօրավարին *և որդւոյ նորա* Մարտիրոսին, *ի հայրապետու||(338բ)թեան տեառն* Աղթամարայ *նորընծայ* Ստեփաննոս *կաթողիկոսին. Տէր Աստուած պահեսցէ զնա անսասան ի պարծանս մեր ի հ... (ընդհատված)։*

339ա. Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զՆերսէս արհ[ի]եպիսկոպոսն և Աստուած-ողորմի ասացէք նմա։ Ես Ներսէս *եպիսկոպոս գնացի սուրբ քաղաքն* Յերուսաղէմ *և հանդիպեցա այս աստուածախօս Աւետարանիս, և ըստացայ ըզսա ի հալալ յարդեանց իմոց՝ յիշատակ հոգւոյ իմոյ և ծնողաց իմոց, հօրն՝* Գրիգորին *և մօրն՝* Մոջանին, *և եղբա[ր]ցն՝* Վանիսին, *կողակցին՝* Սալամին *և որդոցն՝* Վարդանիսին, *կողակցին՝* Նղաշին *և որդոցն՝* Գրիգորին, Վարդխաթունին, Սահակին, Աւետիսին, Դաւթին, *կողակցին՝* Մոջանին, *որդոցն՝* Բարուճակին, Յովանիսին, Դարմանին, *դստերցն՝* Նարգզին, Խաթունին, Յովանիսին, *կողակցին՝* Ինախին, *դստերն՝* Շուշանին, Սարգսին, *կողակցին՝* Խանումին, *որդո[յ]ն՝* Աբրահամին, *քրւերն՝* Ջադին *և իւր որդոցն, եւ միւս եղբօրն՝* Նահապետին, *կողակցին՝* Ալամին, *զաւակացն՝* Հայրապետին, Մոջանին, Թաւէզին, *և միւս եղբօրն՝* Թումին, *կողակցին՝* Ջանեկին, *որդոյն՝* Մարգարին, *կողակցին՝* Սա||*(339բ)*լամին, *որդոյն՝* Կարապետին, Հոռոմին, *քրւերն՝* Աւուսին, *որդ[ո]ցն՝* Մարգարին, Հայրապետին, Մրկտչին, *և հարսին՝* Ղարիպ խաթունին, *և հօրեղբարցն իմոց՝* Սահակին, Միլիտոնին, *որդո[յ]ն՝* Մուրատին, *կողակցին՝* Խաթունին, *որդո[յ]ն՝* Առաբելին, *կնոջն՝* Հոռոմին, *և* Սաւսնին, *կողակցին՝* Գուլումին, *որդոցն՝* Պարսամին, Գրիգորին, Խանէսին, Խլղաթին, *և գեղի քահանայիցն և տանուտերացն՝* Տէր Յոհաննիսին, Վարդանիսին, Սահակին, *և ամենայն արեան մերձաւորաց սոցին, և որ լի բերանով և բոլոր սրտիւ Աստուած-ողորմի ասէ սոցա, Աստուած իւրն ողորմեսցի. ամէն։*

Քրիստոս Աստուած, քո անճառելի ծնընդեամբդ և աքանչելի յարութեամբդ ողորմեա և մեղաց թողութիւն շնորհեա Ներսէս *արքեպիսկոպոսին և ծնողաց նորին, հօրն՝* Գրիգորին *և մօրն՝* Մոջանին, *և եղբարցն՝* Վանիսին *և* Սալամին, *և որդոց նոցին, միւս եղբօրն՝* Նահապետին, *[կողակցին՝]* Ալամին *և որդոց նոցին, և միւս եղբօրն՝* Թու||*(340ա)*մին, *[կողակցին՝]* Ջանեկին *և որդոց սոցին, և այնոցիկ, որ ի սուրբ Աւետարանս մասն ունիցին՝* Աստուած *լուսաւորէ զիւրեանց հոգին և զիւրեանց յիշատակն խաղաղական կենաւք պահէ. ամէն։*

340ա. (Նույն բոլորգրով) Դարձեալ յիշեցէք ի Քրիստոսի զվերջին ստացող լուսազարդ, պայծառ և պատուական սուրբ Աւետարանիս՝ զխօջա Ծատուրն, *որ ստացաւ սա ի հալալ և յարդար վաստակոց իւրոց յիշատակ, և ետ վերըստին ոսկով զարդարել զտնագլխներն ի վայելչութիւն սուրբ Աւետարանիս, յիշատակ հոգւոյ իւրոյ և իւր ծնօղացն, հօրն՝ խոջա* Մուրատին *և մօրն՝* Ջախաթունին, *և եղբարցն՝* Աղափիրուն *և* Աղամիրուն, *և կողակցուն || (340բ) իւրոյ՝* Դշխունին, *և որդոցն՝ խոջա* Գրիգորին, Մուրատին *և* Մանասին, *և դստերացն՝* Մէրտատիկին *և* Ջախաթունին, *և միուս կողակցուն՝* Շուշանին, *և որդոցն՝ խոջա* Աւետին, Խաչիկին, Աղափիրուն *և* Պետրոսին, *և դստերացն՝* Մէրտատիկ, Թագուհուն *և* Յուղիղին. *ամէն։*

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զխօջա Աւետիկն *և զկողակիցն իւր՝* Գուլնաբաթն *և զորդին իւր՝ խոջա* Խաչիկն *(շար. ուշ նոտրգրով) և զխօջայ* Աղափիրի, *և զկողակիցն իւր՝* Ազատխանն, *և զորդին իւր՝ պարոն* Ավետաղէն *և* գխօջամալըն *և* ըզՄուրասէն. *ամէնն։*

Հետագայի

ա. 340բ. /// Ի Նոր Ջուղայ թվին Փրկչի ՌՀՃԻԴ (1834) համիրայ, Աստուած պտուղ պարգևէց, օրն շաբաթ, որ էր սուրբ Յակոբայ տօնախմբութիւնն, խնդրո եմք, ղադամօվ լինի կամավն Աստուծոյ: Ես մեղավոր չնչին ծառայ՝ Գ. Մ.

բ. 344ա. Պարոն Տիգրան Տէյիրմանճեանի սոյն Աւետարանը քննեցի և յիշատակարանից առանձին թղթի վրայ գրեցի հարկաւոր տեղեկութիւնները:

Գարեգին արքեպիսկոպոս
[Յովսէփեան]

Նորթ. Պյրկին
1943, 30 նոյեմբ.

25
ԱԻԵՏԱՐԱՆ
(Նյու Յորք, Հ. Փ. Քրաուզ)

Սպահան ՌԴԿ-1615

Իրանի Սպահան քաղաքում գրիչ Հայրապետ երեցի ընդօրինակած և Մեսրոպ Խիզանցու ծաղկած այս Ավետարանի մասին առաջին տեղեկութիւնները տալիս է Հ. Տեր-Հովհաննեսյանցը («Պատմութիւն Նոր Ջուղայու», Ա, Նոր Ջուղա, 1881, էջ 67-68), ըստ որի մատյանը «կայ յԱմենափրկիչ եկեղեցւոջ Երևան թաղի»: Սակայն գեղեցիկ մանրանկարներով պատկերազարդված այս Ավետարանը հետագայում ընկել է Ժ. դը Մորգանի հավաքածուի մեջ. Ֆր. Մակլերը այն մանրամասն նկարագրել է «Ժուռնալ Ասիաթիքում» (տե՛ս Frédéric Macler. Notices de Manuscripts arméniens vus dans quelques bibliothéques de ℸEurope centrale, Paris, 1913. Extrait du Jurnal Asiatique (septembre – octobre et novembre – decembre, 1913, p. 643-651).

Պետք է ենթադրել, որ փոքր ինչ ավելի ուշ մատյանը Ժ. դը Մորգանից ձեռք է բերել հնագետ ու պատմաբան, Թուրքիայում Ֆրանսիայի նախկին դեսպան Ժան Պոզին, որի ձեռագրերն ու այլ հնութիւնները աճուրդով վաճառվեցին Փարիզում 1971 թ. ապրիլի 30-ին: Այստեղ խնդրո առարկա մատյանը գնեց Նյու-Յորքաբնակ գրավաճառ Հ. Փ. Քրաուզը (16 East 46th st., New York):

Պրն. Հ. Քրաուզը հոժարակամ մեզ ծանոթացրեց ձեռագրին և, մեր խնդրանքով, տրամադրեց մանրանկարների սլայդները:

Ձեռագրիս հիշատակարանը տե՛ս Վ. Հակոբյանի և Ա. Հովհաննիսյանի կազմած «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», Ա, Երևան, 1974, էջ 569-570:

26
ԺՈՂՈՎԱԾՈՒ
(Վաշինգտոն, Կոնգրեսի գրադարան, Arm. MS N3)

Հալեպ ՌՃՐ-1653

Գրիչ՝ *Աբրահամ երեց:* Ստացող՝ *Հովհաննես սրկ.:* Թերթ՝ *259 (էջ 518):* Նյութ՝ *թուղթ:* Մեծություն՝ *15x21:* գրություն՝ *միասյուն:* Գիր՝ *նոտրգիր:* Տող՝ *15:* Կազմ՝ *կաշեպատ տախտակ, դրոշմազարդ:* Վիճակ՝ *բավարար:*

Ծնթ. *Ձեռագիրը Կոնգրեսի գրադարանին է նվիրված՝ այս գրադարանի հայկական հավաքածոյի կոմիտեի և Բեյրութի հայկական մշակութային միության միջոցով 1953 թ. մարտի 15-ին: Կազմի վրա՝ «Near East 163»:*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ա. էջ 1. Առաքելի Սիւնեցւոյ Ադամգիրք:

բ. էջ 274. Քարոզ Վասն մարդեղութեան:

գ. էջ 292. Քարոզ Վասն յարութեանն Քրիստոսի:

դ. էջ 322. Քարոզ Վասն զղջման և ապաչխարութեան:

ե. էջ 347. Քարոզ Վասն խոստովանութեան:

զ. էջ 383. Քարոզ Վասն ապաչխարութեան:

է. էջ 408. Քարոզ Վասն ողորմութեան:

ը. էջ 451. Հանգիստ երանելոյն Յոհաննու աւետարանչին:

թ. էջ 464. Հարց Վահրամայ վարդապետի և պատասխանիք վարդապետին Վանականայ:

ժ. էջ 466. Պատմութիւն տնաւրէնութեան Քրիստոսի:

ժա. էջ 470. Քարոզ Աւագ ուրբաթուն՝ Վասն խաչելութեանն Քրիստոսի:

Հիշատակարան. Գրչի

էջ 515. Այս է Յիշատակարան գրոցս – *Փառք... Որ ետ կարողութիւն նուաստ ոգոյս՝* Աբրահամ *անարժան երիցւոյս, հասանել աւարտ գրոյս, որ է պատմութիւն նախահարւրն մերում Ադամայ...*

Արդ, այս ամենայն բարու||(էջ 517)թեանցս և աստուածատունկ բուրաստանիս ցանկացաւղ եղև սմայ աստուածամեծարն և հեզահոգին հոգևոր որդեակս մեր՝ Յովաննէս *սարկաւագն, որ է երկրէն* Արաբկեռու, *ի գեղջէն* Մաշկեռու, *եւ ետ գրել զսա ի հալալ ընչիցն և արդար վաստակոցն՝ յիշատակ իւր անձինն և իւր ամենայն արեան մերձաւորացն: Ջոր և հայցեմք և խնդրեմք ամենաւրհնեալ Տեառնէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, որ բարով վայելել տացէ սմայ երկար ամաւք և բազմերամ ժամանակաւք մինչև ի խորին ծերութիւն ամէն:*

Արդ, գրեցաւ սա ի թվականիս Հայոց ՌՃՐ (1653) ի մայրաքաղաքս ի Հալապ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին *և* Սուրբ Քառասնիմբ *եկեղեցեացս և այլ եկեղեցեացս, որ աստ կան || (էջ 518) հաւաքեալ ի պահպանութիւն ամենայն հաւատացելոց: Գրեցաւ սայ ի թագաւորութեանն տաճկաց* Սուլտան Մուհամատ *նորընծայ թագաւորին, ի կաթողիկոսու-*

Թեանն Տաճն Կիլիկ[իոյ Տեառն Տէր Ներսէսի *սրբազան հայրապետին և ի կաթողիկոսու-Թեանն* էջմիածնի Տէր Փիլիպպոս *խարազնազգեաց ճգնաւորի: Արդ, որք հանդիպիք սմայ կարդալով կամ աւրինակելով, կամ հարևանցի տեսանելով՝ յիշեսջիք ի մաքրափայլ և երկնաթռիչ աղաւթս ձեր զվերոյ յիշեալ* զՅովաննէս *սարկաւագն և զիս զանարժան գծողս՝* զԱբրահամ *երէցս, որ զանունս ունիմ և ոչ զգործս: Այլ որ առատն է ի տուրս բարեաց, տացէ ձեզ յիշելոցդ և մեզ յիշեցելոցս զիւր երկնից արքայութիւնն. ամէն: Հայր:*

27
ՇԱՐԱԿՆՈՑ
(Սան Ֆրանցիսկո, Ջ. Մարտիկյան, N4)

Իկոնիոն ՌՃԷ-1658

Գրիչ՝ *Գրիգոր:* Ստացող՝ *Աստուածածատուր մահդասի:* Թերթ՝ *362:* Նյութ՝ *թուղթ:* Մեծություն՝ *10,2x14:* գրություն՝ *միասյուն:* Գիր՝ *բոլորգիր:* Տող՝ *24:* Մանրանկարչություն՝ *Կիսախորան՝ 3ա, 12ա, 109բ, 137ա, 291բ, 312բ, 338բ: Լուսանցազարդ՝ բուսական: Զարդագիր՝ հանգուցագիր, թռչնագիր (կարմիր և կապույտ):* Կազմ՝ *կաշեպատ տախտակ, դրոշմազարդ, աստառը՝ ծաղկազարդ գործվածք:* Պահպանակ՝ *սկզբում 2 թերթ մագաղաթ:* Վիճակ՝ *բավարար:*

Հիշատակարան. Գրչի

362ա. Փառք... Արդ, գրեցաւ եղանակաւոր տառս, որ կոչի Շարակնոց, այսինքն՝ շարեալ ակունք, ի լաւ և յընտիր աւրինակէ, որ ասի Խլու Պապու, *որ է յընդկեալ և յըստակեալ առաջին վարդապետացն և վարժապետացն, ձեռամբ մեղսամած* Գրիգորիս, *ի յերկիրս* Իկոնիոն, *որ ասի* Ղօնիա, *ի դուռն* Սուրբ Աստուածածնին, *ի թվականիս Հայոց յամի ՌՃէ (1658):*

Արդ, որք հանդիպիք սմա ուսմամբ կամ աւրինակելով, յիշեսջիք զգծող սորա՝ զԳրիգորն *միով Տէր-ողորմեայիւ, որ և ձեզ լիցի ողորմութիւն յամէնողորմ արարչէն. ամէն:*

Եւ դարձեալ յիշեսցէք ի Տէր զստացող սորա՝ զմահդասի Աստուածատուրն, *որ այժմ հանգեաւ ի Քրիստոս: Ով ոք յիշէ՝ յիշեալ լիցի ի Քրիստոսէ. ամէն: Հայր մեր որ յերկինս:*

28
ԱԻԵՏԱՐԱՆ
(Նյու Յորք, Արսեն և Արմաո Փուշմանյաններ, N3):

Քարահատ գյուղ ՌՃԸ-1659

Գրիչ, ծաղկող և կազմող՝ *Գրիգոր երեց:* Ստացող՝ *Եղիա:* Թերթ՝ *319:* Նյութ՝ *մագաղաթ:* Մեծություն՝ *12x16,3:* գրություն՝ *երկսյուն:* Գիր՝ *բոլորգիր:* Տող՝ *19:* Մանրանկարչություն՝ *Խոբան՝ 8 (Թուղթ Եվսեբի՝ 3ա, 4ա և Համաբարբառ կանոններ 5բ, 6բ, 7ա, 8ա, 9բ, 10ա): Մատթեոս՝ 13բ, Մարկոս՝ 105բ, Ղուկաս՝ 162բ, Հովհաննես՝ 250բ: Կիսախորան՝ 14ա, 106ա, 163ա, 251ա: Լուսանցազարդ՝ բուսական: Զարդագիր՝ թռչնագիր և հանգուցագիր:* Կազմ՝ *կաշեպատ տախտակ, Ա փեղկին՝ արծաթյա խաչելություն:* Պահպանակ՝ *մագաղաթ:* Վիճակ՝ *բավարար:*

Հիշատակարան. Գրչի

313ա. Փառք... Աւարտեցաւ եռահրաշ և հոգիազարդ Աւետարանս ձեռամբ բազմամեղ Գրիգոր *լոկ անւամբ իրիցու, ի թըւականութեանս Հայոց ՌՃ և Ը-երորդի (1659), ի մարտ ամսոյ Ի (20), զոր էր շախկապեալ երանեալ աւետարանչացն ըստ բազմաերանգ գունոց ի մի ոստայն անկանելով հաճախ զոր արուեստակե[ա]լ անուշոցաց ծաղկանց եւղ եփեցական կազմութեամբ... Այսպիսի բիւր գանձուց և մեծագին մարգարտաց յոյզ և խնդիր էր զսրբասնեալ և ի մանկութենէ միայնացեալ մահդասի միայնակացն* Եղիա, *ի մանկութենէ լուեալ զհրամանս Տեառն, որ ասէ. Եթէ որ ոչ թողցէ զտուն իւր և զամենայն ինչ որ աշխարհայի[ն], ոչ կարէ իմ աշակերտ լինել: Վասն որոյ թողեալ յաշխարհ և որ ինչ աշխարհի է, աշակերտեցաւ հրամանացն Քրիստոսի, որ ասէ. Առ զխաչ քո և եկ ըզկնի իմ: Ի մանկութենէ իւրմէ առեալ յանձն զչարչարանս մարմնոյն և գնացեալ ի մէնարանն Ղարամուրատու ի յանապատն սուրբ: Եւ կեցեալ անդ ժամանակս ինչ, և հրամանաւ սուրբ հօրն իւրոյ տեառն* Տէր Տէրունի *մաքրազարդ և սրբաներկ կրօնաւորի, գնացեալ ուխտ ի սուրբ քաղաքն* Երուսաղէմ *և համբուրեալ լուսաբուղխ գերեզմանն Քրիստոսի: Եւ անտի դարձեալ եկն առաջին ուխտն իւր՝ ի անապատն սուրբ, և ստացաւ բազում գրեանս, և շատ շինութիւնս աւելացոյց ի յանապատին: Եւ յետ ժամանակաց վառեալ ի սէր սուրբ Աւետարանիս, հրամանաւ հօրն իւրոյ սրբոյ* Տէր Տէրունին *և կամակցութեամբ եղբարցն ամենեցուն, եկեալ առ մեզ, և խնդրեաց կատարել զցանկութիւնս սրտի իւրոյ: Եւ իմ՝ ձեռն եդեալ աւարտեցի զԱւետարանս սուրբ, և ծաղկեցի երբներբն գունովք և ոսկէզօծ որակօք՝ ի խնդրոյ նորին: Եւ յետ գծագրել զսա վասն յիշատակի հոգւոյ իւրոյ և հոգեւոր հօրն* Տէր Տէրունին: *Վասն որոյ հողմամած դիմօք աղաչեմ զդասդ սրբազանից զպատահողդ տիեզերաքարոզ սուրբ Աւետարանիս, յիշել սրտի մտօք յաղօթս ձեր զեղիայ միայնակացն, որ բազում ջանս և աշխատանս կրեաց ի վերայ սուրբ Աւետարանիս և բազում անգամ որդորեաց մեզ աւարտ հասուցանել, յիշել զնա և Աստուածողորմի ասել իւրն և ծնօղացն իւրոց. ամէն: Այլ և աղաչեմ զձեզ յիշել զմաքրասուն կրօնաւորն* զՏէր Տէրունն *և զմիաբանսն սուրբ ուխտին՝* զԳրիգոր *եպիսկոպոսն և* զԿարապետ *աբեղայն և* Տէր Եղիայն. *և զամենայն միաբանսն սուրբ ուխտին յիշել և Աստուած-ողորմի ասել. յիշօղքդ՝ յիշեաց լիցի[ք] ի Քրիստոսի Աստուծոյ մերոյ. ամէն:*

Եղև աւարտ սուրբ Աւետարանիս ի յերկիրս Գանջոյ, *ի գեղս որ կոչի* Քարահատ, *ընդ հովանեաւ* Սուրբ Աստուածածնին, *ի ժամանակս* Շահ Ապասին Փոռոյ *և ի կաթողիկոսութեան Հայոցս Աղուանից տեառն* Տեր Պետրոսի *մաքրասուն և սուրբ հայրապետի և կրկին լուսաւորչի, որ և խնամօք Աստուծոյ և շնորհօք Սուրբ Հոգւոյն և բարի քաղաքավարութեամբն իւրով լուսաւորեաց զխաւարեալ տունս Աղուանից և պայծառացոյց զեկեղեցիս կարգաւորութեամբ. որոյ Աստուածն ամենայնի տացէ նմա երկար կեանք և մեղաց թողութիւն: Եւ մերում եպիսկոպոսութեան բազմահանճար և պատուական քաւշապետի տեառն* Տէր Անտոնի՝ *վերադիտողի սուրբ Աթոռոյն Կաթուղիկէի վանիցն, որ յայսմ ժամանակի սա ևս բազումf քաջութիւնս արար ի կարգս և հաստատութիւնս հաւատոյ:*

Այլ և աղաչեմ յիշել զգծօղ, ծաղկօղ և կազմօղ սուրբ Աւետարանիս Գրիգոր *բազմամեղ երէցս հանդերձ ծնօղօք իմովք, և Աստուած-ողորմի ասել: Այլ և աղաչեմ անմեղադիր լինել պակասութեան սորա, զի մագաղաթն յոյժ վատ էր, մանաւանդ թէ ի ծաղկել համա-*

բարբառին, զկէս աւուրն տենտէի և սարսափէի և կէս աւուրն ի ստիպմանէ նկարէի ըստ խորհրդին և ոչ վայրապար։

Այլ և աղաչեմ յիշել զամենեսեան, որք ունի աշխատանս ի վերայ մեր և ի վերայ սուրբ Աւետարանիս։ Այլ և յիշել զվարպետ գործոյս իմոյ գՏէր Դաւիթն *և զծնօղն իւր, յիշել զամենեսեան վերոգրեալսն և լի սիրտիւ Աստուած-ողորմի ասել ամենեցուն, մանաւանդ ինձ գրողիս, որ յոյժ մեղաւոր եմ և ի մէջ նեղութեանց և ձեռաց չարեաց, և Տէրն փառաց ձեզ ողորմեսցի ի միւսանգամ գալստեանն իւրոյ. ամէն։*

161ա. (Նույն ձեռքով, ոսկեգիր) Յիշեցէք ի Քրիստոս զբարեմիտ և աստուածասէր Օլէն, *զհայրն իւր՝* Շահնազարն, *մայրն՝* Ախանն, *կողակիցն՝* Խանումն, *որդիքն՝* Ովանէսն, Գրիգորն, Գալուստն *և դստերքն՝* Թապառուկն *և* Խոսրովն. *յիշեցէք և Աստուած-ողորմի ասացէք, և Աստուած ողորմի ի գալստեան իւրում. ամէն։*

Հետագայի

ա. 314բ. Յարձեալ յիշեցէք Սարգիսն *և կողակիցն իւր* Ոսկանձն *և որդիքն իւր, որ ի գին սուրբ Աւետարանիս ետուն ՁՌ (6000) դեկան, որո Տէր Աստուածն մեր տացէ փոխարէն աստ և ի հանդերձեալն. ամէն։*

բ. 314բ. Եւ յետ ժամանակաց ես Եղիայ *և* Մխիթար *միայնակեաց քա[հանա՞յքս] հայեցաք ի գեղեցկութիւն ներքուստ Աւետարանիս և ցանկացաք արտաքուստ ևս զարդարել զտուփ սուրբ Աւետարանիս, որպէս և տեսանէքդ իսկ։ Եւ շնորհօք Սուրբ Հոգւոյն ելեալ շրջեցաք ի դրունս ողորմածաց, և ամենեքեան ըստ կարեաց իւրեանց արարին ողորմութիւն, զոր Տէր Աստուած ամենեցուն ըզվարձս հատուսցէ։*

Յարձեալ յիշեցէք արդիւնաւոր ողորմութիւն տուօղին Ուլուպէկի *որդի* Սարգսին *և կենակիցն՝* Գուլաղէն, *և որդին՝* Ուլուպէկն *և կենակիցն՝* Ինճէն, *և միւս որդին՝* Ատիպէկն։ *Այլ և յիշեցէք* Միխայէլն *և կենակիցն՝* Աղասուլթանն. *և դուստրն՝* Մարեան, *ևս առաւել՝* Տէր Յակոբն *և կենակիցն իւր՝* Յուստիանէն, *և որդին՝ Սիմէօնն։ Յարձեալ յիշեցէք* զՅակոբն *և զկենակիցն իւր, այլև* զՊալի *որդի* Վարդանն։ *Յարձեալ յիշեցէք* Շահնազարի *որդի* Օլէն *և կենակիցն իւր՝* Խանումն, *և այլ յամենայն յարեան մերձաւորսն իւր. ամէն։ Յարձեալ յիշեցէք* Յակոբն *և կենակիցն՝* Սառիկն, *և որդիքն և դստերքն. ամէն, և Դավիթ. ամէն։ Այլ և յիշեցէք* Թաւուզեցի Ոլուխանն *և կենակիցն՝* Թարվանդէն *և ամենայն ազգայինսն. ամէն։ Այլ և յիշեցէք* Ղարամուրատու *յանապատի միագումար առ հասարակ ամենայն միաբանքս, զոր Տէր Աստուած ամենեցուն վարձս հատուսցէ՝ ի կրկնակի գալստեանն իւրում. ամէն։ Եւս յիշեցէք ոսկերիչ* Նիազն, *որ բազում աշխատութեամբ զարդարեաց զաւետարանս ի թուականիս հայոց ՌՃ և ԻԴ (1675)-ին, մարեր։*

գ. 315ա. Յարձեալ յիշեցէք զՓայասակեցի Գրիգոր, *ԲՌ (2000) դիան իւր հոգւոյն բաժին երեսս. Աստուած իւր հոգւոյն ողորմի։ Յարձեալ յիշեցէք* Յովանէսն, Եղիսաբեթ, Նաւասարդ, Մարգարիտ, Մինասն, Ալավերդին, Մխիթարն, Պետրոսն, Ոհան, Սոխկ, Սիրամարէ, Դաւիթ, *որ Ա (1) նոհ (տիրոց), Ժ (10) ապազի տվին. Աստուած ողորմի իւրեանց։*

29
ԱԻԵՏԱՐԱՆ
(Վաշինգտոն, Կոնգրեսի գրադարան, Arm. MS N5)

Կից ՌՃԼԳ-1684

Գրիչ՝ *Հավհազ երեց:* Թերթ՝ *251 (–33):* Նյութ՝ *մագաղաթ և թուղթ (խառն):* Մեծություն՝ *7x10:* գրություն՝ *երկսյուն:* Գիր՝ *բոլորգիր:* Տող՝ *21:* Մանրանկարչություն՝ *Խորան 2 (համաբարբառով): Հովհաննես ավետարանիչ՝ 193բ: Կիսախորան՝ 78ա, 122ա, 194ա: Լուսանցազարդ՝ բուսական: Զարդագիր՝ թռչնագիր:* Կազմ՝ *չիք:* Վիճակ՝ *վնասված, սկզբից ընկած են 1-33 թերթերը, թղթյա մասերը՝ թանաքակեր:*

Ծնթ. *Կազմի վրա կա՝ N1369, իսկ Մարկոսի ավետարանի սկզբնաթերթի վրա՝ N74:*

Հիշատակարան. Գրչի

192բ. Զվ Զբտածբճ ըտըւ գտզւլ (եղբայրագիր՝ «Ես Հավհաղ էրէց գրեցի»[1]) թվին ՌՃԼԲ (1683), մարտի ամսոյն ԺԶ (16), օրն ուրբաթ:

248ա. Արդ գրեցաւ սուրբ Աւետարանս ի յերկիրս մերում Կեդայացց, *ի գեօղն որ կոչի* Կից, *ի դրանէ* Սուրբ Ստեփանոսի, *ի հայրապետութեան Սուրբ էջմիածնայ* Տէր Եղիազարու, *ի հովւապետութեան* Ստաթէի Տէր Յովհաննէս *արքեպիսկոպոսի, և սորի[ն] սպասաւոր* Տէր Զաքարիա *վարդապետի. ամէն:*

Արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս թվին ՌՃԼԳ (1684) յունվար Ժ (10), աւարտ սորա ի թագաւորութիւն Պարսից Շահ-Սուլմանի, *և դիրօղ յերկրիս մերում* զԲաղդար սուլթանն, *որում չարչարանաւք կորուսուց յերկիրս, որ ետ Աստուած զերեք պատուհասն. Հաճի Ալիխանն սարդար եղև և եկեալ ԽԲՌ (42.000) հեծելով, բնակեցաւ ի քաղաքն* Կանջայ, *և բազում աւերութիւն արար ի Հայոց աշխարհիս, և յետ նորա զարիւն և զերաշտութիւն, և բազումք կորեան վասն անհնչութեան իւրեանց:*

Հետագայի

ա. 249ա. Արդ, յիշեցէք զբարեմիտ և զհեզահոգի զՏէր Մելիքսէթ, *որ բազում փափականօք և չօժար սրտիւ ես և իմ կենակից* Կօզալս *ստացանք զսուրբ Աւետարանս՝ յիշատակ հոգւոց մերոց և իմ ծնօղացն, զհայրն իմ՝* Տէր Թումայն *և մայրն իմ՝* Շահումն, *և իմ որդիքն՝* Աստուածատուրն, Յովանէսն, Գրիգորն, Տէր Միհասն, Մովսէսն, Փիլիպոսն, *և դստերքն իմ՝* Եղիսաբէթն *և* Մարգարիտն, *որ հանգեան առ Քրիստոս: Եւ ով ոք կարդայ կամ օրինակէ, Աստուած-ողորմի ասէ* Տէր Մելիքսէթին *և իմ կենակից* Կօզալին, *և ով ոք խնամօք պահէ զսայ՝ աւրհնեալ լիցի ի Քրիստոսէ:*

բ. 249բ. Դարձեալ յիշեցէք զՇնաթաղու *քահանայն՝* զՏէր Առաքէլն *և* զՏէր Գրիգորն, *որ եղև պատճառ սորին, և տանուտէր* Շապանն, *որ է որդի* Պարեհին *և իւր ընտանիքին՝* Սարդարն, Սմբաթն, Պապէնն, *զխալիֆայ տիրացու* Սողոմոնն, Մարութէլն, Թիվին, Պաղտասարն, Ղազարն, Սարուխանն *և* Բինեաթի *որդի* Շապանն, Ովանէսն *և* Ղարամանի *որդի* Աստուածատուրն, Դաւութի *որդի* Ավաքն, Պային, Թասալին, Ոսկանն, *իւր որդի՝* Պաղտասարն, Թումէն, Սիմաւոնն,

1 Եղբայրագիրը վերծանել է ընկ. Օ. Եգանյանը:

Խաչատուրն, Ղափանն, Միխէլն, Ապին, Վէլին: *Եւ սոքա Շնաթաղին դովլաթաւորքն էին և մեծ համբայք, որ միշտ վարէին զկենցաղավարութիւնս իւրեանց:*

Դարձեալ յիշեցէք զկազմօղ սորին զնորեցի Թումայն, *և դուք յիշեալ լիջիք ի միւսանգամ գալստեանն Քրիստոսի Աստծոյն մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն:*

գ. 250ա. Կրկին յիշատակ է սուրբ Աւետարանս Անդամէջցի Ծատուրի *որդի* Սիրականին, *որ գերի էր անկեալ ի ձեռս աւազակեաց, վերոյ* Սիրանշանն *ազատեաց և յետ յիշատակ* Անդամէջոյ Սուրբ Աստուածածնա *եկեղեցոյն, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի: Եւ որ հանդիպիք ի սմա, մէկ Հայր մեղայիւ յիշումն առնէք զվերոյ գծնօղն սորին՝* զԾատուր *և զմայրն՝* Եղիսափեթն *և զհամայն ննջեցեալս սորին, և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ մերմէ. ամէն: Գրեցաւ ի թվին ՌՄԽԵ (1796), սեպտեմբերի ԺԵ (15)-ին:*

դ. 251ա. Յիշատակ եառ սուրբ Աւետարանս Շուշա *քաղաքացի* Աւագ Դանիէլեան Ղազարեանցս Սրբոյն Յովհաննու Մկրտչի *եկեղեցւոյն՝ յիշատակ հոգւոց մերոց և իմ ծնողաց, որոյ յիշեցէք զպատճառս սորա, զի այլոց կալայ, և յիշեցէք իմ հայր* Դանիէլն *և եղբայրին իմ՝* Պետրոսն *և* Յարութիւն *և զհամայն ննջեցեալն սորին: Հանդիպողքդ յիշեցէք, յիշեալ լինիջիք ի Քրիստոսի Աստուծոյ մերմէ. ամէն:*

Ի թիւականին Քրիստոսի հազար ութ հարիւր ութսուն և երեք (1883) ամի, Ժ (10) մարտի:

30
ՅԱՅՍՄԱԻՈՒԻՐՔ
(Ֆրեզնո, Ս. Երրորդություն Մայր եկեղեցի, N2)
Դաշտ գյուղ ՌՇԼԹ-1690

Գրիչ՝ *Եփրեմ:* Ստացող՝ *Մահդասի Ազարիա:*

Հիշատակարան. Գրչի

...Որոց հայցմամբ և մաղթանօք ողորմի Քրիստոս Աստուած ամենայն հաւատացեալ քրիստոնէից, մանաւանդ մահդասի և սարկաւագ Ազարիային *և ծնողացն՝ մահդասի* Եարղուլուն *և* Հռիփսիմին, *և որդոցն՝* Պետրոսին *և* Բենիամինին, *Բ (2)* Պօղոսիցն *և* Միխայէլին, *այլ և ամուսնոյն՝* Ոսկուն *և դստերացն՝* Վարդխաթունին *և* Հռիփսիմէ *կուսանին և* Սոփիային, *և հարսն՝* Մահրիխանին, *այլ և հանգուցեալ դստերացն՝* Գայիանին, Աննային *և* Մարիամին, *և ամենայն արեան մերձաւորացն, եւ ինձ՝ անիմաստ և ամենամեղ* Եփրեմ *գծողիս և ծնօղացն իմոց՝* Յովհաննէս *քահանայի և* Ջանազանին, *և եղբարցն իմոց՝* Ղուկասին *և* Մինաս *սարկաւագին, և ամենայն առ ու արեան մերձաւորացն իմոյ և ընթերցողացն:*

* * *

Ես նուաստ մահդասի Ազարիայս *ստացա զԱյսմաւուրս յիշատակ ինձ և իմ ծնողացն և եառ ի դուռն սրբոց եկեղեցեացն, որ վերաձայնին* Երեխոռան *և միւսուն՝* Սուրբ Նշան *և* Սուրբ Մինաս, *որ կան հովանի և պահապան գեւղաքաղաքիս* Դաշտ *կոչեցեալ, և եղիցի սա վախմ և յիշատակ ի դուռն սոցին որքան ժամանակ որ կայ ի դուռն* Երեխոռանին, *յետ*

ժամանակաց, եթէ Սուրբ Միսեասի *եկեղեցին շինեն յաջողմամբն Աստուծոյ, եթէ կամին անդ տանին առանց տրտնջման, բայց այս Բ (2) եկեղեցեացս ի զատ, եթէ ով ոք ջանայ հանել զսա ի սուրբ եկեղեցեացս՝ նզովեալ լիցի յԱստուծոյ և ամենայն սրբոց նորա. ամէն։*

* * *

Փառք... Արդ, աղաչեմք բանիմաստ հանճարունող սրբասէր եղբարցդ. որք հանդիպիք յայսմ տառիս, յիշեցէք զստացող սորա զմահդասի Ազարիայն, *որ է յերկրէն* Գողթնեաց, *ի գեղջէն, որ կոչի* Ագուլեաց Դաշտ, *և զծնօղսն իւր՝ զմահդասի* Եաղուլին *և զՀոխփսիմէն, և զորդիսն իւր՝ զՊետրոսն և զԲենիամինն, այլ և ամուսինն իւր՝ զՈսկին, և հանգուցեալ որդիսն և զդստերսն իւր, այլ և զհարսն իւր* զՄահիրիխանն *և զորդիսն։*

Ով քահանայք և կարգակիցք,
Ճգնաւորաց հանդիսակիցք,
Սուրբ կուսանացըն ջահակիցք
Եւ Քրիստոսի գոլ խաչակիցք,
Յորժամ զայս գիրքըս տեսանէք,
Կամ ընթերցեալ ըզսա լսէք,
Զմեղօք լցեալս դուք յիշեցէք
Եւ ողորմին բարբառեցէք։
Իմ աչս ի ձեզ է հանապազ,
Որ եմ լըցեալ մեղօք աննուազ,
Դուք ընթերցիք զայս աննիազ,
Զհոգիս հանէք ի սրբոց դաս։
Ես յաշխարհի մեղէք կացի
Եւ ծուլութեամբ զկեանքս անցուցի,
Զմարմնոյ կարիքս հոգացի,
Զհոգիս ի միտս ես ոչ ածի։
Ի յայս կարգըս որ ես մըտի,
Ի տղայութեան ես յանձն առի.
Զոր ուխտեցի զայն չպահեցի,
Այլ հակառակըն գընացի։
Զայս հրեշտակաց կարգս որ առի,
Զամէն մեղօք ծըրարեցի.
Ես զմեղաց դուռն բացի
Եւ համարձակ ընդ այն մըտի։
Զար օրինակ բազմաց եղայ
Եւ ձուլութեամբ ընկղմեցայ.

Մարմինս հակեաց և գլորեցայ
Եւ չարաչար վատթարեցայ։
Ընդդէմ բարոյն եւ հեղգացայ
Եւ ընդ խոտանան ժիր գըտայ.
Զաւետարանն, որ ընթերցայ,
Զայն խըփեցի և մոռացայ։
Զինչ յաշխարհիս մարդիկք որ կայ,
Զամէնն լաւ քան զիս տեսայ.
Քան զամենայն յանցող գըտայ
Ի ս որբութեանց ես հեռացայ։
Միշտ ըզբերանս ի բաց ունիմ,
Լեզուս խօսի յար զաղտեղին.
Աչօք նայիմ ցանկականին
Ի սիրտս առնում զխոց վերին։
Ի մեծութիւնս եկի հասի,
Զպակասութիւնս իմ գիտացի.
Զսէր աշխարհիս ես փորձեցի,
Որ է վատթար և յոյժ հոռի։
Փոխան սիրոյն պատարագի
Զաղտեղութիւնըն սիրեցի.
Հեշտախտութեան ծառայեցի
Եւ ցանկութեամբ զիս մաշեցի։
Զմարդիկք ի յայն հրաւիրեցի,
Զամենեսեան ես ուսուցի,
Ի յաղօթից ծուլացուցի
Ի ս էր մեղացըն կապեցի։
Ես ձեզ մեղայ, իմ սուրբ եղբարք,
Որ Քրիստոսի էք նմանակք,
Զձեզ իմ մեղօքըս խոցեցի,
Եւ չարաչար թերացուցի։
Զամենայն ոք գայթագղեցի
Բազում մեղաց դուռըն բացի.
Ընդ տղայութեան կարգս, որ առի,
Ես ի նմանէ ի զատ կացի։
Զաղքատութիւն յոյժ ատեցի,

Որ աստուծոյ է սիրելի։
Արդ, ես ի ձեր յոտս անկանիմ,
Զձեր գարշապարսդ համբուրեմ,
Զղջմամբ սրտիւ յոյժ արտասուեմ
Եւ զիմ գանգատըս ծանուցանեմ։
Զիմ վատութիւնս պարսաւեցէք,
Եւ ներելով մեղատրեցէք,
Վասն իմ զՏէրն աղաչեցէք,
Եւ թողութիւն ինձ հայցեցէք։
Միթէ լինի, որ ողորմի,
Ի ծերութեանս ժամանակի,
Եւ փոխեսցէ զիս ի բարի,
Զի մի անփոխ մատնիմ չարի։
Ես մեղապարտ գծող սորա
Կամ առ մոլարըն յարակայ.
Զձեզ աղաչեմ սրտիւ բոլոր,
Զմեզ յիշեցէք ի կամս յորդոր։
Ով քահանայք աստուածասէրք,
Մաքուր մտօք սրբանուէրք,
Յորժամ որ զայս գիրքըս կարդայք,
Յաղօթըս ձեր զմեզ յիշեցէք։
Դուք զՔրիստոս աղաչեցէք,
Եւ թողութիւն մեզ հայցեցէք,
Զաստուած ընդ մեզ հաշտեցուցէք,
Եւ ի չարեաց անփորձ կացէք։
Միթէ ի մեզ Տէրն ակնարկէ,
Մեղօք հնացեալըս նորոգէ,
Ընդ սուրբ վըկայսըն դասեսցէ,
Զանանց պըսակըն պարգևէ,
Փառօք ի փառըս մեծարէ,
Զհանգիստն անճառ ինձ պատրաստէ,
Հանդերձ ընդ ձեօք փառաւորէ,
Զձեռագիր մեղաց մեր պատառէ,
Մանաւանդ ըստացողի՝
Ծաղկերանկ յայս մատենի

Ազարիա *անուն բարի,*

Հանդերձ ծնողօքն ամենայնի։

Գրեցաւ և աւարտեցաւ սրբոց պատմութիւնս, որ է Պատմագիր ամենայն սրբոց և կոչի Յայսմաւուրք, ի թուոյ կենարարին մերոյ Յիսուսի Քրիստոսի Ռ և վեց հարիւր Ղ (1690) և թուականիս Հայոց ՌՃ երեսն և ինն (1690), յամսեանն օգոստոսի Բ (2) և մարգաց է (7), յաւուր շաբաթի, ի գեօղն, որ կոչի Ագուլեաց Դաշտ, *ընդ հովանեաւ* Սուրբ Ստեփանոսի *եկեղեցոյս, որ վերաձայնի* Երեխոռան, *այլև* Սուրբ Նշանի *եկեղեցոյս, որ կոչի* Սուրբ Մինաս, *ձեռամբ* եփրեմ *անիմաստ քահանայի, ի հայրապետութեան Հայոց Տեառն* Եղիազարու *սրբազան կաթողիկոսի, և թագավորութեան պարսից* Շահ Սուլէմանին, *և առաջնորդութեան նահանգիս* Գողթնեաց *սրբոյ Աթոռոյ առաքելոյն* Թումայի՝ Յոհաննու *արհի և պանծալի սրբանուէր եպիսկոպոսի և մետրապօլտի։ Եղև փափագանօք ստացող սուրբ գրոցս զմահդասի* Ազարիայն, *որ ստացաւ զսա ի հալալ արդեամբք և ընչիւք իւրովք և ետ ընծայ ի դուռն* Երեխոռանի *եկեղեցոյն՝ յիշատակ անջինջ իւրն և ծնօղացն, որդոցն և ամուսնոյն իւրոյ, հօրն իւրոյ՝ մահդասի* Եաղուլուն *և մօրն՝* Հռիփսիմին, *այլև ամուսնոյն իւրոյ՝* Ոսկուն, *և որդոցն՝ նորաբողբոջ* Պետրոսին, *և* Բենիամինին, *և հանգուցեալ որդոցն՝* Պօղոսին *և* Միքայէլին, *և դարձեալ* Պօղոսին, *այլև դստերացն իւրոց՝* Վարդխաթունին *և* Հռիփսիմէ *կուսակրօն ապաշխարողին և* Սոփիային, *և հարսն* Մանրիխանին, *և հանգուցեալ դստերացն՝* Գայիանին, Աննային *և* Մարիամին։

Արդ, և ես մեղսամած և ամենամեղ միայն լոկ անուամբ մահդասի Ազարիայս, *որ եմ յերկրէն* Գողթնեաց, *ի գեղջէս* Դաշտ *կոչեցեալ, և եմ ընդ յարկաւ և ընդ հովանեաւ* Սրբոյ Երեխոռանի *եկեղեցւոյս, որ կառուցեալ է անուամբ ամենասուրբ Երրորդութեանն և ունի հանգուցեալ զմասն ինչ ի նշխարաց սրբոյն Ստեփանոսի Նախավկային ի տաճարս այս, և ստացայ զայս միահամուռ սրբոց յիշատակաց գիրքս ի զաստուածատուր ընչիւք մերովք, և ետու զսա յիշատակ յաւիտենական ի դուռն* Երեխոռանի *եկեղեցւոյս զայն յուսալով, որ ասէ, եթէ՝ Երանի այնոցիկ, որ ունիցին զՍիոն որդի։ Եւ եղիցի յիշատակ ինձ և իմայնոցն, հօրն իմոյ՝ մահդասի* Եաղուլուն *և մօրն իմոյ՝* Հռիփսիմին, *և կողակցին իմոյ՝* Ոսկուն, *և որդոցն իմոց՝* Պետրոսին *և* Բենիամենին *և հանգուցեալ Բ (2)* Պօղոսիցն *և* Միքայէլին, *այլև դստերացն իմոց՝* Վարդխաթունին *և* Հռիփսիմէ *կուսանին և* Սոփիային, *և հանգուցեալ դստերացն՝* Գայիանին, Աննային *և* Մարիամին, *և ամենայն արեան մերձաւորացն իմոց։ Եւ եղիցի ընծայ և նուէր* Սուրբ Երեխոռանի *տաճարիս և լիցի հոգոյ իմոյ որդի Սիոնի։*

Աղաչեմ զձեզ, ո՛վ ազգայինք իմ և օտարականք և ընթերցողք, այլև օրինակողք, որ խնամով պահեսջիք զսա, և լինիցի անշարժ ի դրանէ սորին։ Իսկ եթէ իմոց և օտարաց, յազգականաց և ի բարեկամաց, քահանայից և ժողովրդականաց, եթէ կրօնաւորաց և եթէ սարկաւագաց, եթէ ի մեծաց և եթէ ի փոքունց կամիցի և ջանայ հանել զսա ի դրանէ սուրբ տաճարի Երեխոռանիս, *այնպիսին հանեալ և արտաքսեալ լիցի յաչացն աստուածորդոյն, որ ասէ. երթայք յինէն, անիծեալք, ի հուրն յաւիտենական. այլև մասն և բաժին ընդ Յուդայի և ընդ խաչահանուացն առցէ։ Եւ դարձեալ նզովեալ եղիցի մարանաթայ, այլ և ԳՃԺԸ (318) հայրապետացն, ևս և նզովս ընդ Կայենի ժառանգեսցէ, և առաջի արդար դատաս-*

տանին Քրիստոսի պարտապան գտանի հոգոյ տմոյ: Իսկ այնպիսին, որ խնամօք պահէ ի ջրոյ, ի հրոյ և ի գողունեաց և պատրաստեցէ պատահարաց չարին՝ օրհնեալ լիցի ի յԱստուծոյ և յամենայն սրբոց նորա:

Դարձեալ յիշեցէք զպատուական քահանայք գեղչիս և սուրբ Երեխոռանի *եկեղեցւոյս* զՏէր Պօղոս *քաջիմաստուն և աւագ քահանայն, և* զՏէր Եսայիմ, զՏէր Յովանէսն, *և* զՏէր Ստեփաննն, *զի ի ձեռն նոցա ընծայեալ եղև գՅայսմաւուրս ի տաճար* Երեխոռանիին:

Եւ ես աղաչեմ զձեզ, ո՛վ դասք քահանայից և սարկաւագաց, յորժամ ընթեռնուք զսա և կամ օրինակէք, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զիս անարժան Ազարիա *սարկաւագս և զծնօղսն իմ և ինքն Քրիստոս, որ առատն է ի տուրս բարեաց և գիտէ հատուցանել զիւրաքանչիւրոց վարձան աշխատողացն ստացողին, գծագրողին, կամեցողին և վարժողացն, օրհնեալն յաւիտեանս. ամէն:*

Դարձեալ յիշեցէք զաւագ եղբայրն իմ զՋաֆարիայն *և* զՄարգարէն, *որք են հանգուցեալք առ Քրիստոս յոյսն ամենեցուն, և որդիք* Ջաֆարիային՝ Յոհաննէսն, Աբիսողոմն, Երեմիայն, Մատաթիայն, Աղամջանն *և* Ստեփաննն *և անդրանիկն* Մաղաքիայն, *որ փոխեալ է առ Քրիստոս, և զդստերսն իւր՝* Գուլխաթունն, *այլև զդուստր* Մարգարիէ՝ զՍանդուխտն || ... *(շար. թափված):*

31
ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՅՑ
(Նյու Յորք, Էդուարդ Բաղդասարյան)

ՌՃԽԹ–1694

Գրիչ՝ *Մկրտիչ ք.:* Թերթ՝ *16:* Նյութ՝ *թուղթ:* Մեծություն՝ *22x31,7:* գրություն՝ *երկսյուն:* Գիր՝ *բոլորգիր:* Տող՝ *25:* Մանրանկարչություն՝ *Լուսանցազարդ՝ բուսական:* Կազմ՝ *անմշակ կաշի, առանց տախտակի:* Պահպանակ՝ *թուղթ, մեկական թերթ սկզբից և վերջից:* Վիճակ՝ *վատ, թերթահան:*

Ծնթ. *Ձեռագիրը տեսա Նյու Յորքում Հ. Հազարյանի մոտ. վնասվել էր ջրից: Տերը խնդրել էր Հ. Հազարյանից որոշելու վնասի չափը, որպեսզի ապահովագրական ընկերությունից փոխհատուցում պահանջի:*

Հիշատակարան. Գրչի

16ա. Քրիստոս Աստուած, բարեխօսութեամբ ամենայն սրբոց, մանաւանդ քո անարատ ծնօղիդ աղաչանօքն, ողորմեա հանգուցեալ Աղայթեղէ և իւր որդի Մկրտիչ քահանաիս, որ գծեցի սա յիշատակ ինձ և իմ ծնօղացն: Խիստ դառ[ն] և ի նեղ էր ժամանակն. եկեղեցիքն ամէնքն փակեալ էին. Ռեճ (1500) թուման ին ուզում: Տէր Աստուած, մեզ ազատեա. ամէն:

Գրվեցաւ թվականիս ՌՃԽԹ (1694), սեպտեմբերի ԻԱ (21) սկիզբն է:

Բարեաց ամենից առաջնորդ Սուրբ Հոգի Աստուած, առաջնորդեա ժխտող և դատապարտեալ ծառայի քոյ՝ Մկրտիչ *իրիցի, հասանիլ յաւարտ գծիս, զոր սկսայ յաւուրս տօնի Սուրբ Խաչին անցեալ Գ-չաբաթի:*

32
ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ
(Վաշինգտոն, Կոնգրեսի գրադարան, Arm. MS N1)

ԺԷ-XVII

Թերթ՝ *23:* Նյութ՝ *թուղթ:* Մեծություն՝ *19x26:* գրություն՝ *երկսյուն:* Գիր՝ *բոլորգիր:* Տող՝ *23:* Մաուրանկարչություն՝ *խաչելություն՝ 2ք: Խորան՝ 3ա: Լուսանցազարդ՝ տեսարաններ պատարագից: Զարդագիր՝ թռչնագիր, գրադաշտը ծաղկազարդ չրջանակների մեջ:* Կազմ՝ *կաշեպատ սովարաթուղթ:* Վիճակ՝ *բավարար:*

Հիշատակարան՝ Հետագայի

Յիշատակ է խորուրդայտեառս Ջաղացտեղցի Խօստրովի *որդի* Գալուստին, *ի հիշատակ ի դուռն* Սուրբ Սարիսի, *որ է* Թախտայղալէն: *Ով ոք պատարաք մատուցանէ, մէկ բերան ասեն՝ Աստուած-ողորմի* Գալուստի *հոգուն, մէկ Հայր մերոյ երկինք ասեն:*

Գրեցաւ թվին Հայոց ՌՃՀԱ (1722), սեկտեմբերի ամսի Ի0 (20)-ըն: Զփորձըս ձեռաց մի՛ անտես առներ. ամէն:

33
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ
(Բոստոն, Հ. Թոփալյան)

Սուրբ Նշան ԺԷ-XVII

Գրիչ՝ *Հովհաննես երեց:* Նյութ՝ *թուղթ:* Մեծություն՝ *6,5x19,5:* գրություն՝ *միասյուն:* Գիր՝ *բոլորգիր:* Կազմ՝ *կաշեպատ տախտակ, աստառը՝ դրոշմազարդ կտավ:* Վիճակ՝ *բավարար:*

Ծնթ. *Ձեռագրի սկզբում կա անգլերեն նչում, կատարված 1855 թ. Դիարբեքիրում:*

Հիշատակարան. Գրչի

Փառք... Գրեցաւ Սաղմոսարանս ի դուռն Սուրբ Նշանին *ձեռամբս և անարժան մեղաւոր* Յոհաննէս *երիցուս, և ծնաւղաց, և ամենայն արեան մերձաւորաց, և որ զՈղորմին ասեն. ամէն:*

34
ՃԱՇՈՑ
(Ֆրեզնո, Ս. Երրորդություն Մայր եկեղեցի, N1)

ԺԷ-XVII

Հիշատակարան՝ Հետագայի (ԺԸ դ.)

Յիշատակ է սուրբ ճաշօցըս ի դուռն Սուրբ Մինասին, *որ է* Դաշտեցի Հախի *փէսայ Յարութիւնին և իւր ծնօղաց հոգոյն՝* Պօղոսին *և մօրն՝* Նազլուին. *եւ իւր կողակցուն՝* Մարիամին, *և իւր որդոյն՝* Գալուստին *և դստե[ր]ցըն՝* Թազագուլին *և* Դաստագուլին, *և ամենայն այրեան մերձավորաց: Որ է յիշատակըս այս հալալ արդեանց իմոց, մատուցի ի տաճար* Սրբոյն Մինասայ: *Ով ոք որ ծախի կամ ուրիշ երկիր ողորկի՝ Քրիստոսի առաջևն պարտական մնա:*

35
ՈՒՐԲԱԹԱԳԻՐՔ
(Յոհաննբուրգ, Հարավային Աֆրիկա, Գրիգոր Տէր-Պալյան[1])

ԺԷ-XVII

Գրիչ՝ *Գրիգոր սրկ.:* Թերթ՝ *117:* Նյութ՝ *թուղթ:* Մեծություն՝ *10x14:* գրություն՝ *միասյուն:* Գիր՝ *բոլորգիր:* Տող՝ *17:* Մաուրանկարչություն՝ *Հովհաննես՝ 1բ, Տիրամայրը մանկան հետ՝ 36բ, Ղուկաս՝ 72բ: Լուսանցազարդ՝ բուսական: Զարդագիր՝ թռչնագիր:* Կազմ՝ *կաշեպատ տախտակ, դրոշմազարդ. Բ փեղկը կոտրված և կաշեզուրկ, աստառը՝ կարմիր գործվածք:* Պահպանակ՝ *մագաղաթ, երկուսական թերթ սկզբից և վերջից, հատված Մարկոսի Ավետարանից, Ժ-ԺԱ դդ.:* Վիճակ՝ *վնասված, մանրանկարները՝ սևացած:*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ա. Աւետարան բժշկութեան:

բ. Աղօթք պահպանութեան:

գ. Պատմութիւն Ուստիանէ կուսին:

դ. Աղօթք սուրբ Կուսին (և այլ աղօթք):

ե. Գիր օճահարի:

զ. Տաղ հոգոյ և մարմնոյ. «Այսաւր ցընծայ լեառնն Թափաւր...» (խազագրված):

է. Տաղ հայատառ թուրքերէն. «Պանում չաւխ տիլաքում սէնտայ սան...»:

Հիշատակարան. Գրչի

57ա. Գրիգորի *գերաբով և շնորհալի վարդապետ ըսկսնաւորեալ ի հոգոյն սրբոյ:*

111ա. Ջանարժանս՝ Գրիգոր *սարկաւագս յիշեա, և Աստուած զձեզ յիշեայ ի յաղեղ դատաստանն Քրիստոսի Աստուծոյ մեր:*

Հետագայի

ա. 95բ. Յիշատակ է բժշկարանս Յարջիմանիի *և կողակցին՝* Վարեվէ, *և ամենայն յարեան մերձաւորացն. Աստուած ողորմի և իւրենաց հոգոյն: Յիշատակ ի դուռն* Սուրբ Փրկը[չին]՝ *ի ձեռն* Տէր Տիրատուրիճ. *ամէն: Հայր մեր:*

բ. 95բ. Ես ծառայ Աստուծոյ տիր[ա]ցու Կարապետիճ... *(շար. անընթեռնլի):*

36
ԱԻԵՏԱՐԱՆ
(Յոհաննեսբուրգ, Հարավային Աֆրիկա, Գրիգոր Տէր-Պալյան)

ԺԸ-XVIII

Թերթ՝ *251:* Նյութ՝ *թուղթ:* Մեծություն՝ *18,7x14,3:* գրություն՝ *երկսյուն:* Գիր՝ *բոլորգիր:* Տող՝ *23:* Մաուրանկարչություն՝ *Լուսանցազարդ՝ բուսական (կարմիր և կապույտ):* Կազմ՝ *չիք:* Վիճակ՝ *վնասված:*

1 Այս և N36 ձեռագիրը գտնվում են Նյու Յորքի Հայոց առաջնորդարանում: Ծանոթացանք ԱՄՆ արևելյան թեմի առաջնորդ Տ. Թորգոմ եպս. Մանուկյանի ոճժարակամ թույլտվությամբ:

Ծնթ. *Տե՛ս N35 ձեռագրի ծանոթագրությունը:*

37
ԺՈՂՈՎԱԾՈՒ
(Լոս Անջելոս, Արշակ Տիգրանյան, N5)

Քիլիս ՌՃԾԴ-ՌՃԿԱ-1705-1712

Գրիչ՝ *Տէր Փիլիպպէ (1ա-91բ, 1712 թ.), Գասպար դպիր:* Ստացող՝ *Մխիթար Քիլիսեցի, Գասպար դպիր:* Թերթ՝ *169:* Նյութ՝ *թուղթ:* Մեծություն՝ *14,7x9,7:* գրություն՝ *միասյուն:* Գիր՝ *նոտր:* Տող՝ *21:* Կազմ՝ *կաշեպատ տախտակ:* Վիճակ՝ *բավարար:*

ա. 1ա. Քարոզ վասն լեզուի, ի բանն Առաքին, որ ասէ. Մահ և կեանք ի ձեռն լեզուի լինի:

բ. 9ա. Քարոզ վասն մեղաց: Որպէս ասէ առաքեալ[ն] Յակոբոս՝ ի բանն. Ցանկութեան յղացեալ՝ զմեղս ծնանի և մեղքն կատարեալ՝ զմահ ծնանի:

գ. 16ա. Քարոզ վասն յիշուց տըւողաց, քուֆր ասողաց, բամբասողաց է:

դ. 24ա. Երանելւոյն Աթանասի արքեպիսկոպոսի Աղեքսանդրոյ Հարցմունք վայելուչք և պատասխանիք Կիւրղի եպիսկոպոսի հայրապետի՝ յաղագս մակացութեան և հանճարոյ:

ե. 93ա. Պատմութիւն սուրբ առաքինասէր կրօնաւորին և ճգնազգեաց միակեցին Յովսիմովսի, որ խորհեցաւ և զմտաւ էած երթալ յերկիրն երանելեաց:

զ. 114ա. Յանապատ մի գայր Գճ (300) ճգնաւոր...

է. 115ա. Պատմութիւն վասն թագաւորի, որ ոչ ունէր որդի և եղև:

ը. 131ա. Պատմութիւն հրաշից Քիլիսու Սուրբ Յովանէս եկեղեցին, որ ակներև տեսին Բ քահանայ և Բ աշխարհայկան և փոքր կղերիկոս մի ընդ նոսա, զոր գրեալ է առաչակայս թվին ՌՃՀԸ (1729)-ին, աւուր երկուշաբաթ աւրին Է ժամին. Վերադիրն էր Թ, գիր տարուն էր Զ, Զատիկ՝ ապրիլի ԺԳ, որ ասեն Ծռայզատիկ:

131բ. Ի մեր Հաեոց թվականին
ՌՃ եօթանասնին
Ութն աւելի վերայբերի (1729)
Եւ իմաստնոց իմանալի,
Որ էր ամիս հռօմոց ազգին,
Փետրվարի երկու հնկին (10),
Մէք նստէաք եկեղեցին,
Եւ օրն էր երկուշաբթի,
Ետ կէս աւուր եօթն ժամին
Պահել ջիլէ քառասնորին
Տէր Մարտիրոս նորընծային,
Տէր Ովանէս ընկեր սորին,
Եւ այլ երկու այր նստէին,

Հետ ընդ նոսա խօսացէին,
Զարմանալի յիրըս տեսին.
Զախակողմ[է]ան մեծ խորանին,
132ա. Տէրունայկան սուրբ պատկերին,
Պատանայ տեղ ժամանայկին,
Կանթեղ մի կայր առաջ նորին.
Յանկարծակի սոյքայ տեսին
Լուս մի վառէր մէջ կանթեղին:
Երբ զայն տեսին, ոտից կացին,
Սակաւ այլ ինչ առաչ գնայցին՝
Երկրպագեալ արտասվեցին
Ծընդրաթրուքեամբ աղօթէին,
Մեղաց թողուքիւն հայցէին
Եւ օրհնուքիւն Տեառն մատուցին:
Ետ ըզժամու դուռն բացին,
Ըզլուսարարըն գոչեցին,
Տեսիլ հրաշսըն պատմեցին
Թվին տաճկաց 1141 *(1728-1729)*

Թ. 134բ. Բանք կիրակէի: Պատմուքիւն մեծ քաղաքին Հռոմ, որ է յԱրևմուտս…

ժ. 145բ. Վասն գալստեան Նեռին — Առաջին օրն բարձրասցի ծովըն ի (40) կանfուն…

ժա. 147ա. Վասն դժոխացն.

ժբ. 151ա. Վկայուքիւնք հակառակացն և պատասխանիք նոցա:

ժգ. 162ա. Կարապետ մեծի վարդապետի…

ժդ. 165բ. Ամենայնի ըսկիզբն ես եմ…

ժե. 166ա. Աստուած մարդասէր և տէր ողորմուքեան, գիտեմ զի ձանձրանալ…

Հիշատակարան՝ Փիլիպպէ գրչի

91բ. Աստուծով աւարտեցի ես զառածեալս մեղօք Տէր Փիլիպպէս *ի թվին ՌՃԿԱ (1712), մարտի ամսոյն ելըն և ի ապրիլ ամսոյն մուտն ի Քիլիս գիւղաքաղաքի: Այսքան տետրիկս, որ յաղաfս հոգևորական բանի հարցմունս արարեալ մեծի վարդապետաց Աթաճասի և Կիւղի. և սա տեսեալ նորընծա Քիլիսցի Մխիթար բանասէրս, ասաց ինձ գրել, և ես ըստ տկար մարմնովս ծրեցի և պիտոյս իւր, բարով վայելէ և երկարեալ ժամանակաւ ողջուքեամբ օգտեսցի. ամէն:*

Գասպար գրչի

130բ. Գրեցաւ ձեռամբ մահտեսի Աբրահամի *որդի տրուպ* Գասպար *դպրի, ի մայիս ամսոյ Ի և Զ (26) և թվին Հայոց ՌՃԿ (1711)-ին: Աւարտեցաւ Հոգւոյ գալս[տ]եան է (7)-ն, օր շաբաթի Ժ (10)-ն ժամու:*

144բ. Որ և ստացօղ գրոցս և յորժամ կարդայք զպատգամս Աստուծոյ, որ երևեցաւ յերկնից ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր ստացօղ սորա և զգծողս, փոքրիկ կիւղաքաղաքն Քիլիս մահտեսի Աբրահամի *որդի* Գասպարս *և զմայր իմ՝* Մարգարիտն *և եղբայր իմ՝ տիրացու* Մխիթարն *և* Կարապետն *յիշեցէք, յիշեալ լիջիք առաջի Աստուծոյ առ ամենայն հաւատացեալսն, և լսեցէք ամենեքեան միաբան քահանայիք հանդերձ ժողովրդեամբք, ասացէք օրհնեալ է Աստուած և անկեալ երկիրպագէք Տեառն Աստուծոյ, որ իջեալ է Թուխտս թվին Հայոց ՌՁ և Ը (1639)-ին, [յ]ուլիս Ի և Դ (24)-ին, օրն Դ-շաբթի, և ի յօրինակելն զսա ի Քիլիս՝ թվին ՌՃՄԴ (1705)-ին. ամէն:*

Հայր մեր որ երկինս ասելով՝ յիշեցէք մեղաւոր և անպիտան գծող գրչիս՝ տրուպ Գասպարս *և հանգուցեալ վարդապետ իմ՝* զՏէր Մելիոն *քահանայն, որ և հանգուցեալ էր ի թվականիս Հայոց ՌՃՄԱ (1702)-ին, օգոստոս ամսոյ մէկ. Աստուած ողորմի ասողացն՝ Աստուածն ամենայնի իւր ողորմի. ամէն: Հայր:*

Հետագայի

132բ. Սանայ 1144 *(1731-1732) նորընծայ* Տէր-Օվաննէս *եղայ ի* Սուրբ Ակոր *տէրտէրնին: կէն հին մեղօք ըսկասի քի մէն էք մեղօք: Միւս տէրտէրնին ասէ. ինքի ի՞նչ կուզըս. անոնք սիրեցին, զիսատեցին: Ըսի ուսեցր իմ Աստուած ի Նիկիա սուրբ ճօղովքըն հաւատամք: Հոն ասացի և հաւատաց Կոստանթնու սուրբ ճօղովքըն. Փառք ի բարձուն հոն ասացին, ոչ անիցեցին կռայպաշ[տ]ըն, ոչ ջհուտըն, ոչ մարդըսբանըն, ոչ տաճիկըն, ոչ գողն, ոչ աւազակըն, անիցեցին անհնայզանթըն ալ ալիքըն.*

133ա. Հոգուն սրբոյ դէմ կանօղըն, տուղ պակաս էնօղըն, պակաս հապրօղն, պակասին սէպապ ըլլօղըն, գիտնօղ ու չասօղն մի՛ բռնես, բան անօր է՞ր չի գտնաս երկրայվորէն:

Պու տունեայ քօլայլիք մխալի.

Շիրին խանայ կուն օլայ,

Ջխախ կիտաք՝ վէրան կալայ,

Մեղուցեալ մեղայ, Աստուած քաւեայ:

131ա. Մի ցանկանար փառաւորել,

Քանիզի փառքն է անցաւոր,

Այսոր քեզ հիւր է,

Վաղ իբրև թռչի թեվաւոր:

Գրեցի այս գիրս Դափթ Տէր Մարտիրու ///

38
ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ
(Վաշինգտոն, Կոնգրեսի գրադարան: Arm. MS N2)

ՌՃՀԱ-1722

Գրիչ՝ *Եղիա երեց Մարգվանեցի:* Ստացող՝ *Մահտեսի Սինանի որդի Սահակ:* Թերթ՝ *21:* Նյութ՝ *թուղթ:* Մեծություն՝ *20,5x28:* գրություն՝ *երկսյուն:* Գիր՝ *բոլորգիր:* Տող՝ *22:* Մանրանկարչություն՝ *Խաչելություն՝ 1բ, զարդանկար անվանաթերթ՝ 2ա: Լուսանցազարդ՝ բուսական, մի քանի հատ: Զարդագիր՝ թռչնագիր:* Կազմ՝ *կաշեպատ տավարաթուղթ:* Վիճակ՝ *բավարար:*

Ծնթ. *Կազմի վրա՝ N1560:*

Հիշատակարան. Գրչի

Փառք... Որ ետուր կարողութիւն աւարտման խորհրդագիրք սուրբ պատարագիս: Ընդ որս զայս Մահտեսի Սինանի *որդի* Սահակս *ցանկացայ զայս ոսկէզարդ խորհըրդիս և ետու յիշատակ* Պիսկէնու Սուրբ Աննայ *անուամբ կոչեցեալ վանուց* Սուրբ Աստուածածնայ *տաճարին, անդ մնասցէ: Ո՛վ սրբազան հայրք, աղաչեմ և պաղատեմ առ տէրութեան ձերոյ, յորժամ պատարագ մատչի, յիշման արժան առնէք զմեղապարտ* Սահակս, *զհայրն իմ և զմայրն իմ և զկենակիցս իմ՝ յիշելով զմաքրափայլ աղօթս ձեր, և դուք վարձս ի Քրիստոսէ առնուցուք, և ձերին սուրբ աղօթիւքն Տէր Աստուածն ամենայնի մեզ մեղաւորացս ողորմեսցի. ամէն:*

Սա եղաւ ի թվին ՌՃՀԱ (1722) ամին, մարտի Ե (5) օրն: Ով ոք յիշէ, յիշեալ լինի: Հայր մեր որ:

Ձեռամբ մեղապարտ Մարզվանցու

Տէր եղիայ *երիցու.*

Սխալ բանիցս կամ ամօթու,

Ձձեր ոտացն հող և փոշի,

Ձեմ արժանի զանունս յիշելու:

39
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՏՈՒՄԱՐԻ
(Նյու Ջըրսի, Պերճ և Արմինե Արազներ և Արտեմիս Տեմիրճյան)

ՌՄ-1751

Գրիչ՝ *Ոհան ընթերցող:* Ստացող՝ *Մահտեսի Աբրահամ:* Թերթ՝ *162:* Նյութ՝ *թուղթ:* Մեծություն՝ *11x16,3:* գրություն՝ *միասյուն:* Գիր՝ *նոտրգիր:* Տող՝ *18:* Մանրանկարչություն՝ *Ճակատազարդ՝ 2ա, 14ա, 25ա:* Կազմ՝ *Ա փեղկը կաշեպատ տախտակ, դրոշմազարդ, Բ փեղկը՝ չիք:* Վիճակ՝ *բավարար:*

Ծնթ. *Ձեռագիրս 1972 թ. փետրվարի 5-ին Թենեֆլայում (Նյու Ջըրսի նահանգ) տողերիս գրողի միջոցով Պերճ և Արմինե Արազները նվիրեցին Մաշտոցի անվան Մատենադարանին (N10527):*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ա. 2ա. Պատճէ տումար Հայոց:

բ. 14ա. Պատճէ տումար Հռովմայեցոց:

գ. 26ա. Մեկնութիւն տումարի, զոր խնդրեաց Թումայ վարդապետ Մեծոփայ վանից աստուածաբնակ սուրբ ուխտին և սիրով զհայցուածս նորա կատարեալ Յակոբ վարդապետի Ղրիմացո:

դ. 150ա. Նորին Յակոբ վարդապետի Ղրիմեցոյ Յաղագս տումարական մակացութեան, թէ յորոց մարդկանէ արհեստաւորեցաւ, գիտելի է:

Հիշատակարան. Գրչի

161բ. Գրեցաւ հանճարով լի գիրգս իմաստասիրական, յայտնիչ երկնի և շարժման երկնային մարմնոց, ընթացից և հոլովմանց լուսաւորացն երկնի, և հաստատութեան երկրի, զորս Տումարի մեկնիչ կոչի, զորս գրեցի ես նուաստ ոգի Տէր Կիրակոսի որդի Ոհան ընթերցողս, թուին ՌՄ (1751)-ին, ի վայելումն մահտեսի Յեսայի որդի մահտեսի Աբրահամին, զոր Տէր Քրիստոս բարեաւ վայելումն տացէ. ամէն:

Հետագայի

ա. 13ա. (Շղագիր, հայատառ թուրքերեն) … Թախթայպուռուն օղլու վէ Պալը վէ Բարսեղ. վէ Յակոբ *(նուէնը՝ 162բ):*

բ. 163բ. Այս ձեռագիրս, որ Պեռճ և Արմինէ Արազի *ու իրենց մօր* Արտեմիս Տեմիրճեանի *(ծնեալ* Թահթապուռունեան*) սեփականութիւնն է՝ նուիրած է ս. Մեսրոպ Մաշտոցի Մատենադարանին, Երևան, ի յիշատակ* Թահթապուռունեան *գերդաստանի ննջեցեալներուն (*Տէրէվանցի, *կեսարիա): Յանձնուած է պր.* Բարգէն Զուգասըզեանի *ի* Ն. Ճիրսիյ, Միաց. Նհգ. *Փետր. 5, 1972:*

40
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ (ՀԱՅԱՏԱՌ ԹՈՒՐՔԵՐԵՆ)
(Նյու Յորք, Գրիգոր Մագուտյան)
Կոստանդնուպոլիս ՌՄԽԸ-1799

Գրիչ՝ *Նահապետ որդի Անդրիասի:* Թերթ՝ *310:* Մեծություն՝ *13x19:* գրություն՝ *երկսյուն:* Գիր՝ *նոտրգիր:* Տող՝ *21:* Մանրանկարչություն՝ *ճակատազարդ՝ 40բ, 75ա, 114բ, 146բ, 184ա, 217ա, 253ա: Զարդագիր՝ թռչնագիր և հանգուցագիր:* Կազմ՝ *սովարաթուղթ:* Վիճակ՝ *լավ:*

Ծնթ. *Ձեռագիրս 1972 թ. փետրվարի 15-ին Թենեֆլայում (Նյու Ջըրսի նահանգ) տողերիս գրողի միջոցով Գ. Մագուտյանը նվիրեց Մաշտոցի անվան Մատենադարանին (N10528):*

Հիշատակարան. Գրչի

309ա. Սկնէ 1214 *թէպիլ էվէլին* 23 *կիւնիւ վէ թարիքի իսավի սկնէ 1799, օգոստոսուն 13 կիւնիւ հալիէ* Կօսթանթանիտէ Աստառճը խանը *սաքինէլէրինտէ իսմի էլհաքիր* Նահապետ *նամինտէ հավէսիլէ եազմաղէ պաշլատողմտէ շաբաթ կիւն սահէթ եէտիտէ վէ պիթիրմէսի*

տէֆայ օլ թարիքտէ սէկտեմբերին 28 վէ ճէմազ իլ-էվէլին 10 *կիւնիւ չորեքշաբթի աքշամ սահէթ 3-տէ պիթտի։ Ալլահըն քէրէմի օլուրսայ ֆիքրիմիտէ ըստանփայ էթտիրմէք եյկէր եօմ օլուրսայ վէ պիր քրիստեօնեայ պուլուպ սրբայզան պատիրեաք հայրըմըզտան պիր իզին ալըրսամ ինշալլահ ըստանփայտըր ֆիքրիմ...*

309բ. Մէսքեանի հալա կետա եէրինտէ՝
Աստառճը խանը *սաքինէրինտէ,*
Եա րէպ, այիրմայ սատիքէրինտէ,
Իթտիրմէ ատավէթ օլ քեմէրիլէ։
310ա. Խաքի զէվատէ Կոստանթանիտէ,
Իսմի էլհաքիր Նահապետ *նամինտէ,*
Իպնի թէրզի Անտիրեաստէ *տիքտէ,*
Ջիքրի խայր օլա ալէմլէրիլէ։

Պու քիթապի քի եազտք հաքիր պենտենիզ Ղայսէրի *շէհիրինտէն* Թահտապուռուն օղլու Աբրահամ *աղանն չըրաղը, վէ թէրզի* Անտիրեասըն *օղլու ճիւմլէնիկ այագ թիւրապը* Նահապետի *հանգուցեալ* Անտիրեաս. *հաճի* Նահապետեան...

Քիթապի թեօհֆէ էլ հաքիր Նահապետ։

Կնքագրոչմ. 310ա (փակագիր) «Նահապետ»։

41
ԲԺՇԿԱՐԱՆ
(Թեոդոսիոս, Նյու Ջըրսի, Պետրոս Նորհատ)

ԺԸ-ԺԹ-XVIII-XIX

Թերթ՝ *81. չգրված՝ 52ա-58բ, 79բ-81բ:* Նյութ՝ *թուղթ:* Մեծություն՝ *13x19:* գրություն՝ *միասյուն:* Գիր՝ *նոտրգիր:* Տող՝ *35-40, 23:* Կազմ՝ *թղթյա:* Վիճակ՝ *բավարար:*

Ծնթ. *Ձեռագիրս 1972 թ. փետրվարի 15-ին Թէոդոսիոսյում (Նյու Ջըրսի նահանգ) տողերիս գրողի միջոցով Պետրոս Նորհատը նվիրեց Մաշտոցի անվան Մատենադարանին (N10529):*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ա. 1ա-51բ. Հազա քիթապ բուվէյէթ մուալիճէթ Պուզրատ հազիրէթլարնին (Բժշկարան Հիպոկրատի):

բ. 59ա-79ա. Մագալէի էվէլ պէնի ատէմին պէտէնի էհվալինքնդէտիր (Մարդակազմություն):

42
ՏԱՂԱՐԱՆ
(Վաշինգտոն, Կոնգրեսի գրադարան, Arm. MS N6)

ԺԹ-XIX

Թերթ՝ *32:* Նյութ՝ *թուղթ:* Մեծություն՝ *19x26:* Գրություն՝ *միասյուն:* Գիր՝ *չղագիր:* Տող՝ *26:* Կազմ՝ *թղթակազմ:* Վիճակ՝ *բավարար. կազմը՝ պատռված:*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայատառ և արաբատառ թուրքերեն տաղեր հանդիպակաց էջերով.

1ա. تاریخ حضرت پرتو افندی *(չիք հայատառ էջը)*

1բ. Կիւֆթէի Հաչմէթ. 2ա. حشمة كفتهٔ

1բ. Թարիխի Էսյ'ատ էֆէնտի. 2ա. تاریخ اسعد افندی *և այլն:*

ՀԱՅԿԱԿԱՆ ՁԵՌԱԳՐԵՐԸ ԱՆԳԼԻԱՑՈՒՄ[!]

Հայերեն առաջին ձեռագիր մատյանը Մեծ Բրիտանիա՝ Օքսֆորդի Բոդլեյան գրադարան է բերվել 1635 թ.: Այդքան վաղ հետաքրքրությունը հայ մշակույթի նկատմամբ ենթադրել էր տալիս հայկական արժեքների ավելի մեծ հավաքածոների առկայությունը Անգլիայում, ինչպիսիք կան արևելյան հնագույն այլ ժողովուրդների մշակույթների համար:*

Անգլիացի արևելագետները հայկական նյութական մշակույթի հուշարձանները հիմնականում հավաքել են մինչ Առաջին համաշխարհային պատերազմը. ձեռք բերված հնագիտական ու ազգագրական նյութերը և արվեստի գործերը արձանագրվել են այն երկրների անուններով, որտեղից դրանք ստացվել են. այսպես՝ Վիկտորիա և Ալբերտ թանգարանում հայկական գորգերը ցուցադրվում էին որպես թուրքական արվեստի նմուշներ, Արևելյան Հայաստանում պատրաստված հայկական մի գորգ ուներ «Կովկասյան աշխատանք» ընդհանուր բացատրությունը, հայերեն արձանագրությամբ 1719 թ. կրող ճենապակյա մի գեղեցիկ ափսե նույնպես վերագրված էր Թուրքիային: Իսկ հայերեն ձեռագրերը, որոնց ինքնությունը ոչ մի կասկած չէր կարող հարուցել, ամենուրեք արձանագրված են որպես հայկական:

Լոնդոնի Բրիտանական գրադարանում (հիմնադրված 1973 թ. Բրիտանական թանգարանի նախկին գրքային հարուստ հավաքածոների հիման վրա) և Օքսֆորդի Բոդլեյան գրադարանում են պահվում հայերեն ձեռագրերի առավել մեծ հավաքածոները: Այս երկու հաստատություններն ունեն նաև հայերեն տպագիր գրականություն, անգամ աշխարհում միայն մեկ օրինակով պահպանված հայերեն հնատիպ մի քանի հրատարակություններ[1]:

Հայաստանի տարբեր գրադարանների հետ ունեցած աշխույժ գրափոխանակությունը վերջին ժամանակներս մեծապես նպաստել է վերոհիշյալ գրադարանների հայերեն տպագիր գրականության հարստացմանը: Ձեռք բերված համաձայնությամբ Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ու նրանց միջև կսկսվի նաև ձեռագրերի մանրաժապավենների փոխանակություն:

! Տե՛ս «Լրաբեր հասարակական գիտությունների», 1979, № 8, էջ 109-117:

* Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրինության կողմից Բ. Չուգասզյանը 1977 թ. նոյեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 15-ը գործուղվել է Անգլիա՝ տեղի գիտական ու թանգարանային հաստատություններում, ինչպես նաև առանձին անձանց մոտ պահվող հայերեն ձեռագրերին ծանոթանալու համար: Տպագրվող լրատուն գիտական հակիրճ մի հաշվետվություն է այդ ձեռագրերի մասին (խմբ.):

1 1968 թ. Բոդլեյան գրադարանի աշխատակից պ. Դեյվիդ Բարիթը նույն գրադարանում հայտնաբերեց Իրանում տպագրված առաջին գիրքը, որ 1638 թ. Նոր Ջուղայում Խաչատուր Կեսարացու տպագրած հայերեն Սաղմոսարանն էր: Այս գիրքը Բոդլեյան գրադարան է բերվել օքսֆորդցի արևելագետ Փոքոկի (վխճ. շուրջ 1680 թ.) գրքերի հետ միասին, 1692 թ.: Մինչև վերջերս նույն Խաչատուր Կեսարացու հրատարակած «Հարանց վարքն» էր համարվում Իրանում տպագրված առաջին գիրքը: Բրիտանական գրադարանում հայերեն մի քանի եզակի ինկունաբուլներ գրքեր է հայտնաբերել նաև դոկտ. Վրեժ Ներսիսյանը:

Անգլիայում հայերեն ձեռագրերը պահվում են հետևյալ հաստատություններում և մասնավոր անձանց մոտ[1]:

Լոնդոն

Բրիտանական գրադարան (նախկին Բրիտանական գրադարանի հավաքածու). 175
ձեռ. Լոնդոնի համալսարանի Արևելյան և Աֆրիկյան ուսումնասիրությունների
ինստիտուտի գրադարան 12
Բրիտանական ու օտար աստվածաչնչական ընկերության գրադարան 4
Վիկտորիա և Ալբերտ թանգարան 3
Լոնդոնի գրադարան 1
Համբեթի պալատի գրադարան 1

Օքսֆորդ

Բոդլեյան գրադարան 135
Բալլիոլ քոլեջի գրադարան[2] 5
Նյու քոլեջի գրադարան 1
Ուադհամ քոլեջի գրադարան 1

Քեմբրիջ

Քեմբրիջի համալսարանի գրադարան 25
Պրոֆ. Հարոլդ Բեյլիի անձնական գրադարան[3] 12
Ֆիցուիլիամ թանգարան 1
Քորփուս Քրիստի քոլեջի թանգարան 1

Մանչեստր

Ջոն Ռայլնդս համալսարանի գրադարան[4] 22
Դիանա Կեսարյանի անձնական գրադարան 2

Բիրմինգհեմ

Սելլի օք գրադարան 8

---

1 Սույն տվյալների մի մասն անձամբ է ձեռք բերված, իսկ մի մասն էլ վերցված է Ջ. Դ. Փիըսընի "Oriental Manuscripts in Europe and North America" աշխատությունից, Bibliotheca Asiatica 7. zug, Switzerlaud 1971. էջ 172-173:

2 **R. A. B. Mynors**, *Catalogue of the Manuscripts of Balliol College*, Oxford, 1963, էջ 387-388.

3 **Օ. Եգանյան, Կ. Սուքիասյան**, *Յուցակ հայերեն ձեռագրաց արևելագետ սըր Հարոլդ Ուոլտեր Բեյլիի (Անգլիա)*, («Բանբեր Մատենադարանի», № 11, 1973, էջ 357-376):

4 **F. Taylor**, *The Oriental Manuscript Collections in the John Rylands Library*. Bulletin of the John Rylands Library vol. LIV, Manchester, 1971-72, էջ 449-478: Տիրայր արք. Տեր-Հովհաննիսյանը 1910 թ. Պատրաստել է Ջոն Ռայլնդս գրադարանի (ներկայումս համալսարանի) հայերեն ձեռագրերի ցուցակը, որը անտիպ է և պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանի դիվանում:

Գլազգո

Գլազգոյի համալսարանի գրադարան.....1

Էդինբուրգ

Նյու քոլեջի գրադարան.....1

Հավարդեն (Ուելսի կոմսություն)

Սենթ Դենիոլ գրադարան.....1

Ընդամենը.....412

Այս տվյալները, ամենայն հավանականությամբ, ամբողջական չեն. թերևս առանձին անկյուններում լինեն նաև այլ հայերեն ձեռագրեր, որոնք որևիցե տեղ չեն նկարագրված և ծանոթ չեն մասնագետներին: Այդպիսի մի քանի գրչագիր մատյաններ մենք տեսանք Սարգիս Քյուրքչյանի և Հարություն Գալայճյանի մոտ՝ Լոնդոնում, տիկին Դիանա Կեսարյանի մոտ՝ Մանչեստրում և Ուիլիամ Գլադստոնի հիմնադրած Սենթ Դենիոլ գրադարանում՝ Հավարդեն բնակավայրում (Ուելսի կոմսություն):

Անգլիայի հայկական ձեռագրական հավաքածոները վերջին 60 տարիների ընթացքում նկատելի աճ չեն ունեցել: Բրիտանական գրադարանի (նախկին Բրիտանական թանգարանի հավաքածո) հայերեն ձեռագրերի ցուցակում, որ կազմել է Ֆ. Կոնիբերը 1913 թ.[1], նկարագրված են եղել 149 ձեռագրեր: Փոքր-ինչ ավելի ուշ Տիրան արք. Տեր-Հովհաննիսյանը կազմել է այդ ձեռագրերի ավելի ընդարձակ ցուցակը (անտիպ)[2], որտեղ նկարագրված է 132 ձեռագիր: Ներկայումս Բրիտանական գրադարանի հայկական ձեռագրերը հաշվվում են 175 միավոր, այլ կերպ՝ 1913 թ. մինչև այսօր հավաքածոն մեծացել է 26 ձեռագրով: Ուշագրավ է, որ վերջիններից մի քանիսը ստացվել են վիպասան Րաֆֆու որդու՝ հայագետ Արամ Րաֆֆու անձնական արխիվից:

Ավելի փոքր է եղել Օքսֆորդի Բոդլեյան գրադարանի հայկական ձեռագրերի թվական աճը. 1918 թ. հրապարակված ցուցակում, որ կազմել են Սուքիաս Պարոնյանն ու Ֆ. Կոնիբերը, նկարագրված են 124 ձեռագրեր[3]: Հավաքածոն ներկայումս համալրվել է 11 նոր ձեռագրերով:

Հայկական ձեռագրական հավաքածոների՝ նման թուլ աճը բացատրվում է առաջին աշխարհամարտից հետո դեպի հայագիտությունն անգլիացիների ունեցած հետաքրքրության նվազումով: Սակայն, ինչպես արևմտյան այլ երկրներում, Անգլիայում ևս այս վիճակը ներկայումս սկսել է փոխվել. Սովետական Հայաստանի քաղաքական ու տնտեսական վերելքը, գիտության ու մշակույթի բուռն զարգացումը իր վրա է հրավիրել արևմտյան գիտնականների ուշադրությունը, աշխուժացել են Եվրոպայի հայագիտական երբեմնի կենտրոնները՝ Ֆրանսիան, Իտալիան, Գերմանիան, Անգլիան ու Բելգիան, առանձին հայագետներ են երևան եկել Լեհաստանում ու Հունգարիայում, Չեխոսլովակիայում ու

1 *A Catalogue of Armenian Manuscripts in the British Museum"*. By F. C. Conybeare, London, 1913.

2 Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվ, Տիրայր վարդապետի թողոն: Այս ցուցակը ներկայումս տպագրության է պատրաստում բանասիրական գիտ. թեկնածու Ա. Ջեյթունյանը:

3 *Catalogue of the Armenian Manuscripts in the Bodleian Library"*. By the Rev. Sukias Baronian and F. C. Conybeare, Oxford, 1918.

Ռումինիայում, հայագիտական նոր օջախներ են ստեղծվել Ամերիկայի Միացյալ Նահանգներում (Հարվարդի, Կոլումբիայի և Կալիֆորնիայի համալսարաններում), տեսական ու գործնական նպատակներով սկսել են հայերեն (գրաբար ու աշխարհաբար) դասավանդել տարբեր երկրների բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Անգլիայում հայագիտության բնագավառում բեղմնավոր աշխատանք են կատարում պրոֆ. Զարլզ Դովսեթը՝ Օքսֆորդի համալսարանում և պրոֆ. Դեյվիդ Լանգը՝ Լոնդոնի համալսարանի արևելյան և աֆրիկյան ուսումնասիրությունների ինստիտուտում: Հայագիտական աշխատանքներով հանդես են գալիս դոկտ. Զարլզ Բեյլին, պրոֆ. Էդ. Կյուլպեկյանը, ժամանակակից հայոց պատմության խնդիրներով՝ Քրիստոֆեր Ուակերը: Մատենագիտական աշխատանքներով նորերս հրապարակ է իջել Բրիտանական գրադարանի հայկական բաժնի վարիչ, երիտասարդ բանասեր դոկտ. Վրեժ Ներսիսյանը: Վ. Ներսիսյանը ծրագրում է ցուցակագրել ու նկարագրել Անգլիայի հայերեն այն բոլոր ձեռագրերը, որոնք ցարդ ըստ ամենայնի չեն նկարագրված:

Անգլիայում տարվող հայագիտական ընդհանուր աշխատանքներին, անկասկած, պետք է նպաստի նաև կոմպոզիտոր Լորիս Ճգնավորյանի ջանքերով 1976 թ. հիմնադրված «Լոնդոնի հայ երաժշտության ինստիտուտը», որն արդեն ձեռնամուխ է եղել միջնադարյան ու ժամանակակից հայ երաժշտության համակողմանի ուսումնասիրությանը:

Ձեռագրագիտական աշխարհում Լոնդոնը հայտնի է իր աճուրդային ընկերություններով, որտեղ պարբերաբար վաճառքի են հանվում համաշխարհային մշակույթի, այդ թվում միջնադարյան ձեռագրերի, եզակի հուշարձաններ: Այս ընկերությունների մեջ առավել հռչակվածը Սոթբի աճուրդային ընկերությունն է (հիմն. 1774 թ.), որ վերջին հարյուրամյակի ընթացքում արևելյան արժեքների հետ միասին վաճառքի է հանել նաև հայերեն ձեռագրեր և արվեստի այլևայլ գործեր:

Սոթբիի գրականության բաժինը 1977 թ. դեկտեմբերին նախապատրաստվում էր 1978 թ. ապրիլին կայանալիք աճուրդում վաճառքի հանել Նյույորքցի հայտնի հնահավաք, մի քանի տարի առաջ վախճանված Հակոբ Գևորգյանի արևելյան արվեստի ու ձեռագրերի հարուստ հավաքածոյի մի մասը, դրանց մեջ նաև հինգ հայերեն ձեռագրեր: Հ. Գևորգյանը զարմանալի բանիմացությամբ երկար տարիների ընթացքում հավաքել է պարսկական, հնդկական, արաբական և այլ արևելյան ժողովուրդների արվեստի ու գրականության այնպիսի հազվագյուտ հուշարձաններ, որոնց յուրաքանչյուր աճուրդը սենսացիոն բնույթ է կրում:

Սոթբի ընկերության գրականության բաժնի վարիչ պ. Մայքլ Ջոնսը, որ տեղյակ էր մեր Մատենադարանի գործունեությանը, ամենայն պատրաստակամությամբ թույլատրեց մեզ ծանոթանալ առաջիկա աճուրդում վաճառվելիք Հ. Գևորգյանի հայերեն ձեռագրերին. դրանք էին՝ XVI-XVII դդ. մի Շարակնոց (գրիչ Դավիթ), մեկ Մաշտոց՝ ընդօրինակված 1677 թ. Լոռվա Հոռոմայր գյուղում (գրիչ Հոնան) և երեք Ավետարաններ՝ առաջինը ընդօրինակված Խիզանում, 1620 թ. (գրիչ և ծաղկող Հովհաննես Խիզանցի), երկրորդը՝ Գանձակի մոտ գտնվող Քարահատ գյուղում, 1650 թ. (գրիչ Գրիգոր), իսկ երրորդը՝ Ղափանի Աֆգոս գյուղում, 1682 թ.: 1620 թ. Ավետարանը, որ ծաղկել էր Հովհաննես Խիզանցին, ուներ բազմաթիվ բարձրարվեստ մանրանկարներ, դրանց թվում և ձեռագրի ամբողջ էջով մեկ կատարված պատվիրատու Աղազարի պատկերը: 1978 թ.

Սոթբիի լույս ընծայած վաճառքի ցուցակում[1], որտեղ մանրամասն նկարագրված են ա-ճուրդի հանվող վերոհիշյալ ձեռագրերը, այս մանրանկարը չի հիշատակված:

Սոթբի ընկերությունում աճուրդային մուրճի հարվածով վաճառվող հուշարձան-ների հիմնական մասն անցնում է մասնավոր գործարար մարդկանց ձեռքը: Բրիտանա-կան թանգարանային ու մշակութային հաստատությունները, նյութական պակասի պատճառով, չեն կարողացել մրցել մասնավոր գնորդների հետ, ուստի և շատ հազվադեպ են կարողանում այդ արժեքները գնել[2]: Սոթբի ընկերությունը յուրաքանչյուր աճուրդի համար պարբերաբար տպագրում է վաճառքի հանվող նյութերի ցուցակները: Մեր խնդրանքով դոկտ. Վրեժ Ներսիսյանը սիրով հանձն առավ Բրիտանական գրադարանում պահվող այս ցուցակներից քաղել մինչև օրս այդ ընկերության աճուրդի հանած հայե-րեն ձեռագրերի նկարագրությունները և դնել Մատենադարանի աշխատակիցների տրա-մադրության տակ:

Ձեռագրերի աճուրդային եռուզեռը աշխարհի տարբեր կողմերից դեպի Լոնդոն է ձգում մեծ ու փոքր առևտրականների, որոնք հիմնականում արևելյան երկրներում կաս-կածելի ուղիներով ձեռք գցած հնություններ մեծ շահերի ակնկալումով փոխադրում են Լոնդոն: Սակայն այստեղի չուկաներում հարգի են բարձր արվեստի գործերը, ձեռա-գրերից՝ մանրանկարներ ունեցողները, իսկ այդպիսիք հազվադեպ են: Նման չահադի-տական նպատակներով այդ օրերին Լոնդոն էր եկել մի իրանահայ՝ իր հետ բերելով յոթ ձեռագիր, հիմնականում XVII-XVIII դդ. ընդօրինակություններ. Մաշտոց, Սաղմոս ու Հայսմավուրքներ, որոնք չունեին ոչ մի կարևոր հիշատակարան և ոչ էլ մանրանկարներ. ձեռագրերին գին տվող չեղավ և տերը ստիպված եղավ դրանք ետ տանել Իրան: Նման երեք հայերեն ձեռագրեր Սոթբի ընկերությունը ստացել էր նաև Արևմտյան Գերմանիա-յից, բայց վաճառքի չէր հանում, որովհետև առանձնապես մեծ շահ չէր ակնկալում:

Անգլիայում հայերեն ձեռագրեր կան նաև առանձին հայերի ընտանիքներում: Ստորև տալիս ենք մեր տեսած չորս ձեռագրերի նկարագրությունը, որոնցից երկուսը պ. Սարգիս Քյուրքչյանից ու պ. Հարություն Գալայճյանից նվեր ստացանք Մատենադա-րանի համար, իսկ Լոնդոնի հոգևոր առաջնորդ Ներսես արք. Պոզապալյանը Մատենա-դարանի արխիվին նվիրեց 1718 թ. մի հայերեն փաստաթուղթ: Մեզ հայտնեցին, որ հա-յերեն ձեռագրեր և պատառիկներ կան նաև լոնդոնաբնակ պ. Վարոս Շահբազյանի մոտ, որոնք 1978 թ. երևան ուղարկեց Լոնդոնի «Հայտան» տնօրեն պարոն Սանդրունին:

1. ԱՎԵՏԱՐԱՆ
(Հավարդեն, Սենթ Դենիոլ գրադարան)

ԺԶ XVI

Թերթ՝ *305:* Զգրված՝ *1ա, 2ա, 3բ, 4ա, 5ա, 5բ, 6բ, 7ա, 8ա, 8բ, 9բ, 10ա, 11ա, 11բ, 12բ, 13ա, 14ա, 15բ, 16ա, 17բ, 18ա, 19բ, 20ա, 20բ, 22ա, 23բ, 24ա, 25բ, 30ա, 31բ, 112ա, 113ա, 114ա, 168ա, 169ա, 249ա, 250ա, 250բ, 305բ:* Պրակ՝ *23:* Նյութ՝ *մագաղաթ:* Չափ՝ *14x10:*

1 Sotheby's Spring Islamic Sales. Catalogue of Important Oriental Manuscripts and Miniatures. The property of the Hagop Kevorkian Fund, Monday 3-rd April, 1978, էջ 206.

2 1978 թ. ապրիլի 3-ին աճուրդի հանված վերոհիշյալ բոլոր ձեռագրերը նույնպես գնել են մասնավոր անձինք:

Գրություն՝ *երկսյուն:* Գիր՝ *բոլորգիր:* Տող՝ *21:* Մաճառանկարչություն՝ *Ավետում՝ 1 բ, Մոգերի երկրպագությունը՝ 3բ, Տեառնընդառաջ՝ 4բ, Մկրտություն՝ 6ա, Ոտնալվա՝ 7բ, Մատնություն՝ 9ա, Խաչելություն՝ 10բ, Հարություն՝ 12ա, Հոգեգալուստ՝ 13բ, Պայծառակերպություն՝ 15բ, Խորան՝ թուղթ եվսեբի՝ 16բ-17բ, համաբարբառի՝ 18ա, 19բ, 20բ, 21ա, 22բ, 23ա, 24ա, 25բ: Մատթեոս՝ 29բ, Մարկոս՝ 112բ, Ղուկաս՝ 167բ, Հովհաննես և Պրոխորոն՝ 249բ: Կիսախորան՝ 31ա, 114ա, 169ա, 251ա: Լուսանցազարդ՝ բուսական և տերունական:* Կազմ՝ *կաշեպատ տախտակ արծաթե կրկնակազմով. առաջին փեղկ՝ Հարություն, երկրորդ փեղկ՝ Մկրտություն, կողի վրա՝ «Վիլիամ Գլադստօնին Կովկասի հայերից, 1895, Տփղիս»:* Վիճակ՝ *լավ:*

Կնիքադրոշմ՝ *«Գիրքս սբ. Էջմիածնա է»՝ 31ա, 114ա, 169ա, 251ա:*

Ծնթ. – *XIX դ. վերջին տասնամյակներին անգլիական պետական գործիչ Վիլիամ Գլադստոնին (1809-1898) կովկասահայերի կողմից 1897 թ. մի մանրանկարված հայերեն ձեռագիր նվիրելու մասին տեղեկություններ է հաղորդված երվանդ Շահազիզի «Բանաստեղծ Ռաֆայել Պատկանյանի նամակը Գլադստոնին և նրա պատասխանը» հոդվածում («Էջմիածին», 1945, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 64):*

Ձեռագրի պահպանության վայրը մեր խնդրանքով 1976 թ. փնտրել և գտել է Լոնդոնի «Ջըրնիման» հրատարակության տնօրեն, լրագրող Փիթեր Սինքլերը, որը և 1977 թ. դեկտեմբերի 2-ին մեզ ուղեկցեց Հավարդեն (Ուելսի կոմսություն): Հավարդեն գնալու գործում մեզ օժանդակեցին լոնդոնաբնակ Էմմա Դեյը (Օհանյան) և Ժաքլին Շամլյանը:

2. ԺՈՂՈՎԱԾՈՒ
(Լոնդոն, Հարություն Գալայճյան)

Սուրբ Աստվածածին և Սուրբ Ստեփաննոս Նախավկայի վանք ՈՒՀԲ –1623

Գրիչ՝ *Գրիգոր Կողոնացի (Ղարասարցի) և Մանվել:* Ծաղկող՝ *Գրիգոր Կողոնացի:* Ստացող՝ *Մելքոն Դպիր Ծանախեցի:* Թերթ՝ *229, չգրված՝ 156ա:* Պրակ՝ *Ա–Իեx2 (Ա 11):* Նյութ՝ *թուղթ:* Չափ՝ *28x15:* Գրություն՝ *երկսյուն:* Գիր՝ *բոլորգիր:* Տող՝ *25:* Մաճառանկարչություն՝ *կիսախորան սկզբնաթերթի՝ 1ա, 150ա, 157ա: Ճակատազարդ՝ 56ա, 121բ, 179բ, 252բ, 293ա: Մանրանկար՝ Հովհաննես և Պրոխորոն՝ 156բ: Լուսանցազարդեր՝ բուսական: Զարդագրեր՝ թռչնագիր: Գույներ՝ կարմիր, կանաչ, կապույտ:* Կազմ՝ *կաշեպատ տախտակ, դրոշմազարդ, վրան մետաղյա կոստղեր:* Վիճակ՝ *բավարար, տեղ-տեղ ցեցակեր, մանրանկարված սկզբնաթերթերը ջուր տեսած:*

Ծնթ. – *Ձեռագիրը 1977 թ. դեկտեմբերի 10-ին Լոնդոնում պրն. Հարություն Գալայճյանը տողերիս գրողի միջոցով նվիրել է Մաշտոցյան Մատենադարանին, որտեղ այն գրանցվել է 10775 թվահամարի ներքո:*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*Ա. 1ա-155բ (*Քառոզք Ղուկասու Լուսեցւոյ*)*[1]*:*

1 **Է. Հարությունյան**, *Ղուկաս Լուսեցին և նրա քարոզագիրքը* («Բանբեր Մատենադարանի», № 10, 1971, էջ 213-236):

Բ. 1. 157ա-173բ Վարք լուսաւորութեան և սկիզբն Նշանաց Յոհաննու աւետարանչի, զոր արար Ցեփեսոս, զոր գրեաց երանելի աշակերտն նորա Պռոխորոս. – *Վարք լուսաւորութեան և աստուածական ժառանգութիւն…*

2. 173բ-179բ Յաղագս Յոհաննու աւետարանչի, թէ որպէս խաւսեցաւ զիւր զԱւետարանն, եւ վասն սմանչելի տեսլեանն և վասն փառաւոր ննջմանն ի Պռոխորոս պատմութենէն. — *Յետ ննջմանն ամէնասուրբ կուսին…*

3. 179բ-204ա Նորին Յոհաննու: Ջնշանսն զոր արարի Պատմակղզոյն և ի խաղաքին Ջահաւոր: Յաղագս Կինոպասա և չարաւուեստ կախարդութեան նորա, զոր արար ի ձեռն չարաժանդ մարդկան. – *Քան զի էր այր մի Պատմակղզոյն…*

Գ. 204ա-249բ Յանուն տեառն աստուծոյ և ի կա (sic) փառաց նորա: Վասն ժ վանառականացն [և] վասն Ը առակաւ ոտոգայթիցն… (Վարդանայ Վարդապետի) – *Եւ արդ բազում անգամ խորհեցա ողորմելիս Վարդան…*

Դ. (Գանձ, մեղեդի, տաղ):

1. 249բ-251բ Կանոն սրբոյն Գրիգորի Լուսաւորչի: Դաղաս (Գանձ սրբոց Քառասնիցն. ծայրակապ՝ «Մկրտիչ»). — *Մեծ և հըզաւր անմահից արքայ, / Յիսուս Քրիստոս աւրհնեալ յարակայ…*

2. 251բ-252ա Մեղեդի սրբոյն Գրիգորի. — *գրիգորիս առաքինի հըսկող Քրիստոսի, / Զինւոր յասպարիսին արի…*

3. 252ա Մեղեդի Յարութեան. — *Յարեաւ հաւն այն արթուն…*

4. 252ա Տաղ ազնիւ. — *Սուրբ է տաճար տէրունական, / եկեղեցի աստուածական…*

Ե. 252բ-299բ (Բնագիրք զանազանք):

1. 252բ-260ա Խրատ Վարդան վարդապետի արարեալ յաղագս Հրիստոնէից. — *Ո՛վ որդեակք, վերջին է ժամանակս…*

2. 260ա-274բ [Վասն մեղաց] — Յառաջն հետ մարդոյ մարմնական մեղաւք պատերազմի շուայտութեամբ…

3. 274բ-284ա Քարոզ ի բան իմաստասիրին Արիստոտելի, որ ասէ. Գովելի են գեղեցիկն և պարսաւելի են գարշելիքն… — *Եւ զի Պղատոնի հոգի եռամասնեա է՝ բան, ցասումն և ցանկութիւն…*

4. 284ա-291ա [Հարցումն երիտասարդի ախմարի վասն ուղիղ վարուց առաքինութեանց և պատասխանի ծերոյ ոմն] — Ա[սէ]. Հայր, կամիմ հարցանել ընդ քեզ վասն վարուց առաքինութեան…

5. 293ա-299բ [Նախերգան վարդապետական և օրինութիւմ յետ քարոզի] — Այլև ամենազաւր փրկիչ մեր Քրիստոս, որ էջ ի յերկնից և մարմնացաւ ի սուրբ կուսէն… (Նոտրգիր, այլ գրիչ):

Հիշատակարան. Գրչի

291ա. Փառք… որ ետ կարողութիւն նուաստ և յոգնամեղ անձին իմոյ, ախմար և տարտամ մտացս, լոկ անուն Գրիգոր Կողոնացոյ, որ այժմս կոչի Ղարասար, ի յաւարտ հասանել

տառիս, որ է Քարոզգիրք, զի սայ է հմտութիւն և դուռն մտաց ճարտասանութեան, սովաւ իմաստնանան ներհուն քննութեամբ վարդապետք եկեղեցոյ և աշակերտեալ մանկունք բանասիրութեան սովաւ վերծանին և կըրթին ի յուսումն և ի բան, և սովաւ ծանի իմաստութիւնն հոգեւորական իմաստութիւն Հնոյ և Նորոյ Կտակարանաց // (291բ), զի ճաշակեն զծորեանս աստուածային և արբեցուցանեն յոգւոց ծարաւելոց, որոյ ցանկացեալ եղև սմա տենչալի և բաղձալի դիմաւք մեծայփափաքանաւք Մելիոն *դպիրն Ծանախեցի, գրել երետ զմատեանս աստուածային՝ ի վայելումն անձին իւրոյ։*

Գրեցաւ սա ի թվին հայոց Ո և ՀԲ (1072+551=1623) ի յունիս ամսոյ ԻԶ (26), ի դուռն Սուրբ Աստուածածնին և Սրբոյն Ստեփաննոսի Նախավկային, *և այլ ամենայն սրբոցն, որ աստ են հաւաքեալ, ի թագաւորութեանն բռնակալ* սուլթան Մուսթափին, *ի յառաջնորդութեանն* Տէր Կարապետին *և* Տէր Թաթէոսին *և մեր համշիրակ եղբայրացելոց մերոց* զՏէր Վարդանն, զՏէր Գրիգորն, զՏէր Աստուածատուրն, զմիւս Տէր Գրիգորն *և աշակերտաց իմոց՝* զՄանուէլ սարկաւագն, զՍարգիսն, զԿարապետն, *և զծնօղս իմ՝ զմահդասի* Պապն *և զմայրն* զխուպիկն, *և զեղբայր իմ զհայր* Անտոնն, զխուպիճանն *և* զՊապաճան *և զաւակաց մերոց՝* զՍրապիոն, զԹաթէոսն, զՊարսանն, զՄարխասն։ *Ջոր հայցեմ և յուսամ ամէնազաւր Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, որ անփորձ և անարատ պահեսցէ ներքին և արտաքին պատահարկրիցն, մանաւանդ դաւաճանողէն մերմէ, տեսուչ քաղաքիս և համաւրէն Բ (2) եկեղեցոյ քահանայքս, պարագայ // (292ա) ամաւք, երկար ժամանակաւք ի պարծանք քաղաքիս մերոյ, մինչև սահմանագրեալ կէտ կոչման իւրոյ, ևս առաւել հայկազան ազգիս մերոյ և հաւասար ժողովրդեանս մերոյ։*

Դարձեալ երեսս ի գետին բազմապատիկ աղաչեմ զձեզ, որ դասք իմաստասիրաց, յորժամ վարժիք իբ սմանէ, յիշեցէք սուրբ և արժանաւոր աղօթս ձեր զեղկելի և զանարժան Գրիգոր *գրիչս և զուսուցիչն իմ՝ զմիքայէլի* Մարտիրոսն *քահանան, որ փոխեալն ի Քրիստոս և* զՏէր Մարուգէն, *որ ունին բազում աշխատանք ի վերայ անարժանիս։*

Դարձեալ երես անկեալ աղերսեմ և մաղթեմ ի ձեզանէ, ո՛վ պատահող սորա, զի անմեղադիր լերուք խոշորութեան գրիս, զի բազում հարկապահանջութիւն կայր ի չար ժամանակիս, որ Ա (1) տարին Գ (3) անգամ խարաճ առին ի հայոց ազգիս մերոյ, որ տառապեալ և նուաղեալ շրջէաք և դարձեալ ազդեցութեամբն սուրբ Հոգւոյն և ներող ողորմութեամբն իւրոյ մեզ զգիրքս գրել։ Եւ տեսեալ զսա Մելիոն *սարկաւագն հարկ եդիր ի վերայ մեղօրիս գրել զգիրգս այսպիսիս, թէ սա խնդրեաց* Ծանախացի Ալեքսանոս *եպիսկոպոսն և քահանայքն* Տէր Պետրոսն *և* Տէր Կիրակոսն *և միահամուռ ժողովուրդն ամենեքեան, թէ նոքա խնդրեցին զայս աստուածաշունչ գիրքս, բայց էս անարժանս զցայf և զցերեկ ի մէջ տրտմութեան և տարակուսի կայի և անձն իմ խռովեալ էր մինչ ի չափ // (292բ) մահու, վասն այս պատճառիս խիստ տարտամեալ էր սիրտ իմ ի յահէ անաւրինացն և մոլորեալ էր միտս և ուժոյ թափեալ էր անձն իմ և չէի գիտել, թէ զինչ կու գրէի, միթէ ամէնագութն Աստուած ձերում աղաւթիւքն և բարէխօսութեամբ սուրբ Աստուածածնին յակնարկէ իւր ի սուրբ պատուական արեամբ գնեալ ծառա[յ]քն, որ ամենևին ցիր ու ցան եղեալ են, որ ոմն յայս կոյս և ոմն յայո կոյս բնակեալ են, վասն որոյ քաղցր աչօք հայեսցի ողորմածն Աստուած և գթա ի վերայ մեղուցելոյս, Ներէ ողորմութեամբ իւրով և կրկին վերստին դար-*

ձեալ շնորէ համօրէն հօատացելոցն։ Վասն որոյ յայսմն իրի անմեղադիր լերուք սղանալոց իմոց և անպարսաւ թողէք զեղկելիս, զի ըստ առաւտ ողորմութիւնն իւր. զի լի սրտիւ և սերտ հաւատով մի բերան ողորմի ասացէք մեզ յիշողացդ։ Եւ ձեզ յիշեցողացն ողորմեսցի Քրիստոս Աստուած վարձահատուցն ամենայնի, որ առատն ի տուրս բարեաց, հատուսցէ վարձս գործոց իւրաքանչիւրոց մեզ և ձեզ ամէնեցուն, ամէն։ Հայր մեր որ յե՛ս։

184բ. Սուրբ և փառաւորեալ աւետարանիչս բարեխաւսութեամբ Քրիստոս Աստուած, ողորմեա ստացողի սուրբ գրոցս (շար. Ալեքսանոս վարդապետի ձեռքով–տե՛ս էջ 292բ) Ալէքսան *վարդապետին և իւրոցն ամենայնի. ամէն։ Հայր մեր։*

204ա. Ով սրբասնեալ քահանայք, յորժամ կարդայք և լուսաւորիք, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զստացող սուրբ գրոցս, մեր հոգևոր քուրոչն Խանին, *որ բազում աշխատանս ունի ի վերայ գրոցս. Քրիստոս իւր մեղացն թողութիւն շնորհէ։ Ընդ նմին և զիս զանարժան և զփծուն* Մանուէլ գրիչս աղաչեմ յիշել ի տէր։

Հետագայի

292բ. Այլև վերջին ստացող դուրս (= գրոյս) Ալէքսան *վարդապետին, հայր իմ* Դաւթին. *մայր իմ* Խանումին, *եղբարն իմ* Օվաննէս Խաչատուրին, Տէր Շմայոնին, Տէր Աստուածատուրին, *իւր ազկայականին ամենեցոյն։*

299բ. Թվին ՌՃՁ և մէկ (1181+551=1732) օգոստոս ամսոջ ԺԹ (13) աւուր փոխման սուրբ Աստուածածնին///

3. ԱՎԵՏԱՐԱՆ
(Մանչեստր, Դիանա Մարգարյան-Կեսարյան)

ՌՀԶ – 1627

Գրիչ՝ *Ղուկաս։* Ստացող՝ *Մինաս քահանա։* Էջ՝ *համարակալված 556։* Զգրված՝ *1-4, 6-8, 14-16, 244, 442։* Պրակ՝ *Ա – ԻԹx12։* Նյութ՝ *մագաղաթ։* Մեծություն՝ *13x9։* Գրություն՝ *երկսյուն։* Գիր՝ *բոլորգիր։* Տող՝ *21։* Մանրանկարչություն՝ *Մարկոս՝ 180, Ղուկաս՝ 246։ Կիսախոբան՝ 17, 181, 247, 443։ Լուսանցազարդ՝ բուսական, կենդանական և տերունական (Մկրտություն՝ 30, Քրիստոսը Գեթսեմանի պարտեզում՝ 166)։* Կազմ՝ *կաշեպատ տախտակ մետաղե խաչերով։* Պահպանակ՝ *մագաղաթյա, չգրված։* Վիճակ՝ *լավ։*

Ծնթ. — *Ձեռագրի որոշ էջերում փոքրիկ դատարկ տեղեր են բաց թողնված՝ հավանաբար մանրանկարների համար։ Ջունի Մատթեոսի և Հովհաննու մանրանկարները։ Կազմի երկու փեղկերը չղթայով իրար են կապված։*

Հիշատակարան. Գրչի

Էջ 5. Աւգնեա հոգիս սուրբ Աստուած
Անարժան և յոգնամեղ գրչի՝
Ղուկաս սուտանուն քահանայի,
Սկսման զտառս ի գնի։
Ով ոք որ զսա տեսանի՝

Լի սրտով նա ինձ վա՛ասի,

Նա ինքն ահեղ ատենին

Քրիստոսէ հոգով վարձատրի…

Տէր, դու առաջնորդես (կրկնված է ևս երկու անգամ)։ Քրիստոս աւգնէ և հոգին սուրբ կամակից լինի։ Ամէն եղիցի։

էջ 13. (Շրջանակաձև գրված) Ով պատուական հարք և եղբարք, յորժամ հանդիպիք սուրբ Աւետարանիս կարդալ[ով] կամ աւրինակելով, մեղաւոր Ղուկաս գծողիս լի բերանով և ուղիղ սրտիւ Աստուած ողորմի ասացէք։

էջ 245. Ջանարժան Ղուկաս գրչիս յիշման արժանի արա, ո՛վ ընթերցող, աղաչեմ։ Թվ ՌՀՋ (1627) էր։

էջ 439. Աստ զողորմելի և զտառապեալ զանարժան և մեղսամակարթ զՂուկաս զեղկելի գրիչս յիշման արժանի արարէք ո՛վ բարեբարոյ ընթերցողք և զԱստուած ողորմին բարբառեցէք։

էջ 549. «Փառք… ուստի և շառաւիղն աւրհնութեան և սեռն բարենշան սրբասէր և հեզահոգի և բարեմիտ Տէր Մինաս Ֆահանայն *(անունն այլ ձեռքով) ցանկացող եղև և այսմ երանաւէտ և կենսապարգև սուրբ Աւետարանիս և ստացող զսա յարդար վաստակոց իւրոց՝ գանձ անկողոպտելի առ Քրիստոս բարեխօս և յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնաւղաց իւրոց, հօրն՝* Մաթէոսին *և մօրն (անավարտ)»։*

Հետագայի

էջ 552. Յիշատակ է սուրբ Աւետարանս խոջայ Տրթատին *կողակցին* Եղիսայբէթին, *հօրն՝* Գրիգորին, *մօրն՝* Մարիամին, *եղբօրն՝* Սեճայֆարին *և իւր կողակցին, միւս եղբօրն՝* Սարգիսին *և իւր կողակցին, քորջն՝* Խոսրովին *և* Թաւարին *և ամենայն արեան զարմին։*

Թվին ՌՃՀՋ (1727)-ն սեպտեմբերի Դ (4). Համասպուռ կուսին։

էջ 559. Եւ դարձեալ յիշատակ է սուրբ Աւետարանս խոջա Աբրահամին *և հօրն՝* Մովսէսին *և մօրն՝* Թաւարին *և կողակցին՝* Հռոմին *և որդոյն՝* Սահակին *և տ[ա՞]երացն Թաւարին և ամենայն արեան զարմին։ Թվին ՌՃՂԱ (1742)-ին յունվարի ԺԴ (14)-ին։*

4. ԱՎԵՏԱՐԱՆ ՅՈՒՂԱԲԵՐԻՑ
(Լոնդոն, Սարգիս Քյուրքչյան)

ԺԸ – XVIII

Թերթ՝ *10։* Նյութ՝ *թուղթ։* Մեծություն՝ *29,5×42։* Գրություն՝ *երկսյուն։* Գիր՝ *բոլորգիր։* Տող՝ *21։* Մանրանկարչություն՝ *Մատթեոս՝ 1բ, Մարկոս՝ 3բ, Ղուկաս՝ 5բ, Հովհաննես՝ 7բ, սկզբնատերերերի վրա՝ Յուղաբեր կանայք՝ 2ա, Քրիստոսը Տիբերիայի ծովեզերքի մոտ՝ 4ա, Պայծառակերպություն՝ 6ա, Մարիամ Մագդաղինացին Քրիստոսի գերեզմանի մոտ՝ 8ա։* Լուսանցազարդեր՝ *բուսական։* Կազմ՝ *թավշապատ խավաքարտ. առաջին և երկրորդ փեղկերի վրա արծաթյա քանդակներ՝ «Յուղաբեր կանայք» և «Քրիստոսի թաղումը»։* Պահպանակ՝ *ծաղկաթուղթ։* Վիճակ՝ *բավարար։*

Ծնթ. *1. – Ձեռագրի պատկերները կրում են ուշ ժամանակների եվրոպական գրքային գեղանկարչության ազդեցության կնիք:*

Ծնթ. *2. – Ձեռագիրը պատկանել է նյույորքաբնակ Հակոբ Գևորգյանին. կազմի առաջին փեղկի ներսում կա նրա հավաքածոի 981 թվահամարը: Մի քանի տարի առաջ այս մատյանը վաճառքի է հանվել Լոնդոնի Սոթբի աճուրդային ընկերությունում. գնել է Սարգիս Քյուրքչյանը: 1977 թ. դեկտ. 13-ին տողերիս գրողը Լոնդոնում ձեռագիրը Ս. Քյուրքչյանից նվեր ստացավ Մաշտոցյան Մատենադարանի համար. գրանցված է 10774 թվահամարի ներքո:*

ՅՈՒՅԱԿ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԱՑ ՄԱՍՆԱՎՈՐ ԱՆՁԱՆՑ[1]

1
ԱՒԵՏԱՐԱՆ
(Փարիզ, Սիրարփի Տէր-Ներսեսեան)

ԺԳ դար

Թերթ՝ *296:* գրիչ և ստացող՝ *Յովհաննէս:* Նյութ՝ *մագաղաթ:* Մեծություն՝ *9x12,5:* գրություն՝ *երկսյուն:* Գիր՝ *բոլորգիր:* Տող՝ *18:* Մանրանկարչություն՝ *Մարկոս՝ 65բ, Հովհաննեսը Պրոխորոնի հետ՝ 222բ, կիսախորաններ՝ 66ա, 223ա, լուսանցազարդեր՝ բուսական:* Կազմ՝ *չիք:* Պահպանակ՝ *մագաղաթ 2 վերջից:* Վիճակ՝ *սկզբից և մինչից պակաս թերթեր:*

Ծանոթ. *Ձեռագիրը նախկինում պատկանել է Մաղաքիա արք. Օրմանյանին՝ անվանի արվեստագետ պրոֆ. Սիրարփի Տեր-Ներսեսյանի մորեղբորը: 1982 թ. մայիսի 15-ին Փարիզում հարգելի պրոֆեսորը տողերիս գրողի միջոցով մատյանը նվիրեց Մատենադարանին. գրանցվել է 10866 թվահամարի ներքո:*

Հիշատակագրություններ

1. 64բ. Ջտառապեալ գծողս յիսեսչ[իք] ի Տէր, զՅոհաննես եղկ[ելի]:

2. 127բ. Ջստացաւղ սուրբ Աւետարանիս զՅոհաննես և զծնող և զեղբարսն իմ և վարդապետս յիսեսչիք ի Տէր աղաչեմ:

3. 222բ. Ջտառապեալս Յոհաննես յիշեսչիք ի Տէր:

2
ԱՒԵՏԱՐԱՆ
(Արթիկ քաղաք, Կարապետ Վահրամի Կարապետյան)

ԺԵ դար

Թերթ՝ *232:* գրիչ, ծաղկող և վայր՝ *անհայտ:* Նյութ՝ *թուղթ:* Մեծություն՝ *12x17,5:* գրություն՝ *երկսյուն:* Գիր՝ *բոլորգիր:* Տող՝ *22:* Մանրանկարչություն՝ *Մարկոս՝ 68ա, Ղուկաս՝ 118բ: Սկզբնաթերթեր՝ 89ա, 119ա, 191ա: Լուսանցազարդեր՝ բուսական:* Կազմ՝ *նոր, կաշեպատ տախտակ:* Պահպանակ՝ *թուղթ:* Վիճակ՝ *սկզբից, մինչից և վերջից բազմաթիվ թերթեր ընկած:*

Ծանոթ. *Սույն ձեռագիրը 1829 թ. Արևելյան Հայաստան է բերվել Կարինի չրջանի Կան գյուղից և պահվել է Կարապետյանների ընտանիքում:*

Ձեռագրի հասցեն մեզ տրամադրել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի դասախոս, ճարտարապետ տիկին Ալեքսանդրա Երեմյանը:

1982 թ. հոկտեմբերի 22-ին քայքայված և հրդեհից տուժած այս մատյանը փոխադրվել է Մատենադարան, որտեղ ձեռագրագետ Օնիկ Եգանյանը խառնված թերթերը

---

[1] Տե՛ս «Բանբեր Մատենադարանի», Երևան 1986, № 15, էջ 339-352:

վերադասավորել և ճշգրտել է ըստ բովանդակության: Ջեռագիրը վերանորոգումից հետո վերադարձել է տիրոջը:

Հիշատակարան հետագայի

1. 67բ. Աւարտեցաւ սուրբ Աւետարանս սրբոյն Մինասայ տաճարին ձեռամբ Տէր Ոսկիկայն վա[ր]դապետին: *Գիրս որ ի մէջ տաճարին գրեցինք պահօք և պատարագօք երեք հատօք նուն չափօք ջուր: Թվին հայոց ՋԽ (1491)-ին սեպտեմբերին ԺԸ (18), գծողս մի (ընդհատված):*

2. 67բ. Յիշատակ է Աւետարան: Յիշատակ է թվին հայոց այս ՋՀ (1521)-ին:

Ծանոթ. *Սույն նկարագրությունը կատարվել է 1983 թ. մայիսի 15-ին:*

3
ԱԻԵՏԱՐԱՆ
(Լուսակերտ (նախկին Թալիբօղլի) գյուղ, Արթիկի շրջան, Անուշավան (Արզուման) Հովհաննեսի Կարապետյան)

ԺԵ դար

Թերթ՝ *346+1 (կրկ. 65):* գրիչ, ծաղկող և վայր՝ *անհայտ:* Նյութ՝ *թուղթ:* Մեծություն՝ *14,5x21:* գրություն՝ *երկսյուն:* Գիր՝ *բոլորգիր:* Տող՝ *21:* Մանրանկարչություն՝ *Մարկոս՝ 95բ, Ղուկաս՝ 151բ, Հովհաննեսը Պրոխորոնի հետ՝ 244բ: Սկզբնաթերթեր՝ 96ա, 152ա, 245ա: Լուսանցազարդեր՝ բուսական և թեմատիկ:* Կազմ՝ *դրոշմազարդ կաշեպատ տախտակ՝ վրան արծաթյա երեք խաչեր և մետաղյա չորս ձեռքեր:* Պահպանակ՝ *թուղթ:* Վիճակ՝ *սկզբից, միջից և վերջից բազմաթիվ թերթեր ընկած:*

Ծանոթ. *Սույն ձեռագիրը 1828 թ. բերվել է Ղարսի չրջանի Բագրամատ գյուղից:*

Ջեռագրի հասցեն մեզ տրամադրել է Արթիկ քաղաքի ճարտարապետ Ռազմիկ Հովսեփյանը:

1982 թ. հոկտեմբերի 22-ին քայքայված ու պատառոտված այս մատյանը փոխադրվել է Մատենադարան, որտեղ ձեռագրագետ Օնիկ Եգանյանը խառնված թերթերը վերաձասավորել և ճշգրտել է ըստ բովանդակության: Ջեռագիրը վերանորոգումից հետո վերադարձվել է տիրոջը:

Հիշատակարան հետագայի

244ա. Յիշատակ է սուրբ Աւետարանս Նոռաւևին, *հօրն՝* Շահպառոնին, *մօրն՝* Զմրութին, *եղբաւրն՝* Խաչատուրին, *թոռինն՝* Աստուածատուրին, *կողակցին իւրոյ՝* Շամիխանին, *դստերացն՝* Շահրիստանին, Կուլիստանին, Մարգարտին: *Աւետարանս Սեբաստիացի ի Պախճաճուկ գեղջէն կոչի:*

Ով ոք զսա ծախել կամի
Կամ գրաւի դնել տանի՝
Առցէ ըզմասն Յուդայի
Եւ պատիճն Կայենի:
Ով ոք ըզսա խնամ տանի՝

Աւրհայութեան որդի կոչի,
Ընդ առաքեալսն դասեսցի,
Ամէն, ամէն և եղիցի:
Հայր մեր, որ յերկինս, սուրբ եղիցի:

Ծանոթ. *Սույն նկարագրությունը կատարվել է 1983 թ. մայիսի 17-ին:*

4
ԺԱՄԱԳԻՐՔ
(Մարսել (Ֆրանսիա), Անդրե Սիսակյան)

ԺԶ դար

Թերթ՝ *[311]:* Նյութ՝ *թուղթ:* Մեծություն՝ *10,5x15,5:* գրություն՝ *միասյուն:* Գիր՝ *չեղագիր:* Տող՝ *18:* Մաուրանկարչություն՝ *Գրիգոր Նարեկացի (՞) 5բ (խիստ վնասված), սկզբնաթերթ՝ 6ա, Խաչելություն՝ 31բ (խիստ վնասված), Ներսէս Շնորհալի (՞)՝ 62բ (խիստ վնասված), Հակոբ Մծբնեցի՝ 289բ, Պարսամ ճգնաւոր՝ 303ա, լուսանցազարդեր՝ ծաղկագիր, թռչնագիր և ավետարանական թեմաներով:* Կազմ՝ *կաշեպատ տախտակ:* Պահպանակ՝ *2+2, թուղթ:* Վիճակ՝ *բավարար:*

Ծանոթ. *Սույն նկարագրությունը կատարված է 1982 թ. մայիսի 5-ին Մարսելում:*

5
ԱԻԵՏԱՐԱՆ
(Աբովյան քաղաք, Դավիթ Հովհաննեսի Մելիքյան (Մելիքսեթյան)

ԺԶ – ԺԷ դար

Այս ձեռագիրը, որ «Թուխ մանուկ» է կոչվել, 1949 թ. Իրանի Թեհրան քաղաքում տեսել և նկարագրել է Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ Հ. Համազասպ Ոսկյանը: Նկարագրությունը տպագրվել է «Հանդէս ամսօրեայում», 1953 թ., էջ 95-97:

Ձեռագրի վերջին ստացող Դավիթ Մելիքյանը (Իրանի Բուրվառ գավառի Գովզ գյուղից) 1968 թվականին Թեհրանից ներգաղթել է Հայրենիք: Դ. Մելիքյանի հասցեն մեզ է տրամադրել Իրանից հայրենադարձ Սալբի Կարապետյանը:

Ձեռագիրը տեսել ենք 1976 թ. սեպտեմբերի 18-ին: Որոշ ժամանակ անց այն հանձնվել է Էջմիածնի Վեհարանի մատենադարանին:

6
ԱԻԵՏԱՐԱՆ
(Թբիլիսի, Քյուրքչյան Էդուարդ Արշավիրի)

Ստամպոլ ՌԾԸ – 1609

Գրիչ՝ *Միքայել Թոխատցի:* Ստացող՝ *Տեր Ստեփանոս Աղճաղալացի:* Թերթ՝ *(՞):* Նյութ՝ *թուղթ:* Մեծություն՝ *16x21,7:* գրություն՝ *երկսյուն:* Տող՝ *20:* Գիր՝ *բոլորգիր:* Մաուրանկարչություն՝ *խորաններ 10, Մատթեոս, Մարկոս, Ղուկաս, Հովհաննես ավետարանիչներ, կիսախորաններ 4, լուսանցազարդեր, թռչնագիր, զարդագրեր:* Կազմ՝ *կաշեպատ տախտակ,*

վրան թիթեղյա մեծ խաչեր՝ անարվեստ: Վիճակ՝ բավարար, ջուր տեսած, կազմի երկրորդ փեղկը ջարդված, որի կեսը առանց կաշվի:

Ծանոթ. *Զիք էջահամարներ:*

Հիշատակարան գրչի

(Իե պրակ, 1ա) Փառք... Գրեցաւ սուրբ Աւետարանս թվին ՌԾԸ (1609) ի մայրաքաղաքն Ըստամպոլ ի դուռն կոմրուկու սուրբ Նիկողայոսին, առաջնորդութեան Կեսարացի Գրիգոր քաջ րաբունապետին, թագաւորութեաննն Սուլթան Ահմատին. Աստուած զիւր սուրն կտրուկ անէ, ձեռամբ անարժան Թոխտցի Միխայէլին ի վայելումն Աղճաղալացի Տէր Ըստեփաննոսին || (Իե պրակ 1բ էջ) (Թերթը պատռված, առաջին տողերը չիք)... և զկենակիցս, զննջեցեալս և զկեն... Աստուած զյիշողս... է իւր միւս անգամ գալստեանն. ամէն. Հայր մեր: Այլև յիշեցէք զստացող սորին զԸստեփաննոս ֆահաեայն և զհայրն իւր զՍմպատն և զմայրն իւր զՓաշան և զմամն իւր զԱրև տիկինն և զիւր իրիցակին զՊահրին և զդուստրն իւր զԱրև տիկինն և վա... էծոցն զվարդապետն և զեղբայրն իւր զՎ...ատն և զքոյրն իւր Շահմելիքն և զԿուպպահարն: Դարձեալ յիշեցէք զհոգևոր եղբարքն զԹուրինն և զՊապաճանն և զորդին իմ: Այլև յիշեցէք զյաշխատող սորին և Աստուած զյիշողդ յիշէ իւր միւսանգամ գալըստեանն. ամէն. Հայր մեր:

